

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

2013 թ. պետական ավարտական և միասնական
քննությունների թեստային առաջադրանքների շտեմարան

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ



ՉԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2013

Հաստատված է Գնահատման և թեստավորման կենտրոնի կողմից

ՀՏԴ 373.1:941(479.25)

ԳՄԴ 74.2+63.3(2Հ)

Հ 282

Հեղինակային խումբ՝

Աշոտ Մելքոնյան (*ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ*), Արամ Նազարյան (*պատմ. գիտ. թեկն.*), Էդիկ Գևորգյան (*պատմ. գիտ. թեկն.*), Հայրապետ Մարգարյան (*պատմ. գիտ. դոկտ.*), Էդիկ Մինասյան (*պատմ. գիտ. դոկտ.*), Արման Մալոյան (*պատմ. գիտ. թեկն.*), Արմինե Սարգսյան (*ՀՊՄՀ դասախոս*), Թեհմինա Քոչարյան (*պատմաբան, մանկավարժ*), Սուսաննա Սերոբյան (*ԵՊՀ ասիստենտ*), Կարինե Եղիազարյան (*պատմ. գիտ. թեկն.*), Մարինե Գևորգյան (*պատմ. գիտ. թեկն.*), Հակոբ Մուրադյան (*պատմ. գիտ. թեկն.*), Քրիստինե Յախշյան (*ԵՊՀ դասախոս*), Էդուարդ Զոհրաբյան (*պատմ. գիտ. թեկն.*)

Խմբագրական կազմ՝

Աշոտ Մելքոնյան, Արամ Նազարյան, Էդիկ Գևորգյան, Էդիկ Մինասյան

Հ 282 Հայոց պատմություն: 2013 թ. պետական ավարտական և միասնական քննությունների համար: Գիրք երկրորդ.—Եր.: Հանգակ, 2013.—592 էջ:

Առաջադրանքների շտեմարանը նախատեսված է «Հայոց պատմություն» առարկայի 2013 թ. պետական ավարտական և միասնական քննությունների համար:

ՀՏԴ 373.1:941(479.25)

ԳՄԴ 74.2+63.3(2Հ)

ISBN 978-9939-68-131-3

© Հեղինակային խումբ, 2013

© «Հանգակ-97» ՍՊԸ, 2013

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Հայոց պատմություն» առարկայի պետական ավարտական և միասնական քննությունների առաջադրանքների շտեմարանի երկրորդ գիրքը նույնպես կազմվել է 2012 թ. հաստատված «Հայոց պատմություն. պետական ավարտական և միասնական քննության ուղեցույց»-ի պահանջների և մոտեցումների հիման վրա: Առաջադրանքները ներառում են 2009–2011 թթ. լույս տեսած ավագ դպրոցի ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի 10–12-րդ դասարանների «Հայոց պատմության» դասագրքերի (ՀՀ ԳԱԱ թղթակից անդամներ Ա. Մելքոնյանի և Ա. Սիմոնյանի խմբագրությամբ) ուսումնական նյութը:

Հաշվի է առնվել նաև ուղեցույցում տեղ գտած «Դասագրքերում առկա վրիպակներ» բաժինը, և առաջադրանքները կազմվել են վրիպակների ուղղված տարբերակների հիման վրա:

Շտեմարանի երկրորդ գիրքը կազմված է՝ Ա. Հայկական քաղաքակրթության ճևարումն ու զարգացումը, Բ. Հայկական քաղաքակրթությունը Միջին դարերում, Գ. Հայկական քաղաքակրթությունը Նոր շրջանում, Դ. Հայկական քաղաքակրթությունը Նորագույն շրջանում, «Հավելված» և «Առաջադրանքների պատասխաններ» բաժիններից:

Հայոց պատմության չորս պարբերաշրջանների ուսումնական նյութը ներկայացված է առանձին՝ առաջադրանքների 8 տիպերով: Դրանք ներառում են ուղեցույցի «Բովանդակային դասիչ»-ով նախատեսված բաժինների և թեմաների ամբողջ բովանդակությունը: Իրենց բարդության աստիճանով առաջադրանքները համապատասխանում են պետական ավարտական և միասնական քննությունների թեստերի համար ուղեցույցով որոշված Ա և Բ մակարդակներին:

Հիմնական նորությունն այն է, որ Ա և Բ մակարդակներում ընդգրկվելու են կարճ պատասխան պահանջող առաջադրանքներ: Դա հնարավորություն կտա համակողմանիորեն և ավելի առարկայորեն ստուգելու դիմորդների գիտելիքները, նրանց տրամաբանական և ճանաչողական կարողություններն ու հմտությունները:

Միասնական քննության թեստը բաղկացած է լինելու Ա և Բ մակարդակներից: Ա մակարդակը վերաբերում է պետական ավարտական քննությանը և միասնական քննության ավարտական մասին, իսկ Ա և Բ մակարդակներն ընդգրկող միասնական տարբերակը՝ բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության մրցույթին:

Ա մակարդակը պարունակելու է 50 առաջադրանք (1–50-րդ), որոնցից 46-ը ընտրովի պատասխանով են (1–46-րդ), 4-ը՝ կարճ (47–50-րդ):

Բ մակարդակը պարունակելու է 30 առաջադրանք (51–80-րդ), որոնցից 22-ը ընտրովի պատասխանով են (51–72-րդ), 8-ը՝ կարճ (73–80-րդ):

Քննական թեստի Բ մակարդակում կընդգրկվեն Ա մակարդակի համեմատ ավելի խոր իմացություն և պատմական մտածողության ավելի բարձր մակարդակի կարողություններ և հմտություններ պահանջող 4–8-րդ տիպի առաջադրանքներ, իսկ 1–3-րդ տիպի առաջադրանքներ այս մակարդակում չեն կիրառվելու:

Ստորև ներկայացվում է պետական ավարտական և միասնական քննությունների առաջադրանքների բովանդակային և կառուցվածքային տիպերի համամասնությունը:

Առաջադրանքների բովանդակային տիպերը		Կառուցվածքային տիպերը			
		Ա մակարդակ		Բ մակարդակ	
		Ընտրովի	Կարճ	Ընտրովի պատասխանով	Կարճ պատասխանով
1	Տարեթվերի իմացություն	12 (1-8, 30-33)	---	---	---
2	Փաստերի և երևույթների իմացություն	12 (9-16, 34-37)	---	---	---
3	Աշխատանք սկզբնաղբյուրների հետ	4 (17-18, 38-39)	---	---	---
4	Պատմական տերմինների և հասկացությունների իմացություն	3 (19-20, 40)	1 (47)	2 (51-52)	2 (73-74)
5	Պատմական իրադարձությունների և երևույթների պատճառների ու հետևանքների իմացություն	3 (21-22, 41)	1 (48)	4 (53-54, 66-67)	2 (75-76)
6	Պատմական իրադարձությունների և երևույթների ժամանակագրական հաջորդականության իմացություն	7 (23-26, 42-44)	1 (49)	4 (55-58)	2 (77-78)
7	Պատմական իրադարձությունների, երևույթների, փաստերի, տարեթվերի, կրթամշակութային հաստատությունների, վայրերի, ստեղծագործությունների, տեղանունների կամ անձնանունների համապատասխանեցում	4 (27-28, 45-46)	---	6 (59-62, 68-69)	---
8	Պատմական փաստարկների, պնդումների համադրում և խմբավորում	1 (29)	1 (50)	6 (63-65, 70-72)	2 (79-80)

Շտեմարանի նպատակն է օգնել պետական ավարտական և միասնական քննություններին նախապատրաստվող ՀՀ հանրակրթական դպրոցների շրջանավարտներին և դիմորդներին: Շտեմարանի երկու գրքերի առաջադրանքներից են կազմվելու 2013 թ. քննությունների թեստերը:

Սույն աշխատանքը առաջին փորձն է ստեղծելու նման կարգի շտեմարան և բնականաբար կարող է ունենալ որոշ թերություններ կամ վրիպումներ: Ձեր առաջարկներն ու դիտողությունները հաշվի կառնվեն շտեմարանի հաջորդ հրատարակման ժամանակ:

Հաջողություն ձեզ, սիրելի շրջանավարտներ և դիմորդներ:

10. Երբ է Սարգոն II-ը արշավել Վանի թագավորության դեմ.

- | | |
|-------------------------|------------------------|
| 1) ք. ա. 735 թ. ձմռանը | 3) ք. ա. 743 թ. աշնանը |
| 2) ք. ա. 714 թ. գարնանը | 4) ք. ա. 716 թ. ամռանը |

11. Երբ են Մարաստանի, Բաբելոնի և Հայաստանի դաշնակից զորքերը գրավել Նինվեն.

- | | |
|-----------------|-----------------|
| 1) ք. ա. 621 թ. | 3) ք. ա. 605 թ. |
| 2) ք. ա. 609 թ. | 4) ք. ա. 612 թ. |

12. Երբ վերացվեց Մարաստանի գերիշխանությունը Հայաստանում.

- | | |
|-------------------------|-------------------------|
| 1) ք. ա. VI դարի կեսին | 3) ք. ա. VI դարի վերջին |
| 2) ք. ա. VI դարի սկզբին | 4) ք. ա. V դարի կեսին |

13. Երբ է գոհվել Կյուրոս Մեծը.

- | | |
|-----------------|-----------------|
| 1) ք. ա. 538 թ. | 3) ք. ա. 524 թ. |
| 2) ք. ա. 529 թ. | 4) ք. ա. 521 թ. |

14. Երբ է մահացել հայոց արքա Տիգրան Երվանդյանը.

- | | |
|-----------------|-----------------|
| 1) ք. ա. 524 թ. | 3) ք. ա. 542 թ. |
| 2) ք. ա. 529 թ. | 4) ք. ա. 522 թ. |

15. Մինչև երբ Հայաստանը մնաց Աքեմենյան տերության կազմում.

- | | |
|-----------------|-----------------|
| 1) ք. ա. 190 թ. | 3) ք. ա. 401 թ. |
| 2) ք. ա. 201 թ. | 4) ք. ա. 331 թ. |

16. Երբ է Դարեհ III-ը դարձել Աքեմենյան տերության տիրակալ.

- | | |
|-----------------|-----------------|
| 1) ք. ա. 336 թ. | 3) ք. ա. 522 թ. |
| 2) ք. ա. 363 թ. | 4) ք. ա. 323 թ. |

17. Ո՞ր թվականին էր Աքեմենյան արքայի դեմ ապստամբել Կյուրոս Կրտսերը.

- | | | | |
|-----------------|-----------------|-----------------|-----------------|
| 1) ք. ա. 522 թ. | 2) ք. ա. 520 թ. | 3) ք. ա. 410 թ. | 4) ք. ա. 401 թ. |
|-----------------|-----------------|-----------------|-----------------|

18. Երբ է վերջին անգամ հիշատակվել Հայաստանի սատրապ-կառավարիչ Երվանդ II-ը.

- | | |
|-----------------------|-----------------------|
| 1) ք. ա. 460-ական թթ. | 3) ք. ա. 360-ական թթ. |
| 2) ք. ա. 410-ական թթ. | 4) ք. ա. 330-ական թթ. |

19. Երբ է կառավարել Ալեքսանդր Մակեդոնացին.

- | | |
|----------------------|----------------------|
| 1) ք. ա. 339-323 թթ. | 3) ք. ա. 340-320 թթ. |
| 2) ք. ա. 336-323 թթ. | 4) ք. ա. 334-323 թթ. |

20. Երբ է տեղի ունեցել Գավգամելայի ճակատամարտը.

- | | |
|---------------------------------|----------------------------------|
| 1) ք. ա. 335 թ. սեպտեմբերի 2-ին | 3) ք. ա. 330 թ. սեպտեմբերի 22-ին |
| 2) ք. ա. 331 թ. հոկտեմբերի 1-ին | 4) ք. ա. 334 թ. հոկտեմբերի 1-ին |

21. Երբ է ծնվել Արտաշես I արքան.

- 1) ք. ա. 240 թ. 2) ք. ա. 220 թ. 3) ք. ա. 230 թ. 4) ք. ա. 250 թ.

22. Մարաստանի սելևկյան սատրապ Տիմարքոսի ապստամբությունը տեղի է ունեցել՝

- 1) ք. ա. 183–179 թթ. 3) ք. ա. 185–180 թթ.
2) ք. ա. 162–160 թթ. 4) ք. ա. 165–164 թթ.

23. Երբ է ծնվել Տիգրան Մեծը.

- 1) ք. ա. մոտ 160 թ. 3) ք. ա. մոտ 150 թ.
2) ք. ա. մոտ 140 թ. 4) ք. ա. մոտ 130 թ.

24. Երբ Պոնտոսը ռազմակալեց Փոքր Հայքը.

- 1) ք. ա. 121 թ. 3) ք. ա. 115 թ.
2) ք. ա. 105 թ. 4) ք. ա. 112 թ.

25. Երբ է կնքվել հայ-պոնտական պայմանագիրը.

- 1) ք. ա. 113 թ. 3) ք. ա. 88 թ.
2) ք. ա. 94 թ. 4) ք. ա. 84 թ.

26. Երբ են հայ-պոնտական զորքերը գրավել Կապադոկիան.

- 1) ք. ա. 95 թ. 3) ք. ա. 91 թ.
2) ք. ա. 93 թ. 4) ք. ա. 87 թ.

27. Պարթևստանում երբ է գահ բարձրացել Գողերծ II-ը.

- 1) ք. ա. 88 թ. 3) ք. ա. 84 թ.
2) ք. ա. 93 թ. 4) ք. ա. 94 թ.

28. Լուկուլլոսն իր բանակով երբ մտավ Հայաստան.

- 1) ք. ա. 70 թ. 3) ք. ա. 69 թ.
2) ք. ա. 67 թ. 4) ք. ա. 66 թ.

29. Տիգրան Մեծի գլխավորած հայկական բանակը երբ մոտեցավ պաշարված Տիգրանակերտին.

- 1) ք. ա. 68 թ. հոկտեմբերին 3) ք. ա. 68 թ. սեպտեմբերին
2) ք. ա. 69 թ. սեպտեմբերին 4) ք. ա. 69 թ. հոկտեմբերին

30. Երբ է տեղի ունեցել Արածանիի ճակատամարտը.

- 1) ք. ա. 69 թ. հոկտեմբերի 6-ին 3) ք. ա. 68 թ. հոկտեմբերի 6-ին
2) ք. ա. 68 թ. սեպտեմբերի 22-ին 4) ք. ա. 66 թ. հոկտեմբերի 1-ին

31. Միհրդատ Եվպատորը որ թվականին ինքնասպան եղավ.

- 1) ք. ա. 62 թ. 3) ք. ա. 63 թ.
2) ք. ա. 66 թ. 4) ք. ա. 59 թ.

32. Կրասուսի հրամանատարությամբ հռոմեական բանակը էրբ ժամանեց Ասորիք.

- | | |
|-----------------------|------------------------|
| 1) Բ. ա. 54 թ. ամռանը | 3) Բ. ա. 54 թ. գարնանը |
| 2) Բ. ա. 54 թ. աշնանը | 4) Բ. ա. 55 թ. աշնանը |

33. Երբ Կրասոսն անցավ Եփրատը և արշավեց Պարթևստան.

- | | |
|------------------------|-----------------------|
| 1) Բ. ա. 53 թ. գարնանը | 3) Բ. ա. 53 թ. ամռանը |
| 2) Բ. ա. 54 թ. գարնանը | 4) Բ. ա. 54 թ. ամռանը |

34. Անտոնիոսի պարտված բանակը Պարթևստանից էրբ նահանջեց դեպի Հայաստան.

- | | |
|-----------------------|-----------------------|
| 1) Բ. ա. 35 թ. ամռանը | 3) Բ. ա. 33 թ. ամռանը |
| 2) Բ. ա. 34 թ. աշնանը | 4) Բ. ա. 36 թ. աշնանը |

35. Որո՞նք են Արտավազդ II-ի գահակալման տարիները.

- | | |
|--------------------|-------------------|
| 1) Բ. ա. 55–30 թթ. | 3) Բ. ա. 20–9 թթ. |
| 2) Բ. ա. 55–34 թթ. | 4) Բ. ա. 8–5 թթ. |

36. Արտավազդ II-ը էրբ է մահապատժի ենթարկվել.

- | | |
|----------------------------|----------------------------|
| 1) Բ. ա. 34 թ. հոկտեմբերին | 3) Բ. ա. 30 թ. սեպտեմբերին |
| 2) Բ. ա. 31 թ. հոկտեմբերին | 4) Բ. ա. 20 թ. աշնանը |

37. Երբ են գահակալել Տիգրան IV-ը և Էրատոն.

- | | |
|--------------------------|------------------|
| 1) Բ. ա. 20–8 թթ. | 3) Բ. ա. 8–5 թթ. |
| 2) Բ. ա. 2 – Բ. հ. 1 թթ. | 4) Բ. ա. 5–2 թթ. |

38. Ո՞ր թվականին Օկտավիանոսն իրեն հռչակեց Օգոստոս.

- | | | | |
|----------------|----------------|----------------|----------------|
| 1) Բ. ա. 31 թ. | 2) Բ. ա. 30 թ. | 3) Բ. ա. 27 թ. | 4) Բ. ա. 20 թ. |
|----------------|----------------|----------------|----------------|

39. Երբ է ընդհատվել Արտաշիսյան հարստությունը.

- | | | | |
|---------------|----------|----------|----------|
| 1) Բ. հ. 1 թ. | 2) 34 թ. | 3) 66 թ. | 4) 19 թ. |
|---------------|----------|----------|----------|

40. Երբ է միանձնյա գահակալել Էրատոն.

- | | | | |
|--------------|------------|-------------|------------|
| 1) 12–16 թթ. | 2) 4–6 թթ. | 3) 6–12 թթ. | 4) 2–4 թթ. |
|--------------|------------|-------------|------------|

41. Երբ է գահակալել Վոնոն Արշակունին.

- | | | | |
|--------------|-------------|--------------|------------|
| 1) 18–34 թթ. | 2) 6–12 թթ. | 3) 12–16 թթ. | 4) 4–6 թթ. |
|--------------|-------------|--------------|------------|

42. Հռոմեա-պարթևական տասնամյա պատերազմը տեղի է ունեցել.

- | | | | |
|--------------|--------------|--------------|--------------|
| 1) 52–62 թթ. | 2) 58–68 թթ. | 3) 54–64 թթ. | 4) 56–66 թթ. |
|--------------|--------------|--------------|--------------|

43. Երբ է գահակալել Ներոնը.

- | | | | |
|--------------|--------------|--------------|--------------|
| 1) 55–74 թթ. | 2) 55–85 թթ. | 3) 19–36 թթ. | 4) 54–68 թթ. |
|--------------|--------------|--------------|--------------|

44. Պետոս զորավարը էրբ մտավ Հայաստան և զորքով շարժվեց դեպի Տիգրանակերտ.

- | | | | |
|----------|----------|----------|----------|
| 1) 58 թ. | 2) 61 թ. | 3) 62 թ. | 4) 64 թ. |
|----------|----------|----------|----------|

45. Ե՞րբ է գահակալել Տրդատ I Արշակունին.

- 1) 88–110 թթ. 2) 51–80 թթ. 3) 54–64 թթ. 4) 66–88 թթ.

46. Ե՞րբ է գահակալել հայոց Վաղարշ I արքան.

- 1) 88–110 թթ. 2) 110–117 թթ. 3) 164–185 թթ. 4) 117–140 թթ.

47. Ո՞ր թվականից է Հայաստանում երկրորդ անգամ գահակալել Սոհեմոս–Տիգրանը.

- 1) 163 թ. 3) 161 թ.
2) 185 թ. 4) 164 թ.

48. Ե՞րբ է գահակալել հայոց Վաղարշ II թագավորը.

- 1) 117–140 թթ. 2) 185–198 թթ. 3) 164–185 թթ. 4) 198–215 թթ.

49. Ո՞ր ժամանակաշրջանն է ընդգրկում հայկական հելլենիզմի երկրորդ փուլը.

- 1) Ք. ա. VI–III դարերը 3) I–III դարերը
2) Ք. ա. III–I դարերը 4) IV–VII դարերը

50. Երբվանից է Հայաստանում կիրառվել հունարենը.

- 1) Ք. ա. V դարից 3) Ք. ա. IV դարից
2) Ք. ա. III դարից 4) Ք. ա. II դարից

51. Ո՞ր թվականով է թվագրվում Բակուր արքայի արծաթե թասը.

- 1) 150–ական թթ. 3) 180–ական թթ.
2) 160–ական թթ. 4) 170–ական թթ.

2. ՓԱՍՏԵՐ ԵՎ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ

1. Ո՞րն է ՀՀ-ի երկրորդ բարձր գագաթը.

- 1) Արագած 2) Թոնդուրեկ 3) Կապուտջուղ 4) Սիփան

2. Որքան է Աևանա լճի բարձրությունը ծովի մակերևույթից.

- 1) 345 մ 2) 1916 մ 3) 1113 մ 4) 1720 մ

3. Որքան է Ճորոխ գետի երկարությունը.

- 1) 345 կմ 2) 434 կմ 3) 500 կմ 4) 565 կմ

4. Որքան է Տիգրիս գետի երկարությունը Հայաստանի մասում.

- 1) 500 կմ 2) 1000 կմ 3) 400 կմ 4) 345 կմ

5. Ո՞րն է Մեծ Հայքի ամենանշանավոր աշխարհը.

- 1) Գուգարք 2) Սյունիք 3) Արցախ 4) Այրարատ

6. Քանի՞ գավառ ունեին Մեծ Հայքի բոլոր նահանգները միասին.

- 1) 151 2) 137 3) 191 4) 119

7. Հայկական լեռնաշխարհը հարավից եզերվում է՝

- 1) Հայկական Տավրոսի լեռնաշղթայով և Հյուսիսային Միջագետքի հարթավայրով
2) Պոնտոսի լեռներով
3) Կուր գետով
4) Կասպից ծովով և Իրանական բարձրավանդակով

8. Ո՞րն է Հայկական լեռնաշխարհի կենտրոնով ձգվող լեռնաշղթան.

- 1) Հայկական Տավրոս 3) Գեղամա
2) Հայկական Պար 4) Արցախի

9. Ո՞ր լիճն է գտնվում Արագածի վրա.

- 1) Քարի 2) Ցելի 3) Պարզ 4) Ծովք

10. Որտեղից է սկիզբ առնում Արևելյան Եփրատը.

- 1) Ծովք լճից 3) Ծաղկանց լեռներից
2) Հայկական Տավրոսից 4) Բյուրակնյան լեռներից

11. Ո՞ր գետին է միախառնվում Կուրը.

- 1) Եփրատ 2) Տիգրիս 3) Արաքս 4) Ճորոխ

12. Ինչպե՞ս էր հնում կոչվում Արաքսը.

- 1) Արածանի 2) Ախուրյան 3) Երասխ 4) Հրազդան

13. Ըստ հր աղբյուրի էր Մեծ Հայքը բաժանված 15 նահանգների.

- 1) Մ. Խորենացու «Հայոց պատմության»
- 2) «Աշխարհացոյց»-ի
- 3) Աստվածաշնչի
- 4) Քսենոփոնի «Անաբասիս»-ի

14. Որտեղ է գտնվում Կիլիկիան.

- 1) Միջերկրական ծովի հարավ-արևելքում
- 2) Միջերկրական ծովի հյուսիս-արևելքում
- 3) Միջերկրական ծովի հյուսիս-արևմուտքում
- 4) Միջերկրական ծովի հարավ-արևմուտքում

15. Ո՞ր լեռնաշղթան է հարավից եզերում Հայկական լեռնաշխարհը.

- 1) Հայկական Տավրոս
- 2) Հայկական Պար
- 3) Զանգեզուրի
- 4) Գեղամա

16. Ո՞րն է հնդեվրոպական լեզվաընտանիքի առանձին և ինքնուրույն լեզվաճյուղ.

- 1) գերմաներեն
- 2) հայերեն
- 3) պարսկերեն
- 4) ռուսերեն

17. Որտեղ է գտնվել Թորգոմա տուն կամ Թեգարամա երկիրը.

- 1) Տիգրիսի վերին ավազանում
- 2) Արաքսի ստորին ավազանում
- 3) Ճորոխի ստորին ավազանում
- 4) Եփրատի վերին ավազանում

18. Ովքեր են Նոյի որդիները.

- 1) Հաբեթը, Քամը, Սեմը
- 2) Քամը, Բելը, Հայոսը
- 3) Թորգոմը, Սեմը, Հաբեթը
- 4) Արմենոսը, Թորգոմը և Հայկը

19. Ըստ վրացական ավանդազրույցի՝ քանի որդի ուներ Թորգոմը.

- 1) 6
- 2) 8
- 3) 10
- 4) 14

20. Ո՞րն էր Նաիրի թագավորության մայրաքաղաքը.

- 1) Մենուայիսինիլին
- 2) Տուշպա-Վանը
- 3) Արգիշտիսինիլին
- 4) Թեյշեբահինին

21. Ո՞ր երկրի ուղղությամբ արշավեց Մենուան Հայկական Տավրոսի կենտրոնական հատվածի լեռնանցքներն իր հսկողության տակ առնելու նպատակով.

- 1) Արդինի-Մուսասիր
- 2) Դիաուխի-Դայասեն
- 3) Ալզի
- 4) Մելիտես

22. Ո՞ր արքան է Վանի թագավորությունը վերածել գերտերության.

- 1) Սարդուրի I
- 2) Մենուա
- 3) Իշպուինի
- 4) Ռուսա II

23. Ո՞ր ամրոցն է հիմնադրվել Ք. ա. 782 թ.

- 1) Էրեբունի 2) Մենուախինիլի 3) Արգիշտիխինիլի 4) Թեյշեբաինի

24. Վանի թագավորության ղր արքան է արձանագրություններում իրեն կոչում «Նաիրի երկրի արքա, մեծ արքա, հզոր արքա, տիեզերքի արքա, արքաների արքա...».

- 1) Իշպուինի 2) Ռուսա III 3) Արամու 4) Սարգուրի I

25. Ի՞նչ անունով էր հայտնի Վանի թագավորությունը ասորեստանյան արձանագրություններում.

- 1) Բիայնիլի 2) Ուրարտու 3) Հայասա 4) Էթիունի

26. Ո՞վ է հաջորդել Մենուային.

- 1) Ռուսա I-ը 2) Արգիշտի I-ը 3) Սարգուրի II-ը 4) Ռուսա II-ը

27. Էթիունյան միության մաս էր կազմում.

- 1) «Ջրային գավառը» 3) «Հարավային գավառը»
2) «Ծովային գավառը» 4) «Ծովային նահանգը»

28. Ուրարտական ղր արքայի կողմից առաջին անգամ նվաճվեց Արդինի-Մուսասիր երկիրը.

- 1) Սարգուրի I 2) Իշպուինի 3) Ռուսա I 4) Սարգուրի II

29. Ի՞նչ նպատակ էր հետապնդում Մենուայի ձեռնարկած արշավանքը Դիաուխիի դեմ.

- 1) Վանի թագավորության հարավարևելյան սահմաններն ամրապնդելու
2) Ուրմիայի ավազանում հաստատվելու
3) Հայկական Տավրոսի կենտրոնական լեռնանցքներում հաստատվելու
4) պետության հյուսիսարևմտյան սահմաններն ամրապնդելու

30. Իր թագավորության ղրերորդ տարում Արգիշտի I-ի կողմից կրկին գրավվեց Մելիդը.

- 1) երկրորդ 2) երրորդ 3) չորրորդ 4) հինգերորդ

31. Էթիունիի մաս կազմող Կեխունին գտնվում էր.

- 1) Մերձուրմյան ավազանում 3) Մեծ Զաբի միջին հոսանքում
2) Սևանի ավազանի հյուսիսում 4) Արաքսի հովտում

32. Սարգուրի II-ի տերությունը արևելքից արևմուտք ձգվում էր՝

- 1) Սև ծովից մինչև Փոքր Ասիայի կենտրոնական շրջան
2) Կասպից ծովից մինչև Պարսից ծոց, ներառյալ Բաբելոնը
3) Սև ծովից մինչև Պարսից ծոց, ներառյալ Բաբելոնը
4) Կասպից ծովից մինչև Փոքր Ասիայի կենտրոնական շրջան

33. Ո՞վ էր Վանի թագավորության հստակ թվագրվող վերջին արքան.

- 1) Էրիմենա 2) Ռուսա II 3) Ռուսա III 4) Սարգուրի III

34. Ո՞ւմ անուններով անվանակոչեց իր վերակառուցած երկու խոշոր ամրոցները Ռուսա I-ը.

- 1) Թեյշեբա աստծո և իր
- 2) Խալդի աստծո և իր
- 3) Խալդի և Թեյշեբա աստվածների
- 4) Սարդուրի II-ի և իր

35. Ո՞վ է հաջորդել Արգիշտի I-ին.

- 1) Արգիշտի II-ը
- 2) Սարդուրի II-ը
- 3) Ռուսա I-ը
- 4) Ռուսա II-ը

36. Ո՞րն էր Խալդի աստծո «սրբազան քաղաքը».

- 1) Տուշպա-Վանը
- 2) Մենուախինիին
- 3) Արդինի-Մուսասիրը
- 4) Թեյշեբաինին

37. Վանի թագավորության դ՛ր արքայի օրոք ավարտվեց կուռ համակարգով կենտրոնացված պետության ստեղծման գործընթացը.

- 1) Ռուսա I
- 2) Սարդուրի II
- 3) Արգիշտի II
- 4) Ռուսա II

38. Վարչական առումով Վանի պետությունը բաժանված էր.

- 1) նահանգների
- 2) մարզերի
- 3) ստրատեգիաների
- 4) սատրապությունների

39. Ուրարտական զինված ուժերի կորիզը կազմում էր.

- 1) ժողովրդական աշխարհագորը
- 2) արքունի մշտական զորաբանակը
- 3) թիկնապահ հեծելազորը
- 4) թեթևազեն հետևակը

40. Ո՞ւմ գլխավորությամբ էր վերականգնվել Հայկազունների տոհմի իշխանությունը.

- 1) Պարույրի
- 2) Արամի
- 3) Երվանդի
- 4) Սկայորդու

41. Ո՞ւմ քույրն էր Մարաստանի արքա Աժդահակի կինը.

- 1) Երվանդ II-ի
- 2) Երվանդ Սակավակյացի
- 3) Տիգրան Երվանդյանի
- 4) Վահագնի

42. Աքեմենյան տերության դ՛ր սատրապությունն էր կազմում Հայաստանը.

- 1) XII
- 2) IX
- 3) XIII
- 4) XVII

43. Ո՞վ է «Անաբասիս» աշխատության հեղինակը.

- 1) Ստրաբոնը
- 2) Դիոն Կասիոսը
- 3) Հերոդոտոսը
- 4) Քսենոփոնը

44. Ո՞վ էր ապաստան տվել Ասորեստանի Սենեքերիմ թագավորի որդիներին.

- 1) Պարույր Նահապետը
- 2) Սկայորդին
- 3) Տիգրան Երվանդյանը
- 4) Երվանդ Սակավակյացը

- 45. Ո՞ր երկրի թագավորի կողմից է թագադրվել Պարույր Նահապետը.**
- 1) Բաբելոնի
2) Ասորեստանի
3) Մարաստանի
4) Աքեմենյան տերության
- 46. Ո՞ր պատմիչն էր վկայում Տիգրան I-ի և Կյուրոս Մեծի մտերիմ հարաբերությունների մասին.**
- 1) Պլուտարքոսը
2) Մովսես Խորենացին
3) Քսենոփոնը
4) Դիոն Կասիոսը
- 47. Ո՞վ է հաջորդել Տիգրան Երվանդյանին.**
- 1) Արամը
2) Վահագնը
3) Տիրիբազը
4) Երվանդ II-ը
- 48. Քանի՞ արշավանք է ձեռնարկվել Դարեհ I-ի օրոք Հայաստանում բռնկված ապստամբությունը ճնշելու համար.**
- 1) 2
2) 3
3) 5
4) 8
- 49. Ո՞վ էր Դարեհ I-ի կողմից Հայաստան ուղարկված հայազգի զորավարը.**
- 1) Դադարշիշը
2) Վահումիսան
3) Քսենոփոնը
4) Միթրաուստեսը
- 50. Ո՞վ էր Հայաստանի արևմտյան մասի կառավարիչը, որը ենթարկվում էր Երվանդ II-ին.**
- 1) Տիգրան I-ը
2) Տիրիբազը
3) Միթրաուստեսը
4) Զարեհը
- 51. Դարեհ III Կողոմանոսը մինչև Աքեմենյան տիրակալ դառնալը հայոց գահի վրա ինչ անվանում է կրել.**
- 1) Արտաշես
2) Տիգրան
3) Արտաշատ
4) Տիրան
- 52. Ո՞րն էր Մեծ Հայքի Հայկազուն-Երվանդականների վերջին մայրաքաղաքը.**
- 1) Վան
2) Բագարան
3) Երվանդակերտ
4) Երվանդաշատ
- 53. Ո՞րն էր Ալեքսանդր Մակեդոնացու տերության մայրաքաղաքը.**
- 1) Նինվեն
2) Կարքեմիշը
3) Բաբելոնը
4) Ալեքսանդրիան
- 54. Ի՞նչ են անվանել Արտաշատը հունահռոմեական պատմիչները.**
- 1) «Հայկական Աթենք»
2) «Հայկական Անտիոք»
3) «Հայկական Հռոմ»
4) «Հայկական Կարթագեն»
- 55. Արտաշես I-ը քանի՞ գավառների բաժանեց երկիրը.**
- 1) 191
2) 190
3) 160
4) 120
- 56. Ո՞վ էր Մեծ Հայքում Սելևկյանների կողմից նշանակված հայազգի կառավարիչը.**
- 1) Արտաշեսը
2) Զարեհը
3) Երվանդը
4) Տիգրանը

57. Ո՞ւմ միջև է մղվել Մագնեսիայի ճակատամարտը.

- | | |
|----------------------------|------------------------------------|
| 1) Ասորեստանի ու Հայաստանի | 3) Սելևկյան տերության ու Հռոմի |
| 2) Հայաստանի ու Հռոմի | 4) Հայաստանի ու Սելևկյան տերության |

58. Հյուսիսում Արտաշես I-ը որ երկրամասն է միացրել Մեծ Հայքին.

- 1) Փայտակարանը և Կասպեից երկիրը
- 2) Կարնո երկիրը, Եկեղիք ու Դերջան գավառները
- 3) Գուգարքը
- 4) Տմորիքը

59. Ո՞վ էր Սելևկյանների դեմ ապստամբած Մարաստանի սատրապը.

- | | |
|--------------|--------------|
| 1) Տիրիբազը | 3) Մանկայոսը |
| 2) Տիմարքոսը | 4) Ջենոնը |

60. Բացի Արտաշատից՝ ուրիշ ինչ քաղաքներ է կառուցել Արտաշես I-ը.

- | | |
|-----------------------|--------------------------|
| 1) Արսամեա և Արմավիր | 3) Ջարեհավան ու Ջարիշատ |
| 2) Աշտարակ ու Ջարիշատ | 4) Երվանդակերտ և Արսամեա |

61. Որո՞նք էին արքունիքի կարևոր գործակալությունները Արտաշես I-ի ժամանակ.

- 1) թագադիր ասպետություն և սպարապետություն
- 2) հազարապետություն և սպարապետություն
- 3) սպարապետություն և մարդպետություն
- 4) հազարապետություն և թիկնապահություն

62. Ո՞ր երկրի թագավորի դեմ պատերազմում Արտաշեսը վերադարձրեց Տմորիքը.

- | | |
|------------|-----------------------|
| 1) Վիրքի | 3) Բյութանիայի |
| 2) Աղվանքի | 4) Սելևկյան տերության |

63. Ո՞րն էր փոխարքա-կառավարիչ Բագարատի նստավայրը.

- | | | | |
|----------|-----------|-----------|----------|
| 1) Ադանա | 2) Անտիոք | 3) Տարսոն | 4) Մծբին |
|----------|-----------|-----------|----------|

64. Ո՞ւմ էր Հյուսիսային Միջագետքում փոխարքա նշանակել Տիգրան Մեծը.

- | | |
|-------------|----------------|
| 1) Գողերծին | 3) Մեիրուժանին |
| 2) Գուրասին | 4) Բագարատին |

65. Որքան էր մայրաքաղաք Տիգրանակերտի բնակչության թիվը.

- | | |
|--------------------|--------------------|
| 1) շուրջ 100 հազար | 3) շուրջ 120 հազար |
| 2) շուրջ 150 հազար | 4) շուրջ 80 հազար |

66. Որտե՞ղ էր «70 հովիտներ» կոչվող տարածքը.

- | | |
|------------------------------|----------------------------------|
| 1) Փոքր Հայքի արևելքում | 3) Ծոփքի հյուսիս-արևելքում |
| 2) Մեծ Հայքի հարավ-արևելքում | 4) Մեծ Հայքի հյուսիս-արևմուտքում |

67. Ո՞րն էր Ասորիքի մայրաքաղաքը.

- | | |
|---------------|--------------|
| 1) Պտղոմայիսը | 3) Փրասասյան |
| 2) Անտիոքը | 4) Էկբատանը |

68. Ըստ հույն պատմիչի՝ քանի՞ լեզվով էին խոսում Տիգրան II-ի տերությունում.

- | | | | |
|----------------|----------------|-----------|-------|
| 1) 30-ից ավելի | 2) 15-ից ավելի | 3) մոտ 25 | 4) 10 |
|----------------|----------------|-----------|-------|

69. Որո՞նք էին Տիգրան II-ի տերության մեջ մտնող բուն հայկական հողերը.

- | | |
|------------------------|------------------------------|
| 1) Մեծ Հայք, Փոքր Հայք | 3) Մեծ Հայք և Կոմմագենե |
| 2) Մեծ Հայք և Պոնտոս | 4) Մեծ Հայք, Փոքր Հայք, Ծովք |

70. Կիլիկիայի քանի՞ քաղաքների բնակիչներին էր Տիգրան II-ը բռնագաղթեցրել Տիգրանակերտ.

- | | | | |
|-------|-------|-------|-------|
| 1) 10 | 2) 12 | 3) 14 | 4) 16 |
|-------|-------|-------|-------|

71. Ո՞ր պատմիչն է վկայել, որ Տիգրանակերտում եղել է թատրոն.

- | | |
|--------------|-----------------|
| 1) Տակիտոսը | 3) Պլուտարքոսը |
| 2) Պոլիբիոսը | 4) Դիոն Կասիոսը |

72. Որտե՞ղ էր Տիգրան II-ը հռոմեական բանակի՝ Հայաստան ներխուժման պահին.

- | | |
|---------------|---------------|
| 1) Արմավիրում | 3) Արտաշատում |
| 2) Վանում | 4) Անտիոքում |

73. Ո՞ւմ գլխավորությամբ է Տիգրան II-ը զորք ուղարկել Տիգրանակերտը պաշարած Լուկուլլոսի դեմ.

- | | |
|--------------|-------------------|
| 1) Մանկայոսի | 3) Մեիրուծանի |
| 2) Զարեհի | 4) Տիգրան Կրտսերի |

74. Որքան էր հռոմեական բանակի թիվը դաշնակցային զորամասերի հետ միասին Տիգրանակերտի ճակատամարտի նախօրյակին.

- | | |
|---------------------|-----------------|
| 1) շուրջ 50 հազար | 3) մոտ 70 հազար |
| 2) 55 հազարից ավելի | 4) 75 հազար |

75. Ըստ Արտաշատի պայմանագրի՝ որքան էր կազմում Մեծ Հայքի կողմից Հռոմին տրվելիք գումարի չափը.

- | | |
|-------------------|-------------------|
| 1) 2 հազար տաղանդ | 3) 6 հազար տաղանդ |
| 2) 4 հազար տաղանդ | 4) 8 հազար տաղանդ |

76. Որքան էր Անտոնիոսի տրամադրության տակ եղած բանակի թիվը պարթևական արշավանքի սկզբին.

- | | | | |
|-------------|-------------|--------------|--------------|
| 1) 80 հազար | 2) 50 հազար | 3) 100 հազար | 4) 120 հազար |
|-------------|-------------|--------------|--------------|

77. Որքան զինվոր էր Անտոնիոսին տրամադրել Արտավազդ II-ը.

- | | | | |
|-------------|-------------|-------------|-------------|
| 1) 13 հազար | 2) 16 հազար | 3) 24 հազար | 4) 40 հազար |
|-------------|-------------|-------------|-------------|

78. Որքան էր Կրասուսի հրամանատարությամբ Ասորիք ժամանած հռոմեական բանակի թիվը.

- 1) 120 հազար 2) 80 հազար 3) 100 հազար 4) 50 հազար

79. Արտավազդ II-ը որքան զորք էր խոստացել տրամադրել Կրասուսին.

- 1) 16 հազար 2) 40 հազար 3) 24 հազար 4) 13 հազար

80. Ո՞վ էր պարթև զորահրամանատարը հառանի ճակատամարտում.

- 1) Վասակը 3) Սուրենը
2) Ատրվշնասպը 4) Բակուրը

81. Ո՞վ է «Բաքոսուհիներ» ողբերգության հեղինակը.

- 1) Վերգիլիոսը 3) Տակիտոսը
2) Էվրիպիդեսը 4) Արտավազդ II-ը

82. Որքան էր Անտոնիոսի զորքի և ռազմական տեխնիկայի թիվը.

- 1) 80 հազար զորք և 150 սայլերի վրա բարձած պաշարողական տեխնիկա
2) 90 հազար զորք և 200 սայլերի վրա բարձած պաշարողական տեխնիկա
3) 100 հազար զորք և 300 սայլերի վրա բարձած պաշարողական տեխնիկա
4) 150 հազար զորք և 350 սայլերի վրա բարձած պաշարողական տեխնիկա

83. Արտաշես II-ը զոր թագավորությունն է միացրել Հայոց թագավորությանը.

- 1) Կապադովկիան 3) Ծոփքը
2) Ատրպատականը 4) Կոմմագենեն

84. Ատրպատականում ո՞վ էր Հռոմի կողմից թագավոր կարգված կամակատարը.

- 1) Արտավազդ III-ը 3) Արտանեսը
2) Արիոբարզանեսը 4) Տիգրան IV-ը

85. Ո՞վ է գահընկեց արել Տիգրան IV-ին.

- 1) Պոմպեոսը 3) Գայոս Կեսարը
2) Մարկոս Անտոնիոսը 4) Հուլիոս Կեսարը

86. Ո՞ր քաղաքում է Ջենոնը թագադրվել Մեծ Հայքի թագավոր.

- 1) Վան 3) Արմավիր
2) Արտաշատ 4) Երվանդաշատ

87. Միհրդատ Իբերացու կառավարման օրոք ո՞վ էր գլխավորում հայերի հակահռոմեական ապստամբությունը.

- 1) Վոնոն Արշակունին 3) Գիսակ Դիմաքսյանը
2) Ադրոնը 4) Բակուր Արշակունին

88. Ինչ դինաստիական անուններ էին տալիս Հայաստանում Հռոմի դրածո այն թագավորներին, ովքեր հեռավոր արյունակցական կապ ունեին Արտաշիսյանների հետ.

- | | |
|---------------------------|-------------------------|
| 1) «Տիգրան» և «Երվանդ» | 3) «Արտաշես» և «Տիգրան» |
| 2) «Արտաշես» և «Արտավազդ» | 4) «Երվանդ» և «Արտաշես» |

89. 2 թ. հակահռոմեական ապստամբության ժամանակ ղվ էր Արտազեսի բերդապահը.

- | | | | |
|--------------|--------------|-----------|-----------|
| 1) Մանկայոսը | 2) Տրայանոսը | 3) Ադդոնը | 4) Մենոնը |
|--------------|--------------|-----------|-----------|

90. Ո՞ւմ է պարթև արքա Վաղարշ I-ը գահ բարձրացրել Ատրպատականում.

- | | | | |
|------------|-------------|------------|--------------|
| 1) Վոնոնին | 2) Բակուրին | 3) Տրդատին | 4) Փարսմանին |
|------------|-------------|------------|--------------|

91. Որտեղ էր Սանատրուկ II-ի գերեզմանը.

- | | |
|-----------------------|--------------------------|
| 1) Շիրակի Անի բերդում | 3) Անգեղ բերդում |
| 2) Աշտիշատում | 4) Դարանաղիի Անի բերդում |

92. Թվարկված հայոց թագավորներից ղվ է հաղթել օլիմպիական խաղերում.

- | | | | |
|------------|--------------|-------------|-------------|
| 1) Տրդատ I | 2) Տրդատ III | 3) Խոսրով I | 4) Տրդատ II |
|------------|--------------|-------------|-------------|

93. Ո՞ւմ աշխատությանն է որպես ներածություն կցված Անանուն պատմիչի երկը.

- | | |
|---------------------|------------|
| 1) Մովսես Խորենացու | 3) Սեբեոսի |
| 2) Ղազար Փարպեցու | 4) Ղևոնդի |

94. Ինչպե՞ս է կոչվում Սեբեոսի աշխատությունը.

- | | |
|----------------------------------|------------------|
| 1) «Սահմանք իմաստասիրության» | 3) «Պատմություն» |
| 2) «Հայոց պատմության տեսություն» | 4) «Եղծ աղանդոց» |

95. Ինչպե՞ս էր կոչվում հույն հեղինակի այն աշխատությունը, որում արտացոլվել է «Արա Գեղեցիկ և Շամիրամ» առասպելը.

- | | |
|------------------|----------------------|
| 1) «Պատմություն» | 3) «Հանրապետություն» |
| 2) «Անաբասիս» | 4) «Թագավորություն» |

96. Ո՞վ էր հայոց հնագույն աստվածը.

- | | | | |
|----------|----------|-------------|----------|
| 1) Տորքը | 2) Հայկը | 3) Արամազդը | 4) Արամը |
|----------|----------|-------------|----------|

97. Ո՞ր հայկական աստծու պաշտամունքն էր տարածվել փոքրասիական մի շարք ժողովուրդների շրջանում.

- | | | | |
|----------|----------|-----------------|------------|
| 1) Հայկի | 2) Տորքի | 3) Արա Գեղեցիկի | 4) Վահագնի |
|----------|----------|-----------------|------------|

98. Որտեղ էր գտնվում Անահիտի պաշտամունքի գլխավոր կենտրոնը.

- | | |
|------------------|----------------|
| 1) Երիզա ավանում | 3) Թիլ ավանում |
| 2) Աշտիշատում | 4) Արտաշատում |

99. Որտեղ էր գտնվում Տիրի պաշտամունքի գլխավոր կենտրոնը.

- | | |
|--------------------|-----------------|
| 1) Երազամույնում | 3) Անի ամրոցում |
| 2) Բագադիճ ավանում | 4) Թիլ ավանում |

100. Սկսած IV–V դարերից՝ հայկական մշակույթը դր մշակույթին ավելի հաղորդակից դարձավ.

- 1) հունական
- 2) արևելյան
- 3) միջերկրածովյան քրիստոնեական
- 4) անտիկ

101. Հունարենն ու հելլենիստական մշակույթը Հայաստանում տեղ գտան գլխավորապես.

- 1) արքունիքում և քաղաքային բնակչության շրջանում
- 2) արքունիքում և ավագանու շրջանում
- 3) քաղաքային և գյուղական բնակչության շրջանում
- 4) ավագանու և գյուղացիության շրջանում

102. Որտեղ էր Արամազդի պաշտամունքի գլխավոր կենտրոնը.

- 1) Բարձր Հայքի Եկեղյաց գավառի Թիլ ավանում
- 2) Բարձր Հայքի Դարանաղյաց գավառի Անի ամրոցում
- 3) Բարձր Հայքի Եկեղյաց գավառի Երիզա (Երզնկա) ավանում
- 4) Արտաշատի մոտ՝ Երազամույն վայրում

103. Ո՞վ էր հայոց դիցարանում արևի, լույսի, կրակի ու արդարության աստվածը.

- 1) Վանատուրը
- 2) Վահագնը
- 3) Միհրը
- 4) Տիրը

104. Որտեղ էր արևի պաշտամունքի գլխավոր կենտրոնը.

- 1) Բարձր Հայքի Դարանաղյաց գավառի Անի ամրոցում
- 2) Արտաշատի մոտ՝ Երազամույն վայրում
- 3) Տուրուբերան նահանգում՝ Աշտիշատում
- 4) Բարձր Հայքի Դերջան գավառի Բագառիճ ավանում

105. Քանի տառից էին բաղկացած «Դանիելյան գրերը».

- 1) 24
- 2) 22
- 3) 26
- 4) 36

106. Ո՞վ է Տիգրան Մեծի կյանքի և գործունեության մասին առանձին աշխատություն գրել.

- 1) Մեթրոդորոս Սկեփսացին
- 2) Մար Աբաս Կատինան
- 3) Բարդաճանը
- 4) Ամֆիկրատես Աթենացին

107. Քանի տառից էր կազմված հունական այբուբենը.

- 1) 22
- 2) 24
- 3) 26
- 4) 36

108. Ո՞վ է վկայում նախաքրիստոնեական Հայաստանում դպրության աստված Տիրի պաշտամունքի մասին.

- 1) Փիլիոստրատոսը
- 2) Ագաթանգեղոսը
- 3) Մովսես Խորենացին
- 4) Մար Աբաս Կատինան

109. Ըստ Ապարանի հունական արձանագրության՝ Մեծ Հայքի արքան դր տոհմին է շնորհում Նիգ գավառը.

- | | |
|-------------------|--------------|
| 1) Ամատունիների | 3) Կաղմեա |
| 2) Բագրատունիների | 4) Գնթունյաց |

110. Ո՞ւմ հրամանով է ասորերենը հունարենին զուգահեռ կիրառվել Հայաստանում.

- | | |
|------------------|-----------------|
| 1) Խոսրով Կոտակի | 3) Վուամշապուհի |
| 2) Տրդատ III-ի | 4) Արշակ II-ի |

111. Ո՞ր այբուբենն է ընկած ասորական ու պահլավական գրերի հիմքում.

- | | |
|-------------|--------------|
| 1) հունական | 3) արամեական |
| 2) վրացական | 4) հայկական |

112. Մոտավորապես որքան էր գրաբարում ավանդված բառապաշարը.

- | | |
|----------------------|----------------------|
| 1) 7-8 հազարից ավելի | 3) 60 հազարից ավելի |
| 2) 100 հազարից ավելի | 4) 160 հազարից ավելի |

113. Հայաստանում ի՞նչ թատրոններ կային հելլենիզմի ժամանակաշրջանում.

- | | |
|-------------------------------|-----------------------------|
| 1) ժողովրդական և հունալեզու | 3) հունալեզու և պարսկալեզու |
| 2) ժողովրդական և պահլավալեզու | 4) արամեալեզու և հունալեզու |

114. Ո՞ր պատմիչն է վկայել, որ Արտավազդ II-ի գրած ողբերգությունները հայտնի էին հռոմեացիներին.

- | | |
|-----------------|----------------|
| 1) Տակիտոսը | 3) Պլուտարքոսը |
| 2) Դիոն Կասիոսը | 4) Ապպիանոսը |

115. Ո՞ր գետի ափին էր կառուցվել Բագարան քաղաք-սրբավայրը.

- | | |
|-------------|-------------|
| 1) Մեծամոր | 3) Արածանի |
| 2) Ախուրյան | 4) Մեղրագետ |

116. Ո՞ր թանգարանում է պահվում Անահիտ դիցուհու արձանի գլուխը.

- | | |
|-------------------------|---------------|
| 1) Լուվր | 3) Էրմիտաժ |
| 2) Հայաստանի պատմության | 4) Բրիտանական |

117. Ո՞վ է հիմնադրել Երվանդաշատը.

- | | |
|-------------------------|------------------------|
| 1) Երվանդ I Սակավակյացը | 3) Երվանդ III Օրոնտեսը |
| 2) Երվանդ II Օրոնտեսը | 4) Երվանդ IV Վերջինը |

118. Որտե՞ղ է կառուցվել Արտաշատ մայրաքաղաքը.

- 1) Արաքս և Մեծամոր գետերի միախառնման վայրում
- 2) Կուր և Արաքս գետերի ջրկիցում
- 3) Հրազդանի ափին
- 4) Արաքս և Եփրատ գետերի ջրկիցում

119. Ուշ հեղինիզմի շրջանի քաղաքաշինությունն ուսումնասիրելու համար մասնակի պեղումներ են կատարվել.

- 1) Վանում
- 2) Տիգրանակերտում
- 3) Վաղարշապատում
- 4) Դվինում

120. Որքան էր Արամազդի արձանի բարձրությունը.

- 1) 7 մ
- 2) 8 մ
- 3) 9 մ
- 4) 11 մ

121. Ինչ լեզվով է գրված Գառնիի արձանագրությունը.

- 1) հունարեն
- 2) ասորերեն
- 3) պահլավերեն
- 4) լատիներեն

122. Քանի սյուներով է շրջապատված Գառնիի տաճարը.

- 1) 12
- 2) 24
- 3) 36
- 4) 48

123. Ո՞ր մայրաքաղաքում է առանձին դրամ հատվել՝ նվիրված նույն մայրաքաղաքին.

- 1) Արմավիր
- 2) Երվանդաշատ
- 3) Արտաշատ
- 4) Դվին

124. Ո՞ր երկրի թագավորի դեմ պատերազմում Արտաշեսը վերադարձրեց Տնորիքը.

- 1) Վիրքի
- 2) Աղվանքի
- 3) Բյուբանիայի
- 4) Սելևկյան տերության

125. Ո՞վ է «Մեծ մարդկանց մասին» աշխատության հեղինակը.

- 1) Մեթրոդորոս Սկեփսացի
- 2) Օղյում քուրմ
- 3) Բարդաճան
- 4) Ամֆիկրատես Աթենացի

3. ԱՇԽԱՏԱՆՔ ՍԿԶԲՆԱԴՐՅՈՒՐՆԵՐԻ ՀԵՏ

1. Ո՞վ է ստորև բերվող վկայության հեղինակը.

«Հայաստանն... աճել է Արտաշեսի ջանքերով... , և ուստի այսպեղ բոլորը միալեզու են»:

- | | |
|----------------|--------------|
| 1) Պոլիբիոսը | 3) Ստրաբոնը |
| 2) Պլուտարքոսը | 4) Խորենացին |

2. Ո՞վ է ստորև բերվող վկայության հեղինակը.

«Արտաշեսը հրամայել է որոշել գյուղերի և ագարակների սահմանները... , կոփել է փվել քառակուսի քարեր և փնկել հողի մեջ»:

- | | |
|----------------|--------------|
| 1) Պոլիբիոսը | 3) Ստրաբոնը |
| 2) Պլուտարքոսը | 4) Խորենացին |

3. Ե՞րբ է տեղի ունեցել ստորև նկարագրված ճակատամարտը.

«Հայերը, նեփահարելով հռոմեացիներին, շարերին իսկույն սպանեցին, իսկ շար շարերին էլ վիրավորեցին:

Այնժամ [հռոմեացի զորավարը], քանզի շարերը վիրավորվել էին, և մի մասն էլ մահանում էր, իսկ հաշմվածները հեծեծում էին, և միաժամանակ պարենամթերքը պակասում էր, նահանջեց»:

- | | |
|---------------------------------|---------------------------------|
| 1) Ք. ա. 69 թ. հոկտեմբերի 6-ին | 3) Ք. ա. 53 թ. մայիսի 6-ին |
| 2) Ք. ա. 331 թ. հոկտեմբերի 1-ին | 4) Ք. ա. 68 թ. սեպտեմբերի 22-ին |

4. Ո՞ւմ անունն է բաց թողնված բերված հատվածում.

«Ես-ին չեմ հանձնի, իսկ եթե հռոմեացիները պատերազմ սկսեն, ապա... հակահարված կփամ նրանց»:

- | | |
|-------------|---------------|
| 1) Տիգրանի | 3) Մեհրուժանի |
| 2) Միհրդատի | 4) Արտավազդի |

5. Ո՞ր ճակատամարտի մասին են հետևյալ խոսքերը.

«Հայերը, նեփահարելով հռոմեացիներին, շարերին իսկույն սպանեցին, իսկ շար շարերին էլ վիրավորեցին:

Այնժամ [հռոմեացի զորավարը], քանզի շարերը վիրավորվել էին, և մի մասն էլ մահանում էր, իսկ հաշմվածները հեծեծում էին, և միաժամանակ պարենամթերքը պակասում էր, նահանջեց»:

- | | |
|-----------------|-------------|
| 1) Տիգրանակերտի | 3) Արածանիի |
| 2) Հռանդեայի | 4) Խառանի |

6. Ո՞ւմ մասին են հետևյալ խոսքերը.

«Մեծագույն թագավոր, որ փրակալում էր մեծ փառքով»:

- | | |
|----------------|------------------|
| 1) Արտաշես I-ի | 3) Արտավազդ II-ի |
| 2) Տիգրան II-ի | 4) Տրդատ I-ի |

7. Ո՞վ է հետևյալ խոսքերի հեղինակը.

«Տիգրան Մեծն իր արժանավոր փեղն է զբաղեցնում Արևելքում երբևէ իշխած փրակալների շարքում...»:

- | | |
|---------------------|----------------|
| 1) Նիկողայոս Ադոնցը | 3) Ստրաբոնը |
| 2) Լեոն | 4) Պլուտարքոսը |

8. Ո՞ր իրադարձության կապակցությամբ է հռոմեական պատմիչը նշել, թե «...Արևելքում իրենց ամենից շատ հոգսեր են պատճառել հայերը»:

- 1) Տիգրան III-ի գահակալման
- 2) Տիգրան IV-ի գահակալման
- 3) Արտավազդ III-ի գահակալման
- 4) Արտաշես II-ի կողմից Ատրպատականի նվաճման

9. Ո՞վ է մեջբերված հատվածի հեղինակը.

«Հայոց թագավոր [.....-ը] ուներ միջակ հասակ, բայց հակված էր դեպի ամեն մի մեծ բան և մանավանդ դեպի պատերազմական գործերը: Նա հավատարիմ պահապան էր արդարադատության և իր կենցաղավարության մեջ զուսպ էր, նաև չափավոր ու ողջամիտ էր, ինչպես լավագույնները հույների և հռոմայեցիների մեջ»:

- | | |
|-------------|-----------------|
| 1) Արիանոսը | 3) Դիոն Կասիոսը |
| 2) Տակիտոսը | 4) Պլուտարքոսը |

10. Ո՞ւմ դեմ կատարած արշավանքից էր վերադարձել հայոց արքան.

«Հայոց թագավորը վերադարձավ մեծ հաղթությամբ, շար ավարով ու ցնծալից ուրախությամբ. նա վերադարձավ Հայաստան՝ Այրարատ գավառը՝ Վաղարշապատ քաղաքը. եկավ մեծ ուրախությամբ, բարի անունով ու շար ավարով»:

- | | |
|--------------------------|-----------------|
| 1) Հռոմեական կայսրության | 3) Կապադովկիայի |
| 2) Կովկասի լեռնականների | 4) Պարսկաստանի |

11. Ո՞վ է մեջբերված հատվածի հեղինակը.

«Հայոց թագավորը վերադարձավ մեծ հաղթությամբ, շար ավարով ու ցնծալից ուրախությամբ. նա վերադարձավ Հայաստան՝ Այրարատ գավառը՝ Վաղարշապատ քաղաքը. եկավ մեծ ուրախությամբ, բարի անունով ու շար ավարով»:

- | | |
|---------------------|---------------------|
| 1) Տակիտոսը | 3) Փավստոս Բուզանդը |
| 2) Մովսես Խորենացին | 4) Արիանոսը |

12. Հայոց ո՞ր մայրաքաղաքի կառուցման մասին է պատմիչի խոսքը.

«Նա քաղաքը շրջապատեց 50 կանգուն բարձրության պարիսպով, որի հաստության մեջ կային ձիերի բազմաթիվ ախոռներ: Քաղաքի արվարձանում նա կառուցեց պալատ՝ ընդարձակ զբոսայգիներով, որսատեղերով և լճերով: Մերձակայքում նա բարձրացրեց նաև հզոր մի բերդ»:

- 1) Արտաշատ
- 2) Երվանդաշատ
- 3) Տիգրանակերտ
- 4) Վաղարշապատ

13. Ո՞ր պատմիչի խոսքերն են.

«Նա քաղաքը շրջապատեց 50 կանգուն բարձրության պարիսպով, որի հաստության մեջ կային ձիերի բազմաթիվ ախոռներ: Քաղաքի արվարձանում նա կառուցեց պալատ՝ ընդարձակ զբոսայգիներով, որսատեղերով և լճերով: Մերձակայքում նա բարձրացրեց նաև հզոր մի բերդ»:

- 1) Ամմիանոսի
- 2) Տակիտոսի
- 3) Ապպիանոսի
- 4) Պլուտարքոսի

14. Ո՞ր արքայի անունն է բաց թողնված ստորև բերված հատվածում.

«..... գնում է այն տեղը, որտեղ և.....-ը խառնվում են, և այնտեղ, բլուրը հավանելով, քաղաք է շինում և իր անունով կոչում»:

- 1) Տիգրան II-ի
- 2) Արտաշես I-ի
- 3) Խոսրով Կոտակի
- 4) Վաղարշ I-ի

15. Ո՞ր մայրաքաղաքի կառուցման մասին են մեջբերված խոսքերը.

«Կառուցվեց մեծ և շատ գեղեցիկ մի քաղաք, որին թագավորը տվեց իր անունը և այն հռչակեց Հայաստանի քաղաքամայր»:

- 1) Արտաշատ
- 2) Տիգրանակերտ
- 3) Մծուրք
- 4) Վաղարշապատ

16. Հայոց ո՞ր արքայի կառուցած մայրաքաղաքի մասին են մեջբերված խոսքերը.

«Կառուցվեց մեծ և շատ գեղեցիկ մի քաղաք, որին թագավորը տվեց իր անունը և այն հռչակեց Հայաստանի քաղաքամայր»:

- 1) Վաղարշ I
- 2) Սանատրուկ II
- 3) Տիգրան II
- 4) Արտաշես I

17. Հայոց ո՞ր մայրաքաղաքի մասին են հույն պատմիչի ստորև բերվող տողերը.

«Նոր մայրաքաղաքը բնակեցնելու համար ... այստեղ հրավիրում է հայերից լավագույններին և սպառնում է բռնագանձել այն ամենը, որ իրենց հետ ... չէին տանելու»:

- 1) Արտաշատ
- 2) Տիգրանակերտ
- 3) Երվանդաշատ
- 4) Դվին

4. ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. **Ինչպե՞ս է կոչվում այն լեզվաընտանիքը, որին պատկանում է հայերենը.**
 - 1) ասիական
 - 2) եվրոպական
 - 3) սեմական
 - 4) հնդեվրոպական
2. **Խալդյան դարպասը հետազայում ի՞նչ է կոչել ժողովուրդը.**
 - 1) Մուսասիր
 - 2) Միերի դուռ
 - 3) Մենուայի դուռ
 - 4) Սրբազան մուտք
3. **Ի՞նչ է նշանակում «Անաբասիս».**
 - 1) «Քսան հազարի նահանջը»
 - 2) «Տասը հազարի նահանջը»
 - 3) «Հույն վարձկանների նահանջը»
 - 4) «Ապստամբության պատմություն»
4. **Ի՞նչ էր կոչվում Հայաստանի արևմտյան մասի կառավարիչն Աքեմենյան տիրապետության օրոք.**
 - 1) սատրապ
 - 2) մարզպան
 - 3) ստրատեգոս
 - 4) հյուպարքոս
5. **Հունահռոմեական հեղինակներն ի՞նչ էին անվանում Արտաշես I-ի ստեղծած վարչամիավորների կառավարիչներին.**
 - 1) սատրապ
 - 2) հյուպարքոս
 - 3) ստրատեգոս
 - 4) աշխարհակալ
6. **Ինչպե՞ս էր կոչվում հայկական հելլենիզմի երկրորդ փուլը.**
 - 1) միջին հելլենիզմ
 - 2) ուշ հելլենիզմ
 - 3) վաղ հելլենիզմ
 - 4) նոր հելլենիզմ
7. **Ո՞վ էր Վահագնը հայոց դիցարանում.**
 - 1) գիտության ու արվեստների հովանավորը
 - 2) ռազմի, քաջության, ամպրոպի աստվածը
 - 3) արևի, լույսի, կրակի աստվածը
 - 4) դպրության աստվածը
8. **Ո՞վ էր Աստղիկը հայոց դիցարանում.**
 - 1) երկնային լույսի, սիրո և գեղեցկության դիցուհին
 - 2) պտղաբերության ու մայրության դիցուհին
 - 3) ռազմի աստվածուհին
 - 4) հյուրասիրության աստվածուհին

9. Ո՞վ էր Նանե դիցուհին հայկական դիցարանում.

- 1) ընտանիքի հովանավորը
- 2) մայրության և պտղաբերության աստվածուհին
- 3) գիտության և արվեստի հովանավորը
- 4) հյուրընկալության աստվածուհին

10. Ո՞վ էր Տիրը հայկական դիցարանում.

- 1) դպրության աստվածը
- 2) հյուրընկալության աստվածը
- 3) արևի աստվածը
- 4) ռազմի աստվածը

11. Ընտրել ճիշտ բացատրությունները.

- 1) «Սահմանապահ կուսակալ»-ը Վանի թագավորության արձանագրություններում հիշատակված մի շարք գործակալությունների անվանումներից է:
- 2) Արարատյան կամ Վանի համահայկական թագավորությունը հինարևելյան տիպի բացարձակ միապետություն էր:
- 3) Արարատյան կամ Վանի համահայկական թագավորությունը պոլիսային տիպի պետություն էր:
- 4) Արարատյան կամ Վանի համահայկական թագավորության մեջ թագավորին կից գործող ավագների խորհրդի անդամները կոչվում էին արքայի ավագանիներ:
- 5) Արարատյան կամ Վանի համահայկական թագավորության մեջ թագավորին կից գործող ավագների խորհրդի անդամները կոչվում էին արքայի «խորհրդականներ»:
- 6) Արարատյան կամ Վանի համահայկական թագավորության մեջ թագավորին կից գործող ավագների խորհրդի անդամները կոչվում էին արքայի «փոխանորդներ»:
- 7) Վարչական առումով Վանի թագավորությունը բաժանվում էր նահանգների, որոնք կառավարվում էին արքունի կառավարիչների կողմից:
- 8) Արարատյան կամ Վանի համահայկական թագավորությունը հինարևելյան տիպի դաշնային պետություն էր:

12. Ընտրել ճիշտ բացատրությունները.

- 1) Աքեմենյան կայսրության քսան մեծ վարչական միավորներից յուրաքանչյուրը կոչվում էր մարզպանություն:
- 2) Աքեմենյան կայսրության քսան մեծ վարչական միավորներից յուրաքանչյուրը կոչվում էր ստրատեգիա:
- 3) Աքեմենյան կայսրության քսան մեծ վարչական միավորներից յուրաքանչյուրը կոչվում էր սատրապություն:
- 4) Հայկազուն-Երվանդական արքաները Ք. ա. VII-VI դդ. կրում էին «Հայոց թագավոր» տիտղոսը:
- 5) Հայկազուն-Երվանդական արքաները Ք. ա. VII-VI դդ. կրում էին «Թագավորների թագավոր» տիտղոսը:
- 6) Աքեմենյան տիրապետության օրոք Հայաստանի կառավարիչը կոչվում էր փոխարքա:
- 7) Աքեմենյան տիրապետության օրոք Հայաստանի կառավարիչը կոչվում էր սատրապ:
- 8) Աքեմենյան տիրապետության օրոք Հայաստանի կառավարիչը կոչվում էր ստրատեգոս:

13. Ընտրել ճիշտ բացատրությունները.

- 1) Հունահռոմեական հեղինակները Արտաշես Ա-ի ստեղծած վարչամիավորներն անվանում էին ստրատեգիա:
- 2) Հունահռոմեական հեղինակները Արտաշես Ա-ի ստեղծած վարչամիավորներն անվանում էին կուսակալություն:
- 3) Հունահռոմեական հեղինակները Արտաշես Ա-ի ստեղծած վարչամիավորներն անվանում էին սատրապություն:
- 4) Զրադաշտական կրոնի սպասավորները կոչվում էին մոգ:
- 5) Զրադաշտական կրոնի սպասավորները կոչվում էին քուրմ:
- 6) Աքեմենյան տիրապետության օրոք Հայաստանի արևմտյան մասի կառավարիչը կոչվում էր սատրապ:
- 7) Աքեմենյան տիրապետության օրոք Հայաստանի արևմտյան մասի կառավարիչը կոչվում էր մարզպան:
- 8) Աքեմենյան տիրապետության օրոք Հայաստանի արևմտյան մասի կառավարիչը կոչվում էր հյուպարքոս:

14. Ընտրել ճիշտ բացատրությունները.

- 1) «Սահմանապահ կուսակալ»-ը Վանի թագավորության արձանագրություններում հիշատակված մի շարք գործակալությունների անվանումներից է:
- 2) Արարատյան կամ Վանի համահայկական պետության մեջ թագավորին կից գործող ավագների խորհրդի անդամները կոչվում էին արքայի «գործակալներ»:
- 3) Արարատյան կամ Վանի համահայկական թագավորությունը հինարևելյան տիպի բացարձակ միապետություն էր:
- 4) Վարչական առումով Վանի թագավորությունը բաժանվում էր առանձին նահանգների, որոնք կառավարվում էին արքունի կառավարիչների կողմից:
- 5) «Արքունի հացատար»-ը Վանի թագավորության արձանագրություններում հիշատակված մի շարք գործակալությունների անվանումներից է:

5. ՊԱՏՄԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՆԵՐ ՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ

1. Ո՞ր իրադարձությունը նպաստեց հայ-հռոմեական ռազմական բախմանը.

- 1) Հայաստանի կողմից Փոքր Ասիայի գավթումը
- 2) Հայկական տերության՝ Սև ծով դուրս գալը
- 3) Միհրդատ Պոնտացու փախուստը Հայաստան
- 4) Հայաստանի կողմից դեպի Արևելք տանող ճանապարհների փակումը

2. Նախապես ինչի հետ էր կապված Արայի պաշտամունքը.

- 1) երկրագործության, ցանքի և գարնան աճող բուսականության
- 2) երկրագործության, արհեստի և անասնապահության
- 3) արհեստի, ցանքի և գարնան աճող բուսականության
- 4) արհեստի, անասնապահության և գարնան աճող բուսականության

3. Ստորև տրված են պատմական իրադարձությունների պատճառներ և հետևանքներ: Գտնել ճիշտ պատասխանները.

- 1) Մերձավոր Արևելքում Պարթևստանի դիրքերը թուլացնելու նպատակով Արտաշես I-ը աջակցեց Մարաստանի սատրապ Տիմարքոսի ապստամբությանը:
- 2) Ք. ա. 92 թ. սկսված հռոմեա-պարթևական բանակցությունների արդյունքն էր ազդեցության ոլորտների բաժանման մասին նրանց միջև համաձայնագրի կնքումը:
- 3) Փոքր Ասիայում բռնկված պատերազմի ավարտից հետո հաշտության պայմանագրում Արտաշես I-ը կարողացավ հատուկ կետ մտցնել, որի շնորհիվ Պոնտոսի հաշվին ընդարձակվեց Փոքր Հայքի տարածքը:
- 4) Մերձավոր Արևելքում Հռոմի դիրքերը թուլացնելու նպատակով Արտաշես I-ը աջակցեց Մարաստանի սատրապ Տիմարքոսի ապստամբությանը:
- 5) Փոքր Ասիայում բռնկված պատերազմի ավարտից հետո հաշտության պայմանագրում Արտաշես I-ը կարողացավ հատուկ կետ մտցնել, որի շնորհիվ Պոնտոսի հաշվին ընդարձակվեց Մեծ Հայքի տարածքը:
- 6) Ք. ա. 92 թ. սկսված հռոմեա-պարթևական բանակցությունների արդյունքում Հայաստանի դեմ ուղղված պայմանագիր կնքվեց:
- 7) Մերձավոր Արևելքում Սելևկյան պետության դիրքերը թուլացնելու նպատակով Արտաշես I-ը աջակցեց Մարաստանի սատրապ Տիմարքոսի ապստամբությանը:
- 8) Արտաշեսը Ք. ա. 165 թ. վճռական հակահարված տվեց Սելևկյան Անտիոքոս III-ին, որը փորձում էր Հայաստանը ենթարկել Սելևկյանների գերիշխանությանը:

4. Ստորև տրված են պատմական իրադարձությունների պատճառներ և հետևանքներ: Գտնել ճիշտ պատասխանները.

- 1) Որպեսզի Կրասուսին ստիպեին Պարթևստանի դեմ արշավել Հայաստանի տարածքով, Օրոդես II-ի գլխավորած ուժերը հարձակվեցին Հայաստանի սահմանամերձ տարածքների վրա:
- 2) Հայաստանը պարթևների արշավանքների ավերածություններից և զոհերից զերծ պահելու նպատակով Արտավազդ II-ը պարթևական ձախողված արշավանքից հետո որոշեց բանակցել Անտոնիոսի հետ:
- 3) Հռոմի Ծերակույտին ուղարկած պաշտոնական գեկուցագրում պարթևական արշավանքի ձախողումն Անտոնիոսը բացատրում էր Միջագետքի տափաստաններում անհաջող ռազմական գործողություններ վարելու պարտադրանքով:
- 4) Պարթևստանի դեմ ձեռնարկելիք հաջորդ արշավանքի ծրագիրը քննարկելու և հայ-հռոմեական հակապարթևական պայմանագիր կնքելու նպատակով Արտավազդ II-ը պարթևական ձախողված արշավանքից հետո որոշեց բանակցել Անտոնիոսի հետ:
- 5) Հռոմի Ծերակույտին ուղարկած պաշտոնական գեկուցագրում պարթևական արշավանքի ձախողումն Անտոնիոսը բացատրում էր եղանակային անբարենպաստ պայմաններով և զորքում բռնկված համաճարակով:
- 6) Որպեսզի պաշտպանեն իրենց դաշնակից Հայաստանի սահմանները, Օրոդես II-ի գլխավորած ուժերը հարձակվեցին Հայաստանի սահմանամերձ տարածքների վրա:
- 7) Հայաստանը հռոմեացիների ավերածություններից և զոհերից զերծ պահելու նպատակով Արտավազդ II-ը պարթևական ձախողված արշավանքից հետո որոշեց բանակցել Անտոնիոսի հետ:
- 8) Որպեսզի թույլ չտան Արտավազդի և Կրասուսի ռազմական ուժերի միավորումը, Օրոդես II-ի գլխավորած ուժերը հարձակվեցին Հայաստանի սահմանամերձ տարածքների վրա:
- 9) Հռոմի Ծերակույտին ուղարկած պաշտոնական գեկուցագրում պարթևական արշավանքի ձախողումն Անտոնիոսը բացատրում էր հայոց թագավոր Արտավազդ II-ի դավաճանությամբ:

5. Ստորև տրված են պատմական իրադարձությունների պատճառներ և հետևանքներ: Գտնել ճիշտ պատասխանները.

- 1) Արտավազդ II-ը օգնական զորքեր չուղարկեց Կրասուսին, քանի որ Օրոդես II-ը իր դաշնակից Հայաստանից պահանջել էր չօգնել հռոմեացիներին:
- 2) Հայաստանը հռոմեացիների ավերածություններից և զոհերից զերծ պահելու նպատակով Արտավազդ II-ը պարթևական ձախողված արշավանքից հետո որոշեց բանակցել Անտոնիոսի հետ:
- 3) Քանի որ Արտավազդ II-ը գաղտնի դաշնակցային պայմանագիր էր կնքել պարթևների հետ, ուստի Կրասուսը որոշեց պարթևներին ջախջախելուց հետո պատժել Արտավազդին:

- 4) Արտավազդ II-ը օգնական զորքեր չուղարկեց Կրասուսին, քանի որ վերջինս խախտել էր Հայաստան չմտնելու պայմանավորվածությունը, իսկ հայոց արքան էլ արդեն գաղտնի դաշինք էր կնքել Օրոդես II-ի հետ:
- 5) Պարթևստանի դեմ ձեռնարկելիք հաջորդ արշավանքի ծրագիրը քննարկելու և հայ-հռոմեական հակապարթևական պայմանագիր կնքելու նպատակով Արտավազդ II-ը պարթևական ձախողված արշավանքից հետո որոշեց բանակցել Անտոնիոսի հետ:
- 6) Արտավազդ II-ը օգնական զորքեր չուղարկեց Կրասուսին, քանի որ Օրոդես II-ի գլխավորած ուժերը հարձակվել էին Հայաստանի սահմանամերձ տարածքների վրա:
- 7) Քանի որ հայտնի էր դարձել, թե Արտավազդ II-ը գաղտնի բանակցություններ էր վարել Օրոդես II-ի հետ, ուստի Կրասուսը որոշեց պարթևներին ջախջախելուց հետո պատժել Արտավազդին:
- 8) Քանի որ Արտավազդ II-ը տեղեկացրել էր, որ չի կարող օգնական ուժեր ուղարկել Կրասուսին, ուստի վերջինս որոշեց պարթևներին ջախջախելուց հետո պատժել Արտավազդին:

6. Ստորև տրված են պատմական իրադարձությունների պատճառներ և հետևանքներ: Գտնել ճիշտ պատասխանները.

- 1) Հայաստանի տարածքով անցնող միջազգային առևտրական ուղիները բարեկարգելու նպատակով Ներոն կայսրը Տրդատին մեծ գումար և արհեստավորներ է տալիս:
- 2) Քանի որ Վաղարշի հարձակումը սպառնում էր հռոմեական Կապադովկիա նահանգին, ուստի Կորբուլոնը Ներոնին խնդրեց իր փոխարեն Հայաստան ուղարկել մեկ այլ զորավարի:
- 3) Վաղարշ II-ից հետո Հայաստանի թագավոր նշանակված Սոհեմոս-Տիգրանը դուրս է վտարվում Հայաստանից, քանի որ պարթևներին մեղադրում էր Հռանդեսայի պայմանագիրը խախտելու համար:
- 4) Ավերված Արտաշատը վերականգնելու համար Ներոն կայսրը Տրդատին մեծ գումար և արհեստավորներ է տալիս:
- 5) Քանի որ պարտված Պարսկաստանը հաշտություն էր խնդրել, ուստի Հռոմը համաձայնեց նրա հետ կնքել Մծբինի 40-ամյա հաշտության պայմանագիրը:
- 6) Քանի որ Վաղարշի հարձակումը սպառնում էր հռոմեական Սիրիա (Ասորիք) նահանգին, որի կառավարիչը Կորբուլոնն էր, ուստի վերջինս Ներոնին խնդրեց իր փոխարեն Հայաստան ուղարկել մեկ այլ զորավարի:
- 7) Գառնիի ամրոցը կառուցապատելու և Արեգ-Միհրի տաճարը կառուցելու համար Ներոն կայսրը Տրդատին մեծ գումար և արհեստավորներ է տալիս:
- 8) Քանի որ պարթևների հետ նախորդ բախման ժամանակ Կորբուլոնը վիրավորվել էր ու վատառողջ էր, ուստի վերջինս Ներոնին խնդրեց իր փոխարեն Հայաստան ուղարկել մեկ այլ զորավարի:

7. Ստորև տրված են պատմական իրադարձությունների պատճառներ և հետևանքները: Գտնել ճիշտ պատասխանները.

- 1) Ռուսա II–ի օրոք Ասորեստանի և Վանի համահայկական թագավորության միջև մղված պատերազմն ավարտվեց խաղաղության և բարեկամության պայմանագրի կնքմամբ:
- 2) Ք. ա. 735 թ. դեպի Տուշպա արշավանքի արդյունքում Ասորեստանը չկարողացավ գրավել Տուշպան և այլևս դադարեց Առաջավոր Ասիայում Վանի թագավորության համար վտանգ ներկայացնելուց:
- 3) Ք. ա. 743–713 թթ. մղված երեսնամյա պայքարի արդյունքում Վանի թագավորությանը թեև հաջողվեց վերականգնել իր դիրքերը, սակայն նա այլևս Առաջավոր Ասիայի հզոր տերություններից չէր:
- 4) Ք. ա. 735 թ. դեպի Տուշպա արշավանքի արդյունքում Ասորեստանը կարողացավ գրավել Տուշպան և կրկին դարձավ Վանի թագավորության գլխավոր մրցակիցն Առաջավոր Ասիայում:
- 5) Ք. ա. 743–713 թթ. մղված երեսնամյա պայքարի արդյունքում Ասորեստանին չհաջողվեց վերականգնել իր դիրքերը և դառնալ Առաջավոր Ասիայի հզոր տերություններից մեկը:
- 6) Ք. ա. 735 թ. դեպի Տուշպա արշավանքի արդյունքում Ասորեստանը չկարողացավ գրավել Տուշպան, սակայն վերականգնեց իր դիրքերը:
- 7) Ք. ա. 743–713 թթ. մղված երեսնամյա պայքարի արդյունքում Ասորեստանին հաջողվեց վերականգնել իր դիրքերը և դառնալ Առաջավոր Ասիայի տերություններից մեկը:

8. Ստորև տրված են պատմական իրադարձությունների պատճառներ և հետևանքները: Գտնել ճիշտ պատասխանները.

- 1) Հայաստանի, Բաբելոնի ու Մարաստանի միացյալ զորքերի՝ դեպի Կարքեմիշ արշավելու նպատակը Ասորեստանը վերջնականապես կործանելն էր:
- 2) Մարաստանի թագավոր Կիաքսարի դեմ պատերազմում պարտություն կրելով՝ Երվանդ Սակավակյացը թեև ճանաչեց մարական գերիշխանությունը, սակայն հրաժարվեց իշխանությունից:
- 3) Մարաստանի թագավոր Կիաքսարի դեմ պատերազմում պարտություն կրելով՝ Երվանդ Սակավակյացը հրաժարվեց իշխանությունից, սակայն չճանաչեց մարական գերիշխանությունը:
- 4) Վանի համահայկական թագավորության անկմանը նպաստեցին հարավից երկիրն ասպատակող մարերը:
- 5) Վանի համահայկական թագավորության անկմանը նպաստեցին հյուսիսից երկիրն ասպատակող սկյութները:
- 6) Վանի համահայկական թագավորության անկմանը նպաստեցին արևելքից երկիրն ասպատակող կիմերները:
- 7) Մարաստանի թագավոր Կիաքսարի դեմ պատերազմում պարտություն կրելով՝ Երվանդ Սակավակյացը թեև պահպանեց իր իշխանությունը, սակայն ճանաչեց մարական գերիշխանությունը:

9. Ստորև տրված են պատմական իրադարձությունների պատճառներ և հետևանքներ: Գտնել ճիշտ պատասխանները.

- 1) Սարգուրի II–ի կողմից Փյունիկիայի վերանվաճմամբ Հայոց աշխարհակալության արևելյան սահմանը կրկին հասավ մինչև Եգիպտոս:
- 2) Սարգուրի II–ի կողմից կախյալ թագավորությունները վերացնելու և պետության վարչական միավորներ դարձնելու արդյունքում կառավարման ոլորտում անցում կատարվեց կենտրոնացված պետության:
- 3) Սարգուրի II–ի կողմից կախյալ թագավորությունները վերացնելու և պետության վարչական միավորներ դարձնելու արդյունքում կառավարման ոլորտում անցում կատարվեց դաշնային կառավարման:
- 4) Մենուայի հաղթարշավների շնորհիվ Հայկական լեռնաշխարհի հիմնական մասը միավորվեց մեկ կենտրոնացված պետության մեջ:
- 5) Սարգուրի II–ի կողմից Բաբելոնիայի վերանվաճման շնորհիվ Հայոց աշխարհակալության հարավային սահմանը կրկին հասավ Պարսից ծոց:
- 6) Մենուայի հաղթարշավների շնորհիվ Հայկական լեռնաշխարհի հյուսիսային շրջանները թեև մտան Վանի տերության կազմի մեջ, սակայն հարկատու չդարձան:
- 7) Սարգուրի II–ի կողմից կախյալ թագավորությունները վերացնելու և պետության վարչական միավորներ դարձնելու արդյունքում կառավարման ոլորտում անցում կատարվեց համադաշնային կառավարման:
- 8) Մենուայի հաղթարշավների շնորհիվ Հայկական լեռնաշխարհի հարավային շրջանները թեև մտան Վանի տերության կազմի մեջ, սակայն հարկատու չդարձան:
- 9) Մենուայի հաղթարշավների շնորհիվ Հայկական լեռնաշխարհը և Փոքր Ասիա թերակղզու կենտրոնական և արևելյան շրջանները միավորվեցին մեկ կենտրոնացված պետության մեջ:

10. Ընտրել Արտաշես I–ի իրականացրած հողային բարեփոխման հետևանքները.

- 1) Կասեցվեցին համայնական հողերի հետագա զավթումները, և պահպանվեց համայնքային հողային սեփականությունը:
- 2) Հողեր ժառանգելու իրավունք շնորհվեց նաև իշխանական տների իգական սեռի ներկայացուցիչներին:
- 3) Հողեր ժառանգելու իրավունք շնորհվեց իշխանական տների կրտսեր ներկայացուցիչներին և բարձրաստիճան հոգևորականներին:
- 4) Օրինականացվեցին ագարակատերերի՝ մինչ այդ կատարած զավթումները:
- 5) Օրինազանց ագարակատերերը խոշոր տուգանք վճարեցին արքունական գանձարանին, և համայնքներին վերադարձվեցին նրանցից խլված հողերը:
- 6) Կասեցվեցին մասնավոր հողային խոշոր տնտեսությունների հետագա մասնատումն ու փոշիացումը:
- 7) Մասնավոր հողային տնտեսությունների սահմանները հստակորեն սահմանազատվեցին համայնքին պատկանող հողերից:
- 8) Չեղյալ համարվեցին ագարակատերերի՝ մինչ այդ կատարած հողային զավթումները:

11. Ստորև տրված են պատմական իրադարձությունների հետևանքներ: Գտնել ճիշտ պատասխանները.

- 1) Մենուայի հաղթարշավների հետևանքով Հայկական լեռնաշխարհի կենտրոնական փոքր հատվածը միավորվեց մեկ միասնական կենտրոնացված պետության մեջ:
- 2) Սարգուրի II-ի կողմից կախյալ թագավորությունները վերացնելու և պետության վարչական միավորներ դարձնելու հետևանքով Վանի թագավորությունը դարձավ կենտրոնացված պետություն:
- 3) Սարգուրի II-ի կողմից Բաբելոնիայի վերանվաճման հետևանքով հայոց աշխարհակալության հարավային սահմանները կրկին հասան Միջերկրական ծովի արևելյան ավազանին:
- 4) Մենուայի հաղթարշավների հետևանքով Հայկական լեռնաշխարհի հարավային շրջանները մտան Վանի տերության կազմի մեջ, սակայն հարկատու չդարձան:
- 5) Սարգուրի II-ի կողմից Բաբելոնիայի վերանվաճման հետևանքով հայոց աշխարհակալության հարավային սահմանը կրկին հասավ Պարսից ծոց:
- 6) Սարգուրի II-ի կողմից կախյալ թագավորությունները վերացնելու և պետության վարչական միավորներ դարձնելու հետևանքով Վանի թագավորությունը դարձավ դաշնային միապետություն:
- 7) Մենուայի հաղթարշավների հետևանքով Ասորեստանը թուլացավ և, չկարողանալով այլևս վերականգնել իր դիրքերն Առաջավոր Ասիայում, շուտով նվաճվեց Բաբելոնի կողմից:
- 8) Մենուայի հաղթարշավների հետևանքով Հայկական լեռնաշխարհի հիմնական մասը միավորվեց մեկ կենտրոնացված պետության մեջ:

12. Ստորև տրված են պատմական իրադարձությունների պատճառներ և հետևանքներ: Գտնել ճիշտ պատասխանները.

- 1) Հայկական լեռնաշխարհը Աքքադի կողմից նվաճվելու արդյունքում Ք. ա. I հազարամյակի սկզբին ձևավորվեց հայկական հեթանոսական նոր դիցարանը:
- 2) Ք. ա. 880-870-ական թթ. Հայկազուն-Երվանդականների՝ Ասորեստանի դեմ մղած պատերազմում պարտություն կրելու հետևանքով Հայկական լեռնաշխարհում տիրապետող դիրք գրավեցին Էթիունի և Հայասա համադաշնությունները:
- 3) Փոքր Ասիայում բռնկված պատերազմի ավարտից հետո հաշտության պայմանագրում Արտաշես I-ը կարողացավ հատուկ կետ մտցնել, որի շնորհիվ Պոնտոսի հաշվին ընդարձակվեց Փոքր Հայքի տարածքը:
- 4) Դեպի Բաբելոն, Պարսից ծոց և Միջերկրական ծով կատարած հաղթարշավների հետևանքով Սարգուրի II-ը չորս կողմից շրջափակման մեջ վերցրեց Ասորեստանը:
- 5) Վանի արքայատոհմից իշխանության փոխանցումը Հայկազուններին տեղի ունեցավ Ասորեստանի ռազմական միջամտության և երկրի ներսում ծագած խռովությունների ու պալատական հեղաշրջման հետևանքով:
- 6) Ք. ա. 92 թ. սկսված հռոմեա-պարթևական բանակցությունների արդյունքում Հայաստանի դեմ ուղղված պայմանագիր կնքվեց:

- 7) Մերձավոր Արևելքում Սելևկյան պետության դիրքերը թուլացնելու նպատակով Արտաշես I-ը աջակցեց Մարաստանի սատրապ Տիմարքոսի ապստամբությանը:
- 8) Վանի թագավորության մեջ ստրուկների թվաքանակը հիմնականում ավելանում էր բնական ճանապարհով, ինչպես նաև պարտքի դիմաց և հանցագործների ստրկացման եղանակով:

13. Ստորև տրված են պատմական իրադարձությունների պատճառներ և հետևանքներ: Գտնել ճիշտ պատասխանները.

- 1) Երվանդ Սակավակյացը, նպաստելով Ասորեստանի կործանմանը, իր դաշնակից Բաբելոնի և Մարաստանի համաձայնությամբ ընդարձակեց թագավորության սահմանները՝ ներառելով Օսրոյենեն և Միգդոնիան:
- 2) Տիգրանակերտի անկման պատճառն այն էր, որ քաղաքը պաշտպանող օտարագլի վարձկանները հռոմեացիների առջև դավաճանաբար բացեցին դարպասները:
- 3) Տիգրան Կրտսերն ընդվզել էր Պոմպեոսի դեմ և վիրավորել նրա արժանապատվությունը, ուստի Պոմպեոսի կարգադրությամբ ձերբակալվեց ու ընտանիքի հետ գերեվարվեց Հռոմ:
- 4) Կյուրոս Մեծի հակամարական ապստամբությանն աջակցելու դիմաց Տիգրան Երվանդյանը նրանից ստացավ փոխարքայի և Մարաստանի, Վիրքի, Աղվանքի ու Միջագետքի կառավարչի ու զորքերի գլխավոր հրամանատարի պաշտոնը:
- 5) Ք. ա. 532–522 թթ. ընթացքում կազմակերպած բազմաթիվ արշավանքների արդյունքում Դարեհ I-ը այդպես էլ չկարողացավ վերանվաճել Աքեմենյան կայսրության նախկին հպատակ երկրները:
- 6) Աքեմենյան տիրակալ Արտաքսերքսես II-ի դեմ ապստամբած Կյուրոս Կրտսերը հունական 10-հազարանոց վարձկան բանակի օգնությամբ տապալեց եղբորը և հռչակվեց Աքեմենյան նոր գահակալ:
- 7) Աքեմենյան պետության դեմ կազմակերպած անհաջող ապստամբության արդյունքում Օրոնտես II-ը ձերբակալվեց և աքսորվեց Հարավային Հունաստան:
- 8) Տիգրան Մեծի և Պոմպեոսի միջև կնքված Արտաշատի պայմանագրով Հայաստանը պահպանեց իր տարածքային ամբողջականությունը և պետական անկախությունը:
- 9) Ք. ա. 336 թ. Երվանդ III-ը գլխավորեց հայերի ապստամբությունը Աքեմենյան պետության դեմ և հաջողության հասնելով՝ հռչակեց Մեծ Հայքի անկախությունը:

14. Ստորև տրված են պատմական իրադարձությունների պատճառներ և հետևանքներ: Գտնել սխալ պատասխանները.

- 1) Որպեսզի Կրասոսին ստիպեին Պարթևստանի դեմ արշավել Հայաստանի տարածքով, Օրոդես II-ի գլխավորած ուժերը հարձակվեցին Հայաստանի սահմանամերձ տարածքների վրա:
- 2) Հայաստանը պարթևների արշավանքների ավերածություններից և զոհերից զերծ պահելու նպատակով Արտավազդ II-ը պարթևական ձախողված արշավանքից հետո որոշեց բանակցել Անտոնիոսի հետ:

- 3) Հայաստանը հռոմեացիների ավերածություններից և զոհերից զերծ պահելու նպատակով Արտավազդ II-ը պարթևական ձախողված արշավանքից հետո որոշեց բանակցել Անտոնիոսի հետ:
- 4) Որպեսզի թույլ չտան Արտավազդի և Կրասոսի ռազմական ուժերի միավորումը, Օրոդես II-ի գլխավորած ուժերը հարձակվեցին Հայաստանի սահմանամերձ տարածքների վրա:
- 5) Հռոմի Ծերակույտին ուղարկած պաշտոնական զեկուցագրում պարթևական արշավանքի ձախողումն Անտոնիոսը բացատրում էր հայոց թագավոր Արտավազդ II-ի դավաճանությամբ:
- 6) Օրոդես II-ը գիտակցում էր, որ Արտավազդի և Կրասոսի ռազմական ուժերի միավորումը պարթևներին հաջողության հեռանկարի որևէ հնարավորություն չէր տալիս:
- 7) Պարթևստանի դեմ ձեռնարկելիք հաջորդ արշավանքի ծրագիրը քննարկելու և հայ-հռոմեական հակապարթևական պայմանագիր կնքելու նպատակով Արտավազդ II-ը պարթևական ձախողված արշավանքից հետո որոշեց բանակցել Անտոնիոսի հետ:
- 8) Արտավազդ II-ը օգնական զորքեր չուղարկեց Կրասոսին, քանի որ Օրոդես II-ի գլխավորած ուժերը հարձակվել էին Հայաստանի սահմանամերձ տարածքների վրա:

15. Ստորև տրված են պատմական իրադարձությունների պատճառներ և հետևանքներ: Գտնել ճիշտ պատասխանները.

- 1) Հայաստանի տարածքով անցնող միջազգային առևտրական ուղիները բարեկարգելու նպատակով Ներոն կայսրը Տրդատին մեծ գումար և արհեստավորներ է տալիս:
- 2) Հռոմի դաշնակից Հայաստանը խնդրեց զիջումների գնալ, ուստիև Հռոմը Պարսկաստանի հետ կնքեց Մծբինի 40-ամյա հաշտության պայմանագիրը:
- 3) Քանի որ պարտված Պարսկաստանը հաշտություն էր խնդրել, ուստի Հռոմը համաձայնեց նրա հետ կնքել Մծբինի 40-ամյա հաշտության պայմանագիրը:
- 4) Քանի որ Վաղարշի հարձակումը սպառնում էր հռոմեական Սիրիա (Ասորիք) նահանգին, որի կառավարիչը Կորբուլոնն էր, ուստի վերջինս Ներոնին խնդրեց իր փոխարեն Հայաստան ուղարկել մեկ այլ զորավարի:
- 5) Ավերված և մոխրակույտի վերածված Տիգրանակերտ մայրաքաղաքը վերականգնելու համար Ներոն կայսրը Տրդատին մեծ գումար և արհեստավորներ է տալիս:

16. Սարգուրի II-ի կողմից կախյալ թագավորությունները վերացնելու և պետության վարչական միավորներ դարձնելու արդյունքում կառավարման ոլորտում անցում կատարվեց՝

- 1) դաշնային կառավարման
- 2) համադաշնային կառավարման
- 3) ամբողջատիրական պետության
- 4) կենտրոնացված պետության

17. Ո՞րն էր դաշնակից զորքերի՝ դեպի Կարքեմիշ արշավելու նպատակը.

- 1) Միջագետքը գրավելը
- 2) Նինվեն գրավելը
- 3) Բաբելոնը գրավելը
- 4) Ասորեստանը վերջնականապես կործանելը

18. Գավգամելայի ճակատամարտի արդյունքում՝

- 1) վերականգնվեց Հայաստանի անկախությունը
- 2) Հայաստանն ընկավ Աքեմենյան տիրապետության տակ
- 3) Մակեդոնացին նվաճեց Հայաստանը
- 4) Դարեհ III-ը գերեվարվեց և Մակեդոնացու հրամանով մահապատժի ենթարկվեց

19. Ք. ա. 92 թ. սկսված հռոմեա-պարթևական բանակցությունների արդյունքում՝

- 1) Պոնտոսի դեմ ուղղված պայմանագիր կնքվեց
- 2) ազդեցության ոլորտների շուրջ համաձայնագիր կնքվեց
- 3) Հայաստանի դեմ ուղղված պայմանագիր կնքվեց
- 4) վիճելի տարածքների վերաբաժանման մասին համաձայնագիր կնքվեց

20. Ո՞րն էր Տիգրանակերտի անկման պատճառը.

- 1) Քաղաքը պաշտպանող կայազորի հրամանատարն անցավ հռոմեացիների կողմը:
- 2) Քաղաքում վերջացել էին սննդամթերքն ու ջուրը, և սկսվել էր համատարած սովը:
- 3) Քաղաքում տարածվել էր համաճարակ, և պաշտպանների թիվը զգալիորեն կրճատվել էր:
- 4) Քաղաքը պաշտպանող օտարազգի վարձկանները հռոմեացիների առջև բացեցին դարպասները:

21. Ինչո՞վ էր Անտոնիոսը բացատրում իր պարթևական արշավանքի ձախողումը Հռոմի Ծերակույտին ուղարկած պաշտոնական զեկուցագրում.

- 1) իր ենթակաների ապաշնորհությամբ և անհեռատես գործելակերպով
- 2) եղանակային անբարենպաստ պայմաններով և զորքում բռնկված համաճարակով
- 3) հայոց թագավոր Արտավազդ II-ի դավաճանությամբ
- 4) պարթևական բանակի թվական գերակշռությամբ

22. Ինչո՞ւ Օրոդես II-ի գլխավորած ուժերը հարձակվեցին Հայաստանի սահմանամերձ տարածքների վրա.

- 1) որպեսզի թույլ չտան Արտավազդի և Կրասոսի ռազմական ուժերի միավորումը
- 2) որպեսզի Կրասոսին դիմագրավեն և թույլ չտան մտնել Պարթևստան
- 3) որպեսզի պաշտպանեն իրենց դաշնակից Հայաստանի սահմանները
- 4) որպեսզի ստիպեն Կրասոսին Պարթևստանի դեմ արշավել Հայաստանի տարածքով

23. Ինչո՞ւ Տիգրան V-ը գահակալեց ընդամենը մի քանի ամիս.

- 1) քանի որ զոհ գնաց հայերի կազմակերպած դավադրությանը
- 2) որովհետև գահընկեց եղավ հայերի ապստամբության հետևանքով
- 3) քանի որ նա Հրեաստանի թագավորի թոռն էր
- 4) որովհետև չէր վայելում հռոմեացիների վստահությունը

24. Ինչո՞ւ Փարսմանը սպանեց իր որդի Հռադամիզդին.

- 1) հայերին իր հավատարմությունը ցույց տալու համար
- 2) Հռոմի դեմ պայքարում հայերին իր կողմը գրավելու համար
- 3) թագավորական գահին տիրանալու համար
- 4) հռոմեացիներին իր հավատարմությունը ցույց տալու համար

25. Ինչո՞ւ կնքվեց Մծբինի 40-ամյա խաղաղության պայմանագիրը.

- 1) քանի որ Պարսկաստանի դաշնակից Հայաստանը հանդես եկավ միջնորդությամբ
- 2) քանի որ պարտված հռոմեացիները չցանկացան շարունակել պատերազմը
- 3) Հռոմի դաշնակից Հայաստանը նրան ստիպեց գնալ զիջումների
- 4) քանի որ պարտված Պարսկաստանը հաշտություն էր խնդրել

ZANGAK

6. ՊԱՏՄԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայկական լեռնաշխարհի խոշոր երկրաշարժերը դասավորել ըստ ժամանակագրական հաջորդականության.

- | | |
|---------------|------------------|
| ա. Գառնիի | 1) ա, դ, գ, բ, ե |
| բ. Ջանգեզուրի | 2) դ, ա, ե, բ, գ |
| գ. Սպիտակի | 3) դ, ե, ա, գ, բ |
| դ. Դվինի | 4) ա, դ, բ, ե, գ |
| ե. Լենինականի | |

2. Վանի թագավորության արքաների անունները դասավորել ըստ նրանց գահակալման հաջորդականության.

- | | |
|---------------|----------------|
| ա. Արգիշտի II | դ. Էրիմենա |
| բ. Ռուսա III | ե. Արգիշտի I |
| գ. Իշպուիների | զ. Սարդուրի II |
- 1) ե, գ, ա, գ, բ, դ
2) ե, գ, ա, գ, բ, դ
3) գ, ե, գ, ա, դ, բ
4) գ, գ, ե, ա, բ, դ

3. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. Արշամաշատ քաղաքի կառուցումը
բ. Սելևկյան պետության առաջացումը
գ. Հայկազունների Երվանդական ճյուղի իշխանության վերացումը Մեծ Հայքում
դ. Հելլենիզմի դարաշրջանի սկիզբն Առաջավոր Ասիայում
ե. Արտաշեսի և Ջարեհի գլխավորությամբ սելևկյան զորքերի արշավանքը Հայաստանի դեմ
զ. Սամոսատ մայրաքաղաքի կառուցումը
- | | |
|---------------------|---------------------|
| 1) բ, գ, ա, դ, ե, գ | 3) բ, դ, գ, ա, գ, ե |
| 2) դ, բ, ա, գ, գ, ե | 4) դ, բ, գ, ա, ե, գ |

4. Ճակատամարտերը դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- | | |
|---------------|-----------------|
| ա. Արածանիի | գ. Տիգրանակերտի |
| բ. Մազնեսիայի | դ. Գավգամելայի |
| | ե. Խառանի |
- 1) բ, դ, գ, ա, ե
2) դ, բ, ա, ե, գ, ա
3) դ, բ, գ, ա, ե
4) բ, դ, ե, գ, ա

5. Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. Ակցիումի ճակատամարտը
- բ. Խառանի ճակատամարտը
- գ. Մարկոս Անտոնիոսի պարթևական արշավանքի սկիզբը
- դ. Վաղարշապատ քաղաքի կառուցումը
- ե. Գավգամելայի ճակատամարտը

- 1) դ, ե, գ, ա, բ 2) ե, բ, ա, դ, գ 3) ե, բ, գ, ա, դ 4) բ, ա, դ, գ, ե

6. Արտաշեսյան տիրակալների անունները դասավորել ըստ նրանց գահակալման հաջորդականության.

- ա. Արտավազդ III
- բ. Տիգրան IV և Էրատո
- գ. Տիգրան II
- դ. Արտաշես I
- ե. Տիգրան IV

- 1) դ, գ, ե, ա, բ 2) գ, դ, ե, բ, ա 3) գ, դ, ա, ե, բ 4) դ, գ, բ, ա, ե

7. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. Արտավազդ II-ի և Կրասոսի հանդիպումը Ասորիքում
- բ. հռոմեա-պոնտական պատերազմների ավարտը
- գ. Արտաշես II-ի դավադիր սպանությունը
- դ. Տիգրան Մեծի և Պոնտոսի միջև հայ-պոնտական պայմանագրի կնքումը
- ե. Երկրորդ եռապետության կազմավորումը Հռոմում
- զ. հռոմեա-պոնտական պատերազմների սկիզբը
- է. Հռոմի դրածո Արտավազդ III-ի վտարումը Հայաստանից
- ը. Արտավազդ II-ի եղերական մահը
- թ. Առաջին եռապետության կազմավորումը Հռոմում
- ժ. Ակցիումի ճակատամարտը

- 1) դ, գ, բ, ա, թ, ե, ը, ժ, գ, է 3) բ, գ, դ, թ, ա, ե, է, ժ, ը, գ
2) գ, դ, բ, թ, ե, ա, ժ, գ, է, ը 4) դ, գ, բ, թ, ա, ե, ժ, ը, գ, է

8. Մեծ Հայքի թագավորների անունները դասավորել ըստ նրանց գահակալման հաջորդականության.

- ա. Զենոն-Արտաշես
- բ. Էրատո
- գ. Արիոբարզանես
- դ. Տիգրան V
- ե. Սանատրուկ I
- զ. Սոհեմոս-Տիգրան
- է. Վոնոն Արշակունի
- ը. Տիգրան VI
- թ. Արտավազդ IV
- ժ. Հռադամիզդ

- 1) գ, թ, դ, է, բ, ա, ե, ժ, գ, ը 3) գ, թ, դ, բ, է, ա, ե, ժ, ը, գ
2) գ, դ, թ, է, ա, բ, ե, ժ, ը, գ 4) թ, գ, բ, դ, է, ա, ե, ը, գ, ժ

9. Դասավորել Հայաստանում իշխած արքաներին՝ ըստ նրանց կառավարման հաջորդականության.

- ա. Միհրդատ Իբերացի
- բ. Ջենոն-Արտաշես
- գ. Հռադամիզդ
- դ. Վոնոն Արշակունի

- ե. Արիոբարզանես
- զ. Էրատո
- է. Տիգրան VI
- ը. Արտավազդ IV

- 1) ե, ը, գ, դ, բ, ա, գ, է
- 2) գ, ե, բ, ա, դ, գ, է, ը

- 3) ե, բ, ա, գ, գ, դ, ը, է
- 4) ա, բ, դ, ե, գ, գ, ը, է

10. Հայոց թագավորների անունները դասավորել ըստ նրանց գահակալման հաջորդականության.

- ա. Վաղարշ I
- բ. Տրդատ I

- գ. Վաղարշ II
- դ. Սանատրուկ II
- ե. Բակուր Արշակունի

- 1) բ, դ, ա, գ, ե
- 2) բ, դ, ա, ե, գ

- 3) բ, ա, դ, գ, ե
- 4) բ, ա, դ, ե, գ

11. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. Խոսրով I-ի արշավանքը Կովկասի լեռնականների դեմ
- բ. Սասանյան արքայատոհմի հաստատումը պարսից գահին
- գ. հռոմեական լեգեոնների պարտությունն ու նվաստացումը Հռանդեայում
- դ. հայոց գահի բռնազավթումը Որմիզդ-Արտաշիրի կողմից

- 1) ա, գ, բ, դ
- 2) գ, ա, դ, բ

- 3) գ, ա, բ, դ
- 4) գ, բ, ա, դ

12. Տրված իրադարձություններից ճիշդ է խախտում տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.

- 1) Ուրարտուի արքա Արամուի անվան հիշատակումը ասորեստանյան աղբյուրներում
- 2) Վանի թագավորության դաշնային աշխարհագրի փոխարինումն արիեստավարժ կանոնավոր բանակով
- 3) Սարգոն II-ի անհաջող բախումը Վանի թագավորության հետ
- 4) Արգիշտի I-ի արշավանքը դեպի Ջարախա
- 5) Թիզլաթպալասար III-ի արշավանքը դեպի Տուշպա

13. Հայկազուն-Երվանդունի տիրակալներից ո՞վ է գահակալել ութերորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.

- ա. Արշամ
- բ. Երվանդ II

- գ. Սկայորդի
- է. Երվանդ III

- գ. Երվանդ IV
- դ. Տիգրան Երվանդյան
- ե. Շամ (Սամոս)

- ը. Վահագն
- թ. Պարույր
- ժ. Երվանդ Սակավակյաց

- 1) է
- 2) բ
- 3) ա
- 4) Ե

14. Տրված իրադարձություններից որոնք են խախտում տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.

- 1) Երվանդ Սակավակյացի գահակալության սկիզբը
- 2) Տիգրան Երվանդյանի և Կյուրոս Մեծի միացյալ ապստամբությունը Մարաստանի դեմ
- 3) հունական 10–հազարանոց բանակի նահանջը Հայաստանի տարածքով
- 4) Երվանդ II–ի գլխավորած ապստամբությունն Աքեմենյան տերության դեմ
- 5) զորավար Վահոմիսայի և հայերի ընդհարումը Հյուսիսային Միջագետքում
- 6) Երվանդ III–ի դառնալը Հայաստանի սատրապ
- 7) մեզ հասած առաջին հայկական արքայական դրամների հատումը
- 8) Գավգամելայի ճակատամարտը
- 9) Փոքր Հայքի անկախացումը Միթրաուստեսի գլխավորությամբ

15. Տրված իրադարձություններից որն է խախտում տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.

- 1) Հելլենիզմի դարաշրջանի սկիզբն Առաջավոր Ասիայում
- 2) Սելևկյան պետության առաջացումը
- 3) Հայկազունների Երվանդական ճյուղի իշխանության վերացումը Մեծ Հայքում
- 4) Սամոսատ մայրաքաղաքի կառուցումը
- 5) Արշամաշատ քաղաքի կառուցումը

16. Արտաշեսյան տիրակալներից ո՞վ է գահակալել յոթերորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.

- | | |
|----------------|----------------------|
| ա. Արտաշես I | զ. Տիգրան IV և Էրատո |
| բ. Տիգրան I | է. Արտաշես II |
| գ. Տիգրան II | ը. Արտավազդ III |
| դ. Արտավազդ I | թ. Տիգրան III |
| ե. Արտավազդ II | ժ. Տիգրան IV |

- 1) գ
- 2) է
- 3) թ
- 4) ժ

17. Տրված իրադարձություններից որն է տեղի ունեցել երրորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.

- ա. հայ–հռոմեական ուժերի հաղթանակը Ոսխայի ճակատամարտում
- բ. Ներսես Սասանյանի՝ Հռոմի դեմ պատերազմի սկիզբը
- գ. Խոսրով II–ի գահակալության սկիզբը
- դ. Պետոսի գլխավորած հռոմեական զորքի հասնելը Հռանդես
- ե. Վաղարշ II–ի և Սևերոսի միջև հաշտության կնքումը

- գ. հռոմեա-պարսկական 40-ամյա խաղաղության պայմանագրի կնքումը Մծբինում
- է. Տրդատ Արշակունու հաղթական մենամարտը գործերի իշխանի հետ
- ը. Կարակալա կայսեր ուղարկած զորքի ջախջախումը Տրդատ II-ի գլխավորությամբ
- թ. Վաղարշ II-ի գահակալության ավարտը
- ժ. Տրդատ II-ի հաղթական արշավանքը դեպի Տիգրան

1) ը 2) գ 3) ժ 4) թ

18. Թվարկված հայոց գահակալներից ո՞վ է թագավորել ութերորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.

- ա. Սանատրուկ I
- բ. Վոնոն Արշակունի
- գ. Զենոն-Արտաշես
- դ. Սոհեմոս-Տիգրան
- ե. Արիոբարզանես
- զ. Տիգրան V
- է. Էրատո
- ը. Հռադամիզդ
- թ. Տիգրան VI
- ժ. Արտավազդ IV

1) ժ 2) ա 3) ե 4) ը

19. Թվարկված հայոց գահակալներից ո՞վ է թագավորել հինգերորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.

- ա. Վաղարշ I
- բ. Խոսրով I
- գ. Որմիզդ-Արտաշիր
- դ. Սանատրուկ II
- ե. Տրդատ I
- զ. Բակուր Արշակունի
- է. Տրդատ III
- ը. Խոսրով II
- թ. Վաղարշ II
- ժ. Տրդատ II

1) է 2) գ 3) բ 4) թ

20. Դեպքերը դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. Արգիշտի I-ի գահակալման սկիզբը
- բ. Արտաշես I-ի հողային բարեփոխման մասին հրամանագրի հրապարակումը
- գ. Տրդատ II-ի գահակալության վերջը
- դ. Պետոս զորավարի մուտքը Հայաստան
- ե. Արեգ-Միհրի տաճարի կառուցումը
- զ. Վաղարշ I-ի գահակալման սկիզբը
- է. Տիգրան Երվանդյանի մահը
- ը. Աքեմենյան տերության բաժանումը 20 վարչական միավորների
- թ. հռոմեա-պարթևական տասնամյա պատերազմի ավարտը
- ժ. Արտաշիսյան թագավորության կործանումը

1) ա, է, ը, բ, ժ, թ, գ, ե, դ, զ 2) ը, ա, է, ժ, բ, թ, ե, դ, գ, զ 3) ա, է, ը, բ, ժ, դ, թ, ե, գ, զ 4) ը, ա, է, բ, ժ, ե, դ, թ, գ, զ

21. Արքաների անունները դասավորել ըստ գահակալության ժամանակագրական հաջորդականության.

- | | |
|-----------------------|--------------------|
| ա. Տիգրան II | ե. Տիգրան III |
| բ. Տիգրան I Երվանդյան | զ. Արտաշես II |
| գ. Արտավազդ I | է. Վոնոն-Արշակունի |
| դ. Սարգուրի I | ը. Արտավազդ III |
| | թ. Տիգրան IV |

- | | |
|------------------------------|------------------------------|
| 1) բ, դ, ա, գ, զ, ե, է, ը, թ | 3) դ, բ, գ, զ, ա, է, ե, թ, ը |
| 2) դ, բ, գ, ա, է, թ, զ, ը, ե | 4) դ, բ, գ, ա, զ, ե, թ, ը, է |

22. Գտնել այն իրադարձությունը, որը խախտում է տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.

- 1) Տուշպայի հիմնադրումը
- 2) Վանի թագավորության դաշնային աշխարհագրորի փոխարինումը արիեստավարժ կանոնավոր բանակով
- 3) «Մենուայի ջրանցքի» կառուցումը
- 4) Իշպուինիի գահակալման սկիզբը
- 5) Սարգուրի II-ի գահակալման սիզբը

23. Վանի թագավորության արքաներից ո՞վ է գահակալել ութերորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.

- | | |
|---------------|-----------------|
| ա. Սարգուրի I | զ. Մենուա |
| բ. Ռուսա II | է. Սարգուրի II |
| գ. Իշպուինի | ը. Ռուսա III |
| դ. Արգիշտի I | թ. Արգիշտի II |
| ե. Ռուսա I | ժ. Սարգուրի III |

- | | | | |
|------|------|------|------|
| 1) է | 2) բ | 3) թ | 4) ժ |
|------|------|------|------|

24. Հայկազուն-Երվանդունի տիրակալներից ո՞վ է գահակալել իններորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.

- | | |
|---------------------|----------------------|
| ա. Արշամ | զ. Սկայորդի |
| բ. Երվանդ II | է. Երվանդ III |
| գ. Երվանդ IV | ը. Վահագն |
| դ. Տիգրան Երվանդյան | թ. Պարույր |
| ե. Շամ (Սամոս) | ժ. Երվանդ Սակավակյաց |

- | | | | |
|------|------|------|------|
| 1) է | 2) բ | 3) ա | 4) ե |
|------|------|------|------|

25. **Գտնել այն իրադարձությունը, որը խախտում է տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

- 1) Երվանդ Սակավակյացի գահակալության սկիզբը
- 2) Տիգրան Երվանդյանի և Կյուրոս Մեծի միացյալ ապստամբությունը Մարաստանի դեմ
- 3) Երվանդ III–ի դառնալը Հայաստանի սատրապ
- 4) զորավար Վահոմիսայի և հայերի ընդհարումը Հյուսիսային Միջագետքում
- 5) Երվանդ II–ի գլխավորած ապստամբությունն Աքեմենյան տերության դեմ
- 6) Փոքր Հայքի անկախացումը Միթրաուտեսի գլխավորությամբ

26. **Արտաշեսյան տիրակալներից ո՞վ է գահակալել հինգերորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.**

- | | |
|----------------|----------------------|
| ա. Արտավազդ II | գ. Արտաշես II |
| բ. Տիգրան III | է. Արտաշես I |
| զ. Տիգրան IV | ը. Տիգրան IV և Էրատո |
| դ. Տիգրան II | թ. Արտավազդ III |
| ե. Արտավազդ I | ժ. Տիգրան I |

- 1) գ 2) բ 3) գ 4) ա

27. **Թվարկվածներից որո՞նք են խախտում Տիգրան Մեծի նվաճումների տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

- 1) Ծովքի միացումը Մեծ Հայքին
- 2) Կապադովկիայի գրավումը
- 3) Վիրքի և Աղվանքի հպատակեցումը
- 4) Կորդուքի միացումը Մեծ Հայքին
- 5) Մարաստանի գրավումը
- 6) Ասորիքի գրավումը
- 7) պարթևների թագավորանիստ Էկբատանի գրավումը
- 8) Օսրոյենեի, Ադիաբենեի և Միգդոնիայի միացումը Հայոց թագավորությանը
- 9) Պտղոմայիս քաղաքի գրավումը

28. **Ո՞ր ճակատամարտն է խախտում տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

- | | |
|-----------------|-------------|
| 1) Տիգրանակերտի | 4) Ալցիումի |
| 2) Արածանիի | 5) Ջելայի |
| 3) Խառանի | |

29. **Ո՞ր իրադարձություններն են խախտում տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

- 1) հռոմեա–պոնտական պատերազմների սկիզբը
- 2) հռոմեա–պոնտական պատերազմների ավարտը
- 3) Տիգրան Մեծի և Պոնտոսի միջև հայ–պոնտական պայմանագրի կնքումը

- 4) Միհրդատ Եվպատորի մահը
- 5) Առաջին եռապետության կազմավորումը Հռոմում
- 6) Պարթևստանի թագավոր Հրահատ III-ի ներխուժումը Հայաստան և Արտաշատի պաշարումը
- 7) Արտավազդ II-ի և Կրասոսի հանդիպումը Ասորիքում
- 8) Երկրորդ եռապետության կազմավորումը Հռոմում
- 9) Ակցիումի ճակատամարտը

30. Ո՞ր իրադարձություններն են խախտում տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.

- 1) Արտավազդ II-ի և Օրոդես II-ի միջև հայ-պարթևական պայմանագրի կնքումը
- 2) Էվրիպիդեսի «Բաքոսուհիներ» ողբերգության բեմադրությունը Արտաշատում
- 3) Կրասոսի պարթևական արշավանքի սկիզբը
- 4) Արտավազդ II-ի և Կրասոսի հանդիպումը Ասորիքում
- 5) Խառանի ճակատամարտը
- 6) թագաժառանգ Բակուրի հրամանատարությամբ հռոմեացիների վտարումը Ասորիքից, Կիլիկիայից, Փյունիկիայից, Պաղեստինից և Հրեաստանից
- 7) Արտավազդ II-ի եղերական մահը
- 8) Արտաշես II-ի դավադիր սպանությունը
- 9) Հռոմի դրածո Արտավազդ III-ի վտարումը Հայաստանից

31. Ո՞ր իրադարձություններն են խախտում տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.

- 1) հակահռոմեական հուժկու ապստամբությունը և Արտազերս ամրոցի հերոսական դիմադրությունը
- 2) հռոմեական լեգեոնների պարտությունն ու նվաստացումը Հռանդեայում
- 3) Վաղարշի և Տրդատի գլխավորած պարթևական զորքի մուտքը Հայաստան և Հռադամիզդի վտարումը
- 4) հայ-պարթևական միացյալ ուժերի գլուխն անցած Տրդատի մուտքը Արտաշատ և նստելը հայոց գահին
- 5) Արտաշատ քաղաքի ավերումը Կորբուլոնի կողմից
- 6) հակահռոմեական հուժկու ապստամբությունը Գիսակ Դիմաքսյանի գլխավորությամբ
- 7) Խոսրով I-ի արշավանքը Կովկասի լեռնականների դեմ
- 8) Սասանյան արքայատոհմի հաստատումը պարսից գահին
- 9) հայոց գահի բռնազավթումը Որմիզդ-Արտաշիրի կողմից

32. Տրված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել իններորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.

- ա. Արեգ-Միհրի տաճարի կառուցումը Գառնի ամրոցում
- բ. հայ-պարթևական միացյալ ուժերի գլուխն անցած Տրդատի մուտքը Արտաշատ և նստելը հայոց գահին

- գ. Արտաշատ քաղաքի ավերումը Կորբուլունի կողմից
- դ. հակահռոմեական հուժկու ապստամբությունը և Արտազերս ամրոցի հերոսական դիմադրությունը
- ե. հայոց թագավոր Վաղարշ I Արշակունու գահակալության սկիզբը
- զ. Վաղարշի և Տրդատի գլխավորած պարթևական զորքի մուտքը Հայաստան և Հռոմի դեմ դիմադրությունը
- է. Մծուրք քաղաքի հիմնադրումը
- ը. Տրդատ I-ի թագադրումը Ներսիսի կողմից
- թ. հակահռոմեական հուժկու ապստամբությունը Գիսակ Դիմաքսյանի գլխավորությամբ
- ժ. հռոմեական լեգեոնների պարտությունն ու նվաստացումը Հռանդեայում

- 1) ա 2) է 3) ե 4) ը

33. Ո՞ր իրադարձությունն է խախտում տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.

- 1) Պետոսի գլխավորած հռոմեական զորքի հասնելը Հռանդեա
- 2) Խոսրով I-ի մեկնումը Ասորիք և ձերբակալությունը
- 3) Վաղարշ II-ի և Սևերոսի միջև հաշտության կնքումը
- 4) Վաղարշ II-ի գահակալության ավարտը
- 5) Կարակալա կայսեր ուղարկած զորքի ջախջախումը Տրդատ II-ի գլխավորությամբ
- 6) Տրդատ II-ի հաղթական արշավանքը դեպի Տիգրան

34. Ո՞ր իրադարձությունն է խախտում տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.

- 1) Խոսրով II-ի գահակալության սկիզբը
- 2) Տրդատ Արշակունու հաղթական մենամարտը գոթերի իշխանի հետ
- 3) Տրդատ II-ի թագ ստանալը կայսր Մակրինոսից
- 4) Ներսես Սասանյանի՝ Հռոմի դեմ պատերազմի սկիզբը
- 5) հայ-հռոմեական ուժերի հաղթանակը Ոսխայի ճակատամարտում
- 6) 40-ամյա խաղաղության պայմանագրի կնքումը Մծբինում

35. Տրված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել չորրորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.

- ա. հայ-հռոմեական ուժերի հաղթանակը Ոսխայի ճակատամարտում
- բ. Ներսես Սասանյանի՝ Հռոմի դեմ պատերազմի սկիզբը
- գ. Խոսրով II-ի գահակալության սկիզբը
- դ. Պետոսի գլխավորած հռոմեական զորքի հասնելը Հռանդեա
- ե. Վաղարշ II-ի և Սևերոսի միջև հաշտության կնքումը
- զ. հռոմեա-պարսկական խաղաղության պայմանագրի կնքումը Մծբինում
- է. Տրդատ Արշակունու հաղթական մենամարտը գոթերի իշխանի հետ
- ը. Կարակալա կայսեր ուղարկած զորքի ջախջախումը Տրդատ II-ի գլխավորությամբ

թ. Վաղարշ II-ի գահակալության ավարտը
ժ. Տրդատ II-ի հաղթական արշավանքը դեպի Տիգրան

- 1) ը 2) գ 3) ժ 4) թ

36. Թվարկված հայոց գահակալներից ով է թագավորել վեցերորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.

- | | |
|--------------------|----------------|
| ա. Սանատրուկ I | գ. Տիգրան V |
| բ. Վոնոն Արշակունի | է. Էրատո |
| գ. Ջենոն-Արտաշես | ը. Հռադամիզդ |
| դ. Սոհենոս-Տիգրան | թ. Տիգրան VI |
| ե. Արիոբարզանես | ժ. Արտավազդ IV |

- 1) ա 2) գ 3) ը 4) բ

37. Թվարկված հայոց գահակալներից ով է թագավորել երկրորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.

- | | |
|-------------------|---------------------|
| ա. Վաղարշ I | գ. Բակուր Արշակունի |
| բ. Խոսրով I | է. Տրդատ III |
| գ. Որմիզդ-Արտաշիր | ը. Խոսրով II |
| դ. Սանատրուկ II | թ. Վաղարշ II |
| ե. Տրդատ I | ժ. Տրդատ II |

- 1) ա 2) գ 3) ե 4) դ

38. Նշված քաղաքներից որն է հիմնադրվել չորրորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.

- | | |
|-------------------|--------------|
| ա. Մծուրք | գ. Սամոսատ |
| բ. Երվանդաշատ | է. Արշամաշատ |
| գ. Մենուայիսիսիլի | ը. Ջարիշատ |
| դ. Տուշպա | թ. Էրեբունի |
| ե. Տիգրանակերտ | |

- 1) բ 2) գ 3) է 4) ը

39. Տրված իրադարձություններից որն է տեղի ունեցել հինգերորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.

- ա. Արեգ-Միհրի տաճարի կառուցումը Գառնիում
բ. Երվանդաշատ մայրաքաղաքի հիմնադրումը
գ. Արևելյան Հայաստանում արքունի գրագրության մեջ պահլավերենի գործածության սկիզբը

- դ. Անտիոքոս I-ի թագադրումը «Տիգրանյան» կամ «Հայկական» թագով
- ե. Արշակ I Արշակունու գահակալության սկիզբը
- զ. Բագարանի դառնալը Հայոց թագավորության հոգևոր կենտրոն
- է. «Բաքոսուիհներ» ողբերգության բեմադրությունը Արտաշատում պարթև արքա Օրոդես II-ի ներկայությամբ
- ը. Տիգրան Մեծի թագադրությունը

1) ա

2) դ

3) ե

4) է

ZANGAK

7. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՈՒՄ

1. Կատարել համարժեք անունների համապատասխանեցում.

- | | |
|---------------|------------------|
| 1) Ծովք | ա. Արմենիա մայր |
| 2) Բարձր Հայք | բ. Կարնո աշխարհ |
| 3) Մեծ Հայք | գ. Տնորիք |
| 4) Փոքր Հայք | դ. Չորրորդ Հայք |
| 5) Կորճայք | ե. Արմենիա մինոր |
- զ. Կորդուք

- | | |
|----------------------------|----------------------------|
| 1) 1-դ, 2-բ, 3-ա, 4-ե, 5-գ | 3) 1-գ, 2-ե, 3-ա, 4-բ, 5-դ |
| 2) 1-ե, 2-ա, 3-դ, 4-բ, 5-գ | 4) 1-բ, 2-գ, 3-գ, 4-ե, 5-ա |

2. Գահակալման տարիները համապատասխանեցնել Վանի թագավորության արքայի անվանը.

- | | |
|----------------|-------------------------------|
| 1) Սարգուրի II | ա. Ք. ա. 786-764 թթ. |
| 2) Ռուսա II | բ. Ք. ա. 735-մոտ 710-ական թթ. |
| 3) Արգիշտի I | գ. Ք. ա. 764-735 թթ. |
| 4) Ռուսա I | դ. Ք. ա. մոտ 685-645 թթ. |
| | ե. Ք. ա. 810-786 թթ. |

- | | |
|-----------------------|-----------------------|
| 1) 1-ա, 2-դ, 3-գ, 4-ե | 3) 1-ե, 2-բ, 3-ա, 4-դ |
| 2) 1-գ, 2-դ, 3-բ, 4-ա | 4) 1-գ, 2-դ, 3-ա, 4-բ |

3. Իրադարձությունները համապատասխանեցնել տարեթվերին.

- ա. Սարգուրի II-ի երկու արշավանքները դեպի Կուլխա
բ. Թիգլաթպալասար III-ի արշավանքը դեպի Տուշպա
գ. Ուրարտուի և Ասորեստանի միջև պատերազմը Մանայի համար
դ. Սարգոն II-ի արշավանքը Վանի թագավորության դեմ և Մուսասիրի նվաճումը
ե. Արգիշտի I-ի արշավանքը դեպի Հյուսիսային ծովակի ավազանը

- | | |
|-----------------|-----------------------|
| 1) Ք. ա. 779 թ. | 4) Ք. ա. 740-ական թթ. |
| 2) Ք. ա. 716 թ. | 5) Ք. ա. 786 թ. |
| 3) Ք. ա. 714 թ. | 6) Ք. ա. 735 թ. |

- | | |
|----------------------------|----------------------------|
| 1) ա-4, բ-6, գ-2, դ-3, ե-1 | 3) ա-4, բ-6, գ-3, դ-5, ե-1 |
| 2) ա-1, բ-3, գ-6, դ-2, ե-5 | 4) ա-1, բ-3, գ-2, դ-5, ե-4 |

4. Կատարել համապատասխանեցում.

N	Ճակատամարտը	N	Տարեթիվը	N	Գործիչը
1	Գավգամելայի	1	Ք. ա. 31 թ.	1	Տիգրան II
2	Մագնեսիայի	2	Ք. ա. 53 թ.	2	Անտիոքոս III
3	Ալցիումի	3	Ք. ա. 190 թ.	3	Մ. Անտոնիոս
4	Խառանի	4	Ք. ա. 331 թ.	4	Ա. Մակեդոնացի
		5	Ք. ա. 69 թ.	5	Մ. Կրասոս

1.

1	4	3
2	3	2
3	1	5
4	2	1

2.

1	5	4
2	3	1
3	1	3
4	2	5

3.

1	4	4
2	3	2
3	1	3
4	2	5

4.

1	3	3
2	4	2
3	5	4
4	1	5

5. Հայոց արքաների անունները համապատասխանեցնել նրանց կառավարման տարեթվերին.

- 1) Շամ (Սամոս) Երվանդական
- 2) Երվանդ IV Վերջին
- 3) Արտաշես I
- 4) Արտավազդ II

- ա. Ք. ա. 220–201 թթ.
- բ. Ք. ա. 189–160 թթ.
- գ. Ք. ա. 55–34 թթ.
- դ. Ք. ա. 260–240 թթ.
- ե. Ք. ա. 240–210 թթ.

- 1) 1–դ, 2–ա, 3–բ, 4–գ
- 2) 1–դ, 2–ե, 3–բ, 4–գ

- 3) 1–բ, 2–գ, 3–ա, 4–դ
- 4) 1–ե, 2–ա, 3–բ, 4–դ

6. Արտաշես I-ի՝ Մեծ Հայքին միացրած տարածքները համապատասխանեցնել ուղղությանը.

- 1) արևելք
- 2) հարավ
- 3) հյուսիս
- 4) արևմուտք

- ա. Կարնո երկիր, Եկեղիք, Դերջան
- բ. Գուգարք
- գ. Ծոփք, Կոմմագենե
- դ. Փայտակարան, Կասպեից երկիր

ե. Տմորիք

- 1) 1–դ, 2–բ, 3–ե, 4–գ
- 2) 1–ա, 2–ե, 3–բ, 4–դ

- 3) 1–գ, 2–բ, 3–ե, 4–դ
- 4) 1–դ, 2–ե, 3–բ, 4–ա

7. Կատարել Տիգրան Մեծի գահակալման շրջանի իրադարձությունների և տարեթվերի համապատասխանեցում.

- 1) Սուլլայի գլխավորած հռոմեական բանակի մուտքը Կասպեիցիա
- 2) հայկական բանակների մուտքը Ասորիք

- ա. Ք. ա. 71 թ.
- բ. Ք. ա. 87 թ.

- 3) Պտղոմայիս քաղաքի գրավումը գ. Ք. ա. 66 թ.
 - 4) հայկական բանակների ներխուժումը Պարթևստան դ. Ք. ա. 84 թ.
 - 5) Արտաշատի պայմանագրի կնքումը ե. Ք. ա. 88 թ.
- գ. Ք. ա. 92 թ.

- 1) 1-գ, 2-ե, 3-բ, 4-գ, 5-ա 3) 1-բ, 2-ա, 3-գ, 4-գ, 5-ե
- 2) 1-գ, 2-դ, 3-ա, 4-բ, 5-գ 4) 1-գ, 2-ե, 3-բ, 4-ա, 5-գ

8. Կատարել համապատասխանեցում.

- ա. Կապադովկիա ներխուժած հռոմեական զորքի հրամանատարը
- բ. Անկախ Ծոփքի վերջին արքան
- գ. Տիգրան Մեծին հավատարմության երդում տված Մարաստանի թագավորը
- դ. Տիգրան Մեծի կողմից մահապատժի ենթարկված Սելևկյան թագուհի

- 1) Սելենե 3) Գողերծ II
- 2) Սուլլա 4) Միհրդատ
- 5) Արտանես

- 1) ա-5, բ-4, գ-3, դ-1 3) ա-5, բ-4, գ-2, դ-1
- 2) ա-1, բ-4, գ-3, դ-2 4) ա-2, բ- 5, գ-4, դ-1

9. Գահակալման տարիները համապատասխանեցնել թագավորի անվանը.

- 1) Վաղարշ I ա. 161-163 թթ.
 - 2) Տրդատ I բ. 88-110 թթ.
 - 3) Բակուր Արշակունի գ. 117-140 թթ.
 - 4) Սանատրուկ II դ. 110-117 թթ.
- ե. 66-88 թթ.

- 1) 1-գ, 2-ե, 3-բ, 4-դ 3) 1-դ, 2-ե, 3-գ, 4-բ
- 2) 1-գ, 2-ե, 3-ա, 4-բ 4) 1-դ, 2-ե, 3-ա, 4-գ

10. Կատարել համապատասխանեցում.

N	Թագավորը	N	Հիմնադրած քաղաքը	N	Վայրը
1	Արտաշես I	1	Վաղարշապատ	1	Արածանիի ափին՝ Մշո դաշտում
2	Տիգրան II	2	Մծուրք	2	Արարատյան դաշտում՝ ներկայիս Էսոր Վիրապի տեղում
3	Սանատրուկ II	3	Տիգրանակերտ	3	Արարատյան դաշտում՝ Շրեշ բլրի վրա
4	Վաղարշ I	4	Արտաշատ	4	Աղձնիք նահանգում՝ Տիգրիս գետի վերին հոսանքում
		5	Արմավիր	5	Մեծամորի մոտակայքում

1.

1	4	4
2	3	3
3	5	2
4	2	1

2.

1	4	5
2	3	3
3	5	4
4	1	2

3.

1	4	2
2	3	4
3	2	1
4	1	3

4.

1	2	3
2	1	4
3	3	1
4	5	2

11. Կատարել հայոց արքաների անունների և նրանց գահակալման տարիների համապատասխանեցում.

- 1) Տիգրան IV
2) Արտաշես II
3) Խոսրով I

- 4) Արտաշես I
5) Մենուա
6) Ռուսա II

7) Տրդատ II

- ա. Ք. ա. մոտ 810-786 թթ.
բ. Ք. ա. 189-160 թթ.
գ. Ք. ա. 8-5 թթ.
դ. 198-215 թթ.

- ե. Ք. ա. 30-20 թթ.
զ. Ք. ա. մոտ 685-645 թթ.
է. 216-252 թթ.
ը. 185-198 թթ.

- 1) 1-ե, 2-զ, 3-ը, 4-բ, 5-ա, 6-զ, 7-է
2) 1-զ, 2-ե, 3-է, 4-բ, 5-ա, 6-զ, 7-դ

- 3) 1-զ, 2-ե, 3-դ, 4-բ, 5-ա, 6-զ, 7-է
4) 1-զ, 2-ե, 3-զ, 4-բ, 5-դ, 6-ա, 7-է

12. Կատարել համապատասխանեցում.

N	Իրադարձությունը	N	Տարեթիվը	N	Գործիչը
1	Ակցիումի ճակատամարտը	1	Ք. ա. 785 թ.	1	Տիգրան II
2	Արածանիի ճակատամարտը	2	Ք. ա. 185 թ.	2	Հաննիբալ
3	Էրեբունի ամրոցի հիմնադրումը	3	Ք. ա. 31 թ.	3	Ռուսա I
4	Արտաշատ քաղաքի կառուցումը	4	Ք. ա. 68 թ.	4	Արգիշտի I
		5	Ք. ա. 782 թ.	5	Օկտավիանոս

1.

1	4	3
2	2	1
3	1	4
4	5	5

2.

1	3	5
2	4	1
3	5	4
4	2	2

3.

1	3	5
2	4	1
3	1	4
4	2	2

4.

1	4	1
2	4	2
3	1	4
4	2	5

13. Կատարել համապատասխանեցում.

Հիմնադիր արքա

- 1) Սարգսրի I
2) Արգիշտի I
3) Արտաշես I

Քաղաք

- ա. Զարիշատ
բ. Արսամեա
գ. Տուշպա

- 4) Շամ Երվանդական
- 5) Արշամ Երվանդական

- դ. Երվանդաշատ
- ե. Էրեբունի
- զ. Սամոսատ

- 1) 1-գ, 2-ե, 3-բ, 4-դ, 5-զ
- 2) 1-գ, 2-ե, 3-ա, 4-զ, 5-բ

- 3) 1-գ, 2-ե, 3-ա, 4-դ, 5-բ
- 4) 1-գ, 2-ե, 3-ա, 4-զ, 5-դ

14. Կատարել համապատասխանեցում.

Քաղաք

- 1) Մծուրք
- 2) Վաղարշապատ
- 3) Բագարան
- 4) Տիգրանակերտ

Հիմնադիր արքա

- ա. Վաղարշ II
- բ. Տիգրան II
- գ. Սանատրուկ II
- դ. Երվանդ IV
- ե. Վաղարշ I

- 1) 1-ա, 2-ե, 3-դ, 4-բ
- 2) 1-գ, 2-ե, 3-ա, 4-բ

- 3) 1-գ, 2-ե, 3-դ, 4-բ
- 4) 1-գ, 2-ա, 3-դ, 4-բ

15. Կատարել համապատասխանեցում.

Տարեթիվ

- 1) Ք. ա. 53 թ. մայիսի 6
- 2) Ք. ա. 331 թ. հոկտեմբերի 1
- 3) Ք. ա. 31 թ. սեպտեմբերի 2
- 4) Ք. ա. 69 թ. հոկտեմբերի 6
- 5) Ք. ա. 68 թ. սեպտեմբերի 22

Ճակատամարտ

- ա. Գավգամելայի
- բ. Տիգրանակերտի
- գ. Խառանի
- դ. Ջելայի
- ե. Ակցիումի
- զ. Արածանիի

- 1) 1-գ, 2-ա, 3-ե, 4-զ, 5-բ
- 2) 1-դ, 2-ե, 3-ա, 4-զ, 5-բ

- 3) 1-գ, 2-ա, 3-ե, 4-դ, 5-զ
- 4) 1-գ, 2-ա, 3-ե, 4-բ, 5-զ

16. Կատարել համապատասխանեցում.

Տարեթիվ

- 1) Ք. ա. 54 թ.
- 2) Ք. ա. 92 թ.
- 3) Ք. ա. 188 թ.
- 4) 64 թ.

- 5) Ք. ա. 94 թ.
- 6) Ք. ա. 87 թ.
- 7) Ք. ա. 66 թ.

Իրադարձություն

- ա. Արտաշատի պայմանագրի կնքումը
- բ. հռոմեա-պարթևական հաշտության պայմանագրի կնքումը Արտաշատում
- գ. հայ-պոնտական պայմանագրի կնքումը
- դ. հայ-պարթևական հաշտության պայմանագրի կնքումը Էկբատանում
- ե. հայ-պարթևական պայմանագրի կնքումը Արտաշատում
- զ. Հռանդեայի խաղաղության պայմանագրի կնքումը
- է. Հայաստանի դեմ ուղղված հռոմեա-պարթևական պայմանագրի կնքումը
- ը. Ապամեայի հաշտության պայմանագրի կնքումը

1) 1-ե, 2-է, 3-ը, 4-զ, 5-զ, 6-դ, 7-ա

3) 1-զ, 2-բ, 3-ը, 4-ե, 5-զ, 6-դ, 7-ա

2) 1-դ, 2-է, 3-ը, 4-զ, 5-բ, 6-ե, 7-ա

4) 1-ե, 2-բ, 3-ա, 4-զ, 5-զ, 6-դ, 7-ը

17. Կատարել համապատասխանեցում.

Գործիչ

- 1) Բագարատ
- 2) Տիրիբազ
- 3) Երվանդ II
- 4) Տիմարքոս

- 5) Միթրաուստես
- 6) Գուրաս
- 7) Երվազ

Պաշտոն

ա. Հայաստանի սատրապ

ե. Հայաստանի արևմտյան մասի կառավարիչ

բ. Հյուսիսային Միջագետքի փոխարքա

զ. Հայաստանի ստրատեգոս

գ. Հայոց երկրի գերագույն քուրմ

է. Ասորիքի փոխարքա-կառավարիչ

դ. Փոքր Հայքի կառավարիչ

ը. Մարաստանի սատրապ

1) 1-ը, 2-ե, 3-զ, 4-ա, 5-դ, 6-բ, 7-զ

3) 1-է, 2-ը, 3-ա, 4-ե, 5-դ, 6-բ, 7-զ

2) 1-է, 2-զ, 3-ա, 4-ը, 5-դ, 6-բ, 7-ե

4) 1-է, 2-ե, 3-ա, 4-ը, 5-դ, 6-բ, 7-զ

18. Կատարել համապատասխանեցում.

Երկիր

- 1) Ատրպատական
- 2) Ասորիք
- 3) Պարթևստան
- 4) Կոմմագենե
- 5) Ասորեստան
- 6) Հայաստան

Մայրաքաղաք

- ա. Նինվե
- բ. Փրասսպա
- գ. Սամոսատ
- դ. Մծբին
- ե. Երվանդաշատ
- զ. Էկբատան

է. Անտիոք

1) 1-բ, 2-է, 3-զ, 4-զ, 5-դ, 6-ե

3) 1-բ, 2-ա, 3-զ, 4-դ, 5-զ, 6-է

2) 1-բ, 2-է, 3-զ, 4-զ, 5-ա, 6-ե

4) 1-զ, 2-է, 3-բ, 4-զ, 5-ա, 6-ե

19. Կատարել պատմական իրադարձությունների և տարեթվերի համապատասխանեցում.

- ա. Ալցիումի ծովային ճակատամարտը
- բ. Վաղարշ I Արշակունու գահակալման սկիզբը
- գ. Կորբուլոնի ներխուժումը Մեծ Հայք
- դ. Արտաշատի պայմանագրի կնքումը
- ե. Սանատրուկ II-ի գահակալման սկիզբը
- զ. Սասանյանների հաստատումը պարսից գահին
- է. Խոսրով II-ի որդի Տրդատի մենամարտը գոթերի իշխանի հետ
- ը. պարսից Ներսես արքայի ճամբար դնելը Ոսխա գյուղում
- թ. Ապամեայի հաշտության կնքումը

- 1) Բ. ա. 31 թ.
- 2) Բ. ա. 188 թ.
- 3) 276 թ.
- 4) 88 թ.
- 5) 226 թ.
- 6) 117 թ.
- 7) 297 թ.
- 8) Բ. ա. 66 թ.
- 9) 58 թ.
- 10) 163 թ.

- 1) ա-1, բ- 6, գ- 9, դ-8, ե-4, զ-5, է-3, ը-7, թ-2
- 2) ա-1, բ-6, գ-9, դ-8, ե-7, զ-5, է-4, ը-3, թ-2
- 3) ա-1, բ-4, գ-8, դ-7, ե-10, զ-6, է-3, ը-5, թ-2
- 4) ա-9, բ-4, գ-1, դ-2, ե-10, զ-3, է-7, ը-5, թ-8

20. Համապատասխանեցնել Արշակունյաց գահակալների անուններն իրենց գահակալման տարիներին.

- ա. Վաղարշ I
- բ. Սանատրուկ II
- գ. Տրդատ II
- դ. Տրդատ I
- ե. Վաղարշ II
- զ. Խոսրով I
- է. Բակուր Արշակունի
- 1) 88-110 թթ.
- 2) 185-198 թթ
- 3) 198-215 թթ.
- 4) 216-252 թթ.
- 5) 66-88 թթ.
- 6) 161-163 թթ.
- 7) 117-140 թթ.
- 8) 252-298 թթ.

- 1) ա-7, բ-1, գ-2, դ-5, ե-4, զ-3, է-6
- 2) ա-6, բ-1, գ-3, դ-2, ե-8, զ-4, է-7
- 3) ա-7, բ-1, գ-4, դ-5, ե-2, զ-3, է-6
- 4) ա-6, բ-1, գ-4, դ-5, ե-2, զ-3, է-7

21. Կատարել համապատասխանեցում.

N	Իրադարձությունը	N	Տարեթիվը	N	Գործիչը
1	Նինվեի կործանումը	1	Ք. ա. 538 թ.	1	Տիգրան Երվանդյան
2	Մարաստանի դեմ ապստամբությունը	2	Ք. ա. 612 թ.	2	Քսենոփոն
3	Բաբելոնի նվաճումը	3	Ք. ա. 553 թ.	3	Պարույր Նահապետ
4	Տասը հազար հույների նահանջը	4	Ք. ա. 401 թ.	4	Կյուրոս Մեծ
		5	Ք. ա. 522 թ.	5	Դարեհ III

1.

1	2	3
2	3	4
3	1	1
4	4	2

2.

1	2	3
2	3	4
3	5	1
4	1	2

3.

1	2	3
2	4	1
3	1	4
4	5	5

4.

1	3	3
2	4	2
3	5	4
4	2	1

8. ՊԱՏՄԱԿԱՆ ՓԱՏՏԱՐԿՆԵՐԻ, ՊՆԴՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒՄ ԵՎ ԽՄԲԱՎՈՐՈՒՄ

1. **ԼՂՀ-ի կազմում գավառներ են ընդգրկված Մեծ Հայքի հետևյալ նահանգներից.**
 - 1) Արցախ, Այրարատ
 - 2) Արցախ, Ուտիք
 - 3) Սյունիք, Արցախ
 - 4) Սյունիք, Ուտիք
2. **Ինչ տարածքներ էր զբաղեցնում հնդեվրոպական նախահայրենիքը.**
 - 1) Հայկական լեռնաշխարհ, Իրանական սարահարթի հարավարևելյան, Փոքր Ասիայի արևմտյան, Միջագետքի հարավային շրջանները
 - 2) Հայկական լեռնաշխարհ, Փոքր Ասիայի արևելյան, Միջագետքի հյուսիսային և Իրանական սարահարթի հյուսիսարևմտյան շրջանները
 - 3) Հայկական լեռնաշխարհ, Միջագետքի արևելյան, Փոքր Ասիայի հյուսիսային, Իրանական սարահարթի հարավային շրջանները
 - 4) Հայկական լեռնաշխարհ, Փոքր Ասիայի արևելյան, Միջագետքի հյուսիսային և Իրանական սարահարթի հարավարևելյան շրջանները
3. **Գտնել ճիշտ փաստարկները.**
 - 1) Հունական ավանդազրույցի համաձայն՝ Հայաստանում հաստատված արգոնավորը Հունաստանի Արմենոս քաղաքից էր:
 - 2) Արգոնավորդները ոսկե գեղձը ձեռք բերելու նպատակով ուղևորվեցին Սև ծովի արևմտյան ափերը:
 - 3) Հայոց ազգածագման ավանդազրույցի համաձայն՝ Բուն Հայոց տոմարը սկսվում է Հայկի ու Բելի պատերազմից:
 - 4) Հայերի տեղաբնիկությունը գիտության մեջ երբեք կասկածի տակ չի դրվել:
 - 5) Արամ անունով երկիրը հիշատակվում է դեռևս Ք. ա. XVIII դարում:
 - 6) Սարգուրի I-ի օրոք Վանի թագավորությունը տարածվում էր մինչև Տիգրիսի վերին հովիտը:
 - 7) Կուլխա արշավանքի հաջորդ տարում Սարգուրի II-ի զորքը դուրս եկավ Միջերկրական ծովի արևելյան ավազան:
4. **Ինչ տարածք էր ընդգրկում Էթիոնի համադաշնությունը.**
 - 1) Վանա լճի ավազանը, Հայկական Տավրոսից հարավ՝ Տիգրիսի վերին հոսանքը
 - 2) Արարատյան դաշտը, Սևանա լճի ավազանը, Սյունիքը
 - 3) Սյունիքը, Արաքսի վերին հոսանքների շրջանը
 - 4) Հայկական Պարից հյուսիս՝ Աղստևի հովիտը

5. Ո՞ր երկրամասերն էր նվաճել Արգիշտի I-ը Ք. ա. 784 թ.

- | | |
|------------------------------|----------------------|
| 1) Աբիլիանի, Վեդուրի էթիունի | 3) Մելիտեա և Կեխունի |
| 2) Կարսի սարահարթ, Ջաբախա | 4) Ալիշտու և Տաշիր |

6. Ո՞ր շարքում են ներկայացված Մենուայի նվաճումները.

- 1) Հայկական Պարի արևելյան հատված, Դիաուլսի, Ալզի, Մելիդ, Մանայի թագավորություն, Ուրմիայից հարավ-արևելք՝ մինչև Դիալա
- 2) Արդինի-Մուսասիր, Արաքսի վերին հոսանքի շրջաններ, Սյունիք, Պարսուա երկիր, Չլդըրի ավազան
- 3) Դիաուլսի, էթիունի, Կարսի սարահարթ, Ջաբախա, Աբիլիանի, Մեծ Ջաբի միջին հոսանքի շրջաններ, Մելիդ, Կեխունի, Ալիշտու, Տաշիր, Պարսուա, Բաբելոնի երկիր
- 4) Մելիտեա, Սևանա լճի ավազան, Արմե, Ուրմե, Բաբելոնիա, Կուլխա, Միջերկրական ծովի արևելյան ավազան

7. Տրված փաստարկներից ո՞ր երկուսն են սխալ.

- ա. Ք. ա. 650-ական թթ. երկրորդ կեսին տեղի ունեցան ռազմական բախումներ Ասորեստանի և Վանի թագավորության միջև:
- բ. Ք. ա. VII դարի սկզբին Վանի արքայատոհմից անցում կատարվեց հաջորդ արքայատոհմին՝ առանց պատերազմական գործողությունների, պալատական հեղաշրջման միջոցով:
- գ. Հայկական լեռնաշխարհում համադաշնությունների համակարգը գոյություն ուներ՝ սկսած Ք. ա. III հազարամյակից:
- դ. Հայկական լեռնաշխարհում համադաշնություններից անցումը կենտրոնացված պետության տեղի է ունեցել Ք. ա. VIII-VII դարերում:

- | | |
|---------|---------|
| 1) բ, գ | 3) ա, բ |
| 2) գ, դ | 4) ա, դ |

8. Արձանագրություններում ո՞ր գործակալություններն են հիշատակվել Վանի թագավորությունում.

- 1) սպարապետ, հազարապետ, դատավոր
- 2) ամիրսպասալար, աթաբեկ, գունդստաբլ
- 3) աշխարհակալ, գավառակալ, սահմանապահ կուսակալ
- 4) մաղխագ, թագադիր ասպետ, հայր մարդպետ

9. Բացի Հայաստանից՝ ո՞ր երկրների վրա էր տարածվում Տիգրան I Երվանդյանի իշխանությունը.

- 1) Վրաստանի, Աղվանքի և Մարաստանի
- 2) Բաբելոնի, Ասորեստանի ու Աղվանքի
- 3) Կապադովկիայի, Վրաստանի, Աղվանքի
- 4) Կապադովկիայի, Կոմմագենեի և Վիրքի

10. Ք. ա. 331 թ. ուլքեր վերականգնեցին Հայաստանի անկախությունը.

- 1) Տիգրան Երվանդյանը՝ Մեծ Հայքում, Աժդահակը՝ Փոքր Հայքում
- 2) Արտաշեսը՝ Մեծ Հայքում, Զարեհը՝ Ծովքում
- 3) Օրոնտես-Երվանդ III-ը՝ Մեծ Հայքում, Միթրատուստեսը՝ Փոքր Հայքում
- 4) Երվանդ IV Վերջինը՝ Մեծ Հայքում, Շամը՝ Կոմմագենեում

11. Երբ և ում ընտանիքում է ծնվել Արտաշես I-ը.

- 1) Ք. ա. մոտ 260 թ. մեծատոհմիկ Երվանդի
- 2) Ք. ա. մոտ 230 թ. մեծատոհմիկ Զարեհի
- 3) Ք. ա. մոտ 220 թ. մեծատոհմիկ Տիգրանի
- 4) Ք. ա. մոտ 215 թ. մեծատոհմիկ Սմբատի

12. Մինչ Արտաշես I-ի միավորիչ գործունեությունը հայկական մի շարք երկրամասեր դր հարևան երկրների կողմից էին նվաճվել.

- 1) Ատրպատականի, Մարաստանի, Վիրքի, Աղվանքի
- 2) Մարաստանի, Վիրքի, Պոնտոսի, Սելևկյան պետության
- 3) Պարթևստանի, Վիրքի, Աղվանքի, Հռոմի
- 4) Ատրպատականի, Մարաստանի, Հռոմի, Սելևկյան պետության

13. Ո՞ր շարքի բոլոր երկրներն ու ժողովուրդներն են Տիգրան Մեծի օրոք եղել Հայաստանի քաղաքական ազդեցության ոլորտում.

- 1) Նաբաթեա, Հրեաստան, Մարաստան, Պարսից ծոցի և Կարմիր ծովի ափերին բնակվող արաբներ, Ամուդարյայի վերին ավազանի սկյութական ցեղեր
- 2) Նաբաթեա, Եգիպտոս, Ասորիք, Պարսից ծոցի և Արաբական ծովի ափերին բնակվող արաբներ, Ամուդարյայի ստորին ավազանի քուշանական ցեղեր
- 3) Նաբաթեա, Հրեաստան, Պարթևստան, Պարսից ծոցի և Կարմիր ծովի ափերին բնակվող արաբներ, Ամուդարյայի ստորին ավազանի արիական ցեղեր
- 4) Նաբաթեա, Հրեաստան, Պարթևստան, Պարսից ծոցի և Կարմիր ծովի ափերին բնակվող արաբներ, Ամուդարյայի ստորին ավազանի սկյութական ցեղեր

14. Մինչև ուր էր տարածվում Տիգրան Մեծի ստեղծած հայկական տերությունը.

- 1) Միջերկրական ծովից ու Եգիպտոսից մինչև Հնդկաստան
- 2) Սև ծովից մինչև Կասպից ծով, Բաբելոնով դեպի Միջերկրական ծով
- 3) Եգիպտոսից ու Կարմիր ծովից մինչև Կովկասյան Մեծ լեռներ, Միջերկրական ծովից մինչև Կասպից ծով
- 4) Միջերկրական ծովից ու Եգիպտոսից մինչև Միջագետք, Կորդվաց լեռներից մինչև Ճորոխի ավազան

15. Երբ և որտեղ է կառուցվել մայրաքաղաք Տիգրանակերտը.

- 1) Ք. ա. 90-80-ական թթ. Արարատյան դաշտում
- 2) Ք. ա. 80-70-ական թթ. Աղձնիք նահանգում
- 3) Ք. ա. 70-60-ական թթ. Արցախում
- 4) Ք. ա. 60-50-ական թթ. Բարձր Հայքում

16. Որտեղ և էրբ տեղի ունեցավ Արտավազդի ու Կրասոսի հանդիպումը.

- 1) Արտաշատում Ք. ա. 56 թ. գարնանը
- 2) Ասորիքում Ք. ա. 54 թ. գարնանը
- 3) Տիգրանակերտում Ք. ա. 53 թ. մայիսին
- 4) Ծովքում Ք. ա. 55 թ. աշնանը

17. Թագաժառանգ Բակուրի գլխավորությամբ որ տարածքներից դուրս մղվեցին հռոմեացիները.

- 1) Ասորիք, Հրեաստան, Փյունիկիա, Ատրպատական, Օսրոյենե
- 2) Ասորիք, Փյունիկիա, Պաղեստին, Հրեաստան, Կիլիկիա
- 3) Պաղեստին, Կիլիկիա, Ադիաբենե, Միգդոնիա, Ասորիք
- 4) Եգիպտոս, Կիլիկիա, Հրեաստան, Օսրոյենե, Աղվանք

18. Ընտրել ճիշտ փաստարկները.

- 1) 61 թ. անցնելով Արածանի գետը՝ հռոմեական զորքը բանակ է դնում Հռանդես (Եռանդ) վայրում:
- 2) Հռանդես վայրում հայ-պարթևական զորքը, ջախջախելով Հայկական Պարի լեռնանցքներում տեղակայված հռոմեական կայազորերը, շրջապատում է Կորբուլոնի բանակը:
- 3) 64 թ. Հայաստան է գալիս Կորբուլոնը և բանակցություններ վարում Վաղարշի ու Տրդատի հետ:
- 4) 65 թ. Տրդատը մեծ շքախմբով՝ իր ընտանիքով և 3000 հեծյալներով, ուղևորվում է Հռոմ:
- 5) Տրդատ I-ի թագավորության վեցերորդ տարում Մեծ Հայքի խաղաղ կյանքն ընդհատվեց Կովկասից սարմատական ցեղերի ներխուժման հետևանքով:
- 6) Տրդատ I-ին հաջորդել է Սանատրուկ I-ը:

19. Հայաստանում էրբ է սկսվել հելլենիստական ժամանակաշրջանը և որքան է տևել.

- 1) Ք. ա. IV դարից, տևել է 2 դար
- 2) Ք. ա. III դարից, տևել է 6 դար
- 3) Ք. ա. II հազարամյակում, տևել է 4 դար
- 4) Ք. ա. II դարից, տևել է 1 դար

20. Դեռևս վաղնջական ժամանակներում ձևավորված որ կրոնական ըմբռնումներն էին շարունակում գոյատևել հելլենիստական ժամանակաշրջանում.

- 1) բնապաշտություն, ոգեպաշտություն, հմայական մոգություն
- 2) բնապաշտություն, պատկերապաշտություն, հմայական մոգություն
- 3) բնապաշտություն, իրապաշտություն, սրբապաշտություն
- 4) իրապաշտություն, պատկերապաշտություն, հմայական մոգություն

21. Ընտրել երեք ճիշտ պնդումները.

- ա. Հայաստանի աշխարհագրական դիրքով պայմանավորված՝ հայ մշակույթը մշտապես ազդվել է տարաշխարհիկ մշակույթներից և կորցրել է իր յուրօրինակությունն ու եզակիությունը, ազգային մշակույթին բնորոշ գծերը:
- բ. Հայոց առասպելներն ու վիպերգ-ավանդազրույցներն արտացոլել են ժողովրդի աշխարհայացքը, բնության ու հասարակության վերաբերյալ պատկերացումները և արժեքավոր աղբյուր են հայոց հնագույն հավատալիքներն ու դիցարանները հետազոտելու համար:
- գ. Հելլենիստական դարաշրջանում հայ մշակույթի երկրորդ՝ հելլենիստական շերտի կրողները գլխավորապես վերին խավերի և քաղաքային ազատ բնակչության ներկայացուցիչներն էին:
- դ. Վանա լճի արևմտյան կողմում գտնվող Նեմրուփ լեռան սրբավայրը կառուցել է Անտիոքոս I Երվանդունին:
- ե. Հելլենիստական դարաշրջանի վերջերին Հայաստանում մեծ տարածում է գտնում նաև զրադաշտականությունը, որը դուալիստական կրոն էր և ընդունում էր երկու գերագույն՝ բարի և չար աստվածների նախասկիզբ և համազոր գոյությունը:
- զ. Հելլենիստական մշակույթը և հունարենը լայն տարածում գտան հասարակ ժողովրդի մեջ, հայոց արքունիքում և ավագանու շրջանում և ամբողջությամբ վերափոխեցին մեր ազգային մշակույթը:
- է. Քրիստոնեության պետականացումից հետո Հայաստանում արգելվել է հայկական մեհենագրության գործածությունը, և արքունի գրագրության, հոգևոր քարոզչության և ուսման ասպարեզներում կիրառվել են հունարենը, ապա նաև ասորերենն ու պահլավերենը:

1) ա, գ, ե

2) դ, գ, է

3) բ, գ, է

4) բ, գ, ե

22. Ընտրել երեք ճիշտ փաստարկները.

- 1) Գառնիի ավերիչ երկրաշարժը տեղի է ունեցել 1679 թ.:
- 2) ՀՀ-ի՝ բարձրությամբ երկրորդ լեռնագագաթ Կապուտջուղն ունի 3925 մ բարձրություն:
- 3) Վանա լիճը ծովի մակերևույթից ունի 1720 մ բարձրություն և չորս կղզի, որոնցից ամենանշանավորն Աղթամարն է:
- 4) Հայկական լեռնաշխարհի կենտրոնով ձգվում է Հայկական Տավրոս լեռնաշղթան, որը սկիզբ է առնում Արարատից:
- 5) Հայկական լեռնաշխարհի երկրորդ բարձր գագաթը Սիփանն է, որը գտնվում է Վանա լճից հյուսիս և ունի 4096 մ բարձրություն:
- 6) Կապուտան կամ Ուրմիա լճի հայելու մակերեսը կազմում է 4434 հա:
- 7) Ակոռիի ավերիչ երկրաշարժը տեղի է ունեցել 1926 թ.:
- 8) Հայկական լեռնաշխարհի ամենաբարձր լեռնագագաթը Մեծ Մասիսն է (Արարատ), որն ունի 5165 մ բարձրություն:

23. Ընտրել ճիշտ պնդումները.

- 1) Արտավազը II-ը Կրասոսին առաջարկում էր պարթևների դեմ արշավել ոչ թե Հայաստանի հարավով, այլ Ասորիքի անապատներով՝ հուսալով երկիրը գերծ պահել հռոմեացիների ասպատակություններից:
- 2) Գահակալության վերջին շրջանում Տիգրան V-ը ձերբազատվեց Հռոմի միջամտություններից և, մերձենալով Պարթևստանին, սկսեց վարել ինքնուրույն քաղաքականություն:
- 3) Հռոմեական կայսրությունում մղված գահակալական կռիվների ընթացքում չեզոքություն պահպանած հայոց Վաղարշ II թագավորը բանակցությունների միջոցով հաշտություն է կնքում հաղթանակած թեկնածուի և Հռոմի նոր կայսր Սեպտիմիոս Սևերոսի հետ:
- 4) Հրահատ IV-ը հիանալի գիտակցում էր, որ Հայաստանից հետո Պարթևստանն է լինելու Հռոմի հաջորդ թիրախը, ուստի փոխեց իր վերաբերմունքը Հայաստանի նկատմամբ և ռազմական զգալի օգնություն տրամադրեց:
- 5) Օգտագործելով պատեհ առիթը՝ պարթևական զինված ուժերը՝ թագաժառանգ Բակուրի հրամանատարությամբ, և հայկական զորամասերը՝ Գիսակ զորավարի գլխավորությամբ, անցան լայնածավալ հարձակման և հռոմեացիներին դուրս մղեցին Կիլիկիայից, Ասորիքից, Եգիպտոսից, Պաղեստինից և Հրեաստանից:
- 6) Պոմպեոսի կողմից Պոնտոսը ռազմակալելուց հետո Միհրդատ Եվպատորը նահանջեց իր տերության հյուսիսային երկրամասերը, որտեղ էլ Բ.ա. 63 թ. ինքնասպանությամբ վերջ տվեց կյանքին:
- 7) Օգտվելով Աքեմենյան վերջին տիրակալ Դարեհ III-ի՝ Մակեդոնացուց կրած պարտություններից՝ հայերը դեռևս Գավգամելայի ճակատամարտից առաջ հռչակում են Մեծ և Փոքր Հայքերի անկախության մասին:

24. Ստորև բերված պնդումներից որո՞նք են ճիշտ.

- 1) Վանի թագավորության սահմանները Ռուսա II-ի օրոք տարածվում էին Պարսուպից մինչև Ուրմիո լճի ավազան, Կասպից ծովից դեպի Փոքր Ասիայի կենտրոնական շրջաններ:
- 2) Արտաշեսի որդի Վրույրին Պատմահայրը հիշատակում է իբրև «այր իմաստուն և բանաստեղծ»:
- 4) Վանի թագավորության սահմանները Սարդուրի II-ի օրոք տարածվում էին հյուսիսում՝ Սև ծով, հյուսիս-արևելքում՝ Կուր գետ, արևելքում՝ Կասպից ծով, արևմուտքում՝ Փոքր Ասիայի կենտրոնական շրջան, հարավում՝ Բաբելոնով Պարսից ծոց և հարավ-արևմուտքում՝ Միջերկրական ծով:
- 5) Երվանդունյաց թագավորության սահմանները տարածվում էին հյուսիս-արևելքում՝ Կուր գետ, հյուսիս-արևմուտքում՝ Սև ծով, արևելքում՝ Մարաստան, իսկ հարավում՝ Հյուսիսային Միջագետք:
- 6) Տիգրան Մեծի կյանքին է նվիրված եղել Բարդաճանի «Մեծ մարդկանց մասին» վերնագրով աշխատության մի ամբողջ գլուխ:
- 7) Տրդատ I-ի հրամանով 387 թ. բաժանումից հետո հունարենին զուգահեռ կիրառվել է ասորերենը:

25. Ստորև բերված պնդումներից որո՞նք են ճիշտ.

- 1) Կյուրոս Մեծի ստեղծած Աքեմենյան աշխարհակալության սահմանները ձգվում էին Միջերկրական ծովից և Եգիպտոսից մինչև Հնդկաստան:
- 2) Մինչ Արտաշես I-ի միավորիչ գործունեությունը հայկական մի շարք երկրամասեր նվաճվել էին Վիրքի, Աղվանքի, Պոնտոսի, Սելևկյան պետության և Պարթևստանի կողմից:
- 3) Արևմուտքում Արտաշես I-ը Մեծ Հայքին միացրեց Կարնո երկիրը, Եկեղիք ու Փայտակարան գավառները:
- 4) Հյուսիսում Արտաշես I-ը Մեծ Հայքին է միավորել Կասպեից երկիրն ու Գուգարքը:
- 5) Արտաշատ մայրաքաղաքը կառուցվել է Ք. ա. 185 թ. Երասխ և Մեծամոր գետերի ջրկիցում:
- 6) Արտաշես I-ի կողմից անցկացված հողային բարեփոխումը նպատակ ուներ կարգավորելու հողի սեփականության խնդիրները՝ թույլատրելով ազարակների սեփականատերերին յուրացնել գյուղացի-համայնականների հողերը:

26. Տրված պատմական իրադարձություններից որո՞նք են տեղի ունեցել Տիգրան II-ի օրոք.

- 1) Պարթևստանի կողմից «70 հովիտների» վերադարձնելը Հայաստանին
- 2) Խառանի ճակատամարտը
- 3) Հռանդեայի պայմանագրի կնքումը
- 4) Ոսխայի ճակատամարտը
- 5) Արածանիի ճակատամարտը

27. Ստորև բերված պնդումներից որո՞նք են ճիշտ.

- 1) Արաքսը (հնում՝ Երասխ) սկիզբ է առնում Բյուրակնյան (Սրմանց) լեռներից և խառնվելով Կուր գետին՝ թափվում է Կասպից ծով:
- 2) Ճորոխն ունի 1113 կմ երկարություն, սկիզբ է առնում Ծովք լճից և, միախառնվելով Տիգրիսին, թափվում Պարսից ծոց:
- 3) Հնդեվրոպական նախահայրենիքը տարածվում էր Հայկական լեռնաշխարհում, Իրանական սարահարթի հարավարևելյան, Փոքր Ասիայի արևմտյան, Միջագետքի հարավային շրջաններում:
- 4) Աստվածաշնչի առաջին՝ Ծննդոց գրքի համաձայն՝ համաշխարհային ջրհեղեղից հետո վերացավ ողջ մարդկությունը, փրկվեց միայն Նոյ նահապետը՝ իր ընտանիքով, որի տապանը հանգրվանեց Հայկական լեռնաշխարհում՝ «Արարատ լեռների վրա»:
- 5) Սարգսի II-ի օրոք Վանի թագավորության սահմանները տարածվում էին Պարսուսից մինչև Վանա լճի ավազան, Կասպից ծովից մինչև Փոքր Ասիայի կենտրոնական շրջաններ:
- 6) Բեհիսթունյան արձանագրությունը գրված է էլամերեն, արաբերեն, պարսկերեն:

28. Ստորև բերված պնդումներից որոնք են սխալ.

- 1) Ք. ա. 522–521 թթ. ընթացքում բռնկված ապստամբության ժամանակ Կամբիզը Հյուսիսային Միջագետքում պարտություն կրեց հայերից:
- 2) Դարեհ I–ի դեմ Բաբելոնում բարձրացած ապստամբությունը գլխավորում էր Արախսան՝ Խալդիտայի որդին:
- 3) Մինչև Ք. ա. 331 թ. Հայաստանը մնաց Աքեմենյան տերության կազմում՝ որպես սատրապություն:
- 4) Աքեմենյան տերությունում վարչական միավորները կոչվում էին ստրատեգիաներ:
- 5) Աքեմենյան արքա Արտաքսերքսես III–ի դեմ Կյուրոս Կրտսերը ապստամբել է Ք. ա. 360 թ.:
- 6) «Անաբասիս» թարգմանաբար նշանակում է «Տասը հազարի նահանջը»:
- 7) Դարեհ III Կողմանոսը ողջ Աքեմենյան տերության տիրակալ դարձավ Ք. ա. 336 թ.:
- 8) Ք. ա. 331 թ. Հայաստանի անկախությունը վերականգնեցին Երվանդ (Օրոնտես) III–ը՝ Մեծ Հայքում, Միթրատուստերը՝ Փոքր Հայքում:
- 9) Հույն պատմիչ Քսենոփոնը սատրապական Հայաստանի կազմում Արևմտյան Հայաստանը հիշատակում է որպես կենտրոնական իշխանությանը ենթակա տարածք:

29. Ստորև բերված պնդումներից որոնք են ճիշտ.

- 1) Առաջին եռապետության անդամներ էին Գնեսոս Պոմպետոսը, Հուլիոս Կեսարը, Մարկոս Կրասոսը:
- 2) Ք. ա. 53 թ. մայիսի 6–ին Խառան քաղաքից ոչ հեռու տեղի ունեցած ճակատամարտում պարթև զորավար Օրոդեսը ջախջախեց հռոմեական բանակին:
- 3) Օկտավիանոսը, որը Ք. ա. 31 թ. պաշտոնապես իրեն հայտարարեց Օգոստոս («Աշխարհակալ»), հիմք դրեց հռոմեական կայսերական վարչակարգին:
- 4) Մարկոս Անտոնիոսը Արևելք ժամանեց Ք. ա. 30 թ.:
- 5) Ալեքսանդրիայում Անտոնիոսը կազմակերպեց հաղթահանդես, որի ընթացքում հայոց արքան ու նրա ընտանիքը անցնում էին քաղաքի փողոցներով:
- 6) Անտոնիոսի ու Օկտավիանոսի միջև վճռական ճակատամարտը տեղի ունեցավ Ք. ա. 31 թ. Մագնեսիայի մոտ:
- 7) Տիգրան VI–ի ինքնուրույն և պարթևամետ քաղաքականություն վարելու ապացույցը պահլավերեն մակագրությամբ դրամների թողարկումն էր:
- 8) 2 թ. հակահռոմեական հուժկու ապստամբության ընթացքում Արտագերս ամրոցը հերոսաբար պայքարում էր հռոմեացիների դեմ:

30. Ընտրել ճիշտ պնդումները.

- 1) «Հայկ և Բել» վիպասքում արտացոլվել է Հայաստանի և Իրանի միջև դարավոր հակամարտությունը:
- 2) Գավգամելայի ճակատամարտի արդյունքում Դարեհ III–ը գերեվարվեց և Ալեքսանդր Մակեդոնացու հրամանով մահապատժի ենթարկվեց:

- 3) Աքեմենյանների գերիշխանությունը ճանաչելուց հետո Հայաստանում շարունակեցին իշխել Երվանդականները, որոնք հատում էին սեփական դրամ և վայելում լիակատար ներքին ինքնավարություն:
- 4) Համեմատական լեզվաբանության շնորհիվ պարզ դարձավ, որ հայերը, հույներն ու պարսիկները միակ ժողովուրդներն են, որոնց ծագումն ու կազմավորումը տեղի է ունեցել հնդեվրոպական նախահայրենիքի տարածքում, և հետագայում նրանք շատ չեն հեռացել իրենց պատմական հայրենիքից:
- 5) Տիգրան Երվանդյանը, հայոց արքա լինելուց բացի, դարձավ Կյուրոսի տերության արևմտյան կեսի փոխարքան:

31. Ընտրել սխալ պնդումները.

- 1) Արտավազդ II-ը Կրասոսին առաջարկում էր պարթևների դեմ արշավել ոչ թե Հայաստանի հարավով, այլ Ասորիքի անապատներով՝ հուսալով երկիրը գերծ պահել հռոմեացիների ասպատակություններից:
- 2) Գահակալության վերջին շրջանում Տիգրան III-ը ձերբազատվեց Հռոմի միջամտություններից և, մերձենալով Պարթևստանին, սկսեց վարել ինքնուրույն քաղաքականություն:
- 3) Հռոմեական կայսրությունում մղված գահակալական կռիվների ընթացքում չեզոքություն պահպանած հայոց Վաղարշ II թագավորը բանակցությունների միջոցով հաշտություն է կնքում հաղթանակած թեկնածուի և Հռոմի նոր կայսր Սեպտիմիոս Սևերոսի հետ:
- 4) Հրահատ IV-ը հիանալի գիտակցում էր, որ Հայաստանից հետո Պարթևստանն է լինելու Հռոմի հաջորդ թիրախը, ուստի փոխեց իր վերաբերմունքը Հայաստանի նկատմամբ և ռազմական զգալի օգնություն տրամադրեց:
- 5) Օգտագործելով պատեհ առիթը՝ պարթևական զինված ուժերը՝ թագաժառանգ Բակուրի հրամանատարությամբ, և հայկական զորամասերը՝ Գիսակ զորավարի գլխավորությամբ, անցան լայնածավալ հարձակման և հռոմեացիներին դուրս մղեցին Կիլիկիայից, Ասորիքից, Եգիպտոսից, Պաղեստինից և Հրեաստանից:
- 6) Պոմպեոսի կողմից Պոնտոսը ռազմակալվելուց հետո Միհրդատ Եվպատորը նահանջեց իր տերության հյուսիսային երկրամասերը, որտեղ էլ Ք. ա. 63 թ. ինքնասպանությամբ վերջ տվեց կյանքին:
- 7) Օգտվելով Աքեմենյան վերջին տիրակալ Դարեհ III-ի՝ Մակեդոնացուց կրած պարտություններից՝ հայերը դեռևս Գավգամելայի ճակատամարտից առաջ հռչակում են Մեծ և Փոքր Հայքերի անկախության մասին:
- 8) Խայտառակ ձևով պարտված Պետոսը սուտ լուր է ուղարկում Հռոմ, թե իբր Արևելքում իրավիճակը չի փոխվել, սակայն Ներոնը տեղեկացել էր, որ պարտված հռոմեական լեգեոնները հեռացել էին Հայաստանից:

32. Ո՞ր հունարեն արձանագրություններն են մեզ հասել Տրդատ I-ից.

- | | |
|----------------------------|-----------------------|
| 1) Գառնիի և Ապարանի | 3) Արտաշատի և Գառնիի |
| 2) Տիգրանակերտի և Արմավիրի | 4) Արմավիրի և Ապարանի |

33. Ինչն է պատկերված Նեմրութի սրբավայրի արձանախմբում.

- 1) աստվածներ, արքան և նրա նախնիները, թագավորության զինանշանները՝ առյուծ և արծիվ, արքայի հորոսկոպը՝ առյուծի քանդակով
- 2) աստվածներ, արքան և նրա նախնիները, թագավորության զինանշանները՝ խաղող և նուռ, արքայի հորոսկոպը՝ արծվի քանդակով
- 3) մայր դիցուհին, արքան և նրա նախնիները, թագավորության զինանշանները՝ երկու առյուծներ, արքայի հորոսկոպը՝ վարագի քանդակով
- 4) աստվածներ, Տիգրան Երվանդունին, թագավորության զինանշանները՝ առյուծ և արծիվ, արքայի հորոսկոպը՝ արծվի քանդակով

34. Գտնել սխալ փաստարկները.

- 1) Վանի թագավորությունը հինարևելյան տիպի բացարձակ միապետություն էր:
- 2) Վանի տերությունն ամենամեծ տարածքային աճն ունեցել է Արգիշտի I-ի օրոք:
- 3) Ռուսա I-ի օրոք առանձնացվեց «արքայական գունդը»՝ հեծյալ զորամասերից բաղկացած ուժերը:
- 4) Ռուսա II-ը շարունակեց կառավարման համակարգի բարեփոխումը՝ համադաշնությունների համակարգից անցումը գերկենտրոնացված կառավարման:
- 5) Միասնական դիցարանի ստեղծումը կատարվել է Իշպուինիի կառավարման առաջին շրջանում:
- 6) Վանի թագավորությունը ասորեստանյան աղբյուրներում կոչվել է Ուրարտու, իսկ տեղական արձանագրություններում՝ Նաիրի և Բիայնիլի:
- 7) Մենուան Վանի թագավորությունը վերածում է աշխարհակալության:

35. Ընտրել երկու ճիշտ պնդումները.

- 1) Վանի թագավորության բանակի գերագույն հրամանատարը առաջին և երկրորդ սպարապետներն էին:
- 2) Միայն Արգիշտի I և Սարդուրի II արքաների օրոք բերվել են 350 հազար ռազմագերիներ:
- 3) Վանի թագավորության բանակը կազմված էր հետևակից, հեծելազորից և մարտակառքերից:
- 4) «Մենուայի ջրանցքն» ունեցել է 72 կմ երկարություն:
- 5) Իշպուինիի և Մենուայի ռազմական բարեփոխումների շնորհիվ արհեստավարժ կանոնավոր բանակը փոխարինվեց դաշնային աշխարհազորով:

36. Վանի թագավորության բանակը, ըստ զինվածության և մարտական հմտությունների, ստորաբաժանվում էր.

- 1) վահանավորների, պարսատիկավորների, նիզակավորների, հրետանավորների, գուրգավորների
- 2) սակրավորների, սուսերավորների, նիզակավորների, աղեղնավորների, հետախույզների

- 3) տեգավորների, գուրգավորների, աղեղնավորների, բաբանավորների, հետախույզների
- 4) պարսատիկավորների, նետածիգների, գուրգավորների, սուսերավորների, տեգավորների

37. Ընտրել երեք ճիշտ պնդումները.

- ա. Ք. ա. VII դարի առաջին կեսին Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքում վերականգնված Հայկազունների իշխանությունը համապատասխանում է սեպագիր աղբյուրների Արմե-Շուբրիա պետական կազմավորմանը:
- բ. Ք. ա. 609 թ. Վանն արդեն Պարոյր Նահապետի իշխանության տակ էր:
- գ. Տիգրան Երվանդյանը մահանում է Ք. ա. 538 թ.:
- դ. Հայերի ապստամբությունը ճնշելու համար Դարեհ I-ը ուղարկում է պարսիկ զորավար Վեիրմիհրշապուհին:
- ե. Ըստ Պատմահոր հաղորդման՝ Պարոյր Նահապետը միավորել է Վանա լճից մինչև Տիգրիս ընկած ողջ տարածքը:
- զ. Տիգրան Երվանդյանը մտերիմ հարաբերություններ ուներ պարսից արքա Կյուրոս Կրտսերի հետ:
- է. Ք. ա. 580–570–ական թթ. նշանավոր դարձավ Երվանդ I Սակավակյացը:

- 1) ա, բ, է
- 2) գ, դ, զ

- 3) ա, գ, է
- 4) բ, դ, ե

38. Արտաշես I-ը արևմուտքում Մեծ Հայքին է վերադարձրել.

- 1) Ծոփքը, Աղձնիքը և Բարձր Հայքը
- 2) Կարնո երկիրը, Եկեղիքը և Դերջանը
- 3) Տայքը, Գուգարքը և Ուտիքը
- 4) Դարանաղին, Եկեղիքը և Մանանաղին

39. Գտնել սխալ փաստարկները.

- 1) Արտավազդը Կրասոսին խոստացավ տրամադրել 24–հազարանոց այրուծի և 16–հազարանոց հետևակ՝ ընդամենը 40 հազար զինվոր:
- 2) Հռոմում ստեղծված Առաջին եռապետության մեջ էին Գնեոս Պոմպեոսը, Հուլիոս Կեսարը և Մարկոս Կրասոսը:
- 3) Անտոնիոսը Արտավազդին հրավիրում էր Ալեքսանդրիա՝ Արտավազդի քրոջ և իր ու Կլեոպատրայի որդի Ալեքսանդրի ամուսնության հարցը քննարկելու:
- 4) Կրասոսը Ք. ա. 53 թ. գարնանն անցավ Եփրատը և սկսեց իր արշավանքը դեպի Պարթևստան:
- 5) Անտոնիոսը միայն Փրասպայի պարիսպների տակ ունեցավ 20 տազար սպանված զինվորի կորուստ:

40. Ստորև բերված ճիշտ շարքն է ընդգրկում բացառապես դրածո թագավորներին.

- 1) Տիգրան I, Խոսրով I, Սանատրուկ II, Վաղարշ I, Արշակ I
- 2) Տրդատ I, Սանատրուկ I, Վաղարշ II, Խոսրով II, Արտավազդ III
- 3) Տիգրան V, Տիգրան VI, Արտավազդ IV, Զենոն–Արտաշես, Սոհեմոս–Տիգրան
- 4) Արիոբարզանես, Վոնոն, Միհրդատ Իբերացի, Վաղարշ II, Տրդատ II

41. Գտնել երեք սխալ պնդումները.

- ա. Միհրդատ Իբերացուց հայոց գահը բռնազավթել է նրա եղբորորդի Հռադամիզը:
- բ. Սոհեմոս–Տիգրանին Հայաստանից վտարելուց հետո գահը հանձնվել է Խոսրով I–ին:
- գ. Տրդատ II–ին հաջորդած Արտավազդից հետո հայոց գահն անցնում է Խոսրով II–ին:
- դ. Արտաշատի պայմանագրի կնքումից հետո պարթևները հետ ստացան Կորդուքն ու Հյուսիսային Միջագետքը:
- ե. Երբ Մարկոս Կրասոսը ժամանեց Ասորիք, Արտավազդ II–ը եկավ նրա մոտ և առաջարկեց պարթևների դեմ արշավանքը սկսել Հայաստանի հարավային լեռնոտ շրջաններով:
- զ. Տիգրան III–ը Հռոմի ցանկությամբ հայոց գահը կտակեց իր որդի Տիգրան IV–ին:
- է. Հռոմեական զորավար Կորբուլոնը, գրավելով Արտաշատ մայրաքաղաքը, հրամայում է քանդել այն:

- 1) ա, ե, է
- 2) դ, ե, գ

- 3) ա, գ, դ
- 4) բ, դ, գ

1. ՏԱՐԵԹՎԵՐ

1. Ո՞ր դարում են դրվել Հայ առաքելական եկեղեցու հիմքերը.
1) IV դ. 2) II դ. 3) I դ. 4) III դ.
2. Ե՞րբ է գահակալել Խոսրով III Կոտակը.
1) 298–330 թթ. 3) 330–338 թթ.
2) 339–350 թթ. 4) 320–328 թթ.
3. Ե՞րբ է գահակալել Արշակ II-ը.
1) 339–350 թթ. 3) 350–368 թթ.
2) 353–373 թթ. 4) 330–338 թթ.
4. Ե՞րբ է գահակալել Պապ թագավորը.
1) 350–368 թթ. 3) 374–378 թթ.
2) 378–387 թթ. 4) 370–374 թթ.
5. Ե՞րբ է տեղի ունեցել հայ-պարսկական զինական բախումը Ատրպատականում.
1) 370 թ. 2) 374 թ. 3) 350 թ. 4) 330 թ.
6. Ե՞րբ է Մեծ Հայքի թագավորությունը բաժանվել Սասանյան Պարսկաստանի և Հռոմեական կայսրության միջև.
1) 387 թ. 2) 378 թ. 3) 591 թ. 4) 571 թ.
7. Ե՞րբ է մահացել Խոսրով IV-ը.
1) 387 թ. 2) 414 թ. 3) 388 թ. 4) 415 թ.
8. Ե՞րբ է գումարվել Արտաշատի եկեղեցական ժողովը.
1) 354 թ. 2) 449 թ. 3) 450 թ. 4) 451 թ.
9. Ե՞րբ են նահատակվել Հովսեփ Ա Վայոցձորցին և Ղևոնդ Երեցը.
1) 454 թ. 2) 452 թ. 3) 451 թ. 4) 455 թ.
10. Ե՞րբ է գահակալել Հազկերտ II-ը.
1) 439–452 թթ. 3) 459–484 թթ.
2) 439–457 թթ. 4) 449–478 թթ.
11. Ե՞րբ է գահակալել Պերոզ արքան.
1) 437–459 թթ. 3) 459–484 թթ.
2) 461–478 թթ. 4) 456–502 թթ.

- 12. Ո՞ր թվականին Նիխորն ուղարկվեց Հայաստան.**
 1) 483 թ. 2) 484 թ. 3) 485 թ. 4) 506 թ.
- 13. Երբ է գումարվել Դվինի II եկեղեցական ժողովը.**
 1) 506 թ. 2) 555 թ. 3) 545 թ. 4) 554 թ.
- 14. Երբ է գահակալել Վաչագան Բարեպաշտը.**
 1) 487 թ. մինչև VI դարի առաջին կեսը 3) 484 թ. մինչև VI դարի առաջին կեսը
 2) 485 թ. մինչև V դարի վերջը 4) 506 թ. մինչև VI դարի երկրորդ կեսը
- 15. Երբ է կնքվել «հավիտենական» հաշտության պայմանագիրը.**
 1) 527 թ. 2) 532 թ. 3) 536 թ. 4) 591 թ.
- 16. Հուստինիանոս I-ը Արևմտյան Հայաստանում երբ է իրականացրել ռազմավարչական բաժանումը.**
 1) 527–528 թթ. 3) 536–538 թթ.
 2) 530–531 թթ. 4) 571–572 թթ.
- 17. Երբ են հայերն ապստամբել և սպանել Ակակիոսին.**
 1) 536 թ. 2) 539 թ. 3) 548 թ. 4) 554 թ.
- 18. Ո՞ր թվականին սկսվեց պարսկա–բյուզանդական 20–ամյա պատերազմը.**
 1) 571 թ. 2) 572 թ. 3) 582 թ. 4) 591 թ.
- 19. Երբ է տեղի ունեցել Հայաստանի պարսկա–բյուզանդական բաժանումը.**
 1) 571 թ. 2) 572 թ. 3) 591 թ. 4) 387 թ.
- 20. Ո՞ր թվականից են քրիստոնյաները սկսել նշել Խաչվերացի (Սուրբ Խաչ) տոնը.**
 1) 614 թ. 2) 618 թ. 3) 628 թ. 4) 631 թ.
- 21. Երբ է տեղի ունեցել Յարմուքի ճակատամարտը.**
 1) 639 թ. 2) 636 թ. 3) 637 թ. 4) 635 թ.
- 22. Ո՞ր թվականից սկսվեցին արաբական զորքերի ներխուժումները Հայաստան.**
 1) 636 թ. 3) 640 թ.
 2) 639 թ. 4) 641 թ.
- 23. Երբ է Կոստանդին II-ի գլխավորած 100–հազարանոց բանակը ներխուժել Հայաստան.**
 1) 652 թ. 2) 653 թ. 3) 656 թ. 4) 661 թ.
- 24. Երբ է կառավարել Բյուզանդիայի Հերակլ կայսրը.**
 1) 610–641 թթ. 3) 615–628 թթ.
 2) 614–650 թթ. 4) 628–632 թթ.

25. Երբ է կառուցվել Ս. Հռիփսիմն եկեղեցին.

- 1) 615 թ. 2) 618 թ. 3) 661 թ. 4) 614 թ.

26. Երբ է մահացել Թեոդորոս Ռշտունին.

- 1) 654 թ. 2) 655 թ. 3) 664 թ. 4) 656 թ.

27. Երբ է կառավարել հայոց իշխանաց իշխան Բագարատ Բագրատունին.

- 1) 850–855 թթ. 2) 826–851 թթ. 3) 855–885 թթ. 4) 804–826 թթ.

28. Երբ է խալիֆը պարտված Բուղային հետ կանչել Հայաստանից.

- 1) 851 թ. 2) 855 թ. 3) 862 թ. 4) 869 թ.

29. Ո՞ր թվականն է արաբական մի սկզբնաղբյուրում կոչվել «կրակի տարի».

- 1) 725 թ. 2) 703 թ. 3) 705 թ. 4) 775 թ.

30. Աշոտ Մսակերը հայոց իշխանաց իշխանի պաշտոնը վարել է մինչև՝

- 1) 824 թ. 2) 855 թ. 3) 804 թ. 4) 826 թ.

31. Ո՞ր թվականին Յուսուֆի գլխավորած արաբական զորաբանակը ներխուժեց Հայաստան.

- 1) 852 թ. 2) 851 թ. 3) 850 թ. 4) 853 թ.

32. Երբ է Բուղան իր զորքով մտել Վիրք.

- 1) 851 թ. 2) 852 թ. 3) 853 թ. 4) 855 թ.

33. Մինչև Երբ է գահակալել Աշոտ I Բագրատունին.

- 1) 890 թ. 3) 885 թ.
2) 889 թ. 4) 855 թ.

34. Երբ է տեղի ունեցել Դոդսի ճակատամարտը.

- 1) 890 թ. 2) 892 թ. 3) 894 թ. 4) 904 թ.

35. Երբ է տեղի ունեցել Սևանի ճակատամարտը.

- 1) 921 թ. 2) 914 թ. 3) 915 թ. 4) 922 թ.

36. Սմբատ I-ը Բյուզանդիայի հետ երբ կնքեց բարեկամության և առևտրական դաշինք.

- 1) 890 թ. 2) 894 թ. 3) 908 թ. 4) 893 թ.

37. Բյուզանդիայի հետ հակաարաբական դաշինք կնքելու նպատակով Աշոտ II-ը երբ մեկնեց Կոստանդնուպոլիս.

- 1) 925 թ. 2) 921 թ. 3) 922 թ. 4) 914 թ.

38. Ո՞ր թվականին Աշոտ Բագրատունին ճանաչվեց հայոց իշխանաց իշխան.

- 1) 804 թ. 2) 826 թ. 3) 855 թ. 4) 862 թ.

39. Երբ է Հայոց կաթողիկոսական աթոռը հաստատվել Արգինայում.

- 1) 961 թ. 2) 928 թ. 3) 908 թ. 4) 948 թ.

40. Երբ է կառուցվել Անին իր մեջ ընդգրկող պարիսպների երկրորդ գիծը.

- 1) 963–964 թթ. 3) 987–989 թթ.
2) 977–989 թթ. 4) 961–963 թթ.

41. Երբ է տեղի ունեցել Ծումբի ճակատամարտը.

- 1) 921 թ. 2) 898 թ. 3) 998 թ. 4) 894 թ.

42. Տաշիր–Ձորագետի (Լոռի) թագավոր Դավիթ Անհողինը Երբ ապստամբեց Գագիկ I-ի դեմ.

- 1) 1001 թ. 2) 1000 թ. 3) 990 թ. 4) 998 թ.

43. Երբվանից են Պահլավունիները վարել սպարապետի պաշտոնը.

- 1) IX դարի առաջին կեսից 3) XI դարի սկզբից
2) X դարի վերջերից 4) X դարի առաջին քառորդից

44. Մինչև Երբ է գոյատևել Տաշիր–Ձորագետի թագավորությունը.

- 1) 1131 թ. 2) 1021 թ. 3) 1113 թ. 4) 1001 թ.

45. Երբ են տեղի ունեցել Տրապիզոնի բյուզանդա–վրացական բանակցությունները Տայքի պատկանելության շուրջ.

- 1) 1020 թ. 2) 1022 թ. 3) 1032 թ. 4) 1041 թ.

46. Երբ է վերացել Անիի Բագրատունյաց թագավորությունը.

- 1) 1021 թ. 2) 1044 թ. 3) 1045 թ. 4) 1054 թ.

47. Երբ է տեղի ունեցել Բասենի ճակատամարտը.

- 1) 1047 թ. 2) 1054 թ. 3) 1064 թ. 4) 1048 թ.

48. Հայաստանում և Փոքր Ասիայում իր դարում են առաջին անգամ հայտնվել թուրքերը.

- 1) XI դարի երկրորդ կեսին 3) IX դարում
2) X դարի երկրորդ կեսին 4) VIII դարում

49. Երբ է Տաշիր–Ձորագետի թագավորությունը միացվել վրացական պետությանը.

- 1) 1111 թ. 2) 1113 թ. 3) 1124 թ. 4) 1126 թ.

50. Երբ են մոնղոլներն առաջին անգամ ներխուժել Այսրկովկաս.

- 1) 1206 թ. 2) 1231 թ. 3) 1219 թ. 4) 1220 թ.

51. Մոնղոլները Երբ պարտության մատնեցին Իկոնիայի սուլթանությանը.

- 1) 1242 թ. 2) 1243 թ. 3) 1249 թ. 4) 1236 թ.

67. Երբ տեղի ունեցավ մամուլքների ներխուժումը Կիլիկիա, և պաշարվեց Սիս քաղաքը.

- 1) 1317 թ. 2) 1320 թ. 3) 1323 թ. 4) 1321 թ.

68. Ադանայում երբ ժողով հրավիրվեց՝ վերահաստատելու համար նախորդ ժողովների որոշումները.

- 1) 1314 թ. 2) 1316 թ. 3) 1317 թ. 4) 1321 թ.

69. Մամուլքները երբ գրավեցին Հռոմկլա բերդաքաղաքը.

- 1) 1290 թ. 2) 1285 թ. 3) 1292 թ. 4) 1294 թ.

70. Արքունի խորհրդի համաձայնությամբ թագաժառանգի իրավունքները երբ փոխանցվեցին Ջաբելին.

- 1) 1218 թ. 2) 1216 թ. 3) 1212 թ. 4) 1217 թ.

71. Ո՞ր թվականին Կիրակոս Վիրապեցին ընտրվեց կաթողիկոս.

- 1) 1440 թ. 2) 1441 թ. 3) 1452 թ. 4) 1461 թ.

72. Երբ շահ Աբասը հաշտություն կնքեց օսմանցիների հետ.

- 1) 1587 թ. 2) 1590 թ. 3) 1555 թ. 4) 1639 թ.

73. Մինչև ո՞ր թվականներն է հասցրել Փավստոս Բուզանդն իր երկը.

- 1) 385–387 թթ. 2) 389–391 թթ. 3) 391–392 թթ. 4) 450–451 թթ.

74. Ի՞նչ ժամանակահատված է ընդգրկում Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկը.

- 1) հնագույն ժամանակներից մինչև IV դարի 10–ական թթ.
2) հնագույն ժամանակներից մինչև V դարի 40–ական թթ.
3) հնագույն ժամանակներից մինչև IV դ. 20–ական թթ.
4) հնագույն ժամանակներից մինչև V դարի 50–ական թթ.

75. Ո՞ր դարի աշխարհագրագետ, տիեզերագետ ու մաթեմատիկոս էր Անանիա Շիրակացին.

- 1) V 2) VI 3) VII 4) VIII

76. Ո՞ր դարի ժամանակագիր է Սամուել Անեցին.

- 1) IX 2) X 3) XI 4) XII

77. Ո՞ր ժամանակահատվածն է ընդգրկում Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրությունը».

- 1) 956–1236 թթ. 2) 952–1136 թթ. 3) 850–1045 թթ. 4) 951–1272 թթ.

78. Թովմա Արծրունու պատմության շարադրանքը այլ հեղինակների կողմից մինչև ո՞ր դարն է հասցվել.

- 1) XII 2) XIV 3) XV 4) XIII

79. Հովհաննես Դրասխանակերտցին մինչև իր թվականն է հասցնում իր աշխատության շարադրանքը.

- 1) 922 թ. 2) 924 թ. 3) 1001 թ. 4) 951 թ.

80. Ե՛րբ է Սսի եկեղեցական ժողովն ընդունել հասարակության ամուսնաընտանեկան և բարոյական կյանքը կարգավորող ավելի քան 20 կանոններ.

- 1) 1317 թ. 2) 1307 թ. 3) 1243 թ. 4) 1261 թ.

81. Ե՛րբ է ապրել և գործել Մխիթար Հերացին.

- 1) XI դ. 2) XIV դ. 3) XIII դ. 4) XII դ.

82. Ե՛րբ է ավարտվել Անիի Մայր տաճարի շինարարությունը.

- 1) 1000 թ. 2) 1001 թ. 3) 1005 թ. 4) 1118 թ.

83. Ո՞ր դարում է գործել Հերմոնի դպրոցը.

- 1) XV դ. 2) XIII դ. 3) XII դ. 4) XVI դ.

84. Ե՛րբ է Հովհաննավանքի դպրոցը փոխադրվել Էջմիածին.

- 1) 1631–1633 թթ. 3) 1639–1640 թթ.
2) 1635–1637 թթ. 4) 1650–1651 թթ.

85. Ո՞ր դարում է գործել Ղրիմի Անտոնի անապատի հայոց դպրոցը.

- 1) XIV 2) XV 3) XVII 4) XVIII

86. Աբգար դպիր Թոխաթեցին Ե՛րբ է Հռոմից մեկնել Վենետիկ.

- 1) 1562 թ. 2) 1565 թ. 3) 1547 թ. 4) 1594 թ.

87. Ե՛րբ է Շապուհ Երկարակյացը պատերազմ սկսել Հռոմեական կայսրության դեմ և փորձել գրավել Մծբինը.

- 1) 335 թ. 2) 336 թ. 3) 337թ. 4) 339 թ.

88. Ե՛րբ է Պապը հաստատվել հայոց գահին.

- 1) 370 թ. 2) 371 թ. 3) 378 թ. 4) 368 թ.

89. Ե՛րբ է տեղի ունեցել հեփթաղների կողմից պարսկական զորքերի ջախջախումը և Վաղարշի գահ բարձրանալը.

- 1) 482 թ. 2) 483 թ. 3) 481 թ. 4) 484 թ.

90. Ե՛րբ է Հերակլ կայսրը վերադարձրել Երուսաղեմ հաջափայտը.

- 1) 610 թ. 2) 631 թ. 3) 618 թ. 4) 615 թ.

91. Արաբները ի՞ր թվականին լուծեցին Վարդանակերտի պարտության վրեժը.

- 1) 703 թ. 2) 705 թ. 3) 708 թ. 4) 725 թ.

92. Ե՞րբ է կառավարել Ջահանշահ կարա-կոյունլուն.

- | | |
|------------------|------------------|
| 1) 1437–1467 թթ. | 3) 1426–1463 թթ. |
| 2) 1431–1451 թթ. | 4) 1453–1467 թթ. |

93. Ե՞րբ է իրեն թագավոր հռչակել Կարսի կառավարիչ Մուշեղ Բագրատունին.

- | | | | |
|-----------|-----------|-----------|-----------|
| 1) 953 թ. | 2) 961 թ. | 3) 963 թ. | 4) 972 թ. |
|-----------|-----------|-----------|-----------|

94. Ե՞րբ է տեղի ունեցել Չաբեյի և Հերթումի ամուսնությունը.

- | | | | |
|------------|------------|------------|------------|
| 1) 1226 թ. | 2) 1220 թ. | 3) 1222 թ. | 4) 1219 թ. |
|------------|------------|------------|------------|

95. Ե՞րբ է Հերթում I–ը գահը հանձնել Լևոն II–ին.

- | | | | |
|------------|------------|------------|------------|
| 1) 1268 թ. | 2) 1260 թ. | 3) 1266 թ. | 4) 1270 թ. |
|------------|------------|------------|------------|

96. Ե՞րբ է Տաշիրի կառավարիչ նշանակվել Աշոտ III–ի որդի Գուրգենը.

- | | | | |
|-----------|-----------|-----------|-----------|
| 1) 978 թ. | 2) 963 թ. | 3) 972 թ. | 4) 977 թ. |
|-----------|-----------|-----------|-----------|

97. Ե՞րբ է մահացել Դավիթ Կյուրապաղատը.

- | | | | |
|-----------|-----------|------------|------------|
| 1) 998 թ. | 2) 989 թ. | 3) 1000 թ. | 4) 1001 թ. |
|-----------|-----------|------------|------------|

98. Ե՞րբ է Թորոս II–ը վերականգնել Ռուբինյան իշխանությունը.

- | | | | |
|------------|------------|------------|------------|
| 1) 1145 թ. | 2) 1151 թ. | 3) 1137 թ. | 4) 1152 թ. |
|------------|------------|------------|------------|

99. Ե՞րբ է Կոստանդնուպոլիս մեկնել Աշոտ II–ը.

- | | | | |
|-----------|-----------|-----------|-----------|
| 1) 918 թ. | 2) 914 թ. | 3) 921 թ. | 4) 922 թ. |
|-----------|-----------|-----------|-----------|

100. Ե՞րբ են բյուզանդական զորքերը Հովհաննես Կոմնենոս կայսեր գլխավորությամբ հայտնվել Դաշտային Կիլիկիայում.

- | | | | |
|------------|------------|------------|------------|
| 1) 1132 թ. | 2) 1137 թ. | 3) 1145 թ. | 4) 1151 թ. |
|------------|------------|------------|------------|

101. Ե՞րբ են սելջուկ–թուրքերը գրավել Արծն քաղաքը.

- | | | | |
|------------|------------|------------|------------|
| 1) 1047 թ. | 2) 1048 թ. | 3) 1049 թ. | 4) 1054 թ. |
|------------|------------|------------|------------|

102. Ե՞րբ է Կոստանդին Ռուբինյանը գրավել Վահկա բերդը.

- | | | | |
|------------|------------|------------|------------|
| 1) 1095 թ. | 2) 1098 թ. | 3) 1099 թ. | 4) 1096 թ. |
|------------|------------|------------|------------|

103. Ե՞րբ է տեղի ունեցել Կարսի պաշտպանությունը սելջուկ–թուրքերից.

- | | | | |
|------------|------------|------------|------------|
| 1) 1065 թ. | 2) 1048 թ. | 3) 1064 թ. | 4) 1054 թ. |
|------------|------------|------------|------------|

104. Ե՞րբ են տեղի ունեցել Աշոտ III–ին թագադրելու հանդիսությունները.

- | | | | |
|-----------|-----------|-----------|-----------|
| 1) 961 թ. | 2) 953 թ. | 3) 963 թ. | 4) 964 թ. |
|-----------|-----------|-----------|-----------|

105. Ե՞րբ է Աշոտ II–ը հակաարաբական դաշինք կնքել Բյուզանդիայի հետ.

- | | | | |
|-----------|-----------|-----------|-----------|
| 1) 928 թ. | 2) 921 թ. | 3) 922 թ. | 4) 926 թ. |
|-----------|-----------|-----------|-----------|

106. Ե՞րբ են մահացել Աշոտ IV–ը և Հովհաննես–Սմբատը.

- | | | | |
|------------|------------|------------|------------|
| 1) 1041 թ. | 2) 1042 թ. | 3) 1044 թ. | 4) 1045 թ. |
|------------|------------|------------|------------|

107. Երբ է Կոստանդնուպոլիս մեկնել Գագիկ II-ը.

- 1) 1042 թ. 2) 1044 թ. 3) 1045 թ. 4) 1047 թ.

108. Երբ է Փոքր Ասիայում հաստատվել Սելջուկյան պետության իշխանությունը.

- 1) 1080 թ. 2) 1072 թ. 3) 1071 թ. 4) 1074 թ.

109. Երբ է Թորոս I-ը գրավել Սիս և Անավարզա քաղաքները.

- 1) 1107 թ. 2) 1104 թ. 3) 1109 թ. 4) 1100 թ.

110. Երբ է Լևոն I իշխանը բյուզանդացիներից գրավել Սսիս, Ադանա և Տարսոն քաղաքները.

- 1) 1124 թ. 2) 1129 թ. 3) 1131 թ. 4) 1132 թ.

111. Երբ է հրավիրվել Սսի եկեղեցական ժողովը, որը որոշեց ընդունել Քաղկեդոնի դավանանքը.

- 1) 1307 թ. 2) 1308 թ. 3) 1316 թ. 4) 1317 թ.

112. Երբ է հրավիրվել Ադանայի եկեղեցական ժողովը.

- 1) 1307 թ. 2) 1315 թ. 3) 1317 թ. 4) 1310 թ.

113. Երբ է հաշտության պայմանագիր կնքվել Լևոն Մեծագործի և Անտիոքի իշխան Բոհեմունդի միջև.

- 1) 1194 թ. 2) 1198 թ. 3) 1199 թ. 4) 1202 թ.

114. Երբ է Հայաստանում և Վրաստանում նոր ապստամբություն բռնկվել մոնղոլների դեմ.

- 1) 1258 թ. 2) 1244 թ. 3) 1249 թ. 4) 1259 թ.

115. Երբ են մոնղոլները պարտության մատնել Ջալալեդդինին.

- 1) 1231 թ. 2) 1236 թ. 3) 1242 թ. 4) 1241 թ.

116. Երբ է իր թագավորությունը Բյուզանդիային հանձնել Կարսի թագավոր Գագիկ Աբասյանը.

- 1) 1054 թ. 2) 1064 թ. 3) 1065 թ. 4) 1071 թ.

117. Երբ է երկրաշարժի հետևանքով ավերվել Դվինը.

- 1) 890 թ. 2) 893 թ. 3) 894 թ. 4) 896 թ.

118. Երբ են հայ-վրացական ուժերը պաշարել Խլաթը.

- 1) 1201 թ. 2) 1203 թ. 3) 1207 թ. 4) 1209 թ.

119. Երբ են բյուզանդացիները ներխուժել Կիլիկիա և պաշարել Սսիս քաղաքը.

- 1) 1132 թ. 2) 1135 թ. 3) 1145 թ. 4) 1152 թ.

120. Երբ են մամուլքները վերսկսել իրենց արշավանքները և գրավել ու ավերել Մսիսը.

- 1) 1266 թ. 2) 1268 թ. 3) 1270 թ. 4) 1275 թ.

121. Երբ է տասը տարի ժամկետով զինադադար կնքվել Եգիպտոսի և Կիլիկյան Հայաստանի միջև.

- 1) 1270 թ. 2) 1275 թ. 3) 1285 թ. 4) 1289 թ.

122. Երբ է Կիլիկիա ժամանել Անտիոքի իշխանի որդի Ֆիլիպը.

- 1) 1216 թ. 2) 1219 թ. 3) 1222 թ. 4) 1226 թ.

123. Երբ են մոնղոլները շարժվել դեպի Հայաստանի արևմտյան շրջանները.

- 1) 1220–1221 թթ. 3) 1235–1236 թթ.
2) 1231–1232 թթ. 4) 1242–1243 թթ.

124. Երբ է Անին որոշ ժամանակով նորից անցել հայերի և վրացիների ձեռքը.

- 1) 1174 թ. 2) 1176 թ. 3) 1184 թ. 4) 1186 թ.

125. Երբ են սելջուկները Շաղդադյաններին հանձնել Անին.

- 1) 1045 թ. 2) 1054 թ. 3) 1064 թ. 4) 1071 թ.

126. Երբ են հայ և վրաց իշխանները սկսել նախապատրաստվել մոնղոլների դեմ ապստամբության.

- 1) 1236 թ. 2) 1242 թ. 3) 1244 թ. 4) 1249 թ.

127. Երբ է գահակալել Օշին թագավորը.

- 1) 1307–1317 թթ. 2) 1308–1320 թթ. 3) 1320–1342 թթ. 4) 1320–1344 թթ.

128. Երբ Կիլիկյան Հայաստանը հարկադրված եղավ ծանր պայմաններով հաշտության պայմանագիր կնքել Եգիպտոսի հետ՝ մամուլքներին զիջելով որոշ տարածքներ ու բերդեր.

- 1) 1323 թ. 2) 1335 թ. 3) 1337 թ. 4) 1342 թ.

129. Երբ է գահակալել Լևոն V-ը.

- 1) 1344–1350 թթ. 2) 1350–1362 թթ. 3) 1362–1375 թթ. 4) 1373–1375 թթ.

130. Երբ Կիլիկիա ներխուժեցին Իկոնիայի սուլթանությունում տեղակայված մոնղոլական զորքերը և թուրքմենները.

- 1) 1321 թ. 2) 1322 թ. 3) 1323 թ. 4) 1337 թ.

131. Երբ վերելք ապրեց Վասպուրականի թագավորությունը.

- 1) IX դարի վերջերին 3) X դարի երկրորդ կեսին
2) X դարի առաջին կեսին 4) XI դարի առաջին կեսին

132. Երբ է Աշոտ Բագրատունու մոտ պատվիրակ ուղարկել Վասիլ I կայսրը.

- 1) 876 թ. 2) 885 թ. 3) 890 թ. 4) 893 թ.

133. Երբ է մահացել Սյունիքի Վասակ թագավորը.

1) 1029 թ.

2) 1035 թ.

3) 1040 թ.

4) 1041 թ.

134. Երբ է տեղի ունեցել Կոտմանի ճակատամարտը.

1) 1219 թ.

2) 1220 թ.

3) 1222 թ.

4) 1226 թ.

135. Երբ են մոնղոլները գրավել Լոռն և Շամքոր քաղաքները.

1) 1236 թ.

2) 1242 թ.

3) 1243 թ.

4) 1244 թ.

ZANGAK

2. ՓԱՍՏԵՐ ԵՎ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ

1. Ո՞ր եկեղեցին է Գրիգոր Լուսավորիչը հիմնադրել Քարքե լեռան լանջին.
 - 1) Ս. Առաքելոց
 - 2) Ս. Երրորդություն
 - 3) Ս. Ստեփանոս
 - 4) Իննականյան Ս. Կարապետ
2. Ավատատիրական Հայաստանում յուրաքանչյուր նախարարի տեղը արքունիքում ո՞ր պետական կարևոր փաստաթղթով էր սահմանվում.
 - 1) զորանամակով
 - 2) գահնամակով
 - 3) դատաստանագրքով
 - 4) աշխարհագրով
3. Ո՞վ էր հայոց զորքի հրամանատարը Օշականի Ցլու գլուխ լեռան մոտ տեղի ունեցած ճակատամարտում.
 - 1) Արտավազդ Մամիկոնյանը
 - 2) Վասակ Մամիկոնյանը
 - 3) Արտավազդ Մանդակունին
 - 4) Վաչե Մամիկոնյանը
4. Որտե՞ղ է նահատակվել Հուսիկ կաթողիկոսը.
 - 1) Ծովքի Բնաբեղ բերդում
 - 2) Բասենի Բողբերդ ամրոցում
 - 3) Միջնաշխարհում՝ Կապույտ լեռան ամրոցում
 - 4) Տարոնի Աշտիշատ գյուղում
5. Տրդատ III-ը ո՞ւմ էր նշանակել սպարապետ.
 - 1) Մուշեղ Մամիկոնյանին
 - 2) Վաչե Մամիկոնյանին
 - 3) Արտավազդ Մանդակունուն
 - 4) Վահան Մամիկոնյանին
6. Գրիգոր Լուսավորիչն ու Տրդատ արքան հայ մանուկներին ի՞նչ կրթության էին տալիս.
 - 1) ասորական և պարթևական
 - 2) հելլենական ու ասորական
 - 3) հելլենական ու արամեական
 - 4) հելլենական ու պարթևական
7. Ո՞ւմ հրամանով է սպանվել Գրիգորիսը.
 - 1) Շապուհ II Երկարակյացի
 - 2) Աղծնիքի բղեշխ Բակուրի
 - 3) մագքթաց թագավոր Սանեսանի
 - 4) Տիրան արքայի
8. Հայոց ո՞ր սպարապետն էր Վաղարշապատից դուրս մղել մագքութներին.
 - 1) Արտավազդ Մամիկոնյանը
 - 2) Մուշեղ Մամիկոնյանը
 - 3) Վաչե Մամիկոնյանը
 - 4) Օտա Ամատունին

9. 336 թ. նախարարներից ովքեր անցան պարսիկների կողմը.

- 1) Մերուժան Արծրունին ու Վահան Մամիկոնյանը
- 2) Բզնունյաց Դատաբեն նախարարն ու Աղձնիքի Բակուր բղեշխը
- 3) Արտավազդ Մամիկոնյանն ու Դատաբեն Բզնունին
- 4) Աղձնիքի Բակուր բղեշխն ու Մերուժան Արծրունին

10. Խոսրով Կոտակի օրոք ովքեր էին անչափահաս Արտավազդ սպարապետի փոխարեն ստանձնել հայոց զորավարությունը.

- 1) Շահակը և Փառեն Աշտիշատեցին
- 2) Շիրակի իշխան Արշավիր Կամսարականը և Անդովկ Սյունին
- 3) Գնեւն ու Տիրիթը
- 4) Բատ Սահառունին ու Մուշեղ Մամիկոնյանը

11. Հուսիկի նահատակությունից հետո ովքեր դարձան եպիսկոպոսապետեր.

- 1) Վրթանեսը, ապա Անդովկ Սյունին
- 2) Փառեն Աշտիշատեցին, ապա Շահակը՝ Աղբիանոսի տոհմից
- 3) Գրիգորիսը, ապա Ներսես Մեծը
- 4) Վրթանեսը, ապա Շահակը՝ Աղբիանոսի տոհմից

12. Ո՞ր տոհմերը մեծ կորուստներ կրեցին Տիրանի օրոք.

- 1) Մամիկոնյան և Արծրունի
- 2) Արծրունի և Ռշտունի
- 3) Կամսարական ու Բագրատունի
- 4) Ամատունի ու Ռշտունի

13. Ո՞ւմ դուստրն էր հայոց թագուհի Փառանձեմը.

- 1) Արշավիր Կամսարականի
- 2) Անդովկ Սյունու
- 3) Մերուժան Արծրունու
- 4) Արտավազդ Մամիկոնյանի

14. Հայոց եկեղեցու առաջին ժողովը գումարվել է՝

- 1) Շահապիվանում
- 2) Դվինում
- 3) Աղունում
- 4) Աշտիշատում

15. Ովքեր կործանեցին Արշակավանը.

- 1) հռոմեական զորքերը
- 2) ապստամբած շինականները
- 3) պարսից զորքերը
- 4) թագավորից դժգոհ նախարարները

16. Ո՞ր պատմիչն է 363 թ. կնքված հռոմեա-պարսկական պայմանագիրն անվանել «ամոթալի».

- 1) Բուզանդ
- 2) Արիանոս
- 3) Ամմիանոս
- 4) Ապպիանոս

17. Ո՞ր բերդում էր բանտարկվել ձերբակալված Արշակ II-ը.

- 1) Անգեղ
- 2) Խոր Վիրապ
- 3) Անհուշ
- 4) Արտագերս

18. Քանի՞ զորականներով էր Արտագերսում ամրացել Փառանձեմ թագուհին.

- | | |
|-------------|-------------|
| 1) 10 հազար | 3) 8 հազար |
| 2) 6 հազար | 4) 11 հազար |

19. Ո՞ր բերդում պահվող Արշակունյաց գանձերին տեր կանգնեց Պապ թագավորը.

- | | |
|----------|-------------|
| 1) Անգեղ | 3) Արտագերս |
| 2) Անի | 4) Դարույնք |

20. Ո՞ր լեռան ստորոտին էր Ձիրավի դաշտը.

- | | | | |
|-----------|----------|-----------|---------|
| 1) Արագած | 2) Քարքե | 3) Արարատ | 4) Նպատ |
|-----------|----------|-----------|---------|

21. Ո՞վ էր Արշակ II-ի եղբայրը, որին սպանել էին Հռոմում՝ Հայաստանին ահաբեկելու նպատակով.

- | | | | |
|----------|-----------|------------|-----------|
| 1) Գնեղը | 2) Տրդատը | 3) Խոսրովը | 4) Տիրիթը |
|----------|-----------|------------|-----------|

22. Արշակ II-ի զորքը որտեղ հաղթանակ տարավ հռոմեացիների նկատմամբ.

- | | |
|---------------|----------------|
| 1) Ասորիքում | 3) Մծբինի մոտ |
| 2) Վրաստանում | 4) Տիգրանի մոտ |

23. Ո՞ր պատմիչն է նկարագրում Արշակ II-ի ու Շապուհի՝ Տիգրանում հանդիպումը, որի ժամանակ պարսից արքան հողով ու ջրով փորձում է հայոց արքային.

- | | |
|-------------------|---------------------|
| 1) Եղիշեն | 3) Փավստոս Բուզանդը |
| 2) Ղազար Փարպեցին | 4) Մովսես Խորենացին |

24. Ո՞վ է ձերբակալել Մերուժան Արծրունուն.

- | | |
|-----------------------|----------------------|
| 1) Մուշեղ Մամիկոնյանը | 3) Խորեն Խորխոռունին |
| 2) Սմբատ Բագրատունին | 4) Վասակ Մամիկոնյանը |

25. Գանձակի մոտ կռվում հայոց զորքը ինչ բացականչություններով է նետվել մարտի.

- 1) «Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն»
- 2) «Հանուն հայոց աշխարհի ու արքայի»
- 3) «Քաջ Արշակի համար»
- 4) «Քաջ Մուշեղի համար»

26. Ո՞վ էր հաջորդել Ներսես Մեծ կաթողիկոսին հայրապետի պաշտոնում.

- | | |
|----------------------|---------------------|
| 1) Հուսիկ-Շահակը | 3) Սահակ Պարթևը |
| 2) Փառեն Աշտիշատեցին | 4) Վրթանես Ա Պարթևը |

27. Որքան էր Պապի շքախումբը, երբ նա հռոմեացիների ծուղակն ընկավ.

- | | |
|----------------|-----------------|
| 1) 200-հոգանոց | 3) 1400-հոգանոց |
| 2) 300-հոգանոց | 4) 6000-հոգանոց |

28. Ո՞ր կայսեր հրամանով Պապին դավադրորեն սպանեցին.

- | | |
|--------------------|-----------------|
| 1) Կոստանդիանոս II | 3) Վաղես |
| 2) Մորիկ | 4) Հուստինիանոս |

- 29. Հայ Արշակունի զոր թագավորն է հայոց կաթողիկոս դարձրել Սահակ Պարթևին.**
- 1) Արշակ III 2) Խոսրով IV 3) Արտաշէս 4) Վռամշապուհ
- 30. Ո՞ւմ հետ է ամուսնացել Արշակ III-ը.**
- 1) Փառանձեմի 3) Վարազդուխտի
2) Աշխենի 4) Խոսրովիդուխտի
- 31. Ո՞վ է հաջորդել Պապ թագավորին.**
- 1) Արշակ III-ը 3) Վարազդատը
2) Վաղարշակը 4) Վռամշապուհը
- 32. Մանվել Մամիկոնյանի հրամանով ո՞վ մահապատժի ենթարկվեց.**
- 1) Վահան Մամիկոնյանը 3) Բատ Սահառունին
2) Վասակ Սյունին 4) Մերուժան Արծրունին
- 33. Ո՞ւմ որդին էր Սահակ Պարթևը.**
- 1) Վրթանեսի 3) Ներսես Մեծի
2) Հուսիկ կաթողիկոսի 4) Արիստակեսի
- 34. Պարսից զոր արքայի համաձայնությունն է ստանում Սահակ Պարթևը Համազասպ Մամիկոնյանին սպարապետ նշանակելու հարցում.**
- 1) Շապուհ III-ի 3) Հազկերտ I-ի
2) Վռամ IV-ի 4) Հազկերտ II-ի
- 35. Ո՞վ է գլխավորել Շահապիվանի եկեղեցական ժողովը.**
- 1) Սահակ Պարթևը 3) Գյուտ կաթողիկոսը
2) Հովսեփ Ա Վայոցձորցի 4) Ներսես Ա Պարթևը
- 36. Ո՞ր աղանդավորների դեմ է պատիժներ սահմանել Շահապիվանի ժողովը.**
- 1) մազդեզականների 3) պավլիկյանների
2) նեստորականների 4) մծղնեականների
- 37. Ո՞վ էր Վարդանանց ապստամբության ժամանակ Այրարատում մնացած գնդի հրամանատարը.**
- 1) Վարդան Մամիկոնյանը 3) Վասակ Սյունին
2) Ներշապուհ Արծրունին 4) Խորեն Խորխոռունին
- 38. Ո՞վ էր Վարդանանց ապստամբության ժամանակ Աղվանք և Ճորա պահակ ներխուժած պարսիկների առաջխաղացումը կասեցնելու նպատակով արշաված գնդի հրամանատարը.**
- 1) Վարդան Մամիկոնյանը 3) Վասակ Սյունին
2) Ներշապուհ Արծրունին 4) Խորեն Խորխոռունին

39. Ո՞ւմ է Հազկերտ II-ը պատանդ պահում Տիգրանում.

- 1) Վահան Ամատունուն և Գուգարքի բղեշխ Աշուշային
- 2) Գուգարքի բղեշխ Աշուշային և Վասակ իշխանի որդիներին՝ Բաբիկին ու Ատրներսեհին
- 3) Ներշապուհ Արծրունուն և Դատաբեն Բզնունուն
- 4) Վասակ իշխանի որդիներին՝ Բաբիկին ու Ատրվշնասային և Աղծնիքի բղեշխ Բակուրին

40. Անգղ ավանի զայրացած հայ բնակչությունը ո՞ւմ գլխավորությամբ հարձակվեց հայոց եկեղեցիները ատրուշանների վերածող պարսիկ մոզերի վրա.

- 1) Սահակ Պարթևի
- 2) Հովսեփ կաթողիկոսի
- 3) Ղևոնդ Երեցի
- 4) Գյուտ կաթողիկոսի

41. Խաղխաղի ճակատամարտից հետո որտեղ են հայերը ջախջախում պարսիկներին.

- 1) Ճարմանայում
- 2) Ակոռիում
- 3) Ճորա պահակում
- 4) Տմորիքում

42. Քանի՞ հայ նախարարներ են զոհվում Վարդան Մամիկոնյանի հետ Ավարայրի ճակատամարտում.

- 1) 5
- 2) 7
- 3) 8
- 4) 10

43. Ո՞վ էր Վահանանց ապստամբական կառավարության կողմից սպարապետ նշանակվել.

- 1) Վարդ Մամիկոնյանը
- 2) Վասակ Մամիկոնյանը
- 3) Վահան Մամիկոնյանը
- 4) Սահակ Բագրատունին

44. Ո՞վ էր Վահանանց ապստամբական կառավարության կողմից մեծ դատավոր նշանակվել.

- 1) Բաբգեն Ա-ն
- 2) Հովսեփ Ա Վայոցձորցին
- 3) Գյուտ Ա Արաիեզացին
- 4) Հովհաննես Ա Մանդակունին

45. Ո՞ր ճակատամարտում են զոհվել Սահակ Բագրատունին և Վասակ Մամիկոնյանը.

- 1) Ներսեհապատի
- 2) Ակոռիի
- 3) Ճարմանայի
- 4) Խաղխաղի

46. Ո՞ր գավառում էին գտնվում Վարշակի Ջերմուկները.

- 1) Շաղագոմ
- 2) Բասեն
- 3) Վանանդ
- 4) Ծաղկոտն

47. Ո՞ր գավառում էր գտնվում Նվարսակ գյուղը.

- 1) Զարևանդ
- 2) Հեր
- 3) Արտազ
- 4) Բասեն

48. Ո՞ւմ որդին էր Վահան Մամիկոնյանը.

- 1) Վարդան Մամիկոնյանի
- 2) Հմայակ Մամիկոնյանի
- 3) Համազասպ Մամիկոնյանի
- 4) Վասակ Մամիկոնյանի

49. Պերոզի օրոք ո՞ւմ դեմ բանսարկություններ սկսվեցին.

- 1) Սահակ Բագրատունու և Հովհաննես Մանդակունու
- 2) Գյուտ կաթողիկոսի և Վահան Մամիկոնյանի
- 3) Վազգեն բղեշխի և Շուշանիկի
- 4) Վասակ Մամիկոնյանի և Հովհաննես Մանդակունու

50. Ինչպե՞ս էր Գյուտ կաթողիկոսը պատասխանել Պերոզի՝ կրոնափոխ լինելու առաջարկին.

- 1) ընդունել էր զրադաշտականությունը և հսկայական կալվածքներ ստացել
- 2) առերես ընդունել էր և վերադարձել հայրենիք
- 3) մերժել էր և մահապատժի ենթարկվել
- 4) մերժել էր և վերադարձել հայրենիք

51. Ո՞վ էր գլխավորում հայ ուրացող նախարարներին Վահանանց պատերազմի նախօրեին.

- 1) Բատ Սահառունին
- 2) Մերութան Արծրունին
- 3) Վասակ Սյունին
- 4) Գաղիշո մաղխազը

52. Ո՞ւմ որդին էր Վազգեն բղեշխը.

- 1) Բակուր բղեշխի
- 2) Վախթանգ Գորգասալի
- 3) Իշխան Աշուշայի
- 4) Իշխան Գաղիշոյի

53. Ո՞վ էր պարսիկ մարզպանը 481 թ.

- 1) Սուրենը
- 2) Ատրվշնասալը
- 3) Ատրներսեհը
- 4) Հազարավուխտը

54. Ո՞ւր փախավ պարսիկ մարզպանը 481 թ.

- 1) Տիզբոն
- 2) Անհուշ
- 3) Ատրպատական
- 4) Վան

55. Ո՞ր գավառում էր հանգստանում հայոց զորքը Ներսեհապատի ճակատամարտից հետո.

- 1) Տարոն
- 2) Ծաղկոտն
- 3) Արտազ
- 4) Շաղագոմ

56. Ո՞վ էր գլխավորում 484 թ. Հայաստան ներխուժած պարսկական զորքերին.

- 1) Ատրվշնասալը
- 2) Հազարավուխտը
- 3) Նիխորը
- 4) Սուրենը

57. Վահան Մամիկոնյանի ու Նիխորի միջև պայմանագիրը որտե՞ղ է կնքվել.

- 1) Ավարայրում
- 2) Դվինում
- 3) Արտաշատում
- 4) Նվարսակում

58. Ո՞ր արքայի օրոք է ընդունվել «Սահմանադրութիւն կանոնական»-ը.

- | | |
|---------------|---------------------|
| 1) Վռամշապուհ | 3) Տրդատ III Մեծ |
| 2) Արշակ II | 4) Վաչագան Բարեպաշտ |

59. Ո՞ր աղանդավորների գործողություններն է դատապարտել Դվինի I Ժողովը.

- | | |
|-------------------|-------------------|
| 1) մծղնեականների | 3) արիոսականների |
| 2) մազդեզականների | 4) նեստորականների |

60. Ո՞վ էր գլխավորում 571 թ. հակապարսկական ապստամբությունը.

- | | |
|-----------------------|-----------------------|
| 1) Վասակ Մամիկոնյանը | 3) Մանվել Մամիկոնյանը |
| 2) Վարդան Մամիկոնյանը | 4) Մուշեղ Մամիկոնյանը |

61. Ո՞ր նահանգներն էին մտնում Հայոց արևելից կողմանց տարածքի մեջ.

- | | |
|--------------------------------|-----------------------|
| 1) Փայտակարանն ու Վասպուրականը | 3) Արցախն ու Ուտիքը |
| 2) Սյունիքն ու Գուգարքը | 4) Սյունիքն ու Ուտիքը |

62. Ո՞վ էր գահ բարձրացել Հայոց արևելից կողմերում վերականգնված թագավորությունում.

- | | |
|----------------------|----------------------|
| 1) Վարդ Պատրիկը | 3) Վաչագան Բարեպաշտը |
| 2) Արտաշես Բարեպաշտը | 4) Սմբատ Բագրատունին |

63. Թվարկվածներից ո՞րն է ստեղծվել Վաչագան Բարեպաշտի կողմից.

- | | |
|--------------------------------|------------------------------|
| 1) «Հավատո հանգանակ» | 3) «Սահմանք իմաստասիրութեան» |
| 2) «Սահմանադրութիւն կանոնական» | 4) «Եղծ աղանդոց» |

64. Ո՞վ էր Դվինի I Ժողովը հրավիրած հայոց կաթողիկոսը.

- | | |
|----------------------------|---------------|
| 1) Հովհաննես Ա Մանդակունին | 3) Բաբգեն Ա-ն |
| 2) Հովհաննես Բ Գաբեղենացին | 4) Կոմիտասը |

65. Ո՞վ էր սպանել հայոց իշխան Համազասպին.

- | | |
|-------------|------------|
| 1) Ակակիոսը | 3) Սիտտասը |
| 2) Բուզեսը | 4) Սուրենը |

66. Ո՞վ է դավադրաբար սպանել Հովհաննես Արշակունուն.

- | | |
|------------|-------------|
| 1) Սիտտասը | 3) Ակակիոսը |
| 2) Բուզեսը | 4) Սուրենը |

67. Որքան էր պարսիկ զորավար Միհրանի զորքի թվաքանակը Խաղամախյայի ճակատամարտում.

- | | |
|-------------|-------------|
| 1) 15 հազար | 3) 30 հազար |
| 2) 20 հազար | 4) 35 հազար |

68. Բյուզանդական ո՞ր կայսրից օգնություն խնդրեց պարսից արքա Խոսրով II-ը.

- | | |
|----------------|--------------------|
| 1) Վաղեսից | 3) Հուստինիանոսից |
| 2) Մավրիկիոսից | 4) Կոստանդին II-ից |

69. Ումից էր օգնություն խնդրել Վահրամ Չուբինը.

- | | |
|------------------------|-------------------|
| 1) Մուշեղ Մամիկոնյանից | 3) Մորիկ կայսրից |
| 2) Վարդան Կրտսերից | 4) Հուստինիանոսից |

70. Թվարկվածներից ո՞վ չի մասնակցել Խոսրով II–ի գումարած Տիգրանի ժողովին.

- | | |
|------------------------|---------------------|
| 1) Կոմիտաս Մամիկոնյանը | 3) Մաթեոս Ամատունին |
| 2) Սմբատ Բագրատունին | 4) Դավիթ Սահառունին |

71. Ո՞րն էր հայոց իշխան Թեոդորոս Ռշտունու նստավայրը.

- | | |
|-----------|-------------|
| 1) Արծափը | 3) Բագարանը |
| 2) Վանը | 4) Աղթամարը |

72. Ո՞վ է հաջորդել հայոց իշխան Թեոդորոս Ռշտունուն.

- | | |
|-------------------------|-----------------------|
| 1) Համազասպ Մամիկոնյանը | 3) Գրիգոր Մամիկոնյանը |
| 2) Դավիթ Սահառունին | 4) Սմբատ Բագրատունին |

73. Ո՞վ է ստանձնել երկրի զորավարությունը Մծեժ Գնունուց հետո.

- | | |
|----------------------|----------------------|
| 1) Դավիթ Սահառունին | 3) Թեոդորոս Ռշտունին |
| 2) Սմբատ Բագրատունին | 4) Սահակ Բագրատունին |

74. Ո՞ր ճակատամարտում արաբները ջախջախիչ հարված հասցրին պարսիկներին.

- | | |
|-------------|--------------|
| 1) Յարմուքի | 3) Կոտմանի |
| 2) Տիգրանի | 4) Քաղխսիայի |

75. Գրիգոր Մամիկոնյանը ո՞ր եկեղեցու կառուցումն է իրականացնում.

- | | |
|---------------------|--------------|
| 1) Արուճի Ս. Գրիգոր | 3) Ջվարթնոցի |
| 2) Քասաղի Ս. Գրիգոր | 4) Թալինի |

76. Նշվածներից ո՞վ չի եղել հայոց իշխան.

- | | |
|-------------------------|-----------------------|
| 1) Համազասպ Մամիկոնյանը | 3) Արտավան Արշակունին |
| 2) Աշոտ Բագրատունին | 4) Ներսեհ Կամսարականը |

77. Ո՞վ է գլխավորել 703 թ. հակաարաբական ապստամբությունը.

- | | |
|----------------------|------------------------|
| 1) Սմբատ Բագրատունին | 3) Բագարատ Բագրատունին |
| 2) Աշոտ Բագրատունին | 4) Դավիթ Բագրատունին |

78. Ո՞ր բերդաքաղաքն էր իր նստավայրը դարձրել Աշոտ Մսակերը.

- | | |
|-------------|------------|
| 1) Բագավան | 3) Նկան |
| 2) Արտագերս | 4) Բագարան |

79. Ո՞վ էր հայոց իշխանն ու սպարապետը 748–750 թթ. ապստամբության սկզբին.

- | | |
|-------------------------|------------------------|
| 1) Արտավազդ Մամիկոնյանը | 3) Բագարատ Բագրատունին |
| 2) Գրիգոր Մամիկոնյանը | 4) Աշոտ Բագրատունին |

80. Խալիֆայությունը ում ճանաչեց «Լեռան» կառավարիչ.

- 1) Գուրգենին 2) Հովհաննիս 3) Սմբատին 4) Աշոտին

81. Արճեշի ճակատամարտից հետո ապստամբները Մուշեղ Մամիկոնյանի գլխավորությամբ շարժվում են դեպի.

- 1) Սյունիք 3) Կոզովիտ գավառ
2) Եգերաց աշխարհ 4) Բագրևանդ գավառ

82. Ո՞ր ամրոցում ամրացավ Աշոտ Արծրունին՝ արաբներին դիմադրելու համար.

- 1) Երնջակ 2) Արտագերս 3) Նկան 4) Կապույտ

83. Բուդայի 15 000–անոց զորքի դեմ Գուրգեն Արծրունին կռվում էր.

- 1) 400 ռազմիկներով 3) 700 ռազմիկներով
2) 600 ռազմիկներով 4) 900 ռազմիկներով

84. Որքան է տևել Քթիշ ամրոցի հերոսական պաշտպանությունը.

- 1) մոտ 1 տարի 3) մոտ 5 ամիս
2) մոտ 2 տարի 4) մոտ 6 ամիս

85. Ո՞ր գավառում էր գտնվում Դողս գյուղը.

- 1) Շիրակ 3) Բագրևանդ
2) Արագածոտն 4) Վանանդ

86. Բագրատունի ճոր արքայի օրոք է ստեղծվել Վասպուրականի թագավորությունը.

- 1) Սմբատ I 2) Սմբատ II 3) Աշոտ II 4) Աբաս

87. Ի՞նչ որոշում է ընդունել Ջաքարիա Չափեցու նախաձեռնությամբ հրավիրված հայ իշխանների հատուկ ժողովը.

- 1) հայոց իշխանաց իշխան Աշոտ Բագրատունու որդուն հռչակել հայոց թագավոր
2) Հայաստանի թագավորությունը ճանաչելու խնդրանքով դիմել բյուզանդական Վասիլ I կայսրին
3) հայոց իշխանաց իշխան Աշոտ Բագրատունու որդի Սմբատին թագավոր ճանաչելու խնդրանքով դիմել խալիֆին
4) հայոց իշխանաց իշխան Աշոտ Բագրատունուն հռչակել հայոց թագավոր

88. Հայաստանում ճոր իշխանական տունն առավել հմտորեն օգտվեց խալիֆայության թուլացումից.

- 1) Բագրատունիների 3) Սյունիների
2) Արծրունիների 4) Մամիկոնյանների

89. Ի՞նչ որոշում ընդունեց 869 թ. հայ իշխանների հատուկ ժողովը.

- 1) Աբասին ճանաչել սպարապետ
2) Գևորգ Գառնեցուն ճանաչել կաթողիկոս
3) թագ ուղարկել Վասիլ I–ին
4) Աշոտ Բագրատունուն հռչակել հայոց թագավոր

90. Սաջյան ամիրայի զորքերը 894 թ. իր բնակավայրի մոտ պարտություն կրեցին հայկական զորքերից.

- 1) Բերդուսի 2) Դվինի 3) Դոդս գյուղի 4) Երնջակ բերդի

91. Յուսուֆն ում թագադրեց Վասպուրականի թագավոր.

- 1) Սենեքերիմ Արծրունուն 3) Աշոտ Արծրունուն
2) Աշոտ Բագրատունուն 4) Գագիկ Արծրունուն

92. Որտեղ էր ամրացել Սմբատ I-ը Յուսուֆի արշավանքի ժամանակ.

- 1) Կապույտ բերդում 3) Երնջակում
2) Արտագերտում 4) Նախճավանում

93. Յուսուֆը Սմբատին ինքն իր տարավ, որպեսզի նա բերդի պաշտպաններին զենքը վայր դնելու հրաման արձակի.

- 1) Կապույտ բերդ 3) Դվինի բերդ
2) Երնջակ բերդ 4) Կարսի բերդ

94. Սևանի ճակատամարտում արաբական զորքերի հրամանատարն էր.

- 1) Աբուսեթը 2) Յուսուֆը 3) Բեշիրը 4) Ավշինը

95. Հայոց իր կաթողիկոսն է նստավայր դարձրել Արգինայի վանքը.

- 1) Հովհաննես Դրասխանակերտցին 3) Գևորգ Գառնեցին
2) Զաքարիա Ձագեցին 4) Անանիա Մոկացին

96. Բագրատունի իր արքան է Անին դարձրել մայրաքաղաք.

- 1) Սմբատ II 2) Աշոտ III 3) Աշոտ II 4) Գագիկ I

97. Բագրատունի իր արքայի օրոք է պետությունը հասել իր հզորության ու ծաղկման գագաթնակետին.

- 1) Գագիկ I-ի 2) Աշոտ II-ի 3) Աշոտ III-ի 4) Սմբատ II-ի

98. Հայոց իր թագավորի օրոք կառուցվեց Անի քաղաքի պարիսպների երկրորդ գիծը.

- 1) Սմբատ I-ի 2) Սմբատ II-ի 3) Աշոտ III-ի 4) Գագիկ I-ի

99. Կատրամիդե թագուհու պատվերով կառուցվել է՝

- 1) Անիի Կաթողիկե եկեղեցին 3) Հաղպատի վանքը
2) Սանահինի վանքը 4) Գագկաշեն եկեղեցին

100. Խոսրովանույշ թագուհու հիմնած վանքերն են.

- 1) Հաղպատն ու Գոշավանքը 3) Մարմաշենն ու Այրիվանքը
2) Գոշավանքն ու Նորավանքը 4) Սանահինն ու Հաղպատը

101. Արիեստագործության իր ճյուղից են առանձնացել կոշկակարությունը, մորթեգործությունը, գրակագործությունը.

- 1) հյուանություն 3) մանածագործություն
2) կաշեգործություն 4) մետաղագործություն

102. Քաղաքներում տնտեսության դր ճյուղերն էին բարեկեցության հիմնական աղբյուրը.

- 1) երկրագործությունն ու անասնապահությունը
- 2) այգեգործությունն ու անասնապահությունը
- 3) արհեստներն ու առևտուրը
- 4) բանջարաբուծությունն ու անասնապահությունը

103. Ո՞ւմ օրոք է իր հզորության գագաթնակետին հասել Տաշիր-Ձորագետի թագավորությունը.

- 1) Կյուրիկե I-ի
- 2) Գագիկ Կյուրիկյանի
- 3) Դավիթ Անհողինի
- 4) Կյուրիկե II-ի

104. Ո՞րն էր Անիի Բագրատունիներին ենթակա թագավորություններից ամենաընդարձակը.

- 1) Սյունիք
- 2) Տաշիր-Ձորագետ
- 3) Վանանդ
- 4) Վասպուրական

105. Բագրատունի դր արքայի օրոք է առաջացել Վանանդի թագավորությունը.

- 1) Աբաս
- 2) Գագիկ I
- 3) Սմբատ II
- 4) Աշոտ III

106. Ո՞ր տարածքները բաժին հասան Գագիկ I-ի կրտսեր որդի Աշոտին.

- 1) Անին ու Շիրակը
- 2) Գուգարքն ու Խաչենը
- 3) Անին ու Գուգարքը
- 4) Սևանի ավազանը, Գուգարքը և որոշ այլ գավառներ

107. Բյուզանդական դր կայսրը Սենեքերիմ Արծրունուն հարկադրեց Վասպուրականը հանձնել կայսրությանը.

- 1) Վասիլ I-ը
- 2) Վասիլ II-ը
- 3) Հովհաննես Կոմնենոսը
- 4) Կոստանդին Մոնոմախը

108. Սկզբում դրն էր Սյունիքի թագավորության կենտրոնը.

- 1) Սյունի ավանը
- 2) Կապանը
- 3) Հալիծորը
- 4) Տաթևը

109. Որտե՞ղ են ապրել սելջուկ-թուրքերի նախնիները.

- 1) Հայաստանից հյուսիս ընկած տարածքներում և Ատրպատականում
- 2) Չինաստանի և Պարսկաստանի միջև ընկած տափաստաններում
- 3) Ալթայից Չինաստան ընկած տարածքներում
- 4) Ալթայից Միջին Ասիա ընկած տարածքում

110. Ո՞վ ճնշեց 1259 թ. հակամոնղոլական ապստամբությունը.

- 1) Հուլավու խանը
- 2) Բաթու խանը
- 3) Չարմաղանը
- 4) Մանգու խանը

111. Մոնղոլները 1236 թ. ում գլխավորությամբ ներխուժեցին Հայաստան.

- 1) Չինգիզ խանի
- 2) Չարմաղանի
- 3) Գթլմուշի
- 4) Իբրահիմի

112. 1220 թ. մոնղոլական և հայ-վրացական բանակների միջև վճռորոշ ճակատամարտը տեղի է ունեցել.

- 1) Ծումբ գյուղի մոտ
- 2) Մառիի մոտ
- 3) Կոտմանի դաշտում
- 4) Բասենի մոտ

113. Ո՞րն էր Վահրամյանների իշխանության կենտրոնը.

- 1) Գագը
- 2) Դվինը
- 3) Թմուկ բերդը
- 4) Ամբերդը

114. Թամար թագուհու օրոք ամիրսպասալարի պաշտոն է վարել.

- 1) Զաքարե Զաքարյանը
- 2) Իվանե Զաքարյանը
- 3) Աբասը
- 4) Վահրամ Զաքարյանը

115. Դիմանալով սելջուկյան արշավանքներին՝ որ թագավորությունները շարունակեցին պահպանել իրենց գոյությունը.

- 1) Սյունիքի և Վասպուրականի
- 2) Սյունիքի և Տաշիր-Ձորագետի
- 3) Տաշիր-Ձորագետի և Վասպուրականի
- 4) Վանանդի և Վասպուրականի

116. Կիլիկիայի որ մասն էր զբաղեցնում Քարուտ Կիլիկիան.

- 1) արևմտյան
- 2) հարավային
- 3) հյուսիսային
- 4) արևելյան

117. Կիլիկիայի որ մասն էր զբաղեցնում Լեռնային Կիլիկիան.

- 1) հարավարևելյան
- 2) հյուսիսարևելյան
- 3) հյուսիսարևմտյան
- 4) հարավարևմտյան

118. Ո՞ր ամրոցում էր հաստատվել Հեթումյան իշխանական տունը.

- 1) Լամբրոն
- 2) Կոռոմոզոլ
- 3) Վահկա
- 4) Կոռիկոս

119. Բերված ժամանակահատվածներից որն է վերաբերում Գող Վասիլի իշխանությանը.

- 1) 1085–1115 թթ.
- 2) 1087–1117 թթ.
- 3) 1075–1097 թթ.
- 4) 1082–1117 թթ.

120. Օշին իշխանը ում հետ էր ամուսնացած.

- 1) Ապլլարիպ Արծրունու քրոջ
- 2) Ապլլարիպ Արծրունու դստեր
- 3) Փիլարտոս Վարաժնունու դստեր
- 4) Գող Վասիլի դստեր

121. Որքան էր Կիլիկյան Հայաստանի բանակը Թորոս II-ի օրոք.

- 1) 40000
- 2) 80000
- 3) 30000
- 4) 60000

122. Հայոց որ կաթողիկոսն է թագավոր օծել Լևոն II Ռուբինյանին.

- 1) Գրիգոր Զ Ապիրատ
- 2) Կոստանդին Ա Բարձրաբերդցի
- 3) Հովհաննես Զ Սսեցի
- 4) Ներսես Դ Կլայեցի

123. Ռայմոնդ-Ռուբենի գործունեությունից դժգոհ լինելով՝ Լևոնը փոխեց իր որոշումը և Կիլիկիայի թագաժառանգ նշանակեց՝

- 1) Ռուբենին
- 2) Զաբելին
- 3) Ատան իշխանին
- 4) Ֆիլիպին

124. Ո՞ր կայսրը խեղդվեց Կիլիկիայի գետերից մեկում.

- | | |
|--------------|------------------------|
| 1) Վասիլ I-ը | 3) Ֆրիդրիխ Շիկամորուսը |
| 2) Կոմնենոսը | 4) Հերակլը |

125. Խաչակրաց առաջին արշավանքի ժամանակ խաչակիրները Դաշտային Կիլիկիայի ո՞ր շրջանները խլեցին սելջուկներից.

- | | |
|--------------|--------------------|
| 1) հարավային | 3) արևմտյան |
| 2) արևելյան | 4) հյուսիսարևմտյան |

126. Ո՞ւմ որդին էր Թորոս I-ը.

- | | | | |
|---------------|----------|-------------|-------------|
| 1) Կոստանդինի | 2) Մլեհի | 3) Լևոն I-ի | 4) Ստեփանեի |
|---------------|----------|-------------|-------------|

127. Ո՞վ է հաջորդել Օշին թագավորին.

- | | |
|---------------|----------------------|
| 1) Լևոն III-ը | 3) Կոստանդին II-ը |
| 2) Լևոն IV-ը | 4) Գվիդոն Լուսինյանը |

128. Թվարկված կաթողիկոսներից ո՞վ է եղել Ջաբելի երեք խնամակալներից մեկը.

- | | |
|---------------------|----------------------|
| 1) Մեսրոպ Արտազեցին | 3) Կիրակոս Վիրապեցին |
| 2) Գրիգոր Զ Ապիրատը | 4) Հովհաննես Սսեցին |

129. Հիվանդախնամների միաբանությունը որքան հեծյալ զինվոր էր պարտավորվել ամեն տարի տրամադրել կիլիկյան հայոց բանակին.

- | | | | |
|---------|--------|---------|---------|
| 1) 1400 | 2) 400 | 3) 4000 | 4) 1000 |
|---------|--------|---------|---------|

130. Կիլիկյան արքունիքում ո՞վ էր ղեկավարում օտար երկրների ներկայացուցիչների հետ բանակցությունները.

- | | |
|------------|---------------|
| 1) պայլ | 3) սենեսկալ |
| 2) կանցլեր | 4) գունդստաբլ |

131. Կիլիկյան արքունիքում ո՞վ էր հետևում կարգ ու կանոնի պահպանմանը.

- | | |
|--------------|-------------|
| 1) սենեսկալը | 3) թագադիրը |
| 2) պայլը | 4) կանցլերը |

132. Ո՞րն էր Աղվանից եկեղեցու կաթողիկոսանիստ կենտրոնը.

- | | |
|--------------------|-------------------|
| 1) Գանձասարի վանքը | 3) Ամարասի վանքը |
| 2) Տաթևի վանքը | 4) Սանահինի վանքը |

133. Կիլիկիայի ո՞ր քաղաքում էր կաթողիկոսական աթոռը XV դարի սկզբին.

- | | |
|-----------|-------------|
| 1) Սիս | 3) Ադանա |
| 2) Տարսոն | 4) Մամեստիա |

134. Ո՞ր քաղաքի մոտ է հիմնվել Նոր Ջուղա բնակավայրը.

- | | |
|------------|-----------|
| 1) Թավրիզ | 3) Թեիրան |
| 2) Արդեբիլ | 4) Սպահան |

135. Ո՞ր պայմանագրով են ավարտվել XVII դ. թուրք-պարսկական պատերազմները.

- | | |
|-----------------|-------------|
| 1) Կասրե-Շիրինի | 3) Ամասիայի |
| 2) Էրզրումի | 4) Թավրիզի |

136. Ո՞ւմ միջև է կնքվել Ամասիայի հաշտության պայմանագիրը.

- 1) Օսմանյան կայսրության և Սասանյան Պարսկաստանի
- 2) Օսմանյան և Սեֆյան տերությունների
- 3) Թուրքիայի և Ատրպատականի միջև
- 4) Ռուսաստանի և Պարսկաստանի միջև

137. Որտե՞ղ է Սմբատ Արծրունին օծվել հայոց թագավոր.

- | | |
|----------------|------------------|
| 1) Գանձասարում | 3) Աղթամարում |
| 2) Վանում | 4) Ս. Էջմիածնում |

138. Ո՞վ է գումարել 1562 թ. Սեբաստիայի եկեղեցական գաղտնի ժողովը.

- | | |
|--------------------------|-----------------------|
| 1) Ստեփաննոս Աղթամարցին | 3) Մխիթար Սեբաստացին |
| 2) Ստեփաննոս Սալմաստեցին | 4) Միքայել Սեբաստացին |

139. Ո՞վ էր գլխավորում 1549 թ. Եվրոպա մեկնած պատվիրակությունը.

- | | |
|--------------------------|-------------------------|
| 1) Ստեփաննոս Սալմաստեցին | 3) Միքայել Սեբաստացին |
| 2) Աբգար Թոխաթեցին | 4) Ստեփաննոս Աղթամարցին |

140. 1562 թ. Վենետիկ ուղարկված պատվիրակության մեջ ովքե՞ր էին ներկայացվում որպես արքայական ծագում ունեցողներ.

- 1) Աբգար դպիրն ու իր որդի Սուլթանշահը
- 2) Աբգար Թոխաթեցին ու Միքայել Սեբաստացին
- 3) Սուլթանշահը և մահտեսի Մուրադը
- 4) Աբգար Թոխաթեցին և մահտեսի Մուրադը

141. Որտե՞ղ է հրավիրվել 1547 թ. գաղտնի խորհրդակցությունը՝ Եվրոպա պատվիրակություն ուղարկելու նպատակով.

- | | |
|-----------------|-----------------|
| 1) Անգեղակոթում | 3) Երևանում |
| 2) Էջմիածնում | 4) Սեբաստիայում |

142. Ո՞ր քաղաքում է Մեսրոպ Մաշտոցը ստեղծել հայոց գրերը.

- | | | | |
|----------|------------|---------|---------------|
| 1) Ուռհա | 2) Սամոսատ | 3) Ամիդ | 4) Վաղարշապատ |
|----------|------------|---------|---------------|

143. Ո՞վ էր Մեսրոպ Մաշտոցի վարքագիրը.

- | | |
|----------------------|-------------------|
| 1) Սահակ Պարթև | 3) Վահան Ամատունի |
| 2) Վարդան Մամիկոնյան | 4) Կորյուն |

144. Ո՞ր նահանգում է Մաշտոցը հիմնել Ամարասի դպրոցը.

- | | |
|----------------|------------|
| 1) Արցախ | 3) Այրարատ |
| 2) Վասպուրական | 4) Սյունիք |

145. Թվով քանիսն էին Մեսրոպ Մաշտոցի ստեղծած նշանագրերը.

- 1) 26 2) 36 3) 39 4) 22

146. Որտեղ է ճգնել Մեսրոպ Մաշտոցը.

- 1) Բալու բերդաքաղաքի մոտ գտնվող Գրման քար կոչված վայրի մերձակա քարայրում
2) Ձորագետի Հաղպատի վանքում
3) Ծովքի Բնաբեղ բերդում
4) Բարձր Հայքի Դարանաղյաց գավառի Սեպուհ լեռան Մանյա Այրք քարայրում

147. Ո՞ր պատմիչի աշխատությունն է ընդգրկում IV դ. սկզբից մինչև 387 թ. ընկած ժամանակաշրջանի հայոց պատմությունը.

- 1) Ագաթանգեղոս 3) Ղազար Փարպեցի
2) Մովսես Խորենացի 4) Փավստոս Բուզանդ

148. Ո՞ր պատմիչն է նկարագրել Վահանանց ապստամբությունը.

- 1) Մովսես Խորենացին 3) Կորյունը
2) Ղազար Փարպեցին 4) Եղիշեն

149. Ո՞ր պատմիչն է նկարագրել հայ ժողովրդի ծանր վիճակը և հերոսական պայքարը Արաբական խալիֆայության տիրապետության դեմ.

- 1) Սեբեոս 3) Հովհան Մամիկոնյան
2) Մովսես Կաղանկատվացի 4) Ղևոնդ Վարդապետ

150. Ո՞վ է «Անշարժ տոմար» կազմելու փորձ արել.

- 1) Հովհաննես Սարկավազը 3) Հովհան Գ Օձնեցին
2) Անանիա Շիրակացին 4) Գրիգոր Զ Ապիրատը

151. Ո՞ւմ ուսուցչապետության օրոք է զարգացման բարձրակետին հասել Նարեկի վարդապետարանը.

- 1) Անանիա Նարեկացու 3) Գրիգոր Նարեկացու
2) Ներսես Մշեցու 4) Հովհաննես Իմաստասերի

152. Ո՞վ է Աղբերց վանքի դպրոցի հիմնադիրը.

- 1) Մխիթար Գոշը 3) Եսայի Նչեցին
2) Ներսես Մշեցին 4) Ներսես Լամբրոնացին

153. Ո՞ր տիպի դպրոցների հիման վրա են ձևավորվել վարդապետարանները.

- 1) ծխական և տաճարային 3) տաճարային և վանական
2) վանական և ծխական 4) աշխարհիկ և ծխական

154. Ո՞վ է հիմնադրել Սկևռայի դպրոցը.

- 1) Կիրակոս Գանձակեցին 3) Սարգիս Պիճակը
2) Ներսես Լամբրոնացին 4) Ներսես Մշեցին

155. Կիլիկյան Հայաստանի վանական դպրոցներից հատկապես հրը նշանակալից դեր ունեցավ.

- | | |
|------------|--------------|
| 1) Սկևռայի | 3) Ակների |
| 2) Մեծքարի | 4) Հոռմկլայի |

156. Անիի վարդապետարանում ո՞վ մշակեց վարդապետական կրթության նոր ծրագիր.

- | | |
|-------------------|-------------------------|
| 1) Մխիթար Գոշը | 3) Ներսես Մշեցին |
| 2) Սամուել Անեցին | 4) Հովհաննես Իմաստասերը |

157. Ո՞ր պատմիչն է կրթություն ստացել Նոր Գետիկի վարդապետարանում.

- | | |
|-----------------------|-----------------------|
| 1) Կիրակոս Գանձակեցին | 3) Առաքել Դավրիժեցին |
| 2) Թովմա Արծրունին | 4) Զաքարիա Քանաքեռցին |

158. Ո՞ր պատմիչի աշխատությունն է ընդգրկում քրիստոնեության ընդունումից մինչև 1265 թ. ընկած ժամանակաշրջանի պատմությունը.

- | | |
|----------------------|-------------------------|
| 1) Ստեփանոս Օրբելյան | 3) Արիստակես Լաստիվերցի |
| 2) Ստեփանոս Տարոնեցի | 4) Կիրակոս Գանձակեցի |

159. Ո՞ր պատմիչի աշխատության շարադրանքն է սկսվում արարչագործությունից և հասնում մինչև 1180 թ.

- | | |
|----------------------|---------------------|
| 1) Սամուել Անեցի | 3) Սմբատ Գունդստաբլ |
| 2) Մատթեոս Ուռհայեցի | 4) Վարդան Արևելցի |

160. Քանի՞ հոդվածից է բաղկացած Դավիթ Ավակատորդու «Դատաստանագիրքը».

- | | | | |
|--------|--------|--------|-------|
| 1) 117 | 2) 171 | 3) 197 | 4) 97 |
|--------|--------|--------|-------|

161. Քանի՞ պարագրաֆից է բաղկացած Գունդստաբլի «Դատաստանագիրքը».

- | | | | |
|--------|--------|--------|--------|
| 1) 117 | 2) 127 | 3) 137 | 4) 171 |
|--------|--------|--------|--------|

162. «Տարերք երկրաչափության» աշխատության հեղինակն է՝

- | | |
|---------------------------------|---------------------|
| 1) Գրիգոր Պահլավունի Մագիստրոսը | 3) Պյութագորասը |
| 2) Էվկլիդեսը | 4) Անանիա Շիրակացին |

163. Ո՞ւմ նախագծով է կառուցվել Անիի Մայր տաճարը.

- | | | | |
|-----------|-----------|-----------|------------|
| 1) Պողոսի | 2) Տրդատի | 3) Մոմիկի | 4) Մանվելի |
|-----------|-----------|-----------|------------|

164. Կիլիկյան Հայաստանում որքան բերդեր կային.

- | | | | |
|--------|--------|--------|--------|
| 1) 120 | 2) 112 | 3) 160 | 4) 240 |
|--------|--------|--------|--------|

165. Հայ տպագրիչներից ո՞վ է տպագրել հայատառ դիֆաղերեն աղոթագիրք.

- | | |
|-----------------------|---------------------------|
| 1) Հակոբ Մեղապարտը | 3) Հովհաննես Քարմատանենցը |
| 2) Խաչատուր Կեսարացին | 4) Աբգար դպիրը |

166. Ո՞ր դպրոցում է ուսանել Չաքարիա Քանաքեռցին.

- | | |
|--------------------|-------------------|
| 1) Ամիրդոլու վանքի | 3) Անտոնի անապատի |
| 2) Հարանց անապատի | 4) Հովհաննավանքի |

167. Ո՞ր դպրոցում էր դասավանդում Ներսես Մոկացին.

- | | |
|-------------------------|----------------------------|
| 1) Ղրիմի Անտոնի անապատի | 3) Սյունյաց Հարանց անապատի |
| 2) Հերմոնի | 4) Մեծոփավանքի |

168. Երևանի Անանիա առաքյալի անապատի դպրոցը հիմնադրել է՝

- | | |
|--------------------|--------------------|
| 1) Անանիա Մոկացին | 3) Ոսկան Երևանցին |
| 2) Գրիգոր Տաթևացին | 4) Մովսես Տաթևացին |

169. Որտեղ է գործել Հարանց անապատի դպրոցը.

- | | |
|---------------|------------------|
| 1) Սկևռայում | 3) Բաղեշում |
| 2) Սյունիքում | 4) Նոր Ջուղայում |

170. Ո՞վ է հիմնադրել Նոր Ջուղայի հայկական տպարանը.

- | | |
|-------------------------|---------------------|
| 1) Խաչատուր Կեսարացին | 3) Աբգար Թոխաթեցին |
| 2) Հովհաննես Թութունջին | 4) Հակոբ Ջուղայեցին |

171. 1616 թ. ո՞ւմ ջանքերով տպագրվեցին «Սաղմոսարան» և «Բժշկարան» գրքերը.

- | | |
|---------------------------|-----------------------|
| 1) Հովհաննես Քարմատանենցի | 3) Խաչատուր Կեսարացու |
| 2) Հովհաննես Թութունջու | 4) Եսայի Նչեցու |

172. «Խառնային» տոմարի գեղեցիկ ու պիտանի» տոմարացույցի առաջին նկարում ինչ է պատկերված.

- 1) հայերեն տպատառերը ձեռքին՝ Աբգար դպիրը և իր որդին՝ Հռոմի պապի և երեք կարդինալների առջև
- 2) Աբգարը կանգնած է Ֆլորենցիայի դոժի և խորհրդականների առջև՝ ընդունելության ժամանակ
- 3) Աբգարը՝ Էջմիածնի Մայր տաճարում
- 4) Աբգարը՝ «Խորհրդավոր ընթրիք» կտավի առջև

173. Հայաստանում XV դարասկզբին թվարկվածներից ո՞րն էր դարձել կրթական կարևոր կենտրոն.

- | | |
|------------------------|----------------------|
| 1) Գլաձորի համալսարանը | 3) Սսի համալսարանը |
| 2) Անիի վարդապետարանը | 4) Տաթևի համալսարանը |

174. Թվարկվածներից ո՞վ չի դասավանդել Էջմիածնի վանական դպրոցում.

- | | |
|------------------------|----------------------|
| 1) Գրիգոր Խլաթեցին | 3) Սիմեոն Ջուղայեցին |
| 2) Մելքիսեդեկ Վժանեցին | 4) Ստեփանոս Լեհացին |

175. 1494 թ. չափածո ներբողում որպես համայն հայոց ազգի լուսատու է որակվում.

- | | |
|-------------------------------|------------------------|
| 1) Երզնկայի Ավագ վանքի դպրոցը | 3) Եղվարդի դպրոցը |
| 2) Այրիվանքի դպրոցը | 4) Կապոսի վանքի դպրոցը |

176. Ո՞վ է իր աշխատության մեջ կարևոր տեղեկություններ հաղորդել Արևելյան Եվրոպայի, Մերձավոր Արևելքի, Իտալիայի, Եգիպտոսի և այլ երկրների հայկական գաղթավայրերի մասին.

- | | |
|-------------------|----------------------|
| 1) Հակոբ Կարնեցին | 3) Գրիգոր Դարանաղցին |
| 2) Թովմա Մեծփեցին | 4) Սիմեոն Լեհացին |

177. Ո՞վ է պատմաաշխարհագրական բնույթի կարևոր աշխատություն գրել Կարնա աշխարհի մասին.

- | | |
|----------------------|-------------------|
| 1) Զաքարիա Քանաքեցին | 3) Հակոբ Կարնեցին |
| 2) Թովմա Մեծփեցին | 4) Սիմեոն Լեհացին |

178. Ո՞ր ականատես պատմիչն է կարևոր տեղեկություններ հաղորդել Օսմանյան կայսրության արևմտյան տարածաշրջանի XVII դ. քաղաքական իրադարձությունների և հայ բնակչության վերաբերյալ.

- | | |
|----------------------|----------------------|
| 1) Թովմա Մեծփեցին | 3) Զաքարիա Քանաքեցին |
| 2) Գրիգոր Դարանաղցին | 4) Առաքել Դավրիժեցին |

179. Թվարկվածներից ո՞ր քաղաքում X դ. վերջին Խաչիկ Ա կաթողիկոսը եպիսկոպոսական թեմ չի հիմնադրել.

- | | |
|------------|------------|
| 1) Սիս | 3) Անտիոք |
| 2) Սուլնդա | 4) Տարսուն |

180. Որտեղ է գտնվել Ծամնդավ բերդաքաղաքը.

- | | |
|--------------|-----------------------|
| 1) Տավուշում | 3) Կիլիկյան Տավրոսում |
| 2) Զավախքում | 4) Հայկական Տավրոսում |

181. Ստորև թվարկված իշխաններից ո՞ւմ հետ չեն համագործակցել խաչակիրները.

- | | |
|-------------|--------------|
| 1) Փիլարտոս | 3) Կոստանդին |
| 2) Օշին | 4) Բազունի |

182. Ստորև տրված պետություններից ո՞րը XII դարավերջին չի եղել Կիլիկիայի հայկական իշխանության թշնամի.

- | | |
|------------------------------|---------------------------------------|
| 1) Բյուզանդական կայսրություն | 3) Եգիպտոսի մամլուքյան սուլթանություն |
| 2) Անտիոքի դքսություն | 4) Իկոնիայի սուլթանություն |

183. Ի՞նչ որոշում կայացրեց Սսի 1361 թ. եկեղեցական ժողովը.

- 1) Հայոց եկեղեցին միացնել կաթոլիկ եկեղեցուն
- 2) ընդունել Քաղկեդոնի երկաթնակության դավանանքը
- 3) Հայոց եկեղեցին միավորել քրիստոնեական մյուս եկեղեցիների հետ
- 4) չեղյալ հայտարարել Սսի և Աղանայի նախորդ եկեղեցական ժողովների որոշումները

184. Ո՞ր նախարարը խոսքով Կոտակի ժամանակ անցավ պարսիկների կողմը.

- | | |
|-----------------------|-----------------------|
| 1) Մերուժան Արծրունին | 3) Դատաբեն Բզնունին |
| 2) Վահան Մամիկոնյանը | 4) Գաղիշո Խորխոռունին |

185. Ո՞ր նահանգի բղեշխը խոսքով Կոտակի ժամանակ անցավ պարսիկների կողմը.

- | | |
|-------------|-----------------|
| 1) Աղձնիքի | 3) Նոր Շիրականի |
| 2) Գուգարքի | 4) Սյունիքի |

186. Հայոց ի՞ր թագավորի ժամանակ էր գործում սպարապետ Վաչե Մամիկոնյանը.

- | | | | |
|-----------------|-------------|----------|--------|
| 1) խոսքով Կոտակ | 2) Արշակ II | 3) Տիրան | 4) Պապ |
|-----------------|-------------|----------|--------|

187. Ո՞ր գավառում էին ապրում Արշակունի թագավորը, թագուհին և թագաժառանգը.

- | | |
|---------------------------|-------------------------|
| 1) Բարձր Հայքի Դարանաղյաց | 3) Այրարատի Ոստան Հայոց |
| 2) Ծովքի Անգեղտուն | 4) Բարձր Հայքի Դերջան |

188. Տրդատ III Մեծը ո՞ւմ էր նշանակել սպարապետ.

- | | |
|--------------------------|--------------------------|
| 1) Վաչե Մամիկոնյանին | 3) Արտավազդ Մամիկոնյանին |
| 2) Արտավազդ Մանդակունուն | 4) Օտա Ամատունուն |

189. Ովքե՞ր են հաջորդել Սահակ Պարթև կաթողիկոսին.

- 1) Սուրմակը և Բրքիշոն
- 2) Փառեն Աշտիշատեցին և Շահակ Աղբիանոսյանը
- 3) Արիստակեսը և Վրթանեսը
- 4) Վրթանեսը և Հովսեփ Վայոցձորցին

190. Ո՞ր պարսիկ պաշտոնյան էր վարում Նվարսակի բանակցությունները.

- | | |
|-----------------|-------------------|
| 1) Ատրվշնասպը | 3) Նիխորը |
| 2) Հազարավուխտը | 4) Վեհմիհրշապուհը |

191. Ինչպե՞ս է կոչվել Տուրուբերանը Հայաստանի 591 թ. բաժանումից հետո.

- | | |
|--------------------|-----------------------|
| 1) Ներքսագոյն Հայք | 3) Խորագոյն Հայք |
| 2) Մեծ Հայք | 4) Մեծ մասն Մեծ Հայոց |

192. Հայ հոգևորականության մի մասը ի՞ր կաթողիկոսից պահանջեց կաթողիկոսական աթոռը Սսից տեղափոխել Էջմիածին.

- | | |
|------------|--------------|
| 1) Ներսես | 3) Գրիգոր |
| 2) Զաքարիա | 4) Ստեփաննոս |

193. Աղթամարի ի՞ր կաթողիկոսներն էին ձգտում տիրանալու Ամենայն հայոց կաթողիկոսի գահին.

- | | |
|------------------------|-----------------------|
| 1) Զաքարիա և Ստեփաննոս | 3) Անանիա և Մովսես |
| 2) Զաքարիա և Կիրակոս | 4) Ներսես և Ստեփաննոս |

194. Ո՞ր վանքը դարձավ Աղվանից կոչվող եկեղեցու կաթողիկոսանիստ կենտրոնը.

- | | |
|--------------|------------|
| 1) Տաթևի | 3) Ամարասի |
| 2) Գանձասարի | 4) Աղունի |

195. Ո՞ր տարածքի հայ բնակչության հոգևոր և աշխարհիկ կյանքի կարգավորման գործում էր մեծ դեր խաղում Երուսաղեմի հայոց պատրիարքությունը.

- 1) Հնդկաստանի
- 2) Մերձավոր Արևելքի
- 3) Այսրկովկասի արևելյան հատվածի, Արցախի և Ուտիքի
- 4) Բալկանյան երկրների և Հունգարիայի

196. Որտեղ է 1555 թ. հաշտության պայմանագիր կնքվել Օսմանյան և Սեֆյան տերությունների միջև.

- | | |
|----------------|---------------|
| 1) Ամասիայում | 3) Կ. Պոլսում |
| 2) Կեսարիայում | 4) Սպահանում |

197. Ո՞ր գյուղի բնակչությունը ընդդիմացավ շահ Աբասի բռնագաղթին.

- | | |
|--------------|--------------|
| 1) Անգեղակոթ | 3) Շինուհայր |
| 2) Գառնի | 4) Խնձորեսկ |

198. Կարա-կոյունլու ռը տիրակալն էր ապավինում հայ բնակչության օժանդակությանը և նպաստեց հայոց կաթողիկոսության վերահաստատմանը Էջմիածնում.

- | | |
|-----------------|-------------|
| 1) Կարա-Յուսուֆ | 3) Իսքանդար |
| 2) Ջահանշահ | 4) Օսման |

199. Որտեղ է հիմնադրվել Նոր Ջուղա բնակավայրը.

- | | |
|----------------|-----------------|
| 1) Գանձակի մոտ | 3) Թեհրանի մոտ |
| 2) Սպահանի մոտ | 4) Ուրմիայի մոտ |

200. Ո՞ր քաղաքում է 1562 թ. եկեղեցական գաղտնի ժողով գումարել Միքայել կաթողիկոսը.

- | | |
|-------------|-----------|
| 1) Էջմիածին | 3) Ամասիա |
| 2) Սեբաստիա | 4) Թոխատ |

201. Ո՞ր պայմանագրով է 1639 թ. Հայաստանը վերաբաժանվել օսմանյան Թուրքիայի և Սեֆյան Իրանի միջև.

- | | |
|----------------|-------------|
| 1) Կարե-Շիրինի | 3) Թավրիզի |
| 2) Ամասիայի | 4) Կ. Պոլսի |

202. Ո՞ր իշխանությունն էր պահպանվել Սասունում XI դ. վերջերին.

- | | |
|-------------------|-------------------|
| 1) Վարաժնունիների | 3) Արծրունիների |
| 2) Թոռնիկյանների | 4) Մամիկոնյանների |

203. Ո՞վ էր Սսի մատույցներում մամլուքների 60–հազարանոց բանակի դեմ քաջագործություններով աչքի ընկած սպարապետը.

- | | |
|-------------|---------------|
| 1) Լիպարիտը | 3) Կոստանդինը |
| 2) Հեթումը | 4) Սմբատը |

204. Ո՞վ էր Ծումբի ճակատամարտում աչքի ընկած հայ զորահրամանատարը.

- | | |
|-----------------------|----------------------|
| 1) Գրիգոր Պահլավունին | 3) Սմբատ Աշոտյանը |
| 2) Վահրամ Պահլավունին | 4) Լիպարիտ սպարապետը |

205. Սաջյան ամիրայությունը ստեղծվել էր.

- | | |
|-----------------|------------------|
| 1) Աղձնիքում | 3) Նախճավանում |
| 2) Ապահունիքում | 4) Ատրպատականում |

206. Ո՞վ էր հափշտակել Անիի թագավորության արքունի գանձերը.

- | | |
|----------------------|-------------------|
| 1) Պետրոս կաթողիկոսը | 3) Գագիկ Աբասյանը |
| 2) Դավիթ Անհողինը | 4) Վեստ Սարգիսը |

207. Ո՞ր պաշտոնյային էր պատկանում գլխավոր դատավորի իրավունքը Բագրատունյաց Հայաստանում.

- | | |
|----------------|--------------------|
| 1) կաթողիկոսին | 3) իշխանաց իշխանին |
| 2) սեղանապետին | 4) սպարապետին |

208. Ո՞վ էր Տարոնի իշխանը, որի մահից հետո Տարոնը միացվեց Բյուզանդիային.

- | | |
|----------------------|------------------------|
| 1) Գագիկ Բագրատունին | 3) Աշոտ Բագրատունին |
| 2) Սմբատ Բագրատունին | 4) Բագարատ Բագրատունին |

209. Ո՞վ հաստատվեց հայոց իշխան և սպարապետ Բուղայի հետ կանչվելուց հետո.

- | | |
|----------------------|----------------------|
| 1) Սմբատ Բագրատունին | 3) Աշոտ Բագրատունին |
| 2) Աշոտ Արծրունին | 4) Գուրգեն Արծրունին |

210. Որտե՞ղ գումարված եկեղեցական ժողովը մերժեց Հայոց եկեղեցին բյուզանդականի հետ միավորելու առաջարկը.

- | | |
|---------------|-----------------|
| 1) Բագարանում | 3) Շիրակավանում |
| 2) Կարսում | 4) Անիում |

211. Անանիա Մոկացի կաթողիկոսի կողմից Աղթամարից ո՞ր տեղափոխվեց կաթողիկոսական աթոռը.

- | | |
|-----------|------------|
| 1) Կարս | 3) Բագարան |
| 2) Արգինա | 4) Անի |

212. Ո՞ր իշխանության տարածքը Գագիկ I–ը միացրեց իր թագավորությանը.

- | | |
|---------------|--------------|
| 1) Վայոց ձորի | 3) Բագրևանդի |
| 2) Վանանդի | 4) Սյունիքի |

213. Բագրատունյաց իր թագավորը միավորեց Արցախի մեծ մասը, այդ թվում և Խաչեն գավառը.

- | | |
|--------------|---------------|
| 1) Աշոտ II-ը | 3) Սմբատ II-ը |
| 2) Գագիկ I-ը | 4) Աշոտ III-ը |

214. Սյունիքի Վասակ թագավորի մահից հետո ո՞ւմ անցավ գահը.

- | | |
|--------------------|--------------------|
| 1) Սահակ Սյունիին | 3) Գագիկ Աբասյանին |
| 2) Սմբատ Աշոտյանին | 4) Սահակ Սևադային |

215. Հայոց իր կաթողիկոսին հաջողվեց հնազանդեցնել Սյունյաց և Աղվանից թեմերը.

- | | |
|---------------------|--------------------|
| 1) Գրիգոր Ապիրատին | 3) Անանիա Մոկացուն |
| 2) Զաքարիա Զագեցուն | 4) Գևորգ Գառնեցուն |

216. Ո՞ր բերդում էր ամրացել և վեց ամիս բյուզանդացիներին դիմադրել Լևոն I իշխանը.

- | | |
|--------------|--------------|
| 1) Վահկա | 3) Լամբրոն |
| 2) Կոռոմոզով | 4) Բարձրբերդ |

217. Ո՞ր բերդն էր Վահրամյանների իշխանության կենտրոնը.

- | | |
|----------|-----------------|
| 1) Գագը | 3) Ամբերդը |
| 2) Բջնին | 4) Լոռեն (Լոռի) |

218. Ո՞ր բերդն էր Ջավախքի Զաքարյան իշխանության կենտրոնը.

- | | |
|----------|------------|
| 1) Գագը | 3) Ամբերդը |
| 2) Բջնին | 4) Թմուկը |

219. Ո՞վ դարձավ Կախեթի իշխան Կվիրիկեի մահից հետո.

- | | |
|--------------------------------|----------------------------------|
| 1) Դավիթ Անհողինի որդի Գագիկը | 3) Դավիթ Անհողինի որդի Կյուրիկեն |
| 2) Վրաց թագավորի եղբայր Դավիթը | 4) Սմբատ Աշոտյանը |

220. Սմբատ I-ի կալանավորվելուց հետո ի՞նչ բերդն էր շարունակում խիզախաբար դիմադրել արաբներին.

- | | |
|------------|-------------|
| 1) Երնջակը | 3) Գառնին |
| 2) Բջնին | 4) Կապույտը |

221. Անին գրավելուց և ավերելուց հետո մոնղոլները 1236 թ. նույն բախտին արժանացրին.

- | | |
|-----------------------|--------------------|
| 1) Դվինը և Արտաշատը | 3) Կարսը և Դվինը |
| 2) Կեսարիան և Երզնկան | 4) Հոռմկլան և Սիսը |

222. Ո՞ւմ էր Կարսի կառավարիչ նշանակել Աշոտ III-ը.

- | | |
|------------------------|-------------------------|
| 1) Աշոտ Բագրատունուն | 3) Աբաս Բագրատունուն |
| 2) Մուշեղ Բագրատունուն | 4) Գուրգեն Բագրատունուն |

223. Ո՞ր թագավորի օրոք վերելք ապրեց Սյունիքի թագավորությունը.

- | | |
|----------|----------|
| 1) Վասակ | 3) Դավիթ |
| 2) Սմբատ | 4) Աբաս |

224. Ո՞ւմ հետ էր ամուսնացել Կարսի թագավոր Գագիկ Աբասյանը.

- | | |
|------------------|-----------------|
| 1) Վարազդուխտի | 3) Գուրանդուխտի |
| 2) Խոսրովանույշի | 4) Կատրամիդեի |

225. Անիի պարիսպներից դուրս ո՞վ ջարդ տվեց բյուզանդական զորքերին.

- | | |
|-------------------------|-----------------------|
| 1) Գագիկ I Բագրատունին | 3) Գրիգոր Պաղլավունին |
| 2) Սմբատ II Բագրատունին | 4) Վահրամ Պաղլավունին |

226. Բագրատունյաց Հայաստանի բանակում առավել մեծ թիվ էր կազմում.

- | | |
|---------------|----------------|
| 1) հեծելազորը | 3) վարձկանները |
| 2) հետևակը | 4) գումակը |

227. Բագրատունիների բանակում շատ սահմանափակ թվով վարձկաններ կային.

- | | |
|----------------|---------------|
| 1) լեզգիներից | 3) ալաններից |
| 2) չերքեզներից | 4) արխազներից |

228. Ծումբի ճակատամարտը տեղի է ունեցել՝

- | | |
|----------------|-----------------|
| 1) Բասենում | 3) Սասունում |
| 2) Մանանադիում | 4) Ապահունիքում |

229. Հայ-մոնղոլական դաշինը կնքվել է.

- | | |
|------------------|--------------|
| 1) Թավրիզում | 3) Սիսում |
| 2) Կարակորումում | 4) Սպահանում |

230. Ո՞ր ճակատամարտից հետո Բյուզանդիան մեկընդմիջտ հրաժարվեց Կիլիկիայից.

- | | |
|---------------|-------------------|
| 1) Երուսաղեմի | 3) Միրիոկեֆալունի |
| 2) Բերդուսի | 4) Մառիի |

231. Լևոն IV-ին հաջորդեց նրա հորաքրոջ որդի՝

- | | |
|-------------------------|----------------------|
| 1) Կոստանդին Նորեցին | 3) Գվիդոն Լուսինյանը |
| 2) Բոհեմունդ Լուսինյանը | 4) Պաղտին Մարաջախտը |

232. 1360 թ. Կիլիկյան Հայաստանի ո՞ր քաղաքները վերջնականապես գրավեցին մամլուքները.

- | | |
|---------------------|---------------------|
| 1) Այասը և Կոռիկոսը | 3) Սիսը և Անավարզան |
| 2) Ադանան և Տարսոնը | 4) Այասը և Մսիսը |

233. Գևորգ իշխանը Բեշիրի զորքերին նոր ջարդ տվեց.

- | | |
|----------------|-------------|
| 1) Դվինում | 3) Գառնիում |
| 2) Նախճավանում | 4) Դողսում |

234. Հայոց զոր կաթողիկոսը 1361 թ. եկեղեցական ժողով հրավիրեց և չեղյալ հայտարարեց Սսի ու Ադանայի նախորդ ժողովների որոշումները.

- | | |
|--------------------------|---------------------|
| 1) Կոստանդին Կեսարացին | 3) Մեսրոպ Արտազեցին |
| 2) Ստեփանոս Հռոմկլայեցին | 4) Պողոս Սսեցին |

235. Ո՞ր քաղաքում տեղի ունեցած ժողովը որոշեց Ջաբելին ամուսնացնել Հեթումի հետ.

- | | | | |
|------------|-------------|--------|----------|
| 1) Տարսուն | 2) Անավարզա | 3) Սիս | 4) Ադանա |
|------------|-------------|--------|----------|

236. Ո՞ր լեռների մոտ տեղի ունեցավ Մառիի ճակատամարտը.

- | | | | |
|------------|----------------|-------|---------------------|
| 1) Տավրոսի | 2) Անտիտավրոսի | 3) Սև | 4) Քարուտ Կիլիկիայի |
|------------|----------------|-------|---------------------|

237. Սյունյաց իշխաններից ովքեր գործակցեցին Աշոտ Երկաթի հետ և միացան երկրի ազատագրման գործին.

- | | |
|---------------------|-------------------------|
| 1) Վասակը և Աշոտը | 3) Սմբատը և Սահակը |
| 2) Սմբատը և Գրիգորը | 4) Լիպարիտը և Ստեփանոսը |

238. Հաշտություն կնքելու համար զոր մեկնեց հայոց կաթողիկոս Կոստանդին Լամբրոնացին.

- | | | | |
|----------|-----------|-------------|-----------|
| 1) Հալեպ | 2) Կահիրե | 3) Դամասկոս | 4) Անտիոք |
|----------|-----------|-------------|-----------|

239. Հայոց արքունական խորհուրդը ո՞ւմ հետ որոշեց ամուսնացնել Ջաբելին.

- | | |
|----------------------------------|----------------------------------|
| 1) Բոհեմունդ III-ի որդի Ռայմոնդի | 3) Ատան պայլի |
| 2) Բոհեմունդ IV-ի որդի Ֆիլիպի | 4) Բոհեմունդ III-ի որդի Ռեյնալդի |

240. Ո՞ր գետի հովտում էին գտնվում Սանահինի և Հաղպատի վանքերը.

- | | | | |
|-------------|-----------|--------------|-----------|
| 1) Ձորագետի | 2) Աղստևի | 3) Ախուրյանի | 4) Արփայի |
|-------------|-----------|--------------|-----------|

241. Զվարթնոցի նմանությամբ Անիում կառուցված տաճարը կոչվում էր.

- | | | | |
|-------------|--------------|-------------|-------------|
| 1) Աշոտաշեն | 2) Սմբատաշեն | 3) Գագկաշեն | 4) Աբասաշեն |
|-------------|--------------|-------------|-------------|

242. Ո՞րն էր դաշտավարության մեջ կարևոր նորությունը Բագրատունյաց Հայաստանում.

- 1) երկաթե խոփ ունեցող ծանր գուբանի տարածումը
- 2) քաղաքի և գյուղի միջև առևտրի աշխուժացումը
- 3) վանական հողատիրության ընդարձակումը
- 4) տերունի մեծածավալ կալվածքների առաջացումը

243. Անին Բագրատունիներին էր անցել՝

- | | |
|--------------------|-------------------|
| 1) Գնթունիներից | 3) Սահառունիներից |
| 2) Կամսարականներից | 4) Գնունիներից |

244. Բյուզանդիայի նվաճողական քաղաքականության պայմաններում Հարավային Հայաստանում իր անկախությունը պահպանել էր՝

- | | |
|---------------|------------|
| 1) Տարոնը | 3) Սասունը |
| 2) Ապահունիքը | 4) Սպերը |

245. Գող Վասիլի իշխանության կենտրոնն էր՝

- | | |
|------------|--------------|
| 1) Մարաշը | 3) Անավարզան |
| 2) Քեսունը | 4) Սիսը |

246. Կարսի պաշտպանության ժամանակ Տուղրիլ բեկի մերձավորներից մեկին ծանր վիրավորել էր հայ զորականներից.

- | | |
|-------------|------------|
| 1) Լիպարիտը | 3) Թաթուլը |
| 2) Սմբատը | 4) Խաչիկը |

247. Փիլարտոս Վարաժնունու իշխանության կենտրոնն էր՝

- | | |
|------------|-------------|
| 1) Մարաշը | 3) Ծամնդավը |
| 2) Քեսունը | 4) Պիզուն |

ZANGAK

3. ԱՇԽԱՏԱՆՔ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՀԵՏ

1. Ո՞ւմ են պատկանում հետևյալ խոսքերը.

«... եթե կարողանաս հաղթել նրանց և պարտադրես ծառայելու, ես նրանց թիկունքը չեմ պաշտպանի»:

- | | |
|-----------------|----------------|
| 1) Շապուհ II-ին | 3) Արշակ II-ին |
| 2) Հուլիանոսին | 4) Հովհաննոսին |

2. Ըստ պատմիչի՞ ո՞վ է ասել հետևյալ խոսքերը.

«Հեռու ինձանից, չարագործ ծառա, որ տերերիդ վրա տեր ես դարձել, և ես չեմ ների քեզ և քո որդոց իմ նախնիների վրեժը... »:

- | | |
|-----------------------|---------------|
| 1) Մուշեղ Մամիկոնյանը | 3) Պապը |
| 2) Վասակ Մամիկոնյանը | 4) Արշակ II-ը |

3. Ո՞ր պատմիչի աշխատությունից են մեջբերված խոսքերը.

«Այժմ, երբ ինձ տեսնում ես կարճահասակ, մեծությամբ չափը չես հասկանում, որովհետև մինչև այժմ ես քեզ համար առյուծ էի, իսկ այժմ՝ աղվես»:

- | | |
|--------------------|------------------|
| 1) Փավստոս Բուզանդ | 3) Սեբեոս |
| 2) Մովսես Խորենացի | 4) Ղազար Փարպեցի |

4. Հայոց ո՞ր սպարապետն է վերականգնել հայ-վրացական նախկին սահմանը.

[վերականգնում է] «... հին սահմանը, որ առաջ գոյություն ուներ Հայոց երկրի և Վրաց երկրի միջև, որպիսին էր մեծ գեպ Կուրը»:

- | | |
|-----------------------|-----------------------|
| 1) Վաչե Մամիկոնյանը | 3) Վասակ Մամիկոնյանը |
| 2) Մուշեղ Մամիկոնյանը | 4) Վարդան Մամիկոնյանը |

5. Ո՞ր ճակատամարտից հետո է տեղի ունեցել պատմիչի նկարագրած դեպքը.

«Քեզ պսակում եմ, Մերուժան, որովհետև դու ձգտում էիր հայոց վրա թագավորելու, և իմ՝ ասպետիս պարտքն է քեզ պսակել իմ հայրերի իշխանության կարգով»:

- | | |
|-----------|-------------------------|
| 1) Ակոռիի | 3) Գանձակի (Ատրպատական) |
| 2) Ձիրավի | 4) Արձնիի |

6. Ո՞ր պատմիչի աշխատությունից են մեջբերված խոսքերը.

«... հնում Կեսարիայի ուրիշ փասը քաղաք մերն են եղել, նրա փոր, Ուռհա (Եդեսիա) քաղաքն էլ մեր նախնիքն են շինել, ուստի, եթե չես ուզում, որ խոռվություն ծագի մեր մեջ, նրա փոր»:

- | | |
|------------------|--------------------|
| 1) Սեբեոս | 3) Փավստոս Բուզանդ |
| 2) Ղազար Փարպեցի | 4) Մովսես Խորենացի |

7. Ո՞ւմ են պատկանում հետևյալ խոսքերը.

«Այժմ, երբ տեսնում ես ինձ կարճահասակ, մեծության չափը չես հասկանում, որովհետև մինչ այժմ ես քեզ համար առյուծ էի, իսկ այժմ՝ աղվես...».

- | | |
|------------------------|-----------------------|
| 1) Արշակ II-ին | 3) Վահան Մամիկոնյանին |
| 2) Մուշեղ Մամիկոնյանին | 4) Վասակ Մամիկոնյանին |

8. Հայոց ո՞ր կաթողիկոսն է ասել հետևյալ խոսքերը.

«Քավ լիցի՛ իմ մոլորված ոչխարը մաքնեմ գայլերին»:

- | | |
|--------------------|-------------------------|
| 1) Ներսես Ա Պարթևը | 3) Սահակ Ա Պարթևը |
| 2) Սուրմակը | 4) Հովսեփ Ա Հայոցճորհին |

9. Ո՞ր պատմիչի աշխատությունից են մեջբերված խոսքերը.

«Հայոց նախարարներին անցավ թագավորությունը, որովհետև թեպետև հարկը պարսից արքունիքն էր գնում, սակայն հայոց այրուձին ամբողջապես նախարարներն էին առաջնորդում պատերազմի ժամանակ»:

- | | |
|--------------------|--------------------|
| 1) Սեբեոս | 3) Եղիշե |
| 2) Փավստոս Բուզանդ | 4) Մովսես Խորենացի |

10. Ո՞ր դեպքի կապակցությամբ են պատմիչի հետևյալ խոսքերը.

«Հայոց նախարարներին անցավ թագավորությունը, որովհետև թեպետև հարկը պարսից արքունիքն էր գնում, սակայն հայոց այրուձին ամբողջապես նախարարներն էին առաջնորդում պատերազմի ժամանակ»:

- | |
|--|
| 1) ավատատիրության հաստատման |
| 2) Արշակունյաց թագավորության անկման |
| 3) Հայաստանում մարզպանության հաստատման |
| 4) Արտաշեսյան թագավորության անկման |

11. Ո՞ր պատմիչի աշխատությունից են մեջբերված խոսքերը.

«Առնում էին ոչ թե ինչպես վայել է արքունի արժանապատվությանը, այլ ավազակաբար հափշտակելով, այն աստիճան, որ իրենք էլ մեծապես զարմանում էին, թե մի տեղից որ այսքան գանձ է դուրս գալիս, էլ ինչպես է շեն մնում այդ աշխարհը»:

- | | |
|------------------|----------|
| 1) Սեբեոս | 3) Եղիշե |
| 2) Ղազար Փարպեցի | 4) Ղևոնդ |

12. Ո՞ւմ սխրանքն է բնութագրել պատմիչը վերոհիշյալ խոսքերով.

«Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն»:

- | | |
|--------------------|------------------------|
| 1) Վահանանց | 3) Հռիփսիմյան կույսերի |
| 2) Սուրբ Շուշանիկի | 4) Վարդանանց |

13. Պարսից արքան ղում է ասել հետևյալ խոսքերը.

«Դուք բնավ ոչինչ համարեցիք այս աշխարհը, քաջաբար մեռան նրանք, որ մեռան, և առավել քաջաբար ապրում եք դուք»:

- | | |
|------------------------|------------------------|
| 1) Վարդան Մամիկոնյանին | 3) Վահան Մամիկոնյանին |
| 2) Մուշեղ Մամիկոնյանին | 4) Մանվել Մամիկոնյանին |

14. Ո՞ւմ է հետևյալ կերպ գնահատել պատմիչը.

«... եղավ աստվածագիտության լույսի դուռ և բազմազան բարիքների երջանիկ օրինակ»:

- | | |
|--------------------|-----------------------|
| 1) Մեսրոպ Մաշտոցին | 3) Վռամշապուհին |
| 2) Սահակ Պարթևին | 4) Վաչագան Բարեպաշտին |

15. Ո՞ր պատմիչի աշխատությունից են մեջբերված խոսքերը.

«Քաջությամբ մեռնենք մեր աշխարհի և մեր ազգի համար»:

- | | |
|-----------------------------|-------------------|
| 1) Հովհաննես Դրասխանակերտցի | 3) Ղևոնդ |
| 2) Սեբեոս | 4) Թովմա Արծրունի |

16. Հայոց ղր արքայի մասին են մեջբերված խոսքերը.

«Եվ փրհապետեց նա բազմաթիվ բերդերի և գավառների Վայոց ձորի, Խաչենի և Փառիսոսի սահմաններում՝ ավելի, քան իր եղբայրը, և չկար մեկը, որ սարսափ պատճառեր Հայաստանին»:

- | | | | |
|-------------|------------|-------------|------------|
| 1) Աշոտ III | 2) Գագիկ I | 3) Սմբատ II | 4) Աշոտ II |
|-------------|------------|-------------|------------|

17. Հայոց ղր գահակալն է ասել հետևյալ խոսքերը.

«Հայոց տան տերն ու թագավորը ես եմ, և ես քեզ չեմ տալիս հայոց երկիրը, որովհետև դու ինձ խաբեությամբ ես բերել Կոստանդնուպոլիս»:

- | | |
|-------------------------|------------------------|
| 1) Հովհաննես-Սմբատը | 3) Գագիկ I Բագրատունին |
| 2) Գագիկ II Բագրատունին | 4) Աշոտ II Երկաթը |

18. Ո՞վ է բերված վկայության հեղինակը.

«Անիի փրհակալներից հետո «շահնշահ» փրհողոսն անցավ Գագիկ Կարսեցուն».

- | | |
|-------------------------|-----------------------|
| 1) Կիրակոս Գանձակեցին | 3) Մատթեոս Ուռհայեցին |
| 2) Մովսես Կաղանկատվացին | 4) Վարդան Արևելցին |

19. Ըստ պատմիչի վկայության՝ ով է հետևյալ մտքերն արտահայտել.

« ...գոյություն ունեն հայոց լեզվի նշանագրեր, որոնցով հնարավոր է սեփական ձայնով և ոչ թե մուրացած լեզվով եկեղեցիներում շահել տղամարդկանց ու կանանց և առհասարակ ամբողջ բազմության սրտերը»:

- | | |
|-------------------|----------------|
| 1) Սահակ Պարթևը | 3) Վռամշապուհը |
| 2) Մեսրոպ Մաշտոցը | 4) Կորյունը |

20. Ո՞ր պատմիչն է մեջբերված հատվածի հեղինակը.

«Եվ այսպես նա բազում նեղություններ կրեց՝ իր ազգին մի բարի օգնություն գտնելու համար: Ամեն բան շնորհող Աստուծոց իսկապես պարգևվեց նրան այդ բախտը. նա իր սուրբ աջով հայրաբար ծնեց նոր և սքանչելի ծնունդներ՝ հայերենի նշանագրեր»:

- 1) Կորյունը
- 2) Վարդան Արևելցին
- 3) Մովսես Խորենացին
- 4) Ղազար Փարպեցին

21. Պարսից որ թագավորին են պատկանում հետևյալ խոսքերը.

«Ամեն քրիստոնյա, որ իմ իշխանության տակ է, հայոց հավատին թող հարի»:

- 1) Խոսրով I
- 2) Խոսրով II
- 3) Շապուհ II
- 4) Հազկերտ III

22. Հայոց որ թագավորի մասին են այս խոսքերը.

«Եվ տիրապետեց նա բազմաթիվ բերդերի և գավառների... սահմաններում՝ ավելի քան իր..., և չկար մեկը, որ սարսափ պատճառեր Հայաստանին»:

- 1) Աշոտ III
- 2) Սմբատ II
- 3) Գագիկ I
- 4) Գագիկ II

23. Հայոց թագավորի որ ազգականն է հիշատակված այս մեջբերման մեջ.

«Եվ տիրապետեց նա բազմաթիվ բերդերի և գավառների... ավելի քան իր..., և չկար մեկը, որ սարսափ պատճառեր Հայաստանին»:

- 1) Եղբայրը
- 2) հորեղբայրը
- 3) հայրը
- 4) պապը

24. Ո՞ր գավառներն են հիշատակված այս վկայության մեջ.

«Եվ տիրապետեց նա բազմաթիվ բերդերի և գավառների... ավելի քան իր..., և չկար մեկը, որ սարսափ պատճառեր Հայաստանին»:

- 1) Վանանդի, Խաչենի և Փառնեսի
- 2) Վայոց ձորի, Խաչենի ու Փառիսոսի
- 3) Վայկունիքի, Արցախի և Փառիսոսի
- 4) Վիրահայոց, Արցախի և Փառնեսի

25. Ո՞ր քաղաքի մասին են բյուզանդացի հեղինակի խոսքերը.

«Մեծ և բարեկարգ քաղաք է»:

- 1) Անի
- 2) Սիս
- 3) Դվին
- 4) Տարսուն

26. Հայկական որ ապրանքներն է նկատի ունեցել հեղինակը.

«Հայկական ...այնքան գեղեցիկ են, որ նրանց նմանը չկա ծայրից ծայր ամբողջ աշխարհում»:

- 1) գորգերը
- 2) ծածկոցները
- 3) կերպասները
- 4) գործվածքները

27. Ո՞ր քաղաքի բնակչությունն է հանդես եկել հետևյալ կոչով.

«Մենք ամենքս պատրաստ ենք մեռնելու, բայց չենք մեռնի, մինչև չոչնչացնենք մեր թշնամիներին»:

- 1) Սիս
- 2) Դվին
- 3) Անի
- 4) Կարս

28. Ո՞ւմ է դիմել Անի քաղաքի բնակչությունը հետևյալ կոչով.

«Մենք ամենքս պատրաստ ենք մեռնելու, բայց չենք մեռնի, մինչև չոչնչացնենք մեր թշնամիներին»:

- | | |
|----------------------|------------------------|
| 1) Սմբատ սպարապետին | 3) Վահրամ Պահլավունուն |
| 2) Սարգիս Զաքարյանին | 4) Լիպարիտ սպարապետին |

29. Ովքեր են այս մեջբերման մեջ հիշատակված թշնամիները.

«Մենք ամենքս պատրաստ ենք մեռնելու, բայց չենք մեռնի, մինչև չոչնչացնենք մեր թշնամիներին»:

- | | |
|--------------------|----------------|
| 1) բյուզանդացիները | 3) պարսիկները |
| 2) արաբները | 4) մամլուքները |

30. Կարդալ Վահրամ Պահլավունուն ուղղված անեցիների դիմումից մեջբերված հատվածը և նշել ճիշտ շարունակությունը.

«Մենք ամենքս պատրաստ ենք մեռնելու, բայց չենք մեռնի, մինչև չոչնչացնենք մեր թշնամիներին, որոնք»'

- 1) «ապօրինաբար եկել են մեր դեմ և կամենում են գրավել մեր երկիրը»
- 2) «ավազակաբար հարձակվել են մեզ վրա և երազում են մեր երկիրը կողոպտելու մասին»
- 3) «տարապարտ կերպով են գրոհում մեր դեմ և կամենում են կողոպտել մեր երկիրը»
- 4) «տարապարտ կերպով եկել են մեր դեմ և կամենում են հափշտակել մեր երկիրը»

31. Հայոց զոր թագավորների մահից հետո են տեղի ունեցել մեջբերման մեջ նկարագրված դեպքերը.

«Մենք ամենքս պատրաստ ենք մեռնելու, բայց չենք մեռնի, մինչև չոչնչացնենք մեր թշնամիներին»:

- | | |
|-------------------------------|-------------------------------|
| 1) Աշոտ III և Հովհաննես–Սմբատ | 3) Գագիկ II և Աշոտ IV |
| 2) Աշոտ IV և Հովհաննես–Սմբատ | 4) Հովհաննես–Սմբատ և Գագիկ II |

32. Հայոց զոր թագավորին են պատկանում հետևյալ խոսքերը.

«Հայոց տանիքն ու թագավորը ես եմ, և ես քեզ չեմ տալիս հայոց երկիրը»:

- | | | | |
|-------------|------------|-------------|------------|
| 1) Աշոտ III | 2) Աշոտ IV | 3) Գագիկ II | 4) Գագիկ I |
|-------------|------------|-------------|------------|

33. Ընտրել հայոց թագավորի խոսքի ճիշտ շարունակությունը.

«Հայոց տանիքն ու թագավորը ես եմ, և ես քեզ չեմ տալիս հայոց երկիրը».

- 1) «որովհետև դու ինձ խաբեությամբ ես կալանավորել»
- 2) «որովհետև դու ինձ խաբեությամբ ես դուրս բերել Հայոց տանից»
- 3) «որովհետև դու ինձ խաբեությամբ ես հեռացրել Հայոց տանից»
- 4) «որովհետև դու ինձ խաբեությամբ ես բերել»

34. Ո՞ւմ են ուղղվել հայոց թագավորի այս խոսքերը.

«Հայոց փան փերն ու թագավորը ես եմ, և ես քեզ չեմ փախիս հայոց երկիրը»:

- | | |
|-------------------------|-----------------|
| 1) բյուզանդական կայսերը | 3) Հռոմի պապին |
| 2) Բաղդադի խալիֆին | 4) Պարսից շահին |

35. Ո՞ր քաղաքում են ասվել այս խոսքերը.

«Հայոց փան փերն ու թագավորը ես եմ, և ես քեզ չեմ փախիս հայոց երկիրը»:

- | | | | |
|---------|-----------|--------------------|-----------|
| 1) Հռոմ | 2) Բաղդադ | 3) Կոստանդնուպոլիս | 4) Տիզբոն |
|---------|-----------|--------------------|-----------|

36. Ե՞րբ են արտասանվել այս խոսքերը.

«Հայոց փան փերն ու թագավորը ես եմ, և ես քեզ չեմ փախիս հայոց երկիրը»:

- | | | | |
|------------|------------|------------|------------|
| 1) 1042 թ. | 2) 1044 թ. | 3) 1043 թ. | 4) 1041 թ. |
|------------|------------|------------|------------|

37. Մեջբերումները դասավորել ըստ դրանց ժամանակագրական հաջորդականության.

ա. «Հայոց տան տերն ու թագավորը ես եմ, և ես քեզ չեմ տալիս հայոց երկիրը»

բ. «Եվ տիրապետեց նա բազմաթիվ բերդերի և գավառների՝ ավելի քան իր ... սահմաններում..., և չկար մեկը, որ սարսափ պատճառեր Հայաստանին»:

գ. «Մենք ամենքս պատրաստ ենք մեռնելու, բայց չենք մեռնի, մինչև չոչնչացնենք մեր թշնամիներին»:

- | | | | |
|------------|------------|------------|------------|
| 1) բ, գ, ա | 2) ա, բ, գ | 3) գ, ա, բ | 4) բ, ա, գ |
|------------|------------|------------|------------|

38. Ո՞ր պատմական իրադարձության մասին է մեջբերումը.

«Առնում էին ոչ թե հնչյուն վայել է արքունի արժանապատվությանը, այլ ավազակաբար հափշտակելով»:

- 1) Դենշապուռի անցկացրած աշխարհագրի
- 2) Հերթ ոստիկանի աշխարհագրի
- 3) մոնղոլական հարկահավաքության
- 4) շահ Աբասի իրականացրած հարկահավաքության

39. Հայոց ո՞ր սպարապետի մասին են ասվել այս խոսքերը.

«Ճերմակածին գինի արբեցէ»:

- | | |
|-------------------------|-----------------------|
| 1) Արտավազդ Մամիկոնյանի | 3) Մուշեղ Մամիկոնյանի |
| 2) Վաչե Մամիկոնյանի | 4) Մանվել Մամիկոնյանի |

40. Ազգությամբ ո՞վ է մեջբերված վկայության հեղինակը.

«Հայկական գործվածքներն այնքան գեղեցիկ են, որ նրանց նմանը չկա ծայրից ծայր ամբողջ աշխարհում»:

- | | | | |
|----------|-----------|---------|----------|
| 1) ասորի | 2) պարսիկ | 3) արաբ | 4) հույն |
|----------|-----------|---------|----------|

6. 387 թ. բաժանումից հետո Արևմտյան Հայաստանի հյուսիսարևմտյան մասը ինչպե՞ս է կոչվել հռոմեական աղբյուրներում.

- | | |
|----------------|-------------------|
| 1) Ներքին Հայք | 3) Չորրորդ Հայք |
| 2) Առաջին Հայք | 4) Խորագույն Հայք |

7. Ի՞նչ էր կոչվում զրադաշտական կրոնի կրակապաշտարանը.

- | | | | |
|-----------|-------------|----------|------------|
| 1) մեհյան | 2) ատրուշան | 3) բագին | 4) աշտանակ |
|-----------|-------------|----------|------------|

8. Ի՞նչ էին կոչվում հայ նախարարներից բռնագրավված տիրույթներից արաբների ստեղծած վարչաքաղաքական միավորները.

- | | |
|-------------------|-------------------|
| 1) սատրապություն | 3) նախարարություն |
| 2) ոստիկանություն | 4) ամիրայություն |

9. Ո՞րն է «շահնշահ» հասկացության ճիշտ բացատրությունը.

- | | |
|---------------------|------------------------|
| 1) տիեզերքի թագավոր | 3) աշխարհակալ թագավոր |
| 2) հզոր թագավոր | 4) թագավորների թագավոր |

10. Ո՞րն էր արքունական գունդը.

- 1) հայկական բանակում Բագրատունիների օրոք իշխաններին ենթակա զորամասերից կազմված զորամիավորումը
- 2) հայկական բանակում Բագրատունիների օրոք լեզգիներից և այլ ցեղերից հավաքագրված զորամիավորումը
- 3) հայկական բանակում Բագրատունիների օրոք Հայաստանում արաբական ամիրայությունների տրամադրած զորամասերից կազմված զորամիավորումը
- 4) հայկական բանակում Բագրատունիների օրոք թագավորական տիրույթներից հավաքագրված ռազմիկներից կազմված զորամիավորումը

11. Ի՞նչ էր կոչվում միջնադարյան Հայաստանի քաղաքներում առևտրին, արհեստներին, հարկահանությանն ու շուկաներին հետևող հատուկ պաշտոնյան.

- | | | | |
|-------------|--------------|----------|----------|
| 1) քալանթար | 2) մուխթասիբ | 3) շահապ | 4) ամիրա |
|-------------|--------------|----------|----------|

12. Ի՞նչ էր կոչվում միջնադարյան Հայաստանում արտաքին պարսպով շրջապատված՝ բուն քաղաքից դուրս գտնվող և ընչազուրկներով բնակեցված քաղաքամասը.

- | | | | |
|-------------|--------------|---------------|-------------|
| 1) արվարձան | 2) աղքատանոց | 3) քաղաքատեղի | 4) շահաստան |
|-------------|--------------|---------------|-------------|

13. Վրացական արքունիքում ի՞նչ էր կոչվում թագաժառանգի խնամակալը.

- | | | | |
|-----------|-----------------|-----------|---------|
| 1) աթաբեկ | 3) ամիրսպասալար | 3) ռեգենտ | 4) պայլ |
|-----------|-----------------|-----------|---------|

14. Ի՞նչ էր կոչվում մոնղոլական բանակի զորաջոկատի հրամանատարը.

- | | | | |
|------------|---------|--------|----------|
| 1) մամլուք | 2) նոյն | 3) խան | 4) ամիրա |
|------------|---------|--------|----------|

15. Ինչ անուն ստացան Հայոց եկեղեցին քրիստոնեական մյուս եկեղեցիների հետ միավորման հակառակորդները Կիլիկիայում.

- 1) ունիթորներ կամ միարարներ
- 2) հակաունիթորներ կամ միարարներ
- 3) հակաունիթորներ կամ հակամիարարներ
- 4) ունիթորներ կամ հակամիարարներ

16. Ինչպե՞ս էր կոչվում այն խմբավորումը, որը փորձում էր Հայոց եկեղեցին միավորել քրիստոնեական մյուս եկեղեցիների հետ.

- 1) քաղկեդոնականներ
- 2) հակաունիթորներ
- 3) նեստորականներ
- 4) ունիթորներ

17. Ինչ էր կոչվում արքունական հեծելազորի հրամանատարը Կիլիկիայում.

- 1) սպասալար
- 2) գունդստարլ
- 3) աթաբեկ
- 4) մարաջախտ

18. Գործառույթները համապատասխանեցնել Կիլիկյան Հայաստանի արքունի գործակալին.

- 1) սենեսկալ
- 2) կանցլեր
- 3) թագադիր
- 4) պայլ
- 5) գունդստարլ

ա. արքունի պալատի կառավարիչը. տնօրինում էր արքունի եկամուտները և ծախսերը
բ. թագավորի առաջին խորհրդականը. արքայի բացակայության դեպքում փոխարինում էր նրան, իսկ թագավորի անչափահասության դեպքում իրականացնում էր արքայի և ամբողջ երկրի խնամակալությունը

գ. իրականացնում էր արքունի կալվածքների ու գանձարանի հսկողությունը, գահաժառանգների դաստիարակությունը, տնօրինում հանրային աշխատանքները, պետական պարիակներն ու հարկահանության գործը

դ. բանակի ընդհանուր հրամանատարը Կիլիկիայում

ե. հանդիսությունների ժամանակ թագ էր դնում թագավորի գլխին, կապում արքայական նշանները, հետևում էր արքունի կարգ ու կանոնի պահպանմանը

զ. ղեկավարում էր բանակցություններն օտար երկրների ներկայացուցիչների հետ

- 1) 1-գ, 2-ա, 3-ե, 4-բ, 5-դ
- 2) 1-ա, 2-գ, 3-ե, 4-բ, 5-դ
- 3) 1-դ, 2-գ, 3-գ, 4-բ, 5-ա
- 4) 1-ա, 2-գ, 3-ե, 4-գ, 5-բ

19. Թվարկված գործառույթներից առանձնացնել երկուսը, որոնք Կիլիկյան Հայաստանում չէր տնօրինում թագադիրը.

ա. Հետևում էր արքունի կարգ ու կանոնի պահպանմանը:

բ. Ղեկավարում էր բանակցություններն օտար երկրների ներկայացուցիչների հետ:

գ. Հանդիսությունների ժամանակ կապում էր արքայի թագավորական նշանները:

դ. Հանդիսությունների ժամանակ թագ էր դնում արքայի գլխին:

ե. Թագավորի առաջին խորհրդականն էր և արքունի պալատի կառավարիչը:

1) բ, գ

2) բ, ե

3) դ, ե

4) ա, գ

20. Կիլիկյան Հայաստանում ինչպե՞ս էր կոչվում անչափահաս թագավորի խնամակալի պաշտոնը.

1) իշխանաց իշխան

2) թագադիր ասպետ

3) մարաջախտ

4) պայլ

21. Կատարել համապատասխանեցում.

ա. աթաբեկ

բ. ամիրսպասալար

գ. մելիք

դ. յուզբաշի

ե. պարոնտեր

զ. շահապ

1) թագաժառանգի խնամակալ

2) զորքերի գլխավոր հրամանատար

3) մելիքության կառավարիչ

4) հարյուրապետ

5) քաղաքապետ

6) հոգևոր կոչում ընդունած աշխարհիկ իշխան

7) արքունի քարտուղար

1) ա-1, բ-2, գ-3, դ-4, ե-6, զ-5

2) ա-1, բ-5, գ-3, դ-2, ե-7, զ-6

3) ա-6, բ-3, գ-4, դ-5, ե-1, զ-7

4) ա-7, բ-4, գ-3, դ-2, ե-1, զ-6

22. Հայ իշխանական տների ներկայացուցիչները ինչպե՞ս սկսեցին կոչվել իրենց իշխանությունների վերականգնումից հետո.

1) խոջա

2) բեյ

3) բեկ

4) մելիք

23. Ի՞նչ է կոչվում հայ կերպարվեստի այն յուրահատուկ տեսակը, որը պատվանդանի վրա կանգնեցված սալաձև կոթող-հուշարձան է.

1) մենհիր

2) խաչքար

3) վիշապաքար

4) սահմանաքար

24. Թվարկվածներից ո՞րը «յոթ ազատ արվեստների» համակարգի Քառյակ ենթահամակարգից չէ.

1) ճարտասանություն

2) թվաբանություն

3) երաժշտություն

4) աստղագիտություն

25. «Յոթ ազատ արվեստների» Եռյակ ենթահամակարգի բաղադրիչներն էին.

ա. երաժշտություն

բ. քերականություն

գ. թվաբանություն

դ. երկրաչափություն

ե. ճարտասանություն

զ. տրամաբանություն

է. աստղագիտություն

1) բ, ե, գ

2) բ, գ, ե

3) գ, դ, է

4) ա, գ, է

26. Ընտրել ճիշտ բացատրությունները.

- 1) Հայկական բանակում Բագրատունիների օրոք թագավորական տիրույթներում ապրող ռամիկներից հավաքագրված զորամիավորումը կոչվում էր մարզպանական գունդ:
- 2) Հայկական բանակում Բագրատունիների օրոք Հայաստանում կազմավորված արաբական ամիրայությունների տրամադրած զորամասերից, լեզգիներից և այլ ցեղերից հավաքագրված զորամիավորումը կոչվում էր մարզպանական գունդ:
- 3) Հայկական բանակում Բագրատունիների օրոք իշխաններին ենթակա զորամասերից կազմված զորամիավորումը կոչվում էր մարզպանական գունդ:
- 4) Հայկական բանակում Բագրատունիների օրոք իշխաններին ենթակա զորամասերից կազմված զորամիավորումը կոչվում էր արքունական գունդ:
- 5) Հայկական բանակում Բագրատունիների օրոք թագավորական տիրույթներում ապրող ռամիկներից հավաքագրված զորամիավորումը կոչվում էր արքունական գունդ:

27. Ընտրել սխալ բացատրությունները.

- 1) Միջնադարյան Հայաստանում եկեղեցուն վճարվող բերքի մեկ տասներորդ մասը կոչվում էր տասանորդ:
- 2) Հարկատու մեկ միավոր կազմող գյուղացիական ընտանիքը կամ գերդաստանը վաղ միջնադարյան Հայաստանում կոչվում էր երդ:
- 3) Արաբական տիրապետության շրջանում Արմինիա փոխարքայության կառավարիչը կոչվում էր ոստիկանապետ կամ փոխարքա:
- 4) Վաղ միջնադարյան Հայաստանում իշխանական տների կրտսեր ներկայացուցիչները կոչվում էին սեպուհներ:
- 5) Ժամանակի ընթացքում Արշակունյաց շառավիղներից ձևավորված առանձին ազնվական խավը հայտնի էր «ոստանիկներ» անունով:
- 6) Մեծ Հայքի սահմանակալ չորս նահանգների տերերը կոչվում էին բոլեշխներ:
- 7) Հայաստանի համար կարևորագույն հարցերը քննարկելու նպատակով մինչև VI դարի երկրորդ կեսը հրավիրվող համաժողովրդական ժողովը կոչվում էր երկրային ժողով:
- 8) Արշակունյաց արքունիքում յուրաքանչյուր նախարարի տեղը սահմանվում էր կարևոր պետական փաստաթղթով, որը կոչվում էր Աշխարհագիր:
- 9) Հայ նախարարներից բռնագրավված տիրույթներից արաբների ստեղծած վարչաքաղաքական միավորները կոչվում էին ամիրայություններ:

28. Ինչպե՞ս էին անվանվում հռոմեական զորամիավորումները.

- 1) գունդ 2) վաշտ 3) լեգեոն 4) փաղանգ

29. Արշակունիների օրոք դ՞ր պաշտոնյան էր իրականացնում արքունի կավաձքների ու գանձարանի հսկողությունը, Արշակունյաց սեպուհների դաստիարակությունը.

- 1) հազարապետ 2) մաղխազ 3) թագադիր ասպետ 4) հայր մարդպետ

30. Ինչ էր նշանակում «ոստանիկ այրուծի» Արշակունյաց Հայաստանում.

- 1) արքունիքին կից հատուկ հեծյալ ջոկատ
- 2) թագավորական ոստանում տեղակայված աշխարհագոր
- 3) նախարարներին ենթակա հեծելագոր
- 4) մաղխազին ենթակա այրուծի

31. Ինչ գործառույթ ուներ «մաղխազ» պաշտոնյան Արշակունյաց Հայաստանում.

- 1) ղեկավարում էր հանրագուտ աշխատանքների կատարումը
- 2) արքունի արարողապետն էր
- 3) արքունիքի և թագավորական պահակազորի հրամանատարն էր
- 4) վերահսկում էր օրենքների անխափան կատարումը թագավորության ողջ տարածքում

32. Ինչ էր նշանակում «բդեշխ» Արշակունյաց Հայաստանում.

- 1) արքունի դիվանի (արխիվի) ղեկավար
- 2) սահմանակալ նահանգի տեր
- 3) գլխավոր հարկահավաք
- 4) արքունի այրուծիի հրամանատար

33. Ինչ էր նշանակում «պտղի և տասանորդի կարգ» վաղ ավատատիրական Հայաստանում.

- 1) բերքից արքունիքին վճարվող տուրք
- 2) բերքից եկեղեցուն վճարվող տուրք
- 3) բերքից գավառակալ իշխանին վճարվող տուրք
- 4) բերքից գլխավոր հարկահավաքին վճարվող տուրք

34. Ինչ էր նշանակում «աշխարհաժողով» վաղ ավատատիրական Հայաստանում.

- 1) համաժողովրդական ժողով, որտեղ քննարկվում էին երկրի համար առավել կարևոր հարցերը
- 2) արքունիքում գումարվող հավաք, որին մասնակցում էին աշխարհատեր նախարարները՝ նահանգների կառավարիչները
- 3) ամբողջ երկրից հավաքվող հարկային գումարը, որը տնօրինելու բացառիկ իրավունքը պատկանում էր հազարապետին
- 4) Հայաստանի ողջ տարածքից հավաքվող աշխարհագոր

35. Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.

- | | |
|----------------------------|-----------|
| 1) բանակ արքունի | 4) մաղխազ |
| 2) հազարապետություն | 5) երդ |
| 3) թագադիր (թագակապ) ասպետ | |

ա. թագավորի մշտական խորհրդատու

բ. պալատական արարողությունների և օտար երկրների դեսպանների ընդունելության համար պատասխանատու

- գ. արքունիքի և թագավորական պահակազորի հրամանատար
- դ. տնտեսական-հարկային վարչություն, նաև տնօրինում էր հանրային աշխատանքները կամ պետական պարիսկները
- ե. հարկատու մեկ միավոր
- զ. թագավորի հեծելազորի տեղակայման վայր

- 1) 1-գ, 2-դ, 3-բ, 4-գ, 5-ե
- 2) 1-ե, 2-բ, 3-դ, 4-գ, 5-ա
- 3) 1-գ, 2-ե, 3-բ, 4-դ, 5-ա
- 4) 1-բ, 2-ա, 3-դ, 4-ե, 5-գ

36. Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.

- 1) գահնամակ
- 2) ոստանիկ այրուծի
- 3) հայրենիք
- 4) աշխարհագր
- 5) պարզևական
- 6) ոռճիկ

- ա. պատերազմի ժամանակ քաղաքացիներից ու գյուղացիներից հավաքագրված զորք
- բ. ժառանգաբար հորից որդուն անցնող մասնավոր հողեր
- գ. դրամական և բնամթերք նպաստ
- դ. արքունիքին կից՝ հեծյալ ջոկատներից կազմված զորամաս
- ե. պայմանական հողատիրություն
- զ. երկրի միացյալ ռազմական ուժերը
- է. փաստաթուղթ, որը սահմանում էր հայ նախարարների կարգը՝ ըստ զբաղեցրած պաշտոնական դիրքի, հզորության և զորաքանակի

- 1) 1-դ, 2-ա, 3-գ, 4-բ, 5-գ, 6-ե
- 2) 1-գ, 2-է, 3-դ, 4-գ, 5-ա, 6-բ
- 3) 1-է, 2-դ, 3-բ, 4-ա, 5-ե, 6-գ
- 4) 1-դ, 2-գ, 3-ա, 4-ե, 5-բ, 6-գ

37. Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.

- 1) մարզպանություն
- 2) սատրապություն
- 3) գանձագին
- 4) ոստանիկ
- 5) շահապ
- 6) ստրատեգիա

- ա. գավառ
- բ. վարչաքաղաքական խոշոր միավոր Սասանյան Պարսկաստանում
- գ. առանձին ազնվական խավ
- դ. վարչաքաղաքական խոշոր միավոր Պարսկաստանում Նադիր շահի օրոք
- ե. առուվաճառքի ենթակա մասնավոր հող
- զ. քաղաքի կառավարիչ Բագրատունյաց Հայաստանում
- է. վարչաքաղաքական մեծ միավոր Աքեմենյան Պարսկաստանում

- 1) 1-բ, 2-է, 3-ե, 4-գ, 5-գ, 6-ա
- 2) 1-դ, 2-գ, 3-բ, 4-գ, 5-ա, 6-է
- 3) 1-դ, 2-գ, 3-բ, 4-ա, 5-ե, 6-է
- 4) 1-բ, 2-է, 3-ե, 4-գ, 5-գ, 6-ա

38. Տրված տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.

- | | |
|-----------------------|--------------|
| 1) սենեսկալ | 4) հայրենիք |
| 2) պարզևական | 5) զորանամակ |
| 3) ագարակ և դաստակերտ | 6) մաղխազ |

- ա. հորից որդուն ժառանգաբար անցնող մասնավոր հողեր
- բ. արքունի եկամուտները և ծախսերը տնօրինող պաշտոնյա
- գ. թագավորական հեծելազորի տեղակայման վայր
- դ. մասնատիրական տնտեսություններ
- ե. պայմանական հողատիրություն
- զ. հայ նախարարների զորաքանակը սահմանող փաստաթուղթ
- է. արքունիքի և թագավորական պահակազորի հրամանատար

- | | |
|---------------------------------|---------------------------------|
| 1) 1-բ, 2-ե, 3-դ, 4-ա, 5-զ, 6-է | 3) 1-բ, 2-ա, 3-դ, 4-ե, 5-զ, 6-է |
| 2) 1-գ, 2-ա, 3-զ, 4-ե, 5-դ, 6-բ | 4) 1-զ, 2-ա, 3-դ, 4-բ, 5-զ, 6-ե |

39. Տրված տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.

- | | |
|--------------------|--------------------|
| 1) գործակալություն | 5) յուզբաշի |
| 2) սպասալարություն | 6) հիսնավոր |
| 3) ձիավոր | 7) վաշտ |
| 4) արքունի գունդ | 8) ոստանիկ այրուծի |

- ա. 50-ական զինվորից բաղկացած ստորաբաժանում
- բ. կենտրոնական կառավարման մարմին
- գ. թագավորական այրուծի
- դ. հեծելազորի հրամանատարության իրականացում
- ե. հիսուն հեծյալ ունեցող
- զ. անմիջականորեն թագավորին ենթարկվող գունդ
- է. զինվորական աստիճան, որը ստանալու համար պետք էր քննություն հանձնել ձիավարությունից և զենքերի գործածությունից
- ը. հարյուրապետ
- թ. հարյուր հեծյալ ունեցող

- | |
|---|
| 1) 1-բ, 2-դ, 3-զ, 4-զ, 5-թ, 6-ա, 7-ե, 8-է |
| 2) 1-բ, 2-դ, 3-է, 4-զ, 5-ը, 6-ե, 7-ա, 8-զ |
| 3) 1-բ, 2-դ, 3-է, 4-զ, 5-ը, 6-ե, 7-ա, 8-զ |
| 4) 1-դ, 2-բ, 3-է, 4-զ, 5-թ, 6-ա, 7-ե, 8-զ |

40. Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.

- | | |
|-----------------|-------------|
| 1) նախահայրենիք | 5) հայրենիք |
| 2) հազարաշեն | 6) աթաբեկ |

- 3) գանձագին
- 4) գունդստարբլ

- 7) սեպուհ
- 8) ամիրսպասալար

- ա. առուվաճառքի ենթակա մասնավոր հողեր
 - բ. հորից որդուն ժառանգաբար անցնող խոշոր մասնավոր հողեր
 - գ. նախապատմական ժամանակներում ներկայիս ժողովուրդների կազմած մեծ ընտանիքների զբաղեցրած տարածքներ
 - դ. բանակի ընդհանուր հրամանատար Կիլիկյան Հայաստանում
 - ե. երդիկավոր քարաշեն ծածկ
 - զ. իշխանական տան կրտսեր ներկայացուցիչ
 - է. զորքերի գլխավոր հրամանատար վրացական արքունիքում
 - ը. արքունական հեծելազորի հրամանատար Կիլիկյան Հայաստանում
 - թ. թագաժառանգի խնամակալ վրացական արքունիքում
- 1) 1-գ, 2-ե, 3-ա, 4-դ, 5-բ, 6-թ, 7-է, 8-ը
 - 2) 1-բ, 2-ե, 3-ա, 4-դ, 5-զ, 6-թ, 7-է, 8-ը
 - 3) 1-գ, 2-ե, 3-բ, 4-դ, 5-ա, 6-թ, 7-զ, 8-է
 - 4) 1-գ, 2-ե, 3-ա, 4-դ, 5-բ, 6-թ, 7-զ, 8-է

41. Ինչպե՞ս էր կոչվում ըստ գերդաստանների հավաքվող հարկը, որը ոչ մահմեդականներից գանձում էին արաբները.

- 1) ծխահարկ
- 2) աշար
- 3) տասանորդ
- 4) գլխահարկ

42. Ի՞նչ է նշանակում մամլուք.

- 1) սուլթանի անձնական զվարդիայում ծառայող գնված ստրուկ
- 2) խալիֆի թիկնազորի պետ
- 3) շահի անձնական կալվածքների կառավարիչ
- 4) մոնղոլական զինվոր

43. Ինչպե՞ս էր կոչվում արքունի եկամուտներն ու ծախսերը տնօրինող պաշտոնյան Կիլիկյան Հայաստանում.

- 1) պայլ
- 2) ասպետ
- 3) մարաջախտ
- 4) սենեսկալ

44. Ի՞նչ է նշանակում աթաբեկ.

- 1) թագաժառանգի խնամակալ
- 2) արարողապետ
- 3) հեծելազորի հրամանատար
- 4) արքունիքի կառավարիչ

45. Ի՞նչ է նշանակում նոյոն.

- 1) մոնղոլական հարկահավաք պաշտոնյա
- 2) մոնղոլական զորաջոկատի հրամանատար
- 3) մոնղոլ վաճառական
- 4) մոնղոլ զինվոր

46. Կիլիկյան Հայաստանում մարաջախտը զբաղվում էր.

- 1) բանակի սպառազինությամբ և պարենի մատակարարմամբ
- 2) հեծելազորի հավաքագրմամբ և զինավարժությամբ
- 3) արքունի ախոռների ղեկավարմամբ և ձիավարժությամբ
- 4) զորանոցի ախտահանման և զինվորների բուժման աշխատանքներով

47. Ինչ է նշանակում ամիրսպասալար.

- 1) հեծելազորի հրամանատար
- 2) սպարապետ
- 3) արքունի կալվածքների կառավարիչ
- 4) թագաժառանգի խնամակալ

48. Ինչ է նշանակում շահաստան.

- 1) շահական նստավայր
- 2) միջնաբերդ
- 3) բուն քաղաք
- 4) շուկա

49. Ինչ է նշանակում կալվածք.

- 1) համայնքային տնտեսություն
- 2) հացահատիկ մաքրելու վայր
- 3) հացահատիկ պահելու վայր
- 4) ավատատիրական խոշոր տնտեսություն

50. Ինչ է նշանակում շահապ.

- 1) շահական թիկնազորի հրամանատար Սասանյան Իրանում
- 2) սելջուկյան զորահրամանատար
- 3) քաղաքի կառավարիչ Բագրատունյաց Հայաստանում
- 4) փոխարքայության կառավարիչ Արաբական խալիֆայությունում

51. Ինչպե՞ս էր կոչվում մանրավաճառ առևտրականը Բագրատունյաց Հայաստանում.

- 1) խոջա
- 2) փերեզակ
- 3) շահնա
- 4) քալանթար

52. Ինչն է բնութագրական եղել զարգացած ավատատիրության ժամանակաշրջանի բոլոր երկրների համար.

- 1) ավատատիրական խոշոր միապետությունների կազմավորումը
- 2) ավատատիրական մասնատվածությունը և կենտրոնախույս ձգտումները
- 3) բացարձակ միապետությունների առաջացումը
- 4) կենտրոնացված պետությունների ստեղծումը

53. Ընտրել տերմինների կամ հասկացությունների երկու ճիշտ բացատրությունները.

- 1) Արքունի եկամուտներն ու ծախսերը տնօրինող պաշտոնյան Կիլիկյան Հայաստանում կոչվում էր պայր:
- 2) Բագրատունիների ժամանակաշրջանում բուն քաղաքը կոչվում էր շահաստան:
- 3) Արշակունյաց Հայաստանում ավագների խորհուրդը կոչվում էր երիցանի:
- 4) Հայր մարդպետ կոչվում էր արքունի թիկնազորի հրամանատարը:
- 5) Բագրատունյաց Հայաստանում հարկահանությանը, շուկաներին, առևտրին, արհեստներին հետևող հատուկ պաշտոնյան կոչվում էր մուխասիբ:

- 54. Ընտրել տերմինների կամ հասկացությունների երկու ճիշտ բացատրությունները.**
- 1) Բագրատունյաց Հայաստանում մարզպանական գնդերն իշխաններին ենթակա զորամասերն էին:
 - 2) Խնամակալության (պայլության) գործակալությունը Կիլիկյան Հայաստանում ստեղծվեց թագավորության հռչակումից հետո:
 - 3) Կիլիկյան Հայաստանում արքունի ծախսերն ու եկամուտները տնօրինում էր կանցլերը:
 - 4) Կիլիկյան Հայաստանում ևս սահմանվել էր ասպետի (ծիավորի) աստիճան:
 - 5) Պարոնտերը Բագրատունյաց Հայաստանում փոխարինում էր Արշակունիների շրջանի հայր մարդպետին:
- 55. Բագրատունյաց Հայաստանում իշխանաց իշխանի գործառույթներից էր.**
- 1) ոստանիկ այրուձիի հրամանատարությունը
 - 2) ենթակա իշխանների գործունեության համար թագավորին հաշվետու լինելը
 - 3) նրան էին ենթարկվում արքայական կալվածքները տնօրինողները, պետական գանձարանը, երկրի մեծ ու փոքր պաշտոնյաները
 - 4) արքունիքի պահպանությունը, արքունի պահակազորի հրամանատարությունը
 - 5) թագաժառանգի դաստիարակությունը և խնամակալությունը
- 56. Կիլիկյան Հայաստանում պայլի գործառույթներից էր.**
- 1) արքայի բացակայության դեպքում նրան փոխարինելը
 - 2) արքունի կարգ ու կանոնի պահպանումը
 - 3) պետական գանձարանի վերահսկումը
 - 4) թագավորի անչափահասության դեպքում ոչ միայն նրա, այլև ամբողջ երկրի խնամակալության իրականացումը
 - 5) արքունի պալատի կառավարումը
- 57. Կիլիկյան Հայաստանում թագադիր գործակալի գործառույթներից էր.**
- 1) թագավորի գլխին թագ դնելը
 - 2) դիվանագիտական բանակցություններին հետևելը
 - 3) պալատի եկամուտները և ծախսերը տնօրինելը
 - 4) արքունի պահակազորի ղեկավարումը
 - 5) արքայական նշանները կապելը
 - 6) արքունի կարգ ու կանոնին հետևելը
 - 7) արքունի գանձարանի վերահսկումը
- 58. Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**
- | | |
|----------|----------------------|
| 1) սղնախ | 4) պարոնտեր |
| 2) նոյոն | 5) մարզպանական գունդ |
| 3) բեկ | 6) գունդստար |

- ա. սեփական կալվածքները կամովին եկեղեցուն հանձնած և հոգևոր կոչում ընդունած հայ կալվածատեր
- բ. իշխաններին ենթակա զորամասեր Բագրատունյաց Հայաստանում
- գ. բանակի ընդհանուր հրամանատարը Կիլիկյան Հայաստանում
- դ. մելիքական տոհմի կրտսեր ներկայացուցիչ
- ե. մոնղոլական զորաջոկատի հրամանատար
- զ. պաշտպանական հենակետային ամրություններ Արցախում
- է. սելջուկ զորահրամանատար

- 1) 1-ե, 2-բ, 3-է, 4-դ, 5-զ, 6-գ 3) 1-զ, 2-ե, 3-դ, 4-ա, 5-բ, 6-գ
- 2) 1-ա, 2-զ, 3-բ, 4-գ, 5-ե, 6-է 4) 1-ա, 2-զ, 3-բ, 4-ե, 5-գ, 6-է

59. Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.

- 1) գունդստաբլ 5) կանցլեր
- 2) ունիթոր 6) սենեսկալ
- 3) պայլ 7) սպասալար
- 4) մամլուք

- ա. խնամակալ
- բ. սուլթանի անձնական գվարդիայում ծառայող գնված ստրուկ
- գ. Հայ եկեղեցին քրիստոնեական մյուս եկեղեցիների հետ միավորելու կողմնակից
- դ. բանակի ընդհանուր հրամանատար
- ե. արքունական հեծելազորի հրամանատար
- զ. արքունի քարտուղարության գլխավոր պաշտոնյա
- է. արքունի եկամուտները և ծախսերը տնօրինող պաշտոնյա
- ը. Հայ եկեղեցին ռուսական եկեղեցուն միավորելու կողմնակից

- 1) 1-ե, 2-ը, 3-բ, 4-զ, 5-գ, 6-է, 7-ա 3) 1-դ, 2-զ, 3-ա, 4-բ, 5-գ, 6-է, 7-ե
- 2) 1-զ, 2-բ, 3-ե, 4-դ, 5-ա, 6-գ, 7-է 4) 1-բ, 2-ը, 3-զ, 4-ա, 5-ե, 6-է, 7-զ

60. Հասկացությունները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.

- 1) արքունի պալատի կառավարիչ Կիլիկյան Հայաստանում
- 2) Հայոց եկեղեցին քրիստոնեական մյուս եկեղեցիների հետ միավորելու հակառակորդ Կիլիկյան Հայաստանում
- 3) օտար երկրների ներկայացուցիչների հետ բանակցություններ վարող պաշտոնյա Կիլիկյան Հայաստանում
- 4) գնված ստրուկ, որը ծառայում էր եգիպտական սուլթանի անձնական գվարդիայում
- 5) արքունիքի մեջ մտնող պետական կառավարման մարմին
- 6) կիրականօրյա շուկա
- 7) արքունական հեծելազորի հրամանատար Կիլիկյան Հայաստանում
- 8) Քաղկեդոնի 451 թ. եկեղեցական ժողովի կողմնակից

- ա. բարձրագույն դատական ատյան
- բ. հակաունիթոր
- գ. երկաբնակ
- դ. մամլուք
- ե. կանցլեր

- զ. սենեսկալ
- է. սպասալար
- ը. ամիրսպասալար
- թ. տոնավաճառ

- 1) 1-ե, 2-դ, 3-ա, 4-գ, 5-զ, 6-է, 7-ը, 8-բ
- 2) 1-զ, 2-բ, 3-ե, 4-դ, 5-ա, 6-թ, 7-է, 8-գ
- 3) 1-զ, 2-բ, 3-ե, 4-դ, 5-թ, 6-ա, 7-է, 8-գ
- 4) 1-զ, 2-դ, 3-գ, 4-ա, 5-ե, 6-է, 7-ը, 8-բ

61. Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.

- | | |
|----------------------|-------------|
| 1) սենեսկալ | 5) նոյն |
| 2) մարզպանական գունդ | 6) փերեզակ |
| 3) փոխարքայություն | 7) շահապ |
| 4) շահնշահ | 8) շահաստան |

- ա. թագավորների թագավոր
- բ. արքունի պալատի կառավարիչ
- գ. մարզպանների անձնական գվարդիա
- դ. իշխաններին ենթակա զորամաս
- ե. վարչաքաղաքական միավոր
- զ. քաղաքի կառավարիչ Բագրատունյաց Հայաստանում
- է. մանրավաճառ առևտրական
- ը. բուն քաղաք
- թ. մոնղոլական զորաջոկատի հրամանատար

- 1) 1-բ, 2-դ, 3-ե, 4-ա, 5-թ, 6-է, 7-զ, 8-ը
- 2) 1-ա, 2-զ, 3-դ, 4-ե, 5-բ, 6-է, 7-ը, 8-գ
- 3) 1-բ, 2-դ, 3-ե, 4-գ, 5-ա, 6-զ, 7-է, 8-թ
- 4) 1-զ, 2-բ, 3-գ, 4-դ, 5-ա, 6-թ, 7-է, 8-ը

62. Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.

- | | |
|--------------|-------------------|
| 1) փերեզակ | 5) մարզպանություն |
| 2) շահապ | 6) գանձագին |
| 3) շահաստան | 7) մաղխազ |
| 4) մուխթասիբ | |

- ա. շահական նստավայր
- բ. հարկահանությանը, առևտրին, շուկաներին, արհեստներին հետևող պաշտոնյա
- գ. մանրավաճառ առևտրական
- դ. բուն քաղաք

ե. քաղաքապետ

զ. արքունիքի և թագավորական պահակազորի հրամանատար

է. վարչաքաղաքական միավոր

ը. հողատիրության ձև

1) 1-դ, 2-ա, 3-գ, 4-զ, 5-բ, 6-է, 7-ե

3) 1-գ, 2-ե, 3-ա, 4-դ, 5-բ, 6-ը, 7-զ

2) 1-գ, 2-ե, 3-դ, 4-բ, 5-է, 6-ը, 7-զ

4) 1-ե, 2-բ, 3-գ, 4-ա, 5-է, 6-դ, 7-զ

63. Հասկացությունները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.

1) սպասարարություն

3) գործակալություն

2) խնամակալություն

4) մարաջախտություն

ա. կենտրոնական կառավարման մարմին

բ. արքունի պահակազորի հրամանատարության իրականացում

գ. թագավորի առաջին խորհրդականի գործառույթի իրականացում

դ. հեծելազորի հրամանատարության իրականացում

ե. բանակի սպառազինության և պարենամթերքով ապահովման իրականացում

1) 1-ա, 2-բ, 3-դ, 4-զ

3) 1-գ, 2-ա, 3-բ, 4-դ

2) 1-բ, 2-դ, 3-գ, 4-ե

4) 1-դ, 2-գ, 3-ա, 4-ե

64. Հասկացությունները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.

1) ձիավոր

6) գահնամակ

2) զորանամակ

7) մաղխազ

3) գանձագին

8) երդ

4) ազատ

9) Ոստան Հայոց

5) ստրատեգոս

ա. բարձր դասի ներկայացուցիչ

բ. հայ նախարարների զորաքանակը սահմանող փաստաթուղթ

գ. զինվորական աստիճան, որը ստանալու համար պետք էր քննություն հանձնել ձիավարժությունից և զենքերի գործածությունից

դ. ընդերքի նկատմամբ թագավորի սեփականատիրական իրավունք

ե. առուվաճառքի ենթակա հող

զ. արքունիքում հայ նախարարների տեղը սահմանող փաստաթուղթ

է. արքունի հողային տիրույթների կենտրոն

ը. հարկատու մեկ միավոր

թ. արքունիքի և թագավորական պահակազորի հրամանատար

ժ. գավառի կառավարիչ

- 1) 1-թ, 2-դ, 3-գ, 4-է, 5-ա, 6-բ, 7-զ, 8-ժ, 9-ե
- 2) 1-գ, 2-բ, 3-ե, 4-ա, 5- ժ, 6-զ, 7-թ, 8-ը, 9-է
- 3) 1-գ, 2-բ, 3-ե, 4-թ, 5-զ, 6-ժ, 7-ա, 8-ը, 9-է
- 4) 1-ե, 2-թ, 3-բ, 4-դ, 5-զ, 6-ա, 7-ը, 8-ժ, 9-է

65. Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.

- | | |
|--------------------|------------------|
| 1) արքայական գունդ | 4) արքունի գունդ |
| 2) արքունի բանակ | 5) մաղխազ |
| 3) վաշտ | |

ա. 50-ական զինվորից բաղկացած ստորաբաժանում
 բ. հեծյալ զորամիավորումներից բաղկացած ընտրյալ ուժեր
 գ. թագավորական պահակազորի հրամանատար
 դ. թագավորի հեծելազորի տեղակայման վայր
 ե. անմիջականորեն թագավորին ենթարկվող գունդ
 զ. արքունի կավլածքների և գանձարանի հսկողությունն իրականացնող պաշտոնյա

- | | |
|----------------------------|----------------------------|
| 1) 1-ե, 2-բ, 3-ա, 4-դ, 5-զ | 3) 1-գ, 2-ե, 3-դ, 4-ա, 5-բ |
| 2) 1-ե, 2-զ, 3-բ, 4-ա, 5-զ | 4) 1-բ, 2-դ, 3-ա, 4-ե, 5-զ |

66. Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.

- | | |
|-------------|---------------|
| 1) գահնամակ | 4) աշխարհազոր |
| 2) սենեսկալ | 5) պարզևական |
| 3) հայրենիք | |

ա. պատերազմի ժամանակ քաղաքացիներից ու գյուղացիներից հավաքագրվող զորք
 բ. ժառանգաբար հորից որդուն անցնող մասնավոր հողատարածք
 գ. փաստաթուղթ, որը սահմանում էր հայ նախարարների կարգը՝ ըստ զբաղեցրած պաշտոնական դիրքի և հզորության
 դ. արքունի եկամուտները և ծախսերը տնօրինող պաշտոնյա
 ե. պայմանական հողատիրություն
 զ. երկրի միացյալ ռազմական ուժերը

- | | |
|----------------------------|----------------------------|
| 1) 1-դ, 2-ա, 3-զ, 4-բ, 5-զ | 3) 1-գ, 2-դ, 3-բ, 4-ա, 5-ե |
| 2) 1-գ, 2-բ, 3-դ, 4-զ, 5-ա | 4) 1-դ, 2-զ, 3-ա, 4-ե, 5-բ |

67. Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.

- | | |
|-------------|----------------|
| 1) պարոնտեր | 4) յուզբաշի |
| 2) բեկ | 5) Շահ-ի Արման |
| 3) մելիք | |

- ա. նվաճողներին հպատակված, լեռնային երկրամասերում տիրապետությունը պահպանած հայ իշխան
- բ. հարյուրապետ
- գ. Հայաստանի թագավոր
- դ. մելիքական տոհմի կրտսեր ներկայացուցիչ
- ե. հոգևոր կոչում ընդունած հայ ավատատեր
- զ. եպիսկոպոսապետ

- 1) 1-ե, 2-դ, 3-ա, 4-բ, 5-գ
- 2) 1-գ, 2-բ, 3-զ, 4-դ, 5-ե
- 3) 1-գ, 2-ա, 3-բ, 4-դ, 5-զ
- 4) 1-դ, 2-զ, 3-ա, 4-գ, 5-բ

68. Հասկացությունները համապատասխանեցնել իրենց նշանակությանը.

- 1) արքունիք
- 2) ինքնակալ միապետ
- 3) հիսնավոր
- 4) երդ
- 5) այրուձի

- ա. հեծելազորային ուժերի միավորում
- բ. մեկ հարկատու միավոր
- գ. հիսուն հեծյալ ունեցող
- դ. պետության կառավարման գլխավոր մարմին
- ե. հիսուն մարտիկից բաղկացած վաշտի հրամանատար
- զ. պետության գործերը անձամբ լուծող թագավոր

- 1) 1-զ, 2-բ, 3-ա, 4-գ, 5-դ
- 2) 1-դ, 2-զ, 3-գ, 4-բ, 5-ա
- 3) 1-դ, 2-զ, 3-բ, 4-գ, 5-ե
- 4) 1-զ, 2-դ, 3-գ, 4-բ, 5-ա

69. Հասկացությունները համապատասխանեցնել իրենց նշանակությանը.

- 1) մարդպետություն
- 2) հազարապետություն
- 3) ոստանիկ այրուձի
- 4) ասպետություն
- 5) մարզպանություն

- ա. վարչաքաղաքական միավոր
- բ. թագավորական այրուձի
- գ. հեծելազորի հրամանատարություն
- դ. արքունի կալվածքների և գանձարանի համար պատասխանատու գործակալություն
- ե. պալատական արարողությունների և դեսպանների ընդունելության համար պատասխանատու գործակալություն
- զ. երկրի տնտեսական-հարկային վարչություն, որը տնօրինում էր նաև պետական պարիակների կատարումը

- 1) 1-զ, 2-դ, 3-գ, 4-ե, 5-ա
- 2) 1-գ, 2-ա, 3-դ, 4-բ, 5-ե
- 3) 1-դ, 2-զ, 3-բ, 4-ե, 5-ա
- 4) 1-ա, 2-զ, 3-ե, 4-դ, 5-բ

70. Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.

- | | |
|-------------|------------------------|
| 1) տասանորդ | 6) մադիսագական այրուձի |
| 2) փերեզակ | 7) սպասալար |
| 3) սեպուի | 8) շահնշահ |
| 4) շահապ | 9) մարզպանություն |
| 5) կանցլեր | |

ա. շահի պահապան

բ. արքունական հեծելազորի հրամանատար Կիլիկյան Հայաստանում

գ. ընտրյալ նետաձիգներից բաղկացած և մշտապես արքունիքում գտնվող, թագավորի անձի պաշտպանությունն ապահովող ընտիր հեծելազոր Արշակունյաց Հայաստանում

դ. իշխանական տան կրտսեր ներկայացուցիչ վաղ միջնադարյան Հայաստանում

ե. եկեղեցուն վճարվող հարկատեսակ

զ. քաղաքի կառավարիչ Բագրատունյաց Հայաստանում

է. թագավորների թագավոր

ը. մանրավաճառ առևտրական Բագրատունյաց Հայաստանում

թ. վարչաքաղաքական միավոր Սասանյան Պարսկաստանում

ժ. արքունի քարտուղարություն գործակալության գլխավոր պաշտոնյան Կիլիկյան Հայաստանում

- 1) 1-ե, 2-ը, 3-դ, 4-գ, 5-ժ, 6-զ, 7-բ, 8-է, 9-թ
- 2) 1-դ, 2-ա, 3-թ, 4-բ, 5-գ, 6-է, 7-ժ, 8-ը, 9-ե
- 3) 1-դ, 2-ը, 3-բ, 4-ժ, 5-ա, 6-թ, 7-գ, 8-ե, 9-գ
- 4) 1-ե, 2-ը, 3-դ, 4-գ, 5-բ, 6-զ, 7-ա, 8-է, 9-թ

71. Տերմինները համապատասխանեցնել իրենց բացատրությանը.

- | | |
|-----------------|-------------|
| 1) ոստանիկներ | 6) երդ |
| 2) աթաբեկ | 7) նորք |
| 3) սպասալար | 8) հայրենիք |
| 4) ամիրսպասալար | 9) խուրալ |
| 5) դաստակերտ | |

ա. թագաժառանգի խնամակալ

բ. զորքերի գլխավոր հրամանատար վրացական արքունիքում

գ. մասնատիրական տնտեսություն

դ. Արշակունյաց շառավիղներից կազմված առանձին ազնվական խավ

ե. ավատատիրական խոշոր տնտեսություն

զ. արքունական հեծելազորի հրամանատար Կիլիկյան Հայաստանում

է. հարկատու մեկ միավոր

- ը. ժառանգաբար հորից որդուն անցնող մասնավոր հողատարածք
- թ. մոնոլիթական ցեղերի ժողով
- ժ. մշակելի դարձած հողային տարածք

- 1) 1-ե, 2-ը, 3-դ, 4-գ, 5-ժ, 6-գ, 7-բ, 8-է, 9-թ
- 2) 1-դ, 2-ա, 3-գ, 4-բ, 5-գ, 6-է, 7-ժ, 8-ը, 9-թ
- 3) 1-դ, 2-ա, 3-գ, 4-բ, 5-գ, 6-ժ, 7-է, 8-ը, 9-ե
- 4) 1-ե, 2-ը, 3-դ, 4-գ, 5-բ, 6-գ, 7-ա, 8-է, 9-ժ

72. Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.

- | | |
|----------------------|---------------|
| 1) կոմեա | 6) գունդաստար |
| 2) ծխահարկ | 7) մարաջախտ |
| 3) քաղկեդոնական | 8) գանձագին |
| 4) թագավորական գունդ | 9) սարդար |
| 5) հայր մարդպետ | |

- ա. արքունի կալվածքների ու գանձարանի հսկողությունը և Արշակունի սեպուհների դաստիարակությունն իրականացնողը վաղ միջնադարյան Հայաստանում
- բ. սպարապետի անմիջական տեղակալը, որը գլխավորում էր բանակի սպառազինության և պարենի մատակարարման գործը Կիլիկյան Հայաստանում
- գ. բանակի ընդհանուր հրամանատարը Կիլիկյան Հայաստանում
- դ. ըստ գերդաստանների հավաքվող հարկ, որը ոչ մահմեդականներից գանձում էին արաբները
- ե. զորագլուխ, զորահրամանատար
- զ. մեծ մասամբ մայրաքաղաքում և արքայական ամրոցներում պահվող զորամաս
- է. առուվաճառքի ենթակա հող
- ը. «մի անձ, երկու բնություն» բանաձևի հետևորդ
- թ. կուսակալ՝ Մեծ Հայքի՝ Հռոմին անցած արևմտյան մասում
- ժ. Հայոց եկեղեցին քրիստոնեական մյուս եկեղեցիների հետ միավորելու կողմնակից

- 1) 1-թ, 2-դ, 3-ը, 4-գ, 5-ա, 6-գ, 7-բ, 8-է, 9-ե
- 2) 1-թ, 2-դ, 3-ը, 4-գ, 5-գ, 6-ա, 7-բ, 8-է, 9-ե
- 3) 1-թ, 2-դ, 3-ժ, 4-բ, 5-գ, 6-ե, 7-է, 8-ը, 9-ա
- 4) 1-ե, 2-ը, 3-դ, 4-գ, 5-բ, 6-գ, 7-ա, 8-է, 9-թ

73. Հասկացությունները համապատասխանեցնել իրենց նշանակությանը.

- | | |
|-------------------------------|----------|
| 1) աշար | 6) ոստան |
| 2) «պտղի և տասանորդների կարգ» | 7) ռոճիկ |
| 3) ավագների խորհուրդ | 8) շահապ |
| 4) մուխթասիբ | 9) մելիք |
| 5) ոստանիկ այրուձի | |

- ա. արքունիքին կից՝ հատուկ հեծյալ ջոկատներից կազմված զորամաս
- բ. որոշ գավառներում իշխանությունն ու կառավարումը վերականգնած հայ իշխանական տների ժառանգ
- գ. դրամական և բնամթերք նպաստ
- դ. բերքի 1/10 մասը կազմող հարկ
- ե. քաղաքներում հարկահանությանը, շուկաներին, առևտրին, արհեստներին հետևող հատուկ պաշտոնյա
- զ. բերքից եկեղեցուն վճարվող տուրք
- է. քաղաքի կառավարիչ Բագրատունյաց Հայաստանում
- ը. հայոց թագավորներին պատկանող տարածք Արշակունյաց Հայաստանում
- թ. հանրային բարոյականությանը հետևող հատուկ պաշտոնյա Բագրատունյաց Հայաստանում
- ժ. խոշոր քաղաքները կառավարող մարմին Բագրատունյաց Հայաստանում

- 1) 1-դ, 2-զ, 3-ժ, 4-թ, 5-ը, 6-ա, 7-զ, 8-է, 9-բ
- 2) 1-զ, 2-ժ, 3-ե, 4-թ, 5-ա, 6-բ, 7-է, 8-զ, 9-ը
- 3) 1-դ, 2-զ, 3-ժ, 4-ե, 5-ա, 6-ը, 7-զ, 8-է, 9-բ
- 4) 1-զ, 2-ժ, 3-ե, 4-թ, 5-ա, 6-բ, 7-զ, 8-է, 9-ը

74. Կիլիկյան Հայաստանում իշխանաց իշխանի, այնուհետև թագավորի գործառույթներից չէր՝

- 1) օտար երկրների ներկայացուցիչների հետ բանակցություններ վարելը
- 2) պատերազմ հայտարարելը, հաշտություն և դաշինք կնքելը
- 3) քաղաքներ և ամրոցներ հիմնադրելը
- 4) արքունի եկամուտները և ծախսերը տնօրինելը
- 5) ռազմական նավատորմը ղեկավարելը
- 6) դրամ հատելը
- 7) գահաժառանգության խնդիրը լուծելը

5. ՊԱՏՄԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՆԵՐ ՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ

- 1. Հայաստանի ռազմական ուժը թուլացնելու նպատակով ինչ կատարեց Հազկերտ II-ը.**
 - 1) հայոց գնդերն ուղարկեց հյուսիս՝ բյուզանդացիների դեմ պատերազմելու
 - 2) հայոց գնդերն ուղարկեց արևելք՝ քոչվոր հոների դեմ պատերազմելու
 - 3) հայոց գնդերն ուղարկեց հարավ՝ քոչվոր հոների դեմ պատերազմելու
 - 4) հայոց գնդերն ուղարկեց արևմուտք՝ քոչվոր քուշանների դեմ պատերազմելու
- 2. Ինչո՞ւ էր Վարդան Մամիկոնյանը Աղվանքից շուտափոյթ վերադարձել Հայաստան.**
 - 1) Որովհետև լուր էր ստացել, որ պարսից մեծաքանակ զորքը մոտեցել էր Հայաստանի սահմաններին:
 - 2) Հայտնի էր դարձել, որ Վասակ Սյունին հեռացել էր ապստամբներից և հաստատվել Սյունիքում:
 - 3) Հայտնի էր դարձել, որ բյուզանդական կայսրը ոչ միայն հրաժարվել էր ապստամբներից օգնելուց, այլև դաշինք էր կնքել Հազկերտ II-ի հետ:
 - 4) Որովհետև լուր էր ստացել, որ բյուզանդական զորքերը ներխուժել էին Արևելյան Հայաստանի սահմաններ:
- 3. Ինչպե՞ս վարվեցին մարզպան Վասակի հետ Տիգրանում.**
 - 1) ցմահ դատապարտեցին
 - 2) թույլատրվեց վերադառնալ հայրենիք
 - 3) մահապատժի ենթարկվեց
 - 4) նրան վերադարձրին իր տոհմական կալվածքները
- 4. Ինչո՞ւ պարսից զորքը 484 թ. Հայաստանից արագորեն վերադարձավ Պարսկաստան.**
 - 1) Որովհետև պարսից զորքերը Ներսեհապատի ճակատամարտում պարտություն էին կրել և մեծ քանակությամբ զոհեր տվել:
 - 2) Որովհետև պարսից զորքերը Ճարմանայի ճակատամարտում հաղթանակ տանելուց հետո շարժվելու էին հեփթաղների դեմ:
 - 3) Որովհետև պարսից զորքերը Ճորա պահակի մոտ պարտություն էին կրել հեփթաղներից, իսկ Պերոզ արքան գերի էր ընկել:
 - 4) Որովհետև պարսից զորքերը Միջին Ասիայում պարտություն էին կրել հեփթաղներից, իսկ Պերոզ արքան սպանվել էր:

- 5. Հուստինիանոս I-ը պաշտոնանկ էր արել և պալատում արգելափակել Արտավան Արշակունուն, որովհետև.**
- 1) Նա գաղտնի բանակցել էր պարսիկների հետ:
 - 2) Նա գլխավորել էր Սիտտաս զորավարի դեմ կազմակերպված մահափորձը:
 - 3) Նա Հյուսիսային Աֆրիկայում պարտություններ էր կրել, և նրա զորքը զգալի մարդկային կորուստներ էր ունեցել:
 - 4) Նա մասնակցել էր Արշակ Արշակունու՝ Հուստինիանոսի դեմ կազմակերպած դավադրությանը:
- 6. Թվարկվածներից որը 571 թ. հակապարսկական ապստամբության պատճառներից չէ.**
- 1) հարկերի ու տուրքերի ծանրացումը
 - 2) պարսից արքայի կողմից սեպուհներին հողեր ժառանգելու իրավունքի շնորհումը
 - 3) վարչական ու կրոնական ճնշումների ուժեղացումը
 - 4) հայ բնակչության հարստահարության սաստկացումը
- 7. Գագիկ Արծրունիի Սմբատ II-ից խնդրեց իրեն վերադարձնել Նախճավան քաղաքը՝ պատճառաբանելով, որ՝**
- 1) քաղաքը տնտեսական, վարչական կարևոր կենտրոն էր
 - 2) քաղաքն իր նստավայրն էր
 - 3) քաղաքը ժամանակին եղել էր Վասպուրականի կազմում
 - 4) քաղաքը ռազմավարական նշանակություն ուներ
- 8. Ինչո՞վ ավարտվեց Ձիրավի ճակատամարտը.**
- 1) հայ-հռոմեական զորքերի պարտությամբ
 - 2) պարսկական ուժերի հաղթանակով
 - 3) հայ-հռոմեական զորքերի հաղթանակով
 - 4) հայկական բանակի պարտությամբ
- 9. Ստորև տրված են պատմական իրադարձությունների պատճառներ և հետևանքներ: Գտնել ճիշտ պատասխանները.**
- 1) Միլանի հրովարտակով քրիստոնեությունը հռչակվեց Հռոմեական կայսրության պետական կրոն:
 - 2) Արտաշես Արշակունու գահազրկման և արգելափակման արդյունքում վերջնականապես կործանվեց նախարարական համակարգը, և վերացավ հայոց պետականությունը:
 - 3) Հուստինիանոս I-ի կատարած ռազմավարչական բաժանման արդյունքում Արևմտյան Հայաստանում կառավարումն անցավ բյուզանդական զինվորական պաշտոնյաներին:
 - 4) Հուստինիանոս I-ի կատարած ռազմավարչական բաժանման արդյունքում Արևմտյան Հայաստանում կառավարումն անցավ հայ զինվորական և քաղաքացիական պաշտոնյաներին:

- 5) Միլանի հրովարտակով Հռոմեական կայսրությունում քրիստոնեությունը հռչակվեց ազատ և մյուս կրոններին իրավահավասար կրոն:
- 6) Արտաշես Արշակունու գահազրկման և արգելափակման արդյունքում Հայաստանը կրկին վերաբաժանվեց Սասանյան Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև:
- 7) Հուստինիանոս I-ի կատարած ռազմավարչական բաժանման արդյունքում Արևմտյան Հայաստանում կառավարումն անցավ բյուզանդական քաղաքացիական պաշտոնյաներին:
- 8) Արտաշես Արշակունու գահազրկման և արգելափակման արդյունքում վերացավ հայ Արշակունիների թագավորությունը:

10. Հայոց իշխանաց իշխան Աշոտ Բագրատունու կողմից հայ նախարարների միջև երկպառակությունները վերացնելը և իր ազդեցությունը նրանց վրա ամրապնդելը հետևանք էր այն բանի, որ նա՝

- 1) հայ իշխաններին ստիպեց վասալական հավատարմության երդում տալ իրեն
- 2) հայ ազդեցիկ գահերեց իշխանների ավագ որդիներին պատանդ պահեց արքունիքում
- 3) խնամիական կապեր հաստատեց Վիրքի և Արցախի գահերեց իշխանների հետ
- 4) խնամիական կապեր հաստատեց Սյունիքի և Վասպուրականի գահերեց իշխանների հետ

11. Բագրատունյաց թագավորության ժամանակաշրջանում տնտեսության զարգացման հետևանքն այն եղավ, որ.

- 1) արհեստագործությունն անջատվեց երկրագործությունից
- 2) երկրագործությունն անջատվեց անասնապահությունից
- 3) ձկնորսությունը դարձավ առաջատար ճյուղ
- 4) Հայաստանը դարձավ մանուֆակտուրային երկիր

12. Հայաստանի թուլանալը հետևանք էր Բյուզանդական կայսրության կողմից իրականացված հետևյալ միջոցառման.

- 1) Բյուզանդիային բռնակցված շրջանների հայ բնակչությունը և Հայոց եկեղեցին ենթարկվեցին ծանր հարկման, իսկ հայկական զորքերի մի մասն ուղարկվեց տերության խորքերը, մյուս մասն էլ ցիրուցան եղավ:
- 2) Քաղկեդոնականություն ընդունած հայ իշխաններին շնորհվեցին բարձր տիտղոսներ և կայսրության հյուսիսային շրջաններում տրվեցին ընդարձակ կալվածքներ, իսկ քաղկեդոնականություն չընդունած նախարարները զրկվեցին կալվածքներից և աքսորվեցին Կիլիկիա:
- 3) Հայկական զորքերի առանձին զորամիավորների հրամանատարներ նշանակվեցին բյուզանդացիներ, իսկ այդ զորամասերը բաշխվեցին բյուզանդական բանակների կազմում և ուղարկվեցին Հյուսիսային Միջագետք:
- 4) Հարկերից ազատվեցին միայն Բյուզանդական կայսրության տարածքում գտնվող Հայոց եկեղեցու թեմերը:
- 5) Հայ իշխաններին շնորհվեցին բարձր տիտղոսներ, և կայսրության արևմտյան շրջաններում նրանց տրվեցին ընդարձակ կալվածքներ:

13. Ֆիլիպին գահագրկելու և բանտարկելու պատճառ հանդիսացան հետևյալ հանգամանքները.

- 1) Ֆիլիպը արքունիքից հեռացնում էր ունիթորական հայ իշխաններին և խաչակիրներին ու կարևոր պաշտոնները հանձնում բյուզանդամետ հայ իշխաններին:
- 2) Ֆիլիպը սկսել էր արհամարհել հայոց ծիսակարգը և հովանավորում էր խաչակիրներին:
- 3) Ֆիլիպը թեև Կիլիկիան կառավարում էր հայկական օրենքներով, սակայն դարձել էր բյուզանդական եկեղեցու դավանանքի հետևորդ:
- 4) Ֆիլիպը թեև Կիլիկիան կառավարում էր հայկական օրենքներով և հարգում էր հայոց ծիսակարգը, սակայն չէր դարձել Հայոց եկեղեցու դավանանքի հետևորդ:
- 5) Ֆիլիպն արքունիքից հեռացնում էր հայ իշխաններին և կարևոր պաշտոնները հանձնում խաչակիրներին, կողոպտում էր կիլիկյան արքունի գանձերը և դրանք ուղարկում Անտիոք:

14. Ս. Էջմիածնում Հայոց կաթողիկոսության վերահաստատման հետևանքն այն եղավ, որ.

- 1) թեև ավելի բարձրացավ Այրարատյան աշխարհի ազգային-քաղաքական դերը, սակայն բուն հայրենիքում հայ ժողովրդի հետագա համախմբում տեղի չունեցավ
- 2) ավելի բարձրացավ Այրարատյան աշխարհի ազգային-քաղաքական դերը, և բուն հայրենիքում իրականացավ հայ ժողովրդի հետագա համախմբումը
- 3) թեև Այրարատյան աշխարհը չդարձավ համահայկական կենտրոն, սակայն ուշ միջնադարում հայոց պետականությունը պահպանվեց, և կիսանկախ նոր իշխանություններ առաջացան
- 4) ավելի պառակտվեց Հայ առաքելական եկեղեցին, նվիրապետական նոր աթոռներ առաջացան, և Մայր Աթոռը չկարողացավ պահպանել նախորդ դարերում իր ունեցած միավորիչ և պետականապահպան գործառույթը

15. Ինչ հետևանքներ ունեցավ մամլուքների կողմից 1292 թ. Հռոմկլա բերդաքաղաքի գրավումը: Գտնել սխալ պատասխանը.

- 1) սպանվեցին հոգևորականները, կաթողիկոսը գերի տարվեց
- 2) թալանվեցին ու ավերվեցին Հռոմկլայի եկեղեցիները
- 3) Հայոց կաթողիկոսությունը տեղափոխվեց Սիս
- 4) թագավորը ստիպված եղավ գահը հանձնել Նորեցիներին

16*. Ինչի հետևանք էին Իշպուհիի արձանագրած առաջին խոշոր հաջողությունները.

- 1) քաղաքային կյանքի աշխուժացման¹
- 2) Ասորեստանի ցուցաբերած ռազմաքաղաքական օժանդակության
- 3) ռազմական բարեփոխումների
- 4) Բաբելոնի հետ կնքած դաշինքի

* Ծանոթություն: Աստղանիշով նշվածները վերաբերում են Հին շրջանին (Մաս Ա, 5–րդ տիպ):

17*. Ինչ նպատակ էր հետապնդում Սարգուրի II-ը՝ ձգտելով Բաբելոն հասնելու Սիրիայի տարածքով և Եփրատի ավազանով.

- 1) ցանկանում էր տիրանալ Սիրիայի ծովափնյա քաղաքներին
- 2) նպատակ ուներ Վանի թագավորության սահմանները հասցնելու մինչև Պարսից ծոց
- 3) ցանկանում էր լիակատար շրջափակման ենթարկել Ասորեստանը
- 4) նպատակ ուներ իր վերահսկողությանը ենթարկելու Միջագետքով անցնող առևտրական մայրուղիները

18*. Ինչո՞ւ անհաջողություններ կրեց Ռուսա I-ը, և Սարգոն II-ը կարողացավ արշավել Վանի թագավորության դեմ.

- 1) Վանի թագավորությունում առաջացան տնտեսական դժվարություններ:
- 2) Երկիրը հայտնվեց երկու ճակատով հարձակվող թշնամիների օղակում:
- 3) Մինչ այդ կատարյալ անհաջողությամբ ավարտվեց Վանի թագավորության զորքերի արշավանքը դեպի Բաբելոն:
- 4) Ասորեստանը նախապես լուրջ քայլեր ձեռնարկեց և բարեփոխումների միջոցով հզորացրեց բանակը:

19*. Ինչո՞ւ ձախողվեց Դարեհ III-ի հետապնդումը, որ սկսել էր Ալեքսանդր Մակեդոնացին Գավգամելայի ճակատամարտում.

- 1) Ճիշտ ժամանակին օգնության հասան Միջին Ասիայից եկած զորքերը:
- 2) Հերոսաբար կռվեցին կենտրոնի և ձախ թևի զորքերը և թույլ տվեցին Աքեմենյան արքային հեռանալ մարտադաշտից:
- 3) Վճռական պահին դանդաղկոտություն ցուցաբերեց մակեդոնական այրուձին:
- 4) Հերոսական գործողություններով աչքի ընկան աջ թևի զորքերը, որոնք հարկադրեցին Ալեքսանդրին դադարեցնել Դարեհի հետապնդումը:

20*. Ինչ նպատակ էր հետապնդում Արտաշես I-ը՝ օժանդակելով Մարաստանի սելևկյան սատրապ Տիմարքոսի ապստամբությանը.

- 1) Ձգտում էր թուլացնելու Սելևկյան տերության դիրքերը Մերձավոր Արևելքում:
- 2) Նպատակ ուներ Տիմարքոսի հետ դաշնակցելով ազատվելու Սելևկյանների վերահսկողությունից:
- 3) Ցանկանում էր բարելավել հայ-մարական հարաբերությունները:
- 4) Միանալ Սելևկյաններին և պայքարել Հռոմի դեմ:

21*. Ինչ նպատակով էր Արտաշես I-ը հրապարակել հողային բարեփոխման վերաբերյալ իր հրամանագիրը.

- 1) Ամրապնդում էր իր քաղաքական հենարանի՝ հողային խոշոր սեփականատերերի հետ դաշինքը և վերջնականապես զրկում էր գյուղացիներին իրենց գոյությունը պահպանելու միակ միջոցից:
- 2) Ստիպելով ազարակատերերին վերադարձնել զավթած հողերը՝ հանդես էր գալիս որպես գյուղացիության պաշտպան և կանխում էր գյուղացիության հողագրկումը:

- 3) Մի կողմից օրինականացնում էր ագարակատերերի մինչ այդ կատարած զավթումները, իսկ մյուս կողմից պահպանում էր համայնքային սեփականությունը:
- 4) Թույլ էր տալիս շարունակել համայնքային հողերի անպատիժ յուրացումը, որովհետև զգուշանում էր խոշոր հողատերերի միահամուռ ապստամբությունից:

22*. Ինչ հետևանքներ ունեցան Տիգրան Մեծի նվաճումները.

- 1) Փոխվեց Առաջավոր Ասիայի քաղաքական քարտեզը:
- 2) Հռոմը պարտություն կրեց Միջերկրածովյան ավազանում գերիշխանության հասնելու համար ծավալված պայքարում:
- 3) Առաջին անգամ պատմության մեջ՝ Հայաստանի սահմանների մեջ, ընդգրկվեց ամբողջ Փոքր Ասիան:
- 4) Սելևկյան Ասորիքն ու Պարթևստանը իրենց դիրքերը զիջեցին Հայկական տերությանը:
- 5) Ստեղծվեց Հայկական տերությունը, որը հիմնավորապես տարբերվում էր Ալեքսանդր Մակեդոնացու և Սելևկյանների տերություններից:

23*. Ինչո՞ւ էր Տիգրան Մեծի համար օրակարգի հարց դարձել նոր մայրաքաղաքի կառուցումը.

- 1) Գերեվարված քաղաքային բնակչությունը այլևս հնարավոր չէր տեղավորել հին քաղաքներում, ուստի անհրաժեշտ էր ստեղծել շատ ավելի խոշոր մի քաղաք:
- 2) Արտաշատը մնացել էր տերության ծայր հյուսիսում և այլևս չէր կարող մայրաքաղաքի դեր կատարել:
- 3) Անտիոքը չէր կարող Հայկական տերության մայրաքաղաք դիտվել, քանի որ հայկական տարածքներից դուրս էր և ուներ գերազանցապես օտար բնակչություն:
- 4) Հետևելով հին հայկական ավանդույթին՝ Տիգրանը պետք է մայրաքաղաք կառուցեր այն վայրում, որտեղ նա թագադրվել էր:
- 5) Նոր մայրաքաղաք կառուցելով՝ Տիգրանը ցանկանում էր հենակետ և դաշնակից ձեռք բերել անհնազանդ ավազանու դեմ պայքարում:

24*. Ինչո՞ւ էր Հռոմը լրջորեն նախապատրաստվում Հայկական տերության դեմ պատերազմին.

- 1) Նպատակ ուներ խափանելու հայ-պոնտական միացյալ ուժերով Հունաստան ներխուժելու հին ծրագիրը, որը մշակել էր Միհրդատ Եվպատորը:
- 2) Հռոմը համարում էր, որ պետք է շտապել և հարձակվել Հայաստանի վրա մինչև հայ-պարթևական դաշինքի կնքումը:
- 3) Հայկական տերությունը դուրս էր եկել Միջերկրական ծով և ընդհուպ մոտեցել էր Եգիպտոսի սահմաններին:
- 4) Հռոմը ձգտում էր վրեժ լուծելու Տիգրան Մեծից՝ Հռոմի դեմ պատերազմում Միհրդատ Եվպատորին ցուցաբերած ռազմական մեծ օգնության համար:
- 5) Հզոր Հայաստանը Հռոմի առջև փակում էր Արևելք տանող բոլոր ճանապարհները:

25*. Ինչ հետևանք ունեցավ Հայաստանի համար Արտաշատի պայմանագրի կնքումը.

- 1) Հայաստանը պահպանեց իր տարածքային ամբողջականությունը և պետական անկախությունը:
- 2) Հայաստանը պահպանեց իր միջազգային հեղինակությունը:
- 3) Հայաստանը Հռոմին զիջեց իր երկրի արևմտյան նահանգները:
- 4) Հայաստանը կորցրեց մինչ այդ նվաճած բոլոր տարածքները:

26. Սասանյանները թշնամական դիրք էին բռնել հայերի նկատմամբ, որովհետև՝

- 1) հայ Արշակունիները հավատարիմ էին մնացել իրենց դաշնակից պարթև Արշակունիներին
- 2) Մեծ Հայքի թագավորությունը ձգտում էր Սասանյաններից գրավելու Ատրպատականը
- 3) հայ Արշակունիները կատարում էին Հռոմեական կայսրության հանձնարարությունը
- 4) Մեծ Հայքի թագավորությունը ցանկանում էր ազատագրվել Սասանյանների գերիշխանությունից

27. Դենշապուհի անցկացրած աշխարհագիրը պետական միջոցառում էր, որի նպատակներից էր.

- 1) ազատների դասին հողահարկից ազատելը
- 2) քաղաքային բնակչության համար հարկային արտոնություններ սահմանելը
- 3) հարկերի ծանրացումը և եկեղեցու ազատության սահմանափակումը
- 4) հողերի և բնակչության ճշգրիտ հաշվառումը և հարկերի արդարացի հավաքման իրականացումը

28. Որո՞նք էին V դարի հայ ապստամբական շարժման հետևանքները.

- 1) Արցախ և Ուտիք նահանգներում և հարակից տարածքներում հայոց թագավորության հիմնումը
- 2) հայոց անկախ պետականության վերականգնումը
- 3) Մեծ Հայքի անկախության վերականգնումը
- 4) հայ ժողովրդին ֆիզիկական բնաջնջումից փրկելը
- 5) հայոց պետականության փաստական վերականգնումը

29. Ինչ նպատակով է շահ Աբասը թուրքական բանակի շարժման ճանապարհին ընկած հայկական բնակավայրերի բնակչությանը գաղթեցրել Պարսկաստանի խորքերը.

- ա. Դրանով թուրքական բանակը կզրկվեր պարենից ու օթևանի հնարավորությունից և ի վիճակի չէր լինի շարունակելու արշավանքը:
- բ. Հայ որակյալ երկրագործներին ու արհեստավորներին բնակեցնելով երկրի ներքին գավառներում՝ շահը հույս ուներ զարգացնելու Պարսկաստանի տնտեսությունը:
- գ. Պարսկաստանի սահմանամերձ շրջաններ տեղափոխված հայերը կզինվորագրվեին պարսկական բանակին և կկատարեին թուրքական զորքերի առաջխաղացումը:

- դ. Թուրքիայի համար այլևս իմաստ չէր ունենա ավերված շրջանների գրավումը, և թուրքական բանակը չէր շարունակի արշավանքը:
- ե. Հայ առևտրականներին փոխադրելով երկրի հարավ՝ նա ձգտում էր հյուսիսում զարգացած մետաքսի առևտուրը տեղափոխելու Պարսից ծոց, ինչը տնտեսական մեծ վնաս կհասցներ Օսմանյան պետությանը:

- 1) ա, բ, ե 2) ա, դ, ե 3) բ, գ, դ 4) ա, բ, դ

30. Բերված պատճառներից գտնել երկուսը, որոնք անհրաժեշտ էին դարձնում կաթողիկոսական աթոռի տեղափոխումը Էջմիածին.

- ա. Անհրաժեշտ էր հայոց կաթողիկոսի գլխավորությամբ ազատագրական պայքար ծավալել Արևելյան Հայաստանում:
- բ. Կիլիկիայում թագավորական իշխանության վերացումից հետո այնտեղ գտնվող կաթողիկոսական աթոռը մնացել էր անպաշտպան:
- գ. Ամենայն հայոց կաթողիկոսությունը Էջմիածին տեղափոխելը պայմանավորված էր պարսկական իշխանությունների գործադրած հարկադրանքով:
- դ. Կտրված լինելով բուն Հայաստանից՝ Կիլիկիայում գտնվող կաթողիկոսական աթոռը չէր կարող լիարժեքորեն իրականացնել իր համահայկական դերակատարումը:
- ե. Կարա-կոյունլուները ձգտում էին տիրանալու Էջմիածինն ու դարձնելու իրենց մայրաքաղաքը, ուստի պետք էր կանխել նրանց մտադրության իրականացումը:

- 1) ա, ե 2) գ, դ 3) բ, դ 4) բ, ե

31. Ինչո՞ւ էին հայ գործիչները XVI դարում Հայաստանի ազատագրության համար դաշնակիցներ որոնում: Որովհետև՝

- 1) հայ ժողովուրդը ազատագրվելու անհրաժեշտությունը չէր գիտակցում և հույսը դրել էր միայն դրսի օգնության վրա
- 2) սեփական ուժերի անբավարարության և հակառակորդների հզորության պայմաններում անհնար էր եղած ուժերով ձեռնարկել Հայաստանի ազատագրության իրականացումը
- 3) հայ գործիչները փորձում էին բանակցությունների միջոցով տանելի վիճակ ստեղծել երկրում և որոշակի հույսեր էին կապում Ռուսաստանի միջամտության հետ
- 4) եկեղեցական ժողովները դատապարտում էին հայերի ազատագրական ձգտումները՝ զգուշանալով զանգվածային կոտորածների վտանգից

32. Ո՞րն էր Բագրատունյաց Հայաստանում կենտրոնացված պետության ստեղծման ջանքերի ձախողման գլխավոր պատճառը.

- 1) երկրի՝ տնտեսական առումով հետամնաց լինելը
- 2) արտաքին գործոնները
- 3) հայ իշխանների անհնազանդությունը
- 4) Հայոց եկեղեցու ղեկավարության դիրքորոշումը

33. Ո՞րն էր Անին բյուզանդացիներին հանձնելու պատճառը.

- 1) Արքունիքում մեծացել էր բյուզանդասերների թիվը, թուլացել էր բնակչության դիմադրական կորովը:
- 2) Բնակչությունը չհամախմբվեց սպարապետի շուրջը և չցանկացավ կռվել ոսոխի դեմ:
- 3) Հայ իշխանները միացան բյուզանդական բանակին և սատարեցին թշնամիներին:
- 4) Պետրոս Գետադարձ կաթողիկոսը համաձայնեց բյուզանդացիների քաղկեդոնականություն ընդունելու առաջարկի հետ և միացավ թշնամուն:

34. Ի՞նչ հետևանք ունեցավ Չաբեյի և Հեթումի ամուսնությունը.

- 1) Թագավորությունը ենթարկվեց Անտիոքի իշխանությանը:
- 2) Ներքաղաքական պայքարում հաղթանակ տարան կենտրոնախույս ուժերը:
- 3) Թագավորական իշխանությունը թուլացավ և կորցրեց հզորությունը:
- 4) Վերջապես լուծվեց գահակալության խնդիրը:

35. Ի՞նչ հետևանք ունեցավ ունիթորների և հակաունիթորների պայքարը.

- 1) Թույլ տվեց թագավորական իշխանությանը առավելություն ձեռք բերել բոլոր հասարակական խմբերի նկատմամբ:
- 2) Խախտեց Կիլիկիայի հասարակության միասնությունը և թուլացրեց երկիրը:
- 3) Նախադրյալներ ստեղծեց առաջադիմական ուժերի հաղթանակի համար:
- 4) Ամրապնդեց երկրում հոգևորականության դիրքերը:

36. Կիլիկյան Հայաստանում արքունիքը հանդես էր գալիս որպես եկեղեցիների միավորման կողմնակից, որովհետև՝

- 1) ձգտում էր ամրապնդելու առևտրական կապերը Արևմուտքի երկրների հետ
- 2) հույս ուներ օգնություն ստանալու Բյուզանդիայից
- 3) աշխատում էր ստեղծել քրիստոնեական երկրների դաշինք՝ ընդդեմ մահմեդականների
- 4) արևմտաեվրոպական երկրների հետ հոգևոր մշակութային միասնության հասնելու նպատակ էր հետապնդում

37. Կիլիկյան Հայաստանի գահը որոշվեց հանձնել ֆրանսիական ծագում ունեցող Լուսինյաններին, որովհետև՝

- 1) Լուսինյանները գահի միակ օրինական ժառանգորդներն էին
- 2) փորձ էր արվում Կիլիկիայի համար ապահովելու Արևմուտքի ռազմաքաղաքական օժանդակությունը
- 3) անհրաժեշտ էր այդ ճանապարհով երկիրը դուրս բերել քաղաքական մեկուսացումից
- 4) Կիպրոսում կառավարող Լուսինյանները կարող էին իրական օգնություն ցույց տալ Բյուզանդիայի դեմ պայքարում

38. Գտնել Կիլիկյան Հայաստանում ռազմական նավատորմի ստեղծման պատճառները.

- ա. Անհրաժեշտ էր պաշտպանել պետության ծովային սահմանները:
- բ. Առանց ռազմական նավատորմի օգնության հնարավոր չէր պաշտպանել մայրաքաղաք Սիսը:

- գ. Կիլիկյան Հայաստանը դարձել էր ծովահենների գլխավոր հենակետը, իսկ հայոց պետությունը նրանց հետ մշտական բախումների մեջ էր գտնվում:
- դ. Անհրաժեշտ էր ապահովել ծովային առևտրի անվտանգությունը:
- ե. Անհրաժեշտ էր խորտակել թշնամիների նավերը, մինչև որ նրանք կհասցնեին ներխուժել Կիլիկյան Հայաստան:

- 1) ա, գ 2) գ, ե 3) ա, դ 4) բ, դ

39. Թվարկվածներից որո՞նք Հայաստանի անկախության վերականգնման ներքին նախադրյալներ չեն.

- ա. Հայ ժողովրդի բոլոր խավերը միասնական էին և երազում էին անկախության մասին:
- բ. Արաբական խալիֆայությունում ընթացող գահակալական կռիվները խարխլել էին կենտրոնական իշխանության դիրքերը:
- գ. Զարգանում էր երկրի տնտեսական կյանքը՝ գյուղատնտեսությունը, արհեստագործությունը:
- դ. Տնտեսապես և ռազմականորեն զորեղացող հայ նախարարները անկախության էին ձգտում:
- ե. Հայաստանի անկախացումը խրախուսվում էր Բյուզանդիայի կողմից:
- զ. Հայ ժողովրդի բոլոր խավերը միասնական էին և երազում էին անկախության մասին:
- է. Կազմալուծվող խալիֆայությունը պատրաստ էր դաշինք հաստատել Բագրատունիների հետ:
- ը. Հայ ժողովրդի մեջ կենսունակ էր պետականության վերականգնման գաղափարը:

- 1) ա, գ, ե 2) բ, ե, գ 3) բ, ե, է 4) դ, գ, ը

40. Թվարկվածներից ո՞ր երեքը Հայաստանում սելջուկ-թուրքերի տիրապետության հաստատման հետևանք չեն հանդիսացել.

- ա. Սելջուկ-թուրքերը փրկեցին երկիրը բյուզանդացիների ճնշումներից:
- բ. Հայաստանի տարածքում ստեղծվեցին սելջուկյան իշխանություններ:
- գ. Բարելավվեց ինչպես գյուղացիների, այնպես էլ արհեստավորների ու առևտրականների վիճակը:
- դ. Մեծ չափեր ընդունեց բնակչության արտագաղթը:
- ե. Սելջուկ-թուրքերի քոչվոր անասնապահական կենցաղը ծանր հարված հասցրեց Հայաստանի տնտեսությանը:
- զ. Սելջուկների օրոք նոր վերելք ապրեցին հայկական քաղաքները:

- 1) ա, դ, գ 2) բ, գ, զ 3) ա, գ, զ 4) դ, ե, գ

41. Գտնել Հայաստանում ենթակա թագավորությունների առաջացման պատճառները.

- ա. Երկրի նշանավոր իշխանությունները տնտեսական և ռազմական բավարար հզորություն ունեին և անկախության էին ձգտում:
- բ. Կենտրոնախույս ուժերին օժանդակում էր Արաբական խալիֆայությունը:
- գ. Միջնադարյան քաղաքներն անկում էին ապրել և հանդես չէին գալիս որպես թագավորական իշխանության դաշնակից:

- դ. Բագրատունիները կենտրոնացված և միասնական պետություն ստեղծելու ձգտում չէին ցուցաբերում:
- ե. Բյուզանդիան հայոց պետությունը թուլացնելու քաղաքականություն էր վարում:
- զ. Կենտոնախոյս ուժերին աջակցում էր հայոց կաթողիկոսությունը:
- է. Հայ վաճառականությունը լիակատար աջակցություն էր ցույց տալիս երկրի մասնատման քաղաքականությանը:
- ը. Արտաքին գործոնների պատճառով Հայաստանի տնտեսական զարգացումը չհանգեցրեց միասնական կենտրոնացված պետության ստեղծմանը:
- թ. Բյուզանդիան գրավեց Հայաստանի արևմտյան ու հարավային շրջանները՝ ստեղծելով Բագրատունիներին հակադրվող հայկական իշխանություններ:

- 1) ա, բ, ե, ը 2) բ, գ, զ, թ 3) դ, ե, է, թ 4) ա, բ, գ, ը

42. Թվարկվածներից որո՞նք են IX–XI դարերում Հայաստանում քաղաքների առաջացման պատճառ հանդիսացել.

- 1) Խորացել էր աշխատանքի հասարակական բաժանումը, արհեստագործությունն անջատվել էր երկրագործությունից:
- 2) Հայաստանում երկրագործությունը խոր անկման վիճակում էր գտնվում, ուստի հայոց արքաները նոր քաղաքներ հիմնադրելու և տնտեսությունը զարգացնելու քաղաքականություն էին վարում:
- 3) Արհեստավորներին ու առևտրականներին ստիպում էին բնակվել քաղաքներում:
- 4) Զարգանում էր միջազգային առևտուրը:
- 5) Արաբների և բյուզանդացիների պատերազմներն ընթանում էին Հայաստանի տարածքում, և պատերազմական ավարը նպաստում էր քաղաքների վերելքին:
- 6) Երկրում զարգանում էին արհեստներն ու առևտուրը:
- 7) Հայաստանը խզել էր տնտեսական կապերը Արաբական խալիֆայության և Բյուզանդիայի հետ ու ձգտում էր զարկ տալու տեղական քաղաքներում առաջընթաց ապրող արհեստագործությանն ու ներքին առևտրին:

43. Թվարկվածներից որո՞նք են XIV դարի սկզբին Կիլիկյան Հայաստանի դրության վատթարացման պատճառ հանդիսացել.

- ա. խաչակրաց նոր արշավանքներ կազմակերպելու ծրագրերի ձախողումը
- բ. մոնղոլների մահմեդականություն ընդունելը և քրիստոնյաների նկատմամբ նրանց վերաբերմունքի փոփոխությունը
- գ. մոնղոլների վարած անհեռատես քաղաքականությունը
- դ. մոնղոլա–մամլուքյան հակամարտությունը մամլուքների հաղթանակով ավարտվելը
- ե. ներքաղաքական լարված իրավիճակի՝ ունիթորների և հակաունիթորների պայքարի հետևանքով երկրի թուլանալը
- զ. թագավորական իշխանության և կաթողիկոսական աթոռի հակամարտությունը
- է. իշխանների երկու խոշոր խմբավորումների միջև ընթացող ներքին կռիվների լայն ծավալ ընդունելը

- 1) բ, դ, է 2) ա, գ, զ 3) բ, դ, ե 4) գ, ե, զ

44. Բերված փաստարկներից ընտրել այն երեքը, որոնք Կիլիկիայի հայերի և մոնղոլների միջև (երկու կողմերի համար էլ ձեռնտու) դաշինքի կնքման պատճառ են հանդիսացել.

- 1) Մոնղոլները ծրագրել էին գրավել Ասորիքը և Պաղեստինը, ուստի վստահելի դաշնակցի կարիք ունեին, որպիսին կարող էր լինել Կիլիկյան Հայաստանը:
- 2) Հայերն արդեն մոնղոլների հետ դաշինքի հարուստ փորձ էին ձեռք բերել բուն Հայաստանում և կարողացել էին խուսափել աղետից:
- 3) Մոնղոլները ձգտում էին շահելու քրիստոնյա հայերի համակրանքը, որովհետև Կիլիկյան Հայաստանը ռազմաքաղաքական դաշինքի մեջ էր գտնվում Ֆրանսիայի և Անգլիայի հետ:
- 4) Մոնղոլները խոստացան պահպանել Կիլիկյան Հայաստանի անկախությունը և տարածքային ամբողջականությունը:
- 5) Հայերը խոստացան մոնղոլներին հանձնել վանքերի և եկեղեցիների կուտակած հարստությունները:
- 6) Մոնղոլները խոստացան հայերին վերադարձնել մահմեդականների խլած տարածքները և օգնություն ցույց տալ Իկոնիայի սելջուկների հարձակումների ժամանակ:
- 7) Կիլիկյան Հայաստանը կարող էր օգնել մոնղոլներին ծովով եվրոպական երկրներ արշավանքներ իրականացնելիս:

45. Ընտրել այն երեք պատճառները, որոնք նպաստեցին XII դարի վերջին Կիլիկյան Հայաստանի համար բարենպաստ միջազգային իրադրության ստեղծմանը.

- ա. Բյուզանդիան մեկընդմիշտ հրաժարվել էր Կիլիկիայից:
- բ. Կիլիկյան Հայաստանը դարձել էր միջազգային առևտրի ամենախոշոր կենտրոնը Մերձավոր Արևելքում:
- գ. Խաչակիրների իշխանությունները հազվադեպ էին հանդես գալիս Կիլիկյան Հայաստանի դեմ:
- դ. Եգիպտոսի սուլթանությունը որոշ ժամանակ զբաղված էր խաչակրաց տիրույթների նվաճումով:
- ե. Կիլիկյան Հայաստանը ռազմաքաղաքական դաշինք էր հաստատել Վենետիկի և Զենովայի հետ:
- զ. Իկոնիայի սուլթանությունը պատրաստվում էր դիմագրավելու խաչակրաց երրորդ արշավանքին:
- է. Ամրապնդվել էր դաշինքը մոնղոլների հետ:

- 1) բ, դ, ե 2) ա, գ, զ 3) ա, դ, զ 4) բ, ե, զ

46. Ընտրել այն երեք արտաքին նախադրյալները, որոնք հիմք դարձան Հայաստանի անկախ պետականությունը վերականգնելու համար.

- ա. Հայաստանի համար բարենպաստ էր Մերձավոր Արևելքում սկսված տնտեսական վերելքը:
- բ. Արաբական խալիֆայությունում լայն ծավալ էին ձեռք բերել ժողովրդական ընդվզումները, որոնք գահակալական կռիվների հետ միասին խարխլում էին կենտրոնական իշխանության դիրքերը:

- գ. Արաբական խալիֆայությունը սկսել էր թուլանալ և բռնել էր անկման ուղին, քանի որ վարձկաններից բաղկացած բանակը միշտ չէ, որ ենթարկվում էր խալիֆներին:
- դ. Բյուզանդիայի հետ դավանական միությունը թույլ էր տալիս ռազմական օգնություն ստանալ կայսրությունից:
- ե. Առանձին երկրների ամիրաները ձգտում էին անջատվելու խալիֆայությունից, ուստի Հայաստանում ևս ուժեղանում էր արաբական լուծը թոթափելու համար պայքարը:
- զ. Խալիֆայության անզիջում քաղաքականություն էր վարում Հայաստանի նկատմամբ, որն ավելի էր ուժեղացնում անկախության հասնելու ձգտումը:
- է. Վճռական դեր կատարեց արևմտաեվրոպական քրիստոնեական երկրների օգնությունը:

- 1) բ, գ, ե 2) բ, գ, զ 3) ա, դ, է 4) դ, ե, զ

47. Գտնել այն երեք պատճառները, որոնք հիմք դարձան հայ իշխանների դժգոհության և Անտիոք իշխանի որդի Ֆիլիպի ձերբակալության համար.

- ա. Ֆիլիպը սկսեց արհամարհել հայոց ծիսակարգը և հովանավորել խաչակիրներին:
- բ. Ֆիլիպը սերտ կապեր հաստատեց հայ եկեղեցական վերնախավի հետ և փորձում էր նրան դուրս բերել հայ իշխանների դեմ:
- գ. Ֆիլիպը պարտադրում էր հայերին կատարել եկեղեցիների միավորման վերաբերյալ տված խոստումները:
- դ. Ֆիլիպը արքունիքից հեռացնում էր հայ իշխաններին և պաշտոնները հանձնում խաչակիրներին:
- ե. Հայ իշխանները ապստամբություն էին բարձրացրել Ֆիլիպի դեմ, որը դաժանորեն ճնշվել էր:
- զ. Ֆիլիպը սկսեց կողոպտել արքունի գանձերը և դրանք ուղարկել Անտիոք:
- է. Խաչակիր ասպետները դավադրաբար սպանեցին Կոստանդին Գունդստաբլին:
- ը. Ֆիլիպը պարտադրեց հայ իշխաններին և հոգևորականությանը գլխահարկ վճարել:

- 1) բ, գ, դ 2) ա, դ, զ 3) գ, ե, զ 4) ա, դ, է

48. Գտնել այն երեք պատճառները, որոնք նպաստեցին IX-XI դարերում Հայաստանում ներքին առևտրի աճին.

- ա. Բյուզանդիայի հետ կնքված առևտրական պայմանագիրը սահմանափակում էր Հայաստանի մասնակցությունը միջազգային առևտրին:
- բ. Քաղաքներում զգացվում էր գյուղատնտեսական մթերքների պահանջ, իսկ արհեստավորներին պետք էր հումք, որը հիմնականում բերվում էր գյուղերից:
- գ. Գյուղացիները, քաղաքում մթերքներ վաճառելով, ցանկանում էին գնել իրենց համար անհրաժեշտ գործիքներ, հագուստ, կենցաղային իրեր:
- դ. Հայաստանը դարձել էր ծովային առևտրի կարևոր կենտրոններից մեկը Արևելքում:

- ե. Հայաստանում առաջացել էին տասնյակ քաղաքներ, որոնք դարձել էին իշխանությունների կենտրոններ և մասնակցում էին միայն տեղական ներքին առևտրին:
- զ. Հայաստանում աշխույժ գործունեություն էին ծավալել մեծածախ առևտրով զբաղվող վաճառականները՝ փերեզակները:
- է. Արիեստավորները իրենց արտադրանքը վաճառքի էին հանում՝ անհրաժեշտ հումք և ապրուստի միջոցներ գնելու համար:
- ը. Բագրատունիներն արգելում էին Հայաստանից հացահատիկ ու գինի արտահանել, որպեսզի բնակչությունն ապահովված լիներ էժան սննդամթերքով:

- 1) բ, գ, է 2) ա, բ, է 3) գ, դ, զ 4) բ, ե, է

49. Բերված փաստարկներից ընտրել երեքը, որոնք սելջուկ-թուրքերի արշավանքների հաջողության պատճառ հանդիսացան.

- ա. Բյուզանդացիները Հայաստանը բնակեցնում էին քոչվորական ցեղերով, որոնք չէին ցանկանում կռվել և բարեկամաբար էին ընդունում սելջուկ-թուրքերին:
- բ. Բյուզանդացիները ցիրուցան արեցին հայկական զորքերը, իսկ մի մասին էլ տարան տերության խորքերը:
- գ. Հայ բնակչությունը իր հույսը դրել էր բյուզանդացիների վրա, քանի որ կայսրությունը հովանավորում էր Հայոց եկեղեցուն և աստիճանաբար թեթևացնում էր հարկերը:
- դ. Բյուզանդացիներն անընդհատ ավելացնում էին սահմանագծում գտնվող իրենց ռազմական ուժերը, և սելջուկ-թուրքերը որոշեցին կանխել Բյուզանդիայի հնարավոր հարձակումները:
- ե. Բյուզանդացիների վարած դավանական հանդուրժողականության քաղաքականությունը հայ բնակչության շրջանում խորացնում էր քրիստոնեական համերաշխության նկատմամբ հավատը, և նա, զենքը ձեռքին, կռվում էր թշնամիների դեմ:
- զ. Հայ բնակչությունը դժգոհ էր բյուզանդացիներից, քանի որ կայսրությունը ծանր հարկման ենթարկեց բնակչությանը:
- է. Հայ ազնվականությանը երկրից հեռացնելով՝ Բյուզանդիան ավելի էր թուլացրել երկիրը:

- 1) ա, գ, դ 2) բ, ե, զ 3) բ, գ, է 4) դ, ե, է

50. Գտնել այն երեք պատճառները, որոնք նպաստեցին Կիլիկյան Հայաստանը թագավորություն հռչակելուն.

- ա. Վերելք էր ապրում միջազգային առևտուրը, որը նպաստում էր Կիլիկյան Հայաստանի հարստացմանը և տնտեսական ներուժի աճին:
- բ. Կիլիկյան Հայաստանը վայելում էր եվրոպական երկրների հովանավորությունը, որը և օգնում էր հաղթահարելու ռազմաքաղաքական բոլոր դժվարությունները:
- գ. Կիլիկյան Հայաստանը դարձել էր հարևան մահմեդական պետությունների դաշնակիցը, որոնք ևս պատրաստ էին ճանաչելու երկիրը որպես թագավորություն:

- դ. Կիլիկյան Հայաստանը դարձել էր Մերձավոր Արևելքի ամենաուժեղ քրիստոնյա երկիրը:
- ե. Կիլիկյան Հայաստանը երկար ժամանակ զերծ էր մնացել օտարների ասպատակություններից, որի շնորհիվ չափազանց հարստացել էր:
- զ. Լևոն II-ի թագադրության հարցով շահագրգռված էր նաև պապականությունը, որը փորձում էր Հայոց եկեղեցին ենթարկել կաթոլիկ եկեղեցուն:
- է. Արտաքին թշնամիների դեմ տարած հաղթանակները և երկրի սահմանների ընդարձակումն ու ամրապնդումը բարձրացրել էին Լևոն II-ի հեղինակությունը:
- ը. Բյուզանդիան սկսել էր լիակատար օժանդակություն ցույց տալ Կիլիկյան Հայաստանին, որպեսզի միասնական ճակատ ստեղծի Իկոնիայի սուլթանության դեմ:

- 1) ա, դ, ը 2) բ, գ, զ 3) դ, ե, գ 4) դ, գ, է

51. Ընտրել այն երեք պատճառները, որոնք նպաստեցին Անին մայրաքաղաք հռչակելուն.

- ա. Բագրատունիները հիմնական նստավայր չունեին:
- բ. Անհրաժեշտ էր Անիի հինավուրց ամրոցը հենակետ դարձնել սելջուկների դեմ պայքարում:
- գ. Անին անառիկ դիրք ուներ և գտնվում էր բանուկ առևտրական ուղիների վրա:
- դ. Անին գտնվում էր լայնարձակ հարթավայրում և ընդլայնվելու մեծ հնարավորություններ ուներ:
- ե. Բարգավաճող Հայաստանին անհրաժեշտ էր մի միավորող կենտրոն:
- զ. Անին երկրի հնագույն քաղաքներից էր և տնտեսական խոշոր կենտրոն էր դարձել դեռևս հելլենիստական դարաշրջանում:
- է. Անին պարիսպներ չուներ և կարող էր ընդարձակվել բոլոր ուղղություններով:
- ը. Անին Արշակունիների օրոք եղել էր հայոց թագավորների հուղարկավորման վայրը, ուստի մայրաքաղաք հռչակվելով՝ ժամանակակիցների աչքում կբարձրացներ Բագրատունիների հեղինակությունը՝ որպես Արշակունիների ժառանգորդի:

- 1) բ, դ, զ 2) ա, գ, ե 3) գ, դ, է 4) ա, գ, ը

52. Ընտրել այն երեք պատճառները, որոնք պայմանավորեցին Ռուբինյան իշխանության պայքարը Դաշտային Կիլիկիայի համար.

- ա. Պետք էր տիրանալ ծովափնյա հանգստավայրերին, որոնք մեծ եկամուտներ էին բերում:
- բ. Անհրաժեշտ էր գրավել գյուղատնտեսության համար կարևոր տարածքներ:
- գ. Անհրաժեշտ էր գրավել առևտրական ճանապարհների վրա ընկած քաղաքները:
- դ. Պետք էր Դաշտային Կիլիկիայից ստացվող եկամուտների հաշվին հզորացնել նաև Զաքարյան Հայաստանը:
- ե. Անհրաժեշտ էր ծովի ափին պարիսպ կառուցել և կանխել թշնամիների հարձակումները:

- գ. Պետք էր նվաճել Միջերկրական ծովի ափերի նավահանգիստները:
- է. Պետք էր Դաշտային Կիլիկիայի նավահանգիստների միջոցով մշտական կապ պահպանել Եվրոպայից ժամանող խաչակիրների հետ:

- 1) բ, գ, դ 2) գ, դ, ե 3) բ, գ, գ 4) դ, գ, է

53. Բերված փաստարկներից ընտրել երեքը, որոնք Գագիկ I Բագրատունու գործունեության հետևանքներից են հանդիսացել.

- ա. Անիի թագավորությանը միացվեցին Դվինի և Ատրպատականի ամիրայությունները:
- բ. Ամրապնդեց ու մեծացրեց բանակը, հայկական զորքը նրա օրոք դարձավ հզոր ուժ, և աստիճանաբար ընդարձակվեցին պետության սահմանները:
- գ. Ճնշվեց Տայքի Դավիթ Կյուրապաղատի անհնազանդությունը:
- դ. Կառուցվեց Անիի պաշտպանական ամրությունների երրորդ գիծը:
- ե. Բագրատունյաց թագավորությունը հասավ իր հզորության ու ծաղկման գագաթնակետին:
- զ. Գագիկ I-ի կինը՝ Խոսրովանույշ թագուհին, Ձորագետի հովտում հիմնեց Սանահինի և Հաղպատի վանքերը:
- է. Հայկական տարածքների մեծ մասը փաստորեն միավորվեց Բագրատունիների կենտրոնական թագավորության գերիշխանության ներքո:

- 1) ա, բ, դ 2) բ, ե, է 3) գ, ե, գ 4) բ, գ, է

54. Բերված փաստարկներից ընտրել երեքը, որոնք Բագրատունյաց Հայաստանի վերելքի հետևանքներից են.

- ա. Երկրի հիմնական նահանգներում կառուցվեցին ջրանցքներ, ջրամբարներ, ոռոգման միջոցով յուրացվեցին դարերով խոպան մնացած տարածությունները:
- բ. Լայն ծավալ ձեռք բերեց միջազգային տարանցիկ առևտուրը՝ հասնելով մինչև Չինաստան և Ճապոնիա:
- գ. Բագրատունի թագավորները հնարավորություն ստացան զբաղվելու բարեգործությամբ՝ հատուկ հոգածություն դրսևորելով հիվանդների ու կարիքավորների նկատմամբ:
- դ. Կաթողիկոսությունը զսպեց Հայ եկեղեցու որոշ թեմերի (որոնք հիմնվում էին տեղի իշխանությունների աջակցության վրա) անջատողական հակումները, որն, ըստ էության, Բագրատունյաց թագավորության հաղթանակն էր:
- ե. Ավատատիրությունը վաղմիջնադարյան փուլից թևակոխեց զարգացած ավատատիրության դարաշրջան:
- զ. Բագրատունի թագավորները երեք անգամ կրճատեցին երկրի բնակչությունից գանձվող հարկերը:
- է. Հարևան պետությունները, այդ թվում՝ Բյուզանդիան, հարկադրված եղան վերադարձնել Բագրատունյաց Հայաստանից խլած տարածքները:

- 1) գ, ե, է 2) բ, գ, է 3) ա, գ, գ 4) ա, դ, գ

55. Տրված փաստարկներից ընտրել երեքը, որոնք IX–XI դարերում միասնական և կենտրոնացված հայկական պետության ստեղծման փորձերի ձախողման պատճառ են հանդիսացել.

- ա. Հայաստանի նշանավոր իշխանությունները հաճախ անկախության էին ձգտում:
- բ. Թագավորական իշխանությունը և եկեղեցին մշտական բախումների մեջ էին և հոգ չէին տանում երկրի միասնականությունը պահպանելու մասին:
- գ. Բագրատունյաց Հայաստանը որդեգրել էր արևելյան կողմնորոշում և համագործակցում էր Իրանի հետ:
- դ. Բյուզանդիան հայոց պետությունը թուլացնելու, երկրի արևմտյան տարածքները կայսրությանը միացնելու քաղաքականություն էր վարում:
- ե. Բագրատունի թագավորները պայքար չէին մղում կենտրոնախույս ուժերի դեմ:
- զ. Կենտրոնացված պետության ստեղծմանը խանգարեցին սելջուկ թուրքերի արշավանքները:
- է. Արաբական խալիֆայությունը չէր հաշտվում Հայաստանը կորցնելու իրողության հետ և ամեն կերպ օժանդակում էր երկրի կենտրոնախույս ուժերին:
- ը. Երկրի տնտեսական զարգացումը խիստ դանդաղ էր ընթանում:

- 1) ա, դ, է 2) բ, գ, ը 3) ա, դ, է 4) բ, գ, ը

56. Տրված փաստարկներից ընտրել երեքը, որոնք IX–XI դարերում միջնադարյան հայկական քաղաքների առաջացման ու ծաղկման պատճառ են հանդիսացել.

- ա. Միջնադարյան քաղաքների առաջացումն ու ծաղկումը պայմանավորված էին եկեղեցու հովանավորությամբ:
- բ. Միջնադարյան քաղաքների բուռն աճը կախված էր թագավորական իշխանության հզորությունից, որովհետև քաղաքների հիմնադրման իրավունքը պատկանում էր թագավորներին:
- գ. Միջնադարյան քաղաքների առաջացումը կապված էր աշխատանքի հասարակական բաժանման հետ:
- դ. Միջնադարյան քաղաքներն առաջանում էին միայն հին քաղաքների տեղերում, իսկ Հայաստանում քաղաքաշինությունը հնագույն ավանդույթներ ուներ:
- ե. Միջնադարյան քաղաքների առաջացումը կապված էր արհեստների ու առևտրի զարգացման հետ:
- զ. Միջնադարյան Հայաստանում քաղաքների առաջացումը պայմանավորված էր եվրոպական երկրների հետ առևտրական պայմանագրերի կնքմամբ:
- է. Միջնադարյան հայկական քաղաքներից հատկապես արագ զարգացան իշխանությունների կենտրոններն ու առևտրական ուղիների վրա գտնվող քաղաքները:

- 1) ա, գ, է 2) բ, դ, գ 3) գ, գ, է 4) գ, ե, է

57. Բագրատունիների նորանկախ պետականության համար հիմք ծառայեցին.

- 1) հայ նախարարական համակարգը
- 2) խաչակիրների տրամադրած օգնությունը

- 3) կիսանկախ հայկական իշխանությունները
- 4) 90–100–հազարանոց հայոց բանակի առկայությունը
- 5) գաղթօջախների աջակցությունը
- 6) Հայ եկեղեցու նվիրապետությունը
- 7) վանքերի ու եկեղեցիների ունեցվածքի պետականացումը

58. Հայաստանը Բագրատունիների օրոք դարձել էր տարանցիկ առևտրի կարևոր կենտրոն, որովհետև՝

- 1) Հայաստանում մեծացել էր դրամական շրջանառության դերը
- 2) Հայաստանի վրայով էին անցնում արևելքը և արևմուտքը, հյուսիսը ու հարավը իրար կապող միջազգային առևտրի կարևոր մայրուղիները
- 3) Հայաստանը դարձել էր համեմունք արտահանող գլխավոր կենտրոն Մերձավոր Արևելքում
- 1) 1-ա, 2-գ, 3-դ, 4-ե, 5-զ
- 2) 1-գ, 2-ե, 3-գ, 4-դ, 5-ա

- 3) 1-ե, 2-դ, 3-ա, 4-զ, 5-բ
- 4) 1-դ, 2-բ, 3-գ, 4-զ, 5-ե

74. Պատմական գործիչների անունները համապատասխանեցնել նրանց գործունեության հետ առնչվող փաստերին.

- 1) Գևորգ իշխան
- 2) Խոսրովանույշ թագուհի
- 3) Ալեքսիոս III Անգելյոս

- 4) Գվիդոն Լուսինյան
- 5) Հեթում և Զարմանդուխտ ամուսիններ

- ա. Սսի պաշտպանություն
- բ. թագի ուղարկում Կիլիկյան Հայաստան
- գ. Սանահինի և Հաղպատի վանքերի հիմնադրում
- դ. արաբ զորավարին պարտության մատնելը
- ե. Կիլիկյան Հայաստանի կառավարման ստանձնում
- զ. Անտիոքի իշխանության հետ դաշինքի կնքում

1) 1-դ, 2-գ, 3-բ, 4-ե, 5-ա

2) 1-գ, 2-գ, 3-ա, 4-ե, 5-բ

3) 1-ե, 2-գ, 3-բ, 4-գ, 5-դ

4) 1-բ, 2-գ, 3-դ, 4-ա, 5-ե

75. Հայ զորականների անունները համապատասխանեցնել այն ռազմական գործողություններին, որտեղ նրանք աչքի են ընկել.

1) Թաթուլ

2) Գող Վասիլ

3) Լևոն I

4) Վահրամ Պահլավունի

5) Աշոտ Երկաթ

ա. Վահկա բերդի գրավում

բ. Սևանի ճակատամարտ

գ. Կարսի պաշտպանություն

դ. Անիի պաշտպանություն

ե. Մառիի ճակատամարտ

զ. Բերդուսի ճակատամարտ

1) 1-գ, 2-դ, 3-բ, 4-ե, 5-ա

2) 1-գ, 2-գ, 3-ա, 4-դ, 5-բ

3) 1-ա, 2-բ, 3-դ, 4-գ, 5-զ

4) 1-ա, 2-գ, 3-ե, 4-բ, 5-դ

76. Ջաքարյանների ազատագրած վայրերի անվանումները համապատասխանեցնել դրանց ազատագրման տարեթվերին.

1) Դվին

2) Կարս

3) Ամբերդ

4) Անի

ա. 1206 թ.

բ. 1199 թ.

գ. 1196 թ.

դ. 1203 թ.

ե. 1201 թ.

1) 1-ա, 2-գ, 3-դ, 4-բ

2) 1-դ, 2-ե, 3-գ, 4-ա

3) 1-գ, 2-բ, 3-դ, 4-ե

4) 1-դ, 2-ա, 3-գ, 4-բ

77. Հայ տիրակալների անունները համապատասխանեցնել Կիլիկիայի և հարակից շրջանների այն քաղաքների ու ամրոցների անվանումներին, որտեղ նրանք հաստատվել էին.

1) Փիլարտոս Վարաժնունի

2) Գագիկ Աբասյան

3) Գագիկ II

4) Օշին Հեթումյան

5) Գող Վասիլ

ա. Լամբրոն

բ. Կոռոմզոլ

գ. Քեսուն

դ. Պիզու

ե. Ծամնդավ

զ. Մարաշ

1) 1-գ, 2-ե, 3-դ, 4-ա, 5-զ

2) 1-ե, 2-դ, 3-գ, 4-բ, 5-ա

3) 1-դ, 2-գ, 3-բ, 4-ա, 5-զ

4) 1-գ, 2-բ, 3-ա, 4-գ, 5-ե

78. Օտար տիրակալների անունները համապատասխանեցնել իրենց ղեկավարած պետությունների անվանումներին.

- | | |
|-----------------------|------------------|
| 1) Հովհաննես Կոմնենոս | 4) Բոհեմունդ III |
| 2) Ֆրիդրիխ Շիկամորուս | 5) Մանգու |
| 3) Սալահ ադ Դին | |

- | | |
|-----------------------------------|------------------------------|
| ա. Սրբազան հռոմեական կայսրություն | դ. Բյուզանդական կայսրություն |
| բ. Եգիպտոսի սուլթանություն | ե. Անտիոքի իշխանություն |
| գ. Մոնղոլական տերություն | զ. Երուսաղեմի թագավորություն |

- | | |
|----------------------------|----------------------------|
| 1) 1-բ, 2-գ, 3-ե, 4-ա, 5-զ | 3) 1-դ, 2-գ, 3-զ, 4-ե, 5-բ |
| 2) 1-դ, 2-ա, 3-բ, 4-ե, 5-զ | 4) 1-ե, 2-դ, 3-բ, 4-գ, 5-ա |

79. Համապատասխանեցնել իրադարձությունը, տարեթիվը, գործչի անունը.

N	Իրադարձությունը	N	Տարեթիվը	N	Գործիչը
1	Ծումբի ճակատամարտը	1	921 թ.	1	Գագիկ Արծրունի
2	Հայաստանի թագավոր ճանաչվելը	2	922 թ.	2	Յուսուֆ Սաջյան
3	Սևանա կղզու պաշարումը	3	371 թ.	3	Վահրամ Պահլավունի
4	Հայաստանի շահնշահ ճանաչվելը	4	998 թ.	4	Բեշիր
		5	908 թ.	5	Աշոտ II

- | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|----|--|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|----|--|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|----|--|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|----|--|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | <table border="1"><tr><td>1</td><td>4</td><td>3</td></tr><tr><td>2</td><td>5</td><td>1</td></tr><tr><td>3</td><td>1</td><td>4</td></tr><tr><td>4</td><td>2</td><td>5</td></tr></table> | 1 | 4 | 3 | 2 | 5 | 1 | 3 | 1 | 4 | 4 | 2 | 5 | 2. | <table border="1"><tr><td>1</td><td>3</td><td>5</td></tr><tr><td>2</td><td>4</td><td>1</td></tr><tr><td>3</td><td>5</td><td>4</td></tr><tr><td>4</td><td>2</td><td>2</td></tr></table> | 1 | 3 | 5 | 2 | 4 | 1 | 3 | 5 | 4 | 4 | 2 | 2 | 3. | <table border="1"><tr><td>1</td><td>5</td><td>4</td></tr><tr><td>2</td><td>4</td><td>1</td></tr><tr><td>3</td><td>1</td><td>2</td></tr><tr><td>4</td><td>2</td><td>5</td></tr></table> | 1 | 5 | 4 | 2 | 4 | 1 | 3 | 1 | 2 | 4 | 2 | 5 | 4. | <table border="1"><tr><td>1</td><td>3</td><td>2</td></tr><tr><td>2</td><td>4</td><td>3</td></tr><tr><td>3</td><td>5</td><td>4</td></tr><tr><td>4</td><td>2</td><td>1</td></tr></table> | 1 | 3 | 2 | 2 | 4 | 3 | 3 | 5 | 4 | 4 | 2 | 1 |
| 1 | 4 | 3 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 2 | 5 | 1 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 3 | 1 | 4 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 4 | 2 | 5 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 1 | 3 | 5 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 2 | 4 | 1 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 3 | 5 | 4 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 4 | 2 | 2 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 1 | 5 | 4 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 2 | 4 | 1 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 3 | 1 | 2 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 4 | 2 | 5 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 1 | 3 | 2 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 2 | 4 | 3 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 3 | 5 | 4 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 4 | 2 | 1 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |

80. Արքաների անունները համապատասխանեցնել արքայատոհմերին.

- | | |
|------------------|----------------|
| ա) Ռուբինյաններ | 1) Աբաս |
| բ) Արծրունիներ | 2) Կոստանդին I |
| գ) Արտաշեսյաններ | 3) Սենեքերիմ |
| դ) Արշակունիներ | 4) Արշակ II |
| ե) Բագրատունիներ | |

- | | |
|-----------------------|-----------------------|
| 1) ա-2, բ-3, գ-4, դ-1 | 3) ա-2, բ-3, գ-4, ե-1 |
| 2) ա-2, բ-3, դ-4, ե-1 | 4) ա-4, բ-3, դ-1, ե-2 |

8. ՊԱՏՄԱԿԱՆ ՓԱՏՏԱՐԿՆԵՐԻ, ՊՆԴՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒՄ ԵՎ ԽՄԲԱՎՈՐՈՒՄ

1. Որտեղ էին գտնվում հայոց առաջնորդական աթոռները մինչ Գրիգոր Լուսավորչի կողմից Հայոց եկեղեցական նվիրապետության հաստատումը.

- 1) Մաժակ-Կեսարիայում, Արցախում և Սյունիքում
- 2) Եդեսիայում, Արտազում և Սյունիքում
- 3) Փոքր Հայքում, Սյունիքում, Արցախում
- 4) Ատրպատականում, Տարոնում, Մաժակ-Կեսարիայում

2. Սբ Գրիգոր Լուսավորիչը, քարոզչության և ավետարանության գործը տարածելով Հայաստանում, մինչև ի՞նչ սահմանները հասցրեց.

- 1) արևմուտքում՝ սատաղացիների քաղաքից մինչև Խաղտյաց երկիրը՝ Կղարջքի մոտ, իսկ արևելքում՝ ընդհուպ մինչև մազքութների երկիրը, հյուսիսում՝ Ալանաց դռները, հարավում՝ Կորդուք գավառը, Նոր Շիրական երկիրը և Ատրպատականը
- 2) հարավում՝ սատաղացիների քաղաքից մինչև Խաղտյաց երկիրը՝ Կղարջքի մոտ, իսկ արևելքում՝ ընդհուպ մինչև մազքութների երկիրը, հյուսիսում՝ Ալանաց դռները, արևմուտքում՝ Կասպից սահմանները
- 3) արևելքում՝ Ալանաց դռները և Միջերկրական ծով, իսկ արևմուտքում՝ ընդհուպ մինչև մազքութների երկիրը, հյուսիսում՝ Ալանաց դռները, հարավում՝ Կասպից սահմանները
- 4) հյուսիսում՝ սատաղացիների քաղաքից մինչև Խաղտյաց երկիրը՝ Կղարջքի մոտ, իսկ արևմուտքում՝ ընդհուպ մինչև մազքութների երկիրը, հարավում՝ Ալանաց դռները, արևելքում՝ Կորդուք գավառը, Նոր Շիրական երկիրը և Ատրպատականը

3. Թվարկված գործառույթներից առանձնացնել երեքը, որոնք Արշակունյաց Հայաստանում տնօրինում էր հազարապետը.

- ա. արքունի կալվածքների հսկողություն
- բ. պետական պարիսպների տնօրինում
- գ. պալատական արարողությունների կազմակերպում
- դ. քաղաքների ամրությունների կառուցում, անտառատնկումների իրականացում
- ե. արքունի գանձարանի հսկողություն
- զ. ճանապարհների և կամուրջների կառուցում, ջրանցքների անցկացում
- է. Արշակունյաց սեպուհների դաստիարակություն

1) գ, ե, է

3) բ, դ, գ

2) ա, դ, գ

4) բ, ե, գ

4. Ընտրել այն շարքը, որտեղ նշված են բացառապես հազարավոր նախարարական տոհմեր.

- 1) Սյունի, Պատասպարունի, Բագրատունի, Խորխոռունի
- 2) Կաղմես, Բզնունյաց, Տագրյան, Գուգարաց
- 3) Բագրատունի, Աղծնյաց, Սողացի, Խորխոռունի
- 4) Բագրատունի, Գուգարաց, Բզնունյաց, Խորխոռունի

5. Լուսավորչի թոռ Գրիգորիսի հոգևոր իշխանությանն էին ենթարկվում Մեծ Հայքի հետևյալ նահանգները.

- 1) Ուտիք, Արցախ, Փայտակարան
- 2) Արցախ, Ուտիք, Պարսկահայք
- 3) Սյունիք, Արցախ, Փայտակարան
- 4) Ուտիք, Սյունիք, Պարսկահայք

6. Թվարկված հեթանոսական սովորություններից և բարքերից առանձնացնել երկուսը, որոնք արգելվել են Աշտիշատի ժողովում.

- ա. կենդանիների զոհաբերություն
- բ. հմայություն
- գ. բազմակնություն
- դ. գուշակություն
- ե. մահացածների վրա անվայելույ լացը

- 1) ա, գ
- 2) գ, ե
- 3) բ, գ
- 4) դ, ե

7. Ինչ քայլեր ձեռնարկեց Պապ թագավորը՝ Հայոց պետության անվտանգության և ռազմատնտեսական հզորության ամրապնդման ուղղությամբ: Գտնել սխալ պատասխանները.

- ա. Սահմանափակեց եկեղեցական հողատիրությունը, ընդլայնեց թագավորական հողատիրությունը:
- բ. Ավելացրեց կուսանոցների և այրիների ապաստարանների թիվը:
- գ. Թվապես ավելացրեց հայոց բանակը:
- դ. Բազմապատկեց հոգևորականների թիվը:
- ե. Հաստատեց Հայոց կաթողիկոսական աթոռի անկախությունը:
- զ. Ավելացրեց երկրի բերքից եկեղեցուն վճարվող հարկը:

- 1) ա, գ, դ
- 2) դ, ե, գ
- 3) գ, դ, ե
- 4) բ, դ, գ

8. Գտնել այն փաստարկները, որոնք բնութագրում են Տրդատ Մեծի՝ կենտրոնական-թագավորական իշխանության ամրապնդման նպատակով վարած քաղաքականությունը.

- 1) Տրդատ III-ը բարձրացրեց գործակալությունների դերը:
- 2) Թագավորական իշխանության համար նոր հենարան ստեղծելու նպատակով նա հիմնեց նոր քաղաք:
- 3) Բանակի թիվը հասցրեց 200 հազարի:
- 4) Կրճատեց հոգևորականների թիվը:
- 5) Եկեղեցուն որպես կենտրոնական իշխանության հենարան ունենալու նպատակով սահմանեց տասանորդ հարկը և քահանաներին հողաբաժին հատկացրեց:

9. Ընտրել այն կետերը, որոնք չեն համապատասխանում Աշտիշատի ժողովի ընդունած որոշումներին.

- 1) կառուցել վանքեր, դպրոցներ, հիվանդանոցներ, աղքատանոցներ, իջևանատներ
- 2) ընդունել Քաղկեդոնի երկաթնակույթյան դավանանքը
- 3) գթասիրտ լինել ծառաների նկատմամբ
- 4) նախորդ եկեղեցական ժողովի որոշումների անվավեր ճանաչելը
- 5) հավատարիմ մնալ տերերին
- 6) բազմակնության և մահացածների վրա անվայելուչ լացն արգելելը
- 7) ծառաներին հարկերից ազատելը և նրանց բնակարաններ հատկացնելը

10. Ընտրել ճիշտ պնդումները.

- 1) 364 թ. Սասանյանների զորքերը Հայաստան են ներխուժում երեք ուղղություններով:
- 2) Շապուհի մեծաքանակ զորքերը հասնում են մինչև Արտազեսու ամուր բերդը, որտեղ Արշակունի արքաների գերեզմաններն ու գանձերն էին:
- 3) Վասակ սպարապետի գլխավորությամբ հայոց 30-հազարանոց զորքը ջախջախում է թշնամուն, ազատում թագավորների ոսկորները և վերաթաղում Դարանաղյաց գավառի Անի բերդում:
- 4) Մերուժան Արծրունու դավաճանական օրինակին է հետևում նաև Մուշեղ Մամիկոնյանը:
- 5) Արշակ թագավորը Վասակ սպարապետի ուղեկցությամբ 368 թ. մեկնում է Պարսկաստան:
- 6) Փառանձեմ թագուհին 15 հազար ընտիր զորականներով ամրացել էր Անգեղ բերդում և հերոսական դիմադրություն էր ցույց տալիս պարսիկներին:

11. Ո՞ր շարքի բոլոր նախարարներն են Ավարայրի ճակատամարտի մասնակից և Վարդան Մամիկոնյանի կուսակիցներ եղել.

- 1) Ներշապուհ Արծրունի, Հմայակ Մամիկոնյան, Արշավիր Արշարունի, Թաթուլ Վանանդեցի, Գաղիշո Խորխոռունի
- 2) Թաթուլ Վանանդեցի, Արշավիր Արշարունի, Մերուժան Արծրունի, Խորեն Խորխոռունի, Հմայակ Մամիկոնյան
- 3) Խորեն Խորխոռունի, Համազասպ Մամիկոնյան, Ներշապուհ Արծրունի, Արշավիր Արշարունի, Թաթուլ Վանանդեցի
- 4) Համազասպ Մամիկոնյան, Գաղիշո Խորխոռունի, Թաթուլ Վանանդեցի, Մերուժան Արծրունի, Արշավիր Արշարունի

12. Ովքեր էին մտնում հայ ապստամբների կազմած կառավարության մեջ.

- 1) Վարդան Մամիկոնյանը, Վասակ Սյունին, Ներշապուհ Արծրունին, Ղևոնդ Երեցը
- 2) Վարդան Մամիկոնյանը, Վասակ Սյունին, Թաթուլ Վանանդեցին, Գյուտ կաթողիկոսը
- 3) Վասակ Սյունին, Վարդան Մամիկոնյանը, Հովսեփ Վայոցձորցին, Խորեն Խորխոռունին
- 4) Վարդան Մամիկոնյանը, Վասակ Սյունին, Խորեն Խորխոռունին, Գյուտ կաթողիկոսը

գ. Արևմտյան Հայաստանի հայրենասիրական ուժերը համախմբվելով ջախջախեցին ՄԺԺ Գնունուն, իսկ երկրի զորավարությունը ստանձնեց Թեոդորոս Ռշտունին, որը կայսրից ստացավ «պատրիկ-կյուրապաղատի» աստիճան և ճանաչվեց հայոց իշխան:

դ. Հայոց իշխան Գրիգոր Մամիկոնյանի կառավարման տարիները նույնպես խաղաղ են անցել, և հայ պատմիչները նրան անվանել են կարգ ու կանոնի բարեպաշտ առաջնորդ:

ե. Հայ հոգևոր և աշխարհիկ տերերի մի խմբավորում Ներսես Գ կաթողիկոսի գլխավորությամբ շարունակում էր հուսալ քրիստոնյա Բյուզանդիայի օգնությանը, իսկ մյուս խմբավորումը Թեոդորոս Ռշտունու գլխավորությամբ փորձում էր քաղաքական հարաբերություններ հաստատել խալիֆայության հետ:

1) բ, դ

2) դ, ե

3) ա, գ

4) բ, ե

17. Ստորև բերված պնդումներից որ երկուսն են սխալ.

ա. Հայաստանը VII դարի առաջին տասնամյակներում հայտնվեց պարսկա-բյուզանդական պատերազմական գործողությունների ոլորտում:

բ. VII դ. սկզբների պարսկա-բյուզանդական պատերազմի առաջին տարիներին նախաձեռնությունը Պարսկաստանի կողմն էր:

գ. Խոսրով I-ի զորքերը ներխուժում են Արևմտյան Հայաստան, հայ ժողովրդի պայքարը Վասպուրականում գլխավորում է Վահան Արծրունին:

դ. 607–608 թթ. ընթացքում Բյուզանդիայի զործուն աջակցությամբ Վրաց եկեղեցին ընդունում է քաղկեդոնականություն և անջատվում Հայ եկեղեցուց:

ե. VII դարում Սասանյանների զորքերը գրավում են Բյուզանդական կայսրությանը ենթակա տարածքները Ասորիքում, Փոքր Ասիայում և Եգիպտոսում:

զ. 612 թ. սասանյան զորքերը տիրում են Երուսաղեմին, որպես ավար տանում են նաև Խաչափայտը, որի վրա խաչել էին Քրիստոսին:

1) ա, գ

2) բ, գ

3) գ, ե

4) գ, գ

18. Տրված պայմաններից առանձնացնել երեքը, որոնք տեղ են գտել 652 թ. հայ-արաբական պայմանագրում.

1) Խալիֆայությունն առնվազն 3 տարի հարկ չէր գանձելու, իսկ դրանից հետո հայերն այնքան էին վճարելու, որչափ կամենային:

2) Հայաստանի և Արաբական խալիֆայության միջև հաստատվելու էր ծովային առևտուր:

3) Ի հաշիվ գանձվող հարկի՝ հայերը 15–հազարանոց այրուձի էին պահելու, որը պետք է պատրաստ լիներ գործելու այլ տեղերում:

4) Հայաստանում մնալու էր միայն արաբական զորքը:

5) Հայաստանը վերականգնելու էր իր անկախ պետականությունը:

6) Բյուզանդացիների ներխուժման դեպքում խալիֆայությունն այնքան զորք էր ուղարկելու, որքան հայերը կամենային:

- ե. Մեծ Գնունին մինչև VII դարի 40–ական թթ. վերջը գլխավորում էր երկրի վերամիավորման գործը:
- զ. Սասուն–Խոփ գավառում հուժկու ապստամբությունը ղեկավարում էր Աշոտ Մսակերը:
- է. Կարինը պաշարող ապստամբները, տեղեկանալով Արծնի ճակատամարտի տխուր վախճանի մասին, Մուշեղի գլխավորությամբ շարժվում են դեպի Բագրևանդ գավառ:

- 1) ա, բ, դ 2) դ, ե, է 3) գ, զ, է 4) դ, ե, գ

23. Ստորև բերված պնդումներից որո՞նք են ճիշտ.

- ա. Երբ Սմբատ Բագրատունու 2000–անոց այրուձին գտնվում էր Արծնի գյուղի մոտ, արաբական 5000–անոց պատժիչ ջոկատը հասավ նրանց:
- բ. Վարդանակերտի մոտ արաբները չկարողացան դիմադրել և սկսեցին խուճապահար անցնել Արածանին:
- գ. Ռշտունիք գավառի Ակոռի գյուղի մոտ ապստամբները Վասպուրականի Սմբատ իշխանի գլխավորությամբ ջախջախում են թշնամուն, միայն 280 արաբ զինվոր փախչում է ու թաքնվում եկեղեցում:
- դ. Արաբների տիրապետության ժամանակ հայ հոգևորականությունը հարկատու չէր:
- ե. Ջախջախված արաբների փախուստի պահին սառույցը ջարդվում է, և նրանցից շատերը խեղդվում են Երասխի ջրերում, միայն 300 հոգու մեծահոգաբար պատուպարում ու բուժում է Կամսարական իշխանուհի Շուշանը:
- զ. VIII դ. սկզբի հակաարաբական ապստամբությունն ընդգրկում է Երևանը, Վանանդը, Վասպուրականը:
- է. Հերթ ոստիկանի աշխարհագրով հարկահանությունը խիստ ծանրացավ:

- 1) գ, ե, է 2) ա, ե, գ 3) ե, գ, է 4) բ, գ, է

24. Ստորև բերված պնդումներից որո՞նք են սխալ.

- ա. Սասուն գավառը, որ մինչ այդ մտցվել էր «Ջազիրա» (Հյուսիսային Միջագետք) նահանգի կազմի մեջ, միանում է Արմինիային՝ անցնելով հայոց իշխանի իրավասության ներքո:
- բ. Գնալով Դվին՝ Արտավազդ Մամիկոնյանը ռազմական խորամանկությամբ արաբ ոստիկանից զենք էր ստացել՝ խալիֆայության թշնամիների դեմ կռվելու պատրվակով:
- գ. Տայքում զինելով իր ռազմիկներին՝ Արտավազդ Մամիկոնյանը հարձակվում է արաբ գլխավոր հարկահանի վրա, խլում հավաքված ամբողջ հարկը, ապա իր ընտանիքով ու զինակիցներով հեռանում է Մեծ Հայքի հյուսիսարևմտյան սահմանային գոտի, այդտեղից էլ Ծաղկոտն գավառ:
- դ. Ջախջախելով Տարոն ներխուժած արաբական ջոկատը՝ Մուշեղ Մամիկոնյանն ամրանում է Արտագերս ամրոցում:

ե. Կարինը զավթած արաբական կայազորից 6000 հեծյալ գալիս է Բագավան գյուղ, այստեղ Մուշեղ Մամիկոնյանի ջոկատը ջախջախում է թշնամուն և փախուստի մատնում արաբական զորքի մնացորդներին:

զ. Հայրենիքի ազատության համար Արձնիի ճակատամարտում զոհվեցին Բագրատունյաց, Մամիկոնյան, Գնունյաց և բազում այլ տոհմերի նախարարներ, ինչպես նաև հայ ռազմիկներ:

1) գ, ե

2) դ, զ

3) ա, գ

4) բ, գ

25. Ո՞ր հինավուրց հայկական իշխանական տները հզորացան IX դարում.

1) Արծրունիներ, Մամիկոնյաններ, Բագրատունիներ, Գնունիներ

2) Բագրատունիներ, Արծրունիներ, Սյունիներ, Արցախի իշխաններ

3) Բագրատունիներ, Գնունիներ, Արծրունիներ, Սյունիներ

4) Բագրատունիներ, Գնունիներ, Սյունիներ, Արցախի իշխաններ

26. Աշոտ Մսակերն ընդարձակեց իր տիրույթները.

1) Տայքում, Գուգարքում, Սյունիքում

3) Սյունիքում, Տայքում, Վասպուրականում

2) Այրարատում, Տարոնում, Տայքում

4) Վասպուրականում, Ատրպատականում, Արցախում

27. Ստորև բերված պնդումներից ո՞ր երկուսն են սխալ.

ա. Հայոց իշխան Եսայի Աբու-Մուսեի քաջարի զինվորները Քթիշ ամրոցը (Տող գյուղի մոտ) մոտ երկու տարի անառիկ պահեցին:

բ. Բուղան դիմում է խաբեության. բանակցելու պատրվակով իր մոտ է կանչում ու ձերբակալում Եսայի իշխանին:

գ. Վասպուրականում ապստամբները Գուրգեն Արծրունու գլխավորությամբ ջախջախում և դուրս են մղում արաբներին:

դ. Հայոց հզորագույն ապստամբությունը (850–855 թթ.) սասանեց արաբական տիրապետությունը Հայաստանում:

ե. Սմբատ սպարապետի որդին՝ Աբաս Բագրատունին, 862 թ. ճանաչվեց հայոց իշխան ու սպարապետ:

1) ա, բ

2) ա, դ

3) գ, ե

4) ա, ե

28. Ստորև տրված պնդումներից որո՞նք են ճիշտ.

1) Գուկանք գյուղի մոտ պարտված 300 արաբներին պատսպարեց Կամսարական իշխանուհին:

2) Մուշեղ Մամիկոնյանը իր 280 զինակիցներով ոչնչացրեց արաբ հարկահաններին:

3) Արճեշի ճակատամարտում զոհվեցին 4 իշխան և 1500 ռամիկ:

4) Արձնիի ճակատամարտում նահատակվեցին Բագրատունյաց, Մամիկոնյան, Գնունյաց և այլ տոհմերի իշխաններ և մոտ 3000 ռամիկ:

5) Վասպուրականի Սմբատ իշխանը եկեղեցուց դուրս հանեց և մահապատժի ենթարկեց 2600 արաբ չարագործի:

6) Բուղայի 15–հազարանոց զորքի դեմ Գուրգենը կռվում էր 9000 ռազմիկներով:

29. Ստորև բերված պնդումներից որո՞նք են սխալ.

- ա. Արաբական խալիֆայությունը IX դարում սկսեց թուլանալ և անկման ուղի բռնել:
- բ. Զարգացման տարբեր աստիճաններում գտնվող, տարբեր լեզու, դավանանք ունեցող ժողովուրդներին մի պետության՝ խալիֆայության մեջ բռնի միավորումը կայուն ու երկարատև լինել էր կարող:
- գ. Արաբական խալիֆայության ենթակա երկրներում, այդ թվում՝ Հայաստանում, աստիճանաբար ավելի ու ավելի էր ուժեղանում արաբական լուծը թոթափելու ձգտումը:
- դ. Խալիֆայության ծանր դրությունից օգտվում էր նրա վաղեմի հակառակորդ Պարսկաստանը, որն ամեն կերպ աջակցում էր խալիֆայության կենտրոնախույս ուժերին:
- ե. Արաբական խալիֆայության թուլացումից Հայաստանում հմտորեն օգտվում էին հատկապես ժամանակի նշանավոր իշխանական տներից Վաչուտյանները:
- զ. Գերազանցապես օտար վարձկաններից բաղկացած բանակը միշտ էլ, որ ենթարկվում էր խալիֆներին:

- 1) ա, գ 2) գ, ե 3) դ, ե 4) դ, գ

30. Բերված պնդումներից որո՞նք է սխալ.

- 1) 963–964 թթ. Աշոտ III–ը կառուցեց Անին ընդգրկող աշտարակազարդ պարիսպների առաջին գիծը:
- 2) Անին ուներ ընդարձակ շուկա, իջևանատներ, տասնյակ եկեղեցիներ, պալատներ, տաճարներ, շքեղ հյուրանոցներ, աշխարհիկ բազմաթիվ շենքեր:
- 3) Անին միջնադարյան Հայաստանի հռչակավոր ու ամենամեծ քաղաքն էր և, ինչպես ժողովուրդն էր ասում, ուներ հազար ու մի եկեղեցի:
- 4) Բագրատունյաց Հայաստանն իր հզորության ու ծաղկման գագաթնակետին հասավ Սմբատ II–ի օրոք:

31. Ստորև բերված պնդումներից որո՞նք են սխալ.

- ա. Կարճ ժամանակում Կարսը աճեց և դարձավ երկրի նշանավոր քաղաքներից մեկը:
- բ. Աբասի օրոք երկրի հիմնական նահանգներում՝ Այրարատում, Սյունիքում, Վասպուրականում, կառուցվում են ջրամբարներ, ջրանցքներ:
- գ. Հայաստանում սկսված տնտեսական, մշակութային վերելքը նշանավորում է զարգացման մի նոր աստիճան, ավատատիրությունը վաղմիջնադարյան փուլից թևակոխում է զարգացած ավատատիրության դարաշրջան:
- դ. 948 թ. Ներսես Տայեցի կաթողիկոսն Աղթամար կղզուց տեղափոխվեց Կարս:
- ե. Աբասին հաջորդեց իր եղբայրը՝ Աշոտ III–ը:

- 1) ա, գ 2) բ, դ 3) գ, ե 4) դ, ե

32. Պնդումներից որո՞նք է սխալ.

- 1) Արիեստների զարգացման հետ խորացավ աշխատանքի բաժանումը նրանց ներսում, առաջ եկան արիեստի նոր ճյուղեր և մասնագիտություններ:
- 2) Բագրատունիների օրոք երկրի տնտեսական կյանքի ընդհանուր վերելքին մեծապես խթանեց վճարովի դպրոցների ստեղծումը:

- 3) Մեծ քաղաքներում հաճախ կազմակերպվում էին կիրակնօրյա տոնավաճառներ:
- 4) Հայաստանով էին անցնում արևելքը արևմուտքի, հյուսիսը հարավի հետ կապող առևտրական կարևոր մայրուղիները:

33. Ստորև բերված պնդումներից ո՞ր երեքն են սխալ.

- ա. Բագրատունյաց բանակը կազմված էր հեծելազորից և քանակով քառակի անգամ մեծ հետևակից:
- բ. Հայոց զորքի հիմքը այրուծին՝ հեծելազորն էր:
- գ. Բագրատունի թագավորների հենարանն էր արքունական գունդը, որը կազմված էր թագավորական տիրույթներից հավաքագրված ռազմիկներից և պահվում էր մեծ մասամբ մայրաքաղաքում և արքայական ամրոցներում:
- դ. Եկեղեցին ապահովում էր Բագրատունյաց Հայաստանի միասնականությունը:
- ե. Եպիսկոպոսական բոլոր թեմերը ենթակա էին հայոց թագավորին:
- զ. Անին մայրաքաղաք դառնալուց հետո նրա մերձակայքում գտնվող Արգինայի վանքը դարձավ հայոց կաթողիկոսների մշտական նստավայր:
- է. Բագրատունիների ժամանակաշրջանում, ինչպես Արշակունյաց շրջանում, լուրջ հակասություններ ծագեցին թագավորի և եկեղեցու միջև:

- 1) ա, գ, զ 2) ա, ե, է 3) բ, դ, ե 4) գ, զ, է

34. Ո՞ր շարքում են ընդգրկված Բագրատունյաց տոհմից ծագող գահակալների անունները.

- 1) Աշոտ Մսակեր, Գագիկ I, Սենեքերիմ 3) Աշոտ I, Գագիկ Աբասյան, Գագիկ II
- 2) Արտավազդ I, Աշոտ Ողորմած, Սմբատ I 4) Աշոտ I, Սմբատ II, Լևոն I

35. Ստորև բերված պնդումներից որո՞նք են ճիշտ.

- 1) Բագրատունյաց թագավորները ձգտում էին ամբողջ Հայաստանը միավորելու մեկ միասնական, կենտրոնացված պետության մեջ:
- 2) Կենտրոնախույս ուժերը խրախուսվում էին սահմանակից երկու հզոր պետությունների՝ Բյուզանդիայի և Աղվանքի կողմից:
- 3) Երկրի, հատկապես ծայրագավառների նշանավոր իշխանությունները տնտեսական և ռազմական բավարար հզորություն ունեին և ինքնաբավ կյանք էին վարում՝ հաճախ ձգտելով անկախության:
- 4) Բյուզանդիան հայոց պետությունը թուլացնելու, երկրի արևելյան երկրամասերը կայրությանը միացնելու հետևողական քաղաքականություն էր վարում:
- 5) Բյուզանդիան XI դարի երկրորդ կեսից Հայաստանի նկատմամբ որդեգրեց նվաճողական քաղաքականություն:

36. Գտնել միայն հայոց կաթողիկոսների անուններն ընդգրկող շարքը.

- 1) Սահակ Պարթև, Ներսես Շնորհալի, Զաքարիա Չագեցի, Մուշեղ Բագարանցի, Անանիա Մոկացի
- 2) Ներսես Մեծ, Սահակ Պարթև, Զաքարիա Չագեցի, Գևորգ Գառնեցի, Պետրոս Գետադարձ

- 3) Ներսես Մեծ, Սահակ Ձորափորցի, Ներսես Տայեցի, Դավիթ Անհողին, Հովհաննես Ա Մանդակունի
- 4) Ներսես Բ Բագրևանդցի, Զաքարիա Ձագեցի, Վահրամ Պահլավունի, Անանիա Մոկացի, Գագիկ Արծրունի

37. Ընտրել երկու սխալ պնդումները.

- ա. Դավիթ Անհողինը ծրագրել էր բյուզանդացիներից ազատագրել Անին, սակայն վերահաս սելջուկյան արշավանքները ձախողեցին այդ ծրագրի իրագործումը:
- բ. Կախեթի իշխան Կվիրիկեի մահից հետո այդ իշխանությունն անցավ Դավիթ Անհողինի որդուն՝ Գագիկին, որն էլ դարձավ Կախեթի Կյուրիկյան հարստության նոր ճյուղի հիմնադիրը:
- գ. Կարսի թագավոր Աշոտի մահից հետո գահն անցավ իր որդի Սմբատին, որին պատմիչներն անվանում են Սմբատ Աշոտյան:
- դ. Հայ և օտարազգի թագավորական ու ազնվական տոհմերի հետ խնամիական կապեր հաստատելով՝ Կարսի թագավոր Գագիկ Աբասյանը զգալիորեն ամրապնդեց իր դիրքերը:
- ե. Քոչվոր անասնապահներ սելջուկ-թուրքերը զբաղեցնում էին Ղրիմից մինչև Միջին Ասիա ընկած տարածքը և Հայաստանում ու Փոքր Ասիայում առաջին անգամ հայտնվել էին դեռևս X դարում՝ իբրև վարձկաններ արաբական բանակում:

- 1) ա, գ 2) գ, ե 3) դ, ե 4) բ, դ

38. Բերված պնդումներից դր երկուսն են սխալ.

- ա. Մանազկերտի ճակատամարտում բյուզանդացիները ծանր պարտություն կրեցին, ու բազմաթիվ գերիների հետ թուրքերի ձեռքն ընկավ նաև կայսր Դիոգենեսը:
- բ. 1071 թ. Տաշիր-Ձորագետի մոտ տեղի ունեցած բախտորոշ ճակատամարտը ողբերգական արդյունք ունեցավ կայսրության համար:
- գ. Բյուզանդական կայսրությունը կնքված հաշտությամբ ճանաչեց սելջուկ-թուրքերի իշխանությունն ամբողջ Կովկասում:
- դ. Օտար, քոչվոր անասնապահական կենցաղը ծանր հարված հասցրեց Հայաստանի տնտեսությանը:
- ե. Սելջուկ-թուրքերի զանգվածային տեղաշարժերի և հարձակումների հետևանքով տուժեց հատկապես Հայաստանի տնտեսությունը:
- գ. Ասպատակելով Լոռին՝ սելջուկները պաշարեցին Անին:

- 1) բ, դ 2) բ, գ 3) դ, գ 4) ա, ե

39. Ստորև բերված փաստարկներից դր երկուսն են սխալ.

- ա. Խորեզմի շահի որդին՝ Ջալալեդդինը, նահանջելով պայքարը շարունակեց Իրանում և Այսրկովկասում՝ իր հերթին կողոպտելով ու ջարդելով տեղի բնակչությանը:
- բ. Կոտմանի դաշտում տեղի ունեցած ճակատամարտում Գեորգիի զորքերը պարտություն կրեցին և նահանջեցին, այնուհետև, շրջանցելով Զաքարյանների տիրոջներն ու Վրաստանը, մոնղոլներն անցան Հյուսիսային Կովկաս և Ռուսիա:

- գ. 1231 թ. մոնղոլները, հետապնդելով Ջալալեդդինին, կարողացան նրան ջախջախիչ պարտության մատնել:
- դ. Դվին և Շամքոր քաղաքները գրավելուց հետո մոնղոլները պաշարեցին Անին:
- ե. 1240 թ. մոնղոլներն իրենց ենթարկեցին ամբողջ Հարավային Հայաստանը:

- 1) բ, դ
- 2) ա, ե
- 3) գ, ե
- 4) դ, ե

40. Ստորև բերված պնդումներից որո՞նք են սխալ.

- 1) Պայքարն Անիի և Հյուսիսային Հայաստանի մյուս շրջանների համար նոր թափ ստացավ վրաց Գեորգի III թագավորի օրոք:
- 2) 1174 թ. Անին որոշ ժամանակով անցավ հայերի և վրացիների ձեռքը:
- 3) Անիի ազատագրումից հետո թշնամուց մաքրվեցին Արցախը, Սյունիքը, Արարատյան դաշտը:
- 4) Հարավային և կենտրոնական Հայաստանում սելջուկների լծի թոթափումից հետո ազատագրված հայկական հողերը վրաց արքունիքի կողմից հիմնականում տրվեցին Ջաքարյաններին, վերջիններս, վրաց պետության հովանավորությամբ ունենալով ներքին լայն ինքնուրույնություն, ստեղծեցին իրենց իշխանապետությունը:
- 5) Ջաքարյանների իշխանապետությունն իր մեջ ընդգրկում էր Շիրակը՝ Անի մայրաքաղաքով, Արարատյան դաշտը, Կուր գետի միջին հոսանքը, Վանա լճի շրջակայքը:

41. Հարավային Հայաստանի որ տարածքների նվաճումով ավարտվեց մոնղոլական գլխավոր արշավանքը: Գտնել սխալ պատասխանները.

- 1) Տարոն
- 2) Աղվանք
- 3) Վասպուրական
- 4) Աղձնիք
- 5) Տաշիր

42. Առաջին արշավանքի ժամանակ խաչակիրները Հյուսիսային Ասորիքում և Եփրատի ափերին հայ իշխաններին պատկանող որ բերդաքաղաքները բռնազավթեցին: Գտնել սխալ պատասխանը.

- 1) Կուրիս
- 2) Պիր
- 3) Կարկառ
- 4) Ծամնդավ

43. Ի՞նչ տարածք էր ընդգրկում Փիլարտոս Վարաժնունու իշխանությունը.

- 1) Հյուսիսային Ասորիքը և Կիլիկիայի արևելյան շրջանները
- 2) Հարավային Միջագետքը և Կիլիկիայի հարավային շրջանները
- 3) Միջերկրական ծովի հարավ-արևելքը
- 4) Հարավային Ասորիքն ու Կիլիկիայի արևելյան շրջանները

44. Բերված պնդումներից որո՞նք են սխալ.

- 1) Կիլիկիայի հայկական պետության ժամանակաշրջանում հայկական աղբյուրներում երկիրն անվանվել է «Հայոց աշխարհ», «Կիլիկյան Հայաստան»:
- 2) Խաչակիր մատենագիրները Կիլիկիան անվանել են «Հայաստան», «Փոքր Հայք»:

- 3) Կիլիկիան՝ որպես աշխարհագրական միավոր, և Կիլիկյան Հայաստանը՝ որպես պետություն, տարածքային առումով միմյանց չեն համապատասխանել:
- 4) Ք. ա. I դարում Տիգրան Մեծը նվաճեց և հայկական տերությանը միացրեց Կիլիկիայի հարավային շրջանները:
- 5) Կիլիկիայում հայկական պետականության առաջացման նախօրյակին հաստատված հայ բնակչությունն արդեն ուներ կայուն կազմակերպված ընկերային միջավայր:
- 6) 1065 թ. Կարսի թագավոր Գագիկ Կարսեցին իր թագավորության դիմաց բյուզանդական կայսրից ստացավ Կիլիկյան Տավրոսում գտնվող Լամբրոն բերդը:

45. Ստորև բերված պնդումներից որո՞նք են սխալ.

- 1) Լևոն I թագավորի գահակալության տարիներին Կիլիկյան Հայաստանը վերելք էր ապրում:
- 2) Լևոնի կարևոր ձեռնարկումներից մեկը Կիլիկիայի Լամբրոն անառիկ բերդի գրավումն էր:
- 3) 1202 թ. Լևոն I-ը Լամբրոնի տեր Հեթում իշխանին հրավիրեց Սիս և բանտարկեց:
- 4) Լևոն I թագավորը վերաշինեց և բարեկարգեց Կոռնիկոս և Այաս նավահանգիստները:
- 5) Անտիոքի իշխան Ռայմոնդի մահից հետո նրա և Ալիսի որդի Ռայմոնդ-Ռուբենը դարձավ Սրբազան հռոմեական կայսրության (Գերմանիա) միակ ժառանգորդը:

46. Ստորև բերված պնդումներից որո՞նք են սխալ.

- 1) Իկոնիայի սուլթանությունը ընդարձակում էր իր տարածքները Բյուզանդիայի հաշվին:
- 2) Իկոնիայի սուլթանությունը և Եգիպտոսը թշնամաբար էին տրամադրված Կիլիկիայի նկատմամբ:
- 3) Միրիոկեֆալոնի ճակատամարտից հետո Իկոնիայի սուլթանությունը մեկընդմիջտ հրաժարվել էր Կիլիկիայից:
- 4) Երուսաղեմը գրավելուց հետո Եգիպտոսի Այուբյան սուլթանությունը որոշ ժամանակ զբաղված էր խաչակրաց տիրույթների նվաճումով:
- 5) Երուսաղեմը մահմեդականներից հետ գրավելու համար 1189 թ. սկսվեց խաչակրաց երկրորդ արշավանքը:
- 6) Լևոն II-ը կապեր հաստատեց խաչակիրների առաջնորդներից մեկի՝ Սրբազան հռոմեական կայսրության (Գերմանիա) կայսր Ֆրիդրիխ Շիկամորուսի հետ:

47. Տրված պայմաններից առանձնացնել երկուսը, որոնք տեղ չեն գտել 1285 թ. կնքված Եգիպտա-կիլիկյան զինադադարի համաձայնագրում.

- ա. Եգիպտոսը և Կիլիկիան պարտավորվեցին կատարել ռազմագերիների փոխանակում:
- բ. Կիլիկիան պարտավորվում էր օտարերկրացիներին վաճառած աղից ստացված եկամուտների կեսը վճարել Եգիպտոսին:

- գ. Եգիպտոսը և Կիլիկիան պարտավորվեցին թույլատրել երկու կողմերի առևտրականների ազատ երթևեկություն երկու երկրների տարածքում:
- դ. Եգիպտոսը պարտավորվում էր զորքերը դուրս բերել Կիլիկիայից և վերաշինել ավերված քաղաքները՝ բացի Այաս նավահանգստի ծովային ամրություններից:
- ե. Կիլիկիան պարտավորվում էր Եգիպտոսին վճարել տարեկան 500 հազար թագավորական արծաթ:

- 1) գ, դ 2) բ, գ 3) ա, ե 4) բ, դ

48. Ստորև բերված պնդումներից որն է ճիշտ.

- 1) Լուսինյանների կառավարումը քաղաքական որոշում էր, որի միջոցով փորձ էր արվում Կիլիկիայի համար ապահովելու Կիպրոսի և Արևմուտքի ռազմաքաղաքական օժանդակությունը:
- 2) Լեոնային Կիլիկիան նվաճելուց հետո մամլուքները 1360 թ. շարժվեցին Քարուտ Կիլիկիա:
- 3) 1362 թ. Սիսում գումարվում է եկեղեցական ժողով, որը չեղյալ է հայտարարում Սսի և Ադանայի նախորդ ժողովների որոշումները:
- 4) 1373 թ. արքունի խորհրդի որոշմամբ գահն անցնում է Գվիդոն Լուսինյանի եղբորորդուն՝ Լևոն IV-ին, որն այդ ժամանակ Կահիրեում էր:

49. Ստորև բերված պնդումներից որ երկուսն են սխալ.

- ա. Մառիի ճակատամարտում զոհվեց արքայորդի Ստեփանեն:
- բ. Մառիի ճակատամարտում արքայի որդի Լևոնը գերի ընկավ:
- գ. Մառիի ճակատամարտից հետո բարդացավ նաև խաչակիրների վիճակը:
- դ. Մառիի պարտությունը և Անտիոքի անկումը վերջ դրեցին քրիստոնեա-մոնղոլական դաշինք ստեղծելու Հեթում I-ի ծրագրին:
- ե. Հեթում I-ը 1270 թ. գահը հանձնեց եգիպտական գերությունից ազատված Հեթում II-ին:

- 1) ա, գ 2) ա, ե 3) բ, դ 4) բ, ե

50. Գտնել երկու սխալ պնդումները.

- ա. Ըստ հայ-մոնղոլական դաշինքի՝ հայոց եկեղեցիներն ու վանքերն ազատվում էին հարկերից:
- բ. Մամլուքները ստրուկներ էին, որոնք ծառայում էին սուլթանի անձնական գվարդիայում:
- գ. Մամլուքներին անհանգստացնում էր մոնղոլա-հայ-խաչակրաց ռազմաքաղաքական դաշինքը:
- դ. Անտիոքի իշխանության վրա մի քանի արշավանքներ կազմակերպելուց հետո մամլուքները որոշեցին հարձակվել Կիլիկիայի վրա. օգնության համար Լևոն I արքան մեկնեց մոնղոլների մոտ, սակայն նրանք ժամանակին չհասան:
- ե. Հայ-եգիպտական զորքերի միջև վճռական ճակատամարտը տեղի ունեցավ Մռավ կոչված վայրում:

- 1) բ, դ 2) ա, դ 3) գ, ե 4) դ, ե

51. Որո՞նք էին Կիլիկիայի հայկական պետության զինված ուժերի կազմակերպման ու ղեկավարման համար ստեղծված երեք գործակալությունները՝

- ա. սպարապետությունը
- բ. սենեկապետությունը
- գ. սպասալարությունը

- դ. ասպետությունը
- ե. մարաջախտությունը
- զ. սենեկալությունը

- 1) բ, դ, ե
- 2) ա, բ, գ
- 3) ա, գ, ե
- 4) բ, գ, զ

52. Ստորև բերված պնդումներից ո՞ր երեքն են սխալ.

- 1) Կիլիկյան Հայաստանի թագավորն էր պատերազմ հայտարարում, հաշտություն և դաշինք կնքում, քաղաքներ և ամրոցներ հիմնադրում, դրամներ հատում և լուծում գահաժառանգության խնդիրը:
- 2) Կիլիկյան Հայաստանում երկրի կառավարումը թագավորն իրականացնում էր գործակալությունների միջոցով, որոնք քսանից ավելի էին:
- 3) Կիլիկյան Հայոց թագավորության հռչակումից հետո վերականգնվեց նաև թագադիր ասպետություն գործակալությունը, որը կրկին հանձնվեց Բագրատունիներին:
- 4) Խնամակալության (պայլության) գործակալությունը գոյություն ուներ դեռևս Կիլիկյան իշխանության շրջանում:
- 5) Պայլը թագավորի խորհրդականն էր, իսկ արքայի բացակայության դեպքում փոխարինում էր նրան:
- 6) Գործակալությունների մեջ բավական ազդեցիկ տեղ էր զբաղեցնում արքունի քարտուղարությունը, որի գլխավոր պաշտոնը կոչվում էր ասպետ:
- 7) Կիլիկիայի հայոց բանակում կարևոր տեղ ուներ նաև ռազմական նավատորմը:

53. Ստորև բերված պնդումներից ո՞րն է սխալ.

- 1) Արարատյան նահանգի կառավարիչ Յաղութ բեկը, որ կատարում էր Ջահանշահի կարգադրությունը, նպաստավոր պայմաններ է ստեղծում էջմիածնի ժողովականների համար:
- 2) էջմիածինը կրկին դառնում է կաթողիկոսության նստավայր:
- 3) X դարի սկզբից սկսած՝ Հայոց եկեղեցու նվիրապետական հզոր կառույցներից մեկը Աղթամարի կաթողիկոսությունն էր:
- 4) Աղթամարի կաթողիկոսությունը կարգավորում էր հիմնականում Վասպուրականի հայ բնակչության հոգևոր կյանքը:

54. Ո՞ր շարքի բոլոր ինքնավար իշխանություններն էին գտնվում Արևմտյան Հայաստանում.

- 1) Սասուն, Դիզակ, Շատախ
- 2) Շատախ, Վարանդա, Սասուն
- 3) Մոկս, Սասուն, Շատախ
- 4) Մոկս, Խաչեն, Սասուն

55. Բերված պնդումներից ո՞ր երկուսն են սխալ.

- ա. 1606 թ. վճռական ճակատամարտում պարտություն կրելով՝ օսմանյան կողմը համաձայնում է հաշտության պայմանագրի ստորագրմանը, որով վերահաստատվում է Ամասիայի հաշտության պայմանագրով նախատեսված սահմանագիծը, և Հայաստանի հյուսիսային շրջաններն ու Արարատյան դաշտը կրկին անցնում են օսմանյան Թուրքիայի տիրապետության տակ:
- բ. Թուրք-պարսկական պատերազմներն ավարտվում են 1638 թ. Բաղդադի գրավումով:
- գ. Կարե-Շիրինի պայմանագրով Հայաստանը կրկին վերաբաժանվում է երկու ախոյան տերությունների՝ Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև:
- դ. 1639 թ. սահմանագիծն անփոփոխ մնաց մինչև XIX դարի սկիզբը:
- ե. «Շահ-ի Արման» Իսքանդար Կարա-կոյունլուի մահից հետո գահն անցնում է նրա եղբորը՝ Զահանշահին:

- 1) բ, գ 2) ա, դ 3) ա, գ 4) դ, ե

56. Ընտրել երկու սխալ պնդումները.

- 1) IV դ. վերջին մայրենի լեզվով գիր և գրականություն ունենալն ազգապահպանության խնդիր էր դարձել, քանի որ հայոց գրավոր լեզուն կենսական անհրաժեշտություն էր թե՛ պետության, թե՛ եկեղեցու և թե՛ ներկա ու ապագա սերունդներին կրթելու և դաստիարակելու համար:
- 2) Հայոց գրերը դարձան հայ ժողովրդի համար գոյատևման, ազգային ինքնության և արժեհամակարգի պահպանման հզոր միջոց բոլոր ժամանակներում:
- 3) Ըստ Կորյունի՝ IV դ. սկզբին Սահակ Պարթևի նախաձեռնությամբ Արտաշատում եկեղեցական ժողով է գումարվել, որտեղ որոշվել է «հայ ազգի համար նշանագրեր գտնել»:
- 4) Հայաստանում լուսավորչական գործունեությունն ընդարձակելով՝ Մաշտոցը հետագայում տառեր է ստեղծել նաև վրաց և Կուրի ձախափնյա մասում գտնվող Բուն Աղվանքի ցեղերից մեկի՝ զարգարացիների լեզուների համար:
- 5) Թեև Խորենացին հիշատակել է հայկական նախաքրիստոնեական մեհենական գրականության գոյության մասին, սակայն նախամաշտոցյան հայ գրերի մասին մատենագրական այլ տեղեկություններ ու վկայություններ չեն պահպանվել:

57. Թվարկված գործիչներից ովքեր են ղեկավարել Տաթևի համալսարանի ուսումնագիտական աշխատանքները.

- ա. Գրիգոր Միհճեցին դ. Ներսես Լամբրոնացին
- բ. Գրիգոր Տաթևացին ե. Հովհան Որոտնեցին
- գ. Կիրակոս Գանձակեցին զ. Արիստակես Լաստիվերցին

- 1) ա, գ 3) բ, ե
2) բ, դ 4) դ, գ

58. Ստորև բերված պնդումներից ո՞րն է սխալ.

- 1) X–XIV դարերում կրթական համակարգը բաղկացած էր տարրական և բարձրագույն տիպի դպրոցներից:
- 2) Վարդապետարաններում ուսման տևողությունը 7–8 տարի էր:
- 3) Վարդապետական գավազան ստացած շրջանավարտներն իրավունք էին ստանում զբաղվելու ուսուցչությամբ, քարոզչությամբ և գիտական գործունեությամբ:
- 4) Միջնադարյան Հայաստանի նշանավոր ուսումնագիտական կենտրոններից էր Հաղպատի վարդապետարանը, որտեղ իրենց գիտամանկավարժական գործունեությունն են անցկացրել Դավիթ Ալավկատրոփին, Գրիգոր Դարանաղցին, Գրիգոր Տաթևացին:

59. Ստորև բերված պնդումներից ո՞րն է սխալ.

- 1) Անիի Բագրատունյաց թագավորության, Կիլիկյան Հայաստանի և Զաքարյանների իշխանության ժամանակաշրջանում նպաստավոր պայմաններ են ստեղծվում նոր կրթական համակարգի առաջացման և զարգացման համար:
- 2) X դարը նախորդ ժամանակաշրջանից ժառանգեց կրթության կազմակերպման և գիտելիքների հաղորդման այնպիսի կարևոր բաղադրիչ, ինչպիսին էր «յոթ ազատ արվեստների» համակարգը:
- 3) Դպրոցները, որոնք հիմնականում եկեղեցու տնօրինության տակ էին, բաժանվում էին ծխական, վանական և պետական տիպերի:
- 4) Քաղաքներում եկեղեցու իրավասությունից դուրս հիմնվում էին աշխարհիկ դպրոցներ, որոնց մի մասը վերածվում էր բարձրագույն տիպի դպրոցների. դպրոցներին կից գոյություն ունեին մատենադարաններ:

60. Ուսումնագիտական կենտրոններից որո՞նք են գտնվել Կիլիկիայում.

- | | |
|-----------------------|----------------------------|
| ա. Մեծքարի դպրոց | ե. Ակների դպրոց |
| բ. Ծործորի դպրոց | զ. Քոնայի դպրոց |
| գ. Աղբերց վանքի դպրոց | է. Դրազարկի դպրոց |
| դ. Սկևռայի դպրոց | ը. Նոր Գետիկի վարդապետարան |

- | | | | |
|---------------|---------------|---------------|---------------|
| 1) ա, բ, գ, զ | 2) ա, դ, ե, է | 3) բ, գ, ե, է | 4) դ, ե, գ, զ |
|---------------|---------------|---------------|---------------|

61. Ստորև տրված պնդումներից որո՞նք են ճիշտ.

- ա. Հովհաննես Իմաստասերի կազմած կրթության նոր ծրագիրը բաղկացած էր 3 բաժնից:
- բ. Գլաձորի համալսարանի բաժանմունքները կոչվում էին ուսումնարաններ:
- գ. Տաթևի համալսարանը բեղմնավոր գործունեություն է ծավալել հատկապես XII դարի երկրորդ կեսին և XIII դարի սկզբին:
- դ. Սկևռայի դպրոցը գոյատևեց շուրջ 200 տարի:
- ե. Հայոց արքունիքը հովանավորում էր Ակների դպրոցը:

- | | | | |
|-------------|------------|------------|------------|
| 1) ա, բ, դ, | 2) բ, գ, դ | 3) գ, դ, ե | 4) բ, դ, ե |
|-------------|------------|------------|------------|

62. Մշակութային նշանավոր գործիչներից ովքեր են իրենց գիտամանկավարժական գործունեությունը ծավալել Սանահինի և Հաղպատի վարդապետարաններում.

- | | |
|------------------------|---------------------|
| 1) Հովհաննես Իմաստասեր | 5) Դավիթ Ալավկատորի |
| 2) Գրիգոր Նարեկացի | 6) Մխիթար Գոշ |
| 3) Հովհաննես Երզնկացի | 7) Վարդան Արևելցի |
| 4) Ներսես Մշեցի | 8) Հովհան Որոտնեցի |

63. Թվարկվածներից որոնք են գտնվել Կիլիկիայի հայոց արքունիքի հովանավորության ներքո.

- | | |
|-----------------------|--------------------|
| 1) Աղբերց վանքի դպրոց | 4) Հռոմկլայի դպրոց |
| 2) Քոնայի դպրոց | 5) Դրազարկի դպրոց |
| 3) Ակների դպրոց | 6) Ծործորի դպրոց |
| | 7) Մեծքարի դպրոց |

64. Գտնել IX–X դարերում ապրած և ստեղծագործած հայ պատմիչների անունները.

- | | |
|-----------------------------|----------------------|
| 1) Սեբեոս | 4) Վարդան Արևելցի |
| 2) Հովհաննես Դրասխանակերտցի | 5) Կիրակոս Գանձակեցի |
| 3) Թովմա Արծրունի | 6) Սամուել Անեցի |

65. Ստորև տրված պնդումներից որոնք են սխալ.

- 1) Ասողիկի աշխատության առաջին բաժինն ընդգրկում է հնագույն շրջանից մինչև Հայաստանում հեթանոսության ավարտը:
- 2) Հովհաննես Դրասխանակերտցին դեպքերի շարադրանքը սկսել է Հայաստանում քրիստոնեության ընդունումից:
- 3) Վարդան Արևելցին իր աշխատությունը սկսել է «անսկիզբ» ժամանակներից:
- 4) Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրությունը» սկսվում է 1136 թ. դեպքերի շարադրումից:
- 5) Սամուել Անեցու աշխատությունը սկսվում է արարչագործությունից:
- 6) Սմբատ Գունդստաբլը դեպքերի շարադրանքը սկսում է 951 թվականից:

66. Թվարկված գործիչներից իրավագետներ են՝

- | | |
|------------------------------|----------------------|
| ա. Հովհաննես Դրասխանակերտցին | դ. Գրիգոր Տաթևացին |
| բ. Դավիթ Ալավկատորին | ե. Սմբատ Գունդստաբլը |
| գ. Մխիթար Գոշը | զ. Թովմա Արծրունին |

- | | |
|------------|------------|
| 1) բ, գ, ե | 3) բ, դ, գ |
| 2) ա, գ, դ | 4) գ, ե, գ |

67. Թվարկված շինություններից որ երկուսի ճարտարապետն է Տրդատը.

- | |
|---|
| ա. Անիի Մայր տաճարի |
| բ. Ս. Գրիգոր Լուսավորիչ զվարթնոցատիպ եկեղեցու |
| գ. Տաթևի |

- դ. Նորավանքի
- ե. Աղթամարի Ս. Խաչ եկեղեցու
- զ. Գոշավանքի

- 1) ա, բ
- 2) ա, գ
- 3) գ, ե
- 4) դ, զ

68. Ստորև տրված պնդումներում գտնել երկու սխալ.

- 1) Կիլիկյան Հայաստանում կար 112 բերդ:
- 2) VII–VIII դարերում քանդակագործության մեջ ինքնուրույն ճյուղ դարձավ խաչքարերի արվեստը:
- 3) Միջնադարում ճարտարապետության բնագավառում հատկապես զարգացան քաղաքաշինությունը, ամրոցաշինությունը և եկեղեցաշինությունը:
- 4) Աղթամարի Ս. Խաչ եկեղեցու որմնանկարներում պատկերված են Գագիկ II–ը և Սբ Գրիգոր Լուսավորիչը:
- 5) Միջնադարյան նշանավոր խաչքարագործ վարպետներ էին Մոմիկը և Պողոսը:

69. Գրիգոր Տաթևացուց հետո ովքեր ստանձնեցին Մեծփա դպրոցի առաջնորդությունը.

- ա. Գրիգոր Խլաթեցին (Ծերենց)
- բ. Հովհաննես Մեծփեցին
- գ. Զաքարիա Քանաքեղցին
- դ. Ներսես Մոկացին
- ե. Թովմա Մեծփեցին
- զ. Առաքել Դավրիժեցին
- է. Հակոբ Կարնեցին

- 1) ա, բ, ե
- 2) բ, գ, ե
- 3) դ, ե, զ
- 4) ա, գ, է

70. Ստորև բերված պնդումներից որո՞նք են ճիշտ.

- 1) Շիրակավանում 864 թ. հրավիրված եկեղեցական ժողովը մերժեց Հայոց եկեղեցու՝ բյուզանդականի հետ դավանական միավորման առաջարկը:
- 2) Արաբները հայոց իշխանաց իշխան Աշոտ Բագրատունուն հանձնեց երկրի հարկահանությունը, իսկ հարկերը կրճատվեցին մոտ հինգ անգամ:
- 3) 615 թ. Տիգրանի ժողովին հայերից ներկա էին Կոմիտաս Մամիկոնյան և Մաթեոս Ամատունի եպիսկոպոսներն ու Սմբատ Բագրատունին:
- 4) 640 թ. հոկտեմբերին, չնայած Դվինի բնակչության համառ դիմադրությանը, արաբները գրավում, ավերում, թալանում են քաղաքը, բնակիչներից շատերին կոտորում և 45 հազար մարդ գերեվարում ու տանում խալիֆայության խորքերը:
- 5) Աշոտ I–ի մահից հետո գահ բարձրացավ նրա եղբայր Սմբատ I–ը:
- 6) Բյուզանդական կայսրությունն արաբների դեմ հայերի աջակցությունը ստանալու համար Վարազդիրոցին շնորհում է կյուրապաղատի կոչում և հանձնում հայոց իշխանի պաշտոնը:
- 7) Վասպուրականի կողմերում 647 թ. ասպատակած արաբական զորամասը չի կարողանում գրավել Հերևան և Որդսպու բերդերը:

71. Ստորև բերված պնդումներից որո՞նք են սխալ.

- 1) Առաջին Բագրատունի թագավորները հաստատվել էին Բագարանում և Երագ-գավորսում (Շիրակական):
- 2) Բագրատունիները նպատակահարմար գտան Կամսարականներից իրենց անցած Շիրակի նշանավոր Անի ամրոցը դարձնել մայրաքաղաք:
- 3) Աշոտ II-ը հարձակվեց նաև Տփխիսի (Թիֆլիսի) ամիրայության վրա, ջախջախեց Յուսուֆի կայազորը:
- 4) Աշոտ II-ը 922 թ. մեկնեց Կոստանդնուպոլիս, որտեղ հակաարաբական դաշինք կնքեց:
- 5) Խաղաղ ու նպաստավոր էին Աշոտ II-ի թագավորության վերջին տարիները. նա անգավակ էր, ուստի նրա մահվանից հետո գահին անցավ եղբորը՝ Կարսի կառավարիչ Մուշեղին:
- 6) Անիից հյուսիս գտնվող Արգինայի վանքը 948 թ. դարձավ հայոց կաթողիկոսների նստավայր:
- 7) 893 թ. երկրաշարժի հետևանքով Դվինում շատ շենքեր ավերվել էին, և երկրի մայրաքաղաքի դերը Դվինը զիջեց Վանին:

72. Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ.

- 1) Արարատյան կամ Վանի համահայկական թագավորությունը հինարևելյան տիպի դաշնային պետություն էր:
- 2) Արշակունյաց Հայաստանը չպահպանեց նախորդ ժամանակներում ձևավորված Մեծ Հայքի վարչական բաժանումը, և նախկին նահանգների փոխարեն ստեղծվեցին չորս խոշոր բղեջխություններ, որոնք բաժանված էին 191 նախարարությունների:
- 3) Վաղ միջնադարում Արշակունի թագավորները պետությունը կառավարում էին արքունի գործակալությունների միջոցով:
- 4) Հայ Արշակունիների թագավորության անկումից հետո պահպանված հայ նախարարական համակարգը միջնադարում դարձավ հայոց պետականության կրողն ու պահպանողը:
- 5) Վարդանանց և Վահանանց ազատագրական ապստամբությունները նշանավորեցին հայոց անկախ պետականության վերականգնումը և հայոց տանուտիրական համակարգի կատարելագործումը Հայաստանում:
- 6) Վաղ միջնադարյան Հայաստանում շինականները թեև չունեին սեփականություն՝ հող, գյուղատնտեսական գործիքներ կամ անասուն, սակայն իրավունք ունեին օգտվելու գյուղական համայնքի հողերից՝ պետությանը հարկեր վճարելու պայմանով:
- 7) Բագրատունիների օրոք չկար Արշակունյաց ժամանակաշրջանին այնքան բնորոշ հակասությունը թագավորի և եկեղեցու միջև, հայոց կաթողիկոսը ճանաչում էր թագավորի գերիշխանությունը:

73. Ընտրել սխալ պնդումները.

- 1) Հայերենի հմուտ թարգմանիչներ պատրաստելու նպատակով Գրիգոր Լուսավորիչը և Տրդատ III-ը Հայաստանի տարբեր գավառներից հավաքված մանուկների մի մասին տալիս են ասորի դպրության, մյուսներին՝ հելլենական:
- 2) Միլանի հրովարտակի ընդունումից հետո սրվում են Հռոմեական կայսրության և Մեծ Հայքի թագավորության հարաբերությունները, և նախկին բարեկամ երկրները դառնում են ախոյաններ:
- 3) Խոսքով Կոտակը Արտավազդ Մամիկոնյանին էր հանձնել սպարապետի պաշտոնը, բայց քանի որ վերջինս մանկահասակ էր, զորավարության գործը ստանձնում են Անդովկ Սյունին և Արշավիր Կամսարականը:
- 4) Շապուհն օգնության խնդրանքով դիմել էր Արշակ II-ին, և վերջինս հայոց զորքով պարսիկներից շուտ հասնում է Մծբին քաղաքի մոտ և հաղթանակ տանում հռոմեացիների նկատմամբ:
- 5) Վաղես կայսեր հրամանով հռոմեացի հրամանատարները խնջույքի ժամանակ դավադրորեն սպանում են հայոց նշանավոր արքաներից մեկին՝ Պապին, և սպարապետ Մուշեղ Մամիկոնյանին:
- 6) Արշակ II-ը, իմանալով, որ Տիրիթն իրեն խաբել է, նրան ևս մահապատժի է ենթարկում, այնուհետև ամուսնանում Գնելի այրու՝ Փառանծեմի հետ:

74. Գտնել այն երեք իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել 1098 թ.

- ա. Ռուբինյան իշխանի կողմից Վահկա բերդի գրավումը
- բ. Մլեհի սպանությունը
- գ. խաչակիրների կողմից Եդեսիայի գրավումը
- դ. Ռուբինյան իշխանի ապստամբությունը Բյուզանդիայի դեմ
- ե. Տրիպոլիի կոմսության ստեղծումը

- 1) բ, գ 2) ա, գ 3) բ, ե 4) գ, ե

75. Տրված պնդումներից որոնք են սխալ.

- ա. Փիլարտոսը հիմնադրեց ընդարձակ իշխանություն Հյուսիսային Ասորիքում և Կիլիկիայի արևելյան շրջաններում:
- բ. Լևոն I իշխանի օրոք Կիլիկյան Հայաստանի սահմանները հարավում հասան մինչև Միջերկրական ծով:
- գ. Թորոս II-ի ջանքերով կաթողիկոսական աթոռը տեղափոխվեց Սիս, ուր մնաց մինչև 1441 թ.:
- դ. Մլեհը դաշնակցեց Հալեպի ամիրայի հետ:
- ե. Թորոս II-ը իր իշխանությանը միացրեց Տրիպոլիի կոմսությունը:

- 1) ա, գ 2) գ, ե 3) դ, ե 4) բ, դ

76. Գտնել այն երկու իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել 1307 թ.

- 1) մամլուքների առաջին արշավանքը Կիլիկիա
- 2) Սսի եկեղեցական ժողովը
- 3) Ադանայի եկեղեցական ժողովը
- 4) Կիլիկյան հայոց թագավորների և 40 իշխանների սպանությունը
- 5) մամլուքների կողմից Սսի պաշարումը

77. Ստորև տրված պնդումներից որոնք են սխալ.

- ա. 1260–1289 թթ. Վահրամ Բաբունին եղել է Սսի արքեպիսկոպոս:
բ. Հայկազուն–Երվանդականների թագավորությունում արքայից հետո երկրի կարևորագույն դեմքը քրմապետն էր:
գ. Հայր մարդպետը իրականացնում էր Արշակունի սեպուհների դաստիարակությունը:
դ. Կիլիկյան Հայաստանում սենեսկալը արքունի հեծելազորի հրամանատարն էր:
ե. Մարաջախտը զբաղվում էր բանակի սպառազինության և պարենի մատակարարմամբ:

- 1) ա, դ 2) ա, գ 3) բ, դ 4) դ, ե

78. Տրված պնդումներից որոնք են սխալ.

- ա. Կիլիկյան Հայաստանում մշտական բանակ պահելու համար մտցվեց ռազմական հարկ:
բ. Հիվանդախնամների հոգևոր–ասպետական միաբանությունը հայոց բանակին ամեն տարի տրամադրում էր 4000 հետևակ ռազմիկ:
գ. Կիլիկյան Հայաստանում հեծելազորը կազմված էր ասպետներից:
դ. Կիլիկյան Հայաստանում ռազմական նավատորմի համար կառուցված բերդերից կարևոր էր Վահկա բերդը:
ե. Այասն ուներ ծովային և ցամաքային բերդեր:

- 1) ա, գ 2) բ, գ 3) բ, դ 4) դ, ե

79. Գտնել սխալ փաստարկները.

- 1) Տիրանին ձերբակալեց Ատրպատականի մարզպան Ատրվշնասպը:
- 2) Սահակ Պարթևը կարողանում է չեզոքացնել իրեն հակաթոռ նշանակված ասորի Շամուելի գործունեությունը:
- 3) «Ամոթալի» պայմանագրի համաձայն՝ Հռոմը պարտավորվում է այլևս չօգնել Հայաստանին:
- 4) Վաչե Մամիկոնյանը մագքութներին ջախջախում է Օշականի Յլու գլուխ լեռան մոտ:
- 5) Տրդատ Մեծը հազարապետ է նշանակել Արտավազդ Մանդակունուն:
- 6) Արիստակես կաթողիկոսի սպանությունից հետո կաթողիկոս է դառնում նրա ավագ եղբայր Վրթանեսը:

80. Թվարկվածներից որո՞նք են Պապ թագավորի բարեփոխումներից.

- ա. Արքունի հողերի հաշվին ավելացվում են Տրդատ Մեծի օրոք եկեղեցուն տրված հողերը:
- բ. Բանակի թիվը հասցվում է մոտ 100 հազարի:
- գ. Վերացվում է «պտղի և տասանորդի կարգը»՝ բերքից վճարվող տուրքերը:
- դ. Բացվում են նոր կուսանոցներ և այրիների ապաստաններ:
- ե. Հոգևորականների հարազատներին արգելվում է պետական ծառայություն կատարել:

- 1) բ, գ 2) դ, ե 3) ա, դ 4) ա, գ

81. Տրված պայմաններից առանձնացնել երեքը, որոնք տեղ են գտել Նվարսակի հաշտության պայմանագիրը կնքելուց առաջ Նիխորին ներկայացված պահանջների շարքում.

- 1) Պարսիկները հրաժարվում են կրոնափոխության առաջարկից:
- 2) Պարսիկները խոստանում են հոգևորականությանը ազատել հարկերից:
- 3) Հայ վաճառականներն իրավունք են ստանում ազատ առևտուր կատարելու Սասանյան Պարսկաստանի սահմաններում:
- 4) Պարսիկները պարտավորվում են պաշտպանել Հայաստանը հեփթաղների հարձակումներից:
- 5) Պարսիկները խոստանում են պաշտոններ չտալ անարժան և ուրացյալ նախարարներին:
- 6) Պարսիկները պետք է ճանաչեն Հայաստանի ներքին ինքնավարությունը:
- 7) Հայաստանի մարզպանի պաշտոնը Մամիկոնյանների տոհմի համար դարձնել ժառանգական:

82. Թվարկված պնդումներից որո՞նք են ճիշտ.

- ա. Փառանձեմ թագուհին միայնակ փակվում է Կապույտ ամրոցում:
- բ. Սուրեն մարզպանի կողմից սպանվեց Վասակի որդի Մանվել Մամիկոնյանը:
- գ. Հուսիկ-Շահակ կաթողիկոսը իր ձեռնադրությունը ստացել էր Կեսարիայի մետրոպոլիտից:
- դ. Հայաստանի 591 թ. բաժանումից հետո Հուստինիանոս I-ը հայկական տարածքները բաժանեց չորս նահանգի:
- ե. Պարսկա-բյուզանդական վերսկսված պատերազմի ընթացքում Խոսրով Անուշիրվանի զորքերը ներխուժեցին Արտազ և Բագրևանդ, հասան Կարին, իսկ այնտեղից՝ Մելիտինե:

- 1) բ, ե 2) բ, դ 3) ա, գ 4) բ, գ

83. Ստորև բերված պնդումներից ո՞ր երկուսն են սխալ.

- ա) Հայաստանը VII դարի առաջին տասնամյակներում հայտնվեց պարսկա-բյուզանդական պատերազմական գործողությունների ոլորտում:
- բ) Պատերազմի առաջին տարիներին նախաձեռնությունը Պարսկաստանի (Իրան) կողմն էր:
- գ) Խոսրով I-ի զորքերը ներխուժում են Արևմտյան Հայաստան, որտեղ հայ ժողովրդի պայքարը գլխավորում է Վահան Արծրունին:
- դ) Պատերազմի ընթացքում Բյուզանդիայի գործուն աջակցությամբ Վրաց եկեղեցին ընդունում է քաղկեդոնականություն և անջատվում Հայ եկեղեցուց:
- ե) Սասանյանների զորքերը գրավում են Բյուզանդական կայսրությանը ենթակա տարածքները Ասորիքում, Փոքր Ասիայում և Եգիպտոսում:
- զ) 612 թ. սասանյան զորքերը տիրում են նաև Երուսաղեմին, որպես ավար՝ ոսկու և արծաթի հետ տանում են նաև Խաչափայտը, որի վրա խաչել էին Քրիստոսին:

- 1) ա, գ 2) բ, դ 3) գ, ե 4) գ, զ

84. Ջահանշահի օրոք որտեղի՞ հայ իշխանական տների շառավիղները սկսեցին մեկիք կոչվել.

- 1) Վասպուրականի, Սյունիքի, Արցախի, Գեղամա երկրի, Վայոց ձորի
- 2) Գուգարքի, Սյունիքի, Արցախի, Գեղամա երկրի, Վայոց ձորի
- 3) Սասունի, Սյունիքի, Արցախի, Գեղամա երկրի, Վայոց ձորի
- 4) Սյունիքի, Արցախի, Գեղամա երկրի, Վայոց ձորի, Համշենի

85. Արևմտյան Հայաստանում հայ ավատատերերի մանր իշխանություններ էին պահպանվել՝

- 1) Մոկսում, Տայքում, Սյունիքում, Վասպուրականում
- 2) Սասունում, Մոկսում, Շատախում, Ջեյթունում
- 3) Սպեր-Բաբերդում, Կարնո երկրում, Գեղամա երկրում, Սյունիքում
- 4) Խաչենում, Վարանդայում, Ջրաբերդում, Դիզակում

86. Վասպուրականի թագավորությունում կար՝

- 1) 4 000 գյուղ, 8 քաղաք, 72 ամրոց, 115 վանք
- 2) 4 000 գյուղ, 2 քաղաք, 115 ամրոց, 40 վանք
- 3) 1 000-ից ավելի գյուղ, 4 քաղաք, 43 ամրոց, 40 վանք
- 4) 4 000-ից ավելի գյուղ, 6 քաղաք, 115 վանք, 72 ամրոց

87. Բյուզանդացիների նվաճողական քաղաքականությանը զոհ գնացին՝

- 1) Տարոնը, Տայքը, Վասպուրականը
- 2) Սասունը, Սյունիքը, Այրարատը
- 3) Վանանդը, Վասպուրականը, Արցախը
- 4) Աղձնիքը, Ուտիքը, Արցախը

88. XI դարի կեսերից սկսվեց հայ բնակչության զանգվածային արտագաղթը դեպի՝

- 1) Կիլիկիա, Ասորիք, Կապադովկիա, Հյուսիսային Միջագետք
- 2) Կիլիկիա, Բալկաններ, Իրան, Հնդկաստան
- 3) Կիլիկիա, Ուկրաինա, Լեհաստան, Գերմանիա
- 4) Կիլիկիա, Ասորիք, Փոքր Ասիա, Հյուսիսային Կովկաս

89. Խաչակիրները առաջին արշավանքի ժամանակ գրավեցին հայ իշխաններին պատկանող բերդաքաղաքներ՝

119. Ո՞վ է ղեկավարել Շապին–Գարահիսար քաղաքի հայկական թաղամասի ինքնապաշտպանությունը.

- | | |
|-----------------------|--------------------------|
| 1) Հակոբ Կոտոյանը | 3) Մկրտիչ Յոթնեղբայրյանը |
| 2) Ղուկաս Տեովլեթյանը | 4) Տիգրան Անդրեասյանը |

120. Ո՞վ է ղեկավարել Վանի Քաղաքամեջ թաղամասի ինքնապաշտպանությունը.

- | | |
|-----------------------|--------------------------|
| 1) Արամ Մանուկյանը | 3) Մկրտիչ Յոթնեղբայրյանը |
| 2) Ղուկաս Տեովլեթյանը | 4) Հայկակ Կոտոյանը |

121. Սասունի 1904 թ. ինքնապաշտպանության ժամանակ ո՞վ է ղեկավարել հյուսիսային կողմի պաշտպանությունը.

- | | |
|----------------------|----------------------|
| 1) Անդրանիկ Օզանյանը | 3) Գևորգ Չավուշը |
| 2) Հրայրը | 4) Սեբաստացի Մուրադը |

122. Որքան էր հայ կամավորականների թիվը 1915 թ. վերջին – 1916 թ. սկզբին.

- | | |
|-------------|-------------|
| 1) 5 հազար | 3) 20 հազար |
| 2) 15 հազար | 4) 10 հազար |

123. Ո՞վ էր Երևանի ազգային խորհրդի ընտրած Հատուկ կոմիտեի նախագահը.

- | | |
|---------------------|------------------|
| 1) Ա. Աստվածատրյանը | 3) Ա. Մանուկյանը |
| 2) Հ. Ջավրյանը | 4) Մ. Մուսինյանը |

124. Ստորև նշված գործիչներից ո՞վ չի հանդիսացել «Թուրքահայաստանի մասին» հրովարտակի նախագիծ կազմելու համար ստեղծված հանձնաժողովի անդամ.

- | | |
|----------------------|-------------------|
| 1) Վառլամ Ավանեսյանը | 3) Ռոստոմը |
| 2) Սարգիս Լուկաշինը | 4) Սարգիս Կասյանը |

125. Նշված պարբերականներից ո՞րն է հրատարակվել Կ. Պոլսում.

- | | |
|----------------------|---------------|
| 1) «Գիտական շարժում» | 3) «Բազմավեպ» |
| 2) «Կովկաս» | 4) «Արարատ» |

126. Ո՞վ էր Տրապիզոնի բանակցություններում Անդրկովկասի Սեյմի պատվիրակության նախագահը.

- | | |
|-----------------|------------------|
| 1) Ն. Չխեիձեն | 3) Ե. Գեգեչկորին |
| 2) Ա. Չխենկելին | 4) Պ. Մդիվանին |

127. Ո՞վ է գլխավորել հայ կամավորական շարժման կազմակերպչական աշխատանքներն իրականացնող Ազգային բյուրոյի գործադիր մարմինը.

- | | |
|----------------|----------------------|
| 1) Ռոստոմը | 3) Հովսեփ Արղությանը |
| 2) Արմեն Գարոն | 4) Սիմոն Վրացյանը |

128. Ի՞նչ պաշտոն էր զբաղեցնում Մելիքջան Մելիք-Շահնազարյանցը.

- 1) Երևանի և Նախիջևանի զորահրամանատար
- 2) Արարատյան երկրի քալանթար
- 3) Երևանի խանության գլխավոր հարկահավաք
- 4) Նախիջևանի խանության կառավարիչ

ZANGAK

3. ԱՇԽԱՏԱՆՔ ՍԿԶԲՆԱԴԲՅՈՒՐՆԵՐԻ ՀԵՏ

1. Ո՞ւմ են պատկանում հետևյալ խոսքերը.

«Անհնարին է բնութագրել այստեղի բնակիչների, մեծ մասամբ հայերի հրճվանքը, որոնք դուրս էին եկել դիմավորելու հաղթողներին՝ մուսուլմանների երկարատև, փանջալից լծից իրենց ազատագրողներին»:

- | | |
|------------------|--------------------|
| 1) Ի. Գուդովիչին | 3) Ա. Գրիբոյեդովին |
| 2) Ի. Պասկևիչին | 4) Ն. Սուրավյովին |

2. Թվարկվածներից ո՞ր պատերազմում տեղի ունեցած դեպքերի մասին է վկայում Գ. Պոպովը.

«Հայերը, — ինչպես վկայում է գեներալ Պոպովը, — կռվում և մեռնում էին իբրև հերոսներ, նրանց ղեկավարները, որ միշտ առջևի գծում էին, գրեթե բոլորն էլ վիրավոր էին»:

- | | |
|---------------------------------|---------------------------------|
| 1) 1804–1813 թթ. ռուս–պարսկական | 3) 1826–1828 թթ. ռուս–պարսկական |
| 2) 1806–1812 թթ. ռուս–թուրքական | 4) 1828–1829 թթ. ռուս–թուրքական |

3. Ո՞ւմ խոսքերն են մեջբերված.

«Անհնարին է բնութագրել այստեղի բնակիչների, մեծ մասամբ հայերի հրճվանքը, որոնք դուրս էին եկել դիմավորելու հաղթողներին՝ մուսուլմանների երկարատև, փանջալից լծից իրենց ազատագրողներին»:

- | | |
|----------------|----------------|
| 1) Պուշկինի | 3) Գրիբոյեդովի |
| 2) Ալամդարյանի | 4) Պոպովի |

4. Որտեղի՞ հայ կամավորների մասին է մեջբերված խոսքը.

«Հայերը, — ինչպես վկայում է գեներալ Պոպովը, — կռվում և մեռնում էին իբրև հերոսներ, նրանց ղեկավարները, որ միշտ առջևի գծում էին, գրեթե բոլորն էլ վիրավոր էին»:

- | | | | |
|----------|-------------|-------------|-----------|
| 1) Կարսի | 2) Էրզրումի | 3) Բայազետի | 4) Երևանի |
|----------|-------------|-------------|-----------|

5. Ո՞ր փաստաթղթից են մեջբերված խոսքերը.

«Յուրյց փանք աշխարհին, որ երկչուր, անզգա ստրուկներ չենք, որ մենք ևս ընդունակ ենք դիմադրելու, երբ ուրնահարվում են մեր անկապարելի իրավունքները»:

- 1) ՀՅԴ–ի առաջին ընդհանուր ժողովի արձանագրությունից
- 2) Անդրանիկի «Մարտական հրահանգներից»
- 3) Եվրոպայի հայ ուսանողների միության հեռագրից
- 4) Կ. Պոլսում ռուսական ռազմական գործակալի զեկուցագրից

6. Ո՞ւմ ստորագրած հրամանից են մեջբերված խոսքերը.

Իսկ ով «կընդդիմանա այս սրբազան և հայրենասիրական գործին և չի կատարի իր վրա դրված պարտականությունները կամ որևէ եղանակով կփորձի պաշտպանել կամ թաքցնել այս կամ այն հային, կճանաչվի հայրենիքի ու կրոնի թշնամի և դրան համապատասխան կպատժվի»:

- 1) Ջեմալի, Շաքիի, Ջևդեթի
- 2) Նազըմի, Էնվերի, Ջեմալի
- 3) Թալեաթի, Էնվերի, Նազըմի
- 4) Շաքիի, Շյուքրիի, Ջևդեթի

7. Ո՞ւմ խոսքերն են մեջբերված.

«Մի տեսակ արտահողային պետություն էր ստեղծվում՝ կենտրոնական և տեղական իշխանություններով: Ապագայում, երբ Թուրքահայաստանը դառնար ազատ, կառավարման մեքենան արդեն պատրաստ էր»:

- 1) Անդրանիկ Օզանյանի
- 2) Սիմոն Վրացյանի
- 3) Արամ Մանուկյանի
- 4) Ստեփան Շահումյանի

8. Ո՞ր իրադարձությունից հետո են ասվել հետևյալ խոսքերը.

«Մի տեսակ արտահողային պետություն էր ստեղծվում՝ կենտրոնական և տեղական իշխանություններով: Ապագայում, երբ Թուրքահայաստանը դառնար ազատ, կառավարման մեքենան արդեն պատրաստ էր»:

- 1) Ռուսաստանում ապրող հայերի պատգամավորական Կենտրոնական ժողովից հետո
- 2) Արևմտահայ ազգային խորհրդի կազմավորումից հետո
- 3) Հայոց ազգային խորհրդի կազմավորումից հետո
- 4) Հայոց ազգային համախորհրդակցությունից հետո

9. Ո՞ւմ խոսքերն են մեջբերված.

«Մենք այնպես մաքրագարդեցինք այդ շրջանը, որ ապագայում այնտեղ (հուզումներ)... այլևս տեղի ունենալ չեն կարող»:

- 1) Քյամիլ փաշայի
- 2) Թալեաթ փաշայի
- 3) Ջեքի փաշայի
- 4) Էնվեր փաշայի

10. Ո՞ր շրջանի մասին են մեջբերված խոսքերը.

«Մենք այնպես մաքրագարդեցինք այդ շրջանը, որ ապագայում այնտեղ (հուզումներ)... այլևս տեղի ունենալ չեն կարող»:

- 1) Ջեյթունի
- 2) Սասունի
- 3) Կարինի
- 4) Վանի

11. Ո՞ւմ ելույթից է մեջբերված հատվածը.

«... Հայ տարրը պետք է հիմքից արմատախիլ անել, որպեսզի ոչ մի հայ չմնա մեր հողում, և մոռացվի բուն այդ անունը: Հիմա պատերազմ է. այսպիսի հարմար առիթ այլևս չի լինի: Մեծ տերությունների միջամտությունն ու համաշխարհային մամուլի աղմկոտ բողոքները կմնան աննկատ, իսկ եթե նրանք իմանան էլ, կկանգնեն կատարված փաստի առաջ, և դրանով իսկ հարցը կսպառվի»:

- 1) Երիտթուրքերի գաղտնի խորհրդակցությունում Երեքի կոմիտեի անդամ Նազըմի ելույթից
- 2) «Միություն և առաջադիմություն» կազմակերպության անդամ Միդիատ Շյուքրիի ելույթից
- 3) «Թեշքիլաթը մահուսե» կազմակերպության անդամ Միդիատ Շյուքրիի ելույթից
- 4) «Թեշքիլաթը մահուսե» կազմակերպության անդամ Բեհաեդդին Շաքրիի ելույթից

12. Ե՞րբ են ասվել հետևյալ խոսքերը.

«Ցոյց փանք աշխարհին, որ երկչոտ, անզգա սպրուկներ չենք, որ մենք ևս ընդունակ ենք դիմադրելու, երբ ոտնահարվում են մեր անկապտելի իրավունքները»:

- 1) հայ-թաթարական ընդհարումներից հետո
- 2) 1914 թ. ռուս-թուրքական համաձայնագրի ստորագրումից հետո
- 3) Հայ եկեղեցու ունեցվածքի բռնագրավման մասին օրենքի հրատարակումից հետո
- 4) Ռուսաստանում ապրող հայերի պատգամավորական Կենտրոնական ժողովից հետո

13. Ո՞ր իրադարձության հետ է կապված հետևյալ մեջբերումը.

«Մենք այնպես մաքրագարդեցինք այդ շրջանը, որ ապագայում այնտեղ (հուզումներ)... այլևս տեղի ունենալ չեն կարող»:

- 1) Սասունի 1894 թ. հերոսամարտի
- 2) Վանի 1896 թ. ինքնապաշտպանության
- 3) Սասունի 1904 թ. ապստամբության
- 4) Ջեյթունի 1895–1896 թթ. ապստամբության

14. Ո՞վ է հետևյալ խոսքերի հեղինակը.

«Մենք այնպես մաքրագարդեցինք այդ շրջանը, որ ապագայում այնտեղ (հուզումներ)... այլևս տեղի ունենալ չեն կարող»:

- 1) Ազիզ փաշան
- 2) Քյամիլ փաշան
- 3) Ջեքի փաշան
- 4) Էնվեր փաշան

15. Ո՞վ է հետևյալ խոսքերի հեղինակը.

«Մի տեսակ արտահողային պետություն էր ստեղծվում՝ կենտրոնական ու տեղական իշխանություններով: Ապագայում, երբ Թուրքահայաստանը դառնար ազատ, կառավարման մեքենան արդեն պատրաստ էր»:

- 1) Ս. Վրացյան
- 2) Ա. Մանուկյան
- 3) Ավ. Ահարոնյան
- 4) Վ. Փափագյան

16. Ո՞ր կառույցի մասին են հետևյալ խոսքերը.

«Մի տեսակ արտահողային պետություն էր ստեղծվում՝ կենտրոնական ու տեղական իշխանություններով: Ապագայում, երբ Թուրքահայաստանը դառնար ազատ, կառավարման մեքենան արդեն պատրաստ էր»:

- 1) Արևմտահայ ազգային խորհրդի
- 2) Արևելահայ ազգային խորհրդի
- 3) Անդրկովկասի Հատուկ կոմիտեի
- 4) Կ. Պոլսի Ազգային ժողովի

17. Ո՞ր իրադարձության կապակցությամբ է հրապարակվել հետևյալ կոչը.

«Ցոյց փանք աշխարհին, որ երկչուր, անզգա ստրուկներ չենք, որ մենք ևս ընդունակ ենք դիմադրելու, երբ ոտնահարվում են մեր անկապտելի իրավունքները»:

- 1) Սասունի 1904 թ. իրադարձությունների
- 2) հայ-թաթարական ընդհարումների
- 3) Հայոց եկեղեցու գույքի բռնագրավման
- 4) արևմտահայության կոտորածների

18. Ովքեր են ստորագրել հետևյալ հրամանը.

.....ով «կընդդիմանա այս սրբազան և հայրենասիրական գործին և չի կատարի իր վրա դրված պարտականությունները կամ որևէ եղանակով կփորձի պաշտպանել կամ թաքցնել այս կամ այն հային, կճանաչվի հայրենիքի ու կրոնի թշնամի և դրան համապատասխան կպատժվի»:

- 1) Թալեաթը, Էնվերը, Նազըմը
- 2) Թալեաթը, Նազըմը, Միդհատ Շյուքրին
- 3) Թալեաթը, Էնվերը, Բ. Շաքիրը
- 4) Թալեաթը, Ջեմալը, Նազըմը

19. Որտեղ է հնչել հետևյալ ելույթը.

«Ամեն ոք իր մասին է մտածում: Իր երկրի սահմաններից այն կողմ եթե նայող կա, նայում է միայն հանուն իր շահերի: Ոչ ոք ոչ մի մարդ չի ուղարկի փաճկական ճակատ՝ փուն գնացող ռուսներին փոխարինելու համար.... Մենակ ենք և պեպք է ապավինենք միայն մեր ուժերին՝ թե՛ ճակատը պաշտպանելու և թե՛ երկրի ներսում կարգ հաստատելու համար»:

- 1) Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի նիստում
- 2) Արևմտահայերի ազգային համագումարում
- 3) Երևանի Հայոց ազգային խորհրդի նիստում
- 4) Հայոց ազգային համախորհրդակցությունում

20. Ո՞վ է հետևյալ խոսքերի հեղինակը.

«...Եվրոպայում օձ սնուցելով՝ զրկվեցինք Բուլղարիայից. որպեսզի նույնը տեղի չունենա Ասիայում, անհրաժեշտ է բնաջնջել հայությանը»:

- 1) Քյամիլ փաշան
- 2) Թալեաթ փաշան
- 3) Աբդուլ Համիդը
- 4) Ջեքի փաշան

21. Ի՞նչ կապակցությամբ է տրվել հետևյալ գնահատականը.

«Արևմտահայերը այսուհետ կապրեն արդարադատ և ապահով վարչության ներքո»:

- 1) Հայաստանի առաջին հանրապետության հռչակման
- 2) 1914 թ. հունվարի 26–ի ռուս–թուրքական համաձայնագրի
- 3) Թուրքիայում սուլթանական վարչակարգի տապալման
- 4) Հայաստանի խորհրդային կարգերի հաստատման

22. Ո՞վ է հետևյալ գնահատականի հեղինակը.

«Արևմտահայերը այսուհետ կապրեն արդարադատ և ապահով վարչության ներքո»:

- 1) Պողոս Նուբարը
- 2) Ա. Մանդելշտամը
- 3) Գևորգ Ե–ն
- 4) Անդրանիկը

23. Ո՞ր եկեղեցում են արտասանվել այս խոսքերը.

«Լճյա Լուսավորչի հավատին, վայ՛ ուրացողին»:

- 1) Շինուհայրի
- 2) Տաթևի
- 3) Գանձասարի
- 4) Խնձորեսկի

24. Ո՞ր իրադարձության կապակցությամբ են ասվել հետևյալ խոսքերը.

«Հայերը կռվում և մեռնում էին որպես հերոսներ, նրանց ղեկավարները, որ միշտ առջևի գծում էին, գրեթե բոլորն էլ վիրավոր էին»:

- 1) Բայազետի 1877 թ. պաշտպանության
- 2) Շուշիի 1826 թ. պաշտպանության
- 3) Բայազետի 1829 թ. պաշտպանության
- 4) Ախալցխայի 1829 թ. պաշտպանության

25. Ո՞վ է ստորև բերված վկայության հեղինակը.

«Հայերը կռվում և մեռնում էին որպես հերոսներ, նրանց ղեկավարները, որ միշտ առջևի գծում էին, գրեթե բոլորն էլ վիրավոր էին»:

- 1) Ն. Մուրավյով
- 2) Ա. Պոպով
- 3) Ի. Պասկևիչ
- 4) Ա. Գրիբոյեդով

26. Հայ բանաստեղծներից ո՞վ է այսպես բնութագրել Չեյթունի ապստամբությունը.

«Հայկական քաջասրտության փառավոր ապացույց»:

- 1) Ս. Նալբանդյան
- 2) Մ. Պեշիկթաշլյան
- 3) Ս. Շահագիզ
- 4) Ռ. Պատկանյան

27. Ո՞ւմ զեկուցագրից են մեջբերված խոսքերը.

«Մենք այնպես մաքրագարդեցինք այդ շրջանը, որ ապագայում այնտեղ (հուզումներ)... այլևս տեղի ունենալ չեն կարող»:

- 1) Զեքի փաշայի
- 2) Քյամիլ փաշայի
- 3) Ազիզ փաշայի
- 4) Աշիր փաշայի

28. Ո՞ր փաստաթղթից են վերը բերված տողերը.

Ով «որևէ եղանակով կփորձի պաշտպանել կամ թաքցնել այս կամ այն հային, կճանաչվի հայրենիք ու կրոնի թշնամի և դրան համապատասխան կպատժվի»:

- 1) Աբդուլ-Համիդ II-ի հրամանից
- 2) Մեծ վեզիր Քյամիլ փաշայի հրամանից
- 3) Թուրքիայի մահմեդական հոգևորականության առաջնորդի հրամանից
- 4) Թալեաթի, Էնվերի և Նազըմի հրամանից

29. Ո՞ր թվականին են ասվել հետևյալ խոսքերը.

«Մի տեսակ արտահողային պետություն էր սրեղծվում՝ կենտրոնական և տեղական իշխանություններով: Ապագայում, երբ Թուրքահայաստանը դառնար ազատ, կառավարական մեքենան արդեն պատրաստ էր»:

- | | |
|------------|------------|
| 1) 1917 թ. | 3) 1916 թ. |
| 2) 1918 թ. | 4) 1915 թ. |

30. Թվարկվածներից ո՞ր մարմնի նիստում են ասվել ստորև բերվող տողերը.

«Մենակ ենք և պետք է ապավինենք միայն մեր ուժերին՝ թե՛ ճակատը պաշտպանելու և թե՛ երկրի ներսում կարգ հաստատելու համար»:

- | | |
|---------------------------|------------------------------|
| 1) Հայոց ազգային խորհրդի | 3) Բաքվի ազգային խորհրդի |
| 2) Երևանի ազգային խորհրդի | 4) Արևմտահայ ազգային խորհրդի |

4. ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Տրված բացատրություններից որո՞նք են սխալ.

- 1) 1917 թ. մարտի 2-ին Ռուսաստանում ձևավորված բարձրագույն գործադիր իշխանությունը կոչվել է Ժամանակավոր կառավարություն:
- 2) 1917 թ. հոկտեմբերի 25-ին Ռուսաստանում ստեղծված նոր կառավարությունը կոչվել է Սեյմ:
- 3) 1917 թ. մարտի 9-ին Կովկասի նախկին փոխարքայության սահմաններում կազմված նոր մարմինը կոչվել է Անդրկովկասյան հատուկ կոմիտե:
- 4) 1917 թ. նոյեմբերի 15-ին Անդրկովկասում կազմավորված գործադիր նոր մարմինը կոչվել է Անդրկովկասյան կոմիսարիատ:
- 5) 1917 թ. փետրվարի 10-ին Ռուսաստանի Սահմանադիր ժողովի տեղական պատգամավորներից կազմված օրենսդիր բարձրագույն մարմինը կոչվել է Ժողովրդական կոմիսարների խորհուրդ:

2. «Արարատյան զորամիավորում» հասկացությունը համապատասխանեցնել իր բովանդակությանը.

- 1) հայկական Ազգային բյուրոյի որոշմամբ II, III, IV կամավորական ջոկատները V-ին միավորվելու հետևանքով ստեղծված զորախմբի անվանում
- 2) ռուսական հրամանատարության հրամանով 1917 թ. վերջերին կազմավորված զորամիավորում, որի հրամանատարը գեներալ Թովմաս Նազարբեկյանն էր
- 3) I կամավորական ջոկատ, որի հրամանատարն Անդրանիկ Օզանյանն էր
- 4) 1918 թ. մայիսյան հերոսամարտերի օրերին գեներալ Մովսես Սիլիկյանի հրամանատարությամբ կռվող զորքերին տրված անվանում

3. Ի՞նչ է Արևելյան լեգեոնը.

- 1) Հայաստանի բոլշևիկյան կազմակերպության ղեկավար մարմին
- 2) Մ. Սայքսի, Ժ. Պիկոյի և Պողոս Նուբարի միջև Լոնդոնում ձեռք բերված համաձայնությամբ հիմնականում հայ կամավորներից կազմված զորամաս
- 3) ԼՂՀ-ում ստեղծված իշխանության մարմին, որի ձեռքում կենտրոնացված էր ամբողջ գործադիր իշխանությունը
- 4) Երևանի բերդի պաշտպանությունն իրականացնող զորամաս

4. «Երեքի գործադիր կոմիտե» հասկացությունը համապատասխանեցնել իր բովանդակությանը.

- 1) մարմին, որը պաշտպանում էր Օսմանյան կայսրությունում բնակվող բոլոր ազգային ու կրոնական փոքրամասնությունների լիակատար հավասարությունը
- 2) Բեհաեդդին Շաքիր, Նազրմ, Միդհատ Շյուքրի կազմով ստեղծված մարմին

- 3) երիտթուրքերի ղեկավար պարագլուխների եռյակը
- 4) Երևանի ազգային խորհրդի կողմից երեքամսյա ժամկետով ընտրված, արտակարգ լիազորություններով օժտված մարմին

5. Թվարկվածներից ո՞րն է «Հատուկ կոմիտե» հասկացության բացատրությունը.

- 1) Երևանի ազգային խորհրդի կողմից երեքամսյա ժամկետով ընտրված, արտակարգ լիազորություններով օժտված մարմին
- 2) արևմտահայերին թուրքական լծից ազատագրելու գործը ստանձնած մարմին
- 3) արտասահմանից ներգաղթող հայերի ընդունման կոմիտե
- 4) Կարմիր բանակի Ռազմահեղափոխական խորհրդի կողմից ստեղծված մարմին

6. «Երևանյան զորախումբ» հասկացությունը համապատասխանեցնել իր բովանդակությանը.

- 1) ռուսական հրամանատարության հրամանով 1917 թ. վերջերին կազմավորված զորամիավորում, որի հրամանատարը գեներալ Թովմաս Նազարբեկյանն էր
- 2) արևմտահայերից կազմավորված դիվիզիա, որի հրամանատարն Անդրանիկն էր
- 3) 1918 թ. մայիսյան հերոսամարտերի օրերին գեներալ Մովսես Սիլիկյանի հրամանատարությամբ կռվող զորքերին տրված անվանումը
- 4) Առաջին աշխարհամարտի տարիներին ռուսական բանակի շարքերում գործող հնչակյան կամավորական ջոկատին տրված անվանումը

7. XIX դարի սկզբին Պարսկաստանի տիրապետության տակ գտնվող Արևելյան Հայաստանում գավառները կոչվել են՝

- 1) խանություն
- 2) սանջակ
- 3) վիլայեթ
- 4) մահալ

8. Գտնել «սարդար» հասկացության ճիշտ բացատրությունը.

- 1) նահանգապետ
- 2) հարյուրապետ
- 3) զորագլուխ
- 4) խան

9. 1828 թ. մարտի 21-ի Նիկոլայ I-ի հրամանագրով կազմված վարչական նոր միավորը կոչվել է՝

- 1) Հայկական նահանգ
- 2) Հայկական մարզ
- 3) Հայկական օկրուգ
- 4) Հայկական ինքնավարություն

10. 1844 թ. Ռուսական կայսրության կազմում ստեղծված վարչական միավորը կոչվել է՝

- 1) Կասպիական մարզ
- 2) Վրացա-իմերեթական նահանգ
- 3) Կովկասի փոխարքայություն
- 4) Երևանի նահանգ

11. Հայոց եկեղեցու վարչական իրավունքներն ու պարտականությունները, եկեղեցու ու պետության փոխհարաբերությունները սահմանող կանոնադրությունը կոչվել է՝

- 1) թանգիմաթ
- 2) հրովարտակ
- 3) պոլոժենիե
- 4) կոնդակ

12. 1839 թ. սուլթանական կառավարության հրապարակած բարենորոգումների հրովարտակը կոչվում էր՝

- 1) թանգիմաթ 2) պոլոժենիե 3) դեկրետ 4) կանոնադրություն

13. Կ. Պոլսում գործող արևմտահայերի հոգևոր կենտրոնը կոչվել է՝

- 1) սինոդ 3) Ազգային հոգևոր խորհուրդ
2) կաթողիկոսարան 4) պատրիարքարան

14. 1863 թ. Ազգային սահմանադրության համաձայն՝ արևմտահայության կյանքը կազմակերպող մարմիններից Ազգային ժողովը կոչվել է նաև՝

- 1) Երեսփոխանական ժողով 3) Ազգային խորհուրդ
2) Կենտրոնական վարչություն 4) Սահմանադիր ժողով

15. XX դ. սկզբին Ռուսաստանի հետադիմական վարչակարգի դեմ հայ ժողովրդի դիմադրությունը կազմակերպելու համար Թիֆլիսում ստեղծված մարմինը կոչվում էր՝

- 1) Ինքնապաշտպանության կենտրոնական կոմիտե
2) Ազգային կենտրոնական վարչություն
3) պատգամավորական Կենտրոնական ժողով
4) Պաշտպանության պետական կոմիտե

16. «Պատգամավորական Կենտրոնական ժողով» հասկացությունը համապատասխանեցնել իր բովանդակությանը.

- 1) Կ. Պոլսում ստեղծված արևմտահայության կյանքը կազմակերպող մարմին
2) կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի նախաձեռնությամբ Ռուսաստանում ապրող հայերի կողմից հրավիրված ժողով
3) Ռուսաստանում ապրող հայերի կողմից հրավիրված Սահմանադիր ժողով
4) ՀՅԴ նախաձեռնությամբ Անդրկովկասում ապրող հայերի կողմից հրավիրված ժողով

17. 1912 թ. սեպտեմբերին Թիֆլիսում հայ հասարակական տարբեր խավերի ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի ունեցած ժողովի և հետագա մի քանի ժողովների արդյունքում ստեղծված մարմինը կոչվում էր՝

- 1) պատգամավորական Կենտրոնական ժողովը
2) Ժողովրդական կոմիսարների խորհուրդը
3) Հայոց ազգային կենտրոնական բյուրոն
4) Արևմտահայ ազգային խորհուրդը

18. Երիտթուրքերի կուսակցության գաղափարախոս Բ. Շաքիրի անմիջական դեկավարությամբ ստեղծված մարմինը կոչվել է՝

- 1) Երեքի գործադիր կոմիտե 3) Միություն և առաջադիմություն
2) Հատուկ կազմակերպություն 4) Երեքի հատուկ կոմիտե

19. 1917 թ. արևմտահայ զորաբաժինը կյանքի կոչելու համար ստեղծված գործադիր մարմինը կոչվել է՝

- 1) Կովկասի գործերի արտակարգ կոմիսարիատ
- 2) Հայաստանի ապահովության խորհուրդ
- 3) Հայ զինվորական միություն
- 4) Առանձին հայկական կորպուս

20. Երևանի ազգային խորհրդի կողմից ընտրված և արտակարգ լիազորություններով օժտված մարմինը կոչվել է՝

- 1) Հայոց ազգային խորհուրդ
- 2) Հայ զինվորական միություն
- 3) Հատուկ կոմիտե
- 4) Հայաստանի խորհուրդ

21. Ինչպես է կոչվել 1917 թ. մարտի 9-ին Կովկասի նախկին փոխարքայության սահմաններում կազմված նոր մարմինը.

- 1) Ժողովրդական կոմիսարների խորհուրդ
- 2) Ժամանակավոր կառավարություն
- 3) Անդրկովկասյան հատուկ կոմիտե
- 4) Անդրկովկասյան կոմիսարիատ

22. Գտնել «սինոդ» հասկացության ճիշտ բացատրությունը.

- 1) հայաբնակ մարզերում բարենորոգումներ իրականացնող մարմին
- 2) հոգևոր գերագույն մարմին
- 3) Օսմանյան կայսրությունում բնակվող բոլոր ազգային ու կրոնական փոքրամասնությունների լիակատար հավասարությամբ զբաղվող մարմին
- 4) Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի անվանումը

23. «Առանձին հայկական կորպուս» հասկացությունը համապատասխանեցնել իր բովանդակությանը.

- 1) Անդրանիկի գլխավորությամբ ստեղծված զորամաս
- 2) խորհրդային իշխանության տարիներին Կարմիր բանակի կազմում գործող հատուկ զորամաս
- 3) Հայկական կորպուսի և Հատուկ հավաքական ջոկատի միավորումից ստեղծված զորամիավորում
- 4) Մերձավոր Արևելքում ձևավորված զորամաս, որի անձնակազմի մեծ մասը հայեր էին

24. Ինչպես էին կոչվում քրդական հակակառավարական ջոկատները.

- 1) չետնիկներ
- 2) չերքեզներ
- 3) չելլոներ
- 4) սարբազներ

25. Թուրքիայում կարճ ժամանակով իշխանության եկած և հայկական բարենորոգումների ծրագրով հանդես եկած կուսակցությունը կոչվում էր՝

- 1) «Միություն և համաձայնություն»
- 2) «Ազատություն և համաձայնություն»
- 3) «Արդարություն և զարգացում»
- 4) «Ազատություն և հավասարություն»

- 26. Արցախում կազմակերպված պաշտպանական հենակետային ամրոցները կոչվում էին՝**
- 1) բերդ
2) միջնաբերդ
3) սղնախ
4) «Խամսայի մելիքություն»
- 27. Դավիթ բեկի գլխավորությամբ Սյունիքում ստեղծված զինված ուժերի ղեկավար մարմինը կոչվում էր՝**
- 1) զինվորական կոմիտե
2) պաշտոնական խորհուրդ
3) ռազմական խորհուրդ
4) մարտական խորհուրդ
- 28. Հայոց ապագա պետության բարձրագույն օրենսդիր մարմինը, ըստ «Որոգայթ փառացի», կոչվում էր՝**
- 1) Հայոց խորհրդարան
2) Հայոց տուն
3) Հայոց ազգային ժողով
4) Հայոց կառավարություն
- 29. Ըստ Շահամիր Շահամիրյանի՝ Ռուսաստանի օգնությամբ ազատագրված Հայաստանը պետք է հռչակվեր՝**
- 1) սահմանադրական միապետություն
2) սահմանադրական հանրապետություն
3) նախագահական միապետություն
4) պառլամենտական միապետություն
- 30. Թուրքմենչայի պայմանագրով Արաքսի աջափնյակի հայության վերաբնակեցման ծրագրերի իրականացման համար Երևանում ստեղծված մարմինը կոչվում էր՝**
- 1) Վերաբնակեցման հանձնաժողով
2) Ներգաղթի կոմիտե
3) Վերաբնակեցման կոմիտե
4) Ներգաղթի վարչություն
- 31. Հայաստանի ազատագրության՝ Իսրայել Օրու 36 կետերից բաղկացած ծրագիրը կոչվում էր՝**
- 1) Դյուսելդորֆյան
2) Պֆալցյան
3) Մոսկովյան
4) Գերմանական
- 32. Դավիթ բեկի կողմից 1722 թ. առաջինը պարտություն կրած մահմեդական ցեղին անվանում էին՝**
- 1) ջինլիներ
2) պարսիկներ
3) ջևանջիրներ
4) կարակոյունլուներ
- 33. Արցախի ազատագրական պայքարին օժանդակելու նպատակով Շիրվանի հայկական բնակավայրից ժամանած ռազմական գործի կազմակերպիչների զինվորական աստիճանն էր՝**
- 1) հիսնապետ
2) հարյուրապետ
3) տասնապետ
4) հազարապետ

34. Ռուսաստանի կառավարական մարմինը, որին աստրախանցի մեծահարուստ Մովսես Սարաֆյանը ներկայացրել է Հայաստանի ազատագրության իր ծրագիրը, կոչվում էր՝

- 1) արտաքին գործերի կոմիտե
- 2) արտաքին գործերի վարչություն
- 3) արտաքին գործերի կոլեգիա
- 4) արտաքին գործերի դեպարտամենտ

35. Հայ իրականության մեջ առաջին հրապարակախոսական տպագիր աշխատությունը կոչվում է՝

- 1) «Որոգայթ փառաց»
- 2) «Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում»
- 3) «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ»
- 4) «Մարտական հրահանգներ»

36. Հայոց եկեղեցու գույքի բռնագրավման ծրագրի դեմ պայքարելու նպատակով Թիֆլիսում ստեղծված մարմինը կոչվում էր՝

- 1) Ինքնապաշտպանական կոմիտեների միություն
- 2) Ինքնապաշտպանական ազատասիրական խորհուրդ
- 3) Ինքնապաշտպանության կենտրոնական կոմիտե
- 4) Ինքնապաշտպանության ազգային բյուրո

37. Ինչպե՞ս էր կոչվում Արևմտահայաստանի գեներալ կոմիսարին վարչապետ Լվովի և նոր արտգործնախարար Տերեշչենկոյի կողմից տրված հանձնարարական-փաստաթուղթը.

- 1) «Մարտական հրահանգներ»
- 2) «Կառավարման կարգ»
- 3) «Ղեկավար հրահանգներ»
- 4) «Ղեկավարման հրաման»

38. 1918 թ. գարնանը բանակային երեք կորպուսներից ստեղծված 50–հազարանոց թուրքական զորամիավորումը ինչ անվանում ուներ.

- 1) Էրզրում
- 2) Կարս
- 3) Սարիղամիշ
- 4) Սարդարապատ

39. Տրված հասկացությունները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.

- 1) Ժողկոմխորի
- 2) Պետական դումա
- 3) Անդրկովկասյան կոմիսարիատ
- 4) Անդրկովկասյան Սեյմ
- 5) Անդրկովկասյան Ժողովրդավարական Դաշնային Հանրապետություն
- 6) Կովկասի գործերի արտակարգ ժամանակավոր կոմիսար

ա. 1917 թ. Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Անդրկովկասում ստեղծված կառավարություն

բ. Անդրկովկասում 1918 թ. գարնանը ստեղծված պետական կազմավորում

գ. Խորհուրդների համառուսաստանյան II համագումարում ստեղծված կառավարություն

- դ. օրենսդրախորհրդակցական պետական մարմին Ռուսաստանյան կայսրությունում
- ե. Անդրկովկասում ստեղծված օրենսդիր մարմին
- զ. Խորհրդային Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Անդրկովկասում
- է. հեղափոխական արտակարգ պատժիչ մարմին

- 1) 1-գ, 2-դ, 3-ա, 4-ե, 5-բ, 6-զ
- 2) 1-ե, 2-ա, 3-դ, 4-բ, 5-զ, 6-գ

- 3) 1-ա, 2-բ, 3-դ, 4-գ, 5-զ, 6-ե
- 4) 1-գ, 2-դ, 3-զ, 4-բ, 5-ե, 6-ա

40. Տրված հասկացությունները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.

- 1) Երևանյան զորախումբ
- 2) Առանձին հայկական կորպուս
- 3) Մահապարտների գունդ

- 4) Արևմտահայ զորաբաժին (դիվիզիա)
- 5) Արևելյան (Հայկական) լեգեոն
- 6) Հայկական կորպուս

- ա. Սարդարապատի ճակատամարտում Պ. Բեկ-Փիրումյանի հրամանատարությամբ կռվող զորամիավորի անվանումը
- բ. հայկական վեց հրաձգային գումարտակներ, որոնք տեղաբաշխված էին Արևմտյան Հայաստանում
- գ. Առաջին աշխարհամարտի տարիներին սիրիա-պաղեստինյան ճակատում՝ ֆրանսիական զորքերի կազմում կռվող հայկական զորամիավորում
- դ. Հայկական կորպուսի և Հատուկ հավաքական ջոկատի միավորումից ստեղծված զորամիավորում, որի հրամանատարը գեներալ Թովմաս Նազարբեկյանն էր
- ե. Արևմտահայ խորհրդի որոշումով կազմավորված զորամիավորում, որի հրամանատարն Անդրանիկն էր
- զ. 1918 թ. Մայիսյան հերոսամարտերի օրերին գեներալ Մովսես Սիլիկյանի հրամանատարությամբ կռվող զորամիավորման անվանումը
- է. ռուսական բանակի գերագույն սպայակույտի 1917թ. նոյեմբերի 16-ի հրամանով Կովկասյան ճակատում ստեղծված հայկական զորամիավորում

- 1) 1-գ, 2-դ, 3-ա, 4-բ, 5-ե, 6-է
- 2) 1-գ, 2-դ, 3-ա, 4-ե, 5-զ, 6-է

- 3) 1-դ, 2-է, 3-զ, 4-բ, 5-ա, 6-զ
- 4) 1-է, 2-զ, 3-ա, 4-գ, 5-բ, 6-ե

41. Հասկացությունները համապատասխանեցնել իրենց նշանակությանը.

- 1) Ազգային ժողով
- 2) պոլիժենիտ
- 3) պատգամավորական Կենտրոնական ժողով
- 4) փոխանորդ
- 5) Ազգային պատվիրակություն
- 6) Արևելահայ ազգային խորհուրդ
- 7) Անդրկովկասյան հատուկ կոմիտե
- 8) Անդրկովկասյան կոմիսարիատ
- 9) Ժողովրդական կոմիսարների խորհուրդ

43. Հասկացությունները համապատասխանեցնել իրենց նշանակությանը.

- 1) պանիսլամիզմ
- 2) Ինքնապաշտպանության կենտրոնական կոմիտե
- 3) դեկրետ
- 4) Հայոց ազգային համախորհրդակցություն
- 5) գենոցիդ
- 6) Արևմտահայ ազգային խորհուրդ
- 7) Հայաստանի ապահովության խորհուրդ
- 8) Հայոց ազգային կենտրոնական բյուրո
- 9) Մեծ Թուրան

- ա. մեկ ազգի կամ կրոնական համայնքի ամբողջական կամ մասնակի բնաջնջմանը նպատակաուղղված պետական մակարդակի ծրագիր և գործողություն
- բ. ցարիզմի գաղութային քաղաքականության դեմ հայ ժողովրդի դիմադրությունը կազմակերպելու նպատակով ստեղծված մարմին
- գ. միասնական թուրքական պետություն, որը միավորելու էր բոլոր թյուրքալեզու ժողովուրդներին
- դ. մուսուլման բոլոր ազգերին օսմանյան Թուրքիայի դրոշի ներքո միավորելու գաղափարախոսություն
- ե. արևմտահայ զորաբաժնի (դիվիզիայի) ստեղծման նպատակով կյանքի կոչված գործադիր նոր մարմին
- զ. Հայկական հարցի լուծմանը նպաստելու նպատակով ստեղծված մարմին
- է. արևելահայերի ներկայացուցչական համաժողով
- ը. հրովարտակ
- թ. արևմտահայերի առաջին համագումարի կողմից ընտրված կենտրոնական ղեկավար մարմին
- ժ. արևմտահայության ինքնապաշտպանությունը ղեկավարող մարմին

- 1) 1-ե, 2-բ, 3-ա, 4-գ, 5-դ, 6-ը, 7-է, 8-թ, 9-զ
- 2) 1-գ, 2-զ, 3-ը, 4-դ, 5-բ, 6-ա, 7-ժ, 8-թ, 9-ե
- 3) 1-դ, 2-բ, 3-ը, 4-է, 5-ա, 6-ե, 7-թ, 8-ժ, 9-զ
- 4) 1-դ, 2-բ, 3-ը, 4-է, 5-ա, 6-թ, 7-ե, 8-զ, 9-գ

44. Տրված հասկացությունները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.

- | | |
|----------------------------------|---------------------------|
| 1) Հատուկ կոմիտե | 5) Արևելյան լեգեոն |
| 2) Հայկական կորպուս | 6) Արարատյան գունդ |
| 3) Մահապարտների գունդ | 7) Հայոց ազգային խորհուրդ |
| 4) Արևմտահայ զորաբաժին (դիվիզիա) | 8) Սարդարապատի ջոկատ |
| | 9) Երևանյան զորախումբ |

- ա. Սարդարապատի ճակատամարտում կռվող V գնդի անվանումը
- բ. հայության գործնական կյանքը տնօրինող մարմին, որ ստեղծվել էր Թիֆլիսում
- գ. Առաջին աշխարհամարտի տարիներին սիրիա-պաղեստինյան ճակատում ֆրանսիական զորքերի կազմում կռվող հայկական զորամիավորում
- դ. Կովկասյան ճակատում ստեղծված զորամիավորում, որի հրամանատարը գեներալ Թովմաս Նազարբեկյանն էր
- ե. Արևմտահայ խորհրդի որոշումով կազմավորված զորաբաժին (դիվիզիա), որի հրամանատարն Անդրանիկն էր
- զ. 1918 թ. Մայիսյան հերոսամարտերի օրերին գեներալ Մովսես Սիլիկյանի հրամանատարությամբ կռվող զորքերին տրված անվանումը
- է. Արևելյան Հայաստանի տարածքում ստեղծված կամավորական զորամիավորում
- ը. Դ. Բեկ-Փիրումյանի հրամանատարության ներքո գործող հայկական ուժերի միավորում
- թ. Երևանի ազգային խորհրդի երեքամսյա ժամկետով ընտրված մարմին
- ժ. Վարդանի գլխավորությամբ ստեղծված հայկական կամավորական զորամիավորում

- 1) 1-թ, 2-դ, 3-ա, 4-ե, 5-գ, 6-ժ, 7-բ, 8-ը, 9-զ
- 2) 1-թ, 2-դ, 3-ժ, 4-ե, 5-գ, 6-ա, 7-բ, 8-զ, 9-ը
- 3) 1-դ, 2-զ, 3-գ, 4-բ, 5-է, 6-ա, 7-ե, 8-ը, 9-զ
- 4) 1-զ, 2-ե, 3-ա, 4-գ, 5-է, 6-դ, 7-ը, 8-բ, 9-թ

45. Հասկացությունները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.

- | | |
|-----------|-------------|
| 1) շահապ | 5) ջիհադ |
| 2) չեյլո | 6) թանզիմաթ |
| 3) սարդար | 7) համիդիե |
| 4) բեկ | 8) շահաստան |

- ա. մելիքական տոհմի կրտսեր ներկայացուցիչ, զորահրամանատար
- բ. քրդերից կազմված պատժիչ հեծելազնդեր
- գ. քաղաքի կառավարիչ, քաղաքապետ
- դ. զորագլուխ, զորահրամանատար
- ե. բուն քաղաք
- զ. սրբազան պատերազմ
- է. վիլայեթի կառավարիչ
- ը. քրդական հակակառավարական ջոկատ
- թ. բարենորոգումների հրովարտակ

- 1) 1-ե, 2-զ, 3-է, 4-թ, 5-ա, 6-բ, 7-զ, 8-դ
- 2) 1-զ, 2-ը, 3-դ, 4-ա, 5-գ, 6-թ, 7-բ, 8-ե
- 3) 1-է, 2-բ, 3-դ, 4-ա, 5-զ, 6-թ, 7-ը, 8-ե
- 4) 1-թ, 2-ա, 3-դ, 4-զ, 5-բ, 6-է, 7-ե, 8-զ

46. Հասկացությունները համապատասխանեցնել բացատրություններին.

1) ջիհադ

2) գյավուր

3) հայդուկ

4) ֆիդայի

ա. սրբազան պատերազմ

բ. զոհ

գ. չետնիկ

դ. անհավատ

ե. հետևակ

1) 1-ե, 2-ա, 3-գ, 4-բ

2) 1-դ, 2-ա, 3-ե, 4-բ

3) 1-ա, 2-դ, 3-ե, 4-բ

4) 1-ա, 2-բ, 3-գ, 4-ե

ZANGAK

5. ՊԱՏՄԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՆԵՐ ՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ

1. Ո՞րն է Պետրոս I-ի ձեռնարկած Կասպիական արշավանքի առիթը.

- 1) թուրքական արշավանքն Անդրկովկաս
- 2) աֆղանների կողմից Սպահանի գրավումը
- 3) օսմանյան Թուրքիայի կողմից Կասպից ծովի արևմտյան ափերի գրավումը
- 4) հայ և վրաց ժողովուրդների ազատագրական շարժումների ակտիվացումը

2. Ինչո՞ւ Ի. Օրին Գերմանիայից վերադարձավ Հայաստան.

- 1) հայ-վրացական զինական համագործակցությունն ապահովելու համար
- 2) տեղում իրավիճակին ծանոթանալու և Հայաստանի ազատագրման խնդրի շուրջ բանակցություններ վարելու համար
- 3) հայ եկեղեցական նոր ժողովին մասնակցելու համար
- 4) հայկական զինված ուժեր կազմակերպելու նպատակով

3. Ինչո՞ւ Վիեննայի արքունիքում մերժեցին Օրոն և հրաժարվեցին Հայաստանի ազատագրության գործին մասնակցելուց.

- 1) սկսված ավստրո-ֆրանսիական պատերազմի պատճառով
- 2) ֆինանսական միջոցների անբավարարության պատճառով
- 3) Թուրքիայի հետ կնքված հաշտության պայմանագրի պատճառով
- 4) չցանկացան վատթարացնել հարաբերությունները պարսկական տերության հետ

4. Թվարկվածներից որո՞նք են Սյունիքի ազատագրական պայքարի պարտության պատճառներ.

- 1) սյունեցիների ազատասիրական ոգու անկումը
- 2) հայկական զորքերի միայնակ մնալը թշնամու գերակշիռ ուժերի դեմ և աստիճանական կազմալուծումը
- 3) Մխիթար սպարապետի՝ թշնամու հետ բանակցելու մտքին հակվելը
- 4) հայկական զորքերի հրամանատարության մեջ տեղի ունեցած պառակտումը
- 5) Եսայի Հասան-Ջալալյանի մահը
- 6) Գանձակի մահմեդականների հետ կնքած պայմանագրի խզումը

5. Ինչո՞ւ էր Սիմեոն Երևանցի կաթողիկոսը դեմ Հովսեփ Էմինի և վանահայր Հովնանի ծրագրերին.

- 1) Նա անիրագործելի էր համարում եղած ուժերով Թուրքիայի և Պարսկաստանի դեմ հաղթանակի հասնելը:
- 2) Նա չէր վստահում հայ-վրացական ռազմական համագործակցությանը:
- 3) Դրանով նա ձգտում էր շահելու պարսկական և թուրքական իշխանությունների համակրանքը:
- 4) Նա այդ էտապում դեմ էր հայ ազգային-ազատագրական պայքարի գաղափարին:

6. Տրված փաստարկներից ընտրել երեքը, որոնք Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացման հետևանք են.

- ա. Հայերը ձեռք բերեցին անձի և գույքի ապահովություն:
- բ. Հայերը ձեռք բերեցին ազգային կյանքի կազմակերպման ավելի նպաստավոր պայմաններ:
- գ. Արևելյան Հայաստանը դարձավ հայ ժողովրդի ազգահավաքման և նրա գոյատևման հաստատուն և ապահով կենտրոն:
- դ. Արևելյան Հայաստանը ձեռք բերեց պետական ինքնավարություն:
- ե. Հայ ժողովուրդն ազատվեց ազգային-գաղութային ճնշումներից ու հալածանքներից:
- զ. Հայ ժողովուրդը ստացավ քաղաքական ազատ գործունեության իրավունքներ:

- 1) ա, բ, գ 2) գ, դ, ե 3) ա, բ, գ 4) դ, ե, գ

7. Ի՞նչ նպատակ էր հետապնդում հայազգի վաճառական մահտեսի Շահմուրատի այցելությունը Փարիզ.

- 1) Համոզել Լյուդովիկոս XIV-ին աջակցելու հայ ժողովրդի ազատագրական պայքարին՝ հավաստիացնելով ֆրանսիական արքունիքին, որ հայերը հույների հետ միասին պատրաստ են ապստամբելու Օսմանյան կայսրության դեմ:
- 2) Առաջարկել իր անձնական ծառայությունները՝ ստեղծելու և փորձարկելու զենքի նոր տեսակ:
- 3) Համոզել Լյուդովիկոս XVI-ին, որ արագացնի Հայաստան զորք ուղարկելը՝ հավաստիացնելով, որ հայոց թագավորության վերականգնման դիմաց իրենք պատրաստ են նրան ճանաչել հայոց թագավոր:
- 4) Համոզել ֆրանսիական արքունիքին միջնորդի դեր ստանձնելու Հայաստանի և Հռոմի պապի միջև ընթացող բանակցություններում:

8. Ի՞նչ հետևանք ունեցավ Պետրոս I-ի արշավանքը դեպի Անդրկովկաս.

- 1) Ռուսական զորքերը գրավեցին Դերբենդը՝ ամրանալով Կասպից ծովի արևմտյան ափերին:
- 2) Ռուսական զորքերը գրավեցին Կասպից ծովի արևմտյան և հարավային ափերը:
- 3) Ռուսական զորքերը, գրավելով Կասպից ծովի հարավային ափերը, դրանք հանձնեցին աֆղաններին:
- 4) Ռուսական զորքերը տեր դարձան Շամախիից արևմուտք ընկած տարածքներին:

9. Բերված փաստարկներից ընտրել երկուսը, որոնք օսմանյան Թուրքիայի համար 1723 թ. Անդրկովկաս արշավելու պատճառ են հանդիսացել:

- 1) ռուսական ազդեցության ուժեղացումը Անդրկովկասում
- 2) աֆղանների կողմից Սպահանի գրավումը
- 3) հայ և վրաց ժողովուրդների ազատագրական շարժումների աշխուժացումը
- 4) լեզգիների արշավանքները Անդրկովկաս
- 5) հայ և վրաց ժողովուրդների չընդհատվող բանակցությունները Արևմուտքի հետ
- 6) հայերի հնարավոր արշավանքը թուրքական ազդեցության տարածքներ

10. Բերված փաստարկներից ընտրել երեքը, որոնք ճիշտ են բնութագրում Սյունիքում և Արցախում 1720–ական թթ. ծավալված ազատագրական պայքարի նշանակությունը.

- ա. Հայկական ուժերի տարած բազում հաղթանակների շնորհիվ հնարավոր եղավ առժամանակ թոթափել օսմանյան և պարսկական տիրապետությունները:
- բ. Ազատագրական այդ պայքարը մեծապես բարձրացրեց հայ ժողովրդի ինքնագիտակցությունն ու ազատասիրական ոգին:
- գ. Ազատագրական այդ պայքարը հավատ ներշնչեց սեփական ուժերի նկատմամբ:
- դ. Ստիպեց պարսից պետությանն իր հետագա քաղաքականության մեջ հաշվի նստել հայկական մելիքությունների հետ, ճանաչել նրանց իրավունքները:
- ե. Կասեցրեց օսմանյան զորքերի՝ դեպի Արարատյան դաշտ արշավանքը:
- զ. Աջակցեց Նադիր շահին՝ Պարսկաստանից դուրս քշելու աֆղանական և թուրքական նվաճողներին:

- 1) ա, բ, գ 2) բ, դ, ե 3) բ, գ, դ 4) ա, ե, գ

11. Ի՞նչ հետևանք ունեցավ Պարսկաստանի և Թուրքիայի միջև 1736 թ. Էրզրումում կնքված պայմանագիրը.

- 1) Թուրքիան կրկին ճանաչեց Պարսկաստանի տիրապետությունը Արևելյան Հայաստանում և Արևելյան Վրաստանում:
- 2) Պարսկաստանը Թուրքիային հանձնեց Շամախիից արևմուտք ընկած տարածքները:
- 3) Թուրքիան ճանաչեց Պարսկաստանի տիրապետությունը Սև ծովի հարավային ափերին:
- 4) Թուրքիան Նադիրին ճանաչեց Պարսկաստանի շահ:

12. Ի՞նչն է հանդիսացել XIX դարի կեսերին Օսմանյան կայսրությունում միջազգային ազդեցության համար պայքարի կռվան.

- 1) Կրետե կղզուն տիրելու համար տարբեր երկրների միջև ծավալված պայքարը
- 2) Օսմանյան պետությանը պատկանող Կիպրոս կղզուն տիրելու համար ծավալված պայքարը
- 3) Երուսաղեմի սուրբ վայրերին տիրելու համար տարբեր եկեղեցիների միջև ընթացող վեճը
- 4) բարեփոխումների պահանջով հայ հասարակական–քաղաքական շրջանակների ծավալված պայքարը

13. Ռուսաստանի համար ի՞նչ հետևանք ունեցավ 1856 թ. կնքված Փարիզի հաշտության պայմանագիրը.

- 1) ամրապնդեց իր դիրքերը Բալկանյան թերակղզում
- 2) Ռուսական տերության կազմում ամրագրվեցին պատերազմի ժամանակ Արևմտյան Հայաստանում գրաված տարածքները
- 3) ստացավ Փոթի նավահանգիստը, Ախալքալաքն ու Ախալցխան
- 4) կորցրեց Արևմտյան Հայաստանում գրաված հողերը և միջազգային ասպարեզում իր ազդեցիկ դերը

14. Ինչ նպատակով էր Արցախի ժամանել հայազգի Իվան Կարապետը.

- 1) հայոց ազատագրական պայքարին ռուսական իշխանությունների օժանդակությունը հավաստելու
- 2) տեղեկացնելու Պետրոս I-ի Կասպիական արշավանքի մասին
- 3) հայտնելու Նիկոլայ I-ի՝ հայ ազատագրական ուժերին զորական աջակցություն ցուցաբերելու վճռականությունը
- 4) Սյունիքի և Արցախի ազատագրական ուժերին հաշտեցնելու

15. Ինչ նպատակ էր հետապնդում ռուսական կառավարությունը՝ 1896 թ. հայկական տարրական դպրոցները լուսավորության նախարարությանը հանձնելով.

- 1) կասեցնել Անդրկովկասում ազատական շարժումների ընթացքը
- 2) վերահսկել հայկական կրթական հաստատությունների գործունեությունը
- 3) կասեցնել Անդրկովկասում սկսված ազգային-ազատագրական պայքարը
- 4) ռուսական իշխանությունների շահերին ծառայեցնել Հայոց եկեղեցու գործունեությունը

16. Ինչ նպատակով 1720-ական թթ. Շիրվանի հայկական բնակավայրերից Արցախի ժամանեցին ռազմական գործի կազմակերպիչներ Ավան ու Թարխան հարյուրապետերը.

- 1) որպեսզի կասեցնեին պարսկական արշավանքը դեպի Արցախ
- 2) որպեսզի կասեցնեին թուրքական արշավանքը դեպի Արցախ
- 3) որպեսզի օժանդակեին ազատագրական պայքարին
- 4) որպեսզի ի կատար ածեին Պետրոս I-ի հրամանները

17. 1724 թ. ռուս-թուրքական պայմանագրի արդյունքում՝

- 1) Ռուսաստանը ճանաչեց Մերձկասպյան շրջանների միացումը Թուրքիային, իսկ վերջինս Ռուսաստանի տնօրինությանը թողեց Շամախիից արևմուտք ընկած երկրամասերը
- 2) Թուրքիան ճանաչեց Մերձկասպյան շրջանների միացումը Ռուսաստանին, իսկ Ռուսաստանը Թուրքիայի տնօրինությանը թողեց Շամախիից արևմուտք ընկած երկրամասերը
- 3) Թուրքիան ճանաչեց Մերձկասպյան շրջանների միացումը Ռուսաստանին, իսկ վերջինս Թուրքիայի տնօրինությանը թողեց Շամախիից արևելք ընկած երկրամասերը
- 4) Ռուսաստանը ճանաչեց Մերձկասպյան շրջանների միացումը Թուրքիային, իսկ վերջինս Ռուսաստանի տնօրինությանը թողեց Շամախիից արևելք ընկած երկրամասերը

18. Ինչի՞ համար 1725 թ. մելիքները թուրքական 6000 զինվորների տեղավորեցին Արցախի հայկական գյուղերում.

- 1) նրանց համակրանքը շահելու
- 2) հայկական բանակի կորուստներից խուսափելու
- 3) թուրքական հրամանատարության հետ բանակցություններ վարելու
- 4) գալիք մարտերին նախապատրաստվելու

19. 1736 թ. Էրզրումի պայմանագրի արդյունքում՝

- 1) Պարսկաստանը ճանաչեց Թուրքիայի տիրապետությունն Անդրկովկասում
- 2) Թուրքիան ճանաչեց Պարսկաստանի տիրապետությունն Արևելյան Հայաստանում և Արևելյան Վրաստանում
- 3) Ռուսաստանին անցան Արևելյան Հայաստանի զգալի մասը, Երևանի ու Նախիջևանի խանությունները
- 4) Արաքսից հարավ ընկած պատմական Պարսկահայքի ու Ատրպատականի գավառները վերադարձվեցին թուրքերին

20. XVIII դարի 70–80–ական թթ. ռուսահայ կենտրոններն ակտիվացան Հայաստանի ազատագրման հարցում, որովհետև՝

- 1) դեպի հարավ տարածվելու Ռուսաստանի ձգտումները և Հայաստանն ազատագրելու հայոց շարժումներն ու ծրագրերը համահունչ էին
- 2) տվյալ պահին հյուսիս տարածվելու Ռուսաստանի ձգտումները, հայոց շարժումներն ու ծրագրերը համահունչ էին
- 3) Ռուսաստանում խրախուսվում էին հայ բնակչության արագ աճը և ազատագրական ձգտումները
- 4) ռուս–պարսկական պատերազմը ռուսահայ գործիչներին ազատագրության հույսեր էր ներշնչում

21. 1813 թ. Գյուլիստանի պայմանագրով՝

- 1) Ռուսաստանին անցան Արևելյան Հայաստանի զգալի հատվածը՝ Լոռին, Փամբակը, Շամշադինը, Գանձակը, Ղարաբաղը, Շիրակը
- 2) Ռուսաստանին անցան Երևանի ու Նախիջևանի խանությունները, սակայն Արաքսից հարավ ընկած պատմական Պարսկահայքի ու Ատրպատականի գավառները վերադարձվեցին պարսիկներին
- 3) Դանության շրջանում ստանալով Բեսարաբիան՝ ռուսական դիվանագիտությունը Ախալքալաքի գավառը, Անապան ու Փոթին վերադարձրեց Թուրքիային
- 4) Ռուսական կայսրությանն անցան Անդրկովկասի սևծովյան առափնյա շրջանները՝ Փոթի նավահանգստով հանդերձ, ինչպես նաև Ախալցխան ու Ախալքալաքը

22. 1812 թ. Բուխարեստի պայմանագրով՝

- 1) Դանության շրջանում ստանալով Բեսարաբիան՝ Ռուսաստանը Ախալքալաքի գավառը, Անապան ու Փոթին վերադարձրեց Թուրքիային
- 2) Ռուսական կայսրությանն անցան Անդրկովկասի սևծովյան առափնյա շրջանները՝ Փոթի նավահանգստով հանդերձ, ինչպես նաև Ախալցխան ու Ախալքալաքը
- 3) Ռուսաստանին անցան Կարսի, Կաղզվանի, Օլթիի, Արդահանի, Ալաշկերտի, Բայազետի գավառները, Սև ծովի առափնյա շրջանները՝ Բաթում նավահանգստով
- 4) Արևմտյան Հայաստանի մեծ մասը, այդ թվում նաև Էրզրումն ու Վանը վերադարձվեցին Օսմանյան կայսրությանը

23. 1828 թ. Թուրքմենչայի պայմանագրով՝

- 1) Ռուսաստանին անցան Կարսի, Կաղզվանի, Օլթիի, Արդահանի, Ալաշկերտի, Բալաքետի գավառները, Սև ծովի առափնյա շրջանները՝ Բաթում նավահանգստով
- 2) Արևմտյան Հայաստանի մեծ մասը, այդ թվում նաև Էրզրումն ու Բասենը մնացին Օսմանյան կայսրությանը
- 3) Արևելյան Հայաստանի մի զգալի հատված՝ Երևանի ու Նախիջևանի խանությունները, անցան Ռուսաստանին, սակայն Արաքսից հարավ ընկած պատմական Պարսկահայքի ու Ատրպատականի գավառները վերադարձվեցին Իրանին
- 4) Ռուսաստանին անցան Արևելյան Հայաստանի զգալի հատվածը՝ Լոռին, Փամբակը, Շամշադինը, Գանձակը, Ղարաբաղը, Շիրակը

24. Ինչո՞ւ 1830–ական թթ. ռուսական իշխանությունները ձեռնամուխ եղան Հայոց եկեղեցու բարեփոխմանը.

- 1) որովհետև եկեղեցու միջոցով լիովին կիսկեին արևմտահայ ազատագրական շարժումը
- 2) որովհետև ձգտում էին հսկողության տակ պահելու Հայ առաքելական եկեղեցուն
- 3) որովհետև քրիստոնեական հավատքը միավորում էր հայ և ռուս ժողովուրդներին
- 4) որովհետև Ռուսաստանը ձգտում էր լայն արտոնություններ ու լիազորություններ շնորհելու Հայ առաքելական եկեղեցուն

25. 1836 թ. եկեղեցական կանոնադրությամբ՝

- 1) Ռուսաստանը սահմանափակում էր Հայ առաքելական եկեղեցու իրավունքները
- 2) Ռուսաստանը լայն արտոնություններ էր տալիս Հայ առաքելական եկեղեցուն
- 3) Ռուսաստանը հայոց կաթողիկոսին զրկում էր եկեղեցու գլխի՝ իր կարգավիճակից
- 4) հոգևոր գերագույն մարմինը՝ սինոդը, ազատվում էր հարկերից ու տուրքերից

26. Որո՞նք էին 1904 թ. Սասունի ապստամբության պարտության պատճառները.

- ա. մասնակի ընդհարումներով հնարավոր չէր լուծել արևմտահայության ազատագրման խնդիրը
- բ. ապստամբական ղեկավարության մեջ կային լուրջ ռազմավարական տարաձայնություններ
- գ. զենք–զինամթերքի ուշ տեղ հասցնելը Կիլիկիայից
- դ. երկրում ուժերի ու ռազմամթերքի կենտրոնացման մյուս կենտրոնը՝ Վասպուրականը, պատրաստ չէր ընդհանուր ելույթի
- ե. ապստամբության ղեկավար Անդրանիկի վաղաժամ մահը

- 1) ա, ե 2) ա, դ 3) բ, գ 4) բ, դ

27. Ո՞րն էր Հովսեփ Էմինի Արցախից հեռանալու պատճառը.

- 1) Հայաստանի ազատագրության հարցի շուրջ սուր տարաձայնությունները Հովսեփ Էմինի և Արցախի մելիքների միջև
- 2) Արցախում Էմինին չընդունելու և չօժանդակելու՝ Սիմեոն Երևանցի կաթողիկոսի հրամանը

- 3) բանակ ստեղծելու համար անհրաժեշտ գումարների և հանգանակությունների տրամադրելը Խոյի և Սալմաստի հայ բնակչության կողմից
- 4) Հովսեփ Էմինին ձերբակալելու Ղարաբաղի Իբրահիմ խանի մտադրությունը

28. Էջմիածնի կաթողիկոս Ս. Երևանցին հանդես եկավ Հ. Էմինի և Հերակլի ազատագրական ծրագրերի դեմ, որովհետև՝

- ա. նա բարեկամական հարաբերությունների մեջ էր թուրքերի հետ
- բ. Հայաստանի ազատագրության խնդիրը նրա համար առաջնահերթ չէր
- գ. նա վտանգավոր և անշրջահայաց էր համարում այդ քայլը և անբավարար՝ ապստամբության համար առկա միջոցները
- դ. դեմ էր հայ-վրացական դաշինքին
- ե. անհրաժեշտ էր համարում եղած ուժերով հաղթանակի հասնելու հնարավորությունը
- զ. չէր հավատում Հ. Էմինի և Հերակլի խոստումներին ու ծրագրերին

- 1) բ, գ 2) գ, դ 3) ա, ե 4) գ, ե

29. Որո՞նք էին Բեռլինի վեհաժողովի որոշումներից հայերի խոր հիասթափության պատճառները.

- ա. Արևմտահայությանը մերժեցին դառնալ Ազգերի լիգայի անդամ:
- բ. Ռուսական զորքերի անհապաղ դուրսբերումով բարեփոխումների կենսագործման որևէ երաշխիք չէր մնում:
- գ. Մեծ տերությունները հանդես էին գալիս հայկական բարեփոխումների պահանջներով՝ նպատակ ունենալով զիջումներ կորզել Թուրքիայից:
- դ. Արևմտահայությունը ստանում էր միայն մշակութային ինքնավարություն:
- ե. Բարենորոգումները արևմտահայությանն ազգային կառավարություն ձևավորելու հնարավորություն չտվեցին:
- զ. Սուլթանական կառավարությունը նախընտրեց Հայկական հարցը լուծել հայերի զանգվածային կոտորածների միջոցով:

- 1) բ, գ, գ 2) բ, դ, գ 3) ա, բ, դ 4) գ, դ, ե

30. Թվարկվածներից ընտրել երեքը, որոնք արտացոլում են 1826–1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի անմիջական հետևանքները.

- ա. Արևելյան Հայաստանի ևս մի մեծ հատված՝ Երևանի և Նախիջևանի խանությունները, անցան Ռուսաստան:
- բ. Ռուսական իշխանություններն արագորեն բնակեցրին Արևելյան Հայաստանը ռուս կազակներով:
- գ. Ռուսաստանը Պարսկաստանին վերադարձրեց Արաքսից հարավ ընկած պատմական Պարսկահայքի և Ատրպատականի տարածքները:
- դ. Պատերազմի արդյունքները գոհունակությամբ չընդունվեցին արևելահայության կողմից:

- ե. Պարսկական տիրապետությունից ազատագրվելու արևելահայության հույսերը չարդարացան:
- զ. Տասնյակ հազարավոր հայեր, չկամենալով մնալ մահմեդական տիրապետության տակ, 1828 թ. գարնանից ուղղվում են դեպի Ռուսաստանյան կայսրության տարածք:
- է. Պատերազմի ավարտից հետո Արևմտյան և Արևելյան Հայաստանները վերամիավորվեցին:

- 1) գ, զ, է 2) ա, գ, զ 3) բ, է, զ 4) ա, գ, դ

31. Թվարկվածներից որո՞նք են բնութագրում 1905–1906 թթ. հայ–թաթարական ընդհարումների հետևանքները.

- ա. Հայությունը մարտական լուրջ փորձ ձեռք բերեց:
- բ. Ավելի գերիշխող դարձավ հայ ժողովրդի երկու հատվածների միասնության գաղափարը:
- գ. Ամրապնդվեց հայերի և կովկասյան թաթարների ռազմաքաղաքական դաշինքը:
- դ. Բարձրացավ հայերի վստահության աստիճանը. նրանք պատրաստ էին հակահարված տալու իրենց ոչ բարյացակամ հարևաններին:
- ե. Հայ հոգևորականության հեղինակությունը աճեց որպես զինված պայքարի կազմակերպիչ:
- զ. Սկսեց արծարծվել երկրամասի հայկական բնակավայրերը միավորելու և անկախ Հայաստան ստեղծելու գաղափարը:
- է. Ռուսական մեծապետական շովինիզմն սկսեց տեղի տալ, թուլացավ ոչ ռուս ժողովուրդների ազգային–գաղութային ճնշումը:

- 1) բ, գ, է 2) ա, դ, զ 3) ա, բ, է 4) ա, բ, դ

32. Գտնել սխալ պատասխանները.

Որո՞նք էին Թուրքիայի՝ Առաջին համաշխարհային պատերազմի մեջ ներքաշվելու պատճառները.

- ա. պատերազմը պատեհ առիթ էր «Բալկանյան երկրների» հետ դարավոր հաշիվները մաքրելու համար
- բ. Անգլիայի և Իտալիայի հետ ունեցած հակասությունները
- գ. թուրք–ռուսական հակամարտությունը
- դ. ԱՄՆ–ի հակաթուրքական դիրքորոշումը
- ե. Ռուսաստանում թուրքալեզու, ինչպես նաև այլ մահմեդական ժողովուրդներին ռուսների դեմ օգտագործելու և նրանց Մեծ Թուրանի պետության մեջ միավորելու ձգտումը
- զ. հայկական «խոչընդոտի» վերացումը

- 1) ա, գ 2) ա, զ 3) բ, դ 4) դ, է

33. Թվարկվածներից ո՞րն է 1828 թ. Ռուսաստանի կողմից Թուրքիայի դեմ պատերազմ սկսելու գլխավոր պատճառը.

- 1) մեծ ծավալ էր ընդունել հույների և բալկանյան այլ ժողովուրդների ազատագրական պայքարը
- 2) ցարիզմը ձգտում էր պահպանելու Բաթումի նավահանգիստը
- 3) Ռուսաստանը ձգտում էր տեր դառնալու սևծովյան նեղուցներին՝ Բոսֆորին ու Դարդանեյին, ամրապնդելու իր դիրքերը Բալկաններում և Արևմտյան Հայաստանում
- 4) Ռուսաստանը ձգտում էր ազատագրելու արևմտահայությանը և Հայաստանին տալու ինքնավարություն

34. Ռուս-թուրքական 1914 թ. համաձայնագիրը չիրագործվեց, որովհետև՝

- 1) եվրոպական երկրները չուղարկեցին իրենց ներկայացուցիչներին Արևմտյան Հայաստանում բարենորոգումներն սկսելու համար
- 2) քրդական համիդիե ջոկատները հարձակվեցին քրիստոնյա կառավարչի վրա և սպանեցին նրան
- 3) Ռուսաստանը Արևմտյան Հայաստանը բնակեցրեց կազակներով
- 4) օգտվելով Առաջին աշխարհամարտն սկսելու առիթից՝ Թուրքիան չեղյալ հայտարարեց բարենորոգումների ծրագիրը

35. Որո՞նք էին Աբդուլ Համիդի կողմից 1891 թ. քրդական անհնազանդ ջոկատներից 30 հեծելազնդերի ստեղծման պատճառները.

- ա. քրդական ազգային բանակ ստեղծելու նպատակը
բ. հայ-քրդական հակամարտություն հրահրելը և Հայկական հարցի «լուծմանը» քրդերին մասնակից դարձնելը
գ. քրդերին հակակառավարական գործողություններից հեռու պահելը և իր հսկողության տակ վերցնելը
դ. քրդերին հայերի դեմ ուղղորդելը
ե. նրանց միջոցով արևմտահայության ֆիզիկական անվտանգության ապահովումը
զ. քրդերին ապագայում ինքնավարություն շնորհելը

- 1) ա, բ, ե 2) բ, գ, դ 3) բ, գ, զ 4) դ, ե, զ

36. Ո՞րն էր 1830–1840–ական թթ. Անդրկովկասում ցարիզմի իրականացրած վարչական փոփոխությունների նպատակը.

- 1) նպաստել երկրամասի սոցիալ-տնտեսական զարգացմանը
- 2) վարչական բաժանումները համապատասխանեցնել ազգային, պատմական սահմանաբաժանումներին
- 3) ամրապնդել Անդրկովկասում ցարական իշխանությունը և վերահսկողությունը
- 4) նվազեցնել երկրամասում ազգամիջյան թշնամանքի ու բախումների հնարավորությունը

- 3) Անգլիան և Ֆրանսիան փորձեցին կանխել Ռուսաստանի հնարավոր միայնակ մուտքը Կ.Պոլիս և նեղուցների գոտի
- 4) ազատագրել Կիլիկիան թուրքերից և այնտեղ ստեղծել ինքնավար պետություն

41. Թվարկվածներից որո՞նք 1918 թ. Մայիսյան հերոսամարտերի հետևանքներից չեն.

- ա. Հերոսամարտերի շնորհիվ բնաջնջումից փրկվեց արևելահայությունը, ինչպես և Եղեռնից մազապուրծ հարյուր հազարավոր արևմտահայեր:
- բ. Հերոսամարտերից հետո թուրքական զորքերը սրընթաց առաջ շարժվեցին և գրավեցին Ատրպատականը:
- գ. Հայկական ուժերի ռազմական հաջող գործողություններն ստիպեցին թուրքական կողմին Բաթումի բանակցություններում մեղմացնել իրենց պահանջները:
- դ. Թուրքիան ստիպված էր նորաստեղծ Հայաստանի Հանրապետության հետ 1918 թ. հունիսի 4-ին կնքել հաշտության պայմանագիր:
- ե. Հերոսամարտերից հետո հայությունը չկարողացավ ազգովին ինքնակազմակերպվել:
- զ. Ճակատամարտերը հնարավորություն տվեցին թուրքական զորքերին առանց դիմադրության գրավելու Բաքուն:
- է. Հերոսամարտերով դրվեց ամբողջական հայրենիքի վերականգնման ճանապարհի սկիզբը:

- 1) գ, դ, է 2) բ, ե, զ 3) բ, դ, է 4) ա, գ, է

42. Հայաստանի Հանրապետությունը կարողացավ իրավական (դե յուրե) ճանաչում ստանալ Անտանտի երկրների կողմից և մասնակցել հաշտության խորհրդաժողովին, որովհետև՝

- 1) այդ մասին տերությունների ղեկավարները պայմանավորվել էին Բեռլինի վեհաժողովում
- 2) նորահռչակ հայկական պետությունը դարձավ աշխարհամարտի մասնակից կողմ
- 3) Հայաստանի Հանրապետությունը այդ իրավունքը ստացել էր Ազգերի լիգայի կողմից
- 4) նորահռչակ հայկական պետության զինված ուժերը պատերազմում էին Խորհրդային Ռուսաստանի դեմ

43. Թվարկվածներից որո՞նք են արևմտահայության նկատմամբ Ռուսաստանի ժամանակավոր կառավարության որդեգրած քաղաքականության արդյունքներ.

- ա. Առաջին անգամ պաշտոնապես ճանաչվեց և ձևակերպում ստացավ Օսմանյան կայսրությունից նվաճված տարածքի հայկական մասը՝ որպես վարչական առանձին միավոր՝ Թուրքահայաստան անունով:
- բ. Ժամանակավոր կառավարությունը ճանաչեց Արևմտյան Հայաստանի անկախությունը:
- գ. Ռուսական զորքերը անհապաղ դուրս էին բերվում թուրքերից գրաված տարածքներից:

- դ. Ռուսական նոր իշխանությունը սկսեց հայկական մարզերում հայանպաստ քաղաքականություն իրականացնել:
- ե. Ժամանակավոր կառավարությունը հրահանգեց պատերազմի ավարտից հետո թույլատրել բոլոր հայերին վերաբնակվելու Արևմտյան Հայաստանի տարածքում:
- զ. Հատուկ որոշմամբ Արևմտյան Հայաստանում հաստատված բոլոր քրդերը տեղահանվելու և ենթարկվելու էին արտագաղթի:

- 1) ա, դ, զ 2) բ, գ, ե 3) ա, դ, ե 4) գ, դ, զ

44. Բերված պատճառներից ընտրել երեքը, որոնք պայմանավորել են Հայաստանի ազատագրության գաղափարախոսության որակապես նոր մակարդակի ձևավորումը 1860–ական թթ. սկզբներին.

- ա. Եվրոպայում ընթացող հեղափոխությունները
- բ. սլավոնական ժողովուրդների ազատագրական շարժումները
- գ. ռուսական իշխանությունների սադրիչ գործունեությունը
- դ. հայոց ազգային–հասարակական կյանքի զարթոնքը
- ե. ազատագրական խմբակների ծավալած գործունեությունը
- զ. հայ ազգային կուսակցությունների ծավալած գործունեությունը
- է. Սասունում նախապատրաստվող ապստամբությանն օժանդակելու ցանկությունը

- 1) ա, բ, դ 2) բ, ե, է 3) դ, ե, զ 4) ա, դ, ե

45. «Բարենպատակ ընկերություն» և «Հայրենիքի սիրո գրասենյակ» խմբակների գլխավոր նպատակն էր՝

- 1) բարձրացնել հայերի հայրենասիրական և ազատասիրական ոգին և հասնել Հայաստանի անկախությանը
- 2) սոցիալական պայքարի դուրս բերել հայ երիտասարդությանը
- 3) ոչ միայն ազատագրել Արևմտյան Հայաստանը, այլև հասնել ազգի երկու հատվածների միավորմանը
- 4) նախապատրաստել ժողովրդին, արթնացնել նրա մեջ ազգային գիտակցություն և ստեղծել կուսակցություններ

46. «Համիդիե» հեծելազնդերի ստեղծումով Բարձր դուռը ինչ խնդիր էր լուծում.

- 1) Պաշտպանում էր Օսմանյան կայսրության արտաքին սահմանները, ապահովում էր պետության ներքին կայունությունը:
- 2) Քրդերին հեռու էր պահում հակակառավարական գործողություններից և վերցնում իր հսկողության տակ, ուղղորդում էր նրանց հայերի դեմ:
- 3) Հայերին պաշտպանում էր չերքեզների և թուրքմենների հարձակումներից, կարգու կանոն էր հաստատում պետության մեջ:
- 4) Քրդերին զրկում էր հայերին հալածելու հնարավորությունից:

47. 1894 թ. ծրագրով դաշնակցությունն ազդարարում էր, որ իր նպատակն է՝

- 1) Արևմտյան Հայաստանում հայկական անկախ պետություն ստեղծելը
- 2) ապստամբության ճանապարհով Արևմտյան Հայաստանի ազատագրությանը հասնելը, որով հասկացվում էր հայկական նահանգների ինքնավարության հաստատում
- 3) Արևմտյան Հայաստանի միացումը Ռուսաստանին
- 4) թուրքական սուլթանի, պարսից շահի և ռուսական ցարի տիրապետությունից հայ ժողովրդին ազատելը

48. Թվարկվածներից որո՞նք են ներկայացնում 1890–ական թվականների հայերի զանգվածային կոտորածների հետևանքներ.

- ա. Ոչնչացվեց մոտ 300 հազար հայ:
բ. Գերմանական կառավարությունը ստանձնեց որբ մնացած հայ երեխաների խնամքը:
գ. Հայերն ամբողջությամբ ոչնչացվեցին անգամ Կ. Պոլսում և Զմյուռնիայում:
դ. Հայերի ժառանգները պահպանեցին իրենց ունեցվածքը:
ե. 100 հազար հայ գաղթեց Ռուսաստան, 200 հազարը՝ Եվրոպա և Ամերիկա:
զ. Արևմտահայ բազմաթիվ գավառներ հայաթափվեցին և բնակեցվեցին քրդերով ու թուրքերով:
է. Տեղահանված հայերը բնակեցվեցին Միջագետքի ապահով շրջաններում:
- 1) բ, գ, է 2) գ, ե, զ 3) ա, գ, է 4) ա, ե, զ

**49. Գտնել սխալ պատասխանները.
1894–1896 թթ. հայերի դիմադրական մարտերի հետևանքով՝**

- ա. հայերին հաջողվեց որոշ նահանգներում կիսանկախ վիճակ ստեղծել
բ. բազմաթիվ վայրերում հաջողվեց խուսափել զանգվածային ջարդերից
գ. հայերը քրդերի հետ համատեղ պայքարի դուրս եկան թուրքական բռնապետության դեմ
դ. հայերը հարկադրեցին մեծ տերություններին քայլեր կատարել կոտորածները կանխելու, բարեփոխումների խնդիրը կրկին արժարժելու ուղղությամբ
ե. հնարավորություն առաջացավ Հայկական հարցի լուծման համար
- 1) բ, դ 2) բ, ե 3) գ, դ 4) ա, գ

50. Թվարկվածներից որո՞նք են հայ-թաթարական ընդհարումների հետևանքներ.

- ա. Ավելի գերիշխող դարձավ հայ ժողովրդի երկու հատվածների առանձին անկախության հասնելու գաղափարը:
բ. Բարձրացավ հայերի վստահության աստիճանը. նրանք պատրաստ էին հակահարված տալու իրենց ոչ բարյացակամ հարևաններին:
գ. Ընդգծված դարձան Ռուսաստանից անկախանալու տրամադրությունները:
դ. Հայությունը մարտական լուրջ փորձ ձեռք բերեց:

- ե. Բարձրացավ հայ հոգևորականության հեղինակությունը. բնակչության լայն շրջաններում հոգևորականները իրավամբ դիտվում էին որպես զինված պայքարի միակ կազմակերպիչներ:
- զ. Սկսեց արժարժվել երկրամասի հայկական բնակավայրերը միավորելու և Ռուսաստանի կազմում տարածքային ինքնավարություն ստեղծելու գաղափարը:
- է. Դաշնակցությունը առաջադրեց ռուսական միապետության դեմ ապստամբություն սկսելու հարցը:

- 1) գ, ե, զ 2) բ, դ, զ 3) ա, դ, է 4) բ, գ, ե

51. Որո՞նք էին երիտթուրքական հեղաշրջումից հետո (սկզբնական շրջանում) հայ ազատագրական ուժերի մարտավարության փոփոխության հետևանքները.

- ա. Լիակատար համաձայնության եկան երիտթուրքերի հետ և գործում էին նրանց թելադրանքով:
- բ. Օրակարգից հանվեց արևմտահայությանը ընդհանուր զինված ապստամբության նախապատրաստելու հարցը:
- գ. Հրաժարվեցին իրենց ազգային պահանջներից և թուրքերի հետ կոալիցիա կազմեցին կառավարության մեջ:
- դ. Հայ քաղաքական կուսակցությունները հայտարարեցին իրենց ինքնալուծարման մասին:
- ե. Ճանաչեցին օսմանյան Թուրքիայի տարածքային ամբողջականությունը:
- զ. Դադարեցրին ընդհատակյա գործունեությունը:

- 1) բ, գ, ե 2) ա, գ, դ 3) բ, ե, զ 4) բ, դ, ե

52. Ո՞րն էր թուրքերի՝ Առաջին համաշխարհային պատերազմի մեջ ներքաշվելու գլխավոր պատճառը.

- 1) Անգլիայի և Ֆրանսիայի հետ ունեցած տարածքային վեճերը
- 2) թուրք-ռուսական հակամարտությունը
- 3) ԱՄՆ-ի հակաթուրքական դիրքորոշումը
- 4) Ռուսաստանում ապրող մահմեդականների համար անկախ պետականության ստեղծման ձգտումը

53. Ցարական ռազմաքաղաքական վերնախավը մասնակցեց Առաջին աշխարհամարտին, որովհետև ձգտում էր՝

- ա. վերահսկողություն ձեռք բերելու Պաղեստինի սրբավայրերի նկատմամբ
- բ. օգնության հասնելու Բալկանյան թերակղզու ժողովուրդներին
- գ. տեր դառնալու սևծովյան նեղուցներին և Կ.Պոլսին, ազատորեն դուրս գալու Միջերկրական ծով
- դ. նվաճելու Արևմտյան Հայաստանը
- ե. վերականգնելու Ղրիմի պատերազմի ժամանակ կորցրած դիրքերը
- զ. ամրապնդելու իր դիրքերն Իրանում

- 1) գ, դ, զ 2) գ, դ, ե 3) ա, գ, զ 4) բ, դ, ե

54. Ո՞րն էր Առաջին աշխարհամարտի ընթացքում ցարական իշխանությունների կողմից հայ կամավորական ջոկատների ցրման գլխավոր պատճառը.

- 1) հայ կամավորական ջոկատների ռուսական զորքերի կազմից դուրս գալու ձգտումը
- 2) ռուսական իշխանությունները իրագել էին հայերի «ինքնավարական» և «անկախական» ծրագրերին
- 3) հայ կամավորական ջոկատներում կարգապահության լիակատար բացակայությունը
- 4) հայ կամավորական ջոկատները այլևս չէին ցանկանում կռվել

55. Թվարկվածներից որո՞նք են Մեծ եղեռնի հետևանքներ.

- ա. Ոչնչացվեց Օսմանյան կայսրության հայ բնակչության մեծ մասը՝ 300 հազարը:
բ. Մահմեդականացվեցին մոտ 250 հազար հայեր, հիմնականում՝ կանայք և երեխաներ:
գ. Հայերն ամբողջությամբ ոչնչացվեցին անգամ Կ. Պոլսում և Զմյուռնիայում:
դ. Հայերի ժառանգները մի կերպ փրկեցին իրենց ունեցվածքը:
ե. Ավերվեցին կամ կողոպտվեցին 2350 եկեղեցի և վանք, վերացվեցին 1500 դպրոց ու վարժարան:
զ. Հայությանը հասցվեց 20 մլրդ ֆրանկ ոսկու վնաս:
է. Տեղահանված հայերը բնակեցվեցին Կիլիկիայի հայաշատ շրջաններում:

- 1) բ, դ, է 2) ա, գ, ե 3) ե, գ, է 4) բ, ե, գ

56. Թվարկվածներից որո՞նք են 1918 թ. Մայիսյան հերոսամարտերի հետևանքներ.

- ա. Հայաստանը վճռական պահին օգնության հասավ Ռուսաստանին, որը շարունակում էր կռվել թուրքերի դեմ:
բ. Դրվեց ամբողջական հայրենիքի վերականգնման ճանապարհի սկիզբը:
գ. Դրական դեր խաղաց թուրքերի դեմ պայքարում Անդրկովկասի ժողովուրդների փոխհամաձայնեցված ու համատեղ պայքարը խրախուսելու համար:
դ. Բնաջնջումից փրկվեցին Անդրկովկասի ժողովուրդները:
ե. Թուրքական կողմը ստիպված եղավ մեղմացնել պահանջները և նորաստեղծ Հայաստանի Հանրապետության հետ կնքել Բաթումի հաշտության պայմանագիրը:
զ. Նորահռչակ հայկական պետությունը դարձավ աշխարհամարտի մասնակից կողմ և այս հիմքի վրա իրավական (դե յուրե) ճանաչում ստացավ Անտանտի երկրների կողմից:
է. Հայությունը հնարավորություն ստացավ պարտված թշնամուն թելադրելու հաշտության սեփական պայմանները:

- 1) ա, բ, է 2) գ, դ, գ 3) բ, ե, գ 4) բ, դ, ե

57. Գտնել սխալ պատասխանները: Ինչո՞ւ 1918 թ. հնարավոր չեղավ պաշտպանել մեր հայրենիքի արևմտյան մասը.

- 1) մենշևիկների և մուսավաթականների հակահայկական դաշինքի պատճառով
- 2) հայկական կանոնավոր զորամասերի համալրումը դեռ չէր ավարտվել, և նրանց զգալի մասն էլ թիկունքում էր

- 3) Անտանտի երկրների՝ ստանձնած պարտավորությունները չկատարելու պատճառով
- 4) Խորհրդային Ռուսաստանի բրեստյան պարտվողական քաղաքականության պատճառով
- 5) Ռուսաստանը պարտավորվել էր այդ տարածքները հանձնել Թուրքիային վճարելիք ռազմատուգանքի փոխարեն

58. Արցախահայության ազատագրական ուժերի մի մասը 1720–ական թթ. վերջին գերադասեց թուրքերի հետ բանակցել, որովհետև չստացավ՝

- 1) Ռուսաստանի կողմից խոստացված օգնությունը
- 2) Իրանի կողմից խոստացված օգնությունը
- 3) Պֆալց երկրամասի կայսրընտիր իշխան Հովհան Վիլիելմի կողմից խոստացված օգնությունը
- 4) Ֆլորենցիայի և Վիեննայի կողմից խոստացված օգնությունը

59. Սյունիքում և Արցախում 1720– ական թթ. ազատագրական պայքարի արդյունքում՝

- 1) Օսմանյան պետությունը ստիպված էր իր հետագա քաղաքականության մեջ հաշվի նստել հայկական մելիքությունների հետ, ճանաչել նրանց իրավունքներն ու ինքնիշխանությունը
- 2) Պարսից պետությունը ստիպված էր իր հետագա քաղաքականության մեջ հաշվի նստել հայկական մելիքությունների հետ, ճանաչել նրանց իրավունքներն ու ինքնիշխանությունը
- 3) Սյունիքում Օրբելյանների գլխավորությամբ վերականգնվեց հայոց պետականությունը
- 4) Արցախում Հասան–Ջալալյանների գլխավորությամբ ստեղծվեց հայկական իշխանություն

60. Ըմբոստ Ջեյթուն լեռնագավառն իրեն ենթարկելու օսմանյան կառավարության ջանքերը 1860 թ. ավելի եռանդուն դարձան, որովհետև՝

- 1) Կովկասից ներգաղթած չերքեզները բնակեցվեցին Մարաշի շրջակայքում
- 2) իշխանություններին հաջողվեց պատանդ վերցնել Ջեյթունի տանուտերերին
- 3) Կ. Պոլսի հայոց պատրիարքը սկսեց համագործակցության եզրեր գտնել չերքեզների հետ
- 4) Հռոմի պապը իր ազդեցությունը տարածելու նպատակով սկսեց օժանդակել Ջեյթունի հայությանը

61. Ինչո՞ւ Սիմեոն Երևանցի կաթողիկոսը կարգադրեց հավաքել և այրել «Նոր տետրակը», փակել տպարանը և հեռացնել Մովսես Բաղրամյանին.

- 1) օսմանահպատակ, մասնավորապես բալկանյան ժողովուրդների ազատագրական շարժումը չվտանգելու պատճառով
- 2) ճիշտ էր համարում պայքարի պարտիզանական ուղին
- 3) Ռուսաստանից ակնկալվող օգնությունը չվտանգելու պատճառով
- 4) զգուշացավ հայ երիտասարդների անժամանակ ապստամբելու վտանգից

62. Կովկասյան իշխանությունները 1906 թ. օգոստոսի 30-ին փակեցին Ռուսաստանում ապրող հայերի պատգամավորական Կենտրոնական ժողովը, որովհետև՝

- 1) Հայաստանն ինքնավար հռչակելու հայտարարություն ընդունվեց
- 2) հեղափոխական տրամադրություններ նկատեցին պատգամավորների ելույթներում
- 3) հայերը հրաժարվեցին համագործակցել Պետական դումայի հետ
- 4) Ռուսաստանի մղած պատերազմներին այլևս չմասնակցելու որոշում ընդունվեց

63. Ինչ պատճառներով 1896 թ. ինքնապաշտպանական կոիվների մասնակից վանեցիներն ընդունեցին անգլիական հյուպատոսի միջնորդությունը.

- 1) թուրքական իշխանությունների՝ զինված վանեցիների անարգել անցումը Պարսկաստան ապահովելու խոստման
- 2) զինամթերքի պակասի
- 3) հայերի կոտորածը անհապաղ դադարեցնելու կառավարական հրամանը հաշվի առնելու
- 4) փախստականների ներհոսքի հետևանքով առաջացած անմխիթար վիճակի
- 5) հայկական ուժերի շրջանում սկիզբ առած բախումների

6. ՊԱՏՄԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հնդկահայ ազատագրական կենտրոնի գործունեության հետ կապված դեպքերից որն է խախտում ժամանակագրական հաջորդականությունը.

- 1) Մադրասի հայկական տպարանի հիմնումը
- 2) «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ» գրքի լույսընծայումը
- 3) Հերակլ II-ի ուղերձի հայերենով տպագրվելը Մադրասում
- 4) «Նոր տետրակի» ռուսերենով լույսընծայումը
- 5) Հերակլ II-ի ուղերձը Պարսկաստան քված հայ ժողովրդին՝ Շ. Շահամիրյանի առաջարկով

2. XIX դ. կեսերի հայ քաղաքական կյանքի հետ կապված իրադարձություններից որն է խախտում ժամանակագրական հաջորդականությունը.

- 1) Ազգային սահմանադրության ստեղծումը Կ. Պոլսի ուսումնական խորհրդի անդամների կողմից
- 2) ՀՅԴ կուսակցության ստեղծումը
- 3) «Բարենպաստակ ընկերություն» խմբակի ստեղծումը
- 4) «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության ստեղծումը
- 5) Արմենական կուսակցության ստեղծումը

3. XX դարի սկզբի հայ ազատագրական շարժումների հետ կապված իրադարձություններից որն է խախտում ժամանակագրական հաջորդականությունը.

- ա) ինքնապաշտպանության ղեկավար մարմնի ստեղծումը Գելիեգուզան գյուղում
- բ) Սասունի ճանապարհների գրավումը թուրքական զորքերի կողմից
- գ) պաշարված հայրուկների աննկատ հեռանալը Ս. Առաքելոց վանքից
- դ) Ռուսաստանում ապրող հայերի պատգամավորական կենտրոնական ժողովի բացումը Էջմիածնում
- ե) Ադանայի կոտորածը

- 1) դ 2) բ 3) գ 4) ե

4. 1918 թ. իրադարձություններից որն է խախտում ժամանակագրական հաջորդականությունը.

- ա) Ալեքսանդրապոլի գրավումը թուրքական զորքի կողմից
- բ) Սարդարապատի գրավումը թուրքական զորքի կողմից
- գ) Սարիղամիշի գրավումը թուրքական զորքի կողմից
- դ) Դրոյի տված առաջին հաղթական մարտը Բաշ Ապարանում
- ե) Ղարաքիլիսայի ճակատի կազմակերպումը

- 1) գ 2) բ 3) ա 4) ե

- 5. 1918 թ. իրադարձություններից ո՞րն է խախտում ժամանակագրական հաջորդականությունը.**
- 1) Կարսի հանձնումը թուրքերին
 - 2) Ղարաքիլիսայի գրավումը թուրքերի կողմից
 - 3) Ներքին Թալինի բերդի գրավումը հայ կամավորների կողմից
 - 4) Սարդարապատ կայարանի հետգրավումը հայկական զորքի կողմից
 - 5) Բաշ Ապարանի ճակատամարտի ավարտը
- 6. Գտնել այն իրադարձությունը, որը խախտում է ստորև բերված դեպքերի ժամանակագրական հաջորդականությունը.**
- 1) Արևելահայերի համաժողովի գումարումը Թիֆլիսում
 - 2) Բուլճակյան հեղաշրջումը Ռուսաստանում
 - 3) Անդրկովկասյան կոմիսարիատի ստեղծումը
 - 4) Արևմտահայերի առաջին համագումարը
 - 5) Երզնկայի զինադադարի կնքումը
- 7. Գտնել այն իրադարձությունը, որը խախտում է ստորև բերված դեպքերի ժամանակագրական հաջորդականությունը.**
- 1) Ս. Կուկունյանի արշավանքը
 - 2) Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի կնքումը
 - 3) Բեռլինի վեհաժողովը
 - 4) Գում Գափուի ցույցը
 - 5) Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի կողմից Բարենորոգումների մայիսյան ծրագրի հանձնումը սուլթանին
- 8. Գտնել այն իրադարձությունը, որը խախտում է ստորև բերված դեպքերի ժամանակագրական հաջորդականությունը.**
- 1) Արևելյան պատերազմի սկիզբը
 - 2) XIX դ. երկրորդ կեսի ռուս-թուրքական երկրորդ պատերազմի սկիզբը
 - 3) Փարիզի հաշտության պայմանագրի կնքումը
 - 4) Ազգային կանոնադրության հաստատումը Կ. Պոլսի Ազգային ընդհանուր ժողովի կողմից
 - 5) Ջեյթունի ապստամբությունը Մկրտիչ Յաղուբյանի ղեկավարությամբ
- 9. XX դ. սկզբների իրադարձություններից ո՞րն է խախտում տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**
- 1) Սարիղամիշի ճակատամարտի ավարտը
 - 2) Շատախի կենտրոն Թաղի ինքնապաշտպանության սկիզբը
 - 3) Վանի ինքնապաշտպանության սկիզբը
 - 4) Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ կատարելու վերաբերյալ ռուս-թուրքական համաձայնագրի ստորագրումը
 - 5) Դիլմանի ճակատամարտը

10. Իրադարձություններից ո՞րն է խախտում 1915 թ. դեպքերի շարքի ժամանակագրական հաջորդականությունը.

- 1) Մուսա լեռան հերոսամարտը
- 2) Շապին-Գարահիսարի ինքնապաշտպանության սկիզբը
- 3) Հնչակյան կուսակցության 20 գործիչներին՝ Փարամազի գլխավորությամբ, կախաղան բարձրացնելը
- 4) Մուշի ինքնապաշտպանության սկիզբը
- 5) Ուրֆայի հերոսամարտի ավարտը

11. Գտնել այն իրադարձությունը, որը խախտում է ստորև բերված դեպքերի ժամանակագրական հաջորդականությունը.

- 1) ԱՀԿ-ի ստեղծումը
- 2) Շատախի կենտրոն Թաղի ինքնապաշտպանության սկիզբը
- 3) Վանի ինքնապաշտպանության սկիզբը
- 4) «Արևելյան լեգեոնի» ստեղծումը
- 5) Արևմտահայերի առաջին համագումարը

12. Գտնել այն իրադարձությունը, որը խախտում է ստորև բերված դեպքերի ժամանակագրական դասավորությունը.

- 1) Լազարյան ճեմարանի բացումը
- 2) Ներսիսյան դպրոցի հիմնադրումը
- 3) Երևանի թեմական դպրոցի բացումը
- 4) Աղաբաբյան դպրոցի հիմնադրումը
- 5) Շուշիի թեմական դպրոցի բացումը

13. Գտնել Իսրայել Օրու գործունեության հետ կապված այն իրադարձությունը, որը խախտում է ստորև բերված դեպքերի ժամանակագրական հաջորդականությունը.

- 1) Հակոբ Զուղայեցու գլխավորած պատվիրակության ժամանումը Կ. Պոլիս
- 2) Ֆրանսիայում գինվորական ծառայության մտնելը
- 3) հաստատվելը Պֆալց երկրամասի կենտրոն Դյուսելդորֆ քաղաքում
- 4) ժամանումը Ռուսաստան
- 5) հանդիպումը Ֆլորենցիայի դքսի հետ
- 6) ժամանումը Վիեննա

14. Սյունիքի ազատագրական պայքարի դեպքերից ո՞րն է խախտում ժամանակագրական հաջորդականությունը.

- 1) ջևանշիր քոչվոր ցեղի դեմ տարած հաղթանակը
- 2) Տաթև գյուղի մերձակա ամրոցի գրավումը
- 3) Հալիձորի ճակատամարտը
- 4) Չավնդուրի ճակատամարտը
- 5) Ջևայի և Որոտանի բերդերի ազատագրումը
- 6) Մեղրիի ազատագրումը

15. 1890–ական թթ. հայ ազատագրական պայքարի իրադարձություններից որն է խախտում տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.

- | | |
|---------------------------|------------------------------|
| 1) Գում Գափուի ցույցը | 4) Սասունի հերոսամարտը |
| 2) Կուկունյանի արշավանքը | 5) Վանի ինքնապաշտպանությունը |
| 3) Բաբշենի հաղթական կռիվը | 6) Խանասորի արշավանքը |

16. Իրադարձություններից որն է խախտում տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.

- 1) Ս. Շահումյանի նշանակվելը Կովկասի արտակարգ կոմիսար
- 2) Շիրակի գոյամարտի սկիզբը
- 3) Առանձին հայկական կորպուսի ստեղծումը
- 4) Բրեստ–Լիտովսկի հաշտության կնքումը
- 5) Թուրք–անդրկովկասյան պատերազմի սկիզբը
- 6) Բաշ Ապարանի ճակատամարտի հաղթական ավարտը

17. Իրադարձություններից որն է խախտում տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.

- 1) Վանի հերոսամարտը Մկրտիչ Ավետիսյանի ղեկավարությամբ
- 2) Շապին–Գարահիսարի ինքնապաշտպանության սկիզբը
- 3) Երզնկայում զինադադարի ստորագրումը
- 4) Մուսա լեռան հերոսամարտը
- 5) Ուրֆայի հերոսամարտը
- 6) ԱժԴՀ–ի ստեղծումը

18. Թվարկվածներից որն է խախտում Առաջին աշխարհամարտի տարիներին տեղի ունեցած իրադարձությունների ժամանակագրական հաջորդականությունը.

- 1) Արևելյան լեգեոնի ստեղծումը
- 2) ԱժԴՀ–ի ստեղծումը
- 3) Արևմտահայերի առաջին համագումարը
- 4) Երզնկայում զինադադարի ստորագրումը
- 5) Բրեստ–Լիտովսկի հաշտության պայմանագրի ստորագրումը
- 6) Սարդարապատի հերոսամարտի սկիզբը

19. Գտնել այն իրադարձությունը, որը խախտում է ստորև բերված դեպքերի ժամանակագրական դասավորությունը.

- 1) «Ազդարարի» լույսընծայումը
- 2) «Տարեգրություն» պարբերականի հրատարակումը
- 3) Ա. Գրիբոյեդովի «Խելքից պատուհաս» պիեսի բեմադրումը Երևանում
- 4) «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի» հրատարակումը
- 5) Խորենացու «Հայոց պատմության» լույսընծայումը ռուսերենով Պետերբուրգում
- 6) «Բազմավեպի» լույսընծայումը

20. Գտնել այն իրադարձությունը, որը խախտում է ստորև բերված դեպքերի ժամանակագրական հաջորդականությունը.

- 1) «Արևելյան թատրոնի» կազմավորումը Կ. Պոլսում
- 2) Հ. Վարդույանի երկլեզու թատրոնի ստեղծումը
- 3) 600 կմ հեռավորության վրա գունավոր պատկեր հաղորդելու առաջին փորձի իրագործումը
- 4) «Գիտական շարժում» պարբերականի հրատարակումը
- 5) Յուպիտերի վեցերորդ արբանյակի հայտնաբերումը
- 6) «Անուշ» օպերայի բեմադրումը Ալեքսանդրապոլում

21. XIX դ. երկրորդ կեսի հայ քաղաքական կյանքի հետ կապված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել հինգերորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.

- ա. Արմենական կուսակցության ստեղծումը
- բ. «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության ստեղծումը
- գ. Հնչակյան կուսակցության ստեղծումը
- դ. Ազգային սահմանադրության ստեղծումը Կ. Պոլսի ուսումնական խորհրդի անդամների կողմից
- ե. «Բարենպատակ ընկերություն» խմբակի ստեղծումը
- զ. ՀՅԴ կուսակցության ստեղծումը
- է. «Հայրենասերների միություն» կազմակերպության ստեղծումը
- ը. Գում Գափուի ցույցը

- 1) բ 2) դ 3) ա 4) է

22. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. Սասունի ինքնապաշտպանությունը Անդրանիկի գլխավորությամբ
- բ. Սասունի հերոսամարտը Մեծն Մուրադի ղեկավարությամբ
- գ. Հնչակյան կուսակցության 20 գործիչներին՝ Փարամազի գլխավորությամբ, կախաղան բարձրացնելը
- դ. Մշո Ս. Առաքելոց վանքի կռիվը
- ե. Սայքս–Պիկոյի համաձայնագրի կնքումը
- զ. Մուշի ինքնապաշտպանության սկիզբը
- է. Ուրֆայի հերոսամարտի ավարտը
- ը. Բրեստ–Լիտովսկի հաշտության պայմանագրի ստորագրումը

- 1) ա, է, բ, ե, ը, գ, դ, զ 3) բ, դ, ա, գ, զ, է, ե, ը
2) է, գ, ը, ա, բ, ե, գ, դ 4) բ, դ, ե, ա, գ, ը, է, գ

23. Տրված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել վերջինը.

- ա. Սասունի ինքնապաշտպանությունը Անդրանիկի գլխավորությամբ
- բ. Սասունի հերոսամարտը Մեծն Մուրադի ղեկավարությամբ

- գ. Հնչակյան կուսակցության 20 գործիչներին՝ Փարամազի գլխավորությամբ, կախաղան բարձրացնելը
- դ. Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագրի ստորագրումը
- ե. Սայքս-Պիկոյի համաձայնագրի կնքումը
- զ. Մուշի ինքնապաշտպանության սկիզբը
- է. Ուրֆայի հերոսամարտի ավարտը
- ը. Մշո Ս. Առաքելոց վանքի կռիվը

- 1) ը 2) դ 3) գ 4) բ

24. Տրված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել երկրորդը.

- ա. «Արևելյան թատրոնի» կազմավորումը Կ. Պոլսում
- բ. Շուշիի թեմական դպրոցի բացումը
- գ. Հ. Վարդույանի երկլեզու թատրոնի ստեղծումը
- դ. սիմֆոնիկ նվագախմբի ստեղծումը Հարություն Սինանյանի կողմից
- ե. «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի» հրատարակման սկիզբը
- զ. Երևանի թեմական դպրոցի բացումը
- է. «Բազմավեպի» լույսընծայումը
- ը. 600 կմ հեռավորության վրա գունավոր պատկեր հաղորդելու առաջին փորձի իրագործումը

- 1) բ 2) դ 3) գ 4) ը

25. Գտնել այն երկու իրադարձությունները, որոնք խախտում են տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.

- 1) Իսրայել Օրու ժամանումը Ռուսաստան
- 2) Գեորգիևսկի դաշնագրի կնքումը
- 3) Բուխարեստի պայմանագրի կնքումը
- 4) Գյուլիստանի պայմանագրի կնքումը
- 5) Արևելյան Վրաստանի բռնակցումը Ռուսաստանին
- 6) Թուրքմենչայի պայմանագրի կնքումը
- 7) Հայոց եկեղեցու կանոնադրության հրապարակումը
- 8) Հայկական մարզի ստեղծումը
- 9) Ադրիանապոլսի պայմանագրի կնքումը

26. Գտնել այն երկու իրադարձությունները, որոնք խախտում են XIX դ. երկրորդ կեսի ռուս-թուրքական պատերազմների դեպքերի ժամանակագրական հաջորդականությունը.

- 1) Բաշկադըլկարի մոտ Վ. Բեիբուօվի զորքերի ջախջախիչ պարտության մատնելը թուրքական մեծաքանակ զորքերին
- 2) Բայազետի գրավումը Երևանյան ջոկատի կողմից

- 3) Քյուրուկդարայի մոտ ռուսական զորքերի ջախջախիչ պարտության մատնելը թուրքական մեծաքանակ բանակին
- 4) Փարիզի պայմանագրի կնքումը
- 5) ռուս-անգլիական համաձայնագրի կնքումը Լոնդոնում
- 6) Դիադիմի գրավումը Երևանյան ջոկատի կողմից
- 7) Արդահանի գրավումը Մ. Լոռիս-Մելիքովի կորպուսի կողմից
- 8) Կարսի գրավումը Հ. Լազարևի զորամասի կողմից
- 9) Սան Ստեֆանոյի հաշտության կնքումը

27. Տրված իրադարձություններից որն է տեղի ունեցել վերջինը.

- ա. Անդրկովկասյան հատուկ կոմիտեի կազմավորումը
- բ. Արևմտահայերի ազգային խորհրդի ստեղծումը
- գ. Արարատյան գնդի կազմավորումը
- դ. Ժամանակավոր կառավարության ձևավորումը
- ե. Արևելահայ ազգային խորհրդի ստեղծումը
- զ. Հայկական կորպուսի կազմավորումը
- է. Անդրկովկասյան կոմիսարիատի կազմավորումը
- ը. Անդրկովկասի Ժողովրդավարական Դաշնային Հանրապետության ստեղծումը
- թ. Առանձին հայկական կորպուսի կազմավորումը

- 1) բ 2) գ 3) ե 4) ը

28. Գտնել այն երկու իրադարձությունները, որոնք խախտում են տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.

- 1) Արարատյան գնդի կազմավորումը
- 2) Անդրկովկասյան հատուկ կոմիտեի կազմավորումը
- 3) Արևմտահայերի ազգային խորհրդի ստեղծումը
- 4) Ժամանակավոր կառավարության ձևավորումը
- 5) Արևելահայ ազգային խորհրդի ստեղծումը
- 6) Առանձին հայկական կորպուսի կազմավորումը
- 7) Անդրկովկասյան կոմիսարիատի կազմավորումը
- 8) Հայկական կորպուսի կազմավորումը
- 9) Անդրկովկասի Ժողովրդավարական Դաշնային Հանրապետության ստեղծումը

29. Գտնել այն երկու իրադարձությունները, որոնք խախտում են տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.

- 1) Զեյթունի ապստամբությունը Նազարեթ Չավուշի ղեկավարությամբ
- 2) հայ-թաթարական ընդհարումների ավարտը
- 3) Դիլմանի ճակատամարտը
- 4) Վանի հերոսամարտը Մկրտիչ Ավետիսյանի ղեկավարությամբ
- 5) Շապին-Գարահիսարի ինքնապաշտպանության սկիզբը

- 6) Երզնկայում զինադադարի ստորագրումը
- 7) Մուսա լեռան հերոսամարտը
- 8) Ուրֆայի հերոսամարտը
- 9) ԱԺԴՀ-ի ստեղծումը

30. Գտնել այն երկու իրադարձությունները, որոնք խախտում են տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.

- 1) Սարիղամիշի ճակատամարտի ավարտը
- 2) Ռուսաստանում ապրող հայերի պատգամավորական Կենտրոնական ժողովը էջմիածնում
- 3) հայերի կոտորածն Ադանայում
- 4) Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ կատարելու վերաբերյալ ռուս-թուրքական համաձայնագրի ստորագրումը
- 5) ԱՀԿ-ի ստեղծումը
- 6) Շատախի կենտրոն Թաղի ինքնապաշտպանության սկիզբը
- 7) Վանի ինքնապաշտպանության սկիզբը
- 8) Արևելյան լեգեոնի ստեղծումը

31. 1918 թ. տեղի ունեցած իրադարձություններից որոնք են խախտում տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.

- 1) Սարիղամիշի գրավումը թուրքական զորքի կողմից
- 2) Շիրակի գոյամարտի սկիզբը
- 3) Կարսի հանձնումը թուրքերին
- 4) Ներքին Թալինի բերդի գրավումը հայ կամավորների կողմից
- 5) Ալեքսանդրապոլի գրավումը թուրքական զորքի կողմից
- 6) Բաշ Ապարանի ճակատամարտի ավարտը
- 7) Սարդարապատի գրավումը թուրքական զորքի կողմից
- 8) Սարդարապատի կայարանի հետգրավումը հայկական զորքի կողմից
- 9) Ղարաքիլիսայի ճակատի կազմակերպումը

32. Տրված իրադարձություններից որոնք են տեղի ունեցել վերջինը.

- ա. Թուրք-անդրկովկասյան պատերազմի սկիզբը
- բ. Բոլշևիկյան հեղաշրջումը Ռուսաստանում
- գ. Բաշ Ապարանի ճակատամարտի հաղթական ավարտը
- դ. Երզնկայի զինադադարի կնքումը
- ե. Շիրակի գոյամարտի սկիզբը
- զ. Ս. Շահումյանի նշանակվելը Կովկասի արտակարգ կոմիսար
- է. Առանձին հայկական կորպուսի ստեղծումը
- ը. Բրեստ-Լիտովսկի հաշտության կնքումը
- թ. Անդրկովկասյան կոմիսարիատի ստեղծումը
- ժ. Անդրկովկասյան հատուկ կոմիտեի ստեղծումը

- 1) թ
- 2) ը
- 3) գ
- 4) է

33. Տրված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել երկրորդը.

- ա. Բեռլինի վեհաժողովը
- բ. Արևելյան պատերազմի սկիզբը
- գ. Գում Գափուի ցույցը
- դ. Ազգային կանոնադրության հաստատումը Կ. Պոլսի Ազգային ընդհանուր ժողովի կողմից
- ե. Ս. Կուկունյանի արշավանքը
- զ. Չեյթունի ապստամբությունը Մկրտիչ Յաղուբյանի ղեկավարությամբ
- է. Փարիզի հաշտության պայմանագրի կնքումը
- ը. XIX դ. երկրորդ կեսի ռուս-թուրքական երկրորդ պատերազմի սկիզբը
- թ. Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի կողմից Բարենորոգումների մայիսյան ծրագրի հանձնումը սուլթանին
- ժ. Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի կնքումը

- 1) բ 2) է 3) ը 4) թ

34. XX դ. սկզբների իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել վերջինը.

- ա. Վանի ինքնապաշտպանության սկիզբը
- բ. Շապին-Գարահիսարի ինքնապաշտպանության սկիզբը
- գ. Դիլմանի ճակատամարտը
- դ. Շատախի կենտրոն Թաղի ինքնապաշտպանության սկիզբը
- ե. Սարիղամիշի ճակատամարտի ավարտը
- զ. Հնչակյան կուսակցության 20 գործիչներին՝ Փարամազի գլխավորությամբ, կախաղան բարձրացնելը
- է. Ուրֆայի հերոսամարտի ավարտը
- ը. Մուսա լեռան հերոսամարտը
- թ. Մուշի ինքնապաշտպանության սկիզբը
- ժ. Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ կատարելու վերաբերյալ ռուս-թուրքական համաձայնագրի ստորագրումը

- 1) բ 2) թ 3) ը 4) է

35. Առաջին աշխարհամարտի տարիներին տեղի ունեցած իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել վեցերորդը.

- ա. Արևմտահայերի առաջին համագումարը
- բ. Արևելյան լեգեոնի ստեղծումը
- գ. ԱՀԿ-ի ստեղծումը
- դ. Սարդարապատի հերոսամարտի սկիզբը
- ե. Երզնկայում զինադադարի ստորագրումը
- զ. ԱԺԴՀ-ի ստեղծումը
- է. Ուրֆայի հերոսամարտը

- ը. Էրզրումի գրավումը
- թ. Սայքս–Պիկոյի համաձայնագրի կնքումը
- ժ. Բրեստ–Լիտովսկի հաշտության պայմանագրի ստորագրումը

- 1) բ 2) թ 3) ա 4) ժ

36. Առաջին աշխարհամարտի տարիներին տեղի ունեցած իրադարձություններից որոնք են խախտում տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.

- 1) Ուրֆայի հերոսամարտը
- 2) ԱՀԿ–ի ստեղծումը
- 3) Էրզրումի գրավումը
- 4) Սայքս–Պիկոյի համաձայնագրի կնքումը
- 5) Արևելյան լեգեոնի ստեղծումը
- 6) ԱժԴՀ–ի ստեղծումը
- 7) Արևմտահայերի առաջին համագումարը
- 8) Երզնկայում զինադադարի ստորագրումը
- 9) Բրեստ–Լիտովսկի հաշտության պայմանագրի ստորագրումը

37. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. Սարիղամիշի ճակատամարտի ավարտը
- բ. Խանասորի արշավանքը
- գ. Արևմտահայերի առաջին համագումարը
- դ. Արևելյան լեգեոնի ստեղծումը
- ե. հայերի կոտորածն Ադանայում
- զ. Շատախի կենտրոն Թաղի ինքնապաշտպանության սկիզբը
- է. Ռուսաստանում ապրող հայերի պատգամավորական Կենտրոնական ժողովը Էջմիածնում
- ը. Վանի ինքնապաշտպանության սկիզբը Ա. Եկարյանի գլխավորությամբ
- թ. ԱՀԿ–ի ստեղծումը
- ժ. Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ կատարելու վերաբերյալ ռուս–թուրքական համաձայնագրի ստորագրումը

- 1) բ, է, ա, ե, ը, գ, դ, թ, զ, ժ 3) բ, ե, է, ա, գ, դ, ժ, ը, գ, թ
- 2) բ, գ, ը, ա, ե, ժ, է, գ, դ, թ 4) բ, է, ե, ժ, ա, գ, ը, դ, թ, գ

38. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. Սարդարապատի հերոսամարտի սկիզբը
- բ. Վանի հերոսամարտը Մկրտիչ Ավետիսյանի ղեկավարությամբ
- գ. Երզնկայում զինադադարի ստորագրումը
- դ. Դիլմանի ճակատամարտը
- ե. հայ–թաթարական ընդհարումների ավարտը

- գ. Զեյթունի ապստամբությունը Նազարեթ Չավուշի ղեկավարությամբ
- է. Մուսա լեռան հերոսամարտը
- ը. ԱԺԴՀ-ի ստեղծումը
- թ. Ուրֆայի հերոսամարտը Մ. Յոթնեղբայրյանի գլխավորությամբ
- ժ. Շապին-Գարահիսարի ինքնապաշտպանության սկիզբը

- 1) գ, բ, ե, դ, ժ, է, թ, գ, ը, ա
- 2) գ, է, թ, ը, ա, բ, ժ, ե, գ, դ
- 3) է, բ, ե, ժ, ա, գ, ը, դ, թ, գ
- 4) ժ, ե, ա, է, գ, դ, բ, ը, գ, թ

39. Տրված իրադարձություններից որն է տեղի ունեցել վեցերորդը.

- ա. Սարիղամիշի ճակատամարտի ավարտը
- բ. Խանասորի արշավանքը
- գ. Արևմտահայերի առաջին համագումարը
- դ. Արևելյան լեգեոնի ստեղծումը
- ե. հայերի կոտորածն Ադանայում
- գ. Շատախի կենտրոն Թաղի ինքնապաշտպանության սկիզբը
- է. Ռուսաստանում ապրող հայերի պատգամավորական Կենտրոնական ժողովը էջմիածնում
- ը. Դիլմանի ճակատամարտը
- թ. ԱՀԿ-ի ստեղծումը
- ժ. Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ կատարելու վերաբերյալ ռուս-թուրքական համաձայնագրի ստորագրումը

- 1) է
- 2) գ
- 3) ե
- 4) գ

40. Տրված իրադարձություններից որն է տեղի ունեցել առաջինը.

- ա. Սարդարապատի հերոսամարտի սկիզբը
- բ. Վանի հերոսամարտը Մկրտիչ Ավետիսյանի ղեկավարությամբ
- գ. Երզնկայում զինադադարի ստորագրումը
- դ. Դիլմանի ճակատամարտը
- ե. հայ-թաթարական ընդհարումների ավարտը
- գ. Զեյթունի ապստամբությունը Նազարեթ Չավուշի ղեկավարությամբ
- է. Մուսա լեռան հերոսամարտը
- ը. ԱԺԴՀ-ի ստեղծումը
- թ. Ս. Առաքելոց վանքի կռիվը
- ժ. Խանասորի արշավանքը

- 1) ժ
- 2) գ
- 3) գ
- 4) ա

41. Տրված իրադարձություններից որն է տեղի ունեցել երրորդը.

- ա. Աղաբաբյան դպրոցի հիմնադրումը
- բ. Խորենացու «Հայոց պատմության» լույսընծայումը ռուսերենով Պետերբուրգում
- գ. «Գիտական շարժում» պարբերականի հրատարակումը

45. Ո՞ր իրադարձություններն են խախտում ստորև բերված դեպքերի ժամանակագրական հաջորդականությունը.

- 1) Թուրքական պետության և Վենետիկի հանրապետության միջև պատերազմի սկիզբը
- 2) Անգեղակոթի գաղտնի խորհրդակցությունը
- 3) Հովհաննես Թութունջի վարդապետի ճանապարհորդությունը Եթովպիա
- 4) Հովհաննես Թութունջի վարդապետի բանակացությունները Փարիզում
- 5) Իսրայել Օրու բանակցությունները Ֆլորենցիայում
- 6) Իսրայել Օրու հաստատվելը Պֆալցում
- 7) Օրու ծրագրի ներկայացումը Պետրոս I-ին

46. Պատմական գործիչների անունները դասավորել ըստ գործունեության ժամանակագրական հաջորդականության.

- | | |
|------------------|----------------------|
| ա. Հ. Լազարև | գ. Իվան Կարապետ |
| բ. Վ. Բեհբույաթլ | դ. մահտեսի Շահմուրատ |

- | | |
|---------------|---------------|
| 1) դ, բ, գ, ա | 3) դ, գ, բ, ա |
| 2) գ, դ, ա, բ | 4) ա, գ, դ, բ |

47. XVII դ. երկրորդ կեսի և XVIII դ. սկզբների իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. Անգեղակոթի գաղտնի խորհրդակցությունը
- բ. Մեղրիի ճակատամարտը
- գ. Հալիձորի ճակատամարտը
- դ. թուրքական բանակի ներխուժումն Արարատյան դաշտ
- ե. Հակոբ Զուղայեցու գլխավորությամբ գաղտնի ժողովի գումարումն Էջմիածնում
- զ. Պետրոս I-ի Կասպիական արշավանքը
- է. Մխիթար սպարապետի մահը
- ը. Ավան հարյուրապետի գլխավորությամբ պատվիրակության մեկնումը ռուսական բանակ՝ օգնական զորք ստանալու նպատակով
- թ. Երևանի պաշտպանությունը
- ժ. թուրքական զորքերի ներխուժումը Վարանդա գավառ

- | | |
|---------------------------------|---------------------------------|
| 1) ա, գ, դ, բ, գ, ե, ը, թ, է, ժ | 3) ե, ա, գ, դ, թ, ժ, գ, բ, ը, է |
| 2) ա, բ, գ, դ, գ, ը, թ, ժ, ե, է | 4) ե, ա, գ, ժ, թ, դ, գ, բ, է, ը |

48. Գտնել այն երկու իրադարձությունները, որոնք խախտում են ստորև բերված դեպքերի շարքի ճիշտ հաջորդականությունը.

- 1) Հակոբ Զուղայեցու նախաձեռնությամբ Էջմիածնի ժողովի հրավիրումը
- 2) Սյունիքի ազատագրական ուժերի կողմից Որոտանի բերդի գրավումը
- 3) Հայաստանի ազատագրության՝ Մովսես Սարաֆյանի ծրագրի ներկայացնելը Ռուսաստանի արտաքին գործերի կոլեգիային

- 4) Սյունիքի մելիքների Անգեղակոթի գաղտնի ժողովը
- 5) Շահամիր Շահամիրյանի կողմից Մադրասում հայկական տպարանի ստեղծումը
- 6) ռուսական բանակի առաջին արշավանքը դեպի Երևան
- 7) Գյուլիստանի պայմանագրի կնքումը
- 8) ռուսական բանակի կողմից Երևանի բերդի գրավումը
- 9) հայ-ռուսական դաշնագրերի երկու նախագծերի ներկայացնելը ռուսական արքունիքին

49. Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. Կարբի գյուղի 40–օրյա դիմադրությունը թուրքական զորքին
- բ. Պետրոս I–ի Կասպիական արշավանքը
- գ. Թիֆլիսի գրավումը օսմանյան զորքերի կողմից
- դ. Սպահանի գրավումը աֆղանների կողմից

- 1) ա, դ, գ, բ 2) դ, բ, գ, ա 3) դ, բ, ա, գ 4) ա, գ, բ, դ

50. Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. Նադիրի՝ Պարսկաստանի շահ հռչակվելը
- բ. Նադիրի կողմից Պարսկաստան ներխուժած աֆղանական զավթիչներին պարտության մատնելը
- գ. Խամսայի մելիքությունների ձևավորումը
- դ. Էրզրումում Պարսկաստանի և Թուրքիայի միջև պայմանագրի կնքումը

- 1) բ, դ, ա, գ 2) բ, դ, գ, ա 3) գ, բ, ա, դ 4) ա, բ, դ, գ

51. Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. անգլիական Արևելահնդկական ընկերության և հայ վաճառականների միջև պայմանագրի կնքումը
- բ. Հովսեփ Էմինի վերադարձը Հնդկաստան
- գ. «Որոգայթ փառաց» աշխատության հրատարակումը
- դ. Մովսես Սարաֆյանի՝ Հայաստանի ազատագրության ծրագրի ներկայացնելը Ռուսաստանի արտաքին գործերի կոլեգիային

- 1) դ, ա, գ, բ 2) ա, գ, բ, դ 3) ա, բ, գ, դ 4) ա, դ, բ, գ

52. 1720–ական թթ. պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. թուրքական զորքերի ներխուժումը Սյունիք
- բ. թուրքական երեք զորամասերի ներխուժումն Արցախ

58. Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. Կ. Պոլսի Ազգային ժողովի ստեղծումը
- բ. թանգիմաթի հրապարակումը
- գ. Վ. Բեհբուզովի նշանակումը Հայկական մարզի վարչության պետ
- դ. Եկեղեցական կանոնադրության հրապարակումը

- 1) գ, դ, բ, ա 2) ա, գ, դ, բ 3) ա, դ, գ, բ 4) գ, դ, ա, բ

59. Պատմական գործիչներին դասավորել ըստ գործունեության ժամանակագրական հաջորդականության.

- ա. Գրիգոր Խոջաջանյան
- բ. Իսրայել Օրի
- գ. Իվան Կարապետ
- դ. Ստեփան Ասլանյան
- ե. Ներսես Աշտարակեցի

- 1) բ, գ, ա, ե, դ 2) բ, ա, ե, գ, դ 3) բ, դ, ա, գ, ե 4) գ, բ, ե, դ, ա

60. Հոգևոր գործիչներին դասավորել ըստ գործունեության ժամանակագրական հաջորդականության.

- ա. Ներսես Աշտարակեցի
- բ. Եսայի Հասան-Ջալալյան
- գ. Ներսես Վարժապետյան
- դ. Հակոբ Զուղայեցի
- ե. Խաչատուր Գաղատացի

- 1) ե, դ, բ, ա, գ 2) ե, դ, բ, գ, ա 3) դ, բ, ե, ա, գ 4) բ, գ, ա, դ, ե

61. Պատմական գործիչներին դասավորել ըստ գործունեության ժամանակագրական հաջորդականության.

- ա. Մինաս Տիգրանյան
- բ. Ալեքսանդր Խուրաբաշյան
- գ. Գրիգոր Օտյան
- դ. Մանուկ Միրզայան
- ե. Մովսես Բաղրամյան

- 1) ա, դ, ե, բ, գ 2) ա, ե, դ, բ, գ 3) ա, բ, ե, գ, 4) դ, ա, բ, ե, գ

62. Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. Իվան Կարապետի ժամանումը Արցախ
- բ. Հովսեփ Էմինի վերադարձը Հնդկաստան
- գ. Մելիք-Շահնազարյանների տոհմի իրավունքների վերահաստատումը և ամրապնդումը Սևանի հարավարևելյան ափերին
- դ. Հովհաննես Թութունջի վարդապետի այցելությունը Եթովպիա
- ե. Խորեն Նարբեյի այցելությունը Ս. Պետերբուրգ

- 1) դ, գ, ա, բ, ե 2) գ, դ, ա, ե, բ 3) ա, դ, բ, գ, ե 4) դ, ա, գ, բ, ե

63. Բեռլինի կոնգրեսի նախօրյակին տեղի ունեցած իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. Լոնդոնում ռուս-անգլիական համաձայնագրի կնքումը
- բ. անգլո-թուրքական գաղտնի պայմանագրի կնքումը
- գ. հայկական պատվիրակության այցելությունը Իտալիա և Ֆրանսիա
- դ. հայկական պատվիրակության հանդիպումները Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Սոլսբերիի հետ

- 1) գ, դ, ա, բ 2) ա, բ, գ, դ 3) դ, գ, ա, բ 4) գ, ա, դ, բ

64. Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. Մադրասի տպարանի հիմնումը
- բ. Մովսես Սարաֆյանի ծրագրի ներկայացնելը Ռուսաստանի արտաքին գործերի կոլեգիային
- գ. Հալիձորի ճակատամարտը
- դ. Եղվարդի ճակատամարտը
- ե. հայ և վրացական զորքերի հանդիպումը Չոլակ վայրում

- 1) բ, դ, ա, գ, ե 2) ե, գ, դ, բ, ա 3) ե, գ, դ, ա, բ 4) ե, դ, գ, ա, բ

65. Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. Էրզրումի պայմանագրի կնքումը
- բ. Գանձակի մահմեդականների և Արցախի ազատագրական ուժերի միջև պայմանագրի կնքումը
- գ. Ավան հարյուրապետի մեկնումը ռուսական բանակ
- դ. Դավիթ բեկի հաղթական մարտը ջևանշիր ցեղերի դեմ
- ե. Եղվարդի ճակատամարտը

- 1) դ, բ, գ, ե, ա 2) բ, դ, ե, գ, ա 3) դ, բ, ե, ա, գ 4) գ, բ, դ, ա, ե

66. 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. Շամքորի ճակատամարտը
- բ. Գանձակի ճակատամարտը
- գ. Թավրիզի գրավումը ռուսական զորքերի կողմից
- դ. Մարաղայի գրավումը ռուսական զորքերի կողմից
- ե. Շուշիի պաշտպանության սկիզբը
- զ. Սարդարապատի գրավումը

- 1) ե, ա, բ, գ, դ 3) ա, բ, ե, գ, դ, գ
2) բ, ա, ե, գ, դ, գ 4) ե, ա, բ, գ, գ, դ

67. XIX դ. ռուս-պարսկական պատերազմների դեպքերի տրված շարքը դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. Գրիգոր վարդապետ Մանուչարյանի 500-հոգանոց հեծյալ ջոկատի ստեղծումը
- բ. Հակոբ Հարությունյանի հերոսական սխրանքը
- գ. Մարտիրոս Վեքիլյանի աշխարհագրայինների մարտական գործողությունների սկիզբը
- դ. Սարդարապատի գրավումը
- ե. Աբասաբադի գրավումը
- զ. հայկական կամավորական գումարտակների ստեղծումը Թիֆլիսում

1) ա, գ, գ, ե, բ, դ

3) ե, բ, դ, ա, գ, գ

2) դ, ա, գ, ե, բ, գ

4) ա, գ, դ, գ, ե, բ

68. Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. Կարսի մարզի ձևավորումը
- բ. Հայկական մարզի ձևավորումը
- գ. Խամսայի մելիքությունների ձևավորումը
- դ. Կ. Պոլսի Ազգային ժողովի ստեղծումը
- ե. Երևանի նահանգի ստեղծումը
- զ. հայկական իշխանության ստեղծումը Սյունիքում

1) գ, գ, բ, դ, ե, ա

3) գ, գ, ե, դ, բ, ա

2) գ, գ, դ, բ, ե, ա

4) գ, գ, ա, ե, բ, դ

69. 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. Սոֆիայի գրավումը ռուսական զորքերի կողմից
- բ. Բայազետի գրավումը
- գ. Էրզրումի գրավումը
- դ. Դիադինի գրավումը
- ե. Տեր-Ղուկասովի նշանավոր նահանջը
- զ. Սան Ստեֆանոյի պայմանագրի կնքումը
- է. Բեռլինի պայմանագրի կնքումը
- ը. Բայազետի հերոսական պաշտպանության ավարտը
- թ. Կարսի գրավումը
- ժ. զինադադարի պայմանագրի կնքումը

1) բ, դ, ե, ը, թ, ա, ժ, գ, գ, է

3) բ, դ, ը, ե, թ, ա, գ, ժ, գ, է

2) դ, բ, ը, ե, ա, թ, գ, ժ, գ, է

4) դ, բ, ե, ը, ա, թ, գ, ժ, է, գ

70. Պատմական գործիչների անունները դասավորել գործունեության ժամանակագրական հաջորդականությամբ.

- | | |
|------------------------|-------------------------|
| ա. Իսրայել Օրի | զ. մելիք Եգան |
| բ. Հովհաննես Թութունջի | է. Եսայի Հասան-Ջալալյան |
| գ. Բեհբուժ Շելկովնիկով | ը. Խաչատուր Գաղատացի |
| դ. Խաչատուր Լազարյան | թ. Թ. Նազարբեկյան |
| ե. Հովհաննես Լազարյան | ժ. Հակոբ Աթաբեկյան |

- | | |
|---------------------------------|---------------------------------|
| 1) ը, բ, ա, է, գ, ե, ժ, դ, գ, թ | 3) բ, ը, ա, է, գ, ե, գ, թ, ժ, դ |
| 2) ը, բ, ա, ժ, է, գ, գ, ե, դ, թ | 4) բ, ը, ա, է, գ, ե, ժ, դ, գ, թ |

71. Պատմական գործիչների անունները դասավորել գործունեության ժամանակագրական հաջորդականությամբ.

- | | |
|-------------------------|--------------------|
| ա. Ստեփան փաշա Ասլանյան | դ. Հովհան Վիլիելմ |
| բ. Կարապետ Արղության | ե. Հակոբ Ջուղայեցի |
| գ. Հովսեփ Արղության | զ. մելիք Մանուչար |

- | | |
|---------------------|---------------------|
| 1) ե, դ, գ, ա, բ, գ | 3) ե, դ, գ, գ, բ, ա |
| 2) գ, ե, դ, բ, գ, ա | 4) ե, դ, գ, բ, գ, ա |

72. Գտնել այն իրադարձությունը, որը խախտում է ստորև տրված դեպքերի ժամանակագրական հաջորդականությունը.

- 1) Չավնդուրի ճակատամարտը
- 2) Հալիձորի պաշտպանությունը
- 3) Եղվարդի ճակատամարտը
- 4) Նադիրի՝ Պարսկաստանի շահ հռչակվելը
- 5) Կարբի գյուղի 40-օրյա դիմադրությունը
- 6) Գեորգիևսկի դաշնագրի կնքումը

73. Գտնել այն երկու իրադարձությունները, որոնք խախտում են ստորև տրված շարքի դեպքերի ժամանակագրական հաջորդականությունը.

- 1) Մովսես Սարաֆյանի ծրագրի ներկայացնելը Ռուսաստանի արտաքին գործերի կոլեգիային
- 2) Մադրասի տպարանի հիմնադրումը
- 3) Ասլանդուզի ճակատամարտը
- 4) Չավնդուրի ճակատամարտը
- 5) Հայկական մարզի վերացումը
- 6) Փոքր Ղարաքիլիսայի ճակատամարտը՝ Յուսուֆ փաշայի 20 000-անոց զորքի պարտությունը
- 7) Կովկասի փոխարքայության ստեղծումը

74. Գտնել այն իրադարձությունը, որը խախտում է ստորև տրված դեպքերի ժամանակագրական հաջորդականությունը.

- 1) Հայկական մարզի վարչության պետի պաշտոնում Վ. Բեիբուբովի նշանակումը
- 2) Վրացա-իմերեթական նահանգի և Կասպիական մարզի ձևավորումը
- 3) Եկեղեցական կանոնադրության հրապարակումը
- 4) թանգիմաթի հրապարակումը
- 5) Կ. Պոլսի Ազգային ժողովի ստեղծումը
- 6) Երևանի նահանգի ձևավորումը

75. Գտնել այն երկու իրադարձությունները, որոնք խախտում են ստորև տրված շարքի դեպքերի ժամանակագրական հաջորդականությունը.

- 1) Բաշկադըկլարի ճակատամարտը
- 2) Քյուրուկդարայի ճակատամարտը
- 3) Աբդուլ Համիդ II-ի գահ բարձրանալը
- 4) Օսմանյան կայսրությունում գտնվող Երուսաղեմի սուրբ վայրերին տիրելու համար տարբեր եկեղեցիների միջև վեճերի սրումը
- 5) Կ. Պոլսի Ազգային ժողովի ստեղծումը
- 6) Սան Ստեֆանոյի պայմանագրի կնքումը
- 7) «Զինակիր» կազմակերպության ձևավորումը

76. Պայմանագրերը դասավորել ըստ կնքման ժամանակագրական հաջորդականության.

- | | |
|------------------|-----------------|
| ա. Գեորգիևսկի | դ. Բուխարեստի |
| բ. Սան Ստեֆանոյի | ե. Գյուլիստանի |
| գ. Թուրքմենչայի | զ. Ադրիանապոլսի |

- | | |
|---------------------|---------------------|
| 1) ա, դ, ե, գ, գ, բ | 3) ա, ե, դ, գ, գ, բ |
| 2) դ, ե, գ, գ, բ, ա | 4) ա, ե, գ, գ, բ, դ |

77. Ստորև թվարկված քաղաքական խմբակներն ու կազմակերպությունները դասավորել ըստ ստեղծման ժամանակագրական հաջորդականության.

- | | |
|-------------------------------|-------------------------------|
| ա. «Հայրենասերների միություն» | դ. «Պաշտպան հայրենյաց» |
| բ. «Սև խաչ» | ե. «Հայրենիքի սիրո գրասենյակ» |
| գ. «Բարենպատակ ընկերություն» | |

- | | |
|------------------|------------------|
| 1) գ, ե, բ, դ, ա | 3) ե, գ, ա, դ, բ |
| 2) գ, ե, ա, բ, դ | 4) ա, դ, բ, ե, գ |

78. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- | |
|--|
| ա. «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության անդամների դատավարությունը |
| բ. «Հայրենասերների միություն» կազմակերպության հիմնադրումը |
| գ. «Հայրենիքի սիրո գրասենյակ» խմբակի հիմնադրումը |

- դ. Արմենական կուսակցության հիմնադրումը
- ե. Վերակազմյալ հնչակյանների հանդես գալը
- զ. Համիդիե գնդերի ստեղծումը
- է. Ազգային սահմանադրության վավերացումը սուլթանական իշխանության կողմից
- ը. Ազիզ փաշայի առաջին հարձակումը Ջեյթունի վրա
- թ. «Հայաստան» անվան գործածության արգելումը սուլթանի կողմից
- ժ. «Բարենպաստակ ընկերություն» խմբակի հիմնադրումը

- 1) ը, է, ժ, գ, թ, ա, բ, դ, զ, Ե
- 2) է, ը, ժ, գ, ա, թ, բ, դ, Ե, զ
- 3) ը, է, ժ, գ, ա, թ, բ, դ, զ, Ե
- 4) ժ, է, ը, գ, թ, բ, ա, դ, Ե, զ

79. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. թուրքական զորքերի դեմ Պապիկ իշխանի գլխավորությամբ զեյթունցիների մղած կռիվների ավարտը
- բ. Հնչակյան կուսակցության պառակտումը
- գ. «Ազդարար» պարբերականի տպագրումը
- դ. ՀՅԴ հռչակագրի հրատարակումը
- ե. «Հայաստան» անվան գործածության արգելումը սուլթանի կողմից
- զ. ՀՅԴ կուսակցության առաջին ծրագրի հրատարակումը «Դրոշակում»
- է. Հնչակյան կուսակցության ծրագրի հրատարակումը
- ը. Հնչակյան կուսակցության պաշտոնաթերթի հիմնադրումը
- թ. «Խարիսխ» զինագործարանի հիմնադրումը
- ժ. ՀՅԴ կուսակցության առաջին ընդհանուր ժողովի հրավիրումը

- 1) գ, ա, Ե, ը, է, դ, թ, ժ, գ, բ
- 2) գ, Ե, ա, ը, է, թ, ժ, դ, գ, բ
- 3) թ, գ, ա, ը, Ե, է, դ, ժ, բ, գ
- 4) գ, ա, ը, Ե, է, դ, ժ, գ, թ, բ

80. Ո՞ր իրադարձությունն է տեղի ունեցել վերջինը.

- 1) Հնչակյան կուսակցության ծրագրի հրատարակումը
- 2) Հնչակյան կուսակցության պաշտոնաթերթի հիմնադրումը
- 3) ՀՅԴ կուսակցության առաջին ընդհանուր ժողովի հրավիրումը
- 4) ՀՅԴ կուսակցության հռչակագրի հրատարակումը

81. 1828–1829 թթ. ռուս–թուրքական պատերազմի իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. Ախալքալաքի բերդի գրավումը
- բ. Կարսի գրավումը
- գ. Բայազետի գրավումը
- դ. Ախալցխայի գրավումը

- 1) բ, գ, ա, դ
- 2) բ, ա, գ, դ
- 3) բ, ա, դ, գ
- 4) ա, դ, գ, բ

82. Դպրոցները դասավորել ըստ իրենց հիմնադրման ժամանակագրական հաջորդականության.

- ա. Աղաբաբյան
բ. Ախալցխայի Կարապետյան
գ. Ներսիսյան
դ. Լազարյան

- 1) ա, բ, գ, դ 2) ա, բ, դ, գ 3) բ, դ, ա, գ 4) ա, դ, գ, բ

83. Առաջին աշխարհամարտի իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. հայ կամավորական ջոկատների ստեղծման սկիզբը
բ. Առաջին աշխարհամարտի սկիզբը
գ. Սայքս-Պիկոյի պայմանագրի կնքումը
դ. ռազմական գաղտնի դաշինքի կնքումը Թուրքիայի և Գերմանիայի միջև
ե. Բաթումի բանակցությունների սկիզբը

- 1) բ, դ, ա, գ, ե 2) բ, ա, դ, գ, ե 3) ա, բ, դ, գ, ե 4) բ, ա, դ, ե, գ

84. Ո՞ր իրադարձությունն է խախտում ստորև տրված դեպքերի ժամանակագրական հաջորդականությունը.

- 1) Շատախի կենտրոն Թադի ինքնապաշտպանության սկիզբը
2) Վանի ինքնապաշտպանական մարտերի սկիզբը
3) Շապին-Գարահիսարի ինքնապաշտպանությունը
4) սուեդիահայերի ինքնապաշտպանության ավարտը
5) ռուսական զորքերի մուտքը Վան
6) Ուրֆայի ինքնապաշտպանությունը

85. Գտնել երկու իրադարձություն, որոնք խախտում են ստորև տրված դեպքերի ժամանակագրական հաջորդականությունը.

- ա. Խանասորի արշավանքը
բ. Բաբշենի կռիվը
գ. Դիլմանի ճակատամարտը
դ. Առաքելոց վանքի կռիվը
ե. հայդուկների դուրսբերումը երկրից
զ. Կուկունյանի արշավանքը

- 1) ա, գ 2) գ, ե 3) գ, զ 4) բ, դ

86. XIX դարի ռուս-պարսկական երկրորդ պատերազմի իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. Թավրիզի գրավումը
բ. Շուշիի պաշարման սկիզբը
գ. Երևանի բերդի գրավումը
դ. Շամքորի ճակատամարտը

- 1) դ, գ, ա, բ 2) բ, դ, գ, ա 3) գ, ա, դ, բ 4) բ, դ, ա, գ

87. Դեպքերը դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. բուլնիկների կազմակերպած հեղաշրջումը Պետրոգրադում
- բ. Անդրկովկասյան սեյմի լուծարումը
- գ. հայկական զորքերի կողմից Սարդարապատի հետգրավումը
- դ. Հայ զինվորական միության ստեղծումը
- ե. Անդրկովկասի կոմիսարիատի ստեղծումը

- 1) ա, ե, դ, գ, բ 2) դ, բ, ա, գ, ե 3) դ, ա, ե, գ, բ 4) բ, դ, ա, ե, գ

88. Գտնել այն իրադարձությունը, որը խախտում է դեպքերի ժամանակագրական հաջորդականությունը.

- ա. Բաբշենի կռիվը
- բ. հայ-թաթարական ընդհարումները
- գ. Օսմանյան կայսրության ընդդիմադիր ուժերի երկրորդ համաժողովը
- դ. Բալկանյան առաջին պատերազմը
- ե. երիտթուրքերի հեղաշրջումը
- զ. 5000 հայերի վերադարձը Տարոն

- 1) ա 2) դ 3) ե 4) գ

89. Իրադարձություններից որոնք են խախտում Առաջին աշխարհամարտի հետ կապված՝ ստորև տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.

- ա. Երզնկայի զինադադարի կնքումը
- բ. Խնուսի գրավումը ռուսների կողմից
- գ. Մուշի գրավումը ռուսների կողմից
- դ. կամավորական առաջին չորս ջոկատների կազմավորումը
- ե. Բիթլիսի գրավումը
- զ. Սայքս-Պիկոյի պայմանագրի կնքումը

- 1) ա, գ 2) ա, դ 3) բ, ե 4) դ, գ

90. 1918 թ. հետ կապված իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. Ներքին Թալինի բերդի գրավումը հայ կամավորների կողմից
- բ. Սարդարապատի կայարանի հետգրավումը հայկական զորքի կողմից
- գ. Բաշ Ապարանի ճակատամարտի ավարտը
- դ. Սարիղամիշի գրավումը թուրքերի կողմից
- ե. Ղարաքիլիսայի գրավումը թուրքերի կողմից
- զ. Կարսի գրավումը թուրքերի կողմից
- է. Սոցյուլուի հաղթական կռիվները թուրքերի դեմ

- 1) բ, դ, գ, ա, ե, գ, է 3) դ, գ, գ, ա, բ, ե, է
2) դ, գ, ա, է, բ, գ, է 4) է, ե, բ, դ, գ, ա, գ

91. Գտնել այն իրադարձությունը, որը խախտում է ստորև տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.

- ա. «Խելքից պատուհաս» պիեսի բեմադրությունը Երևանի բերդում
- բ. «Արշակ Բ» օպերայի ստեղծումը
- գ. Երևանի առաջին գլխավոր հատակագծի կազմումը
- դ. «Անուշ» օպերայի առաջին բեմադրությունը
- ե. Գ. Սինանյանի գլխավորությամբ առաջին կամերային (սենեկային) նվագախմբի ստեղծումը Կ. Պոլսում
- զ. «Գիտական շարժում» առաջին գիտական հայ պարբերականի հրատարակումը

- 1) գ, ե 2) բ, դ 3) գ, դ 4) բ, ե

92. Իրադարձություններից որ երկուսն են խախտում դեպքերի ժամանակագրական հաջորդականությունը.

- ա. Մ. Փորթուգալյանի հաստատվելը Մարսելում
- բ. Առաքելոց վանքի կոիվը
- գ. Գում Գափուի ցույցը
- դ. Խանասորի արշավանքը
- ե. Բաբը Ալիի ցույցը
- զ. Բաբշենի կոիվը

- 1) բ, դ 2) բ, ե 3) գ, ե 4) դ, ե

93. Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. Հայկական մարզի վերացումը
- բ. Սարգիս Կուկունյանի գլխավորած արշավանքը
- գ. Ի. Վորոնցով-Դաշկովի նշանակվելը Կովկասի փոխարքա
- դ. Գում Գափուի ցույցը
- ե. Ի. Գուդովիչի գլխավորած զորքերի արշավանքը Երևանի բերդի ուղղությամբ
- զ. Թորգոմի «Մրրիկ» ձիավոր խմբի սահմանանցումը
- է. «Նոր տեսրակ, որ կոչի յորդորակ» գրքի թարգմանությունը ռուսերեն
- ը. Օշականի ճակատամարտը
- թ. Արմենական կուսակցության հիմնադրումը
- ժ. Կովկասի փոխարքայության ստեղծումը

- 1) ե, է, ա, ժ, ը, թ, բ, դ, գ, զ 3) է, ե, ը, ա, ժ, թ, դ, բ, գ, զ
2) է, ե, ը, ա, ժ, գ, դ, բ, թ, զ 4) է, ե, ա, ը, ժ, թ, բ, դ, գ, զ

94. Դեպքերը դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. զեյթունցիների հաղթական մարտը Ազիզ փաշայի դեմ
- բ. «Բարենպատակ ընկերության» հիմնադրումը
- գ. «Հայրենասերների միություն» կազմակերպության գործունեության դադարեցումը

- դ. «Դրոշակում» ՀՅԴ ծրագրի տպագրումը
- ե. Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության ձերբակալված անդամների դատավարությունը
- զ. Հնչակյան կուսակցության Լոնդոնի առաջին համագումարը
- է. «Հնչակ» թերթում Հնչակյան կուսակցության ծրագրի հրատարակումը
- ը. Ռ. Խանազատի և Գ. Կաֆյանի ջանքերով Կարինի և Տրապիզոնի հնչակյան մասնաճյուղերի ստեղծումը
- թ. ՀՅԴ առաջին ընդհանուր ժողովի հրավիրումը
- ժ. «Խարխախ» գինագործարանի հիմնադրումը Թավրիզում

- 1) բ, ժ, ե, գ, է, ա, ը, թ, դ, զ
- 2) ա, բ, գ, է, ը, թ, դ, զ, ժ, ե
- 3) ա, բ, ե, գ, է, ը, ժ, թ, դ, զ
- 4) ա, բ, գ, ե, ը, ժ, է, թ, դ, զ

95. Դեպքերը դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. Խանասորի արշավանքը
- բ. Մայիսյան բարենորոգումների ծրագրի կազմումը
- գ. Ջեքի փաշայի 12-հազարանոց զորքի հարձակումը Սասունի վրա
- դ. Անդրկովկասյան հատուկ կոմիտեի ձևավորումը
- ե. համիդիե գնդերի ստեղծումը
- զ. «Թուրքահայաստանի մասին» հրովարտակի ընդունումը
- է. անգլիացի պատմաբան լորդ Ջ. Բրայսի փաստաթղթերի և նյութերի ժողովածուի հրատարակումը
- ը. Արարատյան գնդի ձևավորումը
- թ. Դրոյի գլխավորած հայկական երկրորդ կամավորական ջոկատի մուտքը Շատախի կենտրոն Թաղ
- ժ. Ռուսաստանում ապրող հայերի պատգամավորական Կենտրոնական ժողովի հրավիրումը

- 1) գ, ե, բ, ա, ը, թ, է, ժ, դ, զ
- 2) ե, ժ, բ, ա, գ, ը, է, թ, դ, զ
- 3) ե, գ, բ, ժ, ա, ը, թ, է, դ, զ
- 4) ե, գ, բ, ա, ժ, ը, թ, է, դ, զ

96. Պատմական իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել վերջինը.

- ա. Հայկական մարզի վերացումը
- բ. թանգիմաթի հրապարակումը
- գ. Արևելյան պատերազմի սկիզբը
- դ. Բեռլինի վեհաժողովի հրավիրումը
- ե. «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության հիմնադրումը
- զ. «Սև խաչ» գաղտնի կազմակերպության ձևավորումը
- է. «Հայրենիքի սիրո գրասենյակ» խմբի ստեղծումը
- ը. Երևանի նահանգի ստեղծումը
- թ. Քյուրուկդարայի ճակատամարտը

- 1) գ
- 2) ե
- 3) թ
- 4) դ

97. Գտնել այն իրադարձությունը, որը խախտում է ստորև բերված դեպքերի ճշգրիտ հաջորդականությունը.

- 1) «Բարենպատակ ընկերության» ստեղծումը
- 2) «Հայրենասերների միության» ստեղծումը
- 3) Արևմտահայերի «Ազգային սահմանադրության» ընդունումը
- 4) Արմենական կուսակցության ստեղծումը
- 5) Հայ-թաթարական ընդհարումների սկիզբը

98. Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. թուրքական բանակի դեմ Երևանի ինքնապաշտպանությունը
- բ. թուրքական բանակի պարտությունը Հալիձորի մոտ
- գ. ռուսական բանակի կողմից Երևանի գրավումը
- դ. Ասլանդուզի ճակատամարտը
- ե. Աբաս-Միրզայի բանակի կողմից Շուշիի պաշարումը
- զ. ջևանշիր ցեղի դեմ Դավիթ բեկի տարած առաջին հաղթանակը
- է. Շամքորի ճակատամարտը
- ը. Օշականի ճակատամարտը
- թ. ռուսական բանակի կողմից Երևանի երկրորդ պաշարումը
- ժ. Թուրքմենչայի հաշտության պայմանագրի կնքումը

- | | |
|---------------------------------|---------------------------------|
| 1) ա, ե, գ, բ, գ, ժ, դ, թ, է, ը | 3) գ, ա, բ, թ, դ, ե, է, ը, գ, ժ |
| 2) գ, ա, դ, ը, բ, գ, ե, ը, ժ, է | 4) գ, ա, բ, դ, ը, է, գ, ե, ը, ժ |

99. Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. Ոսխայի ճակատամարտը
- բ. «Հայասեր-ազգասեր»-ի գործունեության բացահայտումը
- գ. Կասրե-Շիրինի հաշտության պայմանագրի կնքումը
- դ. Մադրասի խմբակի ստեղծումը
- ե. պարսից թագաժառանգ Աբաս-Միրզայի կրած պարտությունները Ղարաբաղում, Լենքորանում, Ասլանդուզում և Մեղրիում
- զ. Գրիգոր Մանուչարյանի հեծյալ ջոկատի մասնակցությունը Գանձակի գրավմանը
- է. Մելիք-Մարտիրոսյանի կողմից կամավորական ջոկատի ստեղծումը
- ը. Ադրիանապոլսի հաշտության պայմանագրի կնքումը
- թ. հայկական իշխանության ստեղծումը Սյունքիում
- ժ. «Սև խաչ»-ի ձևավորումը

- | | |
|---------------------------------|---------------------------------|
| 1) ա, դ, թ, գ, գ, ե, է, ը, ժ, բ | 3) ա, գ, թ, գ, է, դ, ե, ը, բ, ժ |
| 2) ա, գ, թ, գ, ե, է, դ, ը, բ, ժ | 4) ա, գ, թ, դ, գ, ե, է, ը, ժ, բ |

100. Պատմական գործիչների անունները դասավորել գործունեության ժամանակագրական հաջորդականությամբ.

- | | |
|-------------------|-------------------------|
| ա. Աբգար Թոխաթեցի | ե. Խաչատուր Գաղատացի |
| բ. Մուսվիս | զ. Ներսես Ա Պարթև |
| գ. Աշոտ Մսակեր | է. Տիրան |
| դ. Պողոս Սսեցի | ը. Եսայի Հասան-Ջալալյան |

- | | |
|---------------------------|---------------------------|
| 1) գ, է, բ, ը, դ, գ, ա, ե | 3) է, գ, բ, գ, դ, ա, ե, ը |
| 2) գ, է, բ, գ, դ, ա, ը, ե | 4) է, գ, բ, գ, ա, ը, դ, ե |

- դ. Հակաթուրքական պայքարի մեջ պետք է ընդգրկվեին Արցախի մելիքները՝ նրանց տրամադրելով զենք և ռազմական հանդերձանք:
- ե. Ազատագրված Հայաստանը պետք է հոչակվեր հանրապետություն՝ պառլամենտական կառուցվածքով:
- զ. Թուրքիայի դեմ արշավանքը պետք է կատարվեր Երևան-Ախալցխա-Կարս և Թիֆլիս-Բայազետ-Վան ուղղություններով:
- է. Հայաստանի մայրաքաղաք պետք է հոչակվեր Վաղարշապատը կամ Անին:

- 1) ա, գ, դ 2) ա, բ, է 3) բ, դ, ե 4) ա, գ, գ

40. Բերված փաստարկներից որո՞նք են տեղ գտել Հայաստանի ազատագրության Հյուսիսային ծրագրում.

- ա. Հայաստանի կառավարությունը պետք է ղեկավարեր ազգությամբ հայ նախարարը:
- բ. Արցախի մելիքներից մեկը պետք է դառնար Հայաստանի թագավոր:
- գ. Հայոց թագավորի ընտրությունը պետք է կատարեր ռուսաց կայսրը, իսկ օծումը պետք է տեղի ունենար Էջմիածնում:
- դ. Հայաստանի մայրաքաղաք պետք է հռչակվեր Վաղարշապատը կամ Անին:
- ե. Հայաստանի կառավարությունը Պետերբուրգում պետք է ունենար իր դեսպանը:
- զ. Սահմանվելու էին Հայաստանի դրոշը, զինանշանը, շքանշանները և այլն:
- է. Հայաստանը պետք է ունենար իր նավահանգիստը Սև ծովի ափին:

- 1) ա, դ, գ 2) բ, դ, ե 3) գ, դ, գ 4) ա, գ, է

41. Բերված կետերից որո՞ն է առնչվում Հայաստանի ազատագրության Հարավային ծրագրին.

- 1) Թուրքիայի դեմ արշավանքը պետք է սկսվեր Թիֆլիս–Ախալցխա–Կարս և Երևան–Բայազետ–Վան ուղղություններով:
- 2) Հայաստանի և Ռուսաստանի միջև պետք է կնքվեր առևտրական պայմանագիր և Կասպից ծովի ափին Հայաստանին տրամադրվեր նավահանգիստ:
- 3) Հայաստանի կառավարությունը պետք է գլխավորեր ազգությամբ հայ նախարարը:
- 4) Հայաստանի մայրաքաղաքը պետք է հռչակվեր Վաղարշապատը կամ Անին:

42. Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ.

- ա. Շամախիի հայկական բնակավայրերից Արցախ տեղափոխվեցին Ավան և Թարխան հարյուրապետերը:
- բ. Դերբենդը գրավելուց հետո Պետրոս I–ը անակնկալ վերադարձավ Աստրախան:
- գ. Թուրքերին Ղարադաղում պարտության մատնելուց հետո Խնձորեսկ վերադառնալու ճանապարհին Մխիթար սպարապետը դավադրաբար սպանվեց:
- դ. Մելիք Եզանի մահից հետո Խամսայի մելիքությունների կառավարչի պաշտոնն անցավ նրա որդի Եսայուն, ապա՝ վերջինիս եղբորը՝ Արամին:
- ե. Մելիք Մանուչարը մասնակցել է Նադիրի՝ Հնդկաստան կատարած արշավանքին:

- 1) ա, բ 2) բ, ե 3) գ, դ 4) գ, ե

43. Տրված պնդումներից որո՞նք են սխալ.

- ա. 1700 թ. մինչև իր կյանքի վերջը Արցախում եռանդուն գործունեություն է ծավալել Եսայի Հասան–Ջալալյանը:
- բ. 1758 թ. Հ. Էմինը գալիս է Հայաստան մոտիկից ծանոթանալու այստեղ տիրող իրավիճակին:
- գ. Նիկոլայ I–ի 1828 թ. մարտի 21–ի հրամանագրով Երևանի և Նախիջևանի նախկին խանություններից կազմվեց Հայկական մարզը:

- դ. 1844 թ. Կ. Պոլսում ստեղծված Ազգային ժողովի անդամների մեծ մասը հայ մեծահարուստ ամիրաներն էին:
- ե. Բեռլինի վեհաժողովի նախօրյակին՝ 1878 թ. մայիսի 18-ին, Լոնդոնում կնքված անգլո-թուրքական գաղտնի համաձայնագրով Մեծ Բրիտանիան Թուրքիայից ստացավ Կիպրոս կղզին:

- 1) գ, դ 2) գ, ե 3) ա, դ 4) բ, ե

44. Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ.

- ա. Արցախում կազմակերպված սղնախներից առավել հայտնի էին Գյուլիստանի, Շոշի, Ավետարանոցի, Ջրաբերդի և Քարազլիսի սղնախները:
- բ. Մովսես Սարաֆյանն առաջարկում էր Թուրքիայի դեմ արշավանք սկսել Երևան-Ախալցխա-Կարս և Թիֆլիս-Բայազետ-Վան ուղղություններով:
- գ. Հայաստանի ազատագրության Հյուսիսային ծրագրով առաջարկվում էր Հայաստանի և Ռուսաստանի միջև կնքել առևտրական պայմանագիր և Սև ծովի ափին Հայաստանին տրամադրել նավահանգիստ:
- դ. Պարսիկ հրոսակախմբերի դեմ Բորչալուում, Ղազախ-Շամշադինում և Լոռի-Փամբակում գործում էր Մելիք-Մարտիրոսյանի 500-հոգանոց ջոկատը:
- ե. Նադիր շահի օրոք իրենց տիրապետությունը պահպանել են նաև Սյունիքի և Ղարադաղի հայկական մելիքությունները:

- 1) բ, գ 2) ա, ե 3) դ, ե 4) ա, դ

45. Տրված պնդումներից որո՞նք են սխալ.

- ա. Կապիտան Սումբատովի գլխավորած հայկական կամավորական առաջին դրուժինայի ոգևորության մասին վկայել է գեներալ Ն. Մուրավյովը:
- բ. Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագիրը կնքվել է հայազգի մեծահարուստ Մանուկ բեյ Միրզայանի ապարանքում:
- գ. Ռուսական զորքերին մեծ օգնություն է ցույց տվել Գյուլիստանի մելիք Աբովի որդի Ռոստոմ բեկի գլխավորած հայկական հեծյալ ջոկատը:
- դ. Ռուսաստանին ցուցաբերած մեծ ծառայության համար Ջուլջուդ Շահնազարյանը արժանացել է շնորհակալության և գեներալ Տիցիանովից ստացել նրա անձնական ժամացույցը:
- ե. Թուրքմենչայի հաշտության պայմանագիրը ռուսների կողմից ստորագրել է Ա. Գրիբոյեդովը:

- 1) գ, ե 2) ա, ե 3) բ, դ 4) բ, գ

46. Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ.

- ա. Մ. Սարաֆյանի ծրագրի համաձայն՝ Հայաստանն ազատագրելուց հետո պետք է ստեղծվեր հայկական պետություն, և Արցախի մելիքներից մեկը պետք է դառնար Հայաստանի թագավոր:
- բ. Հայաստանի ազատագրության Հարավային ծրագրի համաձայն՝ հայոց թագավորին ընտրելու էր ռուսաց կայսրը, որն այնուհետև պետք է օժկեր էջմիածնում:

- գ. Հայաստանի ազատագրության Հարավային ծրագրի համաձայն՝ նախկին հողատերերին վերադարձվելու էին իրենց հողատարածքները, սակայն առանց գյուղացիներին ճորտացնելու իրավունքի:
- դ. Ըստ Շ. Շահամիրյանի առաջարկած Հայաստանի ազատագրության նախագծի՝ Ռուսաստանի օգնությամբ ազատագրված Հայաստանը պետք է հռչակվեր հանրապետություն՝ խորհրդարանական կառուցվածքով:
- ե. «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ» գիրքը ապագա հայկական պետության կառավարման համար նախատեսված օրենքների հավաքածու էր, որը պետք է կիրառվեր անկախության վերականգնումից հետո:

- 1) բ, գ 2) ա, դ 3) ա, բ 4) գ, դ

47. Տրված պայմաններից առանձնացնել այն կետերը, որոնք տեղ են գտել 1828 թ. Թուրքմենչայի հաշտության պայմանագրում.

- ա) Ռուս-պարսկական սահմանը մի հատվածով ձգվում էր Արաքս գետով:
- բ) Արաքսից հարավ ընկած պատմական Պարսկահայքի և Ատրպատականի գավառները վերադարձվում էին պարսիկներին:
- գ) Պարսկահպատակ հայերին հնարավորություն էր ընձեռվում տեղափոխվելու Ռուսական կայսրության նորահաստատ տարածքներ:
- դ) Պարսիկները պարտավորվում էին վճարել 310 միլիոն ռուբլի ռազմատուգանք:
- ե) Ռուսաստանը Դանուբյան շրջանում ստանում էր Բեսարաբիան:
- զ) Ռուսաստանին էին անցնում Ախալքալաքը և Ախալցխան:
- է) Ռուսաստանին էին անցնում Կարսը, Արդահանը, Ալաշկերտը, Բայազետը, Բաթումը:

- 1) ա, բ, գ 2) գ, դ, է 3) բ, ե, գ 4) ա, գ, է

48. Ընտրել երեք սխալ փաստարկները.

- ա. 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմին մասնակցած հեծյալ և հետևակային վեց կամավորական ջոկատները հիմնականում համալրված էին հայերով:
- բ. Ղազախում ու Շամշադինում հերոսաբար մարտնչում էր Գրիգոր Մանուչարյանի 500-հոգանոց հեծյալ ջոկատը:
- գ. Արցախում հատկապես աչքի է ընկել Ջումշուդ Շահնազարյանի 800 հեծյալներից կազմված ջոկատը:
- դ. 1828 թ. գարնանից Արաքսի ձախ ափն է անցել ութ հազարից ավելի ընտանիք:
- ե. 1828 թ. օգոստոսին Պասկևիչի զորքերը գրավեցին Ախալցխան միայն 700 զոհերի գնով:
- զ. Բայազետում կազմավորվել է Մելիք Մարտիրոսյանի 500-հոգանոց կամավորական ջոկատը:
- է. 1829 թ. փետրվարին Վ. Բեհբուդովի գլխավորած ավելի քան 2500-հոգանոց կայազորը կարողացել է անառիկ պահել Ախալցխան:

- 1) ա, գ, է 2) բ, գ, զ 3) դ, ե, գ 4) ա, գ, է

49. Ո՞րն է ճիշտ պատասխանը.

Սան Ստեֆանոյի պայմանագրի 25-րդ հոդվածը՝

- 1) նախատեսում էր Արևմտյան Հայաստանում ռուսների գրաված և կրկին Թուրքիային վերադարձվելիք գավառներում անհապաղ բարեփոխումներ անցկացնել և ապահովել հայերի անվտանգությունը քրդերից ու չերքեզներից
- 2) իրավունք էր տալիս ռուսական զորքերին 6 ամիս մնալու Հայաստանում
- 3) թուրքական կառավարությանը պարտավորեցնում էր չհավաճել պատերազմում ռուսներին աջակցած քրիստոնյաներին
- 4) հպատակ հայերին հնարավորություն էր ընձեռում տեղափոխվելու Ռուսական կայսրության նորահաստատ տարածքներ

50. Պնդումներից որո՞նք են սխալ.

- ա. Արիստակես եպիսկոպոսը Կ. Պոլսի պատրիարքին գրած հայերեն նամակում առաջարկում էր ստեղծել և փորձարկել զենքի նոր տեսակ, որն ուսումնասիրել էր Չինաստանում:
- բ. 1709 թ. Իսրայել Օրին դեսպանական խմբով ժամանեց Շամախի քաղաք:
- գ. Արցախում կազմակերպված հենակետային ամրոցներից առավել հայտնի էին Գյուլիստանի, Շոշի, Ավետարանոցի, Ջրաբերդի սղնախները:
- դ. Հայ զինվորականության մի մասը Ավան և Թարխան հարյուրապետերի գլխավորությամբ փոխադրվեց ռուսական բանակ:
- ե. 1723 թ. թուրքական բանակը ներխուժում է Թիֆլիս, գրավում է քաղաքը և շարժվում դեպի Գանձակ:

- 1) ա, բ 2) բ, դ 3) դ, ե 4) գ, ե

51. Ստորև տրված քաղաքական կազմակերպություններից առանձնացնել միայն Վանում հիմնադրված կամ գործած կազմակերպություններն ու խմբերը.

- | | |
|-------------------------------|-------------------------------|
| ա. «Չինակիր» | դ. «Սև խաչ» |
| բ. «Հայրենասերների միություն» | ե. «Պաշտպան Հայրենյաց» |
| գ. «Միություն ի փրկություն» | զ. «Հայրենիքի սիրո գրասենյակ» |

- 1) ա, գ, դ 2) բ, գ, դ 3) գ, դ, ե 4) ա, գ, զ

52. Փաստարկներից ընտրել երեքը, որոնք ճիշտ են պարզաբանում հայ քաղաքական կուսակցությունների գործունեությունը երիտթուրքական հեղաշրջումից հետո.

- 1) Իրենց հավատարմությունը հայտնեցին «Ազատություն և համաձայնություն» կուսակցությանը:
- 2) Ներքին և արտաքին քաղաքականության բոլոր հարցերում սկսեցին աջակցել երիտթուրքերին:
- 3) Սկսեցին գաղտնի նախապատրաստվել համաժողովրդական պայքարի:
- 4) Դադարեցրին ընդհատակյա գործունեությունը, ցրեցին հայդուկային խմբերը:

- 5) Ճանաչեցին օսմանյան Թուրքիայի տարածքային ամբողջականությունը:
- 6) Օրակարգից, սակայն, չհանեցին արևմտահայությանն ընդհանուր զինված ապստամբության նախապատրաստելու հարցը:

53. Բերված պնդումներից որո՞նք են սխալ.

- 1) Բյուզանդիայի պատմության, հայոց միջնադարի և Հայկական հարցի ուսումնասիրության ասպարեզում զգալի ներդրում է ունեցել Նիկողայոս Ադոնցը:
- 2) Ն. Բակը կլասիցիզմի ոճով կառուցել է Բաքվի Մայիլովի անվան հայկական թատրոնի շենքը:
- 3) Տիգրան Չոխաջյանը հայ օպերային արվեստի հիմնադիրն է:
- 4) Անդրեաս Տեր-Մարուքյանի կերտած՝ Մարտիրոս Սարյանի հուշարձանը նոր շրջանի հայ կերպարվեստի առաջին կոթողային քանդակն է:
- 5) Լեոն պատմագրության ազատական ուղղության ներկայացուցիչ է:
- 6) Միհրան Ղասաբյանի ռենտգենաբանությանը նվիրված աշխատություններն այսօր էլ որպես դասագիրք օգտագործվում են ԱՄՆ–ի բժշկական ինստիտուտներում:
- 7) Աղաբաբյան դպրոցը հատկապես լայն ճանաչում է ձեռք բերել Սերոբվե Լևոնյանի տեսուչ եղած ժամանակ:
- 8) Վիեննայում լույս տեսած Հ. Գաթրոճյանի «Տիեզերական պատմություն» երկհատորյակը հայերենով գրված համաշխարհային պատմության առաջին ձեռնարկն էր:

54. Տրված փաստարկներից որո՞նք չեն ներկայացնում Ս. Առաքելոց վանքի պաշտպանության ժամանակ թուրքական կառավարությանը հայերի ներկայացրած պահանջները.

- ա. ներում շնորհել քաղաքական բանտարկյալներին
- բ. իրականացնել Բեռլինի 16–րդ հոդվածով նախատեսված բարենորոգումները
- գ. զինաթափել ու պատժել հայկական գյուղերն ավերող քրդական զինված ավազակախմբերին
- դ. հայդուկների մի մասին դուրս բերել երկրից և անվնաս հասցնել Պարսկաստան
- ե. հայերին վերադարձնել նրանցից զավթած հողերը
- զ. Գևորգ Չավուշին մի փոքր խմբով ուղարկել Մուշ ու Սասուն՝ կազմակերպական աշխատանքները շարունակելու նպատակով
- է. վերացնել հայերից տուրք գանձելու քուրդ ցեղապետերի իրավունքը

- 1) ա, գ, զ 2) բ, դ, զ 3) բ, ե, զ 4) ա, ե, է

55. Ստորև տրված պատմական իրադարձություններից որո՞նք են տեղի ունեցել 1915 թվականին.

- 1) հայ ժողովրդի հակացարական պայքարի սկիզբն Ալեքսանդրապոլում
- 2) Մկրտիչ Խրիմյանի նախաձեռնությամբ Ռուսաստանում ապրող հայերի պատգամավորական կենտրոնական ժողովի հրավիրումը
- 3) Դիլմանի ճակատամարտը

- 4) Ռևանդուզի ճակատամարտը
- 5) Հ. Արղույանի գլխավորությամբ VII կամավորական ջոկատի ստեղծումը
- 6) երիտթուրքական հեղաշրջումն օսմանյան Թուրքիայում
- 7) Գևորգ Ե-ի կոնդակով Պողոս Նուբարի նշանակվելը Եվրոպայում կաթողիկոսի լիազոր ներկայացուցիչ և ազգային պատվիրակության ստեղծումը
- 8) Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ կատարելու վերաբերյալ ռուս-թուրքական համաձայնագրի ստորագրումը
- 9) Շապին-Գարահիսարի ինքնապաշտպանությունը

56. Ստորև բերված փաստարկներից որոնք են սխալ.

- 1) Կիլիկիայում հայտնի «Փոքր չեյլոյի» առաջնորդը խիզախ գործիչ Թորոս Ծառուկյանն էր:
- 2) 1893 թ. Արաբոն 16 հոգով անցնում է Արևմտյան Հայաստան և, Գյալիսորի ձորում կռվի բռնվելով քրդերի ու թուրքերի դեմ, իր ընկերների հետ հերոսաբար զոհվում է:
- 3) 1905 թ. Աղբյուր Սերոբի հավատարիմ զինվորներ Գևորգ Չավուշն ու Անդրանիկը վրեժխնդիր են լինում թշնամուց՝ սպանելով Բշարե Խալիլին:
- 4) Հրայրը, որին թշնամին Դժոխք մականունն է տվել, ծնվել է 1864 թ. Սասունի Ահարոնք գյուղում, սովորել Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, զբաղվել ուսուցչությամբ:
- 5) Անդրանիկ Օզանյանը ծնվել է 1865 թ. փետրվարի 25-ին Շապին-Գարահիսար քաղաքում, սովորել է տեղի Մուշեղյան վարժարանում:
- 6) 1906 թ. Անդրանիկը հեղինակել է «Մարտական հրահանգներ» կանոնագիրքը:
- 7) 1891 թ. Թավրիզում դաշնակցության հիմնադրած «Խարիսխ» զինագործարանը վերածվում է զենքի արտադրության կարևոր կենտրոնի:
- 8) Հնչակյանները 1890 թ. հուլիսին Կ. Պոլսի Գում Գափու թաղամասում կազմակերպեցին խաղաղ ցույց:
- 9) 1890-ական թթ. օսմանյան Թուրքիայում ոչնչացվեց շուրջ 300 հազար հայ:

57. Ստորև բերված փաստարկներից որոնք են ճիշտ.

- 1) 1918 թ. մայիսի 16-27-ը Շիրակում՝ Սոգյուլուի (Սառնաղբյուր) ճակատում, հայկական ուժերը հաղթական կռիվներ մղեցին թուրքերի դեմ:
- 2) Երևանի ազգային խորհուրդն ընտրեց արտակարգ լիազորություններով օժտված Հատուկ կոմիտե՝ վեցամսյա ժամկետով:
- 3) 1904 թ. հունվարին թուրքական զորքերը զրավում են Սասունի ճանապարհները՝ կտրելով այն Մուշից:
- 4) 1914 թ. ապրիլին Վեստենենկը նշանակվեց Էրզրումի, Տրապիզոնի և Սեբաստիայի նահանգներն ընդգրկող մասի տեսուչ (նստավայրը՝ Տրապիզոն), իսկ Հոֆը՝ Վանի, Բիթլիսի, Խարբերդի և Դիարբեքիրի նահանգներն ընդգրկող մասի տեսուչ (նստավայրը՝ Բիթլիս):
- 5) 1916 թ. մայիսի 15-ին Դիվանի ճակատամարտում իր մահկանացուն կնքեց 4-րդ գնդի հրամանատար, նշանավոր հայդուկ Քեռին:

- 6) 1915 թ. փետրվարի 25-ի հրամանով օսմանյան բանակում ծառայող հայերին արգելվում է նշանակել հրամանատարական պաշտոններում, ծառայել ռուս-թուրքական ճակատային գծում:
- 7) Կ. Պոլսի կենտրոնական հրապարակներից մեկում 1915 թ. հունիսի 15-ին կախաղան բարձրացվեցին դաշնակցություն կուսակցության 20 գործիչներ՝ Փարամազի գլխավորությամբ:
- 8) Հայոց ազգային համախորհրդակցությունը գումարվեց Երևանում 1917 թ. սեպտեմբերի 29-ից մինչև հոկտեմբերի 12-ը:

58. Ստորև բերված փաստարկներից որոնք են սխալ.

- ա. 1857 թ. Կ. Պոլսի ուսումնական խորհրդի անդամներ Ն. Ռուսինյանը, Գ. Օսյանը, Ս. Վիչենյանը (Սերվիչեն), Գ. Պալյանը և ուրիշներ մշակում են արևմտահայ համայնքի ներքին կյանքին վերաբերող մի կանոնադրություն և ներկայացնում համայնքի ընդհանուր ժողովի հաստատմանը:
- բ. 1863 թ. մայիսի 24-ին Կ. Պոլսի Ազգային ընդհանուր ժողովը հաստատում է կանոնադրությունը:
- գ. 1869 թ.՝ Մկրտիչ Խրիմյանի պատրիարք դառնալուց հետո, Ազգային սահմանադրությունը գործարկվեց Արևմտյան Հայաստանի բազմաթիվ գավառներում:
- դ. Ուսուցիչ Արսեն Կրիտյանի և զինագործ Պետրոս Հայկազունու գլխավորությամբ 1874 թ. Մեծ Ղարաքիլիսայում (այժմ՝ Վանաձոր) ստեղծվում է «Բարենպաստակ ընկերություն» խմբակը:
- ե. 1882 թ. նոյեմբերի վերջերին թուրքական ոստիկանությունը պատահականորեն հայտնաբերում է Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը, բանտարկում շուրջ 70 մարդ:
- զ. 1882 թ. դեկտեմբերին տեղի է ունենում Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության անդամների դատավարությունը, որին անձամբ հետևում էր սուլթան Աբդուլ Համիդ II-ը:
- է. Մկրտիչ Խրիմյանի խորհրդով Մկրտիչ Փորթուզալյանը և նրա 12 սաները ստեղծում են մի միություն, որը կազմում է ապագա Արմենական կուսակցության կորիզը:
- ը. 1885 թ. աշնանը Վան քաղաքում հիմնադրվում է առաջին հայ ազգային կուսակցությունը՝ «Արմենական» անունով:
- թ. 1896 թ. Լոնդոնի առաջին համագումարում Հնչակյան կուսակցությունը պառակտվում է երկու թևի՝ սոցիալիստական և ազգային:

- 1) բ, դ, գ 2) բ, դ, ե 3) գ, ե, թ 4) ա, է, ը

59. Ստորև բերված փաստարկներից որոնք են ճիշտ.

- ա. 1906 թ. փետրվարի 18-ին հայ-թաթարական ընդհարումներ սկսվեցին Երևանում, ապա կրկնվեցին մայիսի վերջերին և սեպտեմբերին:
- բ. Վարդանը Բաքվում սպանեց հայ-թաթարական ընդհարումների կազմակերպիչ Դ. Ավերյանով-Ավարսկուն:

- գ. Ռուսաստանում ապրող հայերի պատգամավորական Կենտրոնական ժողովը բացվեց 1906 թ. օգոստոսի 17-ին Երևանում, որի նախագահ ընտրվեց նշանավոր ազգային գործիչ Դրոն:
- դ. 1901 թ. նոյեմբերի 3-ին Անդրանիկը 37 հայդուկների և 20 զինված գյուղացիների հետ մտնում է Մուշից հարավ-արևելք ընկած Ս. Առաքելոց վանք և այն վերածում ինքնապաշտպանական ամրոցի:
- ե. 1903 թ. գարնանը Սասունի հայտնի Շենիկ գյուղում ստեղծվում է ինքնապաշտպանական ղեկավար մարմին՝ Անդրանիկի գլխավորությամբ:
- զ. Ժամանակավոր կառավարությունը 1917 թ. մարտի 9-ին կազմեց երկրամասի իշխանության նոր մարմին՝ Անդրկովկասյան հատուկ կոմիտե (ԱՀԿ)՝ Պետական 4-րդ դումայի կովկասյան 5 պատգամավորներից, որի նախագահն էր Մ. Պապաջանյանը (կադետ):
- է. Երևանում 1917 թ. մայիսի 2-11-ը Երևանում կայացավ արևմտահայերի առաջին համագումարը, որին մասնակցում էին 80 պատգամավորներ և մոտ 400 հյուրեր:

- 1) ա, դ, է 2) բ, գ, է 3) դ, ե, զ 4) ա, դ, զ

60. Թվարկված պատմական իրադարձություններից որո՞նք են տեղի ունեցել 1917 թվականին.

- 1) Սայքս-Պիկոյի համաձայնագրի կնքումը
- 2) Անդրկովկասյան հատուկ կոմիտեի (ԱՀԿ) ստեղծումը
- 3) Արևմտահայերի առաջին համագումարի հրավիրումը Երևանում
- 4) Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագրի ստորագրումը
- 5) Ղարաքիլիսայի հերոսամարտը
- 6) ՀՅԴ II ընդհանուր ժողովի (համագումար) հրավիրումը
- 7) «Սպարտակ» երիտասարդական կազմակերպության ստեղծումը
- 8) Հայկական կորպուսի ստեղծումը Կովկասյան ճակատում
- 9) Երևանի Հայոց ազգային խորհրդի կողմից Արամ Մանուկյանին Երևանի նահանգի դիկտատոր հաստատելը

61. Ստորև բերված պնդումներից որո՞նք են սխալ.

- 1) XVIII դարում ստեղծված կարևոր պատմագիտական երկերից են Եսայի Հասան-Ջալալյանի «Համառոտ պատմութիւն Աղուանից», Աբրահամ Երևանցու «Հայոց պատմություն», Ստեփանոս Շահումյանի «Պատմութիւն Դավիթ բեկին» և այլ աշխատություններ:
- 2) Վիրահայոց թեմի առաջնորդ Ներսես Աշտարակեցին 1824 թ. Թիֆլիսում հիմնեց հայկական ուսումնարան, որը շուտով հռչակվում է Ներսիսյան դպրոց անունով:
- 3) 1837 թ. Շուշիում և 1838 թ. Երևանում բացվում են թեմական դպրոցներ:
- 4) Հայ իրականության համար դարակազմիկ նշանակություն ունեցավ Միքայել Չամչյանի երկհատոր «Պատմութիւն Հայոց» աշխատության տպագրությունը:

- 5) 1794–1796 թթ. Մադրասում Հարություն Շմավոնյանի նախաձեռնությամբ և հենց իր տպարանում լույս ընծայվեց հայոց առաջին պարբերականը՝ «Ազդարարը»:
- 6) Ճանաչված քիմիկոս Ջակոմո (Հակոբ) Չամչյանը իր գիտամանկավարժական գործունեությունը սկսել է Հռոմի համալսարանում, ընտրվել Պադուայի և Բոլոնիայի համալսարանների պրոֆեսոր:
- 7) Երևանի վերակառուցումն սկսվեց ըստ քաղաքի զարգացման առաջին գլխավոր հատակագծի, որը կազմվել էր 1856 թ.:

62. Բերված կետերից որն է առնչվում 1699 թ. Սյունիքի Անգեղակոթ գյուղում հրավիրված գաղտնի խորհրդակցության որոշումներին.

- 1) լիազորել Իսրայել Օրուն շարունակելու բանակցությունները ինչպես եվրոպական երկրների, այնպես էլ ռուսական իշխանությունների հետ
- 2) ռազմական օգնության դիմաց վրաց թագավոր Վախթանգ VI–ին ճանաչել հայոց թագավոր
- 3) Իսրայել Օրուն ուղեկցող կարգել Եսայի Հասան–Ջալալյանին
- 4) Վիեննայի արքունիքին խնդրել արագացնել Հայաստան զորք ուղարկելը

63. Ստորև բերված փաստարկներից որոնք են սխալ.

- 1) 1877 թ. ապրիլի 12–ին Ռուսաստանը պատերազմ սկսեց օսմանյան Թուրքիայի դեմ:
- 2) 1878 թ. սկզբին ռուսները մտան Սոֆիա, ապա Պլովդիվ և մոտեցան Ադրիանապոլսին ու Դիադինի մատույցներին:
- 3) Կովկասյան ճակատում՝ Ալեքսանդրապոլ–Կարս ուղղությամբ, հիմնական հարվածող ուժը հայազգի գեներալ Միխայիլ Լոռիս–Մելիքովի (Լոռու–Մելիքյան) հրամանատարությամբ գործող 70–հազարանոց Կովկասյան կորպուսն էր:
- 4) Երևանյան ջրկատը 1877 թ. ապրիլի 30–ին գրավում է Բայազետը, ապա նաև Դիադինն ու Ալաշկերտը:
- 5) 1890 թ. հունիսին Թիֆլիսում հույժ գաղտնի պայմաններում սկսվեց ՀՅԴ առաջին ընդհանուր ժողովը՝ համագումարը:
- 6) 1994 թ. «Դրոշակում» տպագրվեց ՀՅԴ ծրագիրը:
- 7) Արաբոն (Առաքել Մխիթարյանը) ծնվել է 1863 թ. Սասունի Կոռթեր գյուղում:

64. Ստորև բերված փաստարկներից որոնք են սխալ.

- 1) 1769 թ. հուլիսին Աստրախանի մեծահարուստ Հովսեփ Արղությանը այլ գործիչների գիտությամբ Ռուսաստանի արտաքին գործերի կոլեգիային (նախարարություն) է ներկայացնում Հայաստանի ազատագրության իր կազմած ծրագիրը:
- 2) 1882 թ. Մոսկվայում հայ ուսանողները հիմնել են «Հայրենասերների միություն» կազմակերպությունը:
- 3) 1917 թ. նոյեմբերի 21–ին Անդրկոմիսարիատը հաշտության բանակցություններ սկսեց Թուրքիայի հետ. դեկտեմբերի 5–ին Երզնկայում ստորագրվեց զինադադարի համաձայնագիր:

- 4) Գևորգ Բաշինջաղյանի վրձինն են պատկանում «Ջանգեզուր», «Արարատ», «Սևանա լիճ», «Հայերի ջարդը Տրապիզոնում», «Ս. Հռիփսիմե» կտավները:
- 5) Սարիղամիշի ճակատամարտն ավարտվել է 1915 թ. դեկտեմբերի 22-ին:
- 6) Ռուս պատմաբան Սերգեյ Գլինկան գրել է «Հայ ժողովրդի պատմության տեսություն» աշխատությունը:
- 7) Կ. Պոլսում Հ. Վարդոլյանի գլխավորությամբ ստեղծվում է թատերական երկրորդ կազմակերպությունը, որը հանդես է գալիս հայերեն ու թուրքերեն ներկայացումներով:

65. Ստորև բերված փաստարկներից որոնք են ճիշտ.

- 1) 1895 թ. ամռանը Ջեյթոն տեղափոխվեցին հնչակյան Գարուն Աղասին (Կարապետ Թուր-Սարգսյան), վանեցի հայդուկ Մխո Շահենը (Մխիթար Սեֆերյան) և ուրիշներ:
- 2) Ջեյթոնի 1895–1896 թթ. ապստամբության փաստական ղեկավար դարձավ Նազարեթ Չավուշը (Նորաշխարհյան):
- 3) 1897 թ. հուլիսի 25–ին Հայաստանի տարբեր ծայրերից եկած շուրջ 250 հայդուկներ Վարդանի, Իշխանի, Ն. Դումանի, Սևքարեցի Սաքոյի և այլոց գլխավորությամբ անցան պարսկաթուրքական սահմանը և Խանասորի դաշտում անակնկալ հարձակվեցին քրդական մագրիկ ցեղի վրա ու կոտորեցին շատերին:
- 4) 1896 թ. 530 հայկական տարրական դպրոցներ եկեղեցու տնօրինությունից հանձնվել էին լուսավորության նախարարությանը, մայրենիով թույլատրվում էր միայն կրոնագիտության ուսուցումը:
- 5) 1903 թ. ապրիլին հնչակյանները Գ. Գոլիցինի դեմ մահափորձ կազմակերպեցին. հարձակվելով կառավարչապետի կառքի վրա՝ դաշույնի հարվածներ հասցրին նրան, սակայն վերջինս կենդանի մնաց:
- 6) «Միություն և առաջադիմություն» կազմակերպությունը քաղաքական պայքարի ասպարեզ էր մտել 1880–ական թթ.՝ միդհատյան (1871 թ.) սահմանադրության վերականգնման և ազատության կարգախոսներով:

66. Ստորև բերված պատմական իրադարձություններից որոնք են տեղի ունեցել 1736 թվականին.

- 1) Եղվարդի ճակատամարտը
- 2) Մեղրիի ճակատամարտը
- 3) Էրզրումի պայմանագրի կնքումը
- 4) Դավիթ բեկի հաղթական մարտը ջևանշիր քոչվոր ցեղի դեմ
- 5) Նադիրի պարսից շահ դառնալը
- 6) Հովսեփ Էմինի վերադարձը Հայաստան

67. Բերված փաստարկներից որոնք են սխալ.

- ա. 1829 թ. հունիսի 24–ին Ի. Պասկևիչի գլխավորած ռուսական հիմնական ուժերը գրավում են Վերին Բասենի վարչական կենտրոն Հասան Կալան:
- բ. «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը ստեղծվել է 1882 թ. Խաչատուր Կերեքցյանի ջանքերով:

- գ. Ժողովրդավարական հեղափոխությունը Ռուսաստանում սկսվեց 1905 թ. հունվարի 9-ին Պետերբուրգում բանվորների խաղաղ ցույցի գնդակոծությամբ:
- դ. 1917 թ. դեկտեմբերի 5-ին ընդունվեց «Թուրքահայաստանի մասին» հրովարտակը:
- ե. 1917 թ. Վանի մարզի տեղական զինված խմբերը ղեկավարում էին Լևոն Շաղոյանը և Բուլղարացի Գրիգորը
- զ. Հրայրը ծնվել է 1864 թ. Սասունի Ահարոնք գյուղում, սովորել Մշո Ս. Կարապետ վանքի դպրոցում:
- է. Նազարեթ Տաղավարյանը 1886–1888 թթ. Կ. Պոլսում հրատարակել է առաջին գիտական հայ պարբերականը՝ «Ազդարար» խորագրով:

- 1) բ, դ, է 2) ա, ե, գ 3) բ, գ, ե 4) ա, դ, է

68. Ո՞ր շարքն է կազմված միայն ճարտարապետներից.

- 1) Ե. Ոսկան, Ս. Աղաջանյան, Գաբրիել Տեր-Միքելյան, Ն. Բաև
- 2) Գաբրիել Տեր-Միքելյան, Ս. Սարկիսյան, Հովհաննես Քաջազունի, Ն. Բաև
- 3) Ս. Աղաջանյան, Պ. Մաղաքյան, Հ. Գյուրջյան, Հովհաննես Քաջազունի
- 4) Ս. Սարկիսյան, Հովհաննես Քաջազունի, Ն. Բաև, Ս. Աղաջանյան

69. Տրված պնդումներից որո՞նք են սխալ.

- ա. Հայկական մարզի մարզային վարչությունում մեծամասնություն էին կազմում ռուս պաշտոնյաները, իսկ հայերը, որոնց մինչև 1833 թ. ներկայացնում էր Սահակ Մելիք-Աղամալյանը, տեղի մահմեդականների նման ունեին միայն մեկ ձայն:
- բ. Արցախում հատկապես աչքի էր ընկնում Մարտիրոս Վեքիլյանի գլխավորած 500-հոգանոց հեծյալ ջոկատը, որը որոշակի դեր խաղաց հայկական գյուղերը պարսկական հարձակումներից պաշտպանելու գործում:
- գ. Մեծ տերությունների միջամտությամբ 1896 թ. հունվարի 30-ին Հալեպում կնքվում է հաշտություն, որից հետո կառավարությունը պարտավորվում է զորքերը հետ քաշել Ջեյթունից, ներում շնորհել հայերին, ապահովել նրանց կյանքն ու գույքը:
- դ. 1915 թ. սկզբից մինչև ամառ ժամանակաշրջանում ռուսական զորքերը հաջորդաբար գրավեցին Խնուս, Մուշ, Բիթլիս, Տրապիզոն, Դերջան, Երզնկա և Բաբերդ քաղաքները:
- ե. 1918 թ. մայիսի 16-ին Տարոնի 300 կամավորները Սասունցի Մանուկի և Մուշեղի գլխավորությամբ գրավեցին Ներքին Թալինի բերդը:

- 1) ա, բ 2) բ, ե 3) դ, ե 4) ա, գ

70. Տրված փաստարկներից որո՞նք են սխալ.

- 1) 1885 թ. օգոստոսին Ժնևի համալսարանի մի խումբ ուսանողներ՝ Ավետիս Նազարբեկյանը, Ռուբեն Խանազատը, Գաբրիել Կաֆյանը, Մարո Վարդանյանը, ստեղծեցին հայ իրականության մեջ երկրորդ քաղաքական կուսակցությունը:
- 2) Հակահամիդյան շարժման մեջ ազդեցիկ դեր ուներ երիտթուրքերի «Միություն և առաջադիմություն» կազմակերպությունը, որը քաղաքական պայքարի ասպարեզ էր իջել 1890-ական թթ.:

- 3) 1913 թ. հունիսի 30–ին վեց տերությունների դեսպանների մասնակցությամբ սկսվեց խորհրդաժողով, և Հայկական հարցի քննարկումը զուգահեռաբար Բալկաններում սկսված նոր ճգնաժամին, քանի որ նույն օրը սկսվեց Բալկանյան երկրորդ պատերազմը:
- 4) 1915 թ. ապրիլի 11–ին (24–ին) և հաջորդ մի քանի օրերին Կ. Պոլսում, վաղօրոք կազմված ցուցակների համաձայն, ոստիկանությունը, ըստ թուրքական պաշտոնական տվյալների, կալանեց 2300–ից ավելի մարդու:
- 5) 1915 թ. Շապին–Գարահիսարի ինքնապաշտպանությունը ղեկավարելու համար կազմակերպվում է Զինվորական խորհուրդ, որը գլխավորում էր Տիգրան Անդրեասյանը:

71. Տրված փաստարկներից որո՞նք են սխալ.

- ա. 1857 թ. Կ. Պոլսի ուսումնական խորհրդի անդամներ Ն. Ռուսինյանը, Գ. Օտյանը, Ս. Վիչենյանը (Սերվիչեն), Գ. Պալյանը և ուրիշներ մշակում են արևմտահայ համայնքի ներքին կյանքին վերաբերող մի կանոնադրություն, որը Գ. Օտյանի առաջարկությամբ կոչում են «Ազգային սահմանադրություն»:
- բ. 1869 թ.՝ Մկրտիչ Խրիմյանի պատրիարք դառնալուց հետո, սահմանադրությունը գործարկվեց Արևմտյան Հայաստանում:
- գ. «Սև խաչ» կազմակերպությանն աջակցում էր Վանի ռուսական փոխհյուպատոս հայազգի Կոնստանդին Կամսարականը:
- դ. 1900 թ. Գևորգ Զավուչն ու Աղբյուր Սերոբը վրեժխնդիր են լինում թշնամուց՝ սպանելով Բշարե Խալիլին:
- ե. 1891 թ. Վանում դաշնակցության հիմնադրած «Խարիսխ» զինագործարանը վերածվում է զենքի արտադրության կարևոր կենտրոնի:
- զ. 1890–ական թթ. օսմանյան Թուրքիայում ոչնչացվեցին շուրջ 300 հազար հայեր:

- 1) ա, գ, ե 2) ա, դ, ե 3) բ, գ, ե 4) բ, դ, գ

72. Թվարկվածներից որո՞նք Հովսեփ Արղությանի և Հովհաննես Լազարյանի կազմած՝ Հայաստանի ազատագրման հայ–ռուսական դաշնագրի նախագծի կետերից չեն.

- ա. Հայաստանի և Ռուսաստանի միջև կնքել հավիտենական դաշինք
- բ. Հայաստանում լինելու էր որոշակի քանակությամբ ռուսական զորք՝ երկիրը հնարավոր հարձակումներից պաշտպանելու համար
- գ. հայ, վրաց և ռուս զինվորներ ուղարկել Երևան և գահընկեց անել Երևանի խանին
- դ. Հայաստանը պետք է հանքերից և եկամուտներից հարկ վճարեր Ռուսաստանին, իսկ պատերազմի ժամանակ ցուցաբերեր ռազմական օգնություն
- ե. հայոց թագավորն ընտրվելու էր ռուսաց կայսեր կողմից, որն այնուհետև պետք է օժվեր էջմիածնում
- զ. Հայաստանում 20 տարի ժամանակով անհրաժեշտ էր համարում տեղակայել 6–հազարանոց ռուսական զորք
- է. Հայաստանի կառավարությունը պետք է Պետերբուրգում ունենար իր դեսպանը

ը. առաջարկվում էր Հայաստանի մայրաքաղաք դարձնել Վաղարշապատը կամ Անին
թ. սահմանվում էին Հայաստանի դրոշը, զինանշանը, շքանշանները

- 1) ա, գ, թ 2) գ, ե, է 3) գ, գ, է 4) դ, գ, ը

73. Բերված փաստարկներից որո՞նք են սխալ.

- ա. 1769 թ. հունիսին Աստրախանի մեծահարուստ Հովսեփ Արղությանը այլ գործիչների գիտությամբ Ռուսաստանի արտաքին գործերի կոլեգիային (նախարարություն) է ներկայացնում Հայաստանի ազատագրության իր կազմած ծրագիրը:
բ. Սարիղամիշի ճակատամարտն ավարտվել է 1915 թ. դեկտեմբերի 9-ին:
գ. Համազասպի գլխավորած IV ջոկատը մեծ հաջողությունների հասավ Վանի, ապա Խիզանի շրջանում:
դ. Շատախում 1915 թ. գարնանը ստեղծված զինվորական մարմինը ղեկավարում էր Բաղդիկ Սիմոնյանը:
ե. Ուրֆայի ինքնապաշտպանությունը սկսվեց 1915 թ. սեպտեմբերի 29-ին:
զ. Կ. Պոլսում 1861 թ. ստեղծվեց առաջին կամերային (սենեկային) նվագախումբը՝ Գրիգոր Սինանյանի ղեկավարությամբ:

- 1) ա, բ, գ 2) ա, գ, ե 3) ա, բ, գ 4) բ, դ, ե

74. Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ.

- ա. Արևմտահայ զորաբաժին ստեղծելու համար կյանքի կոչվեց գործադիր նոր մարմին՝ Հայաստանի ազատության կոմիտե:
բ. Տրապիզոնի թուրք-անդրկովկասյան բանակցություններին անդրկովկասյան պատվիրակության կազմում էին հայերից Ա. Խատիսյանը և Դրոն:
գ. 1918 թ. մայիսի 5-ին Տարոնի հայ կամավորները Սասունցի Մանուկի և Մուշեղի գլխավորությամբ գրավեցին Ներքին Թալինի բերդը:
դ. Սարդարապատի ճակատամարտի օրերին՝ 1918 թ. մայիսի 22-ից մինչև 28-ը, թշնամին կորցրեց 2500 սպանված և նահանջեց մոտ 80 կմ:
ե. Համբարձում Լիմոնճյանի ամենամեծ ծառայությունը 1815 թ. հայկական նոր ձայնագրության ստեղծումն էր:
զ. 1861 թ. Կ. Պոլսում Հ. Վարդովյանի գլխավորությամբ ստեղծվում է թատերական երկրորդ կազմակերպությունը, որը հանդես էր գալիս հայերեն և թուրքերեն:

- 1) գ, ե 2) բ, դ 3) ա, գ 4) գ, գ

75. Ո՞ր շարքում են ներկայացված միայն 1915 թ. հայկական շրջանների ինքնապաշտպանության ղեկավարների անունները.

- 1) Ա. Եկարյան, Հ. Կոստյան, Հ. Կոստյան, Ղ. Տեովլեթյան, Տ. Անդրեասյան, Մ. Յոթնեղբայրյան
2) Ա. Օզանյան, Հ. Կոստյան, Հ. Կոստյան, Ղ. Տեովլեթյան, Տ. Անդրեասյան, Մ. Յոթնեղբայրյան

- 3) Ա. Եկարյան, Հ. Կոտոյան, Գևորգ Չավուշ, Ղ. Տեովլեթյան, Տ. Անդրեասյան, Մ. Յոթնեղբայրյան
- 4) Ա. Եկարյան, Գևորգ Չավուշ, Հ. Կոտոյան, Վարդան, Տ. Անդրեասյան, Մ. Յոթնեղբայրյան

76. Բերված փաստարկներից որո՞նք են ճիշտ արտահայտում Ժամանակավոր կառավարության կողմից Թուրքահայաստանի գեներալ-կոմիսարին տրված ղեկավար հրահանգների բովանդակությունը.

- 1) Վանի և նրա շրջակա տարածքների ժամանակավոր նահանգապետ էր դառնալու Արամ Մանուկյանը:
- 2) Արևմտյան Հայաստանի տարածքը բաժանվելու էր 29 օկրուգից կազմված 4 մարզի:
- 3) Արևմտյան Հայաստանի տարածքի հայ բնակչությունից կազմավորվելու էր 4 գունդ:
- 4) Թույլատրվում էր նախկին թուրքահպատակ բոլոր հայերին վերադառնալ կամ վերաբնակվել Վանի, Էրզրումի և Խնուսի մարզերում:
- 5) Թուրքական զորքի հետ փախած թուրքերին, քրդերին և լազերին չէր թույլատրվում վերադառնալ Վանի, Էրզրումի և Խնուսի մարզեր:

77. Ընտրել ճիշտ պնդումները.

- 1) Առաջին աշխարհամարտում կազմավորված Արարատյան գունդը Էջմիածնում օրհնություն ստացավ Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ից:
- 2) Ցարիզմի հակահայ քաղաքականության դեմ բուռն գործունեություն է ծավալել Մաղաքիա Օրմանյանը:
- 3) Հայաստանի ազատագրության Հյուսիսային ծրագրի համահեղինակ էր Ներսես Աշտարակեցին:
- 4) 1878 թ. փետրվարին Էրզրումում Կարապետ արքեպիսկոպոսի օրհնությունը ստացավ ռուսական զորքը:
- 5) 1896 թ. Վանի ինքնապաշտպանության ղեկավարներից էր Եղիշե քահանա Խաչատրյանը:

78. Ստորև տրվածներից ընտրել ճիշտ պնդումները.

- ա. Բաթումի պայմանագրով Թուրքիան զավթեց Շարուր-Դարալագյազի մեկ հինգերորդ մասը:
- բ. 1878 թ. Բեռլինի պայմանագրով Բայազետը և Սևակերտը վերադարձվեցին Օսմանյան կայսրությանը:
- գ. Բուխարեստի պայմանագրով Ռուսաստանին անցան Ախալքալաքը և Ախալցխան:
- դ. 1896 թ. Հալեպի համաձայնագրով Ջեթթունում պետք է նշանակվեր ազգությամբ հայ կառավարիչ:
- ե. Մայիսյան բարենորոգումների ծրագրի համաձայն՝ հայկական նահանգներում նահանգապետերը և գավառապետերը նշանակվելու էին սուլթանի կողմից:
- զ. Ռոստոմի գլխավորությամբ Թիֆլիսում ստեղծված «Ինքնապաշտպանության

կենտրոնական կոմիտեի» նպատակը Անդրկովկաս արշաված թուրքական զորքին դիմակայելն էր:

է. Նապոլեոն I կայսեր անունից Ֆրանսիայի հյուպատոսը Թուրքիայից պահանջեց դադարեցնել Ջեյթունի պաշարումը:

- 1) ա, բ, ե 2) բ, գ, ե 3) դ, գ, է 4) ա, գ, է

79. Ստորև թվարկվածներից ո՞ր իրադարձություններն են տեղի ունեցել 1891 թ.

- ա. «Խարիսխ» զինագործարանի հիմնումը Թավրիզում
- բ. «Պաշտպան հայրենյաց»-ի գործունեության դադարեցումը
- գ. Հնչակյան կուսակցության առաջին համագումարի հրավիրումը
- դ. Հնչակյան կուսակցության միացումը ՀՅԴ-ին
- ե. Աղբյուր Սերոբի վերադառնալը Ռուսիայից հայրենի Խլաթ
- զ. «Համիդիե» հեծելազնդերի ստեղծումը
- է. Կովկասի կառավարչապետ Գ. Գոլիցինի դեմ մահափորձը
- ը. Բաբը Ալիի ցույցը
- թ. Յուպիտերի վեցերորդ արբանյակի հայտնաբերումը Խորեն Սինանյանի կողմից
- ժ. ՀՅԴ առաջին ընդհանուր ժողովի (համագումարի) հրավիրումը

- 1) ա, գ, է 2) ա, դ, գ 3) ե, թ, ժ 4) բ, գ, ը

80. Ստորև թվարկվածներից ո՞ր իրադարձություններն են տեղի ունեցել 1892 թ.

- 1) ՀՅԴ առաջին ընդհանուր ժողովի (համագումարի) հրավիրումը
- 2) Աստրախանում Մ. Առուստամովի պայքարը խոլերայի համաճարակի դեմ
- 3) Յուպիտերի վեցերորդ արբանյակի հայտնաբերումը Խորեն Սինանյանի կողմից
- 4) Կ. Պոլսում Հ. Վարդոլվյանի թատրոնի հիմնումը
- 5) «Արշակ Բ» օպերայի ստեղծումը
- 6) Արաբոյի՝ ՀՅԴ-ին անդամագրվելը
- 7) Ս. Կուկունյանի արշավանքը

81. Տրված շարքից ո՞րն է ընդգրկում Արցախի (Խամսայի) մելիքությունները.

- 1) Ջրաբերդի, Գյուլիստանի, Խաչենի, Քարազլիսի, Դիզակի
- 2) Ջրաբերդի, Գյուլիստանի, Խաչենի, Վարանդայի, Դիզակի
- 3) Գետաշենի, Գյուլիստանի, Ջրաբերդի, Հադրութի, Խաչենի
- 4) Շոշի, Քարինտակի, Գյուլիստանի, Վարանդայի, Դիզակի

82. Բերված փաստարկներից որո՞նք են ճիշտ.

- ա. Խաչատուր Գաղատացին այցելել է պատերազմական գործողությունների շրջան և բանակցություններ վարել վենետիկյան բանակի հրամանատարության հետ:
- բ. Պարսկական տիրապետության դեմ առավել եռանդուն գործող աֆղանները 1722 թ. պաշարում և գրավում են Պարսկաստանի մայրաքաղաք Թեհրանը:

- գ. 1725 թ. մարտին թուրքական երեք զորամաս ներխուժեց Արցախի Ջրաբերդի գավառ:
- դ. 1730 թ. մահացավ Դավիթ բեկը, և դադարեց Սյունիքի զինված պայքարը:
- ե. Հովսեփ Էմինը, Անգլիայում ռուսական դեսպան Գորչակովից վերցնելով Ռուսաստանի վարչապետ Վորոնցովին ուղղված հանձնարարական ուղերձը, 1759 թ. ճանապարհվում է Պետերբուրգ:
- զ. Մ. Սարաֆյանի ծրագրի համաձայն՝ Հայաստանն ազատագրելուց հետո պետք է ստեղծվեր հանրապետություն, և անկախ մելիքներից մեկը դառնար Հայաստանի թագավոր:
- է. Ըստ «Որոգայթ փառաց»-ի՝ հայոց պետության բարձրագույն օրենսդիր մարմինը՝ «Հայոց տունը», պետք է կազմվեր ժողովրդի կողմից ընտրված փոխանորդներից:
- ը. 1810 թ. ռուս գեներալ Ի. Գուրովիչը, դադարեցնելով Ախալցխա քաղաքի պաշարումը, նահանգի 1500 ընտանիքների տեղահանում է և բռնագաղթեցնում Վրաստան:
- թ. Գահաժառանգ Աբաս-Միրզան 60-հազարանոց բանակով 1826 թ. հուլիսին ներխուժում է Ղարաբաղ և պաշարում Շուշիի բերդը:

- 1) ա, դ, է 2) ա, է, թ 3) գ, ե, ը 4) բ, դ, գ

83. Բերված փաստարկներից որոնք են սխալ.

- ա. 1827 թ. հոկտեմբերի 1-ի առավոտյան ռուսական զորքերը և հայ կամավորները գրոհով մտնում են Երևանի բերդ:
- բ. 1878 թ. գահ բարձրացած սուլթան Աբդուլ Համիդ II-ը կայսրությունը հանդիսավորությամբ հռչակեց սահմանադրական հանրապետություն:
- գ. 1863 թ. մարտի 17-ին Կ. Պոլսի Ազգային ընդհանուր ժողովը վավերացնում է «Ազգային սահմանադրությունը»:
- դ. 1892 թ. հունիսին Թիֆլիսում սկսվում է ՀՅԴ առաջին ընդհանուր ժողովը՝ համագումարը:
- ե. 1891 թ. սուլթան Աբդուլ Համիդը քրդական անհնազանդ ջոկատներից ստեղծեց մոտ 50 հեծելազնդեր, որոնք կոչվեցին համիդիե:
- զ. 1895 թ. սեպտեմբերի 18-ին Կ. Պոլսում հնչակյանները կազմակերպեցին 4-հազարանոց խաղաղ ցույց:
- է. 1906 թ. օգոստոսի 17-ին Մ. Խրիմյանի նախաձեռնությամբ էջմիածնում իր աշխատանքները սկսեց Ռուսաստանում ապրող հայերի պատգամավորական Կենտրոնական ժողովը:
- ը. 1914 թ. հոկտեմբերի 21-ին Նիկոլայ II-ը պաշտոնապես պատերազմ հայտարարեց Օսմանյան կայսրությանը:
- թ. 1916 թ. փետրվարի 16-ին ռուսական զորքերը գրավեցին Էրզրումը:

- 1) բ, ե, ը 2) ա, դ, գ 3) բ, գ, ե 4) գ, է, թ

87. Ովքեր էին մտնում հայ ֆիդայիների համաստեղության մեջ.

- 1) Հ. Արշարունին, Պողոս Նուբարը, Ռ. Պատկանյանը, Ս. Շահագիզը
- 2) Սպաղանցի Մակարը, Վարդանը (Սարգիս Մեհրաբյան), Իշխանը (Հովսեփ Արղության), Նիկոլ Դումանը (Նիկողայոս Տեր-Հովհաննիսյան)
- 3) Հ. Քաջազնունին, Ա. Խատիսյանը, Հ. Օհանջանյանը, Ս. Վրացյանը
- 4) Հ. Չանջյանը, Ա. Արծրունին, Հ. Ադամյանը, Լ. Տիգրանյանը

88. Խանասորի արշավանքի ղեկավարներն էին՝

- 1) Գևորգ Չավուշը, Աղբյուր Սերոբը, Անդրանիկը, Հրայրը
- 2) Սևքարեցի Սաքոն, Վարդանը, Իշխանը, Ն. Դումանը
- 3) Թորգոմը, Դրոն, Մեծն Մուրադը, Սեբաստացի Մուրադը
- 4) Գուրգենը, Վազգենը, Թորոս Ծառուկյանը, Մարգար վարժապետը

89. Որտեղ եղան Հայ եկեղեցու գույքի բռնագրավման դեմ հայերի առաջին ցույցերը.

- 1) Ալեքսանդրապոլ, Երևան, Ախալքալաք, Գանձակ
- 2) Երևան, Սեբաստիա, Ալեքսանդրապոլ, Կարս
- 3) Ախալքալաք, Շամախի, Ախալցխա, Երևան
- 4) Երևան, Վան, Դիարբեքիր, Սարիղամիշ

90. Հայ-թաթարական (աղբեջանական) ընդհարումների ժամանակ Երևանի նահանգում, Թիֆլիսում, Ղարաբաղում և Զանգեզուրում ինքնապաշտպանական կոմիտեերը ղեկավարեցին՝

- 1) Համազասպը, Դրոն, Հակոբ Կոտոյանը, Մուրադը
- 2) Անդրանիկը, Գևորգ Չավուշը, Վազգենը, Աղբյուր Սերոբը
- 3) Թորգոմը, Նազարեթ Չավուշը, Անդրանիկը, Հրայրը
- 4) Նիկոլ Դումանը, Արմեն Գարոն, Համազասպը, Փարամազը

91. Հայոց ազգային բյուրոյի գործադիր (կարգադրիչ) մարմնի մեջ մտնում էին՝

- 1) Ռոստոմը (ղեկավար), Վռամյանը (Օ. Դերձակյան), Իշխանը (Նիկողայոս Պողոսյան), Արամը, Վ. Փափագյանը, Քեռին, Անդրանիկը
- 2) Հ. Արղությանը (ղեկավար), Ս. Վրացյանը, Ն. Աղբալյանը, Արմեն Գարոն, Ա. Գյուլխանդանյանը, Հ. Չավրյանը, Ռոստոմը
- 3) Հ. Արղությանը (ղեկավար), Անդրանիկը, Դրոն, Համազասպը, Քեռին, Վարդանը, Ն. Աղբալյանը, Ա. Ջանփոլադյանը
- 4) Ա. Խատիսյանը (ղեկավար), Ա. Ահարոնյանը, Գ. Կաֆյանը, Մ. Վարդանյանը, Հ. Պոյաճյանը, Ա. Արփիարյանը, Մ. Տամատյանը

92. «Թուրքահայաստանի մասին» հրովարտակի նախագիծը կազմող հանձնաժողովի մեջ մտնում էին՝

- 1) Ս. Շահումյանը, Ա. Մյասնիկյանը, Ս. Լուկաշինը, Մ. Պապաջանյանը, Ա. Զուրաբյանը
- 2) Վ. Ավանեսյանը, Վ. Տերյանը, Ս. Լուկաշինը, Պ. Պռոշյանը, Ռոստոմը
- 3) Լ. Կարախանը, Գ. Զիչերինը, Ի. Ստալինը, Վ. Լենինը, Ա. Բեկզադյանը
- 4) Ս. Կասյանը, Ա. Մոսվյանը, Գ. Աթարբեկյանը, Գ. Ալիխանյանը, Ա. Նուրիջանյանը

93. Թվարկվածներից որը «Հայասեր-ազգասեր» խմբակի նպատակներից չէ.

- 1) ցարական և թուրքական տիրապետությունից հայ ժողովրդի ազատագրումը
- 2) հայոց լեզվի և դպրոցի պահպանումը
- 3) թուրքահայ եղբայրներին զենքի մատակարարումը
- 4) սոցիալիզմի կառուցումը

94. Ընտրել երկու ճիշտ պնդումները.

- 1) Ֆլորենցիայում Իսրայել Օրուն մերժում են Հայաստանի ազատագրման գործին մասնակցել, քանի որ Թուրքիայի հետ 1688 թ. արդեն կնքել էին հաշտության պայմանագիր:
- 2) Հայերի պայքարին օժանդակելու ռուսական խոստումներով Ռուսաստանից Արցախ ժամանեց նաև հայազգի Իվան Կարապետը:
- 3) Պարսկական իշխանությունը ճանաչեց Դավիթ բեկի իշխանությունը՝ իրավունք վերապահելով դրամ հատելու, և նրա հետ դաշինք կնքեց:
- 4) Խամսայի մելիքություններից բացի՝ Արցախի ինքնավարության մարմնավորում էր նաև Աղթամարի կաթողիկոսությունը:
- 5) Աստրախանի մեծահարուստ Մովսես Սարաֆյանի ծրագրով առաջարկվում էր Հայաստանն ազատագրելուց հետո ստեղծել հանրապետություն՝ խորհրդարանական կառուցվածքով:

95. Ընտրել ճիշտ պնդումը.

- 1) Հայ իրականության մեջ առաջին հրապարակախոսական տպագիր աշխատությունը Շահամիր Շահամիրյանի «Որոզայթ փառաց»-ն է:
- 2) Մովսես Բաղրամյանի «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ» գիրքը սահմանադրական միապետություն ստեղծելու ծրագիր էր և հայ քաղաքական մտքի կարևոր նվաճումներից մեկը:
- 3) 1804-18013 թթ. ռուս-պարսկական պատերազմում ցուցաբերած մեծ ծառայության համար Վանի Աթաբեկյանն արժանանում է շնորհակալության և գեներալ Ցիցիանովից ստանում նրա անձնական արծաթե ժամացույցը:
- 4) 1808 թ. սեպտեմբերին ռուսական զորքի նոր գլխավոր հրամանատար գեներալ Ա. Տորմասովի զորքերը երկրորդ անգամ արշավում են Երևանի վրա:

96. Ընտրել երկու ճիշտ պնդումները.

- 1) Ֆրանսիայի կայսր Նապոլեոն I-ը Օսմանյան կայսրությունում գտնվող Երուսաղեմի սուրբ վայրերին տիրելու համար տարբեր եկեղեցիների (կաթոլիկ, ուղղափառ, Հայ առաքելական, հուդայական, բողոքական) միջև ընթացող վեճը միջազգային քննարկման հարց դարձրեց:
- 2) Ղրիմի պատերազմում կրած պարտությունից հետո Ռուսաստանի արտաքին քաղաքականության գլխավոր խնդիրը դարձավ միջերկրածովյան տարածաշրջանում և Միջին Ասիայում իր թուլացած դիրքերի ամրապնդումն ու միջազգային հեղինակության վերականգնումը:

- 3) 1876 թ. գահ բարձրացած սուլթան Աբդուլ Համիդ II-ը հանդիսավորությամբ ազդարարեց երկրում սահմանադրության ընդունումը, որով կայսրությունն անվանապես դարձավ սահմանադրական միապետություն:
- 4) Աբդուլ Համիդը, ստանալով Մեծ Բրիտանիայի աջակցությունը, մերժեց մյուս տերություններին՝ կայսրության քրիստոնյա ժողովուրդների համար անհապաղ բարենորոգումներ իրագործելու պահանջը՝ պատճառաբանելով, որ այդ քայլը նախ՝ միջամտություն է իր երկրի ներքին գործերին, և երկրորդ՝ սահմանադրության ընդունումով տերությունում լուծվում են ոչ միայն քրիստոնյաների, այլև ամբողջ բնակչության հիմնախնդիրները:
- 5) 1877–1878 թթ. ռուս–թուրքական պատերազմում ևս հայերը զգալի օգնություն ցույց տվեցին ռուսական զորքերին, Կ. Պոլսի Հայոց պատրիարք Ներսես Վարժապետյանն ու Ազգային ժողովի երեսփոխանները՝ պատգամավորները, պաշտոնապես հանդես եկան Ռուսաստանին աջակցելու կոչով:

97. Ընտրել երկու ճիշտ պնդումները.

- 1) Սան Ստեֆանոյի ռուս–թուրքական հաշտությունը կնքվեց Մանուկ բեյ Միրզայանի ամառանոցում:
- 2) Ըստ Սան Ստեֆանոյի պայմանագրի 16–րդ հոդվածի՝ ստացվում էր, որ Օսմանյան կայսրությունում հայերի հալածանքների մեղավորները ոչ թե թուրքական իշխանություններն են, այլ արաբներն ու քրդերը:
- 3) Լոնդոնում լորդ Զեյմս Բրայսի գլխավորած հայասիրական շրջանները, ի պաշտպանություն Հայկական հարցի, մեծ հանրահավաք են կազմակերպում, սակայն Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Սալբերին Խրիմյանին և Չերազին տալիս է խուսափողական պատասխաններ:
- 4) Բեռլինի վեհաժողովի նախօրյակին՝ մայիսի 25–ին կնքված ֆրանս–թուրքական գաղտնի համաձայնագրով Ֆրանսիան ստանում է Կրետե կղզին՝ փոխարենը խոստանալով պաշտպանել թուրքական պահանջները:
- 5) Հայկական հարցը, որ միջազգային ասպարեզ էր իջել, ուներ նաև ներքին բովանդակություն. հայ ժողովուրդը դրանով առաջին հերթին հասկանում էր արևմտահայության ազատագրության հարցը:

98. 1844 թ. ստեղծված Կ. Պոլսի Ազգային ժողովին մի քանի տարի անց փոխարինեցին նոր մարմիններ՝

- 1) Ազգային հոգևոր և գերագույն ժողովները
- 2) Հայոց տունն ու հոգևոր գերագույն մարմինը
- 3) սինոդն ու թեմակալ առաջնորդների խորհուրդը
- 4) Ազգային կենտրոնական վարչությունն ու տանուտեր ամիրաները

99. Ընտրել սխալ պնդումները.

- ա. Ազգային սահմանադրության համաձայն՝ ստեղծվում էր հայության կյանքը կազմակերպող մարմին՝ «Հայոց տուն», որը պետք է կազմվեր ժողովրդի կողմից ընտրված փոխանորդներից:
- բ. Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի խորհրդով՝ սուլթանական կառավարությունը ձեռնամուխ եղավ որոշ բարեփոխումների՝ կանխելու համար թուրքահպատակ ժողովուրդների ազատագրական շարժումները:
- գ. Կ. Պոլսում տեղի հայ մեծահարուստ ամիրայական դասը, օգտագործելով սուլթանական իշխանությունների հետ իր սերտ կապերը, տնօրինում էր մայրաքաղաքի, նաև գավառահայության ողջ կյանքը՝ եկեղեցական, դպրոցական, տնտեսական ու իրավական հարցերը:
- դ. Ն. Ռուսինյանի առաջարկությամբ արևմտահայ համայնքի կյանքին վերաբերող կանոնադրությունը կոչվեց Ազգային սահմանադրություն:
- ե. Քանի որ մայրաքաղաք Կ. Պոլսի հայությանը հսկողության տակ պահելն ավելի հեշտ էր, օսմանյան իշխանությունները հոգ էին տարել, որ փոխանորդների մեջ մեծ թիվ կազմեն գավառահայերը:

- 1) ա, բ 2) ա, ե 3) գ, դ 4) գ, ե

100. Ընտրել սխալ պնդումները.

- ա. Հայ երիտասարդության համար XIX դ. երկրորդ կեսին առաջնային էր շարունակում մնալ կենսական համարվող սոցիալիստական (ընկերվարական) գաղափարախոսությունը, որի գլխավոր բովանդակությունը արդար, իրավահավասար հասարակության ստեղծումն էր:
- բ. Հնչակյանների հայացքներում առանձնակի տեղ ունեւր սոցիալիզմի գաղափարը, որին հասնելու միջոցը նրանք համարում էին գյուղական համայնքը:
- գ. Փաստորեն հայ քաղաքական մտքի պատմության մեջ հնչակյաններն առաջինն էին, որ Հայկական հարցի լուծումը համարում էին ամբողջական հայրենիքում պետականության վերստեղծումը:
- դ. ՀՅԴ ծրագրի «Նպատակ» բաժնում ասվում էր, որ ապստամբության ճանապարհով անհրաժեշտ է հասնել Արևմտյան Հայաստանի ազատությանը, որով այդ փուլում հասկացվում էր հայկական նահանգների անկախության հաստատում:
- ե. ՀՅԴ-ն, հաշվի առնելով, որ հայ ժողովուրդն իր հայրենիքում գտնվում է տարբեր երկրների տիրապետության տակ և սփռված է աշխարհով մեկ, կուսակցության կազմակերպական ձև ընտրեց ապակենտրոն սկզբունքը:

- 1) ա, գ 2) բ, գ 3) դ, ե 4) ա, դ

101. Ընտրել ճիշտ պնդումները.

- 1) Ֆիդայական շարժման հանդես գալն Արևմտյան Հայաստանում հայ ժողովրդի քաղաքական և տնտեսական ծանր ու օրհասական վիճակի հետևանք էր, այսինքն՝ ուներ իրական պատճառներ:
- 2) Առաջին հայդուկները հայերի նկատմամբ թուրքական իշխանությունների կողմից նոր բռնությունների առիթ չտալու նպատակով հաճախ ներկայացել են որպես քրդեր և հանդես եկել «չեյլոներ» կոչվող քրդական հակակառավարական ջոկատների կազմում:
- 3) Արաբոն սկզբում հանդես է եկել իբրև անհատ վրիժառու և 1885 թ. «որպես քուրդ» զինված հարձակումներ գործել թուրքական հարկահավաքների վրա:
- 4) Աղբյուր Սերոբը զգալի աշխատանք է տարել հայ-քրդական և հայ-ասորական դաշինք ստեղծելու ուղղությամբ:
- 5) Աբդուլ Համիդ II-ը Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածի պահանջները կատարելով էր փորձում լուծել Հայկական հարցը:
- 6) Հրայր Դժոխքը հեղինակել է հայդուկային պայքարի իսկական դասագիրք՝ «Մարտական հրահանգներ» հայտնի կանոնագիրքը:
- 7) 1890-ական թթ. կեսերին հայդուկապետերի մեծ մասն արդեն հնչակյան էր, իսկ միավորված ջոկատները գլխավորապես գործում էին Հնչակյան կուսակցության հովանու ներքո:

102. Ընտրել ճիշտ պնդումները.

- 1) Հրայր Դժոխքի կարծիքով՝ կուսակցությունները միայն միջոց են ժողովրդի ազատագրական պայքարը կազմակերպելու համար:
- 2) Աբդուլ Համիդ II-ն ընտրեց Հայկական հարցի լուծման ուրույն ճանապարհ՝ հայերի ֆիզիկական բնաջնջումը:
- 3) Հեղափոխության ուժերը մասնատելու նպատակով ցարական իշխանությունները սկսեցին վարել բազմազգ կայսրության ժողովուրդների կրոնական, դավանական և ազգային իրավունքների ընդլայնման քաղաքականություն:
- 4) 1905-1906 թթ. ազգամիջյան կռիվներից հետո հայ հասարակական-քաղաքական շրջանակներում սկսեցին արձարծել երկրամասի հայկական բնակավայրերը միավորելու և Հայաստանի անկախություն հռչակելու գաղափարը:
- 5) Օսմանյան կայսրության հայ և այլ քրիստոնյա ժողովուրդների կոտորածների դարավոր քաղաքականությունը 1890-ական թթ. սկզբից դրվեց պետական մակարդակի վրա:
- 6) 1905-1906 թթ. հայ-թաթարական ընդհարումների փորձը ցույց տվեց, որ հայերը չեն կարող հակահարված տալ ոչ բարյացակամ հարևաններին:
- 7) Օսմանյան Թուրքիայի դեմ ընդհանուր ապստամբության կազմակերպման կողմնակիցները՝ Աղբյուր Սերոբը (Վասպուրականում), Արաբոն (Սասուն-Տարոնում) և նրանց համախոհները, XIX դ. վերջին – XX դ. սկզբին անդուլ աշխատանք էին տանում ժողովրդին վճռական ելույթի պատրաստելու համար:

103. Ընտրել սխալ պնդումները.

- 1) Ֆիդայական շարժումը դրսից՝ Այսրկովկասից ներմուծված խորթ երևույթ էր, և դրա համար Օսմանյան կայսրությունում նախադրյալներ չկային:
- 2) Հայդուկային պայքարի մարտավարության կողմնակիցներ Անդրանիկը, Գևորգ Չավուշն ու նրանց համախոհները փորձում էին պարտիզանական ու վրեժխնդրական ձեռնարկներով կանխել բռնությունները, ոգևորել ժողովրդին և նրան դուրս բերել հուսահատական վիճակից:
- 3) Ֆիդայական շարժումը լայն թափ ստացավ հատկապես XX դարի սկզբներին, երբ դուրս եկավ քաղաքական կուսակցությունների, մասնավորապես դաշնակցության ազդեցությունից և հսկողությունից ու դարձավ ավելի անկաշկանդ:
- 4) 1904 թ. Սասունի ինքնապաշտպանությունից հետո ազատագրական պայքարի ղեկավարները Մշո դաշտի հայությանը չվտանգելու մտահոգությամբ վերջ տվեցին պարտիզանական գործողություններին և հայդուկներին հանեցին Տարոնից:
- 5) Ազատագրական պայքարի ղեկավարները 1904 թ. որոշեցին կազմակերպական աշխատանքները շարունակելու նպատակով Գևորգ Չավուշին մի փոքր խմբով հետ ուղարկել Մուշ և Սասուն:
- 6) Գևորգ Չավուշը, մի շարք, հատկապես Բաբշենի կոլում տարած հաղթանակների շնորհիվ դարձել էր հայ ժողովրդի ազատարարի խորհրդանիշ:
- 7) Սասունի 1904 թ. հերոսական ինքնապաշտպանությունն ավարտվեց պարտությամբ: Այն ցույց տվեց, որ մասնակի ընդհարումներով հնարավոր չէ լուծել արևմտահայության ազատագրման խնդիրը:

104. Ընտրել սխալ պնդումները.

- 1) Անդրանիկը դեմ էր պարտիզանական, անհատական պայքարին և հաղթանակի հասնելու միակ ուղին համարում էր ժողովրդին համընդհանուր ապստամբության նախապատրաստելը:
- 2) ՀՅԴ-ն, հարաբերություններ հաստատելով երիտթուրքերի հետ, անհրաժեշտ էր համարում սուլթանական բռնակալության դեմ պայքարում համագործակցել հատկապես հույն նարոդնիկների հետ:
- 3) Դաշնակցությունն իր նոր ծրագրում (1907 թ.) ավելի ընդգծեց կուսակցության սոցիալիստական (ընկերվարական) գաղափարախոսությունը:
- 4) Դաշնակցությունն իր նոր ծրագրում (1907 թ.) ազգային-քաղաքական պահանջների տեսակետից առաջադրեց Արևմտյան Հայաստանի լիակատար անկախության պահանջը:
- 5) 1907 թ. ղեկտեմբերին Փարիզում տեղի ունեցած Օսմանյան կայսրության ընդիմադիր ուժերի երկրորդ համաժողովը որոշեց մինչև 1909 թ. զինված ապստամբության միջոցով տապալել համիդյան բռնապետությունը և հաստատել սահմանադրական կարգեր:

6) Երիտթուրքերի կողմից ֆրանսիական հեղափոխությունից ընդօրինակած «ազատություն, հավասարություն, եղբայրություն» կարգախոսներն այդպես էլ մնացին թղթի վրա:

7) Իշխանության գալով՝ Երիտթուրքերը ոչ միայն սահմանադրական քիչ թե շատ էական բարեփոխումներ չիրագործեցին, այլև ավելի վատթար կերպով շարունակեցին սուլթան Աբդուլ Համիդի որդեգրած հակահայ քաղաքականությունը:

105. Թվարկվածներից առանձնացնել այն կետերը, որոնք բնորոշում են հայ ազատագրական ուժերի մարտավարությունում՝ Երիտթուրքերի հեղաշրջման սկզբնական շրջանում կատարած փոփոխությունները.

ա. Գնալով զիջումների՝ հայ քաղաքական կուսակցությունները ճանաչեցին օսմանյան Թուրքիայի տարածքային ամբողջականությունը:

բ. Առաջադրեցին Արևմտյան Հայաստանի յոթ վիլայեթներում լայն ինքնավարության պահանջը:

գ. Սկսեցին բացահայտ գործել և իրավունք ստացան ստեղծելու զորամիավորումներ:

դ. Հրաժարվեցին Ռուսաստանի օգնությունից:

ե. Պահանջեցին մեծ տերություններից չխառնվել Հայկական հարցի լուծմանը:

զ. Դադարեցվեց ընդհատակյա գործունեությունը, ցրվեցին հայդուկային խմբերը:

է. Օրակարգից միառժամանակ հանվեց արևմտահայությանը ընդհանուր զինված ապստամբության նախապատրաստելու հարցը:

1) բ, ե, գ

2) գ, ե, դ

3) ա, գ, է

4) դ, գ, է

106. Ընտրել ճիշտ պնդումները.

1) Գլխավոր պատճառը, որ դրդեց Երիտթուրքերին ներքաշվելու Առաջին համաշխարհային պատերազմի մեջ, թուրք-ռուսական հակամարտությունն էր:

2) 1914 թ. բռնկված ռուս-թուրքական պատերազմում ցարական ռազմաքաղաքական վերնախավը ձգտում էր ընդլայնելու իր ազդեցության ոլորտները՝ տեր դառնալու սևծովյան նեղուցներին և Կ. Պոլսին, ազատորեն դուրս գալու դեպի Միջերկրական ծով, նվաճելու Արևմտյան Հայաստանը, ամրապնդելու իր դիրքերն Իրանում:

3) Ժամանակավոր կառավարությունը Հայկական հարցի լուծումը տեսնում էր անկախ Հայաստանի ստեղծման մեջ:

4) Անդրկովկասի կոմիսարիատը երկրամասի սոցիալ-դեմոկրատական և սոցիալիստական կուսակցությունների դաշինք էր, որին արգելվեց մաս կազմել մուսուլմանների ներկայացուցիչներին:

5) Անդրկովկասի գրեթե բոլոր ուժերը ողջունեցին բոլշևիկյան հեղաշրջումը և պատրաստակամություն հայտնեցին համագործակցելու խորհրդային իշխանության հետ:

107. Բերված պնդումներից որո՞նք են ճիշտ.

- ա. Հայաստանի ազատագրությունը, ըստ Մ. Սարաֆյանի ծրագրի, պետք է իրականանար միայն հայերի ուժերով՝ օտար լծի դեմ համաժողովրդական ապստամբության շնորհիվ:
- բ. Արևելյան Վրաստանն ընդգրկող Քարթլի-Կախեթի թագավորության սահմաններում էին ներառված հարավային Հայաստանի մի քանի գավառներ՝ Լոռին, Փամբակը, Շամշադինը, Սյունիքը, Օրդուբադը:
- գ. Ռուսական արքունիքը Հայ եկեղեցու միջոցով իր ազդեցությունն էր պահպանում նաև արևմտահայության և գաղութահայության վրա:
- դ. Բեռլինում մեծ տերությունների ներկայացուցիչներն ուշադրությամբ ծանոթացան Մ. Խրիմյանի գլխավորած հայ պատվիրակների խնդրագրերին և նրանց թույլ տվեցին մասնակցել վեհաժողովին:
- ե. Կայսերական Գերմանիան և Ավստրո-Հունգարիան գործնական լուրջ քայլերի դիմեցին՝ կանխելու կամ արգելակելու իրենց դաշնակից օսմանյան Թուրքիայի կողմից կատարվող ցեղասպանությունը:
- զ. 1917 թ. Փետրվարյան հեղափոխությունից հետո ռուսական նոր իշխանությունը չփոխեց իր վերաբերմունքն Արևմտյան Հայաստանի և հայերի նկատմամբ և հայկական մարզերում շարունակեց նախկին քաղաքականությունը վարել:
- է. Երզնկայի զինադադարից հետո կովկասյան ռուսական զորքերի հետքաշումը ճակատային դիրքերից շատ արագորեն ընդունեց ռազմաճակատի տարերային փլուզման և զորքերի անկազմակերպ նահանջի բնույթ:
- ը. Անդրանիկը, Ղարաբաղիսայից հյուսիս ընկած հատվածից հետ մղելով թուրքական երեք հարձակում, գաղթականության հետ անցավ Դսեղ:
- թ. Հայտնի նկարիչ Ստեփանոս Ներսիսյանը Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիայում սովորել է Գևորգ Բաշինջաղյանի հետ:

1) գ, է, ը

2) ա, դ, է

3) գ, ե, զ

4) բ, ը, թ

108. Հայ կամավորական շարժմանը վերաբերող պնդումներից որո՞նք են սխալ.

- ա. Հայոց ազգային բյուրոյի առաջադրած քաղաքական մերձավորագույն նպատակը հանգում էր Արևմտյան Հայաստանի ինքնավարության պահանջին:
- բ. Ստեղծվեց Հայոց ազգային բյուրոյի գործադիր (կարգադիր) մարմին՝ Հ. Արղությանի գլխավորությամբ:
- գ. Գործադիր կարգադիրի մարմնի մեջ մտան Հ. Զավարյանը, Ն. Դումանը, Արմեն Գարոն, Ավ. Ահարոնյանը, Ալ. Խատիսյանը, իսկ 1915 թ.՝ նաև Ռոստոմը:
- դ. Կամավորական շարժման գլխավոր նպատակն էր իրականացնել հայկական նահանգների ու Կիլիկիայի ինքնավարության հաստատումը ԱՄՆ-ի հովանու ներքո:
- ե. Կամավորներ էին գալիս Ռուսաստանի ամենատարբեր վայրերից, Բալկաններից և ԱՄՆ-ից:
- զ. 1914 թ. նոյեմբերի սկզբին արդեն ձևավորվել էին կամավորական չորս ջոկատներ:

- է. Առաջին ջոկատի հրամանատարն Անդրանիկն էր, իսկ քաղաքական մասի և ռուսական հրամանատարության հետ կապերը վարում էր Ն. Աղբալյանը:
- ը. Պահեստային ուժերի հիման վրա կազմակերպվում է V խումբը՝ Վարդանի գլխավորությամբ:
- թ. Նորաստեղծ VI ջոկատի դրամական ապահովումն ու կամավորների հավաքագրումն ստանձնեց Արմենական կուսակցությունը:

- 1) բ, գ, թ 2) գ, է, ը 3) ա, բ, ե, է 4) գ, դ, է, թ

109. Ընտրել բացառապես այն ճակատամարտերից կազմված շարքը, որոնցում ռուսական զորքերի տարած վճռական հաղթանակներն Աբաս Միրզայի զորքերի դեմ նպաստեցին հաշտության պայմանագրի կնքմանը.

- 1) Ասլանդուզի, Մեղրու, Ղարաբաղի և Դիզակի
- 2) Դիզակի, Ղարաբաղի, Մեղրու և Լենքորանի
- 3) Ասլանդուզի, Լենքորանի, Ղարաբաղի և Մեղրու
- 4) Օշականի, Աշտարակի, Ղարադաղի և Մեղրու

110. Տրված պնդումներից որո՞նք են սխալ.

- ա. XIX դ. կեսերին եվրոպական մեծ տերությունների միջև սրվեց պայքարն Օսմանյան կայսրությունում ազդեցություն տարածելու համար:
- բ. Ֆրանսիայի կայսր Նապոլեոն I-ը Օսմանյան կայսրությունում գտնվող Երուսաղեմի սուրբ վայրերին տիրելու նպատակով տարբեր եկեղեցիների միջև ընթացող վեճը միջազգային քննարկման հարց է դարձրել և ավելի լայն իրավունքներ է պահանջել կաթոլիկ եկեղեցու համար:
- գ. XIX դ. կեսերին Օսմանյան կայսրությունում ազդեցություն տարածելու համար եվրոպական մեծ տերությունների միջև հարաբերությունների հետագա սրումը 1853 թ. աշնանը հանգեցրել է ռուս-թուրքական պատերազմի:
- դ. Ղրիմի պատերազմում կրած պարտությունից հետո սևծովյան տարածաշրջանում և Բալկանյան թերակղզում իր թուլացած դիրքերն ամրապնդելու և միջազգային հեղինակությունը վերականգնելու նպատակով Անգլիան 1870-ական թթ. կեսերին պաշտպանել է օսմանյան տիրապետության դեմ ապստամբած բալկանյան ժողովուրդներին:
- ե. 1876 թ. Կ. Պոլսի ժողովում սուլթան Աբդուլ Համիդ II-ը, ստանալով Սարդինական թագավորության աջակցությունը, մերժում է կայսրության քրիստոնյա ժողովուրդների համար անհապաղ բարեփոխումներ իրագործելու մեծ տերությունների պահանջը, ինչն ավելի է սրում ռուս-թուրքական հարաբերությունները և հանգեցնում նոր պատերազմի:
- զ. 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքում հայության լայն զանգվածներ, հատկապես ոգեշնչվելով այն հանգամանքից, որ ռուսական բանակի հրամանատարական կազմում զգալի թիվ էին կազմում ազգությամբ հայ ակա՛նավոր զորավարներ, զինվորագրվում են ռուսական բանակին, պարեն մատակարարում զորքերին, իրականացնում հետախուզական աշխատանք, հանգանակություններ կատարում:

է. 1877 թ. Արշակ Տեր-Ղուկասովի ջոկատը, հաղթական կռիվներ մղելով թուրքական զորքերի դեմ և հաջորդաբար գրավելով Բայազետը, Դիադինն ու Ալաշկերտը, աջ թևում գործող ռուսական զորամասի պարտության պատճառով հունիսին նահանջի հրաման է ստանում:

ը. Բարձր դուռը՝ թուրքական կառավարությունը, վախենալով, որ 1877–1878 թթ. ռուս–թուրքական պատերազմում իրենց պարտությունը կարող է իրատեսական դարձնել նաև Արևմտյան Հայաստանի անկախացման ծրագիրը, հայերին սիրաշահելու քայլեր է կատարում:

1) ա, գ, զ

2) դ, է, ը

3) բ, դ, ե

4) բ, դ, ը

111. Տրված պնդումներից որոնք են սխալ.

ա. Եվրոպայում ընթացող հեղափոխությունները, հունգար, սլավոնական ժողովուրդների ազատագրական շարժումները՝ մի կողմից, իսկ հայոց ազգային–հասարակական կյանքի զարթոնքը՝ մյուս կողմից, պայմանավորեցին Հայաստանի ազատագրության գաղափարախոսության որակական նոր մակարդակի ձևավորումը XIX դ. երկրորդ կեսին:

բ. Փարիզի հաշտության նախօրյակին՝ 1856 թ. փետրվարին, Բարձր դուռը Մեծ Բրիտանիայի և Գերմանիայի խորհրդով հրապարակել է բարեփոխումների հրովարտակ՝ կանխելու համար թուրքահպատակ ժողովուրդների ազատագրական շարժումները:

գ. 1877–1878 թթ. ռուս–թուրքական պատերազմում Օսմանյան կայսրության պարտությունը ոգեշնչեց արևմտահայ զգուշավոր գործիչներին, և նրանք սկսեցին ավելի համարձակորեն խոսել հայկական խնդրի լուծման մասին և այդ նպատակով սկսեցին դիմումներ հղել Ռուսաստանին ու մյուս մեծ տերություններին:

դ. 1863 թ. մարտի 17–ին սուլթանի կողմից վավերացված արևմտահայերի Ազգային սահմանադրությունը դրական դեր է կատարել հայ հասարակական–քաղաքական կյանքում և նոր լիքք է հաղորդել հայ ազատագրական շարժմանը:

ե. Զեյթունի 1862 թ. ապստամբության ազդեցության ներքո Ս. Շահազիզը գրեց երգերի հանրահայտ զեյթունյան շարքը, իսկ հայ նշանավոր բանաստեղծ Մ. Պեշիկթաշլյանը ապստամբությունը համարեց «հայկական քաջասրտության փառավոր ապացույց»:

զ. Թուրքական կառավարության՝ ըմբոստ Զեյթուն լեռնագավառը իրեն ենթարկելու ջանքերն ավելի եռանդուն են դարձել, երբ Կովկասից ներգաղթած չերքեզները բնակեցվել են Մարաշի շրջակայքում:

է. 1862 թ. Աշիր փաշայի կազմակերպած գրոհը Զեյթունի վրա ավարտվում է նրանով, որ թուրքերը, կորցնելով ավելի քան 20 000 մարդ և իրենց ունեցած հրանոթները, փախուստի են դիմում:

ը. Զեյթունի 1862 թ. ապստամբությունը խոշոր ազդեցություն է ունեցել հայ ազատագրական շարժման հետագա ողջ ընթացքի վրա, և չնայած նրան, որ գավառակը կորցրել է իր կիսանկախ վիճակը, բայց համայնքի ներքին գործերում հայերը պահպանել են ինքնուրույնություն:

1) բ, ե, է

2) բ, գ, է

3) ա, է, ը

4) գ, զ, ը

112. Տրված պնդումներից որոնք են սխալ.

- ա. Հայկական հարցի հանդես գալը նոր խթան է դառնում ազատագրական խմբակների ու կազմակերպությունների ստեղծման, դրանց գաղափարական հասունացման համար:
- բ. Վախենալով հայերի ըմբոստացումից՝ «Սև խաչ» կազմակերպության՝ դատապարտված 40 հոգուց 5-ի նկատմամբ 1883 թ. ապրիլին կայացված մահվան դատավճիռը փոխարինվում է երկարաժամկետ բանտարկությամբ:
- գ. Վտանգավոր համարելով Փորթուգալյանի գործունեությունը՝ 1885 թ. մարտին իշխանությունները նրան վտարում են Վանից:
- դ. Հաշվի առնելով, որ հայ ժողովուրդն իր հայրենիքում գտնվում է տարբեր երկրների տիրապետության տակ և սփռված է աշխարհով մեկ՝ ՀՅԴ կուսակցության կազմակերպական ձև ընտրվեց ապակենտրոն սկզբունքը:
- ե. Արևմտահայության Ազգային սահմանադրության շուրջ մղվող պայքարի հետ միասին հայերի մեջ Ջեյթունի հերոսամարտն ամրապնդում է ազգային իրավունքները զինված պայքարով պաշտպանելու մտայնությունը:
- զ. «Միություն ի փրկություն» կազմակերպությունն իր բուն նպատակները չբացահայտելու համար պաշտոնապես հանդես է եկել «Երկրագործական ընկերություն» անունով:
- է. 1880–ական թթ. երկրորդ կեսին օսմանյան իշխանությունների օրեցօր սաստկացող բռնությունների դեմ ընդհանուր ճակատ ստեղծելու, միավորվելու, միմյանց հետ «դաշնակցելու» նպատակով ռուս նարոդնիկական և եվրոպական սոցիալիստական գաղափարներով տոգորված արևելահայ հեղափոխական երիտասարդությունը սկսում է գումարել միավորիչ ժողովներ:
- ը. «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության ղեկավարներից Գրիգոր Արծրունին զենք ու դրամական միջոցներ հայթայթելու նպատակով ուղարկվել է Արևելյան Հայաստան:
- թ. 1877–1878 թթ. պատերազմի օրերին կրկին ապստամբած զեյթունցիների պայքարի արդյունքում Մարաշի փաշան ստիպված է լինում Պապիկ իշխանին ճանաչել Ջեյթունի քաղաքագլուխ:

1) բ, գ, ը

2) բ, գ, ը

3) ա, դ, գ

4) ե, է, թ

113. Տրված պնդումներից որոնք են սխալ.

- ա. XIX դարի երկրորդ կեսին ստեղծված հայ ազգային կուսակցությունների շնորհիվ հնարավոր դարձավ որոշ չափով մեղմել ժողովրդի հարստահարումը, կազմակերպել նրա ինքնապաշտպանությունը, ուղղորդել ազատագրական շարժումները, պահպանել ազգային ոգին և սերունդներին նախապատրաստել նոր ու ավելի վճռական կոիվների:
- բ. Աբդուլ Համիդ II-ը հայերի ֆիզիկական բնաջնջման իր հրեշավոր ծրագրին տերության մահմեդական բնակչությանը նախապատրաստելու համար պաշտոնական գաղափարախոսություն դարձրեց պանիսլամիզմը և պանթյուրքիզմը:

- գ. Հնչակյան կուսակցության կազմակերպման ձև ընտրված ապակենտրոն սկզբունքի պայմաններում տարբեր կառույցների գործունեությունը համակարգելու նպատակով ստեղծվեցին հատուկ մարմիններ՝ բյուրոներ. մեկը՝ Թիֆլիսում, մյուսը՝ Թավրիզում:
- դ. XIX դարի վերջի հայդուկային պայքարը ցույց տվեց, որ անհատական պարտիզանական կոիվներով հնարավոր է հասնել ազգի ազատագրությանը:
- ե. Հայդուկային շարժման հանդես գալն Արևմտյան Հայաստանում հայ ժողովրդի քաղաքական ու տնտեսական ծանր ու օրհասական վիճակի հետևանք էր:
- զ. Բեռլինի վեհաժողովում Թուրքիայից ստանալով որոշակի զիջումներ՝ մեծ տեղություններն ամենևին մտադիր չէին ճնշել նրան հայկական բարենորոգումները կատարելու համար, ուստի օսմանյան կառավարությունը, օգտվելով առիթից, արևմտահայության նկատմամբ սաստկացրեց բռնությունները:
- է. 1900 թ. Բշարե Խալիլի սպանությունն իրականացնելուց հետո ֆիդայական շարժման հայտնի դեմքերից Հրայրը ստացել է Դժոխք մականունը:

- 1) ա, գ, զ 2) գ, դ, է 3) գ, դ, զ 4) բ, դ, ե

114. Տրված փաստարկներից որո՞նք են սխալ.

- ա. Անդրկովկասյան կոմիսարիատը չկարողացավ բարելավել երկրամասի իրավիճակը. ավելի վատացան ժողովրդի կենսապայմանները և այն, ըստ էության, դարձավ լոկ վրաց մենշևիկների կամակատարը:
- բ. 1917 թ. դեկտեմբերին արևմտահայ խորհրդի կայացրած արևմտահայ զորաբաժին (դիվիզիա) ստեղծվելու որոշման իրագործման նպատակով կյանքի է կոչվում գործադիր նոր մարմին՝ Հայաստանի ապահովության խորհուրդը:
- գ. «Թուրքահայաստանի մասին» դեկրետի նախագիծը կազմելու նպատակով դեռևս 1917 թ. ապրիլին ստեղծվել էր հանձնաժողով, որի կազմում էին Վառլամ Ավանեսյանը, Ավետիք Իսահակյանը, Սարգիս Լուկաշինը, ձախ էսէռ Պոռոշ Պոռոշյանը, իսկ դեկտեմբերից՝ Ռոստոմը:
- դ. 1917 թ. արևմտահայերից կազմվող դիվիզիայի հրամանատար է նշանակվում Արամ Մանուկյանը, և նրան շնորհվում է գեներալ-մայորի աստիճան:
- ե. 1917 թ. դեկտեմբերի սկզբներից ընթացող հաշտության բանակցությունների պայմաններում «Թուրքահայաստանի մասին» հրովարտակը վերածվեց ձևական փաստաթղթի, իսկ ռուսական զորքերի դուրսբերումը Արևմտյան Հայաստանից գրոյի հավասարեցրեց այն:
- զ. 1917 թ. վերջերին Անդրկովկասում և ռուս-թուրքական ճակատում ձևավորված ռազմաքաղաքական նոր իրադրությունը և «Թուրքահայաստանի մասին» հրովարտակը խանգարեցին, որ արևմտահայ զինուժի ստեղծման հարցը դրական ընթացք ստանա:

է. «Թուրքահայաստանի մասին» հրովարտակի դրական նշանակությունն այն էր, որ Խորհրդային Ռուսաստանը պաշտոնապես ճանաչում էր հայ ժողովրդի ազատ ինքնորոշման և ազգային անկախ պետություն ունենալու իրավունքը:

ը. Բրեստի հաշտության պայմանագրով ոսնահարվեցին հայ ժողովրդի իրավունքները, բոլշևիկները գործարքի գնացին Ռուսաստանի երեկվա թշնամիների հետ, որպեսզի պահպանեն իրենց իշխանությունը:

1) ա, ե, գ

2) ա, բ, է

3) գ, դ, ե

4) գ, դ, զ

115. Թվարկված ձեռնարկումներից ընտրել երեքը, որոնք իրականացրեց Նադիրը՝ հայերի համակրանքն ու օժանդակությունը ստանալու նպատակով.

ա. Ճանաչեց Սևանի հյուսիսարևմտյան մասում գտնվող Մելիք-Շահնազարյանների տոհմի իշխանությունը:

բ. Արշավեց Արևմտյան Հայաստան և օգնեց Մուշի ու Բաղեշի ապստամբ հայերին:

գ. Էջմիածնի վանքի վերանորոգման համար հատկացրեց գումար և տաճարը զարդարեց 15 կգ կշռող ոսկե ջահով:

դ. Արևելյան Հայաստանը նվաճելուց հետո իր նստավայրը փոխադրեց Էջմիածին:

ե. Կարգադրեց Էջմիածին ուղարկել ընտիր գորգեր և այլ նվերներ:

զ. Հրովարտակով վերահաստատեց կաթողիկոսի և հայ հոգևորականության հնուց սահմանված իրավունքները:

1) գ, ե, զ

2) գ, դ, ե

3) ա, գ, զ

4) բ, ե, զ

116. Առանձնացնել այն երեք հողվածները, որոնք չեն արտացոլում Հովսեփ Արղու-թյանի և Հովհաննես Լազարյանի Հայաստանի ազատագրման և հայ-ռուսական դաշնագրի նախագծի բովանդակությունը.

ա. Հայաստանը պետք է հանքերից և եկամուտներից հարկ վճարեր Ռուսաստանին, իսկ պատերազմի ժամանակ ցուցաբերեր ռազմական օգնություն:

բ. Հայաստանում 20 տարի ժամկետով անհրաժեշտ էր տեղակայել 6-հազարանոց ռուսական զորք:

գ. Առաջարկվում էր Հայաստանի մայրաքաղաք դարձնել Վաղարշապատը կամ Անին:

դ. Առաջարկվում էր Հայաստանի և Ռուսաստանի միջև կնքել առևտրական պայմանագիր, իսկ Կասպից ծովի ափին Հայաստանին տրամադրել նավահանգիստ:

ե. Հայաստանն ազատագրելուց հետո պետք է ստեղծվեր հայկական պետություն, և Արցախի մելիքներից մեկը պետք է դառնար Հայաստանի թագավոր:

1) բ, գ

2) բ, ե

3) ա, դ

4) բ, դ

117. Առանձնացնել այն երեք հողվածները, որոնք արտացոլում են Շահամիր Շահամիրյանի կազմած Հայաստանի ազատագրության Հարավային ծրագրի բովանդակությունը.

ա. Ռուսաստանի օգնությամբ ազատագրված Հայաստանը պետք է հռչակվեր հանրապետություն՝ խորհրդարանական կառուցվածքով:

բ. Ռուսաստանում բնակվող հայերից ու վրացիներից կազմվելու էին կամավորական զորաջոկատներ և ռուսական զորքերի հետ ուղարկվելու էին Վրաստան:

- գ. Առաջարկվում էր Հայաստանին Տրապիզոնով դեպի ծով ելք տրամադրել:
- դ. Առաջարկվում էր երկու երկրների միջև սահմանել ազատ երթևեկություն:
- ե. Հայաստանն անհրաժեշտության դեպքում պետք է զորք տրամադրեր Ռուսաստանին:
- զ. Հայաստանի կառավարությունը Մոսկվայում պետք է ունենար իր դեսպանը:

- 1) բ, գ, դ 2) ա, գ, դ 3) ա, դ, ե 4) բ, ե, գ

118. Թվարկվածներից առանձնացնել այն կետերը, որոնք ներկայացնում են ցարիզմի կողմից հրապարակված եկեղեցական կանոնադրության բովանդակությունը.

- ա. Հայոց եկեղեցու գլուխ նախկինի նման մնում էր Կիլիկիայի հայոց կաթողիկոսը:
- բ. Հայ եկեղեցին թեև դրվում էր ռուսական պետությունից կախվածության մեջ, սակայն հայությանը տալիս էր հոգևոր-մշակութային որոշ ինքնավարություն:
- գ. Հայ ժողովուրդը ձեռք էր բերում կրոնական ինքնուրույն համայնքի կարգավիճակ, իրավունք էր ստանում պահպանելու սեփական լեզուն, դպրոցը, եկեղեցական-ճիսական համակարգը:
- դ. Ռուսական կայսրության տարածքում ստեղծվում էր հայկական հոգևոր 6 թեմ, որոնց ղեկավարումն իրականացնելու էին կայսեր կողմից առաջադրված և սինոդի կողմից հաստատված թեմակալ առաջնորդները:
- ե. Ամրապնդվում էին Հայ առաքելական եկեղեցու իրավունքները:
- զ. Հայության ընդհանուր ժողովն առաջադրելու էր կաթողիկոսի երկու թեկնածու, որոնցից մեկին պիտի ընտրեր ռուսական կայսրը:

- 1) բ, գ, դ 2) ա, գ, զ 3) ա, դ, ե, 4) բ, գ, զ

119. Թվարկվածներից առանձնացնել այն կետերը, որոնք ներկայացնում են 1896 թ. հունվարի 30-ին Հալեպում կնքված հաշտության պայմանագրի պայմանները.

- ա. Օսմանյան կառավարությունը պարտավորվում էր զորքերը հետ քաշել Ջեյթունից:
- բ. Տեղական պաշտոնյաներ էին լինելու երկու հայ և երկու մահմեդական:
- գ. Օսմանյան կառավարությունը պարտավորվում էր ապահովել հայերի կյանքն ու գույքը:
- դ. Ջեյթունում պետք է նշանակվեր եվրոպացի կառավարիչ:
- ե. Ներում էր շնորհվում երկու կողմի գերիներին:
- զ. Դաշնակցական գործիչները պետք է հանձնեին զենքը և հեռանային Ջեյթունից:

- 1) բ, գ, դ 2) ա, գ, դ 3) ա, գ, ե 4) բ, գ, զ

120. 1801 թ. Ռուսաստանին բռնակցված Արևելյան Վրաստանի թագավորության հետ Ռուսաստանի տիրապետության տակ անցան նաև հայկական գավառներ՝

- 1) Լոռին, Շիրակը, Շամշադինը 3) Լոռին, Ղարաբաղը, Նախիջևանը
- 2) Լոռին, Փամբակը, Շամշադինը 4) Լոռին, Փամբակը, Կարսը

121. Տրված պնդումներից որը ճիշտ է.

- 1) Բաղիշեցի հայազգի վաճառական մահտեսի Շահմուրատը 1666 թ. ժամանել էր Փարիզ և հավաստիացրել ֆրանսիական արքունիքին, որ հայերը ասորիների և քրդերի հետ միասին պատրաստ են ապստամբելու Օսմանյան կայսրության դեմ:
- 2) Հովհաննես Թութունջին ճանապարհորդել էր Եթովպիա՝ այդ երկիրը ևս հակաթուրքական պայքարի մեջ ընդգրկելու նպատակով:
- 3) Արիստակես եպիսկոպոսը Հռոմի պապին գրած հայերեն նամակում առաջարկում էր իր անձնական ծառայությունները՝ ստեղծելու և փորձարկելու զենքի նոր տեսակ, որն ուսումնասիրել էր Չինաստանում:
- 4) Հակոբ Զուղայեցի կաթողիկոսը 1679 թ. բանակցություններ է սկսում Ռեչ Պոսպոլիտայի թագավոր Յան Սոբեսկոյի հետ:

122. Տրված փաստարկներից որը ճիշտ է.

- 1) Կ. Պոլսի 1724 թ. հունիսի 12-ի ռուս-թուրքական պայմանագրի համաձայն՝ Թուրքիան ճանաչեց Մերձսևծովյան շրջանների միացումը Ռուսաստանին, իսկ ռուսական կողմը Թուրքիայի տնօրինությանը թողեց Արաքսից արևմուտք ընկած երկրամասերը:
- 2) 1812 թ. մայիսի 16-ին Բուխարեստում ստորագրված հաշտությամբ Դանուբյան շրջանում Բեսարաբիան ստանալով՝ ռուսական դիվանագիտությունը Ախալքալաքի գավառը, Անապան ու Փոթին վերադարձնում է թուրքերին:
- 3) 1813 թ. հոկտեմբերի 12-ի Արցախի Գյուլիստան գյուղում ստորագրված հաշտության պայմանագրի համաձայն՝ Ռուսաստանին է անցնում նաև Արևելյան Հայաստանի մի զգալի հատվածը՝ Լոռին, Փամբակը, Շամշադինը, Գանձակը, Ղարաբաղը, Շիրակը:
- 4) 1828 թ. փետրվարի 10-ի Թուրքմենչայի պայմանագրով Ռուսաստանը Արաքսից հարավ ընկած պատմական Պարսկահայքի և Ատրպատականի գավառները վերադարձնում է պարսիկներին:

123. Տրված փաստարկներից որը ճիշտ է.

- 1) 1829 թ. սեպտեմբերի 2-ի Ադրիանապոլսում կնքված հաշտության պայմանագրով Ռուսաստանին են անցնում Անդրկովկասի սևծովյան առափնյա շրջանները՝ Փոթի նավահանգստով հանդերձ, ինչպես նաև Ախալցխան ու Ախալքալաքը:
- 2) 1856 թ. մարտին Փարիզում կնքված հաշտության պայմանագրով Ղրիմը վերադարձնելու համար Ռուսաստանը կրկին հրաժարվում է Արևմտյան Հայաստանում գրաված հողերից:
- 3) 1878 թ. փետրվարի 19-ի Սան Ստեֆանոյի պայմանագրով Ռուսաստանին են անցնում Կարսի, Կաղզվանի, Օլթիի, Արդահանի, Էրզրումի և Բասենի գավառները, Սև ծովի առափնյա շրջանները՝ Փոթի նավահանգստով:
- 4) 1895 թ. մայիսի 11-ի Մայիսյան բարենորոգումների ծրագրի համաձայն՝ հայկական 6 նահանգներում (Կարին, Վան, Բիթլիս, Խարբերդ, Դիարբեքիր և Սեբաստիա) սուլթանի կողմից նահանգապետեր պիտի հաստատվեին միայն տեղական բնակչության համար ցանկալի մարդիկ՝ առանց ազգային ու կրոնական խտրականության:

9. ՀԽՍՀ-ում բանվորների թիվը էր ավելացավ 4,5 անգամ՝ հասնելով 92,4 հազարի.
- | | |
|------------------|------------------|
| 1) 1928–1940 թթ. | 3) 1929–1940 թթ. |
| 2) 1930–1940 թթ. | 4) 1935–1937 թթ. |
10. Երբ է անցում կատարվել նեպից հրաժարվելու և կուլակությունը որպես դասակարգ վերացնելու քաղաքականությանը.
- | | | | |
|------------|------------|------------|------------|
| 1) 1929 թ. | 2) 1928 թ. | 3) 1930 թ. | 4) 1927 թ. |
|------------|------------|------------|------------|
11. Երբ «համատարած կոլեկտիվացում» անցկացվեց Երևանի ամբողջ գավառում, Լենինականի և Լոռու գավառների մեծ մասում և առանձին շրջաններում.
- | |
|--|
| 1) 1928 թ. հունիսից մինչև 1930 թ. օգոստոս ամիսը |
| 2) 1928 թ. փետրվարից մինչև 1930 թ. հունվար ամիսը |
| 3) 1929 թ. հունվարից մինչև 1930 թ. փետրվար ամիսը |
| 4) 1928 թ. դեկտեմբերից մինչև 1930 թ. մարտ ամիսը |
12. Երբ էր շուրջ 1100 տնտեսություն ունեզրկվել որպես «կուլակ».
- | | |
|-----------------------------|------------------------------|
| 1) 1930 թ. մարտի դրությամբ | 3) 1930 թ. ապրիլի դրությամբ |
| 2) 1930 թ. մայիսի դրությամբ | 4) 1930 թ. հունիսի դրությամբ |
13. Երբ էր Դարալագյազի ամբողջ շրջանը գտնվում ապստամբած գյուղացիների ձեռքին.
- | |
|----------------------------------|
| 1) 1930 թ. ապրիլ–մայիս ամիսներին |
| 2) 1930 թ. մարտ–ապրիլ ամիսներին |
| 3) 1930 թ. մարտ–հունիս ամիսներին |
| 4) 1930 թ. մարտ–մայիս ամիսներին |
14. Ապրուստի միջոցներ հայթայթելու համար շուրջ 6750 ընտանիք էր լքեց Սևանա լճի ավազանը.
- | | | | |
|------------|------------|------------|------------|
| 1) 1930 թ. | 2) 1933 թ. | 3) 1932 թ. | 4) 1936 թ. |
|------------|------------|------------|------------|
15. Հայաստանում գյուղացիության ճնշող մեծամասնությունը էր անդամագրվեց կոլտնտեսություններին.
- | | |
|------------------|------------------|
| 1) 1935–1939 թթ. | 3) 1935–1937 թթ. |
| 2) 1935–1936 թթ. | 4) 1935–1938 թթ. |
16. Հանրապետության ավելի քան 1000 կոլտնտեսություններում էր ընդգրկվեց շուրջ 180 հազար գյուղացիական տնտեսություն.
- | | |
|------------------|-------------------------|
| 1) 1933–1937 թթ. | 3) 1920–ական թթ. վերջին |
| 2) 1928–1932 թթ. | 4) 1930–ական թթ. վերջին |
17. Ո՞ր թվականին կազմակերպվեց դաշնակցության երիտասարդական միության «ինքնավերացման» համագումարը.
- | | |
|------------------------|------------------------|
| 1) 1924 թ. փետրվարին | 3) 1925 թ. սեպտեմբերին |
| 2) 1926 թ. հոկտեմբերին | 4) 1923 թ. նոյեմբերին |

18. Երբ կայացվեց որոշում, որով կոմկուսի անդամ դառնալու համար հնչակյանների առջև դրվեցին մի շարք պայմաններ.

- | | |
|--------------------------|--------------------------|
| 1) 1923 թ. փետրվարի 4-ին | 3) 1923 թ. փետրվարի 3-ին |
| 2) 1923 թ. փետրվարի 5-ին | 4) 1923 թ. փետրվարի 2-ին |

19. Հնչակյան կուսակցությունը ԽՍՀՄ տարածքում երբ դադարեցրեց իր գործունեությունը.

- | | | | |
|------------|------------|------------|------------|
| 1) 1921 թ. | 2) 1922 թ. | 3) 1923 թ. | 4) 1924 թ. |
|------------|------------|------------|------------|

20. Խորեն արքեպիսկոպոս Մուրադբեգյանը երբ ընտրվեց կաթողիկոս.

- | | | | |
|------------|------------|------------|------------|
| 1) 1931 թ. | 2) 1932 թ. | 3) 1933 թ. | 4) 1934 թ. |
|------------|------------|------------|------------|

21. Երբ է ձևավորվել Ստալինի պաշտամունքը.

- | | | | |
|------------|------------|------------|------------|
| 1) 1930 թ. | 2) 1927 թ. | 3) 1928 թ. | 4) 1929 թ. |
|------------|------------|------------|------------|

22. Կաթողիկոս Խորեն Մուրադբեգյանը երբ խեղդամահ արվեց եկեղեցում.

- | | |
|--------------------|--------------------|
| 1) 1935 թ. ապրիլին | 3) 1937 թ. ապրիլին |
| 2) 1936 թ. ապրիլին | 4) 1938 թ. ապրիլին |

23. Երբ սպանվեց Աղասի Խանջյանը Թիֆլիսում.

- | | |
|---------------------|---------------------|
| 1) 1935 թ. հուլիսին | 3) 1937 թ. հուլիսին |
| 2) 1936 թ. հուլիսին | 4) 1938 թ. հուլիսին |

24. Երբ գնդակահարվեց մարշալ Արմենակ Խանփերյանցը.

- | | |
|-----------------------|---------------------------|
| 1) 1949 թ. վերջերին | 3) 1949 թ. սկզբներին |
| 2) 1950 թ. մարտի 1-ին | 4) 1951 թ. հունվարի 13-ին |

25. Պոտսդամի կոնֆերանսի ռի նիստերում քննարկվեց հայկական տարածքների հարցը.

- | | |
|-----------------------------|----------------------------|
| 1) 1945 թ. մարտի 2-ի և 15-ի | 3) 1945 թ. մայիսի 24-25-ի |
| 2) 1945 թ. հուլիսի 22-23-ի | 4) 1946 թ. հուլիսի 22-23-ի |

26. Երբ է մահացել Ի. Ստալինը.

- | | |
|------------------------|------------------------|
| 1) 1953 թ. մարտի 20-ին | 3) 1953 թ. մայիսի 5-ին |
| 2) 1953 թ. մարտի 1-ին | 4) 1953 թ. մարտի 5-ին |

27. Երբ ձևավորվեցին առաջին այլախոհական կազմակերպությունները Հայաստանում.

- | | |
|------------------|------------------|
| 1) 1940-ական թթ. | 3) 1950-ական թթ. |
| 2) 1960-ական թթ. | 4) 1970-ական թթ. |

28. Երբ է ստեղծվել Ազգային միացյալ կուսակցությունը (ԱՄԿ).

- | | |
|-------------------------|-------------------------|
| 1) 1964 թ. ապրիլի 24-ին | 3) 1965 թ. ապրիլի 24-ին |
| 2) 1966 թ. ապրիլի 24-ին | 4) 1967 թ. ապրիլի 24-ին |

29. Երբ է իր աշխատանքներն սկսել ԽՄԿԿ XX համագումարը.

- | | |
|---------------------------|-----------------------|
| 1) 1956 թ. փետրվարի 10–ին | 3) 1957 թ. մարտի 2–ին |
| 2) 1956 թ. փետրվարի 14–ին | 4) 1953 թ. մարտի 5–ին |

30. Հայաստանում այլախոհական շարժումը երբ վերելք ապրեց.

- | | |
|--------------------------|--------------------------|
| 1) 1960–ական թվականներին | 3) 1965–ական թվականներին |
| 2) 1970–ական թվականներին | 4) 1975–ական թվականներին |

31. Երբ է ձևավորվել ԱՄԿ ղեկավար մարմինը՝ խորհուրդը.

- | | | | |
|------------|------------|------------|------------|
| 1) 1972 թ. | 2) 1973 թ. | 3) 1974 թ. | 4) 1975 թ. |
|------------|------------|------------|------------|

32. Հակախորհրդային գործունեության մեղադրանքով Անդրանիկ Մարգարյանը երբ դատապարտվեց երեք տարվա ազատազրկման.

- | | |
|----------------------|----------------------|
| 1) 1975 թ. հունվարին | 3) 1976 թ. հունվարին |
| 2) 1975 թ. մարտին | 4) 1977 թ. մարտին |

33. Թիֆլիսի մամուլում երբ հրապարակվեց Հայոց ազգային խորհրդի կոչը Հայաստանի անկախության մասին.

- | | |
|-------------------------|-------------------------|
| 1) 1918 թ. մայիսի 28–ին | 3) 1919 թ. մայիսի 28–ին |
| 2) 1919 թ. մայիսի 30–ին | 4) 1918 թ. մայիսի 30–ին |

34. Բաթումում երբ վերսկսվեցին թուրք–անդրկովկասյան բանակցությունները.

- | | |
|-------------------------|-------------------------|
| 1) 1918 թ. ապրիլի 22–ին | 3) 1918 թ. մարտի 1–ին |
| 2) 1918 թ. մայիսի 11–ին | 4) 1918 թ. հունիսի 4–ին |

35. Հովհաննես Քաջազունին Հայոց ազգային խորհրդի կողմից երբ ընտրվեց կառավարության նախագահ.

- | | |
|--------------------------|--------------------------|
| 1) 1918 թ. հունիսի 18–ին | 3) 1918 թ. հուլիսի 17–ին |
| 2) 1918 թ. օգոստոսի 1–ին | 4) 1918 թ. հունիսի 7–ին |

36. Երբ ՀՀ կառավարությունը և Հայոց կենտրոնական ազգային խորհուրդը Թիֆլիսից ժամանեցին Երևան.

- | | |
|--------------------------|--------------------------|
| 1) 1918 թ. հուլիսի 17–ին | 3) 1918 թ. հունիսի 17–ին |
| 2) 1918 թ. հունիսի 7–ին | 4) 1918 թ. օգոստոսի 1–ին |

37. Երբ հրաժարական տվեց Ալեքսանդր Խատիսյանի կառավարությունը.

- | | |
|-------------------------|----------------------------|
| 1) 1920 թ. մայիսի 10–ին | 3) 1920 թ. մայիսի 13–ին |
| 2) 1920 թ. մայիսի 5–ին | 4) 1920 թ. նոյեմբերի 25–ին |

38. Երբ է ստորագրվել Մուդրոսի զինադադարը.

- | | |
|-----------------------------|-----------------------------|
| 1) 1918 թ. սեպտեմբերի 30–ին | 3) 1918 թ. նոյեմբերի 30–ին |
| 2) 1918 թ. հոկտեմբերի 30–ին | 4) 1918 թ. դեկտեմբերի 30–ին |

39. Գ. Նժդեհի ուժերը Որոտանի կիրճում էրբ ջախջախիչ պարտության մատնեցին Նուրի փաշայի զորքերին․

- | | |
|--------------------------|--------------------------|
| 1) 1919 թ․ ապրիլի վերջին | 3) 1920 թ․ ապրիլի վերջին |
| 2) 1920 թ․ ապրիլի սկզբին | 4) 1919 թ․ ապրիլի սկզբին |

40. Երբ է հրավիրվել Հայոց ազգային համագումարը Փարիզում․

- 1) 1918 թ․ հունվարի 11–ից փետրվարի 24–ը
- 2) 1919 թ․ փետրվարի 24–ից ապրիլի 22–ը
- 3) 1919 թ․ փետրվարի 24–ից ապրիլի 20–ը
- 4) 1920 թ․ հունվարի 28–ից փետրվարի 24–ը

41. Երբ է տեղի ունեցել Արարայի ճակատամարտը․

- | | |
|-----------------------------|-----------------------------|
| 1) 1918 թ․ փետրվարի 14–ին | 3) 1918 թ․ սեպտեմբերի 19–ին |
| 2) 1919 թ․ սեպտեմբերի 20–ին | 4) 1918 թ․ հոկտեմբերի 30–ին |

42. Երբ է ԼՂ Ազգային խորհրդի անդամների և Հայաստանի Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջանն ընդունել «Հայկական ԽՍՀ–ի և ԼՂ վերամիավորման մասին» որոշումը․

- | | |
|----------------------------|-----------------------------|
| 1) 1988 թ․ դեկտեմբերի 8–ին | 3) 1990 թ․ մայիսի 18–ին |
| 2) 1989 թ․ դեկտեմբերի 1–ին | 4) 1991 թ․ սեպտեմբերի 21–ին |

43. Արցախցիների պատվիրակությունը երկրի ղեկավարությանն իր պահանջները ներկայացնելու համար Մոսկվա մեկնեց՝

- | | |
|---------------------------|---------------------------|
| 1) 1988 թ․ հունվարի 15–ին | 3) 1988 թ․ փետրվարի 20–ին |
| 2) 1988 թ․ փետրվարի 19–ին | 4) 1988 թ․ հունվարի 5–ին |

44. Երբ է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նիստը քննարկել «Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ Հայկական ԽՍՀ և Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհուրդների որոշումների մասին» հարցը․

- | | |
|--------------------------|--------------------------|
| 1) 1988 թ․ մարտի 24–ին | 3) 1988 թ․ հուլիսի 18–ին |
| 2) 1988 թ․ հունիսի 15–ին | 4) 1988 թ․ հունիսի 6–ին |

45. Երբ է անցկացվել բարեփոխված ԽՍՀՄ–ի պահպանման վերաբերյալ հանրաքվեն․

- | | |
|------------------------|----------------------------|
| 1) 1990 թ․ մարտի 27–ին | 3) 1991 թ․ օգոստոսի 19–ին |
| 2) 1991 թ․ մարտի 17–ին | 4) 1991 թ․ դեկտեմբերի 8–ին |

46. Երբ է վերացվել ՀՕԿ–ը․

- | | | | |
|------------|------------|------------|------------|
| 1) 1935 թ․ | 2) 1936 թ․ | 3) 1937 թ․ | 4) 1938 թ․ |
|------------|------------|------------|------------|

47. Երբ է դադարեցվել ՀԽՍՀ նախարարների խորհրդին առընթեր ներգաղթի կոմիտեի գործունեությունը․

- | | |
|------------------------|----------------------|
| 1) 1949 թ․ մայիսին | 3) 1949 թ․ օգոստոսին |
| 2) 1948 թ․ սեպտեմբերին | 4) 1950 թ․ ապրիլին |

48. Երբ է Մոսկվայում ավարտվել խորհրդա-քեմալական բանակցությունների առաջին փուլը.

- | | |
|---------------------------|---------------------------|
| 1) 1920 թ. օգոստոսի 10-ին | 3) 1920 թ. օգոստոսի 20-ին |
| 2) 1920 թ. օգոստոսի 24-ին | 4) 1921 թ. մարտի 16-ին |

49. Բաքվում հրավիրված Արևելքի ժողովուրդների առաջին համագումարը տեղի է ունեցել՝

- | | |
|------------------------------|------------------------------|
| 1) 1920 թ. սեպտեմբերի 1-8-ը | 3) 1920 թ. հոկտեմբերի 1-8-ը |
| 2) 1920 թ. սեպտեմբերի 7-14-ը | 4) 1920 թ. հոկտեմբերի 7-14-ը |

50. «Հայաստանը սոցիալիստական խորհրդային հանրապետություն հայտարարելու մասին» հրամանը ստորագրվել է՝

- | | |
|----------------------------|-------------------------|
| 1) 1920 թ. նոյեմբերի 29-ին | 3) 1921 թ. ապրիլի 2-ին |
| 2) 1920 թ. դեկտեմբերի 2-ին | 4) 1920 թ. մայիսի 10-ին |

51. Երբ է հիմնվել ՀՍԽՀ Արտակարգ հանձնաժողովը (ՉԵԿԱ).

- | | |
|----------------------------|-----------------------------|
| 1) 1920 թ. դեկտեմբերի 8-ին | 3) 1920 թ. դեկտեմբերի 10-ին |
| 2) 1920 թ. դեկտեմբերի 6-ին | 4) 1920 թ. դեկտեմբերի 2-ին |

52. Կարմիր բանակի Ռազմհեղխորհրդի անդամ Գ. Օրջոնիկիձեն Հայրենիքի փրկության կոմիտեին վերջնագիր ներկայացրեց՝

- | | |
|------------------------|------------------------|
| 1) 1921 թ. մարտի 10-ին | 3) 1921 թ. ապրիլի 2-ին |
| 2) 1921 թ. մարտի 20-ին | 4) 1921 թ. մարտի 25-ին |

53. Երբ է ստորագրվել Շարուր-Նախիջևանը Հայաստանին հանձնելու մասին անգլիացիների հրամանը.

- | | |
|-------------------------|------------------------|
| 1) 1918 թ. մայիսի 28-ին | 3) 1919 թ. մայիսի 3-ին |
| 2) 1919 թ. ապրիլի 16-ին | 4) 1920 թ. մայիսի 6-ին |

54. Արևելակովկասյան մուսուլմանական հանրապետության մասին հայտարարությունն արվել է.

- | | |
|-----------------------------|-------------------------|
| 1) 1918 թ. հունիսի 27-ին | 3) 1918 թ. մայիսի 27-ին |
| 2) 1918 թ. սեպտեմբերի 15-ին | 4) 1918 թ. մայիսի 30-ին |

55. Հայոց ազգային խորհրդի պատվիրակությունը թուրքերի հետ բանակցելու նպատակով Բաթում հասավ՝

- | | |
|-------------------------|-------------------------|
| 1) 1918 թ. մայիսի 30-ին | 3) 1918 թ. մայիսի 28-ին |
| 2) 1918 թ. հունիսի 4-ին | 4) 1918 թ. մայիսի 11-ին |

56. Հայոց ազգային խորհուրդը չճանաչելու մասին խալիլ բեյը հայտարարել էր՝

- | | |
|-------------------------|-------------------------|
| 1) 1918 թ. մարտի 3-ին | 3) 1918 թ. ապրիլի 22-ին |
| 2) 1918 թ. մայիսի 27-ին | 4) 1918 թ. մայիսի 30-ին |

57. Ընտրությունների միջոցով համայնքային ինքնավարության (զեմստվոներ) ներդրումը Հայաստանի Հանրապետությունում տեղի է ունեցել՝

- | | |
|------------------|------------------|
| 1) 1918–1919 թթ. | 3) 1920–1922 թթ. |
| 2) 1919–1920 թթ. | 4) 1920–1921 թթ. |

58. Պետական լեզվին չտիրապետող պաշտոնյաներին աշխատանքից ազատելու պայմանների մասին ՀՀ օրենքն ընդունվել է՝

- | | |
|--------------------------|----------------------------|
| 1) 1920 թ. մայիսի 30–ին | 3) 1919 թ. ապրիլի 15–ին |
| 2) 1920 թ. հունիսի 25–ին | 4) 1919 թ. դեկտեմբերի 2–ին |

59. Երբ է Առանձին հայկական կորպուսը վերակազմավորվել դիվիզիայի.

- | | |
|------------------------|------------------------|
| 1) 1918 թ. հոկտեմբերին | 3) 1918 թ. մայիսին |
| 2) 1918 թ. սեպտեմբերին | 4) 1918 թ. դեկտեմբերին |

60. Երբ է Հայաստանի մի շարք շրջաններում անցկացվել հողային բարեփոխում.

- | | |
|-------------------|--------------------|
| 1) 1920 թ. ամռանը | 3) 1918 թ. գարնանը |
| 2) 1919 թ. աշնանը | 4) 1919 թ. ձմռանը |

61. Ո՞ր ժամանակահատվածում է ՀՅԴ–ն ՀԺԿ–ի հետ կազմել կոալիցիոն կառավարություն.

- | | |
|--------------------------------------|--------------------------------------|
| 1) 1919 թ. նոյեմբեր – 1920 թ. մայիս | 3) 1919 թ. մայիս – 1919 թ. դեկտեմբեր |
| 2) 1918 թ. նոյեմբեր – 1919 թ. հունիս | 4) 1919 թ. հունիս – 1920 թ. հունիս |

62. Հայ ժողովրդական կուսակցությունն իր II համագումարը հրավիրել է՝

- | | |
|------------------------|------------------------|
| 1) 1918 թ. սեպտեմբերին | 3) 1919 թ. սեպտեմբերին |
| 2) 1919 թ. դեկտեմբերին | 4) 1918 թ. դեկտեմբերին |

63. Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների Երևանի I կոնֆերանսը տեղի է ունեցել՝

- | | |
|------------------------|--------------------|
| 1) 1919 թ. սեպտեմբերին | 3) 1920 թ. մայիսին |
| 2) 1920 թ. հունվարին | 4) 1920 թ. մարտին |

64. Զորավար Անդրանիկը Նախիջևանից Զանգեզուր տեղափոխվեց՝

- | | |
|---------------------------|----------------------------|
| 1) 1918 թ. հուլիսի սկզբին | 3) 1918 թ. հուլիսի վերջին |
| 2) 1918 թ. մայիսի վերջին | 4) 1918 թ. օգոստոսի սկզբին |

65. Երբ է Անդրանիկն իրեն հռչակել Զանգեզուրի գերագույն զինվորական հրամանատար.

- | | |
|----------------------------|------------------------------|
| 1) 1918 թ. հուլիսի սկզբին | 3) 1918 թ. հոկտեմբերի սկզբին |
| 2) 1918 թ. օգոստոսի վերջին | 4) 1918 թ. նոյեմբերի վերջին |

66. Հայկական լեգեոնը լուծարվեց՝

- | | |
|--------------------|----------------------|
| 1) 1919 թ. մայիսին | 3) 1920 թ. օգոստոսին |
| 2) 1920 թ. մայիսին | 4) 1921 թ. օգոստոսին |

67. Թուրքական զորքերը Էրբ ներխուժեցին Մարաշ.

- | | |
|----------------------|------------------------|
| 1) 1920 թ. մայիսին | 3) 1920 թ. հունվարին |
| 2) 1919 թ. օգոստոսին | 4) 1919 թ. դեկտեմբերին |

68. «Քարոզչության և գործողության խորհրդի» կողմից Հայաստանի Հանրապետության և հայ ժողովրդի դեմ ուղղված բանաձև-փաստաթուղթն ընդունվեց՝

- | | |
|-----------------------------|-----------------------------|
| 1) 1920 թ. սեպտեմբերի 18-ին | 3) 1920 թ. սեպտեմբերի 23-ին |
| 2) 1920 թ. օգոստոսի 24-ին | 4) 1920 թ. սեպտեմբերի 8-ին |

69. Թուրք-հայկական պատերազմի ժամանակ թուրքերի առաջարկած զինադադարի նոր ծանր պայմանները մերժվեցին՝

- | | |
|----------------------------|---------------------------|
| 1) 1920 թ. նոյեմբերի 18-ին | 3) 1920 թ. նոյեմբերի 9-ին |
| 2) 1920 թ. նոյեմբերի 10-ին | 4) 1920 թ. նոյեմբերի 7-ին |

70. Հ. Օհանջանյանի և զինվորական նախարար Ռուբեն Տեր-Մինասյանի հանդիպումը Խորհրդային Ռուսաստանի կառավարության լիազոր ներկայացուցիչներ Պ. Մդիվանու և Բ. Լեգրանի հետ տեղի ունեցավ՝

- | | |
|-----------------------------|----------------------------|
| 1) 1920 թ. հոկտեմբերի 24-ին | 3) 1920 թ. նոյեմբերի 19-ին |
| 2) 1920 թ. հոկտեմբերի 19-ին | 4) 1920 թ. նոյեմբերի 25-ին |

71. Հայ ավանդական երեք կուսակցություններն առաջին անգամ համազգային կենտրոնական մարմին կազմեցին՝

- | | | | |
|------------|------------|------------|------------|
| 1) 1975 թ. | 2) 1974 թ. | 3) 1965 թ. | 4) 1987 թ. |
|------------|------------|------------|------------|

72. Քաղաքական կոալիցիայի համաձայնագրի ստորագրումը ՀՀԿ-ի, ԲՀԿ-ի, ՕԵԿ-ի և ՀՅԴ-ի միջև տեղի է ունեցել՝

- | | |
|-------------------------|-------------------------|
| 1) 2008 թ. մարտի 21-ին | 3) 2008 թ. մայիսի 25-ին |
| 2) 2007 թ. մայիսի 12-ին | 4) 2008 թ. մարտի 30-ին |

73. Հայաստանի և Ադրբեջանի կոմկուսի կենտկոմների քարտուղարներ Կ. Դեմիրճյանն ու Ք. Բաղիրովը զբաղեցրած պաշտոններից ազատվեցին՝

- | | |
|-------------------------|-------------------------|
| 1) 1988 թ. մայիսի 17-ին | 3) 1988 թ. մայիսի 21-ին |
| 2) 1988 թ. մարտի 21-ին | 4) 1989 թ. մայիսի 21-ին |

74. Էրբ է Հովսեփ Օրբելին նշանակվել Արմֆանի նախագահ.

- | | | | |
|------------|------------|------------|------------|
| 1) 1935 թ. | 2) 1938 թ. | 3) 1937 թ. | 4) 1943 թ. |
|------------|------------|------------|------------|

75. Էրբ է բացվել Հայաստանի առաջին պետական դրամատիկական թատրոնը.

- | | |
|---------------------------|---------------------------|
| 1) 1928 թ. հունիսի 5-ին | 3) 1921 թ. հունվարի 25-ին |
| 2) 1922 թ. հունվարի 22-ին | 4) 1922 թ. հունվարի 25-ին |

76. Էրբ է կազմակերպվել պետական շրջիկ թատրոնը Ա. Խարազյանի ղեկավարությամբ.

- | | | | |
|------------|------------|------------|------------|
| 1) 1926 թ. | 2) 1932 թ. | 3) 1928 թ. | 4) 1929 թ. |
|------------|------------|------------|------------|

- 77. Ե՞րբ է ցուցադրվել հայկական կինոմատոգրաֆի առաջնել «Նամուսը».**
 1) 1935 թ. 2) 1931 թ. 3) 1925 թ. 4) 1928 թ.
- 78. Ե՞րբ է էկրան բարձրացել հայկական առաջին հնչյունային կինոնկար «Պեպո»-ն.**
 1) 1925 թ. 2) 1935 թ. 3) 1929 թ. 4) 1937 թ.
- 79. Ալեքսանդր Թամանյանը Երևանի գլխավոր հատակագիծը կազմել է՝**
 1) 1924 թ. 2) 1926 թ. 3) 1925 թ. 4) 1928 թ.
- 80. Թաթուլ Ալթունյանի գլխավորությամբ հայկական ժողովրդական երգի-պարի պետական անսամբլը ստեղծվել է՝**
 1) 1937 թ. 2) 1935 թ. 3) 1938 թ. 4) 1932 թ.
- 81. Ե՞րբ է սկսվել նորանկախ Հայաստանի Հանրապետության միջազգային ճանաչումը.**
 1) 1991 թ. փետրվարից 3) 1991 թ. վերջերից
 2) 1992 թ. սկզբից 4) 1992 թ. կեսերից
- 82. Հայաստանի խորհրդարանը Ե՞րբ է օրենք ընդունել Հայաստանում բազմակուսակցական համակարգ ստեղծելու մասին.**
 1) 1990 թ. օգոստոսին 3) 1992 թ. նոյեմբերին
 2) 1992 թ. փետրվարին 4) 1991 թ. փետրվարին
- 83. Հայիեղկունը Ե՞րբ է հրապարակել «Պարենային մթերքների և այլ նյութերի հայտնաբերման մասին» հրամանը.**
 1) 1920 թ. դեկտեմբերի 1-ին 3) 1921 թ. հունիսի 24-ին
 2) 1920 թ. դեկտեմբերի 8-ին 4) 1920 թ. դեկտեմբերի 28-ին
- 84. Ե՞րբ է կնքվել Անկարայի ֆրանս-թուրքական պայմանագիրը.**
 1) 1920 թ. օգոստոսի 4-ին 3) 1920 թ. հոկտեմբերի 13-ին
 2) 1921 թ. հոկտեմբերի 20-ին 4) 1921 թ. մայիսի 30-ին
- 85. ԽՍՀՄ պաշտպանության ժողկոմի հրամանով Ե՞րբ կազմացրվեց 390-րդ դիվիզիան.**
 1) 1942 թ. մարտի 5-ին 3) 1943 թ. նոյեմբերի 29-ին
 2) 1942 թ. հունիսի 14-ին 4) 1945 թ. հուլիսի 2-ին
- 86. Ե՞րբ է տեղի ունեցել արցախահայության 9-րդ համագումարը.**
 1) 1918 թ. սեպտեմբերի 10-14-ը 3) 1920 թ. ապրիլի 25-ին
 2) 1919 թ. փետրվարի 6-13-ը 4) 1920 թ. նոյեմբերի 22-ին
- 87. Ե՞րբ է Թուրքիան ճանաչել Հայաստանի անկախությունը.**
 1) 1991 թ. հուլիսի 5-ին 3) 1992 թ. մարտի 2-ին
 2) 1991 թ. դեկտեմբերի 1-ին 4) 1996 թ. սեպտեմբերի 22-ին

- 88. Երբ ահաբեկչության զոհ դարձավ «Ակոս» թերթի խմբագիր Հրանտ Դինքը Ստամբուլում.**
- 1) 2007 թ. ապրիլի 10-ին
2) 2007 թ. հունվարի 19-ին
3) 2008 թ. սեպտեմբերի 6-ին
4) 2008 թ. հոկտեմբերի 10-ին
- 89. Երբ է Գերմանիայի Բունդեսթագը Հայոց ցեղասպանության դատապարտման վերաբերյալ որոշում ընդունել.**
- 1) 2005 թ. ապրիլին
2) 2005 թ. մարտին
3) 2006 թ. ապրիլին
4) 2007 թ. ապրիլին
- 90. Թուրքիայի կառավարությունը Հայոց ցեղասպանության դեմ պայքարը Երբ հռչակեց արտաքին քաղաքականության կարևորագույն ուղղություն.**
- 1) 2006 թ. 2) 2007 թ. 3) 2008 թ. 4) 2009 թ.
- 91. Երբ էր Թուրքիան փակել ՀՀ-ի հետ պետական սահմանը.**
- 1) 1991 թ. դեկտեմբերին
2) 1992 թ. մայիսին
3) 1992 թ. փետրվարին
4) 1993 թ. ապրիլին
- 92. Երբ է ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը Թուրքիայի նախագահ Ա. Գյուլին հրավիրել Հայաստանի ու Թուրքիայի ֆուտբոլային հավաքականների հանդիպմանը.**
- 1) 2008 թ. սեպտեմբերի 22-ին
2) 2008 թ. սեպտեմբերի 6-ին
3) 2009 թ. հոկտեմբերի 10-ին
4) 2008 թ. սեպտեմբերի 8-ին
- 93. ՀՀ և Թուրքիայի միջև Երբ ստորագրվեցին «Երկկողմ դիվանագիտական հարաբերությունների հաստատման ու զարգացման մասին» արձանագրությունները.**
- 1) 2008 թ. հունվարի 19-ին
2) 2008 թ. սեպտեմբերի 6-ին
3) 2009 թ. հոկտեմբերի 10-ին
4) 2009 թ. ապրիլի 22-ին
- 94. Երբ է ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը հրամանագիր ստորագրել հայ-թուրքական արձանագրությունների վավերացման գործընթացը կասեցնելու մասին.**
- 1) 2009 թ. հունվարի 19-ին
2) 2010 թ. սեպտեմբերի 6-ին
3) 2009 թ. հոկտեմբերի 10-ին
4) 2010 թ. ապրիլի 22-ին
- 95. Երբ է Արցախում ստեղծվել ինքնապաշտպանության ընդհատակյա կոմիտեն.**
- 1) 1990 թ. օգոստոսին
2) 1991 թ. մայիսին
3) 1991 թ. հուլիսին
4) 1992 թ. հունիսին
- 96. Երբ է Արցախում ստեղծվել ինքնապաշտպանական ուժերի շտաբ.**
- 1) 1990 թ. օգոստոսին
2) 1991 թ. ապրիլին
3) 1991 թ. հուլիսին
4) 1991 թ. դեկտեմբերին
- 97. Երբ է ԼՂՀ Գերագույն խորհուրդը հատուկ որոշում ընդունել ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի մասին.**
- 1) 1991 թ. հուլիսին
2) 1991 թ. դեկտեմբերին
3) 1992 թ. փետրվարին
4) 1992 թ. հունիսին

98. Երբ է ՕՍՕՆ-ը բացահայտ պատերազմ սկսել Արցախի դեմ.

- 1) 1991 թ. փետրվար-մարտ ամիսներին
- 2) 1990 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին
- 3) 1991 թ. ապրիլ-մայիս ամիսներին
- 4) 1992 թ. մարտ-ապրիլ ամիսներին

99. Երբ է Ադրբեջանի Գերագույն խորհրդի կողմից ընդունվել անկախության վերականգնման մասին հռչակագիրը.

- 1) 1991 թ. ապրիլի 30-ին
- 2) 1991 թ. օգոստոսի 30-ին
- 3) 1991 թ. սեպտեմբերի 2-ին
- 4) 1991 թ. դեկտեմբերի 28-ին

100. Երբ է Ստեփանակերտում տեղի ունեցել Լեռնային Ղարաբաղի պատգամավորների մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջանը.

- 1) 1988 թ. փետրվարի 20-ին
- 2) 1991 թ. սեպտեմբերի 2-ին
- 3) 1991 թ. դեկտեմբերի 10-ին
- 4) 1992 թ. հունվարի 8-ին

101. Երբ են տեղի ունեցել ԼՂՀ Գերագույն խորհրդի պատգամավորների ընտրությունները.

- 1) 1991 թ. դեկտեմբերի 10-ին
- 2) 1991 թ. դեկտեմբերի 28-ին
- 3) 1992 թ. հունվարի 8-ին
- 4) 1992 թ. հունիսի 2-ին

102. Երբ է Արթուր Մկրտչյանն ընտրվել ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահ.

- 1) 1991 թ. դեկտեմբերի 10-ին
- 2) 1991 թ. սեպտեմբերի 2-ին
- 3) 1992 թ. հունվարի 8-ին
- 4) 1992 թ. հունիսի 2-ին

103. Երբ է ԼՂՀ Գերագույն խորհուրդը հաստատել երկրի զինանշանն ու օրհներգը.

- 1) 1991 թ. դեկտեմբերի 28-ին
- 2) 1992 թ. հունվարի 8-ին
- 3) 1992 թ. հունիսի 2-ին
- 4) 1992 թ. նոյեմբերի 17-ին

104. Երբ են հայ ազատամարտիկներն ազատագրել Կրկժանը.

- 1) 1992 թ. հունիսի 2-ին
- 2) 1992 թ. հունվարի 19-20-ը
- 3) 1992 թ. փետրվարի 25-26-ը
- 4) 1992 թ. մայիսի 4-6-ը

105. Երբ են տեղի ունեցել Քարինտակի մարտերը.

- 1) 1991 թ. հունիսին
- 2) 1992 թ. հունվարին
- 3) 1992 թ. փետրվարին
- 4) 1992 թ. մայիսին

106. Երբ են հայկական ուժերը հասել Խոջալուի առաջավոր դիրքերին.

- 1) 1992 թ. հունվարին
- 2) 1992 թ. փետրվարի 25-ի լույս 26-ի գիշերը
- 3) 1993 թ. հուլիսի 23-24-ին
- 4) 1994 թ. փետրվարի 18-ին

107. Երբ է Ստեփանակերտում լրիվ անջատվել էլեկտրաէներգիան.

- | | |
|---------------------------|-------------------------|
| 1) 1992 թ. հունվարի 19-ին | 3) 1992 թ. մայիսի 1-ին |
| 2) 1992 թ. փետրվարի 26-ին | 4) 1992 թ. մայիսի 18-ին |

108. Երբ է որոշվել իրագործել Շուշիի ազատագրման գործողությունը.

- | | |
|------------------------|-------------------------|
| 1) 1992 թ. մայիսի 1-ին | 3) 1992 թ. մայիսի 8-ին |
| 2) 1992 թ. մայիսի 4-ին | 4) 1993 թ. մայիսի 12-ին |

109. Երբ են արցախյան ազատագրական ուժերը մտել Լաչին.

- | | |
|-------------------------|---------------------------|
| 1) 1992 թ. մայիսի 9-ին | 3) 1992 թ. մայիսի 18-ին |
| 2) 1992 թ. մայիսի 12-ին | 4) 1992 թ. օգոստոսի 15-ին |

110. Երբ են ադրբեջանական զինված ուժերը ներխուժել Արցախի հյուսիսային շրջաններ և գրավել Շահումյանի շրջանն ու Մարտակերտի շրջանի մի մասը.

- | | |
|--------------------|-------------------|
| 1) 1992 թ. մայիսին | 3) 1993 թ. ամռանը |
| 2) 1992 թ. ամռանը | 4) 1993 թ. ձմռանը |

111. Երբ է Արցախում ստեղծվել Պաշտպանության պետական կոմիտեն.

- | | |
|---------------------------|---------------------------|
| 1) 1991 թ. օգոստոսի 30-ին | 3) 1992 թ. մայիսի 4-ին |
| 2) 1992 թ. հունիսի 2-ին | 4) 1992 թ. օգոստոսի 15-ին |

112. Երբ է սկսվել ընդհանուր գրոհը դեպի Շուշի.

- 1) 1991 թ. մայիսի 9-ի գիշերը՝ 1 անց 30-ին
- 2) 1992 թ. մայիսի 8-ի գիշերը՝ 2 անց 30-ին
- 3) 1992 թ. մայիսի 7-ին՝ առավոտյան 6 անց 30-ին
- 4) 1992 թ. մայիսի 6-ին՝ ժամը 18:00-ին

113. Երբ է ազատագրվել Քելբաջարի (Քարվաճառի) շրջանը.

- | | |
|----------------------|---------------------|
| 1) 1992 թ. մայիսին | 3) 1993 թ. ապրիլին |
| 2) 1992 թ. օգոստոսին | 4) 1993 թ. հուլիսին |

114. Երբ են ճնշվել Հորադիզի երկաթուղային հանգույցի կրակակետերը և ազատագրվել Հորադիզի շրջանը.

- | | |
|--------------------------|-----------------------------|
| 1) 1993 թ. ապրիլին | 3) 1993 թ. հոկտեմբերի 24-ին |
| 2) 1993 թ. հուլիսի 23-ին | 4) 1994 թ. փետրվարի 18-ին |

115. Երբ են հայկական ուժերը ադրբեջանցիներին Աղդամի մոտ պարտության մատնել.

- | | |
|--------------------------|-----------------------------|
| 1) 1993 թ. ապրիլին | 3) 1993 թ. հոկտեմբերի 24-ին |
| 2) 1993 թ. հուլիսի 23-ին | 4) 1994 թ. փետրվարի 18-ին |

116. Երբ է Արցախում հաստատվել հրադադարը.

- | | |
|---------------------------|-------------------------|
| 1) 1993 թ. հուլիսի 23-ին | 3) 1994 թ. մայիսի 12-ին |
| 2) 1994 թ. փետրվարի 18-ին | 4) 1995 թ. հուլիսի 5-ին |

117. Երբ է տեղի ունեցել Լոնդոնի կոնֆերանսը.

- 1) 1920 թ. ապրիլ – 1921 թ. հունիս
- 2) 1921 թ. փետրվարի 21 – մարտի 14
- 3) 1921 թ. փետրվարի 26 – մարտի 16
- 4) 1922 թ. նոյեմբերի 20 – 1923 հուլիսի 24

118. Երբ է տեղի ունեցել Լոզանի կոնֆերանսը.

- 1) 1921 թ. փետրվարի 21 – մարտի 14
- 2) 1921 թ. փետրվարի 26 – մարտի 16
- 3) 1922 թ. նոյեմբերի 20 – 1923 թ. հուլիսի 24
- 4) 1921 թ. նոյեմբերի 22–ից – 1922 թ. հուլիսի 23

119. Երբ Սփյուռքի հետ մասնակիորեն վերականգնվեցին հարաբերությունները.

- 1) Հայաստանի երրորդ հանրապետության հռչակումից ի վեր
- 2) Հայրենական մեծ պատերազմի տարիներին
- 3) Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին
- 4) Արցախյան շարժման ծավալման տարիներին

120. Ո՞ր ժամանակահատվածում էին ընթանում ներգաղթի նախապատրաստական աշխատանքները.

- 1) 1944 թ. վերջին և 1945 թ. սկզբին
- 2) 1945 թ. վերջին ամիսներին և 1946 թ. առաջին կեսին
- 3) 1946 թ. վերջին ամիսներից մինչև 1947 թ. առաջին ամիսները
- 4) 1947 թ. սկզբից մինչև այդ տարվա վերջին ամիսները

121. Երբ է ԽՍՀՄ կառավարությունը որոշում ընդունել դադարեցնելու սփյուռքահայերի ներգաղթը.

- 1) 1947 թ. հունիսի 23–ին
- 2) 1948 թ. սեպտեմբերի 14–ին
- 3) 1948 թ. դեկտեմբերի 14–ին
- 4) 1949 թ. օգոստոսի 15–ին

122. Երբ է ՀԽՍՀ նախարարների խորհրդին առընթեր ներգաղթի կոմիտեն դադարեցրել իր գործունեությունը.

- 1) 1948 թ. սեպտեմբերին
- 2) 1948 թ. դեկտեմբերին
- 3) 1949 թ. օգոստոսին
- 4) 1949 թ. նոյեմբերին

123. Երբ է ընդունվել ԽՍՀՄ կառավարության որոշումը խորհրդա–թուրքական բաղկամության և չեզոքության պայմանագրի դադարեցման մասին.

- 1) 1945 թ. մարտի 19–ին
- 2) 1945 թ. հուլիսի 19–ին
- 3) 1947 թ. ապրիլի 30–ին
- 4) 1947 թ. մայիսի 4–ին

124. Երբ է հրավիրվել Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) անդրանիկ նիստը.

- 1) 1945 թ. մարտին
- 2) 1945 թ. ապրիլին
- 3) 1945 թ. հունիսին
- 4) 1945 թ. հուլիսին

125. Երբ է Ամերիկայի հայկական ազգային խորհուրդը հեռագիր ուղարկել Պոտսդամի կոնֆերանսին՝ հայկական հարցը կոնֆերանսի օրակարգ մտցնելու խնդրանքով.

- | | |
|--------------------------|-------------------------|
| 1) 1945 թ. մարտի 19–ին | 3) 1947 թ. ապրիլի 30–ին |
| 2) 1945 թ. հուլիսի 19–ին | 4) 1947 թ. մայիսի 4–ին |

126. Երբ է կայացել Հայկական համաշխարհային կոնգրեսը.

- 1) 1946 թ. փետրվարի 21–մարտի 14
- 2) 1947 թ. նոյեմբերի 20–1923 թ. հուլիսի 24
- 3) 1945 թ. մարտի 19–հուլիսի 19
- 4) 1947 թ. ապրիլի 30–մայիսի 4

127. Երբ է Հայկական համաշխարհային կոնգրեսի առաջարկով կազմված պատվիրակությունը ԱՄՆ պետքարտուղարին ներկայացրել հայկական հողային պահանջների մասին հուշագիրը.

- | | |
|--------------------------|-------------------------|
| 1) 1945 թ. մարտի 19–ին | 3) 1947 թ. մայիսի 4–ին |
| 2) 1945 թ. հուլիսի 19–ին | 4) 1947 թ. մայիսի 12–ին |

128. Երբ են հայ քաղաքական երեք կուսակցությունները կազմել համազգային կենտրոնական մարմին.

- | | | | |
|------------|------------|------------|------------|
| 1) 1947 թ. | 2) 1965 թ. | 3) 1967 թ. | 4) 1974 թ. |
|------------|------------|------------|------------|

129. Երբ է Կիպրոսի արտաքին գործերի նախարար Կիպրիանուն ՄԱԿ–ի ամբիոնից կոչ արել քննարկելու Հայկական հարցը.

- | | |
|------------------------|---------------------|
| 1) 1965 թ. ապրիլին | 3) 1967 թ. ապրիլին |
| 2) 1965 թ. հոկտեմբերին | 4) 1970 թ. հունիսին |

130. Երբ է Մոնտեվիդեոյում հրավիրվել Լատինական Ամերիկայի միջխորհրդարանական համագումարը.

- | | |
|------------------------|---------------------|
| 1) 1965 թ. ապրիլին | 3) 1967 թ. ապրիլին |
| 2) 1965 թ. հոկտեմբերին | 4) 1970 թ. հունիսին |

131. Երբ է Ուրուգվայի խորհրդարանը հանձնարարել իր կառավարությանը Հայկական հարցը ներկայացնել ՄԱԿ–ի քննարկմանը.

- | | | | |
|------------|------------|------------|------------|
| 1) 1965 թ. | 2) 1967 թ. | 3) 1970 թ. | 4) 1987 թ. |
|------------|------------|------------|------------|

132. Երբ է Հայկական հարցը քննարկվել Եվրախորհրդում.

- | | | | |
|------------|------------|------------|------------|
| 1) 1967 թ. | 2) 1970 թ. | 3) 1983 թ. | 4) 1987 թ. |
|------------|------------|------------|------------|

133. Երբ է մշակութային–պատմական ինստիտուտը վերափոխվել Գիտության ու արվեստի ինստիտուտի.

- | | | | |
|------------|------------|------------|------------|
| 1) 1921 թ. | 2) 1925 թ. | 3) 1926 թ. | 4) 1933 թ. |
|------------|------------|------------|------------|

134. Մինչև երբ է գործել Գիտության ու արվեստի ինստիտուտը.

- | | | | |
|------------|------------|------------|------------|
| 1) 1925 թ. | 2) 1926 թ. | 3) 1930 թ. | 4) 1933 թ. |
|------------|------------|------------|------------|

135. Երբ է Հովհաննես Աղամյանը ստեղծել եռագույն հեռուստատեսությունը.
 1) 1925 թ. 2) 1926 թ. 3) 1930 թ. 4) 1933 թ.
136. Երբ է ստեղծվել Հայաստանի գրողների միությունը.
 1) 1926 թ. 2) 1930 թ. 3) 1932 թ. 4) 1935 թ.
137. Երբ է հիմնադրվել Լենինականի (Գյումրու) պետական թատրոնը.
 1) 1922 թ. 2) 1925 թ. 3) 1928 թ. 4) 1929 թ.
138. Երբ է հիմնադրվել պատանի հանդիսատեսի թատրոնը.
 1) 1925 թ. 2) 1928 թ. 3) 1929 թ. 4) 1937 թ.
139. Երբ է Երևանում հիմնադրվել գեղարվեստի դպրոցը.
 1) 1922 թ. 2) 1932 թ. 3) 1935 թ. 4) 1937 թ.
140. Երբ է հիմնադրվել Երևանի գեղարվեստական ինստիտուտը.
 1) 1935 թ. 2) 1945 թ. 3) 1947 թ. 4) 1953 թ.
141. Երբ է ընդունվել ՌԿ(Բ)Կ կենտկոմի քաղբյուրոյի որոշումը՝ Հայաստանում խորհրդային իշխանություն հաստատելու համար վճռական գործողությունների դիմելու մասին.
 1) 1920 թ. հոկտեմբերի 14–ին 3) 1920 թ. հոկտեմբերի 28–ին
 2) 1920 թ. հոկտեմբերի 20–ին 4) 1920 թ. հոկտեմբերի 14–ին
142. Ո՞ր թվականին էին շուրջ 40 հազար գյուղացիներ ՀՍԽՀ–ում շարունակում մնալ հողագուրկ.
 1) 1930 թ. 2) 1927 թ. 3) 1929 թ. 4) 1928 թ.
143. Երբ սկսվեցին Հայաստանի արդյունաբերության կարևորագույն ճյուղերից մեկի՝ պղնձարդյունաբերության վերականգնման աշխատանքները.
 1) 1926–1927 թթ. 3) 1923–1924 թթ.
 2) 1924–1925 թթ. 4) 1928–1929 թթ.
144. Հայաստանի տնտեսությունը երբ հասավ նախապատերազմյան 1913 թ. մակարդակին.
 1) 1930 թ. 2) 1929 թ. 3) 1926 թ. 4) 1928 թ.
145. Երբ կառուցվեց Երևանի Ձերժինսկու անվան մեխանիկական գործարանը.
 1) 1929 թ. 2) 1931 թ. 3) 1934 թ. 4) 1926 թ.
146. Երբ շահագործման հանձնվեց Երևանի արհեստական կաուչուկի գործարանը.
 1) 1937 թ. 2) 1940 թ. 3) 1933 թ. 4) 1935 թ.
147. Ստալինը երբ հրատարակեց «Մեծ բեկման տարին» հոդվածը.
 1) 1929 թ. 2) 1930 թ. 3) 1932 թ. 4) 1933 թ.

148. Երբ է տեղի ունեցել ՀՅԴ, այսպես կոչված, ինքնավերացման համագումարը.

- | | |
|------------------------|--------------------|
| 1) 1923 թ. հոկտեմբերին | 3) 1924 թ. մայիսին |
| 2) 1923 թ. նոյեմբերին | 4) 1924 թ. մարտին |

149. Երբ ձերբակալվեց մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի տնօրեն Ներսիկ Ստեփանյանը.

- | | |
|--------------------|----------------------|
| 1) 1936 թ. մարտին | 3) 1938 թ. օգոստոսին |
| 2) 1937 թ. ապրիլին | 4) 1936 թ. մայիսին |

150. Երբ է ՀԿ(Բ)Կ կենտկոմը որոշում ընդունել Էջմիածնի վանքը փակելու, կաթողիկոսությունը վերացնելու մասին.

- | | |
|----------------------------|----------------------------|
| 1) 1938 թ. օգոստոսի 4-ին | 3) 1938 թ. ապրիլին |
| 2) 1932 թ. սեպտեմբերի 8-ին | 4) 1936 թ. սեպտեմբերի 6-ին |

151. Երբ է սկսվել Հայրենական մեծ պատերազմը.

- | | |
|--------------------------|----------------------------|
| 1) 1941 թ. հուլիսի 22-ին | 3) 1939 թ. սեպտեմբերի 1-ին |
| 2) 1941 թ. հունիսի 22-ին | 4) 1941 թ. սեպտեմբերի 1-ին |

152. Երբ է ԽՍՀՄ-ի և Գերմանիայի միջև կնքվել չհարձակման պայմանագիրը.

- | | |
|----------------------------|---------------------------|
| 1) 1940 թ. հունիսի 22-ին | 3) 1939 թ. օգոստոսի 23-ին |
| 2) 1939 թ. սեպտեմբերի 1-ին | 4) 1941 թ. հունիսի 22-ին |

153. Երբ կազմացրվեց Հայկական 89-րդ հրաձգային Թամանյան դիվիզիան.

- | | |
|------------|------------|
| 1) 1956 թ. | 3) 1948 թ. |
| 2) 1946 թ. | 4) 1954 թ. |

154. Հայրենիքի դավաճանության անհիմն մեղադրանքով Երբ ձերբակալվեց ավիացիայի մարշալ Սերգեյ Խուդյակովը.

- | | |
|-------------------|-------------------|
| 1) 1949 թ. սկզբին | 3) 1947 թ. վերջին |
| 2) 1945 թ. վերջին | 4) 1948 թ. սկզբին |

155. ՀԿ(Բ)Կ կենտկոմի քարտուղար Գրիգոր Հարությունյանի ընտրողների հետ հանդիպումը, որտեղ նա խոսեց «Թուրքիայի կողմից զավթված հայական մարզերի» մասին, տեղի է ունեցել՝

- | | |
|--------------------------|-------------------------|
| 1) 1947 թ. մարտի 12-ին | 3) 1948 թ. ապրիլի 4-ին |
| 2) 1946 թ. փետրվարի 1-ին | 4) 1949 թ. հուլիսի 2-ին |

156. Խորհրդային կառավարությունը Երբ պաշտոնապես հայտարարեց, որ ԽՍՀՄ-ը Թուրքիայից ոչ մի տարածքային պահանջ չունի.

- | | |
|--------------------------|--------------------------|
| 1) 1953 թ. հուլիսի 30-ին | 3) 1953 թ. մայիսի 30-ին |
| 2) 1954 թ. ապրիլի 18-ին | 4) 1956 թ. հունվարի 4-ին |

157. Երբ է ձերբակալվել ԽՍՀՄ ներքին գործերի նախարար Լ. Բերիան.

- | | |
|--------------------------|----------------------------|
| 1) 1953 թ. հունիսի 26-ին | 3) 1954 թ. հոկտեմբերի 3-ին |
| 2) 1955 թ. հունիսի 26-ին | 4) 1956 թ. սեպտեմբերի 5-ին |

158. Երբ է Յակով Չարոբյանն ընտրվել ՀԿԿ կենտկոմի քարտուղար.

- | | |
|------------------------|------------------------|
| 1) 1966 թ. մարտին | 3) 1960 թ. մայիսին |
| 2) 1963 թ. հոկտեմբերին | 4) 1960 թ. դեկտեմբերին |

159. Երբ է Միխայիլ Գորբոչովն ընտրվել ԽՄԿԿ կենտկոմի գլխավոր քարտուղար.

- | | |
|--------------------|--------------------|
| 1) 1985 թ. մարտին | 3) 1984 թ. մարտին |
| 2) 1985 թ. մայիսին | 4) 1986 թ. ապրիլին |

160. Երբ է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության կողմից ԼՂԻՄ–ում ստեղծվել հատուկ կառավարման կոմիտեն.

- | | |
|-----------------------------|--------------------------|
| 1) 1988 թ. դեկտեմբերի 12–ին | 3) 1989 թ. մարտի 16–ին |
| 2) 1989 թ. հունվարի 11–ին | 4) 1990 թ. հունվարի 4–ին |

161. Երբ է Բաքվում տեղի ունեցել հայ բնակչության կոտորածը և տեղահանությունը.

- | | |
|-----------------------------|-----------------------------|
| 1) 1990 թ. հունվարի 13–20–ը | 3) 1991 թ. հունվարի 13–20–ը |
| 2) 1990 թ. փետրվարի 27–29–ը | 4) 1990 թ. ապրիլի 5–12–ը |

162. Երբ է հայտարարվել ԽՍՀՄ փլուզման և Անկախ Պետությունների Համագործակցության ստեղծման մասին.

- | | |
|----------------------------|----------------------------|
| 1) 1991 թ. մարտի 18–ին | 3) 1990 թ. դեկտեմբերի 8–ին |
| 2) 1991 թ. դեկտեմբերի 8–ին | 4) 1991 թ. օգոստոսի 19–ին |

163. Երբ է ԼՂՀ Գերագույն խորհուրդը հաստատել պետական դրոշը.

- | | |
|--------------------------|----------------------------|
| 1) 1991 թ. հունվարի 2–ին | 3) 1992 թ. հունիսի 2–ին |
| 2) 1993 թ. հունիսի 2–ին | 4) 1991 թ. սեպտեմբերի 2–ին |

2. ՓԱՍՏԵՐ ԵՎ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ

1. Նշվածներից ո՞վ է եղել Հայաստանի օգնության կոմիտեի (ՀՕԿ) առաջին նախագահը.
1) Վահան Տերյանը
2) Սիմոն Վրացյանը
3) Հովհաննես Քաջազնունին
4) Հովհաննես Թումանյանը
2. Քանի՞ կոմունիստ կար Հայաստանում 1920–1930–ական թթ.
1) 36 000
2) 34 000
3) 35 000
4) 38 000
3. 1930 թ. քանի՞ երիտասարդ կար ՀԿԵՄ–ի շարքերում.
1) 23 000
2) 30 000
3) 25 000
4) 28 000
4. Քանի՞ տրոցկիստական խումբ գոյություն ուներ Երևանի կոմերիտական կազմակերպության շարքերում.
1) 3
2) 2
3) 4
4) 5
5. 1927 թ. ՀԿ (Բ) Կ տվյալներով առավելագույնը քանի՞ մարդ էր Հայաստանում պաշտպանում Տրոցկու տեսակետները.
1) 228
2) 238
3) 239
4) 240
6. 1932 թ. քանի՞ մարդ գնդակահարվեց.
1) շուրջ 500
2) շուրջ 150
3) շուրջ 200
4) շուրջ 1000
7. 1932 թ. քանի՞ մարդ ազատագրկման ենթարկվեց.
1) շուրջ 2100
2) շուրջ 4000
3) շուրջ 12 200
4) շուրջ 5000
8. Ո՞վ ձերբակալվեց 1936 թ. մայիսին.
1) Ներսիկ Ստեփանյանը
2) Լ. Տրոցկին
3) Աղասի Խանջյանը
4) Լ. Կամենևը
9. Ո՞ւմ հրամանով սպանվեց Աղասի Խանջյանը.
1) Լ. Տրոցկու
2) Լ. Կամենևի
3) Բերիայի
4) Գ. Ջինովկի
10. 1945–1952 թթ. Հայաստանում քանի՞ մարդ բռնադատվեց.
1) 2945
2) 2946
3) 2947
4) 2948
11. Քանի՞ ընտանիք արքորվեց Հայաստանից 1949 թ. հունիսի 14–ի որոշմամբ.
1) 2700
2) 2650
3) 2940
4) 2935
12. Ընդամենը քանի՞ մարդ արքորվեց Հայաստանից 1949 թ. հունիսի 14–ի որոշմամբ.
1) 13 272
2) 14 272
3) 15 272
4) 18 272

13. 1949 թ. ընդամենը քանի հայ արտորվեց Անդրկովկասից Ալթայի երկրամաս.

- 1) 14 486 2) 15 486 3) 16 486 4) 19 486

14. Ո՞վ ընտրվեց ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար 1953 թ. նոյեմբերին.

- 1) Յակով Զարոբյանը 3) Սուրեն Թովմասյանը
2) Գրիգոր Հարությունյանը 4) Անաստաս Միկոյանը

15. Քանի եկեղեցի էր փակված Հայաստանում 1937 թ. վերջին.

- 1) 600 2) 700 3) 800 4) 900

16. Ո՞ր համագումարում է Ն. Խրուշչովը քննադատել անհատի պաշտամունքը.

- 1) ԽՄԿԿ XIX համագումարում 3) ԽՄԿԿ XX համագումարում
2) ԽՄԿԿ XXI համագումարում 4) ԽՄԿԿ XXII համագումարում

17. 1950–1970–ական թթ. հակախորհրդային մեղադրանքով քանի մարդ է դատապարտվել Հայաստանում.

- 1) ավելի քան 50 3) ավելի քան 350
2) ավելի քան 100 4) ավելի քան 600

18. Ինչ թերթեր է հրատարակել ԱՄԿ–ն.

- 1) «Փարոս» և «Երկունք» 3) «Հայրենիք» և «Երկունք»
2) «Ազգ» և «Հայրենիք» 4) «Փարոս» և «Հայրենիք»

19. Որտեղ է հրավիրվել 1923 թ. նոյեմբերի ՀՅԴ ինքնավերացման համագումարը.

- 1) Թիֆլիսում 3) Երևանում
2) Բեյրութում 4) Փարիզում

20. Քանի շրջաններ ստեղծվեցին 1930 թ. գավառային բաժանումից հետո.

- 1) 22 2) 23 3) 25 4) 24

21. Նշված կոթողներից որի հեղինակն է քանդակագործ Նիկողայոս Նիկողոսյանը.

- 1) «Սասունցի Դավիթ» 3) «Միքայել Նալբանդյան»
2) «Դավիթ բեկ» 4) «Մարտիրոս Սարյան»

22. Ո՞ւմ ձևակերպմամբ հրապարակվեց Հայոց ազգային խորհրդի կոչը 1918 թ. մայիսին.

- 1) Հ. Քաջազնունու 3) Ն. Աղբալյանի
2) Գ. Նժդեհի 4) Խ. Կարճիկյանի

23. Հայկական կողմից ովքեր էին մասնակցում Բաթումում 1918 թ. վերսկսված բանակցություններին.

- 1) Ն. Աղբալյանը և Հովհ. Քաջազնունին
2) Ս. Վրացյանը և Ա. Խատիսյանը
3) Հ. Քաջազնունին և Ա. Խատիսյանը
4) Ա. Ահարոնյանը և Ա. Գյուլխանդանյանը

24. Բաթումի պայմանագիրը վերանայելու նպատակով ո՞ւմ գլխավորությամբ հայկական պատվիրակությունը մեկնեց Կ. Պոլիս.

- | | |
|------------------|-------------------|
| 1) Ա. Խատիսյանի | 3) Հ. Օհանջանյանի |
| 2) Ա. Ահարոնյանի | 4) Հ. Քաջազնունու |

25. 1918–1919 թթ. Բաքվի և Ելիզավետպոլի նահանգների հայկական գավառներում 50 հազար հայ բնակչությունից որքանը փրկվեց.

- | | | | |
|-------------|-------------|-------------|-------------|
| 1) 15 հազար | 2) 20 հազար | 3) 10 հազար | 4) 25 հազար |
|-------------|-------------|-------------|-------------|

26. Իշխանության ինչ մարմին ստեղծեց արցախահայության առաջին համագումարը.

- 1) Ղարաբաղի հատուկ կոմիտե
- 2) Ղարաբաղի ժամանակավոր կառավարություն
- 3) Ղարաբաղի ժողովրդական կառավարություն
- 4) Ղարաբաղի ազգային խորհուրդ

27. Որքան հայ բնակչություն կար Կիլիկիայում 1920 թ. սկզբներին.

- | | | | |
|--------------|--------------|-------------|--------------|
| 1) 200 հազար | 2) 100 հազար | 3) 50 հազար | 4) 150 հազար |
|--------------|--------------|-------------|--------------|

28. Ո՞ր քաղաքը Կիլիկիայում դարձավ քեմալականների հարձակման առաջին թիրախը.

- | | | | |
|--------|----------|----------|------------|
| 1) Սիս | 2) Ադանա | 3) Մարաշ | 4) Տարսուն |
|--------|----------|----------|------------|

29. Ո՞ր փաստաթղթում ձևակերպում ստացան քեմալական շարժման նպատակները.

- 1) «Թուրքական ազգային դաշինք»
- 2) «Բարենորոգումների թուրքական հրովարտակ»
- 3) «Թուրքական ազգային ուխտ»
- 4) «Թուրքական ազգային համաձայնություն»

30. Ինչ էր ազդարարվում Հայրենիքի փրկության կոմիտեի (ՀՓԿ) առաջին հրամաններով.

- 1) Հայաստանում խորհրդային իշխանությանը աջակցելու և ռազմական կոմունիզմը վերացնելու մասին
- 2) Հայաստանում հողային բարեփոխումներ անցկացնելու մասին
- 3) խորհրդային իշխանության տապալման և բոլոր բոլշևիկներին ձերբակալելու մասին
- 4) Մայիսյան ապստամբության մասնակիցներին ներում շնորհելու մասին

31. Մարդասիրական օգնության համար 1922 թ. մայիսի 10–ին ո՞ւմ շնորհակալություն հայտնեց Ա. Մյասնիկյանը.

- 1) Ռուսաստանի Ժողկոմխորհի նախագահին
- 2) ԱՄՆ նախագահին
- 3) Անտանտի երկրների Գերագույն խորհրդին
- 4) Մեծ Բրիտանիայի վարչապետին

32. Ո՞ր խորհրդային հանրապետության կուսակցական ղեկավարությունն էր դիմադրում Անդրկովկասի դաշնային միութենական պայմանագրի ստորագրմանը.

- 1) Հայաստանի՝ Ա. Մյասնիկյանի գլխավորությամբ
- 2) Ադրբեջանի՝ Ն. Նարիմանովի գլխավորությամբ
- 3) Վրաստանի՝ Պ. Մդիվանու գլխավորությամբ
- 4) Ռուսաստանի՝ Ի. Ստալինի գլխավորությամբ

33. Ի՞նչ առաջարկությամբ էին հանդես գալիս Պ. Մդիվանին և նրա կողմնակիցները Անդրկովկասի հանրապետությունների դաշնության ստեղծման ժամանակ.

- 1) հանրապետությունների ինքնիշխանությունը վերացնելու առաջարկությամբ
- 2) հանրապետությունների միջև երկկողմանի պայմանագրային հարաբերություններ հաստատելու և նրանց իրական անկախությունը պահպանելու
- 3) հանրապետություններին միայն մշակութային ինքնավարություն տալու
- 4) հանրապետությունների միջև միայն ռազմական դաշինք հաստատելու

34. Ըստ Լենինի առաջարկի՝ ի՞նչ հիմքի վրա էին ԽՍՀՄ-ի կազմում միավորվելու խորհրդային հանրապետությունները.

- 1) Բոլոր հանրապետություններն ընդգրկվելու էին Ռուսաստանի դաշնության մեջ՝ առանց միությունից դուրս գալու իրավունքի:
- 2) Բոլոր հանրապետությունները, այդ թվում՝ Ռուսաստանը, միավորվել էին նոր պետականության մեջ՝ պահպանելով իրենց ինքնիշխանությունը և միությունից դուրս գալու իրավունքը:
- 3) Միության մեջ մտնող բոլոր միավորները ունենալու էին ինքնավար մարզի կարգավիճակ և միայն մշակութային հավասար իրավունքներ:
- 4) Միության մեջ ընդգրկվող բոլոր հանրապետությունները իրավունք չունեին դուրս գալու միությունից:

35. Ի՞նչ առաջարկությամբ հանդես եկավ Ա. Բեկզադյանը 1921 թ. հունիսի 25–27-ին Թիֆլիսում հրավիրված անդրկովկասյան հանրապետությունների սահմանները որոշող հանձնաժողովի նիստում.

- 1) Հայաստանին միացնել Նախիջևանն ու Ախալքալաքը
- 2) Լոռու և Լեռնային Ղարաբաղի հետ միասին ՀՍԽՀ-ին միացնել նաև Ախալքալաքի գավառը
- 3) Հայաստանին միացնել Կարսը, Լոռին և Ախալցխայի գավառը
- 4) Հայաստանին միացնել Լոռին, Նախիջևանը, Կաղզվանը և Օլթին

36. Համազանգեզուրյան համագումարը 1920 թ. դեկտեմբերի 25-ին Սյունիքը հռչակեց՝

- 1) Լեռնահայաստան
- 2) Ինքնավար Սյունիք
- 3) Հայաստանի Հանրապետություն
- 4) Զանգեզուրի անկախ հանրապետություն

37. Ի՞նչ դիրք բռնեց ՀԿ(Բ)Կ կենտկոմը Լեոնային Ղարաբաղը Ադրբեջանին բռնակցելու 1921 թ. հուլիսի 5-ի որոշման դեմ.

- 1) Լռելյայն ընդունեց այդ որոշումը:
- 2) Միանգամայն սխալ և անբավարար ճանաչեց այդ որոշումը և բողոքեց դրա դեմ:
- 3) Կոչ արեց հայ ազգաբնակչությանը դիմելու զինված պայքարի:
- 4) Ողջունեց այդ որոշումը:

38. Ինչի՞ հետ էին կապում Ռուսաստանի իշխանությունները խորհրդա-թուրքական սահմանի հարցը 1921 թ. Մոսկվայի բանակցությունների ժամանակ.

- 1) Հայաստանի տարածքային արդարացի պահանջների իրագործման խնդրի հետ
- 2) ռուս և թուրք ժողովուրդների դարավոր բարեկամության խնդրի հետ
- 3) քեմալականների հետ հակաիմպերիալիստական դաշինք ստեղծելու խնդրի հետ
- 4) քեմալական Թուրքիայի՝ Խորհրդային Ռուսաստանի վրա հարձակվելու սպառնալիքի հետ

39. Թուրքական զինագրավման հետևանքով 1920 թ. նոյեմբերից մինչև 1921 թ. ապրիլը որքան՞ մարդ կոտորվեց Ալեքսանդրապոլի գավառում.

- 1) 100 հազար 2) 60 հազար 3) 50 հազար 4) 12 հազար

40. Ի՞նչ էր նախատեսվում ՌԿ(Բ)Կ կովկասյան բյուրոյի 1921 թ. սեպտեմբերի 3-ի «Կարսի կոնֆերանսի մասին» որոշումով.

- 1) Կոնֆերանսում բոլոր հարցերը քննարկել առանց նախապայմանների, առանց նախնական փոխհամաձայնության և պայմանավորվածությունների:
- 2) Խստորեն պահպանել Մոսկվայի պայմանագրի շրջանակները, «ոչ մի դեպքում թույլ չտալ Կովկասի հանրապետությունների մեկուսի ելույթները»:
- 3) Թույլատրել բանակցող կողմերին առաջ քաշել բոլոր հուզող խնդիրները, այդ թվում նաև հանրապետությունների միջև առկա տարաձայնությունները:
- 4) Հայաստանին թույլատրել բարձրացնել Յեղասպանության հարցը և պահանջել փոխհատուցում:

41. Ի տարբերություն Մոսկվայի 1921 թ. մարտի 16-ի պայմանագրի՝ ի՞նչ էր արձանագրում Կարսի պայմանագիրը Նախիջևանի հարցում.

- 1) Նախիջևանի մարզը հանձնել Խորհրդային Հայաստանին՝ որպես նրա անտրոհելի մաս:
- 2) Նախիջևանի մարզի նկատմամբ խնամակալությունը հանձնել Ադրբեջանին՝ որևէ այլ երրորդ պետության զիջելու պայմանով:
- 3) Նախիջևանը հայտարարել չեզոք գոտի:
- 4) Նախիջևանի մարզը՝ որպես ինքնավար տարածք, տալ Խորհրդային Ադրբեջանի խնամակալությանը՝ առանց մի երրորդ պետության զիջելու պայմանի:

42. 1921 թ. Մոսկվա մեկնող թուրքական պատվիրակությունը ճանապարհին հանդիպումներ ունեցավ՝

- 1) Թիֆլիսում՝ Վրաստանի ղեկավարության հետ
- 2) Երևանում՝ Հայաստանի ղեկավարության հետ
- 3) Բաքվում՝ Ադրբեջանի ղեկավարության հետ
- 4) Կարսում՝ Ռուսաստանի ղեկավարության հետ

43. 1921 թ. Մոսկվայի բանակցությունների օրերին քեմալականները միաժամանակ բանակցություններ էին վարում՝

- 1) Փարիզում
- 2) Վիեննայում
- 3) Լոնդոնում
- 4) Բեռլինում

44. Տեղական իշխանության ամբողջական համակարգը Հայաստանի առաջին հանրապետությունում ենթակա էր՝

- 1) Երևանի Հայոց ազգային խորհրդին
- 2) ՆԳ նախարարին
- 3) Հայաստանի խորհրդին
- 4) տեղական ինքնակառավարման նախարարին

45. Որքան էր գաղթականության թիվը Հայաստանում 1918 թ.

- 1) 500 հազար
- 2) 200 հազար
- 3) 300 հազար
- 4) 250 հազար

46. Ո՞ւմ նախաձեռնությամբ է ընդունվել «Ամբողջական Հայաստանի անկախության» մասին հայտարարությունը Փարիզի խորհրդաժողովում.

- 1) Ավ. Ահարոնյանի
- 2) Պողոս Նուբարի
- 3) Լ. Զորջի
- 4) Վ. Վիլսոնի

47. Քանի՞ արդյունաբերական ձեռնարկություններ շահագործման հանձնվեցին 2-րդ հնգամյակի՝ 1933–1937 թթ. ընթացքում.

- 1) 26
- 2) 18
- 3) 36
- 4) 28

48. Որքան էր բանվորների թիվը Խորհրդային Հայաստանում 1928–1940 թթ.

- 1) 90,5 հազար
- 2) 109,2 հազար
- 3) 92,4 հազար
- 4) 86,7 հազար

49. Հնչակյան կուսակցության առաջնորդներից ո՞վ դարձավ կոմկուսի անդամ.

- 1) Ռ. Կաֆյանը
- 2) Ա. Նազարբեկյանը
- 3) Ա. Արփիարյանը
- 4) Ռ. Խանազատը

50. Ո՞րն էր մինչև նոր Սահմանադրության ընդունումը պետության իրավական կարգավիճակը որոշող հիմնական փաստաթուղթը Հայաստանում 1990–ական թթ. սկզբին.

- 1) ՀՍԽՀ Սահմանադրությունը
- 2) «Ղարաբաղ» կոմիտեի ծրագիրը
- 3) Անկախության հռչակագիրը
- 4) ՀՀԾ-ի ծրագիրը

51. 1993 թ. հունիսի 12-ին Աղղամի մոտ՝ Մարզիլու գյուղում, զոհվեց՝

- | | |
|----------------------|-----------------------|
| 1) Մովսես Գորգիսյանը | 3) Մոնթե Մելքոնյանը |
| 2) Թաթուլ Կրպեյանը | 4) Սիմոն Աչիբգյոզյանը |

52. Որքան էր ՀԿԵՄ-ի անդամների թիվը 1930 թ.

- | | | | |
|-------------|-------------|-------------|-------------|
| 1) 25 հազար | 2) 23 հազար | 3) 30 հազար | 4) 35 հազար |
|-------------|-------------|-------------|-------------|

53. Թվարկվածներից ո՞վ տրոցկիստական ընդդիմության մասնակից չէ.

- | | |
|------------------|--------------|
| 1) Լ. Տրոցկի | 3) Գ. Ջինովև |
| 2) Գ. Օրջոնիկիձե | 4) Լ. Կամենև |

54. Ո՞ւմ կողմից է արվել «առանց հապաղելու հաց տրամադրել Կարմիր բանակին» կոչը.

- | | |
|--------------------|----------------|
| 1) ՀԿ(Բ)Կ կենտկոմի | 3) Ռազմհեղկոմի |
| 2) Ժողկոմխորհի | 4) ՉԵԿԱ-ի |

55. Ո՞վ էր ՉԵԿԱ-ի նախագահը 1921 թ. սկզբին.

- | | |
|-------------------|------------------|
| 1) Ա. Նուրիջանյան | 3) Ի. Դովլաթյան |
| 2) Գ. Այվազով | 4) Գ. Աթարբեկյան |

56. Ո՞վ էր ՀՀ առաջին արտգործնախարարը.

- | | |
|----------------------|------------------------|
| 1) Վարդան Օսկանյանը | 3) Րաֆֆի Հովհաննիսյանը |
| 2) Վազգեն Մանուկյանը | 4) Արման Կիրակոսյանը |

57. 1991 թ. դեկտեմբերին ո՞ր երկրների կողմից ճանաչվեց Հայաստանը.

- | |
|--|
| 1) Կիպրոսի, Ռուսաստանի, Բուլղարիայի, ԱՄՆ-ի |
| 2) ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Կանադայի, Ռումինիայի |
| 3) Ռուսաստանի, Վրաստանի, Իրանի, Թուրքիայի |
| 4) ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Վրաստանի, Ռումինիայի |

58. 1990 թ. օգոստոսի 4-ին Լևոն Տեր-Պետրոսյանն ընտրվեց՝

- | |
|--|
| 1) Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահ |
| 2) ՀՀ նախագահ |
| 3) ՀՀ նախագահ |
| 4) ՀՀ Ազգային ժողովի նախագահ |

59. Նշվածներից ո՞վ է Երկրորդ համաշխարհային պատերազմի առաջին հայ հերոսը.

- | | |
|-------------------------|----------------------|
| 1) Հովհաննես Բաղրամյանը | 3) Լազր Չափչախյանը |
| 2) Նելսոն Ստեփանյանը | 4) Կարապետ Սիմոնյանը |

60. 1960 թ. դեկտեմբերին ո՞վ ընտրվեց ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար.

- | | |
|--------------------------|--------------------|
| 1) Գրիգոր Հարությունյանը | 3) Յակով Զարոբյանը |
| 2) Սուրեն Թովմասյանը | 4) Անտոն Քոչինյանը |

61. Որքան է Հայոց ցեղասպանությունը ճանաչած ու դատապարտած պետությունների թիվը.

- 1) մեկուկես տասնյակ
- 2) երկուսուկես տասնյակ
- 3) երեքուկես տասնյակ
- 4) մոտ չորս տասնյակ

62. ԱՄՆ-ի քանի նահանգներ են ճանաչել Հայոց ցեղասպանությունը.

- 1) 38
- 2) 40
- 3) 42
- 4) 48

63. Ո՞ր թերթի խմբագիրն էր Հրանտ Դինքը.

- 1) «Մարմարա»
- 2) «Լրո Գիր»
- 3) «Ակոս»
- 4) «Ազդարար»

64. 1935 թ. ո՞ր հայկական ֆիլմը բարձրացավ էկրան.

- 1) «Գիքոր»
- 2) «Նամուս»
- 3) «Պեպո»
- 4) «Զարե»

65. Արցախի ո՞ր շրջանների հայ բնակչության դեմ էին ուղղված ՕՍՕՆ-ի գործողությունները.

- 1) Շահումյանի շրջանի և Գետաշենի ենթաշրջանի
- 2) Գետաշենի ու Մարտունաշենի
- 3) Շահումյանի շրջանի ու Մարտակերտ քաղաքի
- 4) Ֆիզուլու, Զաբրախիլի ու Կուբաթլուի

66. Որտեղի՞ մարտերում զոհվեց Թաթուլ Կրպեյանը.

- 1) Քարինտակի
- 2) Գետաշենի ու Մարտունաշենի
- 3) Շուշիի
- 4) Քարվաճառի (Քելբաջարի)

67. Ո՞ր տարածքում է հռչակվել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը.

- 1) Նախիջևանի, Զանգեզուրի և նախկին ԼՂԻՄ տարածքներում
- 2) նախկին ԼՂԻՄ-ի և Շահումյանի շրջանի տարածքներում
- 3) նախկին ԼՂԻՄ-ի և Գետաշենի ենթաշրջանի տարածքներում
- 4) նախկին ԼՂԻՄ-ի և Զանգեզուրի տարածքներում

68. ԼՂՀ բնակչության քանի տոկոսն է մասնակցել անկախության հանրաքվեին.

- 1) 94,39 %-ը
- 2) 83 %-ը
- 3) 80 %-ը
- 4) 99 %-ը

69. Քվեարկողների քանի տոկոսն է կողմ քվեարկել ԼՂ անկախության օգտին.

- 1) 94,39 %-ը
- 2) 83 %-ը
- 3) 80 %-ը
- 4) 99 %-ը

70. Արցախի հայ բնակչության անվտանգությունն ապահովելու համար անհրաժեշտ էր՝

- 1) վերացնել թշնամու ռազմական հենակետերը
- 2) ի պատասխան ադրբեջանցիների՝ ումբակոծել Արցախի ադրբեջանական բնակավայրերը
- 3) կազմակերպել ԼՂՀ բնակչության գաղթը դեպի ՀՀ
- 4) ԼՂՀ բնակչությանը տեղավորել Շուշիի անառիկ բերդերում

- 71. Արցախի հր գյուղն էր հենակետ դարձել Շուշի կրակակետերը լռեցնելու գործում.**
- 1) Կրկժանը
2) Խոջալուն
3) Քարինտակը
4) Մարզիլուն
- 72. Ո՞վ էր գլխավորում Խոջալուի ուղղությամբ հայերի ռազմական գործողությունները.**
- 1) Արկադի Տեր-Թադևոսյանը (Կոմանդոս)
2) Սեյրան Օհանյանը
3) Աշոտ Ղուլյանը (Բեկոր)
4) Մոնթե Մելքոնյանը
- 73. Որքան էր հայ ինքնապաշտպանական ուժերի կորուստը Խոջալուի ազատագրման ժամանակ.**
- 1) 6 զոհ և 15 վիրավոր
2) 8 զոհ և 20 վիրավոր
3) 10 զոհ և 15 գերի
4) 8 զոհ և 20 գերի
- 74. Որքան մարդ է զոհ գնացել ադրբեջանցիների կազմակերպած Խոջալուի բնակչության կոտորածին.**
- 1) 200–1500
2) 400–2000
3) 500–1500
4) 600–2500
- 75. Ո՞րն էր ադրբեջանցիների առաջին խոշոր կորուստը Արցախյան պատերազմի սկզբնական փուլում.**
- 1) Լաչինը
2) Խոջալուն
3) Քելբաջարը
4) Աղդամը
- 76. Ո՞ւմ վրա էր դրված Շուշիի ազատագրման գործողությունների ծրագրի կազմման ու իրագործման ղեկավարումը.**
- 1) Աշոտ Ղուլյանի (Բեկոր)
2) Արկադի Տեր-Թադևոսյանի (Կոմանդոս)
3) Սեյրան Օհանյանի
4) Վալերի Չիթչյանի
- 77. Որքան էր թշնամու զինյալների թիվը Շուշիի համար մղվող մարտերում.**
- 1) 2000 զինյալ
2) 2300 զինյալ
3) 1500 զինյալ
4) 1700 զինյալ
- 78. Որքան էր հայկական ուժերի թիվը Շուշիի ազատագրման ժամանակ.**
- 1) 1500 հոգի
2) 1700 հոգի
3) 2000 հոգի
4) 2300 հոգի
- 79. Քանի՞ հայկական ջոկատ էր մասնակցում Շուշիի ազատագրմանը.**
- 1) 20
2) 50
3) 60
4) 80
- 80. Քանի՞ ուղղություններով էր կազմակերպվել հարձակումը Շուշիի վրա.**
- 1) 2
2) 3
3) 4
4) 8
- 81. Որտեղ էր դիրքավորվել հակառակորդը Շուշիի մարտերի ժամանակ.**
- 1) Ստեփանակերտում
2) Շոշի կամրջից ոչ հեռու
3) Ս. Ամենափրկիչ (Ղազանչեցոց) եկեղեցու մոտակայքում
4) Շուշիի շուկայի մոտակայքում

82. 1992 թ. մայիսի 9-ի առավոտյան 6 անց 30-ին ո՞վ տեղեկացրեց Ա. Տեր-Թադևոսյանին, որ շուտով կմտնեն քաղաք.

- | | |
|--------------------|--------------------|
| 1) Սեյրան Օհանյանը | 3) Աշոտ Ղուլյանը |
| 2) Վիտալի Չիթյանը | 4) Սամվել Բաբայանը |

83. Աշոտ Ղուլյանը 1992 թ. մայիսի 9-ի առավոտյան տեղեկացրեց Ա. Տեր-Թադևոսյանին, որ՝

- 1) քաղաքը շրջափակված է թշնամու կողմից
- 2) հայերը նստած են Շուշիի բերդի պատին և շուտով կմտնեն քաղաք
- 3) թշնամին նոր համալրում է ստացել, և հայերը պետք է նահանջեն
- 4) քաղաքի հայերը պետք է էվակուացվեն

84. Ո՞վ էր գլխավորում ԼՂՀ Պաշտպանության պետական կոմիտեն.

- | | |
|-------------------------------------|---------------------|
| 1) Արկադի Տեր-Թադևոսյանը (Կոմանդոս) | 3) Օլեգ Եսայանը |
| 2) Սեյրան Օհանյանը | 4) Ռոբերտ Քոչարյանը |

85. 1993 թ. ո՞վ էր ղեկավարում Մարտունու ուղղությամբ մարտնչող հայկական զորամասերը.

- | | |
|---------------------|---------------------|
| 1) Սեյրան Օհանյանը | 3) Սամվել Բաբայանը |
| 2) Մոնթե Մելքոնյանը | 4) Գ. Դալիբալթայանը |

86. Որտեղ է գոհվել Մոնթե Մելքոնյանը.

- | | |
|-----------------------------------|-----------------------|
| 1) Մարտունու մոտ՝ Ճարտար գյուղում | 3) Քարվաճառի շրջանում |
| 2) Աղբամի մոտ՝ Մարզիլու գյուղում | 4) Շուշիում |

87. Որքան էր 1920-ական թթ. ԱՄՆ-ում և Կանադայում հաստատված հայերի թիվը.

- | | |
|--------------------|--------------------|
| 1) շուրջ 280 հազար | 3) շուրջ 200 հազար |
| 2) շուրջ 130 հազար | 4) շուրջ 300 հազար |

88. Որքան էր 1920-ական թթ. Իրանում հաստատված հայերի թիվը.

- | | |
|--------------------|--------------------|
| 1) շուրջ 130 հազար | 3) շուրջ 280 հազար |
| 2) շուրջ 100 հազար | 4) շուրջ 200 հազար |

89. Որքան հայ էր մնացել Թուրքիայում 1920-ական թթ.

- | | | | |
|--------------|--------------|--------------|--------------|
| 1) 250 հազար | 2) 300 հազար | 3) 600 հազար | 4) 280 հազար |
|--------------|--------------|--------------|--------------|

90. 1920-ական թթ. սկզբին որքան հայ էր հաշվվում հորհրդային Միության սահմաններից դուրս.

- | | |
|--------------------|---------------------|
| 1) շուրջ 600 հազար | 3) շուրջ 1,5 միլիոն |
| 2) շուրջ 1 միլիոն | 4) շուրջ 2 միլիոն |

91. 1920-ական թթ. որքան հայ էր հանգրվանել Վրաստանում, Ադրբեջանում և Հյուսիսային Կովկասում.

- | | |
|--------------------|--------------------|
| 1) շուրջ 100 հազար | 3) շուրջ 280 հազար |
| 2) շուրջ 130 հազար | 4) շուրջ 600 հազար |

92. 1920 թվականին ՀՀ-ում որքան արևմտահայ գաղթական կար.

- | | |
|--------------------|--------------------|
| 1) շուրջ 40 հազար | 3) շուրջ 280 հազար |
| 2) շուրջ 130 հազար | 4) շուրջ 200 հազար |

93. Ո՛վ մերժեց Թուրքիայում հայերի «ազգային օջախ» ստեղծելու առաջարկը.

- | | |
|--------------------|---------------------|
| 1) Էնվեր փաշան | 3) Իսմեթ փաշան |
| 2) Մուստաֆա Քեմալը | 4) Բեհաէդդին Շաքիրը |

94. Որքան հայ Կ. Պոլսից ներգաղթեց Հայաստան 1922 թվականին.

- | | |
|--------------|--------------|
| 1) 2,5 հազար | 3) 3,5 հազար |
| 2) 3 հազար | 4) 4,5 հազար |

95. Որքան էր 1921–1936 թթ. Հայաստան ներգաղթածների ընդհանուր թիվը.

- | | |
|-------------|-------------|
| 1) 23 հազար | 3) 51 հազար |
| 2) 42 հազար | 4) 90 հազար |

96. Ո՞ր մարմինները միջոցներ տրամադրեցին 1920–ական թթ. ներգաղթածների համար նոր ավաններ ու գյուղեր կառուցելու համար.

- 1) հայ քաղաքական կուսակցությունները
- 2) Հայոց եկեղեցին
- 3) հայրենակցական կազմակերպությունները
- 4) Հայ դատի հանձնախմբերը

97. Որքան սփյուռքահայեր 1946 թ. տեղափոխվեցին Լիբանանից, Իրանից, Սիրիայից, Հունաստանից, Բուլղարիայից և Ռումինիայից.

- | | |
|-------------|-------------|
| 1) 63 հազար | 3) 25 հազար |
| 2) 51 հազար | 4) 10 հազար |

98. Որքան ներգաղթյալ է ընդունել Խորհրդային Հայաստանը 1947 թ.

- | | |
|-------------|-------------|
| 1) 51 հազար | 3) 25 հազար |
| 2) 63 հազար | 4) 10 հազար |

99. Որքան ներգաղթյալ է ընդունել Խորհրդային Հայաստանը 1948 թ.

- | | |
|-------------|-------------|
| 1) 51 հազար | 3) 25 հազար |
| 2) 63 հազար | 4) 10 հազար |

100. Որքան հայ է ներգաղթել Խորհրդային Հայաստան 1950–ական թթ.

- | | |
|-------------|-------------|
| 1) 63 հազար | 3) 10 հազար |
| 2) 25 հազար | 4) 4 հազար |

101. Որքան հայ է ներգաղթել Խորհրդային Հայաստան 1962–1982 թթ.

- | | |
|-----------------|-----------------|
| 1) մոտ 63 հազար | 3) մոտ 25 հազար |
| 2) մոտ 32 հազար | 4) մոտ 4 հազար |

102. Արևելյան Եվրոպայի երկրներից ու Չինաստանից հեռացած սփյուռքահայերը իր երկրների հայ գաղթօջախներն են համարել.

- 1) ԱՄՆ-ի, Ավստրալիայի, Կանադայի
- 2) Բուլղարիայի, Ռումինիայի, Իրանի
- 3) Հյուսիսային Կովկասի և Վրաստանի
- 4) Բալկանյան երկրների և Մերձավոր Արևելքի

103. Որքան հայ է արտագաղթել Ադրբեջանից 1988-1990 թթ.՝ այնտեղ կազմակերպված կոտորածների ու տեղահանության արդյունքում.

- 1) շուրջ 200 հազար
- 2) շուրջ 300 հազար
- 3) շուրջ 400 հազար
- 4) շուրջ 500 հազար

104. Ո՞րն էր 1940-ական թթ. տարբեր երկրներում կազմակերպված ազգային խորհուրդների խնդիրը.

- 1) բոլոր միջոցներով օժանդակել հայրենադարձության կազմակերպմանը
- 2) բոլոր միջոցներով օժանդակել ֆաշիզմի դեմ պայքարող երկրների հաղթանակին
- 3) բոլոր միջոցներով հասնել ֆաշիստական ճամբարներից հայ ռազմագերիների ազատագրմանը
- 4) բոլոր միջոցներով խոչընդոտել Սփյուռքի գաղթօջախներում ֆաշիստական վարչակարգի հաստատմանը

105. Ո՞վ էր հայկական ազգային կոմիտեի ղեկավարը, ով հուշագիր ներկայացրեց ՄԱԿ-ի նիստին.

- 1) Ա. Ահարոնյանը
- 2) Պողոս Նուբար փաշան
- 3) Ս. Վրացյանը
- 4) Հ. Օհանջանյանը

106. Քանի՞ եկեղեցական թեմեր էին մասնակցում Հայկական համաշխարհային կոնգրեսին.

- 1) 22
- 2) 31
- 3) 36
- 4) 70

107. 1920-ական թթ. իրն էր գիտական մտքի զարգացման հիմնական կենտրոնը Հայաստանում.

- 1) գիտությունների ազգային ակադեմիան
- 2) Մատենադարանը
- 3) Երևանի պետական համալսարանը
- 4) Գիտության և արվեստի ինստիտուտը

108. Ո՞ւմ ջանքերով վերականգնվեց Չվարթնոց տաճարի հատակագիծը.

- 1) Ալեքսանդր Թամանյանի
- 2) Մարկ Գրիգորյանի
- 3) Թորոս Թորամանյանի
- 4) Կարո Հալաբյանի

109. 1933 թ. դրությամբ քանի՞ ինքնուրույն գիտահետազոտական հիմնարկներ էին գործում հանրապետությունում.

- 1) 20
- 2) 30
- 3) 40
- 4) 50

110. Ո՞վ էր եռագույն հեռուստատեսության գյուտի հեղինակը.

- | | |
|----------------------------|-------------------------|
| 1) Ստեփան Ղամբարյան | 3) Հովհաննես Ադամյան |
| 2) Հովսեփ Տեր-Աստվածատրյան | 4) Հովհաննես Կարապետյան |

111. Ո՞վ էր հայ գրականության մեջ պատմական անհատի և ժողովրդական զանգվածների փոխհարաբերությունների վերաբերյալ նոր ելակետ մշակողը.

- | | |
|-------------------|-----------------------|
| 1) Ակսել Բակունցը | 3) Դերենիկ Դեմիրճյանը |
| 2) Եղիշե Չարենցը | 4) Ստեփան Զորյանը |

112. Մինչ Հայրենական մեծ պատերազմը քանի թատրոն էր գործում Հայաստանում.

- | | | | |
|-------|-------|-------|-------|
| 1) 22 | 2) 25 | 3) 34 | 4) 36 |
|-------|-------|-------|-------|

113. Ո՞ր ֆիլմն է հայկական կինեմատոգրաֆի առաջնեկը.

- | | |
|-------------|--------------|
| 1) «Նամուս» | 3) «Գիքոր» |
| 2) «Պեպո» | 4) «Խասպուշ» |

114. Նշվածներից որն է հայկական առաջին հնչյունային կինոնկարը.

- | | |
|------------------|------------|
| 1) «Նամուս» | 3) «Պեպո» |
| 2) «Պատվի համար» | 4) «Գիքոր» |

115. Ո՞ւմ անունով է հետագայում կոչվել Հայկինոն.

- | | |
|----------------------|-------------------------|
| 1) Վարդան Աճեմյանի | 3) Լևոն Քալանթարյանի |
| 2) Համո Բեկնազարյանի | 4) Գաբրիել Սունդուկյանի |

116. Ո՞վ էր գլխավորում 6 միլիարդ էլեկտրոն-վոլտ էներգիայով էլեկտրոնային արագացուցչի նախագծումն ու կառուցումը.

- | | |
|--------------------------|---------------------|
| 1) Վիկտոր Համբարձումյանը | 3) Արմենակ Մնջոյանը |
| 2) Արտեմ Ալիխանյանը | 4) Լևոն Ռոտինյանը |

117. Ո՞վ էր գլխավորում գիտությունների ակադեմիայի նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտը.

- | | |
|---------------------|----------------------|
| 1) Արտեմ Ալիխանյանը | 3) Լևոն Ռոտինյանը |
| 2) Արմենակ Մնջոյանը | 4) Ստեփան Ղամբարյանը |

118. Ո՞ր աշխատությունն է հրատարակվել 1960–1980–ական թթ.

- 1) «Հայ ժողովրդի պատմություն» ութհատորյակը
- 2) «Հայ նոր գրականության պատմություն» եռահատորյակը
- 3) «Սովետահայ գրականության պատմություն» երկհատորյակը
- 4) «Համաշխարհային պատմություն» վեցհատորյակը

119. Հայաստանի առաջին հանրապետության հռչակումից հետո ինչպե՞ս ձևավորվեց երկրի բարձրագույն օրենսդիր իշխանությունը.

- 1) ուղղակի, փակ, գաղտնի ընտրությունների ճանապարհով
- 2) Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի հիմքի վրա
- 3) Երևանի Հայոց ազգային խորհրդի հիմքի վրա
- 4) Երևանի և Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդների հիմքի վրա

120. 1920 թ. Ինչն էր հայ բոլշևիկների կողմից համարվում իշխանությունը նվաճելու նպաստավոր պայման.

- 1) Ժողովրդական լայն զանգվածների աջակցությունը
- 2) Ադրբեջանի խորհրդայնացումը
- 3) հայ ժողովրդական կուսակցության ընդդիմություն լինելը
- 4) թուրք-թաթարական խռովությունների ծավալումը

121. Ովքեր էին հայ-ռուսական բանակցությունների եզրափակիչ փուլի ընթացքում Հայաստանի կառավարության ներկայացուցիչները.

- 1) վարչապետ Հ. Օհանջանյանը և զինվորական նախարար Ռ. Տեր-Մինասյանը
- 2) վարչապետ Հ. Օհանջանյանը և Ա. Խատիսյանը
- 3) Դրոն և Ա. Խատիսյանը
- 4) վարչապետ Հ. Օհանջանյանը և Թ. Նազարբեկյանը

122. Ովքեր էին հայ-ռուսական բանակցությունների եզրափակիչ փուլի ընթացքում Ռուսաստանի կառավարության լիազոր ներկայացուցիչները.

- 1) Յ. Գանեցկին և Բ. Լեգրանը
- 2) Բ. Լեգրանը և Պ. Մդիվանին
- 3) Օ. Սիլինը և Պ. Մդիվանին
- 4) Բ. Լեգրանը և Գ. Չիչերինը

123. Ինչ նպատակով ստեղծվեց Արտակարգ հանձնաժողովը (ՉԵԿԱ).

- 1) խորհրդային իշխանությունն ամրապնդելու և հակահեղափոխության դեմ պայքարելու համար
- 2) երկրում քաղաքական լարվածությունը մեղմացնելու նպատակով
- 3) մտավորականությանը համախմբելու և երկրի խաղաղ շինարարության մեջ ներգրավելու նպատակով
- 4) կռալիցիոն կառավարություն ստեղծելու նպատակով

124. Պատմական ինչ իրադարձության ժամանակ է ազդարարվել Հայաստանում բոլշևիկյան իշխանության տապալման և բոլոր բոլշևիկներին ձերբակալելու մասին.

- 1) 1920 թ. թուրք-հայկական պատերազմի ժամանակ
- 2) 1921 թ. Փետրվարյան ապստամբության ժամանակ
- 3) Համազանգեզուրյան 2-րդ համագումարում
- 4) 1921 թ. Մոսկվայի խորհրդա-թուրքական կոնֆերանսի ժամանակ

125. Փետրվարյան ապստամբության ժամանակ ո՞ր հեռացան խորհրդային Հայաստանի պետական և բոլշևիկյան կուսակցության ղեկավար մարմինները.

- 1) Կոտայք, Բաշ Գյառնի, Դարալագյազ, Բաշ Ապարան
- 2) Համամլու, Ղարաքիլիսա, Դիլիջան
- 3) Ղամարլու-Վեդի-Բասար շրջան
- 4) Կոտայք, Համամլու, Դիլիջան

126. 11-րդ Կարմիր բանակի ղր մարմնի ցուցումով տեղի ունեցավ հայ սպաների և գինժառայողների առաջին աքսորը Հայաստանից.

- 1) Հատուկ կազմակերպության
- 2) Հատուկ գնդի
- 3) Հատուկ բաժնի
- 4) Ապահովության խորհրդի

127. Ովքեր էին Անդրկովկասի հանրապետությունների միջև սահմանային հարցերը լուծելու համար ստեղծված հանձնաժողովի նախագահը և այդ հանձնաժողովում Հայաստանի ներկայացուցիչը.

- 1) Գ. Օրջոնիկիձեն, արտգործժողկոմ Ա. Մռավյանը
- 2) Ս. Կիրովը, արտգործժողկոմ Ա. Բեկզադյանը
- 3) Ստալինը, կառավարության նախագահ Ա. Մյասնիկյանը
- 4) Ն. Նարիմանովը, արտգործժողկոմ Ա. Բեկզադյանը

128. Ընտրել այն շարքը, որտեղ տրված են 1922 թ. ԽՍՀՄ կազմում ընդգրկված խորհրդային հանրապետությունները.

- 1) ՌՍԴԽՀ, ԱԽԴՍՀ, Ուկրաինա, Բելոռուս
- 2) ԱԽԴՍՀ, Ուկրաինա, Մոլդովա
- 3) ԱԽՍՀԴՄ, Ուզբեկստան, Ղազախստան
- 4) ՀՍԽՀ, Ուկրաինա, Բելոռուս

129. Ընտրել այն շարքը, որտեղ տրված են Քառյակ միության երկրները.

- 1) Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա, Ռուսաստան, Իտալիա
- 2) Գերմանիա, Ավստրո-Հունգարիա, Իտալիա, Թուրքիա
- 3) Գերմանիա, Ավստրո-Հունգարիա, Բուլղարիա, Թուրքիա
- 4) Գերմանիա, Ավստրո-Հունգարիա, Իտալիա, Բուլղարիա

130. Արդյունաբերացման տարիներին ղր քաղաքը դարձավ Հայաստանի տեքստիլ արդյունաբերության կենտրոն.

- 1) Ալավերդին
- 2) Լենինականը
- 3) Ղափանը
- 4) Կիրովականը

131. Ինչ էր Ստալինի անձի պաշտամունքը: Գտնել սխալ պատասխանը.

- 1) Ստալինի տեղի և դերի օբյեկտիվ արժևորումը
- 2) Ստալինի դերի խիստ գերազնահատում, երբ նրան էին վերագրվում ողջ ժողովրդի ջանքերով նվաճված հաջողությունները, ԽՍՀՄ առաջընթացը և հաղթանակները
- 3) խորհրդային հասարակության մեջ տեղ գտած խիստ բացասական երևույթ, որը հանգեցրեց հասարակության բարոյահոգեբանական մթնոլորտի խեղման
- 4) խորհրդային հասարակության մեջ տեղ գտած խիստ բացասական երևույթ, որը հանգեցրեց անօրինականությունների, անմեղ մարդկանց հալածանքների ու ոչնչացման

132. Ինչպե՞ս արտահայտվեց 1960–ական թվականների ազգային զարթոնքը: Գտնել սխալ պատասխանը.

- 1) Հայոց մեծ եղեռնի 50–ամյա տարելիցի առթիվ կազմակերպվեց համազգային մեծ ցույց:
- 2) Առաջին անգամ պետական մակարդակով Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական թատրոնի շենքում նշվեց Հայոց մեծ եղեռնի 50–ամյա տարելիցը:
- 3) Ստեղծվեցին ընդհատակյա կազմակերպություններ, որոնք բարձրացրին համազգային խնդիրներ:
- 4) Երկրով մեկ տեղի ունեցան տիրապետող վարչակարգի դեմ ցույցեր և ելույթներ:

133. Ինչ նպատակ էին հետապնդում Հայաստանում 1960–1970–ական թվականներին ստեղծված ընդհատակյա կազմակերպությունները: Գտնել սխալ պատասխանը.

- 1) հասնել Հայ դատի և պահանջատիրության միջազգային ճանաչմանը
- 2) Արցախը վերամիավորել մայր Հայաստանին
- 3) երկրում հաստատել խորհրդային իշխանություն
- 4) երկրում հաստատել ժողովրդավարություն

134. Հայկական դիվիզիաներից որն առաջինը մեկնեց ռազմաճակատ.

- | | |
|-----------|-----------|
| ա. 408–րդ | դ. 76–րդ |
| բ. 409–րդ | ե. 390–րդ |
| գ. 261–րդ | զ. 89–րդ |

- 1) գ 2) դ 3) ե 4) զ

135. Գտնել ճիշտ պատասխանը.

ԽՍՀՄ–ն արդյունաբերացնել նշանակում էր՝

- 1) հաստատել կառավարման վարչահիմնարկային եղանակ և կուսակցական ամենատիրություն
- 2) վերացնել մանր, անհատական գյուղացիական տնտեսությունները և ստեղծել կոլտնտեսություններ
- 3) ստեղծել արդյունաբերական ճյուղեր, կառուցել գործարաններ, ֆաբրիկաներ, երկաթուղիներ, հասնել նրան, որ ԽՍՀՄ–ի տնտեսության մեջ իշխող դառնար արդյունաբերությունը
- 4) երկրում վերացնել անգրագիտությունը

136. Ըստ 1920 թ. օգոստոսի 10–ի Սևրի պայմանագրի՝ Հայաստանի և Թուրքիայի սահմանն անցնելու էր՝

- 1) Բիթլիսի, Խարբերդի, Տրապիզոնի նահանգներով
- 2) Սեբաստիայի, Տրապիզոնի, Էրզրումի նահանգներով
- 3) Էրզրումի, Վանի, Տրապիզոնի, Բիթլիսի նահանգներով
- 4) Խարբերդի, Դիարբեքիրի, Վանի, Բիթլիսի նահանգներով

137. Ո՞վ է գլխավորել Հայրենիքի փրկության կոմիտեն (ՀՓԿ).

- | | |
|------------------------------|---------------------|
| 1) Դրաստամատ Կանայանը (Դրոն) | 3) Սիմոն Վրացյանը |
| 2) Համազասպ Օհանջանյանը | 4) Կուռո Թարխանյանը |

138. Ո՞վ է գլխավորել ՀՀ պատվիրակությունը Փարիզի վեհաժողովում.

- | | |
|-----------------------|--------------------------|
| 1) Լևոն Շանթը | 3) Ավետիս Ահարոնյանը |
| 2) Պողոս Նուբար փաշան | 4) Գաբրիել Նորատունկյանը |

ZANGAK

3. ԱՇԽԱՏԱՆՔ ՍԿԶԲՆԱԴՐՅՈՒՐՆԵՐԻ ՀԵՏ

1. Կարողալ մեջբերված հատվածը և պատասխանել հարցին.

«Մենք հաստատարականորեն կձգտենք մեր առաջադրած հարցի դրական լուծմանը, որը կենսական նշանակություն ունի ամբողջ հայ ժողովրդի հետագա զարգացման համար»:

Ո՞ւմ կողմից են ասվել վերը բերված խոսքերը.

- | | |
|--------------------------|--------------------------|
| 1) Յակով Զարոբյանի | 3) Սուրեն Հարությունյանի |
| 2) Գրիգոր Հարությունյանի | 4) Զորի Բալայանի |

2. Այս կոչով ո՞ր մարմինն էր իրեն հայտարարում հայկական գավառների գերագույն և միակ իշխանություն.

«Անդրկովկասյան քաղաքական ամբողջության լուծումով և Վրաստանի ու Ադրբեջանի անկախության հռչակումով ստեղծված նոր կացության հանդեպ իրեն հայտարարում է հայկական գավառների գերագույն և միակ իշխանությունը՝ որոշ ծանրակշիռ պատճառներով թողնելով մոտիկ օրերում կազմելու հայոց ազգային կառավարություն»:

- | | |
|------------------------------------|------------------------------|
| 1) Համաշխարհային հայկական կոնգրեսը | 3) Հայոց ազգային համագումարը |
| 2) Հայոց ազգային խորհուրդը | 4) Հայոց ազգային բյուրոն |

3. Ո՞ր փաստաթղթից են մեջբերված հետևյալ խոսքերը.

«Հայաստանի կառավարությունը, համաձայն բովանդակ հայ ժողովրդի միահամուռ կամքի և ցանկության, հայտարարում է, որ այսօրվանից Հայաստանի բաժան-բաժան մասերը մշտնջենապես միացած են իբրև անկախ պետական միություն»:

- 1) «Հաշտության և հողի մասին» հրովարտակից
- 2) «Միացյալ Հայաստանի անկախության հռչակագրի ակտ»-ից
- 3) «Թուրքահայաստանի մասին» հրովարտակից
- 4) Հայոց ազգային խորհրդի՝ Հայաստանի անկախության մասին կոչից

4. Իշխանության ո՞ր մարմնի անվանումն է բաց թողնված.

« համաձայն բովանդակ հայ ժողովրդի միահամուռ կամքի և ցանկության, հայտարարում է, որ այսօրվանից Հայաստանի բաժան-բաժան մասերը մշտնջենապես միացած են իբրև անկախ պետական միություն»:

- 1) Հայաստանի խորհրդարանը
- 2) Հայաստանի կառավարությունը
- 3) Հայաստանի Սահմանադրական դատարանը
- 4) Հայաստանի արդարադատության նախարարությունը

5. Ի՞նչ առիթով են ասվել հետևյալ խոսքերը.

«Մենք չենք կարող երբևիցե հրաժարվել հողային պահանջներից, որոնք մեզ համար անհրաժեշտություն են, մեր կենսունակության և ապրելու կարելիության առաջին պայմանը»:

- 1) Բաթումի պայմանագրից դժգոհության
- 2) Կարսի պայմանագրից դժգոհության
- 3) Ալեքսանդրապոլի պայմանագրի
- 4) Բրեստի հաշտության պայմանագրի

6. Ո՞ր իշխանությունն էր իր դիրքորոշումն արտահայտում հետևյալ խոսքերով.

«Մենք չենք կարող երբևիցե հրաժարվել հողային պահանջներից, որոնք մեզ համար անհրաժեշտություն են, մեր կենսունակության և ապրելու կարելիության առաջին պայմանը»:

- 1) Անդրկովկասյան դաշնության
- 2) Խորհրդային Ռուսաստանի
- 3) Հայաստանի Հանրապետության
- 4) Խորհրդային Հայաստանի

7. Գտնել սկզբնաղբյուրում բաց թողնվածը.

«Մենք չենք կարող երբևիցե հրաժարվել, որոնք մեզ համար անհրաժեշտություն են, մեր կենսունակության և ապրելու կարելիության առաջին պայմանը»:

- 1) դրամական փոխհատուցումից
- 2) հողային պահանջներից
- 3) բարոյական փոխհատուցումից
- 4) գույքային պահանջներից

8. Ո՞ւմ հետ հանդիպման ժամանակ է Գ. Հարությունյանը ասել վերը նշված խոսքերը.

Խոսելով «Թուրքիայի կողմից զավթված հայկական մարզերի» մասին՝ նա ասաց. «Մենք հաստատականորեն կձգտենք մեր առաջադրած հարցի դրական լուծմանը, որը կենսական նշանակություն ունի ամբողջ հայ ժողովրդի հետագա զարգացման համար»:

- 1) հանրապետության մտավորականության
- 2) օտարերկրյա դեսպանների
- 3) ընտրողների
- 4) կուսակցական ակտիվի

9. Ո՞ւմ էին ուղղված վերը բերված խոսքերը.

*«Ընդառաջելով ԼՂԻՄ-ի աշխատավորների ցանկություններին՝ խնդրել
..... խոր ըմբռնման զգացում դրսևորել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության իղծերին և ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմից Հայկական ԽՍՀ-ի կազմ հանձնելու հարցի դրական լուծմանը»:*

- 1) Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդին
- 2) Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդին
- 3) ԽՍՀՄ Գերագույն խորհրդին
- 4) ԽՄԿԿ Քաղբյուրոյին

10. Որտեղ են հնչել այս խոսքերը.

«Լեռնային Ղարաբաղը մշտնջենապես բնակեցված է եղել հայերով, և նրանց հայրենիքի մի հատվածն է, որը, Ստալինի մեղքով հայտնվելով Ադրբեջանի կազմում, 65 տարի շարունակ ենթարկվել է ստորացման, վիրավորանքների ու ամեն տեսակի ճնշումների ... Լեռնային Ղարաբաղի ճակատագիրը կարող են լուծել միայն Լեռնային Ղարաբաղի բնակիչները ... Ստեղծված իրավիճակի միակ ճշմարիտ լուծումը կարող է լինել Լեռնային Ղարաբաղի դուրսբերումը Ադրբեջանի կազմից»:

- 1) Երևանում՝ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նիստում
- 2) Մոսկվայում՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նիստում
- 3) ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության նիստում
- 4) ԼՂԻՄ Հատուկ կառավարման կոմիտեի նիստում

11. Ըստ սկզբնաղբյուրի՝ ում մեղքով է հայտնվել ԼՂԻՄ-ը Ադրբեջանի կազմում.

«Լեռնային Ղարաբաղը մշտնջենապես բնակեցված է եղել հայերով, և նրանց հայրենիքի մի հատվածն է, որը, մեղքով հայտնվելով Ադրբեջանի կազմում, 65 տարի շարունակ ենթարկվել է ստորացման, վիրավորանքների ու ամեն տեսակի ճնշումների ... Լեռնային Ղարաբաղի ճակատագիրը կարող են լուծել միայն Լեռնային Ղարաբաղի բնակիչները ... Ստեղծված իրավիճակի միակ ճշմարիտ լուծումը կարող է լինել Լեռնային Ղարաբաղի դուրսբերումը Ադրբեջանի կազմից»:

- 1) Ա. Կիրովի
- 2) Ն. Նարիմանովի
- 3) Ի. Ստալինի
- 4) Վ. Լենինի

12. Ըստ սկզբնաղբյուրի՝ Լեռնային Ղարաբաղի ճակատագիրը կարող են լուծել միայն.

«Լեռնային Ղարաբաղը մշտնջենապես բնակեցված է եղել հայերով, և նրանց հայրենիքի մի հատվածն է, որը, Ստալինի մեղքով հայտնվելով Ադրբեջանի կազմում, 65 տարի շարունակ ենթարկվել է ստորացման, վիրավորանքների ու ամեն տեսակի ճնշումների ... Լեռնային Ղարաբաղի ճակատագիրը կարող են լուծել միայն Ստեղծված իրավիճակի միակ ճշմարիտ լուծումը կարող է լինել Լեռնային Ղարաբաղի դուրսբերումը Ադրբեջանի կազմից»:

- 1) Հայաստանի Հանրապետության բնակիչները
- 2) միջազգային կառույցները
- 3) Լեռնային Ղարաբաղի բնակիչները
- 4) Ռուսաստանի Դաշնությունը և ԱՄՆ-ն

13. Ո՞ւմ որոշումից է մեջբերված հատվածը.

«Պատրաստ լինել իշխանությունը գրավելու, երբ նեցուկ կունենանք մի հարևան երկիր, որով հնարավոր կլինի կապվել բանվորագյուղացիական Ռուսաստանի հետ»:

- 1) Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների՝ Երևանում հրավիրված առաջին կոնֆերանսի
- 2) հայ բոլշևիկների Բաքվի նիստի

- 3) հայ բուլժակների Ալեքսանդրապոլի կոմիտեի
- 4) Ռազմահեղափոխական կոմիտեի Կարսի կոնֆերանսի

14. Երբ է ընդունվել այս որոշումը.

«Պատրաստ լինել իշխանությունը գրավելու, երբ նեցուկ կունենանք մի հարևան երկիր, որով հնարավոր կլինի կապվել բանվորագյուղացիական Ռուսաստանի հետ»:

- 1) 1920 թ. մայիսին
- 2) 1920 թ. հունվարին
- 3) 1920 թ. փետրվարին
- 4) 1920 թ. ապրիլին

15. Որտեղ է ընդունվել հիշյալ որոշումը.

«Պատրաստ լինել իշխանությունը գրավելու, երբ նեցուկ կունենանք մի հարևան երկիր, որով հնարավոր կլինի կապվել բանվորագյուղացիական Ռուսաստանի հետ»:

- 1) Ալեքսանդրապոլում
- 2) Բաքվում
- 3) Երևանում
- 4) Մոսկվայում

4. ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ինչ է Ամերկոմը.

- 1) Մերձավոր Արևելքի օգնության ամերիկյան կոմիտե
- 2) Հայաստանի բուլշևիկյան կազմակերպությունների ղեկավար կենտրոն
- 3) Հայաստանի առաջին հանրապետության օրենսդիր մարմին
- 4) Արամ Մանուկյանի գլխավորությամբ Երևանում ստեղծված մարմին

2. Ինչ է Լիազոր կոնֆերանսը.

- 1) խորհրդային իշխանության տեղական ընտրովի մարմին
- 2) Հայաստանի առաջին հանրապետության պետական բարձրագույն օրենսդիր մարմին
- 3) խորհրդային իշխանության ժամանակավոր մարմին Հայաստանում
- 4) Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի կենտգործկոմների ներկայացուցիչների համաժողով, որը հաստատեց Անդրդաշնություն կազմելու մասին միութենական պայմանագիր

3. Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.

- | | |
|-------------------------------|-----------|
| 1) Ժամանակավոր կառավարություն | 3) սովխոզ |
| 2) զեմսովո | 4) ցիհադ |

ա. ցարիզմի տապալումից և Փետրվարյան հեղափոխությունից հետո երկրում հաստատված երկու իշխանություններից մեկը, որը ստանձնեց բարձրագույն գործադիր իշխանության ղեկը Ռուսաստանում

բ. Հայաստանի առաջին հանրապետությունում տեղական ինքնակառավարման մարմին

գ. սրբազան պատերազմ

դ. Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո ստեղծված իշխանության նոր՝ գործադիր մարմին

ե. գյուղացիական խորհրդային տնտեսություններ

- | | |
|-----------------------|-----------------------|
| 1) 1-ա, 2-բ, 3-ե, 4-գ | 3) 1-գ, 2-ե, 3-ա, 4-բ |
| 2) 1-ա, 2-բ, 3-ե, 4-դ | 4) 1-բ, 2-գ, 3-ե, 4-ա |

4. Տրված հասկացությունները համապատասխանեցնել իրենց նշանակությանը.

- | | |
|-------------------------|---------------------------------|
| 1) Հայաստանի խորհուրդ | 3) զեմսովո |
| 2) մինիստրների խորհուրդ | 4) Երդվյալ ատենակալների դատարան |

ա) արդարադատության մարմին

բ) տեղական ինքնակառավարման մարմին

գ) զինվորական մարմին

դ) իշխանության բարձրագույն գործադիր մարմին

ե) իշխանության բարձրագույն օրենսդիր մարմին

1) 1-բ, 2-ա, 3-դ, 4-գ

3) 1-ե, 2-դ, 3-բ, 4-ա

2) 1-ե, 2-բ, 3-ա, 4-գ

4) 1-ե, 2-դ, 3-ա, 4-բ

5. Ինչպե՞ս էր կոչվում Հայաստանի առաջին հանրապետության բարձրագույն գործադիր իշխանությունը.

1) նախարարների ժողով

3) կառավարական խորհուրդ

2) մինիստրների խորհուրդ

4) գործադիր խորհուրդ

6. Ո՞ր իշխանությունն էր ներկայացնում մինիստրների խորհուրդը Հայաստանի առաջին հանրապետության տարիներին.

1) օրենսդիր

3) դատական

2) գործադիր

4) սահմանադիր

7. Ինչպե՞ս էին կոչվում համայնքային ինքնավարության ընտրովի պաշտոնյաները գյուղերում Հայաստանի առաջին հանրապետության տարիներին.

1) գյուղապետ

3) տանուտեր

2) գյուղխորհրդի պետ

4) համայնքապետ

8. Մարմինը, որին ենթակա էին տեղական իշխանությունների ողջ համակարգը Հայաստանի առաջին հանրապետության տարիներին, կոչվում էր՝

1) խնամատարության նախարարություն

2) ներքին գործերի նախարարություն

3) տեղական ինքնակառավարման նախարարություն

4) արդարադատության նախարարություն

9. Ո՞րն էր Մերձավոր Արևելքի օգնության կոմիտեի (Ամերկոմ) ստանձնած գործառույթը ՀՀ-ում.

1) Հայաստանի բնակիչների համար կացարանների կառուցումը

2) որբ և անապաստան երեխաների խնամքը

3) գյուղացիներին սերմացուով ապահովելը

4) Հայաստանի բանկերին ֆինանսների տրամադրումը

10. Պետության կողմից հացի և բամբակի բռնագրավումը, կենտրոնացումը և բնակչությանը բաշխումը հայտնի է որպես՝

1) պետական հովանավորություն

3) պետական միջամտություն

2) պետական մենաշնորհ

4) պետական պլանավորում

11. Հայ բուլշևիկների ազդեցության տակ գտնվող երիտասարդական կազմակերպությունը կոչվում էր՝

1) «Փարոս»

3) «Սպարտակ»

2) «Շանթ»

4) «Ավանգարդ»

12. Մայիսյան ապստամբության օրերին Ա. Խատիսյանի կառավարությանը փոխարինած գործադիր նոր իշխանությունը կոչվում էր՝

- 1) կռալիցիոն կառավարություն
- 2) բյուրո-կառավարություն
- 3) ազգային կենտրոնական կառավարություն
- 4) ազգային համաձայնության կառավարություն

13. 1919 թ. հունվարին Թիֆլիսում հրավիրված հայ-վրացական կոնֆերանսում Լոռին հայտարարվեց՝

- 1) Միջանկյալ գոտի
- 2) Վիճելի գոտի
- 3) Վրացական տարածք
- 4) Չեզոք գոտի

14. 1919 թ. սկզբին վերակազմավորված Զանգեզուրի հայկական ազգային խորհուրդը կոչվեց՝

- 1) Զանգեզուր-Ղարաբաղի միացյալ կառավարություն
- 2) Զանգեզուր-Ղարաբաղի ազգային խորհուրդ
- 3) Զանգեզուր-Ղարաբաղի մարզային խորհուրդ
- 4) Զանգեզուր-Ղարաբաղի ինքնավար կառավարություն

15. 1919 թ. բրիտանական կառավարության կողմից Ղարաբաղ-Զանգեզուրում ժամանակավորապես ինչ պաշտոն ստացավ հայատյաց Խոսրով բեկ Սուլթանովը.

- 1) կառավարության նախագահի
- 2) գեներալ-կոմիսարի
- 3) գեներալ-նահանգապետի
- 4) մարզային գործերի կառավարչի

16. 1918 թ. արցախահայության I համագումարում երկրամասը կառավարելու նպատակով ստեղծված մարմինը կոչվում էր՝

- 1) Ղարաբաղի նախարարների խորհուրդ
- 2) Ղարաբաղի ժողովրդական կառավարություն
- 3) Ղարաբաղի ազգային կառավարություն
- 4) Ղարաբաղի ժամանակավոր կառավարություն

17. Փարիզի խաղաղության խորհրդածողովում արևմտահայության շահերը ներկայացնող մարմինն էր՝

- 1) Հայոց ազգային պատվիրակությունը
- 2) Հայոց ազգային խորհուրդը
- 3) Հայոց ժողովրդական պատվիրակությունը
- 4) Հայոց ազգային կառավարությունը

18. Մարմինը, ում ներկայացվել է 1919 թ. փետրվարի 12-ին Փարիզում ստորագրված հայկական պահանջների համատեղ հռչակագիրը, կոչվում էր՝

- 1) Սահմանային վեճերը քննող խորհուրդ
- 2) Նախագահության խորհուրդ
- 3) Տասի խորհուրդ
- 4) Մանդատները բաշխող խորհուրդ

19. Արևմտահայերի երկրորդ համագումարում ընտրված մարմինը, որ դիմեց «Արարատյան Հանրապետության» կառավարությանը, կոչվում էր՝

- 1) Արևմտահայ գործադիր մարմին
- 2) Արևմտահայ ազգային բյուրո
- 3) Արևմտահայ ազգային պատվիրակություն
- 4) Արևմտահայ ժամանակավոր կառավարություն

20. Ինչպե՞ս էր կոչվում Փարիզում կայացած հավաքը, որտեղ ընդունվեց «Ամբողջական Հայաստանի անկախության մասին» հայտարարությունը.

- 1) Հայոց ազգային համագումար
- 2) Հայոց ժողովրդական խորհրդաժողով
- 3) Հայկական միացյալ համագումար
- 4) Հայկական ընդհանուր համաժողով

21. Փետրվարյան ապստամբության նախօրյակին բոլշևիկների կողմից իրականացվող քաղաքականությունը կոչվում էր՝

- 1) ռազմական սոցիալիզմի
- 2) զինվորական կոմունիզմի
- 3) ռազմական կոմունիզմի
- 4) նէպի

22. Սիրիա-պաղեստինյան ճակատում ֆրանսիական զորքերի կազմում կռվող հայ կամավորներից բաղկացած զորամասը կոչվում էր՝

- 1) Արևելյան լեգեոն
- 2) Ազգային լեգեոն
- 3) Մահապարտների լեգեոն
- 4) Ազատամարտիկների լեգեոն

23. Թվարկված հասկացությունները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.

- 1) ՉԵԿԱ
- 2) ՀՓԿ
- 3) պրոլետկուլտ
- 4) ինդուստրացում
- 5) խորհրդային ամբողջատիրություն
- 6) կուլակություն

- ա. 1920–ական թթ. Հայաստանում ծավալված պրոլետարական գրական շարժում
- բ. Փետրվարյան ապստամբության ժամանակ ստեղծված իշխանության նոր մարմին
- գ. խորհրդային կարգերը ներդնելու նպատակով բնակչության նկատմամբ բռնություններ գործադրող մարմին
- դ. նէպի տարիներին իրենց աշխատանքի շնորհիվ կայուն տնտեսություն ստեղծած խավ
- ե. քաղաքական կուրս, որով խնդիր էր դրվում համախառն արտադրանքի մեջ հասնելու արդյունաբերական արտադրանքի ծավալի գերազանցմանը գյուղատնտեսականի նկատմամբ
- զ. երկրի հասարակական, քաղաքական, մշակութային, սոցիալական կյանքն ամբողջությամբ վարչակարգի վերահսկողությանը ենթարկելը
- է. տնտեսական ասպարեզում վերափոխման իրականացում

- 1) 1–գ, 2–բ, 3–ա, 4–ե, 5–զ, 6–դ
- 2) 1–բ, 2–ա, 3–է, 4–ե, 5–զ, 6–դ
- 3) 1–բ, 2–ա, 3–դ, 4–է, 5–զ, 6–գ
- 4) 1–գ, 2–բ, 3–ա, 4–ե, 5–է, 6–զ

24. Ի՞նչ է սովխոզը.

- 1) գյուղում տեղական իշխանության մարմին
- 2) գյուղացիական ֆերմերային տնտեսություն
- 3) գյուղացիական անհատական տնտեսություն
- 4) գյուղացիական խորհրդային տնտեսություն

25. Բաքվում հրավիրված Արևելքի ժողովուրդների առաջին համագումարի կողմից կազմավորված մարմինը կոչվում էր՝

- 1) Քարոզչության և գործողության խորհուրդ
- 2) Քարոզչության և վերահսկողության խորհուրդ
- 3) Քարոզչության և ռազմական խորհուրդ
- 4) Քարոզչության և կառավարման խորհուրդ

26. Հայ-ռուսական երևանյան բանակցություններում նախաստորագրված փաստաթուղթը կոչվում էր՝

- 1) «Ավարտական որոշման արձանագրություն»
- 2) «Եզրափակիչ որոշման արձանագրություն»
- 3) «Երաշխավորիչ որոշման արձանագրություն»
- 4) «Միացյալ որոշման արձանագրություն»

27. Հայ տրոցկիստների առաջին հրապարակային ելույթը հայտնի է ... անունով.

- | | |
|----------------------------|-----------------------|
| 1) «Երեքի հայտարարություն» | 3) «Երեքի դեկլարացիա» |
| 2) «Երեքի դիմում» | 4) «Երեքի դեկրետ» |

28. Երևանի կոմերիտական կազմակերպության մեջ գործող տրոցկիստական երկու խմբերի անուններն էին.

- 1) «Կոմունիստական տրոցկիստական միություն» և «Ուղղափառ մարքսիստներ»
- 2) «Երիտասարդության տրոցկիստական միություն» և «Ուղղափառ մարքսիստներ»
- 3) «Տրոցկիստների երիտասարդական խումբ» և «Ուղղափառ սոցիալիստներ»
- 4) «Երիտասարդ տրոցկիստների միություն» և «Ուղղափառ ուտոպիստներ»

29. Ինչպե՞ս էր կոչվում 1921 թ. մարտի 16–ի Մոսկվայի ռուս–թուրքական պայմանագիրը.

- 1) «Ռուս–թուրքական հաշտության պայմանագիր»
- 2) «Ռուս–թուրքական բարեկամության և եղբայրության պայմանագիր»
- 3) «Խաղաղության ռուս–թուրքական պայմանագիր»
- 4) «Ռուս–թուրքական միջպետական և ռազմադիվանագիտական պայմանագիր»

30. «Միացյալ Հայաստանի անկախության հռչակագրի ակտը» ի՞նչ կարգավիճակում էր տեսնում ապագա Հայաստանը.

- 1) դաշնային պետությունների միության
- 2) ժամանակավոր միավորված ինքնիշխան պետությունների միության
- 3) Հայաստանի բաժան–բաժան մասերը մշտնջենապես միացրած անկախ պետական միության
- 4) հայկական պետությունների համադաշնության

31. Բերվածներից որն է համապատասխանում կուլակաթափության բովանդակությանը.

- 1) միջակ ու չքավոր գյուղացիների բռնի անդամագրումը կոլեկտիվ տնտեսություններին
- 2) քաղաքային բնակչության նկատմամբ հարկային լծի սաստկացումը
- 3) ունևոր գյուղացիության ունեգրկումը
- 4) տնտեսության մեջ պարենմասնատրման կիրառումը

32. Ի՞նչ է սովխոզը.

- 1) գյուղացիական խորհրդային տնտեսություն
- 2) նույն արհեստով զբաղվող մարդկանց միություն
- 3) տեղական իշխանության մարմին
- 4) գյուղացիների կոլեկտիվ տնտեսություն

33. Ո՞րն է «ՕՄՕՆ» հասկացության բացատրությունը.

- 1) ռուսական հատուկ ջոկատայիններ
- 2) ռուսական միլիցիայի հատուկ նշանակության ջոկատներ
- 3) ադրբեջանական միլիցիայի հատուկ նշանակության ջոկատներ
- 4) զինված մասնավոր գրոհայիններ

34. Ըստ ԼՂՀ Գերագույն խորհրդի հատուկ որոշման՝ ինչպե՞ս են կոչվել Արցախի բոլոր զինված ջոկատները.

- 1) ԼՂՀ ազատագրության բանակ
- 2) ԼՂՀ ինքնապաշտպանական ուժեր
- 3) ԼՂՀ հատուկ ջոկատայիններ
- 4) ԼՂՀ պաշտպանության բանակ

35. 1991 թ. սեպտեմբերի 2–ին ընդունված որոշումը կոչվել է՝

- 1) Հռչակագիր Հայաստանի Հանրապետության անկախության մասին
- 2) Հռչակագիր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության մասին
- 3) Երկկողմ դիվանագիտական հարաբերությունների հաստատման ու զարգացման մասին
- 4) Հռչակագիր Արցախի հանրապետության անկախության վերականգնման մասին

36. Ադրբեջանական ճի մարմնի կողմից էր կազմակերպվել և իրականացվել հոջալուի հայ բնակչության կոտորածը.

- 1) Ադրբեջանի կառավարության
- 2) Սումգաիթի իշխանությունների
- 3) Ադրբեջանի Պաշտպանության պետական կոմիտեի
- 4) Ադրբեջանի Ազգային ճակատի

37. 1945 թ. ապրիլին հայկական տարածքների վերադարձի խնդրանքով ԽՍՀՄ կառավարությանը և անձամբ Ստալինին դիմում հղած երկու մարմիններն էին՝

- 1) Հայկական ազգային կոմիտեն
- 2) Հայկական համաշխարհային կոնգրեսը

- 3) Արտասահմանից ներգաղթող հայերի ընդունման կոմիտեն
- 4) Արտասահմանից ներգաղթողների համընդհանուր ճակատը
- 5) Հայ փախստականների կենտրոնական կոմիտեն
- 6) հայ հայրենակցական միությունները

38. Հայկական հարցի լուծման խնդրանքով ՄԱԿ-ի նիստին հուշագրեր հղած երկու մարմիններն էին՝

- 1) Հայկական ազգային կոմիտեն
- 2) Հայկական համաշխարհային կոնգրեսը
- 3) Հայ դատի ամերիկյան հանձնախումբը
- 4) Հայկական բարեգործական ընդհանուր միությունը (ՀԲԸՄ)
- 5) Հայ փախստականների կենտրոնական կոմիտեն
- 6) Ամերիկայի հայկական ազգային խորհուրդը
- 7) Եվրոպայի հայկական ազգային խորհուրդը

39. Ո՞ր մարմինն էր Հայ դատի հանձնախումբը.

- 1) Համազգային կենտրոնական մարմինը
- 2) Ամերիկայի հայկական ազգային խորհուրդը
- 3) Հայկական ազգային կոմիտեն
- 4) Հայկական համաշխարհային կոնգրեսը

40. Գիտության ու արվեստի ինստիտուտի բարձրագույն մարմինն էր՝

- 1) գործադիր կոմիտեն
- 2) «Երեքի» խմբակը
- 3) նրա անդամների ընդհանուր ժողովը
- 4) ինստիտուտի խորհուրդը

41. Գտնել «Արմֆան» հասկացության ճիշտ բացատրությունը.

- 1) Հայ գրողների միություն
- 2) Հայ նկարիչների միություն
- 3) ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղ
- 4) Հայաստանի գիտությունների ակադեմիայի բաժանմունք

42. 1992 թ. օգոստոսի 15-ին ԼՂՀ-ում Ռոբերտ Քոչարյանի գլխավորությամբ ստեղծվել էր՝

- 1) Պաշտպանության գլխավոր շտաբը
- 2) Պաշտպանության պետական կոմիտեն
- 3) Ինքնապաշտպանական ուժերի շտաբը
- 4) ԼՂՀ պաշտպանության կոմիտեն

43. Հայաստանի առաջին հանրապետության հռչակումից հետո սկզբնապես ինչ-պէս էր կոչվում երկրի բարձրագույն գործադիր իշխանությունը.

- 1) նախարարների խորհուրդ
- 2) Հայաստանի խորհուրդ
- 3) մինիստրների խորհուրդ
- 4) Հայաստանի խորհրդարան

44. Ինչ է հեղկոմը.

- 1) իշխանության տեղական, ժամանակավոր, նշանակովի գործադիր մարմին
- 2) իշխանության ընտրովի օրենսդիր մարմին
- 3) երիտասարդական հասարակական կազմակերպություն
- 4) քաղաքական կուսակցություն

45. Հասկացությունները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.

- 1) Չանգեզուր-Ղարաբաղի մարզային խորհուրդ
- 2) Ղարաբաղի ժողովրդական կառավարություն
- 3) Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդ
- 4) Լեռնային Ղարաբաղի Հատուկ կառավարման կոմիտե
- 5) «Լոռու չեզոք գոտի»

ա. Թիֆլիսի կոնֆերանսի որոշմամբ ստեղծված վարչական միավոր, ուր սահմանվել էր հատուկ կառավարում՝ հայ և վրացի ներկայացուցիչների համատեղ ղեկավարությամբ և անգլիացի գեներալ-նահանգապետի ընդհանուր վերահսկողությամբ
բ. արցախահայության I համագումարում ստեղծված երկրամասի իշխանության մարմին

գ. Չանգեզուրի ազգային խորհրդի հիմքի վրա վերակազմված և Հայաստանի Հանրապետության անունից գործող մարմին

դ. ԼՂԻՄ-ի լիազոր ներկայացուցիչների համագումարում ընտրված մարմին, որը գլխավորեց արցախցիների ազատագրական պայքարը

ե. Լոռու և Ախալքալաքի գավառներից ստեղծված վարչական միավոր, որը գտնվում էր անգլիացիների վերահսկողության ներքո

զ. ԽՍՀՄ ԳԽ նախագահության կողմից Լեռնային Ղարաբաղի պետական մարմինների ղեկավարումն իրականացնելու նպատակով ստեղծված իշխանության մարմին

- 1) 1-գ, 2-բ, 3-դ, 4-զ, 5-ա
- 2) 1-զ, 2-գ, 3-բ, 4-դ, 5-ե
- 3) 1-ե , 2-բ, 3-դ, 4-զ, 5-ա
- 4) 1-զ, 2-բ, 3-գ, 4-դ, 5-ե

46. Հասկացությունը համապատասխանեցնել բովանդակությանը.

- ա. նէպ
- բ. ռազմական կոմունիզմ
- գ. ԽՍՀՄ-ի արդյունաբերացում
- դ. ԽՍՀՄ-ի գյուղատնտեսության կոլեկտիվացում
- ե. կուլակաթափություն

- 1) տնտեսական միջոցառումների համակարգ, որում կենտրոնականը պարենհարկն է
- 2) տնտեսական միջոցառումների համակարգ, որում կենտրոնականը պարենմասնատրումն է

- 3) տնտեսավարման ձև, երբ տնտեսությունները կամ մարդիկ միավորվում են՝ համատեղ որևէ գործ կատարելու համար
- 4) ԽՍՀՄ-ում սոցիալիզմի նյութատեխնիկական հիմքի ստեղծում՝ երկրի արդյունաբերության զարգացման ճանապարհով
- 5) ԽՍՀՄ-ում սոցիալիզմի նյութատեխնիկական հիմքի ստեղծում՝ մանր, անհատական տնտեսությունների վերացման և խոշոր, կոլեկտիվ տնտեսության ստեղծման և կոլտնտեսային-կոոպերատիվ սեփականության հաստատման ճանապարհով
- 6) ունևոր գյուղացու՝ որպես գյուղում շահագործող դասակարգի ունեցվածքի բռնագրավում՝ նրա վերացման նպատակով

- | | |
|----------------------------|----------------------------|
| 1) ա-1, բ-2, գ-5, դ-3, ե-6 | 3) ա-1, բ-2, գ-4, դ-5, ե-6 |
| 2) ա-3, բ-2, գ-4, դ-5, ե-1 | 4) ա-3, բ-1, գ-5, դ-4, ե-2 |

47. Կատարել համապատասխանեցում.

- 1) Զանգեզուր-Ղարաբաղի մարզային խորհուրդ
- 2) Ղարաբաղի ժողովրդական կառավարություն
- 3) Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդ
- 4) Լեռնային Ղարաբաղի Հատուկ կառավարման կոմիտե
- 5) Ադրբեջանի հանրապետության կոմիտե
- 6) «Ղարաբաղ» կոմիտե

- ա. Արցախյան շարժումը ղեկավարելու նպատակով 1988 թ. փետրվարին ստեղծված մարմին
- բ. 1918 թ. հուլիսին ստեղծված երկրամասի իշխանության մարմին
- գ. Զանգեզուրի ազգային խորհրդի հիմքի վրա 1919 թ. սկզբին վերակազմված և Հայաստանի Հանրապետության անունից գործող մարմին
- դ. 1989 թ. օգոստոսին ստեղծված մարմին, որը գլխավորեց արցախցիների ազատագրական պայքարը
- ե. 1992 թ. օգոստոսին ԼՂՀ -ում ստեղծված պետական իշխանության մարմին
- զ. 1989 թ. հունվարին Լեռնային Ղարաբաղի պետական մարմինների ղեկավարումն իրականացնելու նպատակով ստեղծված իշխանության մարմին
- է. 1989 թ. նոյեմբերի վերջին ստեղծված, Լեռնային Ղարաբաղի պետական մարմինների ղեկավարումն իրականացնող իշխանության մարմին

- | | |
|---------------------------------|---------------------------------|
| 1) 1-գ, 2-բ, 3-դ, 4-զ, 5-է, 6-ա | 3) 1-գ, 2-բ, 3-դ, 4-է, 5-ե, 6-զ |
| 2) 1-բ, 2-զ, 3-գ, 4-դ, 5-է, 6-ա | 4) 1-ե, 2-զ, 3-բ, 4-դ, 5-զ, 6-բ |

48. Հասկացությունը համապատասխանեցնել բովանդակությանը.

- 1) Արտասահմանից ներգաղթող հայերի ընդունման կոմիտե
- 2) Հայկական ազգային կոմիտե

- 3) Հատուկ կառավարման կոմիտե
- 4) Հայաստանի օգնության կոմիտե
- 5) Հայրենիքի փրկության կոմիտե

- ա. ԽՍՀՄ ԳԽ նախագահության կողմից Լեռնային Ղարաբաղի պետական մարմինների ղեկավարումն իրականացնելու նպատակով ստեղծված իշխանության մարմին
- բ. Արևմտահայերի առաջին համագումարում ստեղծված մարմին
- գ. ԱՄՆ-ում դաշնակցության կողմից ստեղծված Հայ դատի հանձնախումբ՝ հայոց պահանջատիրության պաշտպանության նպատակով
- դ. Հայաստանի կառավարությանն առընթեր կազմավորված մարմին՝ սփյուռքահայերի ներգաղթն իրականացնելու նպատակով
- ե. Խորհրդային Հայաստանին արտաքին օգնության նպատակով 1921 թ. ստեղծված մարմին
- զ. Փետրվարյան ապստամբության ժամանակ Հայաստանում ստեղծված իշխանության մարմին

- 1) 1-ե, 2-դ, 3-գ, 4-բ, 5-ա
- 2) 1-դ, 2-գ, 3-ա, 4-բ, 5-գ
- 3) 1-դ, 2-գ, 3-ա, 4-ե, 5-գ
- 4) 1-ե, 2-բ, 3-գ, 4-գ, 5-ա

49. Ինչպե՞ն էր կոչվում Արևելահայոց ազգային համախորհրդակցությունից քիչ անց ձևավորված, օրենսդրական իրավասություն ունեցող մարմինը.

- 1) Հայոց ազգային խորհուրդ
- 2) Ազգային ժողով
- 3) Վարիչների մարմին
- 4) Հատուկ կոմիտե

50. Իսրայել Օրու կողմից Հայաստանի ազատագրության ծրագիրը կոչվում էր՝

- 1) Պֆալցյան ծրագիր
- 2) Մոսկովյան ծրագիր
- 3) Հարավային ծրագիր
- 4) Հյուսիսային ծրագիր

51. Ի՞նչ է նշանակում սղնախ.

- 1) ռազմական խորհուրդ
- 2) պաշտպանական հենակետային ամրոց
- 3) հարձակողական զորատեսակ
- 4) զինանոց

52. Ըստ «Որոգայթ փառաց» գրքի՝ Հայոց ապագա պետության բարձրագույն օրենսդիր մարմինը կոչվում էր՝

- 1) Հայոց տուն
- 2) Ազգային մեծ ժողով
- 3) Գերագույն խորհուրդ
- 4) Բարձրագույն ատյան

53. Նադիր շահի կողմից Ղարաբաղում ստեղծված հայկական ինքնավարությունը ի՞նչ անունով է հայտնի.

- 1) սղնախ
- 2) խամսա
- 3) մահալ
- 4) խանություն

54. Ի՞նչ է նշանակում «խամսա».

- 1) երեք 2) չորս 3) հինգ 4) վեց

55. Ընտրել տերմինների կամ հասկացությունների երկու ճիշտ բացատրությունները.

- 1) «Որոգայթ փառաց» գրքում պետության բարձրագույն օրենսդիր մարմինը պետք է կազմվեր ժողովրդի կողմից ընտրված փոխանորդներից (պատգամավորներից):
- 2) Նադիր շահի կողմից Ղարաբաղում ստեղծված մելիքություններն անվանվում էին սղնախ:
- 3) Հայդուկ արաբերեն նշանակում է հարյուրապետ:
- 4) Դիվանագետներ Մ. Սայքսի ու Ժ. Պիկոյի և Պողոս Նուբարի միջև Լոնդոնում ձեռք բերված համաձայնությամբ հայ կամավորներից կազմված ջոկատը կոչվում էր «Արևելյան լեգեոն»:
- 5) Խորհրդային Հայաստանին և նրա սովյալ բնակչությանը արտաքին օգնության կազմակերպման գործում նշանակալից դեր կատարած, 1921 թ. սեպտեմբերին Երևանում հիմնված մարմինը կոչվում էր Հայկական ազգային կոմիտե:

56. Ընտրել տերմինների կամ հասկացությունների երկու ճիշտ բացատրությունները.

- 1) Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցությունը ապակենտրոն սկզբունքի պայմաններում տարբեր կառույցների գործունեությունը համակարգելու համար ստեղծեց հատուկ մարմիններ՝ բյուրոներ:
- 2) Բալկաններում օսմանյան բռնապետության դեմ պայքարի ելած վրիժառուները կոչվում էին չելլոներ:
- 3) Հայդուկ հունգարերեն նշանակում է հետևակ:
- 4) Առաջին հայդուկները հայերի նկատմամբ թուրքական իշխանությունների կողմից նոր բռնությունների առիթ չտալու նպատակով հաճախ ներկայացել են որպես քրդեր և հանդես եկել «չետնիկներ» կոչվող քրդական հակակառավարական ջոկատների կազմում:
- 5) Ֆիդայի կամ ֆեդայի արաբերեն նշանակում է ահաբեկիչ:

57. Մադրասի խմբակի ղեկավար Շահամիր Շահամիրյանի հեղինակած Հայաստանի ազատագրության Հարավային ծրագրի համաձայն՝ Ռուսաստանի օգնությամբ ազատագրված Հայաստանում հաստատվելու էր՝

- 1) խորհրդարանական կառուցվածքով հանրապետություն
- 2) սահմանադրական միապետություն
- 3) բացարձակ միապետություն
- 4) կիսանախագահական հանրապետություն

58. Տերմինները համապատասխանեցնել բացատրությանը.

- 1) պոլոժենիե 2) աշար 3) թանգիմաթ 4) սարդար

- ա. Օսմանյան կայսրությունում գյուղացիներից գանձվող գլխավոր հարկը
- բ. Հայոց եկեղեցու վարչական իրավունքներն ու պարտականությունները, եկեղեցու և ցարական կառավարության փոխհարաբերությունները սահմանող կանոնադրություն
- գ. սուլթանական կառավարության կողմից հրապարակված բարենորոգումների հրովարտակ
- դ. գորահրամանատար
- ե. հոգևոր պաշտոնյա

- 1) 1-բ, 2-ա, 3-գ, 4-ե
- 2) 1-դ, 2-գ, 3-ե, 4-ա

- 3) 1-գ, 2-դ, 3-ա, 4-ե
- 4) 1-բ, 2-ա, 3-գ, 4-դ

59. Թուրքական կառավարության կողմից 1839 թ. հրապարակված բարենորոգումների հրովարտակն անվանվել էր՝

- 1) պոլոժենիե
- 2) թանզիմաթ
- 3) դեկրետ
- 4) Ազգային կանոնադրություն

60. 1839 թ. թուրքական կառավարությունը հրապարակեց թանզիմաթ, որը նշանակում է՝

- 1) ազգային կանոնադրություն
- 2) բարենորոգումների հրովարտակ
- 3) սահմանադրություն
- 4) օրենքների ժողովածու

61. Համիդիե գնդերի ստեղծումով Բարձր դուռը լուծում էր երկու խնդիր, այն է՝

- 1) քրդերին հեռու էր պահում հակակառավարական գործողություններից և վերցնում էր իր հսկողության տակ
- 2) օգնում էր հպատակների ազատագրական շարժմանը
- 3) պաշտպանում էր Ռուսաստանի և Պարսկաստանի հետ օսմանյան Թուրքիայի սահմանները
- 4) ուղղորդում էր քրդերին հայերի դեմ
- 5) բնակչությանը պաշտպանում էր քրդերի ավազակային հարձակումներից

62. Ըստ ժամանակավոր կառավարության որոշման՝ ինչ անունով է հայտնի Օսմանյան կայսրությունից նվաճված հայկական մասը՝ որպես վարչական առանձին միավոր.

- 1) Թուրքահայաստան
- 2) Տաճկահայաստան
- 3) Հայկական մարզ
- 4) Հայկական նահանգ

63. Հասկացությունները համապատասխանեցնել բացատրություններին.

- 1) պանթուրքիզմ
- 2) պանիսլամիզմ
- 3) Ազգային ուխտ
- 4) Արևելյան հարց

- ա. թյուրքալեզու ժողովուրդների միավորում օսմանյան Թուրքիայի դրոշի ներքո և սրբազան պատերազմ բոլոր անհավատների՝ գյավուրների դեմ
- բ. Թուրքիայից զանազան զիջումներ կորզելու մեծ տերությունների միջև պայքարը, որը դարձավ միջազգային հարաբերությունների հիմնախնդիր
- գ. փաստաթուղթ, որում ամրագրվում էր Օսմանյան կայսրությունում բնակվող բոլոր ազգային ու կրոնական փոքրամասնությունների լիակատար հավասարությունը
- դ. իսլամադավան բոլոր ազգերի միավորում օսմանյան Թուրքիայի դրոշի ներքո և սրբազան պատերազմ բոլոր անհավատների՝ գյավուրների դեմ
- ե. քաղաքական ծրագիր, որը «բուն թուրքական տարածք» էր հռչակում Արևմտյան Հայաստանը և Կիլիկիան, ինչպես նաև Կարսը, Արդահանը և Բաթումը

- 1) 1-ե, 2-ա, 3-գ, 4-բ
- 2) 1-ա, 2-դ, 3-ե, 4-գ

- 3) 1-ա, 2-դ, 3-ե, 4-բ
- 4) 1-դ, 2-ա, 3-բ, 4-գ

64. Հասկացությունները համապատասխանեցնել բացատրություններին.

- 1) «Կարս» զորամիավորում
- 2) Առանձին հայկական կորպուս

- 3) Արարատյան գունդ
- 4) Արևելյան լեգեոն

- ա. Դրոշի, Համազասպի և Քեռու խմբերի միավորմամբ 1915 թ. ապրիլի սկզբին Քանաքեռում կազմված հայկական զորամիավորում՝ Վարդանի գլխավորությամբ:
- բ. 50-հազարանոց թուրքական զորամիավորում, որը առաջադրանք էր ստացել նվաճելու ամբողջ Արևելյան Հայաստանը, հասնելու Բաքու, Դաղստան և Հյուսիսային Իրան:
- գ. 1918 թ. մարտի 1-ին Հայկական կորպուսի և Հատուկ հավաքական ջոկատի միավորումից ստեղծված զորամիավորում՝ գեներալ Թովմաս Նազարբեկյանի հրամանատարությամբ:
- դ. Արևմտահայերից կազմավորված դիվիզիա, որի հրամանատարն էր Անդրանիկը:
- ե. Դիվանագետներ Մ. Սայքսի ու Ժ. Պիկոյի և Պողոս Նուբարի միջև Լոնդոնում ձեռք բերված համաձայնության հիման վրա հայ կամավորներից ստեղծված ջոկատը:

- 1) 1-ե, 2-բ, 3-ա, 4-դ
- 2) 1-ա, 2-դ, 3-գ, 4-ե

- 3) 1-դ, 2-բ, 3-ե, 4-ա
- 4) 1-բ, 2-գ, 3-ա, 4-ե

65. Ինչպե՞ս էին կոչվում պատժիչ այն կառույցները, որոնք կարևոր դեր ունեին Հայաստանի կառավարման համակարգում՝ կապված խորհրդային կարգերի հաստատման և ամրապնդման հետ.

- 1) Գերագույն խորհուրդ և ՉԵԿԱ
- 2) Ներքին գործերի ժողկոմատ և գերագույն մարմին
- 3) ՕՄՈՆ և ՉԵԿԱ
- 4) ՉԵԿԱ և Ներքին գործերի ժողկոմատ

66. 1920 թ. դեկտեմբերի 25-ին Տաթևի վանքում հրավիրված համազանգեզուրյան համագումարի կողմից հռչակված Սյունիքի երկրամասը կոչվում էր՝

- | | |
|---------------------|------------------|
| 1) Ինքնավար Սյունիք | 3) Զանգեզուր |
| 2) Անկախ Սյունիք | 4) Լեռնահայաստան |

67. Հասկացությունները համապատասխանեցնել իրենց նշանակությանը.

- 1) Վերաբնակեցման կոմիտե
- 2) պատգամավորական Կենտրոնական ժողով
- 3) Երեքի գործադիր կոմիտե
- 4) «Երեքի դեկլարացիա»
- 6) «Ազգային սահմանադրություն»
- 5) Հայկական մարզ
- 7) Անդրկովկասյան հատուկ կոմիտե

ա. Կ. Պոլսի ուսումնական խորհրդի անդամների կողմից մշակված արևմտահայ համայնքի կյանքին վերաբերող կանոնադրություն

բ. Նիկոլայ I-ի 1828 թ. մարտի 1-ի հրամանագրով Երևանի և Նախիջևանի խանություններից կազմված վարչական միավոր

գ. Մ. Խրիմյանի նախաձեռնությամբ հրավիրված Ռուսաստանում ապրող հայերի ժողով

դ. Արաքսի աջափնյակի հայության վերաբնակեցման նպատակով 1828 թ. ստեղծված մարմին

ե. 1917 թ. մարտի 9-ին երկրամասի կառավարման նպատակով ստեղծված իշխանության նոր մարմին

զ. Հայոց ցեղասպանության իրագործման նպատակով կազմված արտակարգ մարմին

է. հայ տրոցկիստների առաջին հրապարակային ելույթը

ը. սփյուռքահայերի ներգաղթի հարցերով զբաղվող մարմին

- | | |
|--------------------------------------|--------------------------------------|
| 1) 1-ը, 2-բ, 3-ա, 4-գ, 5-դ, 6-զ, 7-է | 3) 1-ը, 2-է, 3-բ, 4-դ, 5-ա, 6-զ, 7-գ |
| 2) 1-դ, 2-զ, 3-գ, 4-է, 5-բ, 6-ա, 7-ե | 4) 1-դ, 2-զ, 3-բ, 4-ե, 5-ա, 6-զ, 7-է |

68. Ընտրել տերմինների կամ հասկացությունների երկու ճիշտ բացատրությունները.

1) «Թուրքական ազգային ուխտ» կոչվող փաստաթղթում նշվում էր նաև, որ հայկական կազմակերպված համայնքի ստեղծման (Արևմտյան Հայաստանում) կանխումը պետք է լինի յուրաքանչյուր թուրքի սրբազան գործը, իսկ Հայաստանի ոչնչացումը՝ առաջնահերթ խնդիրը:

2) Արևելյան Հայաստանի՝ որպես Օսմանյան կայսրությանը ենթակա տարածքի խնդիրն ուղղակիորեն դառնում է Արևելյան հարցի բաղկացուցիչ մաս և շուտով Հայկական հարց անունով հայտնվում միջազգային դիվանագիտական կիզակետում:

3) Ցարիզմի հրապարակած եկեղեցական կանոնադրությամբ Հայոց եկեղեցին չէր խառնվելու պետական գործերին, այլ զբաղվելու էր միայն դպրոցի, ծեսերի և այլ հարցերով:

- 4) Սուլթանական կառավարության հրապարակած թանգիմաթը արևմտահայության ներքին կյանքը կազմակերպող իրավական փաստաթուղթ էր:
- 5) Նէպոլ նախատեսված տնտեսական բարեփոխումների առանցքն էր պարենամասնատրման կիրառումը:

69. «Արմենկոմ» հասկացությունը համապատասխանեցնել իր բովանդակությանը.

- 1) Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների կենտրոնական ղեկավար մարմին
- 2) Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո ձևավորված գործադիր իշխանություն
- 3) Մայիսյան ապստամբության ընթացքում ձևավորված Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտե
- 4) տնտեսավարման ձև, որի հիմքում ընկած էր պարենհարկը

70. Ինչպե՞ն էր կոչվում Հայաստանի առաջին հանրապետության բարձրագույն օրենսդիր մարմինը.

- | | |
|-----------------------|-------------------------|
| 1) Ազգային խորհուրդ | 3) նախարարների խորհուրդ |
| 2) Հայաստանի խորհուրդ | 4) սահմանադիր ժողով |

5. ՊԱՏՄԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՆԵՐ ՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ

1. Նէպի քաղաքականության ձախողման և դրանից հրաժարվելու պատճառներ են հանդիսացել.

- ա. պետության կողմից տարեցտարի մեծացող միջամտությունը երկրի տնտեսական կյանքին
- բ. բանվոր դասակարգի և ճարտարագիտատեխնիկական անձնակազմի քանակական աճը
- գ. բռնաճնշումների և հարկադրական կոլեկտիվացման քաղաքականությունը
- դ. վերահսկվում էին գները, սահմանափակվում ձեռնարկությունների ինքնուրույնությունը
- ե. ներկուսակցական պայքարն ու անհատի պաշտամունքի քննադատությունը
- զ. այլախոհական պայքարը Հայաստանում
- է. տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորումը
- թ. ռազմական կոմունիզմի ժամանակների գործելակերպի վերակենդանացումը
- ժ. կառավարման վարչահրամայական եղանակին անցում կատարվելը

1) ա, գ, դ, է

2) ա, դ, ե, թ

3) բ, դ, թ, ժ

4) ա, դ, թ, ժ

2. Նշված պնդումներից որո՞նք են Փետրվարյան ապստամբության հետևանքներ.

- ա. Սթալինեցնող ներգործություն ունեցավ խորհրդային իշխանությունների վրա, ստիպեց առավել զգուշորեն գործել:
- բ. Երևանի և այլ բանտերից ազատվեցին բոլշևիկների կողմից ձերբակալված և խոշտանգված հարյուրավոր մարդիկ:
- գ. Խորհրդային իշխանությունները ժամանակավոր իշխանության անունից հրապարակեցին որոշում Արևելյան Հայաստանում կառավարման նոր ձևի հաստատման մասին:
- դ. Վանի, Իսնուսի և Էրզրումի մարզերում կարճ ժամանակ անց ձևավորվեցին և սկսեցին գործել Արևմտահայ ազգային խորհրդի տեղական կազմակերպություններ:
- ե. Գնդակահարվեցին ապստամբության մի շարք ղեկավարներ ու մասնակիցներ, այդ թվում՝ Ստեփան Ալավերդյան, Սարգիս Մուսայելյան, Բագրատ Ղարիբջանյան, Եգոր Սևյան և ուրիշներ:
- զ. Ապստամբության բոլոր մասնակիցներին, ներառյալ ղեկավարներին, շնորհվեց համաներում:

- է. Խորհրդային իշխանությունները ձեռնամուխ եղան նաև հայկական բանակի աքտորված սպաներին ազատ արձակելու և հանրապետություն վերադարձնելու գործին:
- ը. Ստեղծվեց Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտե՝ Սարգիս Մուսայելյանի գլխավորությամբ:
- թ. Երկրում վերականգնվեց ՀՀ օրինական իշխանությունը՝ ՀՅԴ ղեկավարությամբ:
- ժ. Հայաստանում տապալվեց ՀԿ(Բ)Կ-ի իշխանությունը:

- 1) ա, բ, է, թ 2) ա, բ, գ, է 3) ա, գ, գ, է 4) ա, գ, է, թ

3. Ինչո՞վ է բացատրվում բանվոր դասակարգի և ինժեներական անձնակազմի քանակական աճը 1928–1940 թթ.

- 1) կուլտուրական շինարարության կենսագործմամբ
- 2) պարենմասնատրոման կիրառմամբ
- 3) մշակութային կյանքի վերելքով
- 4) արդյունաբերացման քաղաքականության կենսագործմամբ

4. 1920 թ. թուրք–հայկական պատերազմում Կարսն ընկավ, որովհետև՝

- 1) իրենց բարձրության վրա չէին ո՛չ Կարսը պահպանող հայ զինվորները, ո՛չ էլ բանակի հրամանատարությունը. թույլ էր նրանց բարոյահոգեբանական և մարտական պատրաստվածությունը
- 2) կարսի բերդն ամրացված էր եվրոպական ռազմական տեխնիկայով, որը Կարմիր բանակի հրամանատարության առջև ծանր խնդիրներ էր դրել
- 3) կարսի բնակչությունը տեղահանվել էր, որը հեշտացրեց կարմիրբանակայինների մուտքը Կարսի բերդ
- 4) հայերը կռվում էին քեմալա–բոլշևիկյան միացյալ բանակի դեմ, որոնց նպատակն էր Կարսում հաստատել անգլիական գեներալ–նահանգապետություն

5. Ո՞րն էր Բաթումի թուրք–անդրկովկասյան բանակցություններին գերմանական պատվիրակության մասնակցության պատճառը.

- 1) 1914 թ. ռուս–թուրքական համաձայնագիրը կենսագործելը
- 2) Բրեստ–Լիտովսկի պայմանագիրը չեղյալ հայտարարելը
- 3) Անդրկովկասում կայսերական Գերմանիայի շահերը պաշտպանելը
- 4) Հայկական տարածքները հայերին վերադարձնելը

6. Բաթումում Խալիլ բեյը հայկական պատվիրակության հետ նստեց բանակցությունների, որովհետև՝

- ա. Թուրքական զորքերը պարտություն էին կրել Անտանտի զորքերից
- բ. Մայիսյան հերոսամարտերում հայկական զորքերը հաղթական սխրանքներ գործեցին
- գ. Գերմանիան պարտադրեց դաշնակից Թուրքիային նստել բանակցությունների
- դ. Թուրքիան ձգտում էր Անդրկովկասում արդարացի խաղաղություն հաստատել
- ե. Հայաստանը փաստացի հռչակվել էր անկախ պետություն

- 1) ա, բ 2) բ, ե 3) բ, գ 4) դ, ե

7. Անդրանիկը հայկական դիվիզիայի կազմավորվելուց մի քանի ամիս անց՝ 1919 թ., կազմացրեց իր զինված ուժերը, որովհետև՝

- 1) չէին բավականացնում զենքն ու հանդերձանքը
- 2) նրանք երկարատև ռազմական գործողություններից հետո հյուծվել էին և հոգնել
- 3) նրանք հանրապետության ռազմական ուժերի համակարգից դուրս էին
- 4) նրանք չունեին զինվորական անհրաժեշտ պատրաստվածություն

8. Թվարկվածներից որոնք Բաթումի պայմանագրի հետևանքներից չեն.

- ա. Օսմանյան կառավարությունն ընդունեց և ճանաչեց Հայաստանի անկախությունը:
բ. Արագորեն զարգացան առևտրա-տնտեսական հարաբերությունները Թուրքիայի և ՀՀ-ի միջև:
գ. Թուրքիան զավթեց Արդվինը, Կարսը, Արդահանը, Օլթին, Կաղզվանը, Ախալքալաքը, Ախալցխան:
դ. Թուրքիան պարտավորվեց միջազգային ատյաններում պաշտպանել ՀՀ-ի շահերը:
ե. Թուրքիային անցան Սուրմալուի գավառը, Ալեքսանդրապոլի և Էջմիածնի գավառների երեք քառորդը, Երևանի գավառի կեսը, Շարուր-Ղարալազյազի մի մասը:
զ. Թուրքիային մնացին Ալեքսանդրապոլը, Էջմիածինն ու Երևանը:

- 1) ա, բ, ե 2) բ, դ, գ 3) բ, դ, ե 4) դ, ե, գ

9. Որոնք էին 1918 թ. Հայաստանի Հանրապետությունում սովի պատճառները.

- ա. 1919 թ. գյուղատնտեսական համախառն արտադրանքը նախապատերազմյան 1913 թ. համեմատությամբ մնացել էր նույնը:
բ. Ցանքատարածությունները կրճատվել էին 3 անգամ:
գ. Գյուղացին զրկվել էր գյուղատնտեսական գործիքներից, չունեի սերմացու:
դ. Անասունների գլխաքանակը ավելացել էր մի քանի անգամ:
ե. Գյուղատնտեսության ոլորտում ոչ ճիշտ քաղաքականությունը:
զ. Գյուղում արևմտահայ գաղթականության մեծաքանակ առկայությունը:

- 1) բ, գ, ե 2) բ, գ, դ 3) ա, բ, ե 4) գ, ե, գ

10. Ո՞րն էր մինիստրների խորհրդի կողմից Առաջին հանրապետության շրջանում հողային նոր օրենսդրության ընդունումը ձգձգելու պատճառը.

- 1) Հին օրենսդրությունը լիովին համապատասխանում էր հողային քաղաքականությանը:
- 2) Նոր օրենսդրության ընդունման նախադրյալներ չկային:
- 3) ՀՀ իշխանությունները սպասում էին Հայկական հարցի լուծմանը, որը որոշելու էր ՀՀ սահմանները և հողային ֆոնդի ծավալը:
- 4) Կառավարությունը կողմ չէր կալվածատիրական հողատիրությունը վերացնելուն:

11. Որոնք էին 1920 թ. բոլշևիկների Մայիսյան ապստամբության պարտության պատճառները: Գտնել երեք սխալ պատասխան.

- ա. Կառավարությունը դիմեց ապստամբության դեմ ուղղված մեծածավալ ռազմական գործողությունների:
բ. Հաղթանակի համար չկային լուրջ նախադրյալներ:

- գ. Ապստամբությունը կրում էր տարերային բնույթ:
- դ. Ապստամբության հաջողությունն ի սկզբանե կապվում էր Անտանտի օգնության և ոչ թե ներքին գործոնների հետ:
- ե. Բոլշևիկները Երևանում ապստամբություն չէին նախատեսել:
- զ. Ապստամբության կենտրոնի պարտությունը կանխորոշեց նրա անհաջողությունը:
- է. Բոլշևիկները չկարողացան օգտվել ժողովրդական լայն զանգվածների աջակցությունից:

- 1) ա, գ, է 2) գ, գ, է, 3) գ, դ, է 4) ա, ե, գ

12. Անդրկովկասյան հանրապետության և Թուրքիայի միջև Բաթումում կնքված պայմանագրերը վերանայելու հարցը քննարկման առարկա էին դարձել Գերմանիայում և Ավստրո-Հունգարիայում, որովհետև՝

- ա. այդ երկրների կառավարությունների համար անընդունելի էր, որ դրանք կնքվել էին առանց իրենց մասնակցության
- բ. այդ երկրները պայմանագրերը անարդարացի էին համարում, քանի որ Հայաստանը կորցրել էր իր հողային տարածքները
- գ. Անդրկովկասին տիրանալու Թուրքիայի ձգտումը հակասում էր պատերազմում նրա դաշնակիցների, հատկապես Գերմանիայի ծրագրին
- դ. Ավստրո-Հունգարիան ցանկանում էր երկրամասը պահել սեփական ազդեցության ոլորտում
- ե. այդ երկրները դեմ էին Անդրկովկասում ադրբեջանական պետության ձևավորմանը

- 1) բ, ե 2) ա, գ 3) ա, ե 4) գ, դ

13. Թվարկվածներից որո՞նք են 1919 թ. հունվարի հայ-վրացական հաշտության կոնֆերանսի արդյունքներից.

- ա. Լոռին հայտարարվեց «չեզոք գոտի»:
- բ. «Լոռու չեզոք գոտու» մեջ մտան Բորչալուի գավառի Ալավերդու (Թումանյան), Ուզունլարի (Օձուն) և Ախալքալաքի շրջանները:
- գ. «Չեզոք գոտում» սահմանվեց հատուկ կառավարում՝ Հայաստանի և Վրաստանի լիազոր ներկայացուցիչների համատեղ ղեկավարությամբ:
- դ. «Լոռու չեզոք գոտու» ընդհանուր վերահսկողությունը դրվեց ավստրիացի գեներալ-նահանգապետի վրա:
- ե. Վորոնցովկայի շրջանը համարվեց վիճելի տարածք:
- զ. «Չեզոք գոտում» տեղակայվեցին խաղաղապահ զորամասեր:
- է. Ջավախքն ամբողջությամբ մնաց Վրաստանի հսկողության ներքո:

- 1) ա, գ, ե 2) բ, դ, է 3) գ, ե, գ 4) ա, գ, է

14. Ինչ հետևանքներ ունեցավ 1920 թ. թուրք-հայկական պատերազմը հայ-վրացական սահմանային խնդիրների վրա.

- ա. Ստորագրվեց հայ-վրացական համաձայնագիր «Լոռու չեզոք գոտի» ժամանակավորապես վրացական զորքեր մտցնելու մասին:
- բ. Համաձայնագիրը նպաստեց պատերազմում հայկական կողմի հաղթանակին:
- գ. Ավելացվեց «չեզոք գոտում» հայկական զորամասի թվաքանակը:
- դ. Թուրք-հայկական պատերազմում Հայաստանի պարտությունը հնարավորություն ընձեռեց Վրաստանին պարբերաբար խախտելու համաձայնագրի դրույթները:
- ե. Վրացական զորքերը մասնակցեցին ռազմական գործողություններին՝ հայկական ուժերին աջակցելու նպատակով:
- զ. Վրացական զորքերը մտցվեցին նաև «չեզոք գոտու» սահմաններից դուրս գտնվող Արդահանի մարզ:
- է. «Չեզոք գոտու» կառավարությունից հեռացվեց Հայաստանի կառավարության լիազոր ներկայացուցիչը, և Լոռիում հաստատվեց վրացական գեներալ-նահանգապետություն:

- 1) ա, դ, է 2) ա, դ, ե 3) դ, ե, գ 4) բ, գ, է

15. Բաթումի պայմանագրով Բաքվում գտնվող հայկական ազգային զորամասերի լուծարման պահանջը նպաստեց, որ՝

- 1) հայկական կողմը կազմացրի Բաքվի հայկական ազգային զորամասերը
- 2) Բաքվի Հայոց ազգային խորհուրդը համագործակցի Ստ. Շահումյանի հետ
- 3) հայկական ուժերը չհամագործակցեն Բաքվի ժողովրդական կոմիսարների իշխանության հետ
- 4) ինքնապաշտպանության կազմակերպման ժամանակ հայկական զորամասերը չեզոք դիրք բռնեն

16. Ինչն էր ամբողջ Անդրկովկասում իրադրության կտրուկ փոխվելու պատճառը 1920 թ. ապրիլի վերջին.

- 1) հայ-ռուսական բանակցությունները Մոսկվայում
- 2) թուրքական զորքերի ներխուժումը Անդրկովկաս
- 3) Ադրբեջանի խորհրդայնացումը
- 4) թուրք-հայկական պատերազմում Հայաստանի պարտությունը

17. Թվարկվածներից որո՞նք են 1921 թ. հոկտեմբերի 20-ին Անկարայում կնքված Ֆրանս-թուրքական պայմանագրի արդյունքներից.

- ա. Հայաթափված Կիլիկիան տրվեց Թուրքիային:
- բ. Կիլիկիահայ բեկորներից Կիլիկիայում ձևավորվեց «հայկական օջախ»:
- գ. Ֆրանսիական զորամասերը լքեցին Կիլիկիան:
- դ. Կիլիկիան հռչակվեց ինքնավար՝ Ֆրանսիայի հովանավորության ներքո:

ե. Ինքնավար Կիլիկիան ստեղծեց 50-հազարանոց բանակ:

զ. Կիլիկիահայության վերջին բեկորներն արտագաղթեցին հարևան արաբական երկրներ և Եվրոպա:

1) ա, գ, դ

2) բ, դ, ե

3) ա, գ, զ

4) բ, դ, զ

18. Հայաստանի իշխանությունները Թիֆլիսի 1920 թ. օգոստոսի 10-ի համաձայնագրին կարևոր նշանակություն չէին տալիս, որովհետև՝

ա. այն համարում էին ձևական և ժամանակավոր

բ. երկրի արտաքին քաղաքականության գլխավոր նպատակը և Հայկական հարցի լուծումը կապում էին Սևրի պայմանագրի հետ

գ. մտածում էին, որ իրենք ստեղծված իրավիճակում այլ ելք չունեն

դ. նրանք հասկանում էին, որ Սևրի պայմանագիրը հնարավոր չէ իրագործել

ե. համոզված էին, որ Եվրոպական հզոր պետությունների ջանքերով կիրագործվի Սևրի պայմանագիրը

զ. գերազնահատում էին Ռուսաստանի դերը տարածաշրջանային խնդիրներում

է. ենթադրում էին, որ դրանով կխոչընդոտեն քեմալա-բուլշևիկյան համագործակցության ամրապնդմանը

1) ա, գ, ե

2) ա, բ, ե

3) բ, ե, է

4) դ, գ, է

19. 1920 թ. սեպտեմբերի 18-ին Բաքվում ընդունված բանաձև-փաստաթուղթը վտանգավոր էր Հայաստանի համար, որովհետև՝

ա. նրա հիմնական դրույթներն ամբողջությամբ ուղղված էին Հայաստանի Հանրապետության դեմ

բ. դրանով առաջարկվում էր հնարավոր բոլոր միջոցառումներով օգնել Հայաստանին խուսափելու խորհրդայնացումից

գ. ենթադրվում էր բոլոր միջոցներով օգնել Անտանտին

դ. առաջարկվում էր քեմալականների ռազմարշավի միջոցով նպաստել Հայաստանի խորհրդայնացմանը

ե. Ռուսաստանից պահանջվում էր չմիջամտել Հայաստանի ներքին գործերին:

զ. նախատեսում էր «թուրք-հայկական կոտորածները» կանխելու պատրվակով որպես փրկարար և հաշտարար ռուսական զորքերը մտցնել Հայաստան և հաստատել խորհրդային վարչակարգ

է. նախատեսում էր ադրբեջանական զորքը Հայաստան մտցնելով՝ կանխել «թուրք-հայկական կոտորածները»

1) բ, ե, է

2) ա, գ, դ

3) ա, դ, զ

4) ե, գ, է

20. Թվարկվածներից որո՞նք 1921 թ. Փետրվարյան ապստամբության արդյունքներից չէին.

- ա. Խորհրդային իշխանությունը ստիպված էր առավել զգուշորեն գործել:
- բ. Բանտերից ազատվեցին բուլնիկների կողմից ձերբակալված և խոշտանգված հարյուրավոր մարդիկ:
- գ. Ապստամբության ղեկավարները ենթարկվեցին առավելագույն պատժի՝ գնդակահարության:
- դ. Ապստամբության բոլոր մասնակիցներին, ներառյալ ղեկավարներին, շնորհվեց համաներում:
- ե. Հայկական բանակի աքսորված սպաներին ազատ արձակեցին:
- զ. Հայկական բանակի աքսորից ազատված սպաներին թույլ չտրվեց վերադառնալ Հայաստան:
- է. Ամրապնդվեց ռազմական կոմունիզմի քաղաքականությունը:
- ը. Վճռական քայլեր ձեռնարկվեցին երկրի սոցիալ-տնտեսական դրությունը բարելավելու ուղղությամբ:

- 1) բ, դ, գ 2) ա, դ, ե, 3) գ, գ, ը 4) գ, գ, է

21. Թվարկվածներից որո՞նք ԽՍՀՄ կազմալուծման պատճառներից չեն.

- ա. ԽՍՀՄ-ը իրականում ոչ թե դաշնային միություն էր, այլ միաձույլ կենտրոնացված պետություն:
- բ. Խորհրդային պետությանը բնորոշ էր իրական ժողովրդավարությունը:
- գ. ԽՍՀՄ քաղաքացիները լայնորեն օգտվում էին խոսքի, մամուլի, միտինգների, ցույցերի ազատություններից:
- դ. Հետապնդվում էր այլախոհությունը:
- ե. Ազգերի ու հասարակության միլիոնավոր անդամների նկատմամբ կիրառվում էին բռնություններ:
- զ. Անխախտ կերպով իրականացվում էր մարդու իրավունքների պաշտպանությունը:

- 1) ա, դ, ե 2) բ, գ, գ 3) գ, դ, ե 4) բ, դ, գ

22. Վրաստանի մենշևիկյան իշխանության հետ ՀՓԿ-ի դաշինքի հաստատումը և խորհրդային իշխանության դեմ համակովկասյան պայքարը խափանվեց, որովհետև՝

- 1) թուրքական զորքերը ներխուժեցին Հայաստան
- 2) Վրաստանի մենշևիկյան իշխանությունը մերժողական պատասխան տվեց
- 3) Վրաստանը խորհրդայնացվեց
- 4) սերտացավ վրաց-ադրբեջանական մերձեցումը

23. Ի՞նչ նպատակով օգտագործվեց Ս. Կիրովի սպանությունը Ստալինի կողմից.

- 1) երկրում ժողովրդավարություն հաստատելու
- 2) կուսակցական կազմակերպությունների թիվը մեծացնելու
- 3) իր նախկին զինակիցներից ազատվելու
- 4) այլախոհների նկատմամբ հալածանքները դադարեցնելու

24. Որո՞նք Հայաստանի արդյունաբերացման հետևանքներից չէին.

- ա. Հայաստանն աստիճանաբար ագրարային երկրից վերածվեց արդյունաբերական հանրապետության:
- բ. Կրճատվեց խորհրդահայ մտավորականության և ճարտարագիտատեխնիկական անձնակազմի քանակը:
- գ. Բանվոր դասակարգի քանակը մի քանի անգամ աճեց:
- դ. Առաջացրեց բնապահպանական խնդիրներ:
- ե. Հրազդան գետի վրա հիդրոէլեկտրակայանների կառուցումը հանգեցրեց Սևանա լճի մակարդակի իջեցմանը:
- զ. Ստեղծվեցին մի շարք կոմունաներ, արտելներ, սովխոզներ:
- է. Հայաստանի խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը կրճատվեց 30 %-ով:

- 1) բ, գ, է 2) բ, գ, է 3) ա, դ, զ 4) դ, ե, գ

25. Որո՞նք էին Երկրորդ աշխարհամարտից հետո սկսված զանգվածային հայրենադարձության պատճառները.

- ա. հայկական հողերը Թուրքիայից պահանջելու և Հայաստանին միացնելու մտայնության աճը
- բ. Խորհրդային Միության, այդ թվում՝ Խորհրդային Հայաստանի հեղինակության աճը
- գ. Սփյուռքի տարբեր հայկական համայնքներում տնտեսական վիճակի կտրուկ վատթարացումը
- դ. Սփյուռքում հայերի նկատմամբ ազգային, կրոնական հալածանքները

- 1) ա, բ 2) ա, գ 3) բ, դ 4) բ, գ

26. Հայ գաղթականներն առաջին հերթին ձգտում էին հաստատվելու այն երկրներում, ուր կար հայկական համայնք, քանի որ՝

- 1) այդ երկրները հեռու էին Թուրքիայից
- 2) ակնկալում էին իրենց ազգակիցների օժանդակությունը
- 3) այդ երկրներում ժամանակավորապես ազատվելու էին հարկերից
- 4) այդ երկրներում ստանալու էին կյանքի ու գույքի պաշտպանություն

27. 1921 թ. Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագրի արդյունքում՝

- ա. Խորհրդային Ռուսաստանը ճանաչեց քեմալականների «Ազգային ուխտը», որը թուրքական տարածք էր հռչակում Արևմտյան Հայաստանը
- բ. Խորհրդային Հայաստանը դիվանագիտական կապեր էր հաստատում իր անմիջական հարևանների՝ Թուրքիայի և Իրանի հետ
- գ. թուրք-հայկական սահմանն անցնելու էր Ախուրյան և Արաքս գետերով
- դ. թուրքերին էր անցնում Կարսի մարզը, Սուրմալուի գավառը
- ե. Հայաստանին էին վերադարձվում Կողբի աղահանքերն ու Անիի ավերակները

- գ. Նախիջևանը փոխանցվում էր Խորհրդային Ադրբեջանի խնամակալությանը՝ որևէ այլ երրորդ կողմի չզիջելու պայմանով
- է. Կարսի մարզն անցավ Ռուսաստանին, ու նրա մեջ մտան 4 գավառներ
- ը. ՀԽՍՀ կազմում էր մնալու Ալեքսանդրապոլի գավառը

- 1) ա, բ, ե, է, ը 2) ա, գ, զ, է, ը 3) ա, գ, դ, զ, ը 4) բ, դ, ե, գ, ը

28. Հայ-վրացական սահմանագատման համաձայնագրով՝

- ա. Լոռին միանում էր Վրաստանին
- բ. Լոռին, բացառությամբ Հյուսիսային Լոռու հայկական մի խումբ գյուղերի (Աղ-Քյորի, Օփրեթ, Խոժոռնի և այլն), մնում էր Խորհրդային Հայաստանին
- գ. Ջավախքն անցնում էր Հայաստանին, իսկ Լոռին դառնում էր «չեզոք գոտի»
- դ. Ջավախքն անցնում էր Վրաստանին
- ե. Լոռիում հաստատվելու էր անգլիական գեներալ-նահանգապետություն
- զ. Վրաստանը ժամանակավորապես զորքեր մտցրեց Լոռի

- 1) ա, բ 2) ա, ե 3) բ, գ 4) բ, դ

29. Ինչն էր 1990-ական թթ. հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման ձախողման պատճառը.

- 1) Հայաստանի կողմից արձանագրությունների վավերացման կասեցումը
- 2) Թուրքիան Հայաստանին նախապայմաններ ներկայացրեց՝ հատկապես կապված դարաբաղյան խնդրի հետ
- 3) Թուրքիան առաջարկում էր արձանագրություններում կետեր փոփոխել՝ հոգուս Ադրբեջանի
- 4) Հայաստանի մերձեցումը ՌԴ-ի և ԱՄՆ-ի հետ, որին Թուրքիան դեմ էր

30. Ինչ հետևանք է ունեցել ադրբեջանական բանակի հարձակումը Գետաշենի ու Մարտունաշենի վրա.

- 1) Հայերը հերոսաբար հետ մղեցին թշնամուն և ազատագրեցին Գետաշենն ու Մարտունաշենը:
- 2) Ուժերը անհավասար էին, ուստի զավթիչները գրավեցին Գետաշենն ու Մարտունաշենը:
- 3) Թշնամին պաշարեց Գետաշենն ու Մարտունաշենը, բայց հայկական ինքնապաշտպանական ուժերի դիմադրության շնորհիվ շուտով պաշարումը դադարեցվեց:
- 4) Թշնամու հարձակումը երկար չտևեց, Գետաշենն ու Մարտունաշենը չնվաճվեցին, քանի որ ադրբեջանական բանակի ուշադրության կենտրոնում հայտնվեցին Խոջալուն, Շուշին ու Ադդամը:

31. Ադրբեջանի անկախության հռչակագրով՝

- 1) Ադրբեջանը դուրս էր գալիս ԱՊՀ-ի կազմից
- 2) Ադրբեջանն ընդգրկված էր լինելու 1920-1936 թթ. Խորհրդային Ադրբեջանի Հանրապետության սահմաններում

- 3) Ադրբեջանն ընդգրկված էր լինելու 1918–1920 թթ. մուսավաթական Ադրբեջանի Հանրապետության սահմաններում
- 4) Բաքուն շարունակեց մնալ Խորհրդային Ադրբեջանի իրավահաջորդը
- 5) Բաքուն հրաժարվեց Խորհրդային Ադրբեջանի իրավահաջորդը լինելուց
- 6) Ադրբեջանի կազմում էին լինելու Նախիջևանը, Լեռնային Ղարաբաղն ու Զանգեզուրը
- 7) Ադրբեջանի կազմում չէին կարող լինել Նախիջևանն ու Լեռնային Ղարաբաղը
- 8) Ադրբեջանի կազմում չէին կարող լինել Լեռնային Ղարաբաղն ու Զանգեզուրը

32. ԼՂՀ անկախության հանրաքվեի արդյունքում՝

- 1) մերժվեց ՀՀ-ի հետ ԼՂՀ-ի միավորման հարցը
- 2) հաստատվեց Ադրբեջանի կազմից դուրս գալու հարցը
- 3) հաստատվեց Լեռնային Ղարաբաղի անկախությունը
- 4) հաստատվեց Ղարաբաղ–Զանգեզուր շրջանային խորհրդի անկախությունը

33. Ինչո՞վ են ավարտվել Խոջալուի համար մղվող մարտերը.

- 1) Անակնկալի եկած թշնամին փորձեց նահանջել:
- 2) Դարանակալած թշնամին հայկական ուժերին զցեց շրջափակման մեջ:
- 3) Հայկական ուժերը նահանջեցին դեպի Ստեփանակերտ:
- 4) Հայկական ուժերը լիովին ջախջախեցին Խոջալուում տեղակայված ադրբեջանական ուժերը:

34. Ինչո՞ւ են հայ մարտիկները Խոջալուի ազատագրման ժամանակ գլխավոր ճանապարհի կողմից միջանցք թողել.

- 1) որպեսզի ադրբեջանցիներն այդ ճանապարհով նահանջեին
- 2) որպեսզի Խոջալուի բնակիչները հեռանային Շուշի
- 3) որպեսզի օգնական ուժեր ստանային Ստեփանակերտից
- 4) որպեսզի Խոջալուի բնակիչները հեռանային Աղդամ

35. Արցախյան ազատագրական ուժերի Լաչին մտնելով՝

- 1) դյուրին դարձավ Շուշիի ազատագրումը
- 2) ճեղքվեց շրջափակման օղակը
- 3) հեշտացավ Շահումյանի ու Մարտակերտի ազատագրումը
- 4) Արցախը ցամաքային ճանապարհով միացավ ՀՀ-ին
- 5) թշնամին զինադադար խնդրեց

36. Ինչի՞ շնորհիվ ապահովվեց Մարտակերտի շրջանում ազատագրական մարտեր մղող հայկական պաշտպանական ուժերի թիկունքը.

- 1) Շուշիի ազատագրման
- 2) Լաչինի ազատագրման
- 3) Հորադիզի երկաթուղային հանգույցի կրակակետերի ոչնչացման և Հորադիզի ազատագրման
- 4) Քելբաջարի շրջանի հյուսիսային մասի և Օմարի բարձրադիր լեռնանցքի ազատագրման

37. Լոզանի կոնֆերանսից հետո Հայկական հարցը փոխարինվեց՝

- 1) դեպի հայրենիք ներգաղթ կազմակերպելու հարցով
- 2) հայ գաղթականությանը որևէ կերպ բնակեցնելու և օգնություն ցույց տալու հարցով
- 3) հայ գաղթականությանը Սփյուռքի տարբեր գաղթօջախներում տեղաբաշխելու հարցով
- 4) Խորհրդային Հայաստանում հայ գաղթականությանը ապաստան տալու հարցով

38. Ինչո՞ւ էր խորհրդային իշխանության տարիներին Հայ դատի և պահանջատիրության խնդիրներով հիմնականում զբաղվում Սփյուռքը.

- 1) քանի որ Սփյուռքում էին գործում հայ ազգային ավանդական կուսակցությունները
- 2) քանի որ Խորհրդային Հայաստանում չկային համապատասխան մարմիններ և դիվանագետներ
- 3) քանի որ Խորհրդային Հայաստանը զրկված էր ինքնուրույն արտաքին քաղաքականություն վարելու հնարավորությունից
- 4) Խորհրդային Հայաստանն ավելի շահագրգռված չէր Հայ դատի ու պահանջատիրության խնդիրներով

39. Ինչո՞ւ 1920–ական թթ. սկսած՝ տնտեսական ծանր վիճակում գտնվող հազարավոր հայեր վերադարձան հայրենիք.

- 1) քանի որ հայրենիքում նրանք ունեին կյանքի ու գույքի ապահովություն
- 2) քանի որ իրենց ապաստանած երկրներում ենթարկվում էին տնտեսական, քաղաքական ու կրոնական հալածանքների
- 3) քանի որ Խորհրդային Հայաստանը իր գոյության առաջին իսկ տարիներից վարում էր տարբեր երկրներում ցրված հայությանը Հայաստան տեղափոխելու քաղաքականություն
- 4) քանի որ հույս ունեին ստեղծվելիք ազգային օջախում ստանալու կյանքի բարենպաստ պայմաններ

40. 1930–ական թթ. ինչ պատճառներով ընդհատվեցին Սփյուռքի հետ առանց այն էլ սահմանափակ հարաբերությունները.

- 1) խորհրդային երկրում ծավալված բռնաճնշումների
- 2) Հայաստանում քաղաքական կուսակցությունների լուծարման
- 3) Հայաստանում ՀՕԿ–ի ու ՀԲԸՄ–ի գործունեության արգելման
- 4) Հայկական համաշխարհային կոնգրեսի հետ հարաբերությունների վատթարացման
- 5) Խորհրդային Հայաստանում Հայկական ազգային կոմիտեի գործունեության արգելման

41. Ինչո՞վ էր պայմանավորված 1940–ական թթ. երկրորդ կեսին Խորհրդային Միության, այդ թվում նաև Խորհրդային Հայաստանի հեղինակության բարձրացումը սփյուռքահայության շրջանում.

- ա. Երկրորդ աշխարհամարտում տարած հաղթանակով
- բ. խորհրդային երկրում ինդուստրացման հաջող արդյունքներով

- գ. հայկական հողերը Թուրքիայից պահանջելու և Հայաստանին միացնելու մտայնությամբ
- դ. Խորհրդային Հայաստանում հայրենադարձությանը նպաստող հանձնախմբերի ստեղծմամբ

- 1) ա, բ 2) ա, գ 3) բ, գ 4) գ, դ

42. 1940–ական թթ. որոնք պատճառ դարձան սփյուռքահայերի հայրենադարձության դադարեցման համար.

- 1) սպառազինությունների մրցավազքը
- 2) սառը պատերազմը
- 3) տնտեսական դժվարությունները
- 4) քաղաքացիություն ստանալու հետ կապված բարդությունները
- 5) ԽՍՀՄ ամբողջատիրական համակարգի նոր բացասական դրսևորումները
- 6) Խորհրդային Հայաստանի ժողովրդագրական վիճակի վատթարացումը
- 7) ստալինյան բռնաճնշումները
- 8) ներգաղթողների դժվար կացությունը

43. Ինչ նշանակություն ունեցավ հայրենադարձությունը Խորհրդային Հայաստանի համար.

- 1) Վատթարացավ Խորհրդային Հայաստանի տնտեսական կացությունը:
- 2) Սփյուռքահայերն իրենց կապիտալ ներդրումներով շենացրին Խորհրդային Հայաստանը:
- 3) Բարելավվեց ՀԽՍՀ ժողովրդագրական իրավիճակը:
- 4) Խորհրդային Հայաստանում աճեց գործազրկությունը:

44. 1950–ական թթ. տեղաշարժերը Սփյուռքում պայմանավորված էին՝

- 1) Լիբանանում բռնկված քաղաքացիական կռիվներով
- 2) Իրաք–իրանյան պատերազմով
- 3) Եգիպտոսում սկսված հեղափոխությամբ
- 4) արաբ–իսրայելական պատերազմով
- 5) Ադրբեջանի իշխանությունների կողմից կազմակերպված կոտորածներով ու տեղահանություններով
- 6) սառը պատերազմով

45. 1960–1980–ական թթ. տեղաշարժերը Սփյուռքում պայմանավորված էին՝

- 1) Լիբանանում բռնկված քաղաքացիական կռիվներով
- 2) Իրաք–իրանյան պատերազմով
- 3) Եգիպտոսում սկսված հեղափոխությամբ
- 4) արաբ–իսրայելական պատերազմով

- 5) Ադրբեջանի իշխանությունների կողմից կազմակերպված կոտորածներով ու տեղահանություններով
- 6) սառը պատերազմով
- 7) ստալինյան բռնաճնշումներով

46. Ո՞ր իրադարձությունները պատճառ հանդիսացան, որ ԽՍՀՄ ղեկավարությունը հրաժարվի Թուրքիայից հայկական հողային պահանջներից.

- 1) ՄԱԿ-ի կազմավորումը և Թուրքիայի անդամակցումը այդ կառույցին
- 2) միջազգային իրավիճակի սրումը
- 3) ֆաշիստական վարչակարգերի հաստատումը Եվրոպայի շատ երկրներում
- 4) Հյուսիսատլանտյան խմբավորման կազմավորումը և Թուրքիայի անդամակցումը այդ ռազմաքաղաքական դաշինքին
- 5) Սևծովյան տնտեսական համագործակցության (ՍԾՏՀ) կազմավորումը և Թուրքիայի անդամակցումն այդ կառույցին
- 6) ԱՊՀ կազմավորումը և Թուրքիայի անդամակցումն այդ կառույցին

47. Ի՞նչ նպատակով երեք հայ քաղաքական կուսակցությունները ստեղծեցին համազգային կենտրոնական մարմինը.

- 1) գործողության միասնական ծրագիր մշակելու
- 2) ֆաշիստական ճամբարներից հայ ռազմագերիների ազատագրման ուղղությամբ քայլեր ձեռնարկելու
- 3) Սփյուռքի հայ գաղթօջախներում հանգանակություններ կազմակերպելու
- 4) Ցեղասպանության միջազգային ճանաչմանը հասնելու

48. Հայկական ազգային կոմիտեի նպատակն էր՝

- 1) Արևելյան ու Արևմտյան Հայաստանների միավորումն ու հայկական պետություն կազմելը ոչ միայն Վիլսոնի նախանշած սահմաններում, այլ նաև ժամանակին Խորհրդային Հայաստանից արհեստականորեն անջատված բոլոր տարածքներում
- 2) Արևելյան ու Արևմտյան Հայաստանների, ինչպես նաև Կիլիկիայի միավորումն ու հայկական պետություն կազմելը ոչ միայն Վիլսոնի նախանշած սահմաններում, այլ նաև ժամանակին Խորհրդային Հայաստանից արհեստականորեն անջատված բոլոր տարածքներում
- 3) Արևմտյան Հայաստանից Թուրքիայի խլած բոլոր տարածքներից հայկական 6 վիլայեթների ստեղծումը, ինչը պետք է լիներ Վիլսոնի նախանշած սահմաններում
- 4) Արևելյան ու Արևմտյան Հայաստանների, Կիլիկիայի միավորումը և հայկական պետության ելք ունենալը դեպի ծով

49. Ի՞նչն էր պատճառը, որ Գիտության ու արվեստի ինստիտուտը զբաղվում էր հիմնականում հասարակական գիտությունների հիմնահարցերով.

- 1) այդ բնագավառի թույլ զարգացածությունը
- 2) այդ բնագավառի անվանի գիտնականների առկայությունը և հայագիտության գոյություն ունեցող ավանդույթները
- 3) այդ բնագավառի հեռանկարային լինելը և հայագիտության կարևորությունը
- 4) այդ բնագավառը ֆինանսավորվում էր Խորհրդային Միության կողմից, որով էլ ապահովում էր հայագետներին

50. Ինչի՞ հետևանքով էր, որ 1990–ական թթ. ստեղծագործական շատ խմբեր անգործության մատնվեցին.

- 1) էներգետիկ ճգնաժամի
- 2) շրջափակման
- 3) արվեստի որոշ հիմնարկների սեփականաշնորհման
- 4) արվեստի շատ հիմնարկների լուծարման

51. Ստորև տրված փաստարկներից ո՞րը 1918–1920 թթ. ՀՀ սոցիալ–տնտեսական ծանր դրության պատճառ չէ.

- 1) Առաջին աշխարհամարտը և 1918–1920 թթ. թուրքական 2 արշավանքներն ու բռնազավթումները
- 2) տնտեսության կազմալուծումը և ներմուծման ու արտահանության բացակայությունը
- 3) սովը և համաճարակը
- 4) երկրում տիրող բռնապետական վարչակարգը

52. Ի՞նչ հետևանքներ ունեցավ բոլշևիկների Մայիսյան ապստամբությունը.

- ա. Հայաստանում հաստատվեց խորհրդային իշխանություն
բ. երկրում արգելվեց Հայաստանի կոմունիստական կուսակցության գործունեությունը
գ. շարունակվեց բոլշևիկների օրինական գործունեությունը Հայաստանում
դ. համաներում ստացան ապստամբության ղեկավարները
ե. ապստամբությունը թուլացրեց ու ապակայունացրեց երկրի ներքին դրությունը

- 1) բ, ե 2) ա, գ 3) գ, ե 4) բ, դ

53. Գերմանիան շահագրգիռ էր հրավիրելու կոնֆերանս Կոստանդնուպոլսում, որովհետև՝

- 1) ձգտում էր վերանայելու Բաթումի պայմանագիրը և թույլ չտալու Թուրքիայի ուժեղացումն Անդրկովկասում, քանի որ դրանով կսահմանափակվեր իր ազդեցությունն այդ տարածաշրջանում
- 2) ձգտում էր վերանայելու Բրեստ–Լիտովսկի պայմանագիրը
- 3) ձգտում էր հրավիրվելիք կոնֆերանսում քննարկելու Բալկանյան տարածքների հարցը և լուծելու այն հոգուտ Թուրքիայի
- 4) ձգտում էր հրավիրվելիք կոնֆերանսում քննարկելու Անդրկովկասյան հանրապետությունների միջև տարածքային վեճերը և լուծելու դրանք հոգուտ Հայաստանի

54. Խորհրդային Ռուսաստանը սատարում էր Խորհրդային Ադրբեջանի՝ հայկական տարածքները նվաճելու ծրագրին, որովհետև՝

- 1) հենակետ ունենալով Խորհրդային Ադրբեջանը՝ ձգտում էր կապվելու քեմալական Թուրքիայի հետ՝ հուսալով, թե վերջինս կօգնի հեղափոխությունն Արևելքի երկրներում տարածելուն
- 2) այդ տարածքները դիտում էր իբրև Ադրբեջանի պատմական մաս և ձգտում էր վերականգնելու պատմական արդարությունը
- 3) իրականում ձգտում էր Նախիջևանը, Ղարաբաղը, Ջանգեզուրն ու Շարուրը ադրբեջանական զենքի օգնությամբ բռնակցելու իր տարածքին
- 4) նման դիրքորոշմամբ ձգտում էր վստահություն ներշնչելու Վրաստանին, թե վերջինիս խորհրդայնացման դեպքում ինքը կսատարի նաև Լոռու նկատմամբ նրա տարածքային հավակնություններին

55. Որո՞նք էին Հայաստանում բռնկված Փետրվարյան ապստամբության պատճառները: Գտնել սխալ պատասխանները.

- 1) բոլշևիկյան մենիշխանության հաստատումը
- 2) ռազմական կոմունիզմի քաղաքականության կիրառումը
- 3) 1921 թ. փետրվարին իրականացված նոր ձերբակալություններն ու գնդակահարությունները
- 4) օտարերկրյա գործակալների սադրիչ գործողությունները
- 5) դաշնակցություն կուսակցության և նախկին կառավարության անդամների բացահայտ քարոզչական և կազմակերպչական աշխատանքը՝ խորհրդային իշխանության հեղինակությունը վարկաբեկելու ուղղությամբ

56. Ի՞նչ հետևանքներ ունեցավ Փետրվարյան ապստամբությունը Հայաստանում: Գտնել սխալ պատասխանները.

- 1) Երկրում վերահաստատվեց խորհրդային իշխանությունը:
- 2) Բանտերից ազատվեցին բոլշևիկների կողմից ձերբակալված մարդիկ:
- 3) Երկրում վերջ տրվեց բոլշևիկների մենիշխանությանը:
- 4) Քայլեր ձեռնարկվեցին բանակի աքսորված սպաներին հայրենիք վերադարձնելու ուղղությամբ:
- 5) Երկրում շարունակվեցին բոլոր տեսակի բռնագրավումները:
- 6) Ապստամբներին համաներում շնորհվեց:

57. Ինչո՞ւ խորհրդային երկրում արագացվեցին կոլեկտիվացման տեմպերը, և բռնություն ու հարկադրանք գործադրվեց գյուղացիների հանդեպ: Գտնել ճիշտ պատասխանները.

- ա. Կոմունիստական կուսակցությունը տնտեսական դժվարություններից ելքը տեսավ կոլեկտիվացման տեմպերի արագացման մեջ:
- բ. Գործադրվեց բռնություն, որովհետև մենատնտես գյուղացիները ժողովրդի թշնամիներ էին և սոցիալիզմի կառուցման հակառակորդներ:

- գ. Գործադրվեց բռնություն, որովհետև մենատնտես գյուղացին ցանկություն չուներ և պատրաստ չէր հրաժարվելու անհատական տնտեսությունից ու կամավոր մտնելու կոլտնտեսություն:
- դ. Գործադրվեց բռնություն, որովհետև միջակ գյուղացիները թույլ չէին տալիս չքավոր գյուղացիներին անդամագրվել կոլեկտիվ տնտեսություններին:

- 1) ա, բ 2) գ, դ 3) ա, գ 4) բ, դ

58. Թվարկվածներից որո՞նք գյուղատնտեսության կոլեկտիվացման հետևանք չեն.

- ա. 1930–ական թթ. վերջին Հայաստանում գոյություն ուներ 1000 կոլտնտեսություն:
- բ. Մենատնտես գյուղացիությունը վերափոխվեց կոլտնտեսային գյուղացիության:
- գ. Պետության կատարած մեծածավալ մթերումների հետևանքով առաջացած սովի պատճառով ամայացան ու լքվեցին մի շարք շրջանների գյուղեր:
- դ. Գյուղացիության մի մասը համարեց քաղաքային բնակչության, բանվոր դասակարգի շարքերը:
- ե. Ծավալվեց նէպը, և զարգացան ապրանքադրամական, շուկայական հարաբերությունները:
- զ. Ձևավորվեց գյուղական մտավորականության խավ:
- է. Ավելացավ մենատնտես գյուղացիների թվաքանակը:
- ը. Նյութական շահագրգռվածության սկզբունքի վրա հիմնված սոցիալիստական տնտեսաձևի առկայության պայմաններում բոլոր կոլտնտեսություններն արձանագրեցին տնտեսական բարձր ցուցանիշներ:

- 1) ա, բ, ը 2) դ, ե, գ 3) ե, է, ը 4) բ, գ, է

59. Թվարկվածներից որո՞նք են 1920 թ. Մայիսյան ապստամբության անմիջական հետևանքներ.

- ա. Գնդակահարվեցին ապստամբության մի շարք ղեկավարներ և մասնակիցներ:
- բ. Ապստամբությունը տեղի ունեցավ Հայաստանի բոլոր քաղաքներում միաժամանակ և ավարտվեց հաղթանակով:
- գ. Բոլշևիկյան կազմակերպություններն ամրապնդեցին իրենց դիրքերը Հայաստանում:
- դ. Բոլշևիկյան կազմակերպությունները հայտարարվեցին օրենքից դուրս:
- ե. Ամրապնդվեց հայ և ռուս բոլշևիկների ռազմաքաղաքական դաշինքը:
- զ. Ապստամբությունը պետությանը միայն վնաս հասցրեց՝ ապակայունացնելով երկրի ներքին դրությունը:
- է. Իշխանությունն անցավ Հայաստանի ռազմաեղափոխական կոմիտեի ձեռքը:
- ը. Հ. Օհանջանյանի բյուրո–կառավարությունը ՌՀԿ–ին առաջարկեց կազմել կոալիցիոն կառավարություն:

- 1) բ, գ, զ 2) ա, դ, է 3) ա, դ, զ 4) ե, է, ը

60. Որո՞նք էին Փետրվարյան ապստամբության պատճառները.

- 1) նոր իշխանությունների վարած «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը
- 2) Վրաստանին պատերազմ հայտարարելու պատճառով շտապ իրականացված զորահավաքը
- 3) նոր իշխանությունների այն հայտարարությունը, որ Խորհրդային Ադրբեջանի հետ տարածքային վեճերը լուծվելու են հոգուտ ադրբեջանցիների
- 4) բնակչության ունեցվածքի կամայական բռնագրավումները, որոնք ուղեկցվում էին անհնազանդների ձերբակալություններով
- 5) նէպի քաղաքականության կենսագործունեությունը, որի հետևանքով կտրուկ վատթարացավ գյուղացիության դրությունը
- 6) ՀՄԽՀ իշխանությունների բացահայտ թուրքամետ քաղաքականությունը և Թուրքիային տարածքային պահանջներ առաջադրելուց հրաժարվելու հայտարարությունները
- 7) Խորհրդային իշխանության գործադրած քաղաքական բնույթի հետապնդումները և բռնությունները

61. Ինչո՞ւ 1918 թ. վերջին չհաջողվեց խուսափել հայ-վրացական պատերազմից.

- 1) վրացական իշխանությունների որդեգրած անզիջում և հարձակողական կեցվածքի
- 2) Հայաստանի Հանրապետության ներկայացրած տարածքային պահանջների
- 3) ռուսական իշխանությունների սադրանքների
- 4) ադրբեջանական և վրացական իշխանությունների փոխհամաձայնեցված գործողությունների

62. Ինչո՞ւ Խորհրդային Հայաստանում նէպի շրջանում կատարված հողային բարենորոգումները քիչ չափով ավելացրին գյուղացու հողաբաժինը: Գտնել սխալ պատասխանը.

- 1) Հայաստանում կալվածատիրությունը տարածված չէր, հետևաբար բռնագրավված և ազգայնացված կալվածատիրական հողերը ևս քիչ էին:
- 2) Հողային ֆոնդի խիստ սահմանափակության պատճառով շնչաբաժինը սահմանվեց նվազագույն չափով:
- 3) Գաղթական բնակչությանը հողով ապահովելը ևս հողասակավ Հայաստանի համար խնդիր ստեղծեց:
- 4) Հայգյուղկոոպի կազմակերպումը սահմանափակեց անհատական գյուղացիական տնտեսությունների հողաբաժինը:

6. ՊԱՏՄԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղարի պաշտոնում Սուրեն Հարությունյանի նշանակումը
- բ. «Ղարաբաղ» կոմիտեի ստեղծումը
- գ. «Ադրբեջանական ԽՍՀ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի սոցիալ-տնտեսական զարգացումը 1988-1995 թթ. արագացնելու միջոցառումների մասին» որոշման ընդունումը
- դ. ԱՄԿ խորհրդի ձևավորումը
- ե. Յակով Զարոբյանի ընտրվելը ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղարի պաշտոնում
- զ. «Փարոս» թերթի գաղտնի հրատարակումը
- է. Եռագույնի ճանաչումը Հայաստանի Հանրապետության պետական դրոշ
- ը. Եռաստիճան դատական համակարգի ներդրումը ՀՀ-ում
- թ. Միխայիլ Գորբաչովի հրապարակած դիմումը ԽՍՀՄ-ի նախագահի լիազորությունները կամավոր վայր դնելու մասին
- ժ. «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին» փաստաթղթի ընդունումը

- 1) ե, գ, դ, բ, ա, գ, է, ժ, թ, ը
- 2) ե, դ, գ, բ, գ, ա, ժ, է, թ, ը
- 3) ե, գ, դ, բ, գ, ա, ժ, է, թ, ը
- 4) ե, դ, գ, բ, գ, ա, ժ, թ, է, ը

2. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի տնօրեն Ներսիկ Ստեփանյանի ձերբակալությունը
- բ. Սահակ Տեր-Գաբրիելյանի մահը
- գ. Հայոց համազգային շարժման առաջին համագումարի հրավիրումը
- դ. հայրենադարձների առաջին խմբի «Տրանսիլվանիա» շոգենավով Բեյրութից դուրս գալը և ժամանումը Բաթում
- ե. «Կոլցո» (Օղակ) գործողության իրականացումը
- զ. Սումգաիթյան ոճրագործության իրականացումը
- է. դաշնակցության գործունեության կասեցումը ՀՀ-ում
- ը. ՀՀ նախագահական չորրորդ ընտրությունների անցկացումը

- 1) ա, բ, գ, դ, ե, գ, է, ը
- 2) ա, բ, դ, գ, գ, ե, է, ը
- 3) բ, ա, դ, գ, գ, է, ե, ը
- 4) բ, ա, գ, դ, է, գ, ը, ե

3. Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. գյուղմիասահարկի շրջանառության մեջ մտնելը
- բ. 390-րդ դիվիզիայի կազմացումը
- գ. Հայաստանի կոմունիստական երիտասարդական միության (<ԿԵՄ) ստեղծումը
- դ. «Մեծ բեկման տարի» հոդվածի հրապարակումը
- ե. դաշնակցության երիտասարդական միության «ինքնավերացման» համագումարը
- զ. Երկրորդ համաշխարհային պատերազմում Կարապետ Սիմոնյանի՝ առաջին հայի՝ հերոսի կոչմանն արժանանալը
- է. Նելսոն Ստեփանյանի մահը

- 1) դ, ե, ա, գ, բ, զ, է
- 2) գ, ա, ե, դ, բ, զ, է
- 3) գ, ե, ա, դ, զ, է, բ
- 4) գ, ա, ե, դ, զ, բ, է

4. Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. Մայիսյան ապստամբությունը
- բ. անկախ և միացյալ Հայաստանի հռչակումը
- գ. Հայկական բարեգործական ընդհանուր միության (<ԲԸՄ) հիմնադրումը
- դ. 89-րդ հրաձգային դիվիզիայի կազմացումը
- ե. Խաչատուր Ամիրջանյանի, Խաչիկ Սաֆարյանի, Վիգեն Բաբայանի, Մերուժան Հովհաննիսյանի, Գրիգոր Եղյանի, Կարապետ Քիրամիջյանի, Էդուարդ Կակոսյանի ազատագրկման դատապարտվելը
- զ. 409-րդ հրաձգային դիվիզիայի կազմացումը
- է. կաթողիկոս Խորեն Մուրադբեգյանի մահը
- ը. «Երեքի» խմբակի ստեղծումը
- թ. Քելբաջարի շրջանի հյուսիսային մասի և Օմարի լեռնանցքի ազատագրումը
- ժ. Հորադիզի շրջանի ազատագրումը

- 1) գ, բ, ա, ը, է, զ, դ, ժ, ե, թ
- 2) ա, գ, բ, ը, է, զ, դ, թ, ժ, ե
- 3) գ, բ, ա, ը, է, զ, դ, ե, ժ, թ
- 4) գ, բ, ա, ը, է, դ, ե, զ, ժ, թ

5. Պատմական գործիչներին դասավորել ըստ գործունեության հաջորդականության.

- ա. Աղասի Խանջյան
- բ. Հովսեփ Օրբելի
- գ. Ռոբերտ Քոչարյան
- դ. Հակոբ Գյուրջյան
- ե. Սուրեն Թովմասյան
- զ. Հայկազ Խաչատրյան
- է. Համբարձում Գալստյան
- թ. Սուրեն Հարությունյան
- ժ. Ասքանազ Մռավյան

- 1) ա, ժ, դ, ե, բ, է, զ, գ, թ
- 2) ա, ժ, բ, ե, դ, է, թ, զ, գ
- 3) ժ, ա, բ, ե, դ, զ, է, թ, գ
- 4) ժ, ա, բ, դ, ե, զ, է, թ, գ

6. Պատմական գործիչներին դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- | | |
|---------------------|-----------------------|
| ա. Սիմոն Աշխբաթյան | դ. Ասքանազ Կարապետյան |
| բ. Սարգիս Ճեպեճյան | ե. Հայկազ Խաչատրյան |
| գ. Ներսիկ Ստեփանյան | զ. Վազգեն Մանուկյան |

- | | |
|---------------------|---------------------|
| 1) գ, բ, ա, դ, ե, զ | 3) բ, գ, դ, ա, ե, զ |
| 2) բ, գ, դ, ե, ա, զ | 4) ա, գ, ե, դ, բ, զ |

7. Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. Լոնդոնի կոնֆերանսի հրավիրումը
- բ. Հայաստանի կերպարվեստի թանգարանի (Հայաստանի ազգային պատկերասրահ) ստեղծումը
- գ. Ալեքսանդրապոլի պայմանագրի կնքումը
- դ. Հնչակյան կուսակցության գործունեության դադարեցումը ԽՍՀՄ-ի տարածքում
- ե. գյուղմիասնարկը շրջանառության մեջ դնելը
- զ. ՀԿ(Բ)Կ կենտկոմի առաջին քարտուղար Աղասի Խանջյանի սպանությունը
- է. Խորեն Մուրադբեգյանին խեղդամահ անելը
- ը. Գևորգ Ե Սուրենյանցի մահը
- թ. Հայաստանի ժողովրդի նախկին նախագահ Սահակ Տեր-Գաբրիելյանին երրորդ հարկի լուսամուտից ցած նետելը
- ժ. Ս. Էջմիածնի Գերագույն հոգևոր խորհրդի դիմումը բոլոր թեմերին՝ դատապարտելով «Նոր եկեղեցի» կազմակերպության պառակտիչ գործունեությունը:
- ի. Արմենակ Խանփերյանցի գնդակահարությունը

- | | |
|------------------------------------|------------------------------------|
| 1) ա, գ, ե, դ, ժ, ը, ի, զ, թ, բ, է | 3) գ, ա, ե, դ, ժ, ը, բ, զ, թ, է, ի |
| 2) գ, ա, ե, դ, ժ, ը, ի, զ, թ, է, բ | 4) գ, ա, դ, ե, ը, ի, ժ, գ, թ, բ, է |

8. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. Անդրկովկասյան Սեյմի լուծարումը
- բ. Անդրկովկասյան հատուկ կոմիտեի ստեղծումը
- գ. Անդրկովկասյան դաշնային հանրապետության հռչակումը
- դ. Անդրկովկասյան կոմիսարիատի ստեղծումը
- ե. Արևելակովկասյան մուսուլմանական հանրապետության հռչակումը
- զ. Վրաստանի դեմոկրատական հանրապետության հռչակումը
- է. Հայաստանի առաջին հանրապետության հռչակումը

- | | |
|------------------------|------------------------|
| 1) բ, դ, գ, ա, է, ե, զ | 3) գ, բ, դ, է, ա, զ, ե |
| 2) բ, դ, գ, ա, զ, ե, է | 4) դ, բ, գ, ա, ե, զ, է |

9. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. Հայաստանի անկախության մասին կոչի հրապարակումը Թիֆլիսի մամուլում
- բ. Խալիլ բեյի կողմից Հայոց ազգային խորհուրդը ջճանաչելու մասին հայտարարությունը
- գ. Հայաստանի առաջին հանրապետության հռչակումը
- դ. Բաթումում բանակցությունների վերսկսումը
- ե. Բաթումի պայմանագրի ստորագրումը

- 1) բ, դ, գ, ե, ա
- 2) դ, ա, բ, ե, գ
- 3) դ, բ, գ, ա, ե
- 4) բ, դ, ա, գ, ե

10. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. Անդրկովկասյան կոմիսարիատի ստեղծումը
- բ. Արևելակովկասյան մուսուլմանական հանրապետության հռչակումը
- գ. նէպի քաղաքականության սկիզբը Հայաստանում
- դ. գյուղմիասնարկի կիրառումը
- ե. ռազմական կոմունիզմի քաղաքականության կիրառումը Հայաստանում
- զ. Անդրկովկասյան Սեյմի ստեղծումը
- է. Հայրենիքի փրկության կոմիտեի ստեղծումը
- ը. Անդրկովկասի ժողովրդավարական Դաշնային Հանրապետության հռչակումը
- թ. Հայաստանի խորհրդայնացումը

- 1) գ, ա, ը, թ, գ, բ, դ, ե, է
- 2) ա, գ, ը, բ, թ, ե, է, գ
- 3) բ, գ, ա, թ, դ, ը, ե, գ, է
- 4) ա, ը, գ, բ, է, գ, թ, դ, ե

11. Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. լեզվի մասին օրենքի ընդունումը Հայաստանի առաջին հանրապետությունում
- բ. Անդրկովկասյան Սեյմի լուծարումը
- գ. Արցախահայրության առաջին համագումարի հրավիրումը
- դ. Հայաստանի կենտրոնական ազգային խորհրդի ժամանումը Թիֆլիսից Երևան
- ե. «Միացյալ անկախ Հայաստանի հռչակագրի ակտ»-ի ստորագրումը
- զ. Հայաստանի և Վրաստանի միջև կարճատև պատերազմի ավարտը
- է. Ղարաբաղ-զանգեզուրյան մարզային խորհրդի ստեղծումը
- ը. Գ. Նժդեհի ժամանումը Զանգեզուր՝ ինքնապաշտպանությունն ամրապնդելու նպատակով
- թ. «Աշոտ Երկաթ» ռազմանավի գործարկումը Սևանա լճի վրա
- ժ. Զանգեզուրից Դրոյի և Նժդեհի ջոկատների մուտքը Արցախ

- 1) ա, գ, գ, է, ժ, թ, ը, բ, դ, ե
- 2) բ, դ, գ, գ, է, ե, ը, թ, ա, ժ
- 3) բ, դ, գ, գ, է, ե, ը, ա, ժ, թ
- 4) բ, դ, գ, գ, է, ե, ա, ժ, թ, ը

12. Գտնել այն իրադարձությունը, որ տեղի է ունեցել վերջինը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.

- ա. Հայաստանի ժողովրդական կուսակցության երկրորդ համագումարը
- բ. Հայաստանի խորհրդի անդրանիկ նիստը
- գ. Հայաստանի Հանրապետության վարչական բաժանումը 4 նահանգների
- դ. «Լոռու չեզոք գոտի» ժամանակավորապես վրացական զորք մտցնելու մասին համաձայնագրի ստորագրումը
- ե. Հայոց ազգային խորհրդի կողմից Հ. Քաջազնունու ընտրվելը վարչապետ
- զ. Արցախահայության 9–րդ համագումարը
- է. Սևրի պայմանագրի ստորագրումը
- ը. Անկարայում ֆրանս–թուրքական պայմանագրի ստորագրումը

- 1) դ 2) ը 3) գ 4) է

13. Գտնել այն իրադարձությունը, որն ըստ ժամանակագրական հաջորդականության երկրորդն է.

- ա. Մայիսյան ապստամբության սկիզբը
- բ. Կարսի պայմանագրի ստորագրումը
- գ. պետական լեզվին չտիրապետող պաշտոնյաներին աշխատանքից ազատելու մասին Հայաստանի առաջին հանրապետության օրենքի ընդունումը
- դ. «Միացյալ Հայաստանի անկախության հռչակագրի ակտի» հռչակումը
- ե. ՀԽՍՀ խորհուրդների առաջին ընտրությունները

- 1) գ 2) դ 3) ա 4) բ

14. Իրադարձություններից ո՞րն է խախտում դեպքերի ժամանակագրական հաջորդականությունը.

- 1) Արևելքի ժողովուրդների առաջին համագումարը
- 2) Հայաստանի խորհրդայնացումը
- 3) Փետրվարյան ապստամբության սկիզբը
- 4) Ալեքսանդրապոլի պայմանագրի ստորագրումը
- 5) Հայիեդկոմի «Պարենային մթերքների և այլ նյութերի հայտնաբերման մասին» հրամանի հրապարակումը
- 6) ԽՍՀՄ կազմավորումը

15. Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. վրացական ռազմակալման դեմ ապստամբության սկիզբը Լոռիում
- բ. Կարմիր բանակի զորամասերի մուտքը Թիֆլիս
- գ. դիվանագիտական առաքելությամբ 11–րդ Կարմիր բանակի և ՀՍԽՀ–ի ներկայացուցիչների միացյալ պատվիրակության ժամանումը Գորիս

- դ. քեմալական զորքերի դուրսբերումը Ալեքսանդրապոլից
- ե. Ախալքալաքի գավառը ՀՍԽՀ-ին միացնելու վերաբերյալ Ա. Բեկզադյանի առաջարկի ներկայացումը հանձնաժողովի նիստում
- զ. Մոսկվայում թուրքական պատվիրակության հանդիպումը Ստալինին
- է. Մոսկվայի ռուս-թուրքական 2-րդ կոնֆերանսի բացումը
- ը. Փետրվարյան ապստամբության սկիզբը
- թ. Հայ-վրացական սահմանազատման մասին վերջնական համաձայնագրի ստորագրումը

- 1) ա, գ, ե, բ, դ, զ, թ, է, ը
- 2) գ, ա, ը, զ, բ, է, դ, ե, թ

- 3) գ, ա, զ, ը, բ, է, թ, ե, դ
- 4) գ, ը, զ, ա, բ, ե, թ, դ, է

16. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. Նժդեհի զորաջոկատի հաղթանակը Որոտանի կիրճում Նուրի փաշայի զորքի նկատմամբ
- բ. Հայաստանի խորհրդի անդրանիկ նիստի բացումը
- գ. ռուս-թուրքական «Սրտագին և անկեղծ բարեկամության» պայմանագրի նախաստորագրումը
- դ. Կիլիկիայի ինքնավարության հռչակումը Ադանայում՝ Ֆրանսիայի հովանավորության ներքո
- ե. Փարիզում հայկական երկու պատվիրակության կողմից հայկական պահանջների համատեղ հռչակագրի ստորագրումը
- զ. Ջեյմս Հարբորդի գլխավորած պատվիրակության գործուղումը Փոքր Ասիա և Անդրկովկաս
- է. Սևրի պայմանագրի ստորագրումը
- ը. թուրք-հայկական պատերազմի ավարտը
- թ. Ռուսաստանի լիազոր ներկայացուցչի՝ Բորիս Լեգրանի պատվիրակության ժամանումը Երևան

- 1) ե, ա, բ, դ, ը, է, գ, թ, զ
- 2) ե, ա, գ, բ, դ, է, ը, զ, թ

- 3) բ, ե, գ, ա, դ, է, գ, թ, ը
- 4) բ, ե, ա, գ, ը, է, թ, գ, դ

17. Դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. Այնթապի ինքնապաշտպանության սկիզբը Ներսես Թավուզճյանի գլխավորությամբ
- բ. Հայաստանի Հանրապետության փաստացի ճանաչումը ԱՄՆ-ի կողմից
- գ. Նժդեհի վերջնագրի ներկայացումը Կարմիր բանակի հրամանատարությանը՝ Չանգեզուրից հեռանալու վերաբերյալ
- դ. Արարայի ճակատամարտը
- ե. Ադրբեջանի խորհրդայնացումը
- զ. Ա. Խատիսյանի կառավարության հրաժարականը
- է. ՀՀ դիվանագիտական առաքելության հիմնումը Վրաստանի Հանրապետությունում

- ը. թուրքական գերակշիռ ուժերի ներխուժումը Բաքու
- թ. Սերգեյ Մելիք–Յուլյանի կողմից գեներալ կոմիսարի պաշտոնի ստանձնումը
- ժ. Արևմտահայերի երկրորդ համագումարի հրավիրումը Երևանում

- 1) է, ը, դ, թ, ա, Ե, գ, ք, ժ
- 2) է, ը, դ, ժ, թ, ա, ք, Ե, գ
- 3) դ, է, ը, ժ, թ, ա, գ, Ե, ք
- 4) ը, դ, ա, թ, ժ, ք, Ե, է, գ

18. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. Վրաստանի ամբողջ տարածքում խորհրդային կարգերի հաստատումը
- բ. Լեռնահայաստանի վերանվանումը Հայաստանի Հանրապետության
- գ. ՀՅԴ 9–րդ ընդհանուր ժողովի գումարումը
- դ. թուրքական զորքերի դեպի Բաքու ռազմարշավի սկիզբը
- ե. Շուշիի հայության կոտորածները Խոսրով բեկ Սուլթանովի հրամանատարությամբ
- զ. Հայաստանի խորհրդարանի պատգամավորներ Արշակ Շիրինյանի և Վահան Խորենու գնդակահարությունը
- է. Շարուր–Նախիջևանը Հայաստանի Հանրապետությանը հանձնելու մասին հրամանի ստորագրումը
- ը. հակախորհրդային ապստամբությունը Կապանում և Սիսիանում Պողոս Տեր–Դավթյանի գլխավորությամբ
- թ. Սան Ռեմոյի խորհրդաժողովի սկիզբը

- 1) ա, դ, Ե, է, գ, ը, թ, գ, ք
- 2) դ, է, գ, Ե, թ, գ, ը, ք, ա
- 3) ա, դ, Ե, գ, ը, է, գ, ք, թ
- 4) դ, է, գ, Ե, թ, գ, ը, ա, ք

19. Թվարկված իրադարձություններից որն է տեղի ունեցել առաջինը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.

- ա. Ստալինի 50–ամյակի նշումը, անձի պաշտամունքի բացահայտ դառնալը
- բ. մարքսիզմ–լենինիզմի ինստիտուտի տնօրեն Ներսիս Ստեփանյանի ձերբակալությունը
- գ. Տրոցկիստական ընդդիմության հանդես գալը
- դ. Ադասի Խանջյանի սպանությունը Թիֆլիսում
- ե. Էջմիածնում կաթողիկոս Խորեն Մուրադբեգյանի խեղդամահ արվելը

- 1) ա
- 2) դ
- 3) գ
- 4) Ե

20. Դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. Լենինականի հէկի գործարկումը
- բ. Ձերժինսկու անվան մեխանիկական գործարանի կառուցումը
- գ. Երևանի կաուչուկի գործարանի շահագործման հանձնվելը
- դ. գյուղմիասնարկի շրջանառության մեջ մտնելը
- ե. Խորեն Մուրադբեգյանի ընտրվելը Ամենայն հայոց կաթողիկոս
- զ. Հայաստանում գյուղացիության ճնշող մեծամասնության անդամագրվելը կուտնտեսություններին

- է. Սովի պատճառով և ապրուստի միջոցներ հայթայթելու համար Սևանա լճի ավազանից հազարավոր ընտանիքների հեռանալը
- ը. Հնչակյան կուսակցության գործունեության դադարեցումը ԽՍՀՄ տարածքում
- թ. Հայաստանում գավառային բաժանման վերացումը և շրջանների ստեղծումը
- ժ. Հայաստանի կոմունիստական երիտասարդական միության ստեղծումը

- ա) ժ, դ, ը, ա, բ, թ, ե, է, գ, գ գ) ժ, դ, ե, ը, ա, բ, գ, է, թ, գ
- բ) է, դ, ը, ե, ա, գ, բ, գ, թ, ժ դ) ա, ը, թ, է, բ, գ, ժ, ե, դ, գ

21. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. Խորհրդա-գերմանական չհարձակման պայմանագրի կնքումը
- բ. ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի հիմնադրումը
- գ. 390-րդ դիվիզիայի կազմացումը
- դ. հատուկ որոշումով Հայոց եկեղեցուն Մեծ եղեռնի օրը նշելն արգելելը
- ե. Նվեր Սաֆարյանի նշանակվելը Թամանյան դիվիզիայի հրամանատար
- զ. Էջմիածնի վանքը փակելու վերաբերյալ ՀԿ(Բ)Կ կենտկոմի որոշման ընդունումը
- է. ավիացիայի մարշալ Սերգեյ Խուդյակովի գնդակահարությունը
- ը. ԽՍՀՄ կառավարության կողմից Խորհրդա-թուրքական բարեկամության և չեզոքության պայմանագրի չեղյալ հայտարարելը

- 1) դ, գ, ե, ա, գ, բ, է, ը 3) դ, գ, ա, գ, ե, բ, ը, է
- 2) գ, բ, դ, ե, գ, ը, է, ա 4) ա, բ, գ, ե, ը, է, գ, դ

22. Թվարկված իրադարձություններից որն է տեղի ունեցել վեցերորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.

- ա. Խորհրդա-գերմանական չհարձակման պայմանագրի կնքումը
- բ. ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի հիմնադրումը
- գ. 390-րդ դիվիզիայի կազմացումը
- դ. հատուկ որոշումով եկեղեցուն արգելվեց նշել Հայոց եղեռնի օրը
- ե. Նվեր Սաֆարյանի նշանակվելը Թամանյան դիվիզիայի հրամանատար
- զ. Էջմիածնի վանքը փակելու վերաբերյալ ՀԿ(Բ)Կ կենտկոմի որոշման ընդունումը
- է. Ավիացիայի մարշալ Սերգեյ Խուդյակովի գնդակահարությունը
- ը. ԽՍՀՄ կառավարության կողմից Խորհրդա-թուրքական բարեկամության և չեզոքության պայմանագրի չեղյալ հայտարարելը

- 1) է 2) դ 3) գ 4) բ

23. Դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. Ստալինի մահը
- բ. Ազգային միացյալ կուսակցության ստեղծումը Հայաստանում
- գ. ԽՍՀՄ կառավարության պաշտոնական հայտարարությունը Թուրքիայից տարածքային պահանջներից հրաժարվելու մասին
- դ. հայկական տարածքների հարցի քննարկումը մեծ տերությունների Պոտսդամի կոնֆերանսում

- ե. «Փարոս» թերթի գաղտնի հրատարակումը
- զ. Ազգային միացյալ կուսակցության խորհրդի ձևավորումը՝ Պ. Հայրիկյանի ղեկավարությամբ
- է. վերակառուցման քաղաքականության սկիզբը
- ը. ԽՄԿԿ XX համագումարի բացումը
- թ. Յակով Զարությանի ընտրվելը ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար

- 1) ա, գ, դ, բ, ե, զ, է, թ, ը
- 2) դ, ա, գ, ը, թ, բ, ե, զ, է
- 3) դ, ա, ը, թ, գ, բ, ե, է, գ
- 4) գ, դ, ա, ը, բ, է, թ, գ, ե

24. Իրադարձություններից որն է տեղի ունեցել երրորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.

- ա. Մոսկվայում ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նիստը Լեոնային Ղարաբաղի հարցի վերաբերյալ
- բ. Սպիտակի աղետալի երկրաշարժը
- գ. Հատուկ կառավարման կոմիտեի ստեղծումը ԼՂԻՄ-ում
- դ. հայ բնակչության կոտորածը Սումգաիթում
- ե. «Ղարաբաղ» կոմիտեի ստեղծումը
- զ. Կ. Դեմիրճյանի ազատվելը ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղարի պաշտոնից
- է. Լեոնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի սոցիալ-տնտեսական զարգացումը 1988-1995 թթ. արագացնելու միջոցառումների մասին որոշման ընդունումը
- ը. Մ. Գորբաչովի դիմումը «Ադրբեջանի և Հայաստանի աշխատավորներին, ժողովուրդներին»
- թ. պարետային ժամի հայտարարումը Երևանում

- 1) ա
- 2) դ
- 3) ե
- 4) թ

25. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. ՀՀ Սահմանադրության փոփոխված տարբերակի ընդունումը
- բ. Երևանի արհեստական կաուչուկի գործարանի կառուցումը
- գ. Լևոն Տեր-Պետրոսյանի հրաժարականը
- դ. «Անուշ» օպերայի բեմադրումը Ալեքսանդրապոլում
- ե. Օլեգ Եսայանի նշանակումը ԼՂՀ վարչապետ
- զ. Ա. Թամանյանի կողմից Երևանի գլխավոր հատակագծի կազմումը

- 1) դ, գ, բ, ե, գ, ա
- 2) գ, բ, դ, ա, ե, գ
- 3) դ, գ, բ, ա, ե, գ
- 4) գ, դ, գ, ա, բ, ե

32. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հերթականությամբ.

- ա. ՀԽՍՀ նախարարների խորհրդին առընթեր ներգաղթի կոմիտեի գործունեության դադարեցումը
- բ. Լոզանի կոնֆերանսը
- գ. Քելթաջարի հյուսիսային մասի և Օմարի բարձրադիր լեռնանցքի ազատագրումը
- դ. ԼՂՀ ողջ տարածքում ռազմական դրության հայտարարումը
- ե. «Հարսանիք լեռներում» գործողության իրագործման սկիզբը
- զ. Ադրբեջանի Գերագույն խորհրդի կողմից անկախության վերականգնման մասին հռչակագրի ընդունումը
- է. Կրկժանի ազատագրումը
- ը. ԼՂՀ անկախության հանրաքվեի անցկացումը
- թ. ՀՀ նախագահական հինգերորդ ընտրությունների անցկացումը
- ժ. Եվրախորհրդարանի կողմից Հայոց ցեղասպանության դատապարտումը

- 1) բ, ժ, ա, ը, գ, գ, դ, ե, է, թ
- 2) բ, ա, ը, ժ, ե, է, դ, գ, գ, թ
- 3) բ, ա, ժ, գ, ը, է, ե, դ, գ, թ
- 4) բ, գ, ա, ժ, ը, դ, ե, գ, է, թ

33. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. Օմարի բարձրադիր լեռնանցքի ազատագրումը
- բ. Հորադիզի ազատագրումը
- գ. Քարինտակի մարտերը
- դ. Քելթաջարի ազատագրումը
- ե. Մարտակերտի ազատագրումը
- զ. Ֆիզուլի, Ջաբրահիլ և Կուբաթլի շրջանների ազատագրումը
- է. Ադդամի մոտ ադրբեջանական ուժերի պարտությունը
- ը. Էջմիածնում հիմնված մշակութային-պատմական ինստիտուտի վերափոխումը Գիտության և արվեստի ինստիտուտի
- թ. Թաթուլ Ալթունյանի գլխավորությամբ հայկական ժողովրդական երգի-պարի պետական անսամբլի ստեղծումը
- ժ. աստղաֆիզիկոս, ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի ընտրվելը Հայաստանի գիտությունների ակադեմիայի նախագահ

- 1) ը, թ, ժ, գ, դ, ե, է, գ, բ, ա
- 2) ը, ժ, թ, է, գ, դ, գ, ե, բ, ա
- 3) ը, թ, դ, ե, է, գ, գ, բ, ժ, ա
- 4) ը, թ, ժ, դ, է, ե, գ, գ, բ, ա

34. Պատմական իրադարձությունները ներկայացնել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. Հայաստանի Հանրապետության նորընտիր խորհրդարանի բացումը
- բ. Հայաստանի խորհրդի անդրանիկ նիստի բացումը
- գ. Թիֆլիսում կազմավորված պետական իշխանության մարմինների ժամանելը Երևան
- դ. Հայաստանի խորհրդարանի (պառլամենտի) ընտրությունները

- 1) գ, բ, ա, դ
- 2) բ, գ, դ, ա
- 3) գ, բ, դ, ա
- 4) դ, ա, գ, բ

35. Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. Ախալքալաքի գավառի ամրագրումը Խորհրդային Վրաստանին
- բ. Ավ. Ահարոնյանի մեկնումը Թուրքիա՝ Բաթումի հաշտության պայմանների վերանայման նպատակով
- գ. Խորհրդային Ռուսաստանի զորքերի օգնությամբ Խորհրդային Ադրբեջանի՝ Լեռնային Ղարաբաղին տիրելը
- դ. Լոռու գավառի համար հայ-վրացական պատերազմը

- 1) ա, բ, գ, դ 2) բ, գ, դ, ա 3) գ, դ, բ, ա 4) բ, դ, գ, ա

36. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. Հայաստանի Հանրապետության փաստացի (դե ֆակտո) ճանաչումը ԱՄՆ-ի կողմից
- բ. Սայքս-Պիկոյի պայմանագրի կնքումը
- գ. հայկական պատվիրակությունների կողմից Փարիզի խաղաղության կոնֆերանսին միասնական պահանջներ ներկայացնելը
- դ. քեմալական զորքերի կողմից Այնթապի պաշարման սկիզբը
- ե. հայ ազգային-քաղաքական ուժերի կողմից Կիլիկիան Ֆրանսիայի հովանավորության ներքո ինքնավար հանրապետություն հռչակելը
- զ. Կիլիկիայում անգլիական զորքին ֆրանսիականով փոխարինումը
- է. գեներալ Ջեյմս Հարբորդի ղեկավարությամբ ԱՄՆ պատվիրակության ժամանումը Հայաստան
- ը. Փարիզի խաղաղության կոնֆերանսի աշխատանքների սկիզբը
- թ. Պողոս Նուբար փաշայի գլխավորությամբ Հայոց ազգային պատվիրակության ստեղծումը
- ժ. Սևրի պայմանագրի կնքումը

- 1) թ, բ, ը, գ, է, գ, դ, ա, ե, ժ 3) բ, թ, ը, է, գ, դ, գ, ե, ա, ժ
2) բ, գ, ը, է, թ, գ, դ, ա, ժ, ե 4) թ, ը, բ, է, գ, գ, ա, դ, ժ, ե

37. Իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել չորրորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.

- ա. Սայքս-Պիկոյի պայմանագրի կնքումը
- բ. Հալեպի հաշտությունը գեյթունցի ապստամբների և թուրքական կառավարության միջև
- գ. գեյթունցիների ապստամբությունը Մ. Յաղուբյանի ղեկավարությամբ
- դ. Անկարայում ֆրանս-թուրքական պայմանագրի կնքումը
- ե. Կիլիկիայի հայկական ինքնավարության հռչակումը
- զ. Անկարայում ֆրանս-թուրքական զինադադարը
- է. քեմալականների կողմից Այնթապի պաշարման սկիզբը
- ը. քեմալականների ներխուժումը Մարաշ

- 1) գ 2) ը 3) դ 4) ա

38. Գտնել այն իրադարձությունները, որոնք խախտում են 1920 թ. տեղի ունեցած դեպքերի ժամանակագրական հաջորդականությունը.

- 1) թուրք-հայկական պատերազմի սկիզբը
- 2) Կաղզվանի և Սարիղամիշի գրավումը թուրքերի կողմից
- 3) Արևելքի ժողովուրդների առաջին համագումարը
- 4) Կարսի գրավումը թուրքերի կողմից
- 5) թուրք-հայկական զինադադարի կնքումը
- 6) Ալեքսանդրապոլում Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի միջև բանակցությունների սկիզբը
- 7) Ալեքսանդրապոլի պայմանագրի ստորագրումը
- 8) Ս. Կասյանի գլխավորած ՌՀԿ-ի մուտքը Ադրբեջանից Հայաստան
- 9) Երևանի հայ-ռուսական համաձայնագրի կնքումը

39. Գտնել այն երկու իրադարձությունները, որոնք խախտում են ստորև բերված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.

- 1) Հայաստանի Հանրապետության պատվիրակության մեկնելը Մոսկվա՝ Լ. Շանթի գլխավորությամբ
- 2) Թիֆլիսում Հայաստանի և Ռուսաստանի միջև համաձայնագրի կնքումը
- 3) ՌԿ(Բ)Կ կենտկոմի քաղքյուրոյի որոշման ընդունումը՝ Հայաստանը խորհրդայնացնելու համար վճռական գործողությունների դիմելու մասին
- 4) հայ-ռուսական բանակցությունների «Եզրափակիչ որոշման արձանագրության» ստորագրումը
- 5) Հայաստանի ռազմաիեղափոխական կոմիտեի մուտքը Հայաստան և նրա կողմից երկրում խորհրդային Սոցիալիստական Հանրապետության հռչակումը
- 6) Կաղզվանի և Սարիղամիշի գրավումը թուրքերի կողմից
- 7) Ալեքսանդրապոլի գրավումը թուրքերի կողմից
- 8) Երևանի հայ-ռուսական համաձայնագրի կնքումը
- 9) Ալեքսանդրապոլի պայմանագրի ստորագրումը

40. Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. Ալեքսանդրապոլի պայմանագրի ստորագրումը
բ. «Հայաստանը խորհրդային սոցիալիստական հանրապետություն հայտարարելու մասին» հրամանի ստորագրումը
գ. Արտակարգ հանձնաժողովի ստեղծումը Հայաստանում
դ. Հայիեղկոմի «Պարենային մթերքների և այլ նյութերի հայտնաբերման մասին» հրամանի ստորագրումը

1) բ, ա, դ, գ

2) գ, դ, բ, ա

3) ա, բ, դ, գ

4) բ, ա, գ, դ

41. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. Ա. Մյասնիկյանի և Ս. Լուկաշինի ժամանումը Հայաստան
- բ. ԱԽԴԱՀ Սահմանադրության ընդունումը Անդրկովկասի խորհուրդների առաջին համագումարում
- գ. ԽՍՀՄ կազմավորման մասին Հռչակագրի և Միութենական պայմանագրի ստորագրումը
- դ. ՍԽԱՀԴՄ-ի ստեղծումը
- ե. ՀՍԽՀ առաջին Սահմանադրության ընդունումը
- զ. Վ. Լենինի առաջարկի հիման վրա ԽՍՀՄ կազմավորման վերաբերյալ նախագծի ընդունումը

- 1) ա, ե, դ, գ, բ, գ
- 2) ե, ա, բ, դ, գ, գ
- 3) բ, ա, ե, գ, դ, գ
- 4) ա, դ, ե, գ, գ, բ

42. Գտնել այն իրադարձությունը, որը խախտում է դեպքերի ժամանակագրական ճիշտ հաջորդականությունը.

- 1) ՀՍԽՀ առաջին Սահմանադրության ընդունումը
- 2) ԱԽԱՀԴՄ-ի ստեղծումը
- 3) ԱԽԴԱՀ-ի ստեղծումը
- 4) Վ. Լենինի նամակ-հրահանգը Անդրկովկասի «կոմունիստ ընկերներին»
- 5) ԽՍՀՄ կազմավորումը
- 6) Անդրկովկասի խորհրդային դաշնության լուծարումը

43. Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. Անդրկովկասի երեք հանրապետությունների կենտգործկոմների ներկայացուցիչների լիազոր կոնֆերանսը Թիֆլիսում
- բ. Հայաստանի խորհուրդների առաջին համագումարը
- գ. Անդրկովկասի խորհուրդների առաջին համագումարը
- դ. ԽՍՀՄ խորհուրդների առաջին համագումարը

- 1) բ, ա, գ, դ
- 2) բ, գ, դ, ա
- 3) ա, դ, գ, բ
- 4) դ, ա, բ, գ

44. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. Մոսկվայի պայմանագրի ստորագրումից հետո թուրքական զորքերի հեռանալը Ալեքսանդրապոլից
- բ. Հայիեղկոմի դեկրետը Փետրվարյան ապստամբության բոլոր մասնակիցներին համաներում շնորհելու մասին
- գ. Մոսկվայի ռուս-թուրքական երկրորդ կոնֆերանսից հետո հայկական պատվիրակության բողոք-հուշագրի ներկայացումը Վ. Լենինին՝ հայկական շահերի անտեսման կապակցությամբ

դ. Հայիեղկումի վերակազմավորվելը ՀՍԽՀ Ժողկոմխորհի

ե. Փետրվարյան ապստամբության ժամանակ Կարմիր բանակի զորքերի կողմից Երևան մտնելը

1) ե, գ, բ, ա, դ

3) ա, բ, ե, դ, գ

2) ե, գ, ա, բ, դ

4) բ, ա, ե, դ, գ

45. Ո՞ր մշակութային իրադարձություններն են խախտում ստորև բերված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.

ա. պատմա-մշակութային ինստիտուտի հիմնումը Էջմիածնում

բ. հայկական առաջին պետական դրամատիկական թատրոնի բացումը

գ. Ալ. Թամանյանի Հայաստան գալը

դ. «Նամուս» համր ֆիլմի ցուցադրումը

ե. ռուսական դրամատիկական թատրոնի հիմնադրումը

զ. պատանի հանդիսատեսի թատրոնի բացումը Երևանում

է. Հայաստանի խորհրդային կերպարվեստագետների միության ստեղծումը

թ. Հովսեփ Օրբելու՝ ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղի նախագահ նշանակվելը

ր. Հայաստանի կերպարվեստի թանգարանի հիմնումը

1) դ, ե

2) ե, թ

3) է, թ

4) գ, ը

46. Գտնել այն իրադարձությունը, որը խախտում է դեպքերի ժամանակագրական հաջորդականությունը.

1) Արևմտահայերի երկրորդ համագումարը Երևանում

2) ՀՅԴ-ի 9-րդ ընդհանուր ժողովը

3) Հայաստանի առաջին հանրապետության զինանշանի մասին օրենքի հաստատումը

4) քեմալականների ներխուժումը հայաբնակ Մարաշ

5) Նուրի փաշայի զորքերի պարտությունը Գարեգին Նժդեհի ուժերի կողմից

6) Հայաստանի խորհրդարանի պատգամավորներ Ա. Շիրինյանի և Վ. Խորենու գնդակահարումը բոլշևիկների կողմից

47. Իրադարձությունների տրված շարքում ո՞րն է տեղի ունեցել հինգերորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.

ա. Խոսրով բեկ Սուլթանովի նշանակվելը Ղարաբաղ-Չանգեզուրի գեներալ-նահանգապետ

բ. հայ ժողովրդական կուսակցության երկրորդ համագումարի հրավիրումը

գ. անգլիացի գեներալ Դևիսի և Դրոյի կողմից Նախիջևանի՝ Հայաստանին պատկանելու մասին իրամանի ստորագրումը

դ. Լևոն Շանթի կողմից ստորագրված պետական լեզվի մասին օրենքի ընդունումը

ե. Հայաստանի առաջին հանրապետության խորհրդարանի ընտրությունները

զ. հայկական համատեղ պահանջների հուշագրի ներկայացումը Փարիզի խորհրդաժողովին

1) ե

2) գ

3) բ

4) դ

48. Իրադարձությունների տրված շարքում ճիշտ է տեղի ունեցել երրորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.

- ա. Սան Ռեմոյի խորհրդաժողովը
- բ. Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների առաջին կոնֆերանսը
- գ. Գորիսի ազատագրումը բոլշևիկներից Գարեգին Նժդեհի գլխավորությամբ
- դ. քեմալականների կողմից Հաճնի պաշարման սկիզբը
- ե. խորհրդա-քեմալական «Սրտագին և անկեղծ բարեկամության» պայմանագրի նախաստորագրումը
- զ. Հայիեղկոմի «Պարենային մթերքների և այլ նյութերի հայտնաբերման մասին» հրամանի հրապարակելը

- 1) գ 2) ա 3) գ 4) դ

49. Գտնել այն երկու իրադարձությունը, որոնք խախտում են ստորև բերված շարքի ժամանակագրական ճիշտ հաջորդականությունը.

- 1) Անտանտի ներկայացուցիչների մասնակցությամբ հայ-վրացական հաշտության կոնֆերանսը
- 2) Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի կենտրոնականների ներկայացուցիչների լիազոր կոնֆերանսը Թիֆլիսում
- 3) ՌՄԴԽՀ կառավարության և ՀՀ ներկայացուցիչների միջև Թիֆլիսում համաձայնագրի ստորագրումը
- 4) Խորհրդա-քեմալական «Սրտագին և անկեղծ բարեկամության» պայմանագրի նախաստորագրումը
- 5) ՀՄԽՀ խորհուրդների առաջին ընտրությունները
- 6) «Ռուս-թուրքական բարեկամության և եղբայրության» պայմանագրի կնքումը
- 7) Հայաստանի ժողովրդային նախագահ Ա. Մյասնիկյանի և Պ. Միկիմանու կողմից հայ-վրացական սահմանազատման մասին վերջնական համաձայնագրի ստորագրումը

50. Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. ԼՂԻՄ-ում ազգաբնակչության լիազոր ներկայացուցիչների համագումարում Ազգային խորհրդի ստեղծումը
- բ. Ղարաբաղի ժողովրդական կառավարության ստեղծումը
- գ. «Հոչակագիր ԼՂՀ հոչակման մասին» որոշման ընդունումը
- դ. Խորհրդային Ադրբեջանի իշխանությունների կողմից Լեռնային Ղարաբաղին ինքնավար մարզի կարգավիճակ տրամադրելը
- ե. Ղարաբաղա-ադրբեջանական պատերազմի սանձազերծումը

- 1) դ, ա, բ, գ, ե 3) դ, ե, բ, գ, ա
2) բ, դ, ա, գ, ե 4) բ, դ, ա, ե, գ

51. Ո՞ր իրադարձությունն է խախտում տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.

- 1) Առաջին աշխարհամարտից հետո Փարիզում էսաղաղության խորհրդաժողովի սկսվելը
- 2) «Միացյալ Հայաստանի անկախության հռչակագրի» ակտի հռչակումը
- 3) Փարիզում ԱՄՆ–ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ճապոնիայի ղեկավարների նիստում Հայաստանի կառավարության փաստացի (դե ֆակտո) ճանաչումը
- 4) հայկական երկու պատվիրակությունների կողմից հայկական պահանջների համատեղ հուշագրի ստորագրումը
- 5) Սան Ռեմոյի խորհրդաժողովի հրավիրումը
- 6) ԱՄՆ–ի Սենատի կողմից Վ. Վիլսոնի՝ Հայաստանի մանդատը ստանձնելու առաջարկը մերժելու որոշման ընդունումը

52. Արցախյան պատերազմի շրջանի իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. Պաշտպանության պետական կոմիտեի ստեղծումը ԼՂՀ–ում՝ Ռ. Քոչարյանի գլխավորությամբ
- բ. Շուշիի ազատագրումը
- գ. Մարտակերտի ազատագրումը
- դ. Լաչինի հաղթական գործողությունները
- ե. զինադադարի հաստատումը
- զ. Քելբաջարի հյուսիսային մասի և Օմարի լեռնանցքի ազատագրումը

- | | |
|---------------------|---------------------|
| 1) դ, բ, գ, ա, ե, զ | 3) բ, դ, ա, գ, ե, զ |
| 2) գ, բ, դ, գ, ա, ե | 4) բ, ա, դ, գ, ե, գ |

53. Հայաստանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղարներին դասավորել ըստ նրանց գործունեության ժամանակագրական հաջորդականության.

- | | |
|----------------|---------------------|
| ա. Ամատունի | ե. Գ. Հարությունյան |
| բ. Ա. Խանջյան | գ. Ս. Հարությունյան |
| գ.Ս. Թովմասյան | է. Կ. Դեմիրճյան |
| դ. Յ. Զարոբյան | |

- | | |
|------------------------|------------------------|
| 1) ա, է, ե, գ, դ, գ, բ | 3) բ, ա, ե, գ, դ, է, գ |
| 2) ե, ա, գ, բ, դ, է, գ | 4) բ, ա, ե, գ, է, դ, գ |

54. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. «Հանրապետություն» քաղաքական միավորման ձևավորումը
- բ. ՀՀ դատական նոր համակարգի ձևավորումը
- գ. ՀՀ–ի վարչատարածքային բաժանումը

- դ. նախկին խորհրդային հանրապետությունների հայտարարությունները Անկախ պետությունների համագործակցություն ստեղծելու մասին
- ե. Հայաստանի անկախության մասին հռչակագրի ընդունումը
- զ. Պաշտպանության պետական կոմիտեի հիմքի վրա ՀՀ պաշտպանության նախարարության ստեղծումը

- 1) դ, ե, գ, ա, գ, բ
- 2) ե, դ, գ, ա, գ, բ
- 3) գ, բ, ա, գ, դ, ե
- 4) ե, դ, գ, ա, գ, բ

55. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. ՀՍԽՀ խորհուրդների առաջին ընտրությունները
- բ. ԽՍՀՄ-ի կազմավորման մասին Հռչակագրի և Պայմանագրի ստորագրումը
- գ. Վ. Ի. Լենինի նամակը Անդրկովկասի կոմունիստներիին
- դ. ՀՍԽՀ խորհուրդների առաջին համագումարի բացումը
- ե. Մոսկվայի պայմանագրի ստորագրումը Խորհրդային Ռուսաստանի և Թուրքիայի միջև
- զ. Երևանի համաձայնագրի ստորագրումը Հայաստանի խորհրդայնացման վերաբերյալ
- է. Խորհրդային Ռուսաստանի և խորհրդային հանրապետությունների միջև միջպետական հարաբերությունները կարգավորող հանձնաժողովի ստեղծումը

- 1) գ, ե, գ, ա, դ, է, բ
- 2) ե, դ, ա, գ, բ, է, գ
- 3) գ, ե, գ, դ, ա, է, բ
- 4) ե, դ, գ, ա, բ, է, գ

56. Մշակութային կյանքի թվարկված իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. «Երեքի» խմբակի կազմակերպումը
- բ. գրական խմբակների միավորումը Հայաստանի գրողների միության մեջ
- գ. հայկական կինեմատոգրաֆի առաջնեկի՝ «Նամուսի» ցուցադրումը
- դ. ռուսական դրամատիկական թատրոնի հիմնադրումը
- ե. պետական կոնսերվատորիայի բացումը
- զ. պատանի հանդիսատեսի թատրոնի բացումը
- է. Ա. Խարաջյանի գլխավորությամբ պետական շրջիկ թատրոնի կազմակերպումը
- ը. «Պեպո» հայկական առաջին հնչյունային կինոնկարի էկրան բարձրանալը
- թ. հայկական ժողովրդական երգի-պարի պետական անսամբլի ստեղծումը

- 1) ա, բ, դ, ը, թ, ե, գ, է, գ
- 2) ե, ա, գ, է, թ, բ, դ, ը, գ
- 3) ա, ե, գ, է, գ, բ, ը, դ, թ
- 4) ա, գ, դ, գ, ե, ը, բ, թ, է

57. Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. Անկախ և միացյալ Հայաստանի հռչակումը
- բ. Բեռլինի կոնգրեսը
- գ. Արցախի անջատումը Գանձակի խանությունից և առանձին վարչական միավոր դառնալը

- դ. «Ռուս-թուրքական բարեկամության և եղբայրության» պայմանագրի կնքումը
- ե. Լեռնային Ղարաբաղին ինքնավար մարզի կարգավիճակ տրամադրելը
- զ. Կովկասյան բյուրոյի պլենումի կամայական որոշման ընդունումը Արցախի հարցում
- է. «Լեռնահայաստանի» վերանվանումը Հայաստանի Հանրապետության
- ը. Անդրկովկասի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Դաշնային Միության (ԱԽՍՀՄ) ստեղծումը
- թ. Հայաստանում պարենհարկի կիրառումը
- ժ. Ադանայում Ֆրանսիայի հովանավորությամբ Կիլիկիայի ինքնավարության հռչակումը

1) բ, ա, գ, դ, է, ժ, զ, ե, ը

3) գ, բ, ա, ժ, է, դ, զ, ը, թ, ե

2) գ, բ, ա, ժ, դ, թ, զ, է, ե, ը

4) գ, բ, ա, ժ, դ, է, թ, զ, ը, ե

58. Կաթողիկոսների անունները դասավորել ըստ հայրապետական տարիների ժամանակագրության.

ա. Սահակ Ա Պարթև

զ. Սահակ Ձորափորցի

բ. Հովհաննես Բ Գաբեղենացի

է. Գրիգոր Զ Ապիրատ

գ. Հովսեփ Վայոցձորցի

ը. Խորեն Մուրադբեգյան

դ. Կոմիտաս Մամիկոնյան

թ. Գևորգ Ե Սուրենյանց

ե. Հուսիկ

1) ե, ա, գ, բ, դ, զ, է, թ, ը

3) ե, ա, գ, բ, զ, դ, է, թ, ը

2) ա, ե, գ, դ, բ, է, զ, թ, ը

4) ա, ե, գ, զ, բ, է, ը, դ, թ

59. Պատմական գործիչներին դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

ա. Հովհաննես Հունդիբեկյան

զ. Հովհաննես Արշարունի

բ. Ստեփան Քիչմիշև

է. Բագրատ Առուշանյան

գ. Աշոտ Ղուլյան

ը. Ստեփան Զատիկյան

դ. Մարտիրոս Վեքիլյան

թ. Տիգրան Անդրեասյան

ե. Պետրոս Հայկազունի

ժ. Սերգեյ Մելիք-Յուլյան

1) դ, ա, բ, ե, գ, թ, է, ը, ժ, գ

3) ա, դ, բ, ե, գ, թ, ժ, է, ը, գ

2) ա, ե, դ, բ, գ, ը, է, ժ, թ, գ

4) ա, դ, ե, բ, գ, թ, ժ, է, ը, գ

60. Դեպքերը դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

ա. «Միացյալ Հայաստանի անկախության հռչակագրի ակտի» ստորագրումը և հռչակումը

բ. Հայ առաքելական եկեղեցու կալվածքների, գույքի, ավանդների բռնագրավման մասին օրենքի չեղյալ հայտարարելը

գ. զինանշանի մասին ՀՀ օրենքի հաստատումը

դ. Ռուսաստանում ապրող հայերի պատգամավորական Կենտրոնական ժողովի հրավիրումը Մկրտիչ Խրիմյանի նախաձեռնությամբ

- ե. Օսմանյան կայսրության ընդդիմադիր ուժերի երկրորդ համաժողովի հրավիրումը Փարիզում
- զ. ռուս-թուրքական «բարեկամության և եղբայրության մասին» պայմանագրի կնքումը
- է. Հովսեփ Արղությանի գլխավորությամբ VII կամավորական ջոկատի ձևավորումը
- ը. ռուսական բանակի գերագույն սպայակոյտի հրամանով Հայկական կորպուսի ձևավորումը
- թ. Անդրկովկասի Խորհրդային Դաշնային Սոցիալիստական Հանրապետության ստեղծումը
- ժ. ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնի իրավարար որոշումը հայ-թուրքական սահմանագծի վերաբերյալ

- 1) բ, դ, ե, թ, է, ա, գ, լ, զ, ժ
- 2) բ, դ, ե, թ, է, ա, գ, լ, զ, ժ

- 3) դ, բ, ե, թ, ա, է, գ, լ, ժ, զ
- 4) բ, դ, ե, է, ը, ա, գ, ժ, զ, թ

61. Պայմանագրերը դասավորել ըստ կնքման ժամանակագրական հաջորդականության.

- ա. Գյուլիստանի
- բ. Ադրիանապոլսի
- գ. Ալեքսանդրապոլի
- դ. Մոսկվայի
- ե. Բուխարեստի
- զ. Կարսի
- է. Սևրի
- ը. Թուրքմենչայի
- թ. Բրեստ-Լիտովսկի

- 1) ե, ա, բ, ը, գ, դ, է, զ, թ
- 2) ե, ա, ը, բ, թ, է, գ, դ, զ
- 3) ա, ը, ե, բ, է, գ, դ, զ, թ
- 4) ա, թ, բ, է, ե, գ, ը, դ, զ

62. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. Բեռլինի կոնգրեսի հրավիրումը
- բ. Անգեղակոթի ժողովի հրավիրումը
- գ. Ա. Գրիբոյեդովի «Խելքից պատուհաս» պիեսի բեմադրումը Երևանում
- դ. Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական թատրոնի հիմնումը
- ե. Դիլմանի ճակատամարտը
- զ. Արարայի ճակատամարտը
- է. Խիզանի գրավումը Համազասպի ջոկատի կողմից
- ը. ռուսական դրամատիկական թատրոնի հիմնադրումը Երևանում

- 1) բ, գ, ա, ե, է, զ, ը, դ
- 2) բ, գ, ե, զ, է, ա, ը, դ
- 3) ե, ա, բ, է, գ, ը, գ, դ
- 4) ա, բ, ե, զ, գ, է, դ, ը

63. Պատմական գործիչների անունները դասավորել ըստ գործունեության հաջորդականության.

ա. Դավիթ բեկ

բ. Ներսես Աշտարակեցի

գ. Մկրտիչ Յաղուբյան

դ. Շահամիր Շահամիրյան

ե. Սմբատ Գունդատաբլ

զ. Հովհաննես Բաղրամյան

է. Աղբյուր Սերոբ

ը. Դավիթ Ալավկատրոի

թ. Իսրայել Օրի

ժ. Ռոբերտ Քոչարյան

1) ը, է, թ, է, դ, բ, գ, ա, զ, ժ

2) ա, բ, գ, թ, դ, է, ը, ե, ժ, զ

3) գ, դ, բ, թ, ա, զ, է, ը, է, ժ

4) ը, է, թ, ա, դ, բ, գ, է, զ, ժ

ZANGAK

7. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՈՒՄ

1. Կատարել համապատասխանեցում.

Իրադարձություն

- ա. «Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի մարզային խորհրդի միջնորդությունը՝ մարզը Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմից հանելու և Հայկական ԽՍՀ-ի կազմի մեջ մտցնելու մասին» որոշման ընդունումը
- բ. «Ադրբեջանական ԽՍՀ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի սոցիալ-տնտեսական զարգացումը 1988-1995 թթ. արագացնելու միջոցառումների մասին» որոշման ընդունումը
- գ. Սուրեն Հարությունյանի նշանակումը ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղարի պաշտոնում
- դ. Սումգաիթյան ոճրագործությունը
- ե. ԼՂԻՄ մարզկոմի առաջին քարտուղարի պաշտոնում Հենրիխ Պողոսյանի ընտրվելը
- զ. Հայաստանում առաջին նախագահական ընտրությունների անցկացումը
- է. Սպիտակի երկրաշարժը
- ը. ՀՀԿ, ԲՀԿ և ՀՅԴ կուսակցությունների համաձայնագրի ստորագրումը կոալիցիոն նոր կառավարության ստեղծման մասին
- թ. Հայոց համազգային շարժման առաջին համագումարի բացումը
- ժ. «Հոչակագիր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հոչակման մասին» որոշման ընդունումը

Տարեթիվ

- | | |
|---------------------------|---------------------------|
| 1) 1988 թ. մայիսի 21 | 6) 1988 թ. դեկտեմբերի 7 |
| 2) 1991 թ. սեպտեմբերի 2 | 7) 2007 թ. մայիսի 12 |
| 3) 1988 թ. փետրվարի 20 | 8) 1988 թ. մարտի 24 |
| 4) 1988 թ. փետրվարի 27-29 | 9) 1989 թ. նոյեմբերի 4 |
| 5) 1988 թ. փետրվարի 23 | 10) 1991 թ. հոկտեմբերի 16 |
| | 11) 1989 թ. մայիսի 25 |

- 1) ա-1, բ-8, գ-3, դ-5, ե-4, զ-10, է-6, ը-7, թ-11, ժ-2
- 2) ա-3, բ-8, գ-1, դ-4, ե-5, զ-7, է-6, ը-11, թ-2, ժ-9
- 3) ա-1, բ-7, գ-3, դ-4, ե-5, զ-9, է-6, ը-8, թ-10, ժ-2
- 4) ա-3, բ-8, գ-1, դ-4, ե-5, զ-10, է-6, ը-7, թ-9, ժ-2

2. Կատարել համապատասխանեցում.

Անուն

- | | |
|---------------------|----------------------|
| 1) Սարգիս Մուրադյան | 3) Արտաշես Հովսեփյան |
| 2) Մոկո Հակոբյան | 4) Մինաս Ավետիսյան |

Ստեղծագործություն

- | | |
|-----------------------------|----------------|
| ա. «Ալեքսանդր Թամանյան» | գ. «Սպասում» |
| բ. «Կոմիտասի վերջին գիշերը» | դ. «Ոսկե ցլիկ» |
- ե. «Իմ ժողովրդի պատմության տարեթվերից»

- | | |
|-----------------------|-----------------------|
| 1) 1-ե, 2-դ, 3-ա, 4-բ | 3) 1-ա, 2-բ, 3-դ, 4-ե |
| 2) 1-բ, 2-դ, 3-ա, 4-ե | 4) 1-բ, 2-դ, 3-ա, 4-գ |

3. Կատարել համապատասխանեցում.

Իրադարձություն

- 1) հայ-վրացական սահմանազատման պայմանագրի կնքումը
- 2) ԽՍՀՄ-ի ստեղծումը
- 3) Բ. Լեզրանի գլխավորած պատվիրակության ժամանումը Երևան
- 4) Համո Օհանջանյանի կառավարության հրաժարականի ընդունումը

Տարեթիվ

- | | |
|--------------------------|--------------------------|
| ա. 1920 թ. հոկտեմբերի 11 | գ. 1921 թ. նոյեմբերի 6 |
| բ. 1920 թ. նոյեմբերի 23 | դ. 1922 թ. դեկտեմբերի 30 |
- ե. 1921 թ. փետրվարի 2

- | | |
|-----------------------|-----------------------|
| 1) 1-գ, 2-դ, 3-ե, 4-բ | 3) 1-ե, 2-դ, 3-ա, 4-գ |
| 2) 1-գ, 2-դ, 3-ա, 4-բ | 4) 1-ե, 2-դ, 3-ա, 4-բ |

4. Կատարել համապատասխանեցում.

Իրադարձություն

- ա. 1925 թ. դեկտեմբերի 17-ի խորհրդա-թուրքական բարեկամության և չեզոքության պայմանագիրը դենտնսացիայի ենթարկելը
- բ. Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի անդամների մասնակցությամբ Երևանի Ստեփան Շահումյանի անվան մշակույթի պալատում Հայաստանի Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջանի հրավիրումը
- գ. ԽՍՀՄ ղեկավարության ոչ հայանպաստ ու Արցախի համար վտանգավոր դիրքորոշման դեմ Մոսկվայում գրող-հրապարակախոս Զորի Բալայանի կողմից հացադուլի հայտարարումը
- դ. Հայկոմկուսի կենտկոմի պլենումի որոշմամբ Սուրեն Հարությունյանին կենտկոմի առաջին քարտուղարի պաշտոնից ազատելը

- ե. Լևոն Տեր-Պետրոսյանի ընտրվելը Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահի պաշտոնում
- զ. ՀՀ նախագահական չորրորդ ընտրությունների անցկացումը
- է. ՀՀԿ, ԲՀԿ և ՀՅԴ կուսակցությունների միջև կոալիցիոն նոր կառավարություն կազմելու համաձայնագրի ստորագրումը
- ը. Հայոց համազգային շարժման առաջին համագումարի բացումը

Տարեթիվ

- 1) 1989 թ. նոյեմբերի 30
- 2) 1989 թ. նոյեմբերի 4
- 3) 1990 թ. օգոստոսի 4
- 4) 1990 թ. ապրիլի 6-ին
- 5) 2003 թ. փետրվարի 19
- 6) 1949 թ. մարտի 19
- 7) 1990 թ. սեպտեմբերի 9
- 8) 2007 թ. մայիսի 12
- 9) 2008 թ. մարտի 21

- 1) ա-6, բ-1, գ-7, դ- 4, ե-3, զ-5, է-8, ը-9
- 2) ա-6, բ-1, գ-4, դ- 7, ե-3, զ-2, է-8, ը-5
- 3) ա-6, բ-1, գ-4, դ- 7, ե-3, զ-2, է-8, ը-5
- 4) ա-6, բ-1, գ-7, դ- 4, ե-3, զ-5, է-8, ը-2

5. Կատարել համապատասխանեցում.

Իրադարձություն

- ա. Գերմանիայի և ԽՍՀՄ-ի միջև չհարձակման պայմանագրի կնքումը
- բ. 89-րդ Թամանյան դիվիզիայի կազմացումը
- գ. Յակով Զարոբյանի ընտրվելը ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղարի պաշտոնում
- դ. «Տրանսիլվանիա» շոգենավով հայրենադարձների առաջին խմբի դուրս գալը Բեյրութ նավահանգստից
- ե. Լոզանի կոնֆերանսի հրավիրումը
- զ. Լոնդոնի կոնֆերանսի հրավիրումը
- է. «Երկկողմ դիվանագիտական հարաբերությունների հաստատման մասին» արձանագրությունների վավերացման գործընթացի կասեցումը
- ը. կուսակցությունների վերաբերյալ օրենքը խախտելու ամբաստանությամբ դաշնակցության գործունեության կասեցումը Հայաստանում
- թ. «Հարսանիք լեռներում» գործողությունը

Տարեթիվ

- 1) 1921 թ.
- 2) 2010 թ.
- 3) 1994 թ.
- 4) 1992 թ.
- 5) 1939 թ.
- 6) 1956 թ.
- 7) 1946 թ.
- 8) 1960 թ.
- 9) 1922 թ.
- 10) 1991 թ.
- 1) ա-5, բ-8, գ-6, դ-7, ե-1, զ-9, է-2, ը-3, թ-10
- 2) ա-5, բ-8, գ-6, դ-7, ե-1, զ-9, է-2, ը-3, թ-4
- 3) ա-5, բ-6, գ-8, դ-7, ե-1, զ-9, է-2, ը-3, թ-4
- 4) ա-5, բ-6, գ-8, դ-7, ե-9, զ-1, է-2, ը-3, թ-4

6. Կատարել համապատասխանեցում.

Փաստ

- ա. Ամբողջ Անդրկովկասից 1949 թ. արքորված հայերի թիվը
- բ. 1988 թ. փետրվարի 25–26–ին Երևանի հանրահավաքում ցուցարարների թիվը
- գ. Հայրենական պատերազմին մասնակցած հայ զեներալների թիվը
- դ. Հայաստանից 1949 թ. արքորվածները
- ե. Հայրենական պատերազմում Փառքի շքանշանի արժանացած հայորդիներ
- զ. Սպիտակի երկրաշարժի հետևանքով զոհվածներ

Թվաքանակ

- 1) 27
- 2) 64
- 3) 15486
- 4) 13272
- 5) 25000
- 6) 100 հազարից ավել
- 7) 17 000

- 1) ա–6, բ–7, գ–1, դ–5, ե–2, զ–4
- 2) ա–3, բ–6, գ–1, դ–4, ե–2, զ–5
- 3) ա–3, բ–7, գ–1, դ–4, ե–2, զ–5
- 4) ա–3, բ–6, գ–2, դ–4, ե–1, զ–5

7. Կատարել համապատասխանեցում.

Անուն

- 1) Արամ Մանուկյան
- 2) Ավետիք Սահակյան
- 3) Սիմոն Վրացյան
- 4) Ալեքսանդր Մյասնիկյան
- 5) Ալեքսանդր Բեկզադյան
- 6) Ասքանազ Մռավյան
- 7) Սարգիս Սրապիոնյան

Պաշտոն

- ա. Հայաստանի Հանրապետության վարչապետ
- բ. ՀՄԽՀ Ժողկոմխորհի նախագահ
- գ. Հայաստանի խորհրդի նախագահ
- դ. ՀՄԽՀ Ժողովրդական տնտեսության խորհրդի նախագահ
- ե. Մոսկվայի բանակցություններում հայկական պատվիրակության ղեկավար
- զ. ՀՄԽՀ արտաքին գործերի ժողկոմ
- է. ՀՀ ներքին գործերի նախարար
- ը. ՀՀ զինվորական նախարար

- 1) 1–գ, 2–ը, 3–դ, 4–ե, 5–ա, 6–զ, 7–է
- 2) 1–է, 2–զ, 3–ա, 4–բ, 5–զ, 6–դ, 7–ը
- 3) 1–ա, 2–դ, 3–բ, 4–զ, 5–ե, 6–է, 7–զ
- 4) 1–է, 2–զ, 3–ա, 4–բ, 5–ե, 6–զ, 7–դ

8. Կատարել համապատասխանեցում.

Իրադարձություն

- 1) Հայաստանի խորհրդի անդրանիկ նիստի բացումը
- 2) հայերենի՝ որպես պետական լեզվի մասին օրենքի ստորագրումը
- 3) Առաջին հայկական կորպուսի վերակազմավորումը դիվիզիայի
- 4) Մայիսյան ապստամբությունը Հայաստանում
- 5) Վրաստանում ՀՀ դիվանագիտական առաքելության հիմնումը
- 6) Փարիզում դաշնակից տերությունների խաղաղության խորհրդաժողովը

Անուն

- ա. Արշակ Զամայան
- բ. Պողոս Նուբար
- գ. Սարգիս Մուսայելյան

- դ. Լևոն Շանթ
- ե. Ավետիք Սահակյան
- զ. Սերգեյ Մելիք-Յուլյան
- է. Մովսես Սիլիկյան

- 1) 1-դ, 2-ա, 3-զ, 4-բ, 5-է, 6-ե
- 2) 1-ե, 2-դ, 3-է, 4-զ, 5-է, 6-բ

- 3) 1-ա, 2-զ, 3-դ, 4-ե, 5-է, 6-բ
- 4) 1-ե, 2-զ, 3-է, 4-զ, 5-բ, 6-ա

9. Կատարել համապատասխանեցում.

Անուն

- 1) Լ. Բերիա
- 2) Լ. Տրոցկի
- 3) Ն. Խրուշչով

- 4) Ա. Վոլսկի
- 5) Բ. Ելցին
- 6) Ն. Ռիժկով
- 7) Գ. Ամատունի

Պաշտոն

- ա. 1920-ական թթ. ԽՍՀՄ-ում ընդդիմության ղեկավար
- բ. ԽՍՀՄ նախարարների խորհրդի նախագահ
- գ. ԼՂ-ում հատուկ կառավարման կոմիտեի նախագահ
- դ. ԽՄԿԿ կենտկոմի առաջին քարտուղար
- ե. ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահ
- զ. ԽՍՀՄ ՆԳ նախարար
- է. ՀԿ(Բ)Կ կենտկոմի քարտուղար
- ը. ՌԴ նախագահ

- 1) 1-զ, 2-ա, 3-դ, 4-զ, 5-բ, 6-ը, 7-ը
- 2) 1-զ, 2-ա, 3-դ, 4-բ, 5-է, 6-ը, 7-զ

- 3) 1-զ, 2-ա, 3-դ, 4-զ, 5-ը, 6-բ, 7-է
- 4) 1-բ, 2-դ, 3-զ, 4-ա, 5-է, 6-ը, 7-զ

10. Կատարել համապատասխանեցում.

Տարեթիվ

- | | |
|--------------------------|-----------------------|
| 1) 1920 թ. նոյեմբերի 30 | 5) 1921 թ. հուլիսի 2 |
| 2) 1921 թ. հունիսի 1 | 6) 1921 թ. հունիսի 12 |
| 3) 1921 թ. փետրվարի 25 | 7) 1921 թ. մարտի 16 |
| 4) 1920 թ. դեկտեմբերի 25 | 8) 1921 թ. հուլիսի 7 |

Իրադարձություն

- ա. Ադրբեջանի հեղկոմի հայտարարությունը «Լեռնային Ղարաբաղը, Ջանգեզուրը և Նախիջևանը Խորհրդային Հայաստանի Հանրապետության մաս ճանաչելու մասին»
- բ. Կարմիր բանակի զորամասերի մուտքը Թիֆլիս
- գ. ՌԿ(բ)Կ կենտրոնի կովկասյան բյուրոյի պլենումի նիստը՝ նվիրված Լոռու «չեզոք գոտու», Ախալքալաքի և Խրամի վիճելի տարածքների խնդրին
- դ. Ինքնավար Սյունիքի հռչակումը
- ե. Կարմիր բանակի զորամասերի մուտքը Գորիս
- զ. «Լեռնային Ղարաբաղի՝ Հայաստանին պատկանելության մասին» ՀՍԽՀ ԺԿԽ-ի հայտարարության հրապարակումը
- է. Լեռնահայաստանի վերանվանումը Հայաստանի Հանրապետություն
- ը. Մոսկվայի ռուս-թուրքական բանակցությունների սկիզբը

- | | |
|---|---|
| 1) 1-բ, 2-գ, 3-դ, 4-ա, 5-զ, 6-ը, 7-ե, 8-է | 3) 1-գ, 2-դ, 3-ե, 4-զ, 5-ը, 6-է, 7-բ, 8-ա |
| 2) 1-ա, 2-է, 3-բ, 4-դ, 5-ե, 6-զ, 7-զ, 8-թ | 4) 1-ա, 2-է, 3-բ, 4-դ, 5-ե, 6-զ, 7-թ, 8-զ |

11. Կատարել համապատասխանեցում.

Տարեթիվ

- | | |
|--------------------------|--------------------------|
| 1) 1919 թ. հունվարի 17 | 5) 1920 թ. օգոստոսի 10 |
| 2) 1921 թ. հոկտեմբերի 13 | 6) 1921 թ. հոկտեմբերի 20 |
| 3) 1920 թ. նոյեմբերի 13 | 7) 1920 թ. հոկտեմբերի 28 |
| 4) 1918 թ. հունիսի 4 | 8) 1921 թ. մարտի 16 |
| | 9) 1920 թ. օգոստոսի 24 |

Ստորագրված միջազգային փաստաթղթեր

- ա. Կարսի պայմանագիր
- բ. Բաթումի հաշտության պայմանագիր
- գ. հայ-վրացական հաշտության պայմանագիր
- դ. Անկարայի ֆրանս-թուրքական պայմանագիր
- ե. հայ-վրացական համաձայնագիր՝ «Լոռու չեզոք գոտի» վրացական զորքեր մտցնելու մասին
- զ. Թիֆլիսի հայ-ռուսական համաձայնագիր

է. խորհրդա-քեմալական «Սրտագին և անկեղծ բարեկամության» պայմանագիրը
ը. հայ-ռուսական «Եզրափակիչ որոշման արձանագրություն»
թ. Մոսկվայի «Ռուս-թուրքական բարեկամության և եղբայրության» պայմանագիր
ժ. Բրեստի հաշտության պայմանագիր

- 1) 1-գ, 2-ա, 3-ե, 4-գ, 5-դ, 6-բ, 7-ը, 8-է, 9-թ
- 2) 1-գ, 2-ա, 3-ե, 4-բ, 5-գ, 6-դ, 7-ը, 8-թ, 9-է
- 3) 1-դ, 2-ա, 3-գ, 4-ե, 5-բ, 6-է, 7-գ, 8-ժ, 9-ը
- 4) 1-բ, 2-դ, 3-գ, 4-ժ, 5-գ, 6-ե, 7-է, 8-ը, 9-ա

12. Կատարել համապատասխանեցում.

Տարեթիվ

- 1) 1922 թ. մարտի 12
- 2) 1921 թ. դեկտեմբեր
- 3) 1922 թ. դեկտեմբերի 10-13
- 4) 1922 թ. հունվարի 30
- 5) 1922 թ. փետրվարի 3
- 6) 1922 թ. դեկտեմբերի 30

Իրադարձություն

ա. ԽՍՀՄ կազմավորման մասին Հռչակագրի և Միութենական պայմանագրի կնքումը
բ. ՀՍԽՀ խորհուրդների առաջին համագումարի բացումը
գ. ՀՍԽՀ առաջին Սահմանադրության ընդունումը
դ. ՍԽՍՀԴՄ-ի ստեղծումը
ե. Անդրկովկասի խորհուրդների առաջին համագումարը
զ. ՀՍԽՀ խորհուրդների առաջին ընտրությունները
է. ԽՍՀՄ-ի կազմալուծումը

- ե. 1922 թ. հունվարի 30-ին Երևանի պետական ֆիլիարմոնիայի շենքում բացվեց ՀՄԽՀ խորհուրդների առաջին համագումարը:
- զ. ԽՍՀՄ-ի կազմավորման մասին Հռչակագրի և Միութենական պայմանագրի նախագծերը հաստատվեցին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի բարձրագույն օրենսդիր մարմնի կողմից:
- է. 1921 թ. փետրվարի 25-ին Կարմիր բանակի զորամասերը մտան Թիֆլիս, իսկ մինչև մայիսի կեսերը խորհրդային կարգեր հաստատվեցին ամբողջ Վրաստանում:
- ը. ՌԿ(Բ)Կ կենտկոմի կովկասյան բյուրոյի պլենումի 1921 թ. հուլիսի 7-ի նիստում որոշվեց «Լոռու չեղոք գոտին» թողնել Հայաստանի կազմում:
- թ. 1921 թ. հունիսի 12-ին Ղարաբաղ է գործուղվում Ա. Բեկզադյանը՝ որպես արտակարգ կոմիսար:

1) ա, դ, ը

2) բ, է, թ

3) գ, դ, ե

4) ա, գ, ը

28. Ո՞ր տարածքներն էին ներառվելու Միացյալ հայկական անկախ պետության կազմի մեջ՝ ըստ Փարիզի խաղաղության խորհրդաժողովի Տասի խորհրդին ներկայացված հայկական համատեղ հուշագրի.

- 1) Արևմտյան Հայաստանի 6 վիլայեթները, Կիլիկիայի 5 սանջակները, Հայաստանի Հանրապետությունը՝ ընդլայնված սահմաններով
- 2) Արևմտյան Հայաստանի 7 վիլայեթները, Կիլիկիայի 4 սանջակները, Հայաստանի Հանրապետությունը՝ ընդլայնված սահմաններով
- 3) Արևմտյան Հայաստանի 7 վիլայեթները, Կիլիկիայի 6 սանջակները, Ղարաբաղն ու Ջանգեզուրը
- 4) Արևմտյան Հայաստանի 7 վիլայեթները, Կիլիկիայի 4 սանջակները, Ջավախքը, Լոռին, Ջանգեզուրը

29. Երևանում 1920 թ. աշնանը տեղի ունեցած հայ-ռուսական բանակցություններին առնչվող՝ ստորև բերված պնդումներից որո՞նք են ճիշտ.

- 1) Թուրք-հայկական պատերազմում հայկական բանակի պարտությունը Ռուսաստանին ստիպեց ժամանակավորապես հետաձգել Հայաստանի խորհրդայնացումը:
- 2) 1920 թ. հոկտեմբերի 11-ին Երևան ժամանեց Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Օ. Սիլինի գլխավորած պատվիրակությունը:
- 3) Սկզբնական փուլում ռուսական պատվիրակությունը Հայաստանի խորհրդայնացման պահանջ չէր ներկայացնում:
- 4) 1920 թ. նոյեմբերի 14-ին ՌԿ(Բ)Կ կենտկոմի քաղբյուրոն Հայաստանում խորհրդային իշխանություն հաստատելու համար վճռական գործողությունների դիմելու որոշում ընդունեց:
- 5) Հոկտեմբերի 20-ին նախաստորագրվեց «Եզրափակիչ որոշման արձանագրություն»:
- 6) Կողմերը պարտավորվում էին ստորագրել այդ արձանագրությանը կից «Հատուկ պայմանագիր»:
- 7) Ռուսաստանի և Ադրբեջանի կառավարությունները պետք է ճանաչեին Հայաստանի իրավունքները Նախիջևանի և Ղարաբաղի վրա:
- 8) Հայաստանի կառավարությունը պետք է հրաժարվեր Ղարաբաղի նկատմամբ պահանջներից, եթե Ռուսաստանը օժանդակեր Հայաստանին հետ ստանալու Թուրքիայի կողմից բռնագրավված՝ Արևմտյան Հայաստանի բոլոր տարածքները:
- 9) Ռուսաստանը պարտավորվում էր Հայաստանին տրամադրել 2,5 մլն ռուբլի (ոսկով) վարկ:

30. Թուրք-հայկական 1920 թ. պատերազմին վերաբերող՝ ստորև տրված պնդումներից որո՞նք են սխալ.

- ա. 1920 թ. աշնանը Հայաստանը հայտնվեց ռազմաքաղաքական վտանգավոր իրադրության մեջ:
- բ. Հայաստանի գլխավոր դաշնակիցները՝ Անգլիան և Ֆրանսիան, գործնական քայլեր էին կատարում Հայաստանը պաշտպանելու և Սևրի պայմանագիրը կյանքի կոչելու համար:

- գ. Հայաստանի նկատմամբ թշնամաբար էին տրամադրված Խորհրդային Ռուսաստանը և Ադրբեջանը:
- դ. Վրաստանը, քեմալա-վրացական գաղտնի պայմանավորվածությունների համաձայն, պատերազմի դեպքում պահպանելու էր չեզոքություն:
- ե. Հայաստանի վրա թուրքական լայնածավալ հարձակումը սկսվեց սեպտեմբերի 23-ին:
- զ. Մեծ տերությունները արագորեն արձագանքեցին Հայաստանի օգնության կոչին:
- է. Հայկական զինված ուժերի, որոնց թիվը շուրջ 40 հազար էր, գլխավոր հրամանատարը գեներալ Մ. Սիլիկյանն էր:
- ը. Ստեղծվեց «Հայրենիքի փրկության» կոմիտե՝ Ս. Վրացյանի գլխավորությամբ:

- 1) ա, գ, է 2) բ, գ, ը 3) բ, գ, է 4) դ, ե, ը

31. Բերված պնդումներից որո՞նք են ճիշտ.

- 1) Արդյունաբերացնել Խորհրդային Հայաստանը նշանակում էր ստեղծել արդյունաբերական նոր ճյուղեր, կառուցել գործարաններ, ֆաբրիկաներ, հիդրոէլեկտրակայաններ, ընդլայնել երկաթուղիները:
- 2) Հայաստանում 1920-ական թթ. չկային Լ. Տրոցկու տեսակետների պաշտպաններ:
- 3) 1932 թ. սկզբին Հայաստանում առանց դատաքննության և դատարանի վճիռների գնդակահարվեց շուրջ 1000 մարդ, տարբեր ժամկետների ազատագրկման ենթարկվեց շուրջ 500 մարդ:
- 4) 1937 թ. հուլիսին Բերիայի հրամանով Թիֆլիսում սպանվեց Աղասի Խանջյանը:
- 5) Խորհրդային իշխանության համար Հայոց եկեղեցին և առաձին հոգևորականներ կապի միջոց էին Սփյուռքում գործելու համար:
- 6) ՀԿ(բ)Կ կենտկոմը 1938 թ. օգոստոսի 4-ին որոշում ընդունեց Էջմիածնի վանքը փակելու մասին. Մոսկվան հաստատեց այդ որոշումը:
- 7) 261-րդ հրաձգային դիվիզիայի հիմնական խնդիրն էր պաշտպանել Խորհրդային Հայաստանի՝ Թուրքիայի հետ ունեցած պետական սահմանը, ինչպես նաև ռազմաճակատի համար պատրաստել երթային գումարտակներ:
- 8) Հայրենական մեծ պատերազմում առաջին հայ հերոսը օդաչու Նելսոն Ստեփանյանն էր:

32. Գտնել ճիշտ պատասխանը.

409-րդ հրաձգային դիվիզիայի մարտական ուղին ձգվեց Մոզդոկ քաղաքից՝

- 1) Լեհաստան, Հունգարիա, Ռումինիա, Իտալիա
- 2) Ռումինիա, Հունգարիա, Ավստրիա, Չեխոսլովակիա
- 3) Հարավսլավիա, Ռումինիա, Լեհաստան, Չեխոսլովակիա
- 4) Հարավսլավիա, Ավստրիա, Լեհաստան, Չեխոսլովակիա

33. Բերված պնդումներից որո՞նք են սխալ.

- ա. 390-րդ դիվիզիան 1942 թ. մարտի սկզբներին մասնակցեց Կերչի մարտերին, որտեղ զոհվեց դիվիզիայի հրամանատար Սիմոն Չաքյանը:
- բ. Ընդհանուր առմամբ՝ 1949 թ. ամբողջ Անդրկովկասից հիմնականում Ալթայի երկրամաս արքարովեց մոտ 12 000 հայ:
- գ. Ալախտիները ուժային միջոցներով չէին պայքարում խորհրդային իշխանության և մարքս-լենինյան գաղափարախոսության դեմ, այլ գաղափարական պայքար էին մղում:
- դ. ԼՂԻՄ-ի Հատուկ կառավարման կոմիտեի նախագահ հռչակվեց Ն. Ռիժկովը:
- ե. 1992 թ. մարտի 2-ին Հայաստանը դարձավ Միավորված ազգերի կազմակերպության լիիրավ անդամ:
- զ. Հայոց ցեղասպանությունը ճանաչած և դատապարտած երկրների թիվը հասել է 42-ի:
- է. 1991 թ. դեկտեմբերի 10-ին տեղի ունեցավ անկախության հանրաքվե, որը հաստատեց Լեռնային Ղարաբաղի անկախությունը:
- ը. 1974 թ. հայ քաղաքական երեք կուսակցություններն առաջին անգամ կազմեցին համազգային կենտրոնական մարմին՝ գործողության միասնական ծրագիր մշակելու համար:

- 1) ա, գ, է 2) բ, դ, զ 3) գ, դ, ե 4) բ, դ, ը

34. Տրված փաստարկներից որո՞նք են սխալ.

- ա. 1988 թ. հունվարի 5-ին Մոսկվա մեկնեց արցախցիների պատվիրակությունը՝ երկրի ղեկավարությանը իր պահանջները ներկայացնելու համար:
- բ. 1988 թ. փետրվարի 20-ին ԼՂԻՄ մարզխորհրդի 76 պատգամավորներ գրավոր պահանջեցին հրավիրել մարզխորհրդի արտահերթ նստաշրջան:
- գ. 1988 թ. մայիսի 21-ին Հայաստանի և Ադրբեջանի կոմկուսի կենտկոմների լիագումար նիստում առաջին քարտուղարներ Կ. Դեմիրճյանին և Ք. Բաղիրովին փոխարինեցին Վ. Մովսիսյանը և Ա. Մութալիբովը:
- դ. 1989 թ. մայիսի 25-ին Մոսկվայում իր աշխատանքներն սկսեց ԽՍՀՄ ժողովրդավարական պատգամավորների առաջին համագումարը:
- ե. Երևանում ընթացող երկարատև ցույցերի ճնշման տակ 1988 թ. հունիսի 15-ին գումարվեց ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանը:
- զ. 1988 թ. նոյեմբերի 24-ին՝ ժամը 24 : 00-ից, Երևանում հայտարարվեց պարետային ժամ:

- 1) ա, գ 2) գ, դ 3) բ, ե 4) բ, գ

35. Տրված պնդումներից որո՞նք են սխալ.

- ա. «Աջերի» տրոցկիստների ջախջախումից հետո ՀամԿ(Բ)Կ ստալինյան ղեկավարությունը հաստատեց իր բացարձակ իշխանությունը երկրում:
- բ. 409-րդ հայկական դիվիզիան կազմացրվեց 1945 թ. հուլիսի 2-ին Չեխոսլովակիայում:

- գ. 1993 թ. հուլիսի 23-ին հայկական ուժերին հաջողվեց Ադրամի մոտ հակառակորդին պարտության մատնել:
- դ. 1990 թ. օգոստոսի 23-ին Հայաստանի անկախության հռչակագրով վերականգնվում էին Հայ առաքելական եկեղեցու ոտնահարված իրավունքները:
- ե. 1967 թ. Հայաստանում գործում էր 112 գիտահետազոտական հիմնարկ:
- զ. Ճիշտ էր Ե. Չարենցի ստեղծած խմբակի հրապարակած «Երեքի հռչակագրի» պահանջը, որով մերժվում էր նախահեղափոխական գրական ժառանգությունն ամբողջությամբ:
- է. Հայ նշանավոր ճարտարագետ-էներգետիկ Հովսեփ Տեր-Աստվածատրյանը գլխավորում էր Հայաստանի հիդրոտեխնիկական շինարարությունը:
- ը. 1938 թ. Արմֆանի նախագահ նշանակվեց արևելագետ, ակադեմիկոս Հովսեփ Օրբելին:
- թ. 1962–1982 թթ. անհատական կարգով, առանձին խմբերով աշխարհի 40 երկրներից Հայաստան ներգաղթեց մոտ 38 հազար մարդ:

- 1) ա, դ, է 2) բ, գ, թ 3) բ, ե, թ 4) գ, է, ը

36. Բերված փաստարկներից որոնք են ճիշտ.

- ա. 1992 թ. դեկտեմբերի 1-ին Թուրքիան ճանաչեց Հայաստանի անկախությունը, բայց նրա հետ դիվանագիտական հարաբերություններ չհաստատեց:
- բ. 2001 թ. ապրիլին Գերմանիայի Բունդեսթագն ընդունեց Հայոց ցեղասպանությունը դատապարտող որոշում:
- գ. 2007 թ. հունվարի 19-ին Ստամբուլում ահաբեկչության զոհ դարձավ «Ակոս» թերթի խմբագիր, հայտնի հրապարակախոս Հրանտ Դինքը:
- դ. 2009 թ. հոկտեմբերի 10-ին Ցյուրիխում Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի միջև ստորագրվեցին «Երկկողմ դիվանագիտական հարաբերությունների հաստատման և զարգացման մասին» արձանագրությունները:
- ե. 1992 թ. հունվարի 8-ին ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահ ընտրվեց 33-ամյա պատմաբան Արթուր Մկրտչյանը:
- զ. 1920-ական թվականների սկզբին Խորհրդային Միության սահմաններից դուրս հաշվվում էր շուրջ երեք միլիոն հայ բնակչություն:
- է. 1949 թ. օգոստոսին ՀԽՍՀ նախարարների խորհրդին առընթեր ներգաղթի կոմիտեն դադարեցրեց իր գործունեությունը:
- ը. 1950-ական թվականներին սփյուռքահայության տեղաշարժերը պայմանավորված էին Եգիպտոսում սկսված հեղափոխությամբ, իրաքա-իրանյան պատերազմով:

- 1) բ, գ, գ 2) դ, ե, է 3) ա, դ, ե 4) բ, ե, ը

37. Հայ ազգային կոմիտեի կամ Հայ դատի հանձնախմբի գրասենյակներ սկզբում ստեղծվեցին.

- 1) Լոնդոնում, Վիեննայում, Բոստոնում, Ֆրեզնոյում, Վաշինգտոնում
- 2) Բոստոնում, Նյու Ջերսիում, Ֆրեզնոյում, Փարիզում, Նյու Յորքում
- 3) Վաշինգտոնում, Բոստոնում, Լոս Անջելեսում, Սան Ֆրանցիսկոյում, Ֆրեզնոյում
- 4) Լոս Անջելեսում, Ֆրեզնոյում, Աթենքում, Բոստոնում, Տոկիոյում

38. Որքան էին կազմում Հայաստանի զինված ուժերը 1920 թ. թուրք-հայկական պատերազմի ժամանակ.

- 1) 12 գնդից բաղկացած շուրջ 50 հազար բանակ, որից մարտական ուժերի թիվը 35 հազար էր:
- 2) 10 գնդից բաղկացած շուրջ 40 հազար բանակ, որից մարտական ուժերի թիվը 25 հազար էր:
- 3) 10 գնդից բաղկացած շուրջ 45 հազար բանակ, որից մարտական ուժերի թիվը 25 հազար էր:
- 4) 12 գնդից բաղկացած շուրջ 60 հազար բանակ, որից մարտական ուժերի թիվը 20 հազար էր:

39. Ընտրել այն շարքը, որտեղ ներկայացված են միայն Բաքվի ինքնապաշտպանության գործում մեծ ավանդ ունեցած գործիչները.

- 1) Համազասպ, Մ. Սիլիկյան, Սևքարեցի Սաքո, Դժոխք Հրայր, Դ. Բեկ-Փիրումյան
- 2) Ստ. Շահումյան, Համազասպ, Գր. Կորգանով, Հ. Բագրատունի, Սեբաստացի Մուրադ, Սեպուհ
- 3) Գ. Նժդեհ, Գր. Կորգանով, Բուլղարացի Գրիգոր, Ա. Գարո, Անդրանիկ
- 4) Հ. Բժշկյանց, Թ. Նազարբեկյան, Մեծն Մուրադ, Սեպուհ, Հասան Փաշայան

40. 1920 թ. հունվարի 19-ին Փարիզում ղր երկրների ղեկավարները փաստացի ճանաչեցին Հայաստանի կառավարությունը.

- 1) ԱՄՆ, Ռուսաստան, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Իրան
- 2) ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Իտալիա, Ճապոնիա
- 3) Ռուսաստան, Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա, Ճապոնիա, Իրան
- 4) Իտալիա, Նորվեգիա, Մեծ Բրիտանիա, Եգիպտոս, Թուրքիա

41. Ինչ պայմաններ առաջարկեց Գարեգին Նժդեհը 1921 թ. փետրվարին Ջանգեզուրի խորհրդայնացման խնդրով Գորիս ժամանած խորհրդային պատվիրակությանը.

- ա. դադարեցնել Ջանգեզուրի շրջափակումը
բ. քեմալական զորքերը հեռացնել Հայաստանի զինագրաված շրջաններից
գ. վերադարձնել թուրքերին տրված Արևմտյան Հայաստանի հողերը
դ. Նախիջևանն ու Լեռնային Ղարաբաղը փաստացի միացնել Խորհրդային Հայաստանին
ե. Ադրբեջանի խնամակալությունից հանել Նախիջևանը և Ջանգեզուրը

- 1) ա, բ 2) բ, դ 3) գ, դ 4) գ, ե

42. Ի՞նչ կոչ էին անում բուլղարները հայ ժողովրդին 1921 թ. փետրվար–մարտին ընթացող Մոսկվայի բանակցությունների օրերին.

- ա. չհրաժարվել պատմական հայրենիքի հողատարածքներից և պայքարել դրանք վերադարձնելու համար
- բ. հրաժարվել միայն թուրքերին անցած շարժական գույքից
- գ. հրաժարվել ոչ միայն Մեծ Հայաստանի, այլև, հնարավոր է, նույնիսկ մշտապես հայկական անվանված հողատարածքների միավորման ավելի համեստ ցանկությունից
- դ. չզայթակղվել Հայաստանի հողատարածքները համաշխարհային հեղափոխությանը զոհաբերելու գաղափարով
- ե. հաշտվել և համաշխարհային հեղափոխության շահերին զոհաբերել իր երբեմնի հողատարածքները և իր ժողովրդի այնտեղ մնացած հատվածները

- 1) ա, դ 2) բ, գ 3) գ, ե 4) ա, ե

43. Նշված շարքերից որն է ներկայացնում միայն վարչապետների.

- 1) Հովհաննես Քաջազնունի, Ալեքսանդր Խատիսյան, Սիմոն Վրացյան, Վազգեն Մանուկյան, Վազգեն Սարգսյան, Խաչատուր Կարճիկյան
- 2) Հովհաննես Քաջազնունի, Ալեքսանդր Խատիսյան, Սիմոն Վրացյան, Վազգեն Մանուկյան, Վազգեն Սարգսյան, Տիգրան Սարգսյան
- 3) Հովհաննես Քաջազնունի, Ալեքսանդր Խատիսյան, Սիմոն Վրացյան, Վազգեն Մանուկյան, Ավետիք Սահակյան, Վահան Փափազյան
- 4) Հովհաննես Քաջազնունի, Ալեքսանդր Խատիսյան, Սիմոն Վրացյան, Վազգեն Մանուկյան, Րաֆֆի Հովհաննիսյան, Արամ Մանուկյան

44. Բերված պնդումներից որո՞նք են ճիշտ.

- ա. Դավիթ բեկի մահից հետո Կապանի զինվորական հրամանատարությունն ամբողջովին անցել է տեր Ավետիսի ձեռքը:
- բ. «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը ստեղծվել է 1881 թ.՝ Խաչատուր Կերեկցյանի ջանքերով:
- գ. Ժողովրդավարական հեղափոխությունը Ռուսաստանում սկսվեց 1905 թ. հունվարի 9–ին՝ Պետերբուրգում բանվորների խաղաղ ցույցի գնդակոծությամբ:
- դ. 1917 թ. դեկտեմբերի 5–ին ընդունվեց «Թուրքահայաստանի մասին» հրովարտակը:
- ե. 1920 թ. նոյեմբերի 13–ին ստորագրվեց հայ–վրացական համաձայնագիր «Լոռու չեզոք գոտի» ժամանակավորապես վրացական զորքեր մտցնելու մասին:
- զ. 1990 թ. փետրվարի 20–ին ԼՂԻՄ մարզխորհրդի 67 պատգամավորներ գրավոր պահանջեցին հրավիրել մարզխորհրդի արտահերթ նստաշրջան:
- է. 2009 թ. հոկտեմբերի 10–ին Յյուրիխում ՀՀ–ի և Թուրքիայի միջև ստորագրվեցին «Երկկողմ դիվանագիտական հարաբերությունների հաստատման ու զարգացման մասին» արձանագրությունները:

- 1) բ, դ, ե 2) ա, ե, գ 3) բ, գ, ե 4) ա, բ, է

45. Տրված պնդումներից որոնք են ճիշտ.

- ա. «Աջերի» տրոցկիստական ընդդիմության ջախջախումից հետո ՀԱՄԿ(Բ) Կ ստալինյան ղեկավարությունը հաստատեց իր բացարձակ իշխանությունը:
- բ. Ստալինի անձի պաշտամունքը բացահայտ դարձավ 1924 թ՝ Լենինի մահից հետո:
- գ. Հայրենական պատերազմի 64 հայ գեներալներից 4-ը հետագայում դարձել են մարշալներ:
- դ. Վերջին անգամ Հայկական հարցը քննարկվեց Լոզանի կոնֆերանսում (1921 թ. սեպտեմբերի 21-22):
- ե. 1925 թ. հունվարի 25-ին Գաբրիել Սունդուկյանի «Պեպո» պիեսի բեմադրությամբ բացվեց հանրապետության առաջին դրամատիկական թատրոնը:
- զ. Մոնթե Մելքոնյանը զոհվել է 1993 թ. հունիսի 12-ին Աղդամի մոտ՝ Մարզիլու գյուղում:
- է. Արմֆանի առաջին նախագահ նշանակվեց հայտնի աստղագետ Վիկտոր Համբարձումյանը:

1) բ, ե, ը

2) ա, գ, դ

3) ա, գ, զ

4) բ, գ, է

46. Ո՞ր շարքն է կազմված միայն նկարիչներից.

- 1) Վ. Սուրենյանց, Ե. Ոսկյան, Ս. Աղաջանյան, Մ. Սարյան, Փ. Թերլեմեզյան, Ե. Թադևոսյան, Հ. Գյուրջյան
- 2) Վ. Սուրենյանց, Գ. Բաշինջաղյան, Ա. Տեր-Մարության, Մ. Սարյան, Փ. Թերլեմեզյան, Ե. Թադևոսյան, Հ. Գյուրջյան
- 3) Վ. Սուրենյանց, Գ. Բաշինջաղյան, Ս. Աղաջանյան, Մ. Սարյան, Պ. Մաղաքյան, Ե. Թադևոսյան, Հ. Գյուրջյան
- 4) Վ. Սուրենյանց, Գ. Բաշինջաղյան, Ս. Աղաջանյան, Մ. Սարյան, Փ. Թերլեմեզյան, Ե. Թադևոսյան, Հ. Գյուրջյան

47. Տրված պնդումներից որոնք են սխալ.

- ա. ՀՀ արտաքին քաղաքականության գլխավոր ուղղություններից մեկը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումն է:
- բ. Ցեղասպանությունը ճանաչած և դատապարտած պետությունների թիվը 3,5 տասնյակ է:
- գ. 2008 թ. հունվարի 19-ին Ստամբուլում ահաբեկչության զոհ դարձավ «Ակոս» թերթի խմբագիր, հայտնի հասարակական գործիչ Հրանտ Դինքը:
- դ. Թուրքիան մինչ օրս չի բացել ՀՀ-ի հետ պետական սահմանը, որը փակել էր 1993 թ. ապրիլին:
- ե. 1992 թ. ապրիլ-մայիս ամիսներին ադրբեջանական միլիցիայի հատուկ նշանակության ջոկատները խորհրդային բանակի աջակցությամբ բացահայտ պատերազմ սկսեցին Շահումյանի շրջանի և Գետաշենի ենթաշրջանի հայ բնակչության դեմ:
- զ. 1991 թ. սեպտեմբերի 2-ին Ստեփանակերտում տեղի ունեցավ Լեոնային Ղարաբաղի պատգամավորների մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջանը:

է. 1994 թվականի հունվարի 18-ին Քելբաջարի շրջանի հյուսիսային մասի և Օմարի բարձրադիր լեռնանցքի ազատագրմամբ, երբ մարտական գործողություններն ընթանում էին 3000 մ և ավելի բարձր լեռնային շրջաններում՝ 30° սառնամանիքի պայմաններում, ապահովվեց Մարտակերտի շրջանում ազատագրական մարտեր մղող պաշտպանական ուժերի թիկունքը:

ը. 1947 թ. ապրիլի 30-ից մայիսի 4-ը Նյու Յորքում կայացավ Հայկական համաշխարհային կոնգրեսը, որին մասնակցում էին 22 երկրների 715 պատգամավորներ՝ ներկայացնելով 70 սփյուռքահայ կազմակերպություններ, 31 եկեղեցական թեմեր:

1) բ, գ, զ

2) բ, գ, ե

3) գ, է, ը

4) ա, դ, զ

48. Որո՞նք էին այն նախապայմանները, որ Անկարան առաջադրել էր հայկական իշխանություններին՝ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու համար.

1) հրաժարվել Ջանգեզուրից

2) չարժարծել Հայոց ցեղասպանության հարցը

3) հրաժարվել պահանջատիրությունից

4) հրաժարվել Լեռնային Ղարաբաղից

5) հրաժարվել Լեռնային Ղարաբաղին աջակցելուց

6) չարժարծել Հրանտ Դինքի սպանության հարցը

7) Նախիջևանը զիջել Ադրբեջանին

49. Բերված փաստարկներից որո՞նք են սխալ.

1) Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը նոր թափով ծավալվեց XX դարի վերջին և XXI դարի սկզբին:

2) Լատվիայի ու Սլովենիայի ճանաչումից հետո սկսվել է մի փուլ, երբ Հայոց ցեղասպանությունը ճանաչում են այնպիսի երկրներ, որտեղ հայ համայնքը գրեթե բացակայում է:

3) Եվրամիությունը Թուրքիայի անդամակցության նախապայմանների մեջ նշում է Հայոց ցեղասպանության ճանաչման փաստը:

4) 1991 թ. հունվարի 19-20-ը հայ ազատամարտիկները լիովին ազատագրեցին ռազմական հենակետերից մեկը՝ Կրկժանը:

5) 1992 թ. մայիսի 4-ին որոշվեց իրագործել «Հարսանիք լեռներում» գործողությունը:

6) 1992 թ. օգոստոսի 15-ին ստեղծվեց Պաշտպանության պետական կոմիտեն՝ Ռոբերտ Քոչարյանի գլխավորությամբ:

7) 1934 թ. «Գիքոր» կինոնկարով ամփոփվեց հայկինոյի համր շրջանը:

8) 1924 թ. Ալեքսանդր Թամանյանը կազմեց Երևանի գլխավոր հատակագիծը:

9) Անդրանիկ Մարգարյանը 1974 թ. անդամագրվել էր «Շանթ» կոչվող գաղտնի խմբին, իսկ հաջորդ տարի՝ Ազգային միացյալ կուսակցությանը՝ դառնալով նրա ակտիվ անդամներից մեկը:

50. Ովքեր զոհվեցին Գետաշենի ու Մարտունաշենի կռիվներում.

- | | |
|-----------------------|-----------------------|
| 1) Արթուր Մկրտչյանը | 5) Վիգեն Զաքարյանը |
| 2) Թաթուլ Կրպեյանը | 6) Մհեր Զուլիաճյանը |
| 3) Մոնթե Մելքոնյանը | 7) Զարգանդ Դանիելյանը |
| 4) Սիմոն Աչիբգյոզյանը | 8) Կարո Քահքեջյանը |

51. Գտնել սխալ պնդումները.

- 1) ԼՂՀ դրոշը եռագույն է՝ կարմիր, կապույտ, նարնջագույն՝ սպիտակ գույնի հնգատամ սանդղանման զարդանախշով:
- 2) Մարտակերտից, Խոջալուից ու Շուշիից ադրբեջանցիներն ամեն օր հրետանակրծում էին Ստեփանակերտը:
- 3) Շուշիի ազատագրման գործողություններին մասնակցում էր մոտ 100 ջոկատ:
- 4) 1994 թ. մայիսի 12-ի համաձայնագրով ԼՂՀ-ում հրադադար հաստատվեց:
- 5) 1920-ական թվականների սկզբին Խորհրդային Միության սահմաններից դուրս հաշվվում էր շուրջ մեկ միլիոն հայ բնակչություն:
- 6) 1921 թ. հոկտեմբերի 20-ին Անկարայում Թուրքիայի և Ֆրանսիայի միջև կնքված համաձայնագրով ֆրանսիական կառավարությունը Կիլիկիան հանձնեց թուրքերին:
- 7) 1962-1982 թթ. անհատական կարգով, առանձին խմբերով Հայաստան ներգաղթեց մոտ 51 հազար մարդ աշխարհի 12 երկրներից:
- 8) 1967 թ. ապրիլին Մոնտեվիդեոյում գումարված Լատինական Ամերիկայի միջխորհրդարանական համագումարում որոշում ընդունվեց ՄԱԿ-ում օժանդակել Հայոց հարցի քննարկմանը:
- 9) 1925 թ. հայ գիտնական Հովհաննես Ադամյանը աշխարհում առաջինը ստեղծեց և երևանում ցուցադրեց եռագույն հեռուստատեսության և լուսահեռագրության սարքը:

52. Գտնել ճիշտ պնդումները.

- 1) Ստեփանակերտի համար ամենավտանգավորը Խոջալուն էր, որը փակում էր Ստեփանակերտ-Ասկերան մայրուղին:
- 2) 1992 թ. փետրվարի 26-ին մի քանի ժամվա ընթացքում հայ ինքնապաշտպանական ուժերը, տալով 6 զոհ և 20 վիրավոր, լիովին ջախջախեցին Խոջալուում տեղակայված ադրբեջանական ուժերը:
- 3) 1993 թ. ամռանն ադրբեջանական բանակը օտարերկրյա վարձկանների աջակցությամբ և թալանչիական ջոկատների ուղեկցությամբ լայնածավալ հարձակում սկսեց ԼՂՀ հյուսիսային մասում և գրավեց Շահումյանի շրջանն ու Մարտակերտի մի մասը:

- 4) 1920–ական թթ. սկզբին ամենամարդաշատ հայկական գաղթօջախները ԱՄՆ–ում և Կանադայում էին՝ շուրջ 120 հազար հայերով:
- 5) 1922 թ. հունվարի 10–ին Բաթում ժամանեց Միջազգետքում ապաստանած հայերի երկրորդ՝ ևս 3–հազարանոց խումբը:
- 6) 1946 թ. ապրիլին Հայ փախստականների կենտրոնական կոմիտեն, Հայկական ազգային կոմիտեն և այլ կազմակերպություններ հայկական տարածքների վերադարձի խնդրանքով դիմումներ հղեցին ԽՍՀՄ կառավարությանը և անձամբ Ստալինին:
- 7) 1970 թվականին Ուրուգվայի խորհրդարանը հանձնարարեց իր կառավարությանը Հայկական հարցը ներկայացնել ՄԱԿ–ի քննարկմանը:
- 8) 1922 թ. դեկտեմբերին ստեղծված երաժշտական ստուդիայի հիման վրա 1923 թ. բացվեց պետական կոնսերվատորիան:
- 9) 1935 թ. ստեղծվեց Հայաստանի խորհրդային կերպարվեստագետների միությունը, որի մեջ ձուլվեցին գոյություն ունեցող խմբերն ու ընկերությունները:

53. Գտնել սխալ պնդումները.

- 1) Ստեփանակերտի բնակիչները միջին հաշվով օրական ստանում էին 11 գ ալյուր և 2,5 գ շաքարավազ:
- 2) 1992 թ. ապրիլի սկզբին ԼՂՀ մայրաքաղաքում և այլ բնակավայրերում օրհասական դրություն էր:
- 3) 1991 թ. օգոստոսի 23–ին Հայաստանի ԳԽ–ն քննարկումից հետո ընդունեց «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին» փաստաթուղթը:
- 4) 1992 թ. մայիսի 8–ի գիշերը՝ 2 անց 30–ին, հրետանային կրակի ներքո բոլոր չորս ուղղություններով սկսվեց ընդհանուր գրոհը դեպի Շուշի:
- 5) 1920 թվականին ՀՀ–ում ապրող 730 հազար բնակչից 220 հազարն արևմտահայ գաղթականներ էին:
- 6) 1921–1936 թթ. ներգաղթածների ընդհանուր թիվն ավելի քան 42 հազար էր:
- 7) ԽՍՀՄ կառավարությունը 1945 թ. նոյեմբերի 21–ին որոշում ընդունեց սփյուռքահայության ներգաղթը Խորհրդային Հայաստան իրականացնելու մասին:
- 8) 1948 թ. սեպտեմբերի 14–ին եղավ ԽՍՀՄ կառավարության որոշումը՝ սփյուռքահայերի ներգաղթը դադարեցնելու մասին:

54. Ընտրել այն շարքը, որտեղ ներկայացված են Շուշիի ազատագրման ժամանակ գլխավոր ուղղությունների պատասխանատուները.

- 1) Սեյրան Օհանյան, Վիտալի Չիթչյան, Արկադի Կարապետյան, Աշոտ Ղուլյան, Դուշման (Վարդան), Սամվել Բաբայան, Յուրա Հովհաննիսյան, Վալերի Բաբայան, Նվեր Չախոյան
- 2) Սեյրան Օհանյան, Վիտալի Չիթչյան, Արկադի Կարապետյան, Աշոտ Ղուլյան, Մոնթե Մելքոնյան, Դուշման (Վարդան), Յուրա Հովհաննիսյան, Վալերի Բաբայան, Նվեր Չախոյան

- 3) Սեյրան Օհանյան, Վիտալի Չիթչյան, Արկադի Կարապետյան, Աշոտ Ղուլյան, Դուզման (Վարդան), Թաթուլ Կրպեյան, Ջարզանդ Դանիելյան, Վալերի Բաբայան, Նվեր Չախոյան
- 4) Սեյրան Օհանյան, Վիտալի Չիթչյան, Արկադի Կարապետյան, Աշոտ Ղուլյան, Դուզման (Վարդան), Մոնթե Մելքոնյան, Սիմոն Աչիքոյան, Վալերի Բաբայան, Նվեր Չախոյան

55. Ընտրել այն շարքը, որը կազմված է Արցախյան պատերազմում ընկած սփյուռքահայ քաջերի անուններից.

- 1) Վիգեն Ջաքարյան, Միեր Ջուլիաճյան, Մոնթե Մելքոնյան, Կարո Քահրեջյան
- 2) Նվեր Չախոյան, Միեր Ջուլիաճյան, Մոնթե Մելքոնյան, Կարո Քահրեջյան
- 3) Արկադի Կարապետյան, Միեր Ջուլիաճյան, Մոնթե Մելքոնյան, Կարո Քահրեջյան
- 4) Ջարզանդ Դանիելյան, Միեր Ջուլիաճյան, Մոնթե Մելքոնյան, Կարո Քահրեջյան

56. Գտնել սխալ պնդումները.

- 1) 1906 թ. կազմակերպվել էր Հայկական բարեգործական ընդհանուր միությունը (ՀԲԸՄ), որի հիմնադիրը եգիպտահայ մեծահարուստ Պողոս Նուբար փաշան էր:
- 2) Լոնդոնի կոնֆերանսում (1922 նոյեմբեր–1923 հուլիսի 24) Կ. Պոլսի և Անկարայի թուրքական միացյալ պատվիրակությունը պահանջեց Թուրքիային վերադարձնել Կիլիկիան, ճանաչել Ալեքսանդրապոլի պայմանագիրը և հրաժարվել Սևրի պայմանագրից:
- 3) Հայապահպանության և Հայ դատի գործում կարևոր դեր էին խաղում նաև հայ ազգային քաղաքական կուսակցությունները՝ ՀՅԴ–ն, Հնչակյան կուսակցությունը, Ռամկավար ազատական կուսակցությունը (ՌԱԿ):
- 4) 1921 թ. դեկտեմբերին Միջագետքի (Իրաք) բրիտանական իշխանություններն այնտեղի հատուկ ճամբարներում ապաստանած հայ գաղթականների առաջին խումբը (շուրջ 3000 մարդ, հիմնականում վասպուրականցիներ) նավերով տեղափոխեցին Բաթում, այնտեղից՝ Հայաստան:
- 5) 1946 թ. հունիսի 23–ին հայրենադարձների առաջին խումբը «Տրանսիլվանիա» շոգենավով դուրս եկավ Բեյրութի նավահանգստից և 4 օր անց ժամանեց Բաթում:
- 6) ԽՍՀՄ կառավարության որոշմամբ 1946 թ. Խորհրդային Հայաստան պետք է ներգաղթեին շուրջ 63 հազար սփյուռքահայեր, սակայն մի շարք պատճառներով հանրապետությունը կարողացավ ընդունել միայն 25 հազար մարդու:
- 7) 1947–1951 թթ. ԱՄՆ տեղափոխվեցին շուրջ 4,5 հազար հայեր, հիմնականում հայ ռազմագերիներ՝ ԽՍՀՄ նախկին քաղաքացիներ, որոնք, հայրենիք վերադառնալով, կհայտնվեին ստալինյան ճամբարներում:
- 8) 1974 թ. Թուրքիայի կողմից Կիպրոսի հարավային մասի բռնազավթումն այնտեղ բնակվող հայության մի մասի արտագաղթի պատճառ դարձավ:
- 9) 1945 թ. մայիսի 28–ին ՀՀ նախկին վարչապետ Հ. Օհանջանյանը դիմեց Ստալինին, Թրումանին, Չերչիլին և խնդրեց ջանքեր գործադրել հայ ժողովրդին հուզող հարցը լուծելու համար:

57. Ինչ հանգամանքներով էր պայմանավորված դաշնակցության տագնապը գանգվածային հայրենադարձության նկատմամբ.

- 1) Խորհրդային Հայաստանը զրկված էր ինքնուրույն արտաքին քաղաքականություն վարելու հնարավորությունից:
- 2) Ցանկալի չէր, որ Խորհրդային Միությունը զբաղվեր Հայկական հարցի լուծմամբ:
- 3) ԽՍՀՄ-ը մտադիր չէր հանդես գալ Հայկական հարցի լուծման օգտին, ուստի հայոց պահանջատիրության միակ արժարժողը մնում էր սփյուռքահայությունը:
- 4) Կուսակցությունը չէր ցանկանում, որ տարիների ընթացքում Սփյուռքում ձևավորված ֆինանսական կապիտալը թափանցեր Խորհրդային Հայաստան:
- 5) Ներգաղթի հետևանքով գաղթօջախների թուլացումը կվտանգեր հայության համար առաջնային խնդիրների կենսագործումը:
- 6) Ներգաղթի արդյունքում կվատթարանար Խորհրդային Հայաստանի՝ առանց այդ էլ վատ տնտեսական դրությունը:
- 7) Խորհրդային Հայաստանն այդքան ռեսուրսներ չունեի մեծաքանակ գաղթականներին ապաստան տալու համար:

58. Գտնել սխալ պնդումները.

- 1) 1941 թ. ԱրմՖանի կազմում գործում էին 12 գիտահետազոտական հիմնարկներ՝ 150 աշխատողներով:
- 2) 1938 թ. ԱրմՖանի նախագահ նշանակվեց նշանավոր արևելագետ, ակադեմիկոս Հովսեփ Օրբելին:
- 3) 1922 թ. կազմավորվեց «Երեքի» խմբակը՝ Ե. Չարենց, Գ. Աբով, Ա. Վշտունի:
- 4) Հայաստանի կոմկուսի կենտկոմի 1935 թ. որոշմամբ գրական խմբակները միավորվեցին Հայաստանի գրողների միության մեջ:
- 5) 1922 թ. հունվարի 25-ին Գաբրիել Սունդուկյանի «Պեպո» պիեսի բեմադրությամբ բացվեց հանրապետության առաջին դրամատիկական թատրոնը:
- 6) 1927 թ. Ա. Խարազյանի ղեկավարությամբ բացվեց շրջիկ թատրոն:
- 7) 1921 թ. դեկտեմբերին ստեղծված երաժշտական ստուդիայի հիման վրա 1923 թ. բացվեց պետական կոնսերվատորիան:
- 8) 1967 թ. Հայաստանում գործում էր 112 գիտահետազոտական հիմնարկ:
- 9) 1967 թ. էլեկտրոնային արագացուցչի շահագործմամբ Հայաստանի և Խորհրդային Միության շատ ֆիզիկոսներ հնարավորություն ստացան բարդ փորձեր կատարելու միջուկային ֆիզիկայի բնագավառում:

59. Ընտրել այն շարքը, որը կազմված է միայն ճարտարապետներից.

- 1) Ալեքսանդր Թամանյան, Մարկ Գրիգորյան, Կարո Հալաբյան, Գևորգ Քոչար, Նիկողայոս Բունիաթյան, Միքայել Մազմանյան
- 2) Ալեքսանդր Թամանյան, Մարկ Գրիգորյան, Կարո Հալաբյան, Գևորգ Քոչար, Նիկողայոս Բունիաթյան, Արմենակ Մնջոյան

- 3) Ալեքսանդր Թամանյան, Մարկ Գրիգորյան, Կարո Հալաբյան, Գևորգ Քոչար, Արմենակ Մնջոյան, Աբգար Հովհաննիսյան
- 4) Ալեքսանդր Թամանյան, Մարկ Գրիգորյան, Կարո Հալաբյան, Գևորգ Քոչար, Արմենակ Մնջոյան, Մկրտիչ Ներսիսյան

60. Նշվածներից ովքեր են մշակել ու հրատարակել «Սասունցի Դավիթ» էպոսի համահավաք տեքստը.

- 1) Հրաչյա Աճառյանը
- 2) Գրիգոր Ղափանցյանը
- 3) Մանուկ Աբեղյանը
- 4) Լեոն
- 5) Կարապետ Մելիք-Օհանջանյանը
- 6) Գարեգին Սրվանձտյանցը

61. Խորհրդային Հայաստանում հնագիտության զարգացման գործում մեծ ներդրում են ունեցել՝

- 1) Աշոտ Հովհաննիսյանը
- 2) Բորիս Պիոտրովսկին
- 3) Աբգար Հովհաննիսյանը
- 4) Բաբկեն Առաքելյանը
- 5) Հակոբ Մանանդյանը
- 6) Մկրտիչ Ներսիսյանը
- 7) Կարո Ղաֆադարյանը

62. 1950–ական թթ. լեզվաբանության մեջ ներդրում են ունեցել ակադեմիկոսներ՝

- 1) Աբգար Հովհաննիսյանը
- 2) Արարատ Ղարիբյանը
- 3) Բաբկեն Առաքելյանը
- 4) Մկրտիչ Ներսիսյանը
- 5) Գուրգեն Սևակը
- 6) Կարո Ղաֆադարյանը
- 7) Էդուարդ Աղայանը
- 8) Հրաչյա Աճառյանը

63. Ովքեր էին հայ բեմի մեծ վարպետները 1960–1980–ական թթ.

- 1) Օլգա Գուլազյանը
- 2) Խորեն Աբրահամյանը
- 3) Ավետ Ավետիսյանը
- 4) Վարդուհի Վարդերեսյանը
- 5) Վաղարշ Վաղարշյանը
- 6) Դավիթ Մալյանը

64. Ովքեր էին պատկանում հայ քանդակագործների ավագ սերնդին.

- 1) Սերգեյ Մերկուրովը
- 2) Ալեքսանդր Թամանյանը
- 3) Արա Սարգսյանը
- 4) Կարո Հալաբյանը
- 5) Երվանդ Քոչարը
- 6) Մարկ Գրիգորյանը

65. Ո՞ւմ անունների հետ էին կապված մաթեմատիկայի գծով տարվող հետազոտական աշխատանքները.

- 1) Լևոն Ռոտինյան
- 2) Ստեփան Ղամբարյան
- 3) Արտաշես Շահինյան
- 4) Սուրեն Երեմյան
- 5) Մխիթար Զրբաշյան
- 6) Տիգրան Զրբաշյան
- 7) Սերգեյ Մերգելյան
- 8) Արմենակ Մնջոյան

66. 1950–1960–ական թթ. պատմագիտության դր բնագավառներում են սկսել հետազոտություններ ծավալվել.

- | | |
|--------------------------------|---------------------|
| 1) հայ ժողովրդի պատմության | 5) ազգագրության |
| 2) համաշխարհային պատմության | 6) դրամագիտության |
| 3) հնագիտության | 7) բնագիտություն |
| 4) հարակից երկրների պատմության | 8) կովկասագիտության |

67. 1950–1960–ական թթ. պատմագիտության զարգացման գործում զգալի դեր են խաղացել ակադեմիկոսներ՝

- | | |
|------------------------|---------------------|
| 1) Աշոտ Հովհաննիսյանը | 5) Հակոբ Մանանդյանը |
| 2) Բարկեն Առաքելյանը | 6) Կարո Ղաֆադարյանը |
| 3) Աբգար Հովհաննիսյանը | 7) Լեոն |
| 4) Սուրեն Երեմյանը | |

68. Շուշիի ռազմական գործողությունների ընթացքում ուլքեր էին Ա. Տեր-Թադևոսյանի կողքին.

- | | |
|---------------------|----------------|
| 1) Ս. Օհանյանը | 4) Ա. Ղուլյանը |
| 2) Ռ. Քոչարյանը | 5) Մոնթեն |
| 3) Գ. Դարիբալթայանը | 6) Ֆ. Գզողյանը |

69. Ստորև տրված պնդումներից որն է սխալ.

- 1) 1919 թ. ստեղծված Ամերկումը Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների ղեկավար կենտրոնն էր:
- 2) Հայաստանի բոլշևիկների ազդեցության տակ էր 1919 թ. ստեղծված «Սպարտակ» երիտասարդական միությունը՝ Հայաստանի կոմունիստական երիտասարդական միության հիմքը:
- 3) Հայաստանի բոլշևիկները չէին պաշտպանում ՀՀ կառավարությանը:
- 4) Բոլշևիկները կողմնակից էին բռնությամբ իշխանության նվաճմանը և համաշխարհային սոցիալիստական հեղափոխություն հրահրելուն:

70. Ընտրել այն շարքը, որտեղ տրված են 1920 թ. մահապատժի ենթարկված ապստամբ բոլշևիկների անուններ.

- 1) Ստեփան Շահումյան, Ալեքսանդր Մյասնիկյան, Սահակ Տեր-Գաբրիելյան, Սարգիս Սրապիոնյան
- 2) Ավիս Նուրիջանյան, Աղասի Խանջյան, Ղուկաս Ղուկասյան, Եգոր Սկյան, Գևորգ Աթարբեկյան
- 3) Սարգիս Մուսայելյան, Ասքանազ Մոսվյան, Սահակ Տեր-Գաբրիելյան, Ալեքսանդր Բեկզադյան
- 4) Ստեփան Ալավերդյան, Սարգիս Մուսայելյան, Բագրատ Ղարիբջանյան, Եգոր Սկյան, Արտաշես Մելքոնյան

71. Թվարկված պնդումներից որոնք են ճիշտ.

- 1) Բաքվում Հայաստանի պատվիրակությունը ղեկավարում էր Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի նախագահ Համազասպ Օհանջանյանը:
- 2) Պարսկաստանը միակ բարյացակամ հարևանն էր, որի հետ Հայաստանը հակասություններ չունեց:
- 3) Հայոց բանակի «Աշոտ Երկաթ» ռազմանավը Սևանա լճում գործարկվեց 1920 թ. հուլիսին:
- 4) Վրաստանի Հանրապետությունում ՀՀ դիվանագիտական առաքելությունը ղեկավարում էր Ա. Զամալյանը:
- 5) Ղարաբաղ-Ջանգեզուրի մարզային խորհրդի ներկայացուցիչ նշանակվեց Ավետիս Ահարոնյանը:
- 6) Ղարաբաղին և Ջանգեզուրին զենքով տիրելու մուսավաթական Ադրբեջանի քաղաքականությունը շարունակեց Խորհրդային Ադրբեջանը:
- 7) 1919 թ. հուլիս ամսի սկզբից Գորիսը բոլշևիկների ձեռքում էր:

72. Գտնել երկու իրադարձություն, որոնք տեղի են ունեցել 1919 թ. փետրվար ամսին.

- 1) Արևմտահայերի երկրորդ համագումարը
- 2) հայերենի՝ որպես պետական լեզվի ընդունումը
- 3) հայկական պատվիրակությունների կողմից Փարիզի խաղաղության կոնֆերանսին միասնական պահանջներ ներկայացնելը
- 4) Կիլիկիայում անգլիական զորքի փոխարինումը ֆրանսիականով
- 5) «Լոռու չեզոք գոտու» ստեղծումը

73. Գտնել այն իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել 1920 թ. հունվար ամսին.

- 1) քեմալականների կողմից Այնթապի պաշարումը
- 2) քեմալականների ներխուժումը հայաբնակ Մարաշ
- 3) Հայաստանի բոլշևիկների կոնֆերանսի որոշումը՝ նպաստավոր պայմանների դեպքում ապստամբելու և իշխանությունը գրավելու մասին
- 4) Նուրի փաշայի զորքերի պարտությունը Գարեգին Նժդեհի ուժերի կողմից
- 5) Արցախահայության 9-րդ համագումարի կողմից Հայաստանի Հանրապետությանը Լեռնային Ղարաբաղի միացումը հռչակելը
- 6) Թուրքիայի հետ հաշտության պայմանագրի նախապատրաստման նպատակով Իտալիայի Սան Ռեմո քաղաքում կոնֆերանսի հրավիրումը
- 7) Հայաստանի Հանրապետության փաստացի (դե ֆակտո) ճանաչումը ԱՄՆ-ի կողմից
- 8) Փարիզում հինգ տերությունների ղեկավարների նիստում Հայաստանի Հանրապետության կառավարության փաստացի ճանաչումը

74. Գտնել այն իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել 1920 թ. ապրիլ ամսին.

- 1) Հայաստանի առաջին հանրապետության զինանշանի մասին օրենքի հաստատումը
- 2) բոլշևիկների Գորիս ներխուժելը
- 3) հայ ազգային-քաղաքական ուժերի կողմից Կիլիկիան Ֆրանսիայի հովանավորության ներքո ինքնավար հանրապետություն հռչակելը

- 4) Արցախահայության 9-րդ համագումարի կողմից Հայաստանի Հանրապետությանը Լեռնային Ղարաբաղի միացումը հռչակելը
- 5) Թուրքիայի հետ հաշտության պայմանագրի նախապատրաստման նպատակով Խոտլիայի Սան Ռեմո քաղաքում կոնֆերանսի հրավիրումը
- 6) Հայաստանի Հանրապետության փաստացի (դե ֆակտո) ճանաչումը ԱՄՆ-ի կողմից
- 7) քեմալականների ներխուժումը հայաբնակ Մարաշ

75. Գտնել այն իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել 1920 թ. սեպտեմբեր ամսին.

- 1) Հայաստանի առաջին հանրապետության զինանշանի մասին օրենքի հաստատումը
- 2) Արևելքի ժողովուրդների առաջին համագումարը
- 3) հայ ազգային-քաղաքական ուժերի կողմից Կիլիկիան Ֆրանսիայի հովանավորության ներքո ինքնավար հանրապետություն հռչակելը
- 4) Արցախահայության 9-րդ համագումարի կողմից Հայաստանի Հանրապետությանը Լեռնային Ղարաբաղի միացումը հռչակելը
- 5) թուրք-հայկական պատերազմի սկիզբը
- 6) Հայաստանի Հանրապետության փաստացի (դե ֆակտո) ճանաչումը ԱՄՆ-ի կողմից

76. Ստորև տրված կետերից որոնք են համապատասխանում Սևրի պայմանագրի բովանդակությանը.

- 1) Թուրքիան ճանաչում էր Հայաստանը որպես ազատ և անկախ պետություն:
- 2) Թուրքիային էր անցնում Արևմտյան Հայաստանը, Կարսը, Արդահանը, Բաթումը:
- 3) Հայաստանին մնում էր ընդամենը 12000 քառակուսի կիլոմետր տարածք:
- 4) Հայաստանի սահմանները Վրաստանի և Ադրբեջանի հետ որոշելու էր Ռուսաստանը:
- 5) Հայաստանի սահմանները Վրաստանի և Ադրբեջանի հետ որոշվելու էր այդ շահագրգռված պետությունների ընդհանուր համաձայնությամբ:
- 6) Հայ-թուրքական սահմանի վերջնական որոշումը իրականացնելու էր ԱՄՆ նախագահը:
- 7) Հայաստանի Հանրապետությունն ունենալու էր սահմանափակ թվով զորք, երկաթուղիների վերահսկողությունն անցնելու էր Թուրքիային:
- 8) Կիլիկիան բաժանվում էր Թուրքիայի և Սիրիայի միջև:
- 9) Բաքվից դուրս էին բերվելու և ցրվելու հայկական ազգային զորամասերը:

77. Ստորև բերված պնդումներից որոնք են համապատասխանում Հայաստանի և Ռուսաստանի միջև 1920 թ. օգոստոսի 10-ին կնքված համաձայնագրի բովանդակությանը.

- 1) Ռուսաստանը Հայաստանին տրամադրելու էր 2,5 միլիոն ռուբլի (ոսկով) վարկ:
- 2) Ռուսաստանը ստիպելու էր, որ Թուրքիան հրաժարվի Բրեստ-Լիտովսկի և Բաթումի պայմանագրերից:
- 3) Խորհրդային Ռուսաստանը ճանաչում էր ՀՀ անկախությունը:

- 4) Հայաստանը համաձայնվում էր, որ Ղարաբաղը, Ջանգեզուրը և Նախիջևանը ժամանակավորապես զբաղեցվեն ռուսական զորքերի կողմից՝ մինչև հարցի վերջնական լուծումը:
- 5) Հայաստանը Ռուսաստանին հնարավորություն էր տալիս օգտվելու իր երկաթուղիներից՝ զորքեր և այլ ռազմական փոխադրումներ Թուրքիա հասցնելու համար:

78. Գտնել սխալ պատասխանները.

Հայ-ռուսական 1920 թ. հոկտեմբերի 28-ի արձանագրությամբ կողմերը պարտավորվում էին ստորագրել «Հաշտության պայմանագիրը» հետևյալ պայմաններով.

- 1) Ռուսաստանը Հայաստանին տրամադրելու էր 2,5 միլիոն ռուբլի (ոսկով) վարկ:
- 2) Հայաստանն ընդունելու էր կարմիրների առաջարկը խորհրդայնացման մասին:
- 3) Հայաստանը համաձայնվում էր, որ Ղարաբաղը, Ջանգեզուրը և Նախիջևանը ժամանակավորապես զբաղեցվեն ռուսական զորքերի կողմից՝ մինչև հարցի վերջնական լուծումը:
- 4) Ռուսաստանը և Ադրբեջանը ճանաչելու էին Հայաստանի Հանրապետության իրավունքները Ջանգեզուրի և Նախիջևանի նկատմամբ:
- 5) Հայաստանը հրաժարվելու էր Ղարաբաղից:
- 6) Հայաստանն ընդունելու էր Ռուսաստանի բարեկամական օժանդակությունը Թուրքիայի հետ վեճերը լուծելու հարցում՝ այն բանից հետո, երբ թուրքական զորքերը հետ կքաշվեին մինչև 1914 թ. սահմանը:

79. Ընտրել այն փաստարկները, որոնք չեն համապատասխանում խորհրդային իշխանության հաստատումից հետո ՀԿ(Բ)Կ-ի վարած քաղաքականությանը.

- 1) Սկսվեցին զանգվածային բռնություններ և հետապնդումներ քաղաքական կուսակցությունների և նախկին կառավարության անդամների և բանակի սպայության նկատմամբ:
- 2) Դաշնակցականներին թույլատրվեց ներգրավվել իշխանության մարմիններում:
- 3) Երկրում սկսեց կիրառվել «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը:
- 4) Ծավալվեց խորհրդային վարչակարգը հաստատելու և ամրապնդելու գործընթաց՝ տեղերում ստեղծված կուակազմակերպությունների միջոցով:
- 5) Երկրում թույլ տրվեց այլախոհություն, մասնավոր սեփականության առկայություն:

80. Ստորև բերված պնդումներում գտնել երկու սխալ.

- 1) 1921 թ. դեկտեմբերին իշխանության ընտրովի մարմիններին՝ հեղկոմներին, փոխարինեցին խորհուրդները:
- 2) 1922 թ. ՀՍԽՍՀ Սահմանադրությունն առաջինն էր հայոց պետականության պատմության մեջ:
- 3) Վ. Լենինն առաջարկում էր ԽՍՀՄ-ը կազմավորել՝ պահպանելով խորհրդային պետությունների մշակութային ինքնավարությունը և միությունից դուրս գալու իրավունքը:

- 4) Անդրկովկասի խորհուրդների առաջին համագումարը տեղի ունեցավ Բաքվում:
- 5) Ի. Ստալինի նախագծի համաձայն՝ խորհրդային հանրապետությունները մտնելու էին Ռուսաստանի կազմի մեջ՝ որպես նրա ինքնավար միավորներ:

81. Որո՞նք էին ԽՍՀՄ խորհուրդների առաջին համագումարի կողմից ընդունված կարևորագույն փաստաթղթերը.

- 1) Ամբողջ իշխանությունը բանվորների, գյուղացիների և զինվորների պատգամավորական խորհուրդներին պատկանելու մասին օրենքը
- 2) ԽՍՀՄ-ի ստեղծման մասին Պայմանագիրը և Հռչակագիրը
- 3) ԱԽԴՍՀ-ի լուծարման մասին համաձայնագիրը
- 4) բոլշևիկյան կուսակցության մենիշխանության հաստատման մասին հռչակագիրը

82. Ստորև տրված պնդումներից որո՞նք են ճիշտ.

- ա. ԽՍՀՄ կազմավորումից հետո խորհրդային հանրապետություններն իրապես պահպանեցին լիակատար անկախությունը և ԽՍՀՄ կազմից դուրս գալու իրավունքը:
- բ. ԽՍՀՄ կազմավորումից հետո խորհրդային հանրապետությունների ինքնիշխանությունը դարձավ ձևական:
- գ. ԽՍՀՄ-ի կազմում Հայաստանի պաշտպանությունը դարձավ ապահով:
- դ. ԽՍՀՄ-ի կազմում Հայաստանը չունեւ տնտեսական, գիտակրթական ու մշակութային զարգացման լայն հնարավորություններ:
- ե. ԽՍՀՄ-ը գոյատևեց մինչև 1993 թ.:

- 1) ա, գ 2) բ, գ 3) բ, դ 4) ա, դ

83. Ստորև տրված կետերից որո՞նք են համապատասխանում Մոսկվայում կնքված ռուս-թուրքական պայմանագրի բովանդակությանը.

- 1) Թուրք-հայկական սահմանն անցնում էր Ախուրյան և Արաքս գետերի հունով՝ թուրքական կողմում թողնելով Կարսի մարզը և Սուրմալուի գավառը:
- 2) Խիստ սահմանափակվում էին Հայաստանի զինված ուժերը:
- 3) Շարուրում և Նախիջևանում մտցվում էր հատուկ կառավարում՝ Թուրքիայի պաշտպանության ներքո:
- 4) Նախիջևանի մարզը դառնում էր ինքնավար տարածք՝ Ադրբեջանի խնամակալության տակ, որը չէր զիջվելու երրորդ պետության:
- 5) Հայաստանը հրաժարվում էր Սևրի պայմանագրից:
- 6) Հայաստանին էին վերադարձվում պատմական Անին և Կողբի աղահանքերը:
- 7) Հայաստանին էր վերադարձվում Ալեքսանդրապոլ քաղաքն ու գավառը:

84. Կարսի բանակցությունների ժամանակ ի՞նչ պահանջներ ներկայացրեց հայկական կողմը: Գտնել սխալը.

- 1) Հայաստանին վերադարձնել պատմական Անին
- 2) վերադարձնել Ալեքսանդրապոլի երկաթուղային դեպոյի թալանված գույքը
- 3) Հայաստանին տրամադրել Լեռնային Ղարաբաղի խնամակալությունը
- 4) Հայաստանին վերադարձնել Կողբի աղահանքերի շահագործումը

85. Առանձնացնել այն կետերը, որոնք համապատասխանում են Համազանգեզուրյան երկրորդ համագումարում ընդունված որոշումների բովանդակությանը.

- 1) Ինքնավար Սյունիքը կոչեց Լեռնահայաստան:
- 2) Սյունիքի վարչապետ դարձավ Գարեգին Նժդեհը:
- 3) Սյունիքի վարչապետ դարձավ Սիմոն Վրացյանը:
- 4) Լեռնահայաստանը վերանվանվեց Հայաստանի Հանրապետություն:
- 5) Ստեղծվեց Զանգեզուր-Ղարաբաղի մարզային խորհուրդ:

86. Ինչ նպատակ էր հետապնդում անցումը ռազմական կոմունիզմի քաղաքականությանից նոր տնտեսական քաղաքականության: Գտնել սխալ պատասխանները.

- ա. վերացնել տնտեսական և քաղաքական բնագավառներում ճգնաժամային իրադրությունը
- բ. վերականգնել քայքայված տնտեսությունը
- գ. աշխուժացնել ապրանքադրամական հարաբերությունները քաղաքի և գյուղի միջև
- դ. կոլեկտիվացնել գյուղատնտեսությունը
- ե. արդյունաբերացնել երկիրը

- 1) ա, դ 2) բ, գ 3) գ, դ 4) դ, ե

87. Առանձնացնել այն մշակութային իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել 1925 թ.

- ա. պատմա-մշակութային ինստիտուտի հիմնումը Էջմիածնում
- բ. Հայաստանի Գիտության և արվեստի ինստիտուտի ստեղծումը
- գ. գեղարվեստի դպրոցի հիմնումը Երևանում
- դ. հայկական առաջին պետական դրամատիկական թատրոնի բացումը
- ե. «Նամուս» համր ֆիլմի ցուցադրումը
- զ. Ա. Սպենդիարյանի Հայաստան գալը

- 1) ա, ե 2) բ, ե 3) դ, գ 4) ա, գ

88. Առանձնացնել այն մշակութային իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել 1932 թ.

- 1) Խորհրդային Միության գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղի հիմնումը
- 2) Հայաստանի գրողների միասնական միության ստեղծումը
- 3) գեղարվեստի դպրոցի հիմնումը Երևանում
- 4) Հայաստանի խորհրդային կերպարվեստագետների միության ստեղծումը
- 5) Հովսեփ Օրբելու՝ ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղի նախագահ նշանակվելը
- 6) Հայաստանի կերպարվեստի թանգարանի հիմնումը
- 7) պետական ֆիլիարմոնիայի կազմակերպումը
- 8) օպերայի և բալետի պետական թատրոնի բացումը

89. Առանձնացնել այն մշակութային իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել 1938 թ.

- ա. Խորհրդային Միության գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղի հիմնումը
- բ. Հայաստանի գրողների միասնական միության ստեղծումը
- գ. գեղարվեստի դպրոցի հիմնումը Երևանում
- դ. հայկական ժողովրդական երգի ու պարի անսամբլի ստեղծումը
- ե. Հովսեփ Օրբելու՝ ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղի նախագահ նշանակվելը
- զ. Հայաստանի կերպարվեստի թանգարանի հիմնումը
- է. պետական ֆիլիարմոնիայի կազմակերպումը
- ը. օպերայի և բալետի պետական թատրոնի բացումը

- 1) դ, ե, ը 2) դ, գ, ը 3) ա, ե, գ 4) բ, դ, է

90. Առանձնացնել այն մշակութային իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել 1935 թ.

- ա. Հայաստանի գրողների միասնական միության ստեղծումը
- բ. գեղարվեստի դպրոցի հիմնումը Երևանում
- գ. «Պեպո» հայկական կինոնկարի էկրան բարձրանալը
- դ. պատանի հանդիսատեսի թատրոնի բացումը Երևանում
- ե. Հայաստանի կերպարվեստի թանգարանի հիմնումը

- 1) ա, ե 2) բ, դ 3) դ, ե 4) գ, ե

91. Առանձնացնել այն մշակութային իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել 1922 թ.

- 1) Հայաստանի գրողների միասնական միության ստեղծումը
- 2) գեղարվեստի դպրոցի հիմնումը Երևանում
- 3) «Նամուս» համր ֆիլմի ցուցադրումը
- 4) հայկական առաջին պետական դրամատիկական թատրոնի բացումը
- 5) Հայաստանի կերպարվեստի թանգարանի հիմնումը

92. Բերված շարքերից ո՞րն է կազմված միայն մշակույթի նույն բնագավառը ներկայացնող գործիչներից.

- 1) Սերգեյ Մերկուրով, Արա Սարգսյան, Երվանդ Քոչար
- 2) Ա. Թամանյան, Մարկ Գրիգորյան, Տիգրան Զրբաշյան
- 3) Սեդրակ Առաքելյան, Ստեփան Աղաջանյան, Լևոն Շանթ
- 4) Հայկանուշ Դանիելյան, Հասմիկ, Վահրամ Փափազյան

93. Ընտրել այն շարքը, որտեղ տրված են միայն հայ բժիշկների անուններ.

- 1) Թորոս Թորամանյան, Ալեքսանդր Թամանյան, Վահան Արծրունի
- 2) Ստեփան Ղամբարյան, Աշոտ Հովհաննիսյան, Տիգրան Զրբաշյան
- 3) Գրիգոր Արեշյան, Համբարձում Քեչեկ, Վահան Արծրունի
- 4) Հովհաննես Կարապետյան, Տիգրան Զրբաշյան, Ստեփան Ղամբարյան

- 94. Ընտրել այն շարքը, որտեղ տրված են միայն նշանավոր ճարտարապետների անուններ.**
- 1) Ա. Թամանյան, Ա. Տերտերյան, Ա. Սարգսյան, Ե. Քոչար, Ն. Բունիաթյան
 - 2) Ա. Թամանյան, Կ. Հալաբյան, Գ. Քոչար, Մ. Գրիգորյան, Մ. Մազմանյան
 - 3) Ա. Թամանյան, Ա. Տերտերյան, Հ. Կարապետյան, Գ. Քոչար, Կ. Հալաբյան
 - 4) Ա. Թամանյան, Հ. Հովհաննիսյան, Լ. Ռոտինյան, Ս. Ղամբարյան, Ն. Բունիաթյան
- 95. Ընտրել այն շարքը, որտեղ տրված են միայն նշանավոր քիմիկոս գիտնականների անուններ.**
- 1) Ս. Ղամբարյան, Ա. Տերտերյան, Ս. Երեմյան
 - 2) Ս. Սաֆարյան, Հ. Հովհաննիսյան, Լ. Ռոտինյան
 - 3) Հ. Կարապետյան, Լ. Ռոտինյան, Ա. Հովհաննիսյան
 - 4) Լ. Ռոտինյան, Ս. Ղամբարյան, Ա. Մնջոյան
- 96. Ընտրել այն շարքը, որտեղ տրված են միայն հայ նշանավոր լեզվաբանների անուններ.**
- 1) Համբարձում Քեչեկ, Վահան Արծրունի
 - 2) Հակոբ Մանանդյան, Աշոտ Հովհաննիսյան
 - 3) Հրաչյա Աճառյան, Գրիգոր Ղափանցյան
 - 4) Ալեքսանդր Սպենդիարյան, Ռոմանոս Մելիքյան
- 97. Ընտրել այն շարքը, որտեղ տրված են միայն պատմաբանների անուններ.**
- 1) Գրիգոր Արեշյան, Համբարձում Քեչեկ, Վահան Արծրունի, Սուրեն Երեմյան
 - 2) Լեո, Հակոբ Մանանդյան, Աշոտ Հովհաննիսյան, Մկրտիչ Ներսիսյան
 - 3) Տիգրան Ջրբաշյան, Հովհաննես Կարապետյան, Մկրտիչ Ներսիսյան, Աբգար Հովհաննիսյան
 - 4) Արսեն Տերտերյան, Էդուարդ Աղայան, Գևորգ Ջահուկյան, Արարատ Ղարիբյան
- 98. Ընտրել այն շարքը, որտեղ տրված են միայն գրականագետների անուններ.**
- 1) Գրիգոր Ղափանցյան, Հովհաննես Կարապետյան
 - 2) Հակոբ Մանանդյան, Աշոտ Հովհաննիսյան
 - 3) Տիգրան Ջրբաշյան, Մկրտիչ Ներսիսյան
 - 4) Մանուկ Աբեղյան, Արսեն Տերտերյան
- 99. Ընտրել այն շարքը, որտեղ տրված են միայն երկրաբանների անուններ.**
- 1) Արսեն Տերտերյան, Վահան Արծրունի
 - 2) Հովսեփ Տեր-Աստվածատրյան, Լևոն Ռոտինյան
 - 3) Տիգրան Ջրբաշյան, Հովհաննես Կարապետյան
 - 4) Լևոն Ռոտինյան, Գևորգ Ջահուկյան
- 100. Ընտրել այն շարքը, որտեղ տրված են նշանավոր երգահանների անուններ.**
- 1) Գրիգոր Արեշյան, Համբարձում Քեչեկ, Վահան Արծրունի
 - 2) Լեո, Հակոբ Մանանդյան, Աշոտ Հովհաննիսյան
 - 3) Թորոս Թորամանյան, Ալեքսանդր Թամանյան, Կարո Հալաբյան
 - 4) Ալեքսանդր Սպենդիարյան, Ռոմանոս Մելիքյան, Արամ Խաչատրյան

101. Թվարկվածներից ովքեր կերպարվեստի բնագավառի ներկայացուցիչ չեն.

- | | |
|----------------------|----------------------|
| 1) Արտաշես Հովսեփյան | 6) Գրիգոր Եղիազարյան |
| 2) Սեդրակ Առաքելյան | 7) Ավետ Տերտերյան |
| 3) Սարգիս Մուրադյան | 8) Արա Սարգսյան |
| 4) Եղիշե Թադևոսյան | 9) Արսեն Տերտերյան |
| 5) Հակոբ Կոջոյան | |

102. Թվարկվածներից առանձնացնել միայն քանդակագործներին.

- | | |
|-----------------------|--------------------|
| ա. Ալեքսանդր Թամանյան | ե. Հակոբ Կոջոյան |
| բ. Սեդրակ Առաքելյան | զ. Եղիշե Թադևոսյան |
| գ. Ստեփան Աղաջանյան | է. Արա Սարգսյան |
| դ. Սերգեյ Մերկուրով | ը. Երվանդ Քոչար |

- 1) ա, բ, ը 2) դ, է, զ 3) դ, է, ը 4) գ, դ, ե

103. Ընտրել այն շարքը, որտեղ տրված են միայն հայ բեմական արվեստի ճանաչված ներկայացուցիչներ.

- 1) Հ. Աբելյան, Հասմիկ, Ա. Ոսկանյան, Վ. Փափագյան, Հ. Ներսիսյան, Վ. Վաղարշյան
- 2) Գ. Խանջյան, Հասմիկ, Ա. Ոսկանյան, Վ. Փափագյան, Հ. Ներսիսյան, Ա. Ասրյան
- 3) Հ. Աբելյան, Հասմիկ, Ա. Ոսկանյան, Վ. Փափագյան, Հ. Ներսիսյան, Ս. Սաֆարյան
- 4) Գ. Գյուրջյան, Հասմիկ, Ա. Ոսկանյան, Վ. Փափագյան, Է. Տիգրանյան, Է. Միրզոյան

104. Առանձնացնել Ա. Սպենդիարյանի գործունեությունը ներկայացնող փաստերը.

- 1) Նրա ստեղծագործությունների շարքում առանձնանում է «Երոսական բալլադը»:
- 2) Նա ստեղծեց հիանալի գործեր՝ «Երևանյան էտյուդներ», «Ալմաստ» օպերան:
- 3) Նա ստեղծեց «Սևան» բալետը:
- 4) Նա ստեղծեց «Սայաթ-Նովա» օպերան:
- 5) Նա Հայաստան եկավ 1924 թ.:

105. Առանձնացնել Արամ Խաչատրյանի գործունեությունը ներկայացնող փաստերը.

- 1) Նա Հայաստան եկավ 1924 թ.:
- 2) Նա ստեղծեց հիանալի գործեր՝ «Երևանյան էտյուդներ», «Ալմաստ» օպերան, նոր սիրերգեր:
- 3) Նա ստեղծեց «Գայանե» և «Սպարտակ» բալետները:
- 4) Նա մեծ ներդրում ունեցավ համաշխարհային երգարվեստում:
- 5) Նրա ստեղծագործությունների շարքում առանձնանում է «Երոսական բալլադը»:

106. Ստորև բերված պնդումներից որը չի վերաբերում Ա. Թամանյանի գործունեությանը.

- 1) Նա 1924 թ. կազմեց Երևանի կառուցապատման գլխավոր հատակագիծը:
- 2) Նրա նախագծով կառուցվեցին կառավարության տունը, օպերայի և բալետի թատրոնը, հանրային գրադարանը, բուհական մի շարք շենքեր:
- 3) Նրա նախագծով է կառուցվել Երևանի առաջին հէկը:
- 4) Նա ուսումնասիրել է Անին և գրել համանուն աշխատություն:

107. Ստորև տրվածներից առանձնացնել երեք ճիշտ պնդում.

- ա. Լենինգրադի կուսմարզկոմի առաջին քարտուղարի սպանությունը ԽՍՀՄ-ում նոր բռնաճնշումների առիթ դարձավ:
- բ. «Աջերի», տրոցկիստների ջախջախման ժամանակ ԽՍՀՄ-ում Ստալինի պաշտամունքը հասել էր գագաթնակետին:
- գ. ՀՄԽԿ խորհուրդների համագումարների միջև ընկած ժամանակաշրջանում գործող ՀՄԽԿ Կենտրոնական գործադիր կոմիտեն բարձրագույն գործադիր իշխանության մարմին էր:
- դ. ՀՄԽԿ առաջին Սահմանադրությամբ սահմանվում էր պարտադիր զինծառայություն:
- ե. ԽՍՀՄ խորհուրդները ԽՍՀՄ պետության բարձրագույն օրենսդիր մարմին էին:
